

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՍՈՎԻԵՏ ԽՍՀՄ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

X

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

ՏԱՍԸ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ՏԱՍՆԵՐՈՐԴ

**Մենագրություններ, էսսեներ, հուշեր,
հոդվածներ, թատերախոսություններ**

Ստեփանակերտ
«Դիզակ պլուս» հրատարակչություն
2011

ՀՏԴ 891.981.0 : 792 (479.25) : 325
ԳՄԴ 83.3Հ + 85.33 (2Հ) + 66.3 (2Հ)
Խ 256

*Հեղինակ՝ Սոկրատ Խանյան
Խմբագիր՝ Հովիկ Մուսայելյան*

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ 80-ամյակի
կապակցությամբ տասհատորյակը տպագրվում
է ԼԴՀ Գրողների միության վարչության
եւ Արցախի պետական համալսարանի
գիտական խորհրդի երաշխավորությամբ:

ԽԱՆՅԱՆ Ս.
Խ 256 Ընտիր երկեր: Հատոր X: / Սոկրատ Խանյան.-
Ստեփանակերտ, Դիզակ պլուս, 2011, 480 էջ:

Գրքում գետեղվել են թատերախոսություններ եւ էսսեներ Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի անցած ուղու, նշանակալից ներկայացումների, անվանի դերասանների խաղարվեստի վերաբերյալ, ինչպես նաեւ բնութագրական հուշեր ժողովրդական արտիստներ Ավագ Պետրոսյանի, Տաթևիկ Սազանդարյանի, Մարգո Բալասանյանի, Էլմիրա Առստամյանի, Էդուարդ Ղազարյանցի եւ մշակույթի այլ գործիչների մասին:

Ժողովածուի մի մասը կազմում են Պետություն-հասարակություն-բանակ կապին նվիրված ուսումնասիրությունն ու առանձին հոդվածներ, որոնցում լուսաբանված են ԼԴՀ Պաշտպանության բանակի անցած հերոսական զոյամարտն ու առանձին հերոսների սխրանքը՝ հանուն Արցախի ազատության եւ հայ ժողովրդի հարատեւման:

ՀՏԴ 891.981.0 : 792 (479.25) : 325
ԳՄԴ 83.3Հ + 85.33 (2Հ) + 66.3 (2Հ)

ISBN 978-99941-2-518-0

© Ս. Խանյան, 2011թ.

«ԱՅՐՎՈՂ ՊԱՏԻՎ»

Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնի ռեպերտուարը հարստացավ եւս մեկ պիեսով՝ բեմադրվեց Աբգար Դանիելյանի «Այրվող պատիվ» թատերերկր, որը հանդիսատեսի կողմից ընդունվում է ջերմորեն:

Աբգար Դանիելյանը ընթերցողներին հայտնի է որպես ժուռնալիստ: Նրա ակնարկներն ու հոդվածները վաղուց են ճանաչում բերել հեղինակին: Մի քանի տարի նա աշխատել է «Այրվող պատիվ» պիեսի վրա, որը տվել է իր ցանկալի արդյունքը: Այսպիսի սյուժեն ստուգված է կյանքով, կենսական է ու համոզիչ:

... Վարդաբույր գյուղում խանգարվել է Ազատյանների ընտանիքի առանց այն էլ փոթորկված անդորրը: Տարբեր պատրվակներով թիկունքում մնացած պահեստապետ Բուդաղը հետապնդում է Ջարուհուն, որի ամուսինը՝ Արմենը, գտնվում է ռազմաճակատում: Բուդաղը գործի է դնում նենգ միջոցներ նպատակին հասնելու համար, սակայն դա չի հաջողվում նրան: Ջարուհին անդրդվելի է, նա թույլ չի տալիս արատավորելու իր ընտանիքի ու իր պատիվը: Բուդաղը առանց խղճի խայթի, լուր է տարածում, որ Արմենը դավաճանել է հայրենիքին: Իր կողմը գրավելով կոլտնտեսական Սարգսին եւ հաշվապահ Վռամին, բանսարկուն հասնում է այն բանին, որ Ազատյանների տան ավազը՝ Չարությունը, կասկածելով Ջարուհու ազնվության վրա, տնից հեռացնում է նրան, խլելով փոքրիկ որդուն՝ Վահագին: Արմենի մայրը՝ Շուշանիկը, անհուն վիշտ է ապրում: Նա չի ուզում հավատալ, որ հարսը դավաճանել է իր որդուն, սակայն Բուդաղի հետապնդումները կասկած են առաջացնում նրա մոտ: Շուշանիկը չի դիմանում դրան, կաթված է ստանում եւ մահանում, չտեսնելով որդու վերադարձը: Եվ ահա ավարտվում է պատերազմը: Վերադառնում է ոտքից վիրավոր, բայց հերոսացած Արմենը: Մերկացվում է Բուդաղը: Չաշտվում են Արմենն ու Ջարուհին: Արմենը ընտրվում է կոլտնտեսության նախագահ եւ անձնվիրաբար պայքարում հայրենի գյուղի տնտեսությունը ամրապնդելու ու բարեկեցիկ կյանք ստեղծելու համար:

Ուրախությամբ եւ հաճույքով պիտի նշել, որ պիեսը բեմադրվել է այնպիսի հմուտ ու տաղանդավոր արվեստագետ, որպիսին է ՅՍՍՀ վաստակավոր արտիստ Դ. Կարապետյանը:

Ներկայացման ընթացքում ամեն քայլափոխի երեւում է բեմադրող-ռեժիսորի նուրբ ճաշակն ու պիեսը մեկնաբանելու հմտութունը: Դ. Կարապետյանը ստեղծագործող է բառիս բուն իմաստով: Նա հոգեբան- արվեստագետ է, անցյալին առօրեական շունչ ներարկող ռեժիսոր: Դ. Կարապետյանը, բեմադրելով Ա. Դանիելյանի «Այրվող պատիվ» պիեսը, մի երանգով եւս հարստացրեց այն ծաղկեփունջը, որ տարիների նրա պատվաբեր վաստակն է կազմում:

Շատ քիչ բեմադրություններում են բոլոր դերասանները գտնում իրենց դերերը: Նման գործերից է «Այրվող պատիվը»: Ներկայացման մեջ սյուժետային գլխավոր գծի մի ծանր եզրը Ջարուհու (վաստակավոր արտիստուհիներ Ն. Ասատրյան եւ Դ. Սիմոնյան)՝ եւ Արմենի (ժողովրդական արտիստ Բ. Օվչյան) ուսերին է, իսկ մյուս եզրը՝ Յարութունի (վաստակավոր արտիստ Ջ. Գեւորգյան), Շուշանիկի (ժողովրդական արտիստուհի Թ. Մելքունյան, արտիստուհի Շ. Գրիգորյան) եւ Բուդաղի (Ս. Միքայելյան) ուսերին: Այդ ծանրությունը հեշտությամբ են տանում արտիստները:

Դ. Սիմոնյան- Ջարուհին սիրող կին է ու մայր, համեստ հարս է ու հարգված ուսուցչուհի: Բնական է նրա խաղը, անբռնազբոսիկ: Այն ուշագրավ է առանձնապես Բուդաղի հետապնդումների, որդուց բաժանվելու, մեռնակության, պատանի որդու, ամուսնու՝ Արմենի հետ հանդիպման պահերին, ինչպես նաեւ ներկայացման վերջին մասերում: Սիմոնյանի մարմնավորած Ջարուհին իրեն դրսեւորում է որպես իր ընտանիքի պատիվը բարձր պահող, ազնիվ մի կին, կյանքի հավատարիմ ընկեր:

Արտիստական տարբեր խառնվածքով ու բեմական մաներաներով Ջարուհու հոգեկան աշխարհը հմտորեն է բացահայտում նաեւ հանրապետության վաստակավոր արտիստուհի Ն. Ասատրյանը: Երկու արտիստուհիների Ջարուհին հարստացնում է նրանց ստեղծած կերպարների պատկերասրահը:

Հանրապետության ժողովրդական արտիստ Բ. Օվչյանը յուրաքանչյուր ներկայացման մեջ նոր որակ է բերում իր արվեստին: Օվչյան-Արմենը իր բարձրության վրա է: Հայրենիքի գինվոր, քայքայված ընտանիքի համար տառապող, դիմակը պատռված բանասարկուհի արհամարհող այր, հարազատ գյուղի ծաղկման համար ուժերը չխնամող ղեկավար - ահա այսպիսին է տեսնում հանդիսատեսը Օվչյան-Արմենին: Նրա խաղը կուլմինացիայի է հասնում պատերազմից վերադառնալու, խնջույքից հետո Հարությունի, ինչպես նաև Վարդան Գեղամիչի հետ առանձնանալու, դառն ապրումներից հենակները դեն նետելու, վերջապես Ջարուհու հետ վալս պարելու պահին: Այդ տեսարաններում Օվչյան-Արմենը առանց խոսքի, լուռ այնքան ապրումներ է հաղորդում հանդիսատեսին, որ մնում է շնորհակալություն հայտնել սիրված արտիստին:

«Այրվող պատիվ» ներկայացման մեջ իր նոր խոսքն է ասում վաստակավոր արտիստ Ջ. Գեւորգյանը: Կյանքի փորձությունները տեսած, ուշ բռնկվող, բայց թեժ, սեփական հարկի արժանապատվությունն զգացող, սիրող, բայց անողոք, աշխարհի չարը խարազանող, խիստ ու բարի ծերունի է Գեւորգյան-Հարությունը: Բնական է նրա խաղը թե՛ ցասումի, թե՛ հրճվանքի պահերին, ազդեցիկ են նրա խոսքի հնչեղանգները: Անկաշկանդ եւ հուզիչ է նրա խաղը այն պահին, երբ նա առաջին անգամ լսում է Ջարուհու եւ Բուդաղի «հանդիպման» մասին, երբ նախատում է Վռամին ու Սարգսին, խուժում են տուն եւ վիրավորում տնեցիներին, երբ տնից վռնդում է Ջարուհուն՝ խլելով նրա մանկանը, երբ հանդիպում է պատերազմից վերադարձած Արմենին եւ այլն: Հանձին Հարությունի, մնայուն կերպար է մարմնավորել Ջ. Գեւորգյանը:

Որդիներին անմնացորդ ու ինքնամոռաց սիրող մոր կերպար է Շուշանիկը: Այդ դերը կատարում են ժողովրդական արտիստուհի Թ. Մելքունյանը եւ արտիստուհի Շ. Գրիգորյանը: Կերպարի նույն կսկիծը, տառապանքը, կարոտը արտիստուհիները բացահայտում են ինքնատիպ: Շուշանիկը Մելքունյանի մարմնավորմամբ հանգիստ է, խաղաղ, իսկ Գրիգորյան-Շուշանիկը՝ տաքարյուն, արա-

Վաչարժ: Երկու դեպքում էլ արտիստուհիները ճիշտ են հասկացել հեղինակին: Նրանց մարմնավորած Շուշանիկը զարմանալի բարի ու նուրբ սիրտ ունի, ծնվել է նրա համար, որպեսզի իր սերը նվիրի որդիներին, հոգու գեղեցկությունը՝ լավ մարդկանց:

Բուդաղի կերպարը ներկայացման հաջողությանը նպաստող կարեւոր օղակ է: Այդ կերպարը մարմնավորում է արտիստ Մ. Միքայելյանը: Միքայելյան-Բուդաղը խաբերա է, բանասարկու ու աներես: Նրա համար չկա սրբություն: Ուշագրավ են մի շարք տեսարաններ, որոնցում Մ. Միքայելյանը դրսևորում է արտիստական հղկված խաղ: Ջարուհու բնակարանում հայտնվելը, կերուխումի տեսարան ստեղծելը, սանձարձակ առաջարկները, Արմենի մասին հորինված հայհոյանքը, վերջապես Ազատյանների տան բակում հանդիպումը Վռամի հետ, - Մ. Միքայելյանի հաջող խաղը ապացուցող տեսարաններ են: Միքայելյանի Բուդաղը հասնում է իր նպատակին այն առումով, որ նա հանդիսատեսին սովորեցնում է «այսպես չպետք է լինել կյանքում»:

Պատկառելի տարիք ունեցող, ազնիվ մարդու կերպար է Վարդան Գեղամիչը, որին մարմնավորում է արտիստ Գ. Գրիգորյանը: Հանդիսատեսը հավատում ու սիրում է նրան՝ Վարդան Գեղամիչին՝ անկաշկանդ խաղի շնորհիվ, որով շատ բան է պատմում իր հերոսի մասին:

Կոմիկական շտրիխներով օժտված կերպարներից են Վռամն ու Սարգիսը: Արտիստ Բ. Պողոսյանը Վռամի դերում խոսքի կոմիզմի հետ ազատ ու տեղին օգտվում է դրության կոմիզմից ու թողնում հաճելի տպավորություն: Արտիստ Ք. Հարությունյանը զբաղված է երկու դերերում: Ներկայացման առաջին մասում նա կատարում է Սարգսի դերը, իսկ երկրորդ մասում՝ պատանի Վահագնի: Երկու տարբեր բնավորությունների հաջող մարմնավորումը մի ներկայացման ընթացքում խոսում է Ք. Հարությունյանի շնորհքի մասին: Հաջող է խաղում նաև արտիստուհի Ա. Օհանյանը: Նրա Հերիքնազը իսկական «յոթ ծովի մերան» է, անզուսպ բանասարկու եւ գծուծ հոգու տեր մի կին: Ա. Երեմյանը (մանուկ Վահագն), մի անգամ եւս համոզեց մեզ, որ նրան լավ ապագա է

Սպասվում: Հայկուշի դերակատար Ս. Թովմասյանը վատ չի հանդես գալիս, սակայն նա պետք է հասնի ավելի բնական խաղի:

«Այրվող պատիվ» ներկայացման հաջողությանը մեծապես նպաստում են պիեսի էությունից բխած, վարպետորեն ստեղծած պեյզաժը (Նկարիչ՝ Ս. Հովհաննիսյան), ինչպես նաև երաժշտությունը:

Սակայն ներկայացումը զերծ չէ թերություններից: Ինչպես պիեսում, այնպես էլ ներկայացման երկրորդ մասում թուլանում է կոնֆլիկտը առանձնապես Բուդաղին մերկացնելուց հետո, երբ արդեն պայքարող կողմերից մեկը հանդես չի գալիս: Նման դեպքում երկի կոնֆլիկտը բացահայտում է հոգեբանական վերապրման ճանապարհներով, հերոսի հոգում տեղի ունեցող պայքարի, հակադիր ձգտումների բախման իմաստով: Ուստի երկրորդ մասը պետք է հղկել, ավելի համոզիչ դարձնել Վռամի եւ Արեգնազի բնավորությունների քննադատությունը, ընդգծելով տիպական երեւույթը: Ներկայացումը վերջանում է այնտեղ, երբ Հարությունը, գոհունակությամբ բացականչում է Ազատյանների օջախի վերականգնված երջանկության մասին: Այդ հուզումից հետո մոր քանդակի հետ կապված պատմությունը մի առանձին նովել է: Այն կարելի է մտցնել նախավերջին տեսարանում, երբ պատանի Վահագնը հայտնում է իր մտահղացման մասին:

Չնայած այս մասնակի թերություններին, «Այրվող պատիվ» ներկայացումը թատրոնի կոլեկտիվի քրտնաջան աշխատանքի արդյունքն է եւ արժանի պատշաճ ուշադրության:

*«Սովետական Ղարաբաղ»,
5 փետրվարի, 1974 թ.*

«ՏՐԻԲՈՒՆԱԼ»

...Չմեռ է, ծյուն է մաղում: Մթության մեջ, բեմի խորքից լսվում է շոգեքարշի փնչոցը, իսկ քիչ անց, ասես ճեղքելով հողը, պայթող ռունբերի ամպերի միջով սողում է գնացքը... Մարդկային զոհերի տեսարաններ են... Պատերազմ է: Հանդիսատեսի աչքերի առջեւով անցնում են հայրենականի ծանր տարիները: Եվս մի պահ, ավարտվում է կինոկադրերի ցուցադրումը, խաղաղվում է բեմը, շարունակվում է ներկայացումը՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի 30-ամյա հոբելյանին:

Ներկայացվում է բելոռուս տաղանդավոր դրամատուրգ Անդրեյ Մակայոնոկի «Տրիբունալ» պիեսը, որը Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնի բեմ է հասել Մինսկի, Մոսկվայի եւ Միության այլ քաղաքների թատրոններում հաջող քննություն բռնելուց հետո: Պիեսում շոշափված է պատերազմի եւ ժողովրդական խիզախության թեման: Հեղինակը ձգտել է նոր խոսք ասել, բավարարել 70-ական թվականների հանդիսատեսի պահանջը, խոսել նրա սրտի հետ...

Պիեսը բարդ կռվաններ չունի, նոր չէ նրա սյուժեն : Սակայն գրողը ինքնատիպ է մոտեցել թեմայի դրամատուրգիական լուծմանը եւ հերոսության մեկնաբանմանը: Օկուպացվել է Բելոռուսիան: Գյուղացի Տերեշկոն հեւիհեւ տուն է գալիս, հայտնում կնոջն ու հարսին, որ ֆաշիստները իրեն նշանակել են գյուղապետ, հորդորում է, որպեսզի սեղան բացեն ֆաշիստական պարետի եւ նրա կամակատար, դավաճան Սիրոեդովի պատվին: Կինը սկզբում չի հավատում, բայց հետո... Դժկամությամբ սեղան է բացում նրանց համար: Եվ երբ նրանք գնում են, սկսվում է ընտանեկան դատը ամուսնու հանդեպ: Ներկա են Տերեշկոյի հարսը, երկու աղջիկները եւ 16-ամյա տղան: Կինը խորհուրդ է տալիս ամուսնուն՝ կամ գնալ, հրաժարվել գյուղապետի պաշտոնից, կամ դավաճանին սպասում է արժանի հատուցում: Կնոջ հրամանով զավակները կազմակերպում են ընտանեկան տրիբունալ՝ որոշում են Տերեշկոյին զցել պարկի մեջ եւ նետել ջրհորը: Տերեշկոն տեսնելով, որ

իրեն մահ է սպառնում, ստիպված գաղտնիքը հայտնում է կնոջը: Պարզվում է, որ Տերեշկոն դավաճան չէ, որ նա կատարել է պարտիզանական հրամանատրության առաջադրանքը: Սակայն գավակները չգիտեն այդ մասին, գաղտնիքը բոլորին հայտնել չի կարելի: Տղան՝ Վոլոդյան, պայթեցնում է ոստիկանատունը, ոչնչացնում ֆաշիստական հրեշներին, ինքն էլ զոհվում հերոսաբար:

Անսպասելի ավարտ ունի ներկայացումը: Սակայն հանդիսատեսը հավատում է դրան, որովհետև հոգեբանական զարգացումը բնական է, միաժամանակ եւ կենսական հող ունի,- այդ Մեծ հայրենականում սովետական ժողովրդի մասսայական հերոսությունն է, անձնագրի հայրենասիրությունը:

Ինչպե՞ս է լուծվել դրամատուրգ-բեմադրող-դերակատար փոխհարաբերության հարցը: Թատրոնում այս առումով որեւէ առաջընթաց նկատվո՞ւմ է, թե՞ ոչ: Սկզբից նշենք, որ առաջընթաց նկատվում է «Տրիբունալ»-ի բեմադրությունում:

Պիեսի գաղափարական բովանդակության ճիշտ ընկալումը եւ բացահայտումը առաջին պայմաններից մեկն է հաջող բեմադրության համար: Բեմադրող ռեժիսոր Ա. Հակոբյանը պատվով է դուրս եկել այդ քննությունից: «Տրիբունալ»-ը տրագիկոմեդիա է: Դժվար է, իհարկե, կոմիզմի եւ ողբերգականության տարրերը ընդգծել համաչափ ու ծանրակշիռ եւ ներկայացնել որպես հերոսության երանգներ: Պիեսի հեղինակի օգտագործած դրամատուրգիական թարմ միջոցները, լակոնիկ ու բազմազան վառ երանգները հարուստ նյութ են տվել ռեժիսորին՝ հասնելու իր նպատակին: Պիեսի գրոտեսկային հնչերանգները բեմական պատումի մեջ զուսպ են ու տեղին, միզանսցենամերն ու ռեմարկները հմտորեն ուղղված են կերպարների հոգեկան բարդ ապրումների բացահայտմանը: Մի ընտանիքի ֆոնի վրա Ա. Մակայոնոկը ձգտել է ցույց տալ սովետական շարքային մարդկանց բարոյական դեմքը՝ հայրենիքի համար ստեղծված ամենադաժան ու վտանգավոր պահին: Այս առումով էլ բեմադրության հաջողության գրավականի տուտը գտնվել է հիմնականում դերակատարների ձեռքին: Գլխավոր դերերում հանդես են գալիս ժողովրդական արտիստ Բ. Օվչյանը (Տերեշկո), ժողովր-

Պրական եւ վաստակավոր արտիստուհիներ Թ. Մելքունյանն ու Յ. Սիմոնյանը (Պոլիմա):

Տերեշկոն պիեսի գլխավոր սյուժետային գծի առանցքն է կազմում: Օվչյան-Տերեշկոն ներկայացման գազաթնակետի եւ լուծման ընթացքում գտնվելով կապկաված վիճակում, հոգեբանական հրաշքներ է գործում: Նա մերթ համարձակ է, մերթ վախկոտ, մերթ կոմիկական դիմանկար ունի, մերթ ողբերգական, մերթ մեղանչող, մերթ սիրող հայր, «դավաճան» ու հայրենասեր: Այս ամենը Օվչյանի կողմից հանդիսատեսին է մատուցվում վարպետ անցումներով ու զգացումների վարակիչ շաղախով: Նրա մարմնավորած Տերեշկոյի կերպարը համոզում է հանդիսատեսին, որ մարդու կյանքում ողբերգություն է եզրիզմն ու դավաճանական քայլը, երջանկություն՝ անձնագոհությունն ու հայրենասիրությունը: Տերեշկոն մնալուն տեղ կգրավի Բ. Օվչյանի ստեղծած կերպարների պատկերասրահում:

Ներկայացման կոնֆլիկտի էության եւ կերպարների բնավորությունների բացահայտման գործում կարելու տեղ է գրավում Պոլիմայի կերպարը: Տարբեր իրավիճակներում հոգեկան տարբեր խռովք է ապրում Մելքունյան-Պոլիման: Տասներկու երեխաների սիրող մայր է, ըստ հեղինակի, ֆիզիկապես ավելի ուժեղ, քան ամուսինը: Հմուտ դերասանուհին իր արտիստական ներկայանակի գույները կարողանում է համադրել բեմական տարբեր սիտուացիաներում: Ջարմանքի (երբ լսում է, որ Տերեշկոն գյուղապետ է դարձել), ցասման (երբ Տերեշկոն ցանկանում է հյուրասիրել ֆաշիստներին), սառնասրտության (երբ հրամայում է զավակներին պարկը զցել ամուսնուն), ուրախության (երբ համոզվում է, որ ամուսինը դավաճան չէ), մայրական վիշտ (երբ նահատակվում է որդին) պահերին Թ. Մելքունյանի արվեստին իր բարձրության վրա է: Նույն կերպարի մարմնավորման ընթացքում ինքնատիպ, տարբեր խաղաճ են ցուցաբերում Թ. Մելքունյանը եւ Յ. Սիմոնյանը: Երկուսի Պոլիման էլ արժանանում է հանդիսատեսի ուշադրությանն ու ջերմ ընդունելությանը:

Ներկայացման առաջին մասում, մեկ դրվագում է հանդես գա-

լիս գերմանական պարետի դերակատար, դերասան Գ. Գրիգորյանը: Նա խելամիտ խաղով կարողանում է ներկայացնել նացիզմի թույնով վարակված, իրեն գերմարդ համարող, ժողովուրդների երդվյալ թշնամի ֆաշիստ սպային:

Դերասան Ժ. Մովսիսյանը մարմնավորում է հայրենիքի դավաճան, ֆաշիստներին ծառայող Սիրոեդովի կերպարը: Ինչպես միշտ, այս անգամ եւս խաղի ընթացքում նա հունի մեջ է: Նրա կատարմամբ ամբողջական է ստացվել Սիրոեդովի կերպարը, որը հանդիսատեսի մեջ ատելություն է առաջացնում դեպի հայրենիքի դավաճանները:

Ուրախալի է, իհարկե, որ ներկայացման մեջ հանդես են գալիս դերասանների երկու սերնդի ներկայացուցիչներ՝ ավագներ եւ երիտասարդներ: Տերեշկոյի եւ Պոլինայի աղջիկները՝ Գալյան (Ա. Առաքեյան), Ջինան (Ա. Պետրոսյան), հարսը՝ Նադյան (Ժ. Գալստյան), տղան՝ Վլոդկան, (Ք. Հարությունյան) անձնվեր հայրենասերների կերպարներ են, նրանց նպատակը մեկն է՝ հայրենիքի պաշտպանությունը: Սակայն նպատակի միասնությունը չի խանգարում երիտասարդ դերասաններին ստեղծել տարբեր բնավորություններ, չնայած որոշ տեսարաններում երիտասարդ դերասանների մոտ նկատվում է կաշկանդվածություն: Նրանք պետք է ձգտեն բնական ու անբռնազբոս խաղի՝ բոլոր տեսարաններում:

Ներկայացման հաջողությանը նպաստում է նկարիչ Գ. Ծատուրյանի գեղեցիկ ու նպատակասլաց ձեւավորումը:

Բեմական արվեստի եւ կինոկադրերի համատեղումը կատարված է ճաշակով, սակայն զգացվում է ներկայացման ոգուն ներդաշնակ երաժշտության պակաս:

«Տրիբունալ» ներկայացման մեջ թերությունները որակ չեն կազմում: Այդ ներկայացումը լավ տպավորություն է թողնում, արժանանում հանդիսատեսների ջերմ ընդունելությանը:

**«Սովետական Ղարաբաղ»,
10 հունիսի, 1975 թ.**

«ՄԱՐԳՈ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ»

Ադրբեջանական ՍՍՀ եւ Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստուհի Մարգո Բալասանյանը իր տաղանդի ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ դարձել է հանդիսատեսների սիրելին: Որպես Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայկական դրամատիկական թատրոնի արտիստուհի, նա իր մարմնավորած բազմաթիվ կերպարներով հասել է մի այնպիսի բարձունքի, որը հիացնում է թե՛ խստապահանջ հանդիսատեսներին, թե՛ թատերագետներին: Եվ պատահական չէ արձակագիր Ի. Ալավերդյանի «Մարգո Բալասանյան» գիրքը, որը հրատարակվել է Երեւանում, հայկական թատերական ընկերության կողմից:

Գիրքը փոքր չէ ծավալով, կազմում է 135 էջ: Հենց սկզբից ասենք, որ այն հնարավորություն է տալիս լրիվ պատկերացում կազմելու դերասանուհու անցած բեղմնավոր ու ծաղկառատ ուղու, նրա ստեղծագործական խառնվածքի, որոնումների ու նվաճումների մասին:

Արձակագրի երկարամյա փորձը, թատերական արվեստի իմացությունը, թատրոնի ռեպերտուարին եւ Մ. Բալասանյանի դերասանական կենսագրությանը քաջածանոթ լինելը օգնել են Ի. Ալավերդյանին գրելու ոչ միայն ասք սիրած դերասանուհու մասին, այլև ստեղծելու թատրոնի հետպատերազմյաին շրջանի (մինչեւ մեր օրերը) յուրահատուկ պատմությունը:

Հետաքրքիր է գրքի նախաբանը: Ի. Ալավերդյանը ներքին հպարտությամբ է նկարագրում դարաբաղյան լեռնաշխարհը:

Գրքում «Մուտքից» հետո իրար հաջորդում են «Կենսագրության սկիզբը», «Առաջին քայլերը բեմում», «Հայրենի քաղաքի թատրոնում», «Հաղթանակում է բեմարվեստի նկատմամբ ունեցած սերը», «Ամեն դեր որոնում է կամ ինքնահաստատում», «Ծանրակշիռ վաստակ», «Անսպասելի կերպավորում», «Հոգու նոր գույները» գլուխները եւ վերջապես «Երկխոսություն արտիստուհու հետ» խոսում վերջաբանը: Այս վերնագրերը անգամ ցույց են տալիս այն մեծ ճանապարհի խութերն ու վերելքները, որ անցել

Ե՛ր արտիստուհին:

Գրքի հիմնական նպատակը Մ. Բալասանյանի դերակատարումների գնահատումն է: Այս ուղղությամբ Ի. Ալավերդյանի աշխատանքը արժանի է դրվատանքի: Ցույց են տրված արտիստուհու ուսանողական տարիների առաջին փորձերը, Նոր Բայազետի (Կամո) շրջանային պետական թատրոնում մարմնավորած կերպարները, նշված են Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի այն բոլոր ներկայացումները, որոնցում նա հանդես է եկել եւ գտել իր արժանի գնահատականը: Գրքի հեղինակը ուսումնասիրել է օգտագործել է թերթերում ու ամսագրերում արտիստուհու մասին տպագրված գրախոսականները, տարբեր թատրոնների անվանի ներկայացուցիչների կարծիքները: «Կոմունիստ» (հայերեն), «Բակինսկի րաբոչի», «Սովետական Ղարաբաղ», «Ավանագրադ» եւ այլ թերթերում տարբեր տարիների տպագրված ռեցենզիաները հնարավորություն են ընձեռել հեղինակին ամբողջական կարծիք կազմելու եւ ասելու իր սեփական խոսքը: Ճիշտ է վարվել Ի. Ալավերդյանը, որ մեջբերումներ է արել սովետական բեմի ականավոր ներկայացուցիչների գնահատականներից: Հպարտության զգացումով ես ընթերցում Վ. Փափազյանի խոսքը. «Նախ Դեզդենոնան, - Մարգո Բալասանյան է նրա անունը... Ոչ միայն սիրուն կին է ճապուկ իրանով, այլեւ դերասանուհի՝ օժտված ոչ սովորական տվյալներով»:

Այս գնահատականը Վ. Փափազյանը տվել է 1958 թվականին, երբ նա Ստեփանակերտում թատրոնի կոլեկտիվի հետ միասին հանդես է եկել Օթելլոյի դերում: Այդ դեպքից հետո անցել է մեկ քառորդ դար: Մ. Բալասանյանը այդ ժամանակաընթացքում մարմնավորել է 110 դեր, որոնք եղել են համառ աշխատանքի, որոնումների ու ձեռքբերումների պայծառ էջեր:

«Մարգո Բալասանյան» գրքի առավելություններից մեկն էլ այն է, որ հեղինակը արտիստուհու այս կամ այն դերակատարումը գնահատելիս միաժամանակ բերում է ներկայացումների համառոտ բովանդակությունը: Այդ տեսակետից ուշագրավ են Մուրադյանի «Ռուզան», Վ. Գազլոեւի «Ասք մոր մասին», Շեքսպիրի «Չմեռային

«հեքիաթ» եւ այլ ներկայացումների համառոտ բնութագրումները: Եվ պետք է նշել, որ հեղինակը այսպես է վարվել, որպեսզի ընդգծի արտիստուհու խաղաոճն ու հաջողության գաղտնիքը: Գրքի հեղինակը տարբեր առիթներով բերում է Մ. Բալասանյանի ասույթները թատրոնի, դերասանի աշխատանքի, դերակատարումի մասին: Նման ասույթներում երեւում է փորձառու եւ խորհրդատու դերասանուհին, սիրած թատրոնի ապագայով ապրող գեղագետը: Գրքի վերջում տրված է Մ. Բալասանյանի դերակատարումների ցանկը:

Ի. Ալավերդյանի «Մարգո Բալասանյան» գիրքը Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայկական դրամատիկական թատրոնի պատմությունը ներկայացնող հաջողված ուսումնասիրություններից է: Այդ կապակցությամբ պետք է նշել գրողի շնորհակալ աշխատանքը: Տարիներ առաջ նա ընթերցողներին ներկայացրեց ժողովրդական արտիստ Գուրգեն Չարությունյանին նվիրված աշխատությունը, իսկ վերջերս «Լույս» հրատարակչությունը տպագրեց նրա «Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայկական դրամատիկական թատրոնը» գիրքը հայերեն եւ ռուսերեն լեզուներով: Մնում է գրողին ցանկանալ նորանոր հաջողություններ այդ կարեւոր աշխատանքում:

*«Կոմունիստ»,
10 ապրիլի, 1983 թ.*

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՈՒՂԻՈՎ

Վերջերս նշվեց Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայկական պետական դրամատիկ թատրոնի 50-ամյակը: Թատրոնի անցած ճանապարհը եղել է որոնումների ու նվաճումների, ժողովրդին ու հայրենիքին ծառայելու բարեխիղճ վաստակի ու ինքնանվիրումի ուղի: Ահա թե ինչու ժամանակին էր Ի. Ալավերդյանի «Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական հայկական դրամատիկ թատրոն» գրքի հրատարակումը հայերեն եւ ռուսերեն լեզուներով:

Հեղինակն իր առջեւ դրել է կարեւոր խնդիրներ եւ, կարելի է ասել, որ նա հասել է նպատակին: Թատրոնի ստեղծման եւ լինելության, նրա ավանդույթների, բեմադրողների, անվանի դերասանների, ամբողջ կոլեկտիվի ձեռքբերումների մասին ասվել է լուրջ խոսք:

Ուսումնասիրությունը ամբողջության մեջ ապացուցում է հեղինակի քաջատեղյակությունը թատրոնի պատմությանը: Գրքի առաջին գլուխը (1932-1934 թ.թ.) թատրոնի կազմակերպման, նրա հիմնադիրների, առաջին քայլերի պատումն է: Հեղինակի երախտագիտական խոսքը թատրոնի հիմնադիր Կ. Ալվարյանի մասին հնչում է բոլոր այն հանդիսականների սրտից, ովքեր իմացել են նրան, ում աչքերի առջեւ սիրողական խմբի հիման վրա նա կազմակերպեց մի կոլեկտիվ, որը 1932 թ. օգոստոսի 11-ին քննություն բռնեց Վ. Վաղարշյանի «Օղակում» պիեսի բեմադրությամբ: Ի. Ալավերդյանը կոնկրետ փաստերով ցույց է տալիս թատրոնի կոլեկտիվի, առանձնապես Կ. Ալվարյանի, Աննա-Մելիքի, Ի. Հովհաննիսյանի, Ջանոյանի, Ա. Միրզոյանի եւ այլ երախտավորների առաջին հաստատումն քայլերը, որոնք խրախուսվեցին հայ բեմի մեծամուն ներկայացուցիչ Վ. Փափազյանի կողմից:

Գրքի երկրորդ գլխում Ի. Ալավերդյանը ներկայացնում է թատրոնի 1935-1941 թվականների պատմությունը: Այդ ժամանակաշրջանում թատրոնի խաղացանկը հարստանում է ազգային եւ համաշխարհային դրամատուրգների նշանակալից երկերով: Այս գլխում ընթերցողը հանդիպում է նոր անունների՝ Գ. Թավրիզյան, Մ. Կորգանյան, Թ. Մելքունյան, Ա. Ղազունյան եւ ուրիշների, որոնք

մինչև իրենց կյանքի վերջը անձնուրաց ծառայել են թատերական արվեստին:

Ծիշտ է վարվել հեղինակը, որ առանձին գլուխ է նվիրել թատրոնի 1941-1945 թ.թ. գործունեությանը: Այդ մոտեցումը բխում է սովետական ամբողջ մշակույթի էտապային զարգացումից: Հայրենական պատերազմը մեծ քննություն էր սովետական ժողովրդի համար, եւ թատրոնը այդ մեծ քննության ակտիվ մասնակիցն էր: Կոլեկտիվը շրջագայում էր խմբերի բաժանված, ներկայացումներ տալիս գյուղերում, զորամասերում, հոսպիտալում:

Թատրոնի 1946-1947 թ.թ. գործունեության մասին խոսք է ասվում չորրորդ գլխում: Հեղինակը այս փուլը բնութագրում է որպես որոնումների եւ ինքնահաստատման բեղուն ճանապարհ: Այդ տարիներին է, որ կանոնավորվում է խաղացանկը, տարին 6-7 բեմադրություն է տրվում, ըստ որում թատրոնը ձեռնամուխ է լինում լուրջ գործերի: Այդ ժամանակահատվածում բեմադրվում է 71 նոր պիես: Ի. Ալավերդյանը փաստերի լուրջ իմացությամբ գնահատում է առավել հաջողված ներկայացումները, ընդգծում վաստակաշատ բեմադրողների, նկարիչների, դերասանների քրտնաջան աշխատանքը: Թատրոնը համալրվում է նոր ուժերով, ստանում է նոր շենք՝ 360 տեղանոց դահլիճով: Լավ է, որ հեղինակը խոսում է ոչ միայն ներկայացումների մասին, այլեւ ստեղծում է օջախի ամբողջական պատմությունը: Իսկ այդ պատմությունը անընդհատ վերելքի, նորությունների պատմություն է: Հեղինակը իրավացիորեն այդ ժամանակահատվածը համարում է ստեղծագործական վերելքի տարիներ: Թատրոնի խաղացանկը հարուստ էր դասական եւ ժամանակակից հայ, ռուս, եղբայրական մյուս ազգերի դրամատուրգների ծանրակշիռ գործերով: Հեղինակը հանգամանորեն անդրադառնում է այն բեմադրություններին, որոնք ներկայացվել են ոչ միայն Ստեփանակերտում, այլեւ Բաքվում, Երեւանում եւ այլ քաղաքներում:

Գրքույկի վերջին, վեցերորդ գլխում խոսք է ասվում թատրոնի 1968-1981 թթ. ներկայացումների մասին: Այդ փուլը գնահատվում է որպես հախուռն վերելքի շրջան, երբ թատրոնը արդեն ձեռք է բերում իր հաստատուն դիմագիծը:

Այս շրջանի հաջողությունը հեղինակը կապում է առաջին հերթին առաջատար ուժերի հետ: Նշված տարիներին իրենց ուժերը թատրոնին նվիրեցին բեմարվեստի ճանաչված դեմքեր Մ. Կորգանյանը, Գ. Հարությունյանը, Ս. Համգոյանը: Թատրոնի վերելքին մեծապես նպաստել էլ նպաստում են բեմադրող ռեժիսոր Հ. Կարապետյանը, ժողովրդական արտիստներ Մ. Բալասանյանը, Բ. Օվչյանը, Ի. Հովհաննիսյանը, Մ. Միքայելյանը, Ջ. Գեւորգյանը, Վաստակավոր արտիստներ Ժ. Գալստյանը, Մ. Հարությունյանը եւ ուրիշներ:

Թատրոնի կոլեկտիվը իր գոյության տարիներին տվել է 301 բեմադրություն, որոնք խաղացել են 16140 անգամ: Այդ ներկայացումները դիտել են հինգ միլիոն հիսուն հազար հանդիսատեսներ: Իսկ ամենից հաճելին եւ ուրախալին այն է, որ ինչպես գրում է հեղինակը, «Թատրոնի գրկում աճել է շնորհալի արտիստների մի գեղեցիկ բույլ, որ այսօր իր ուսերին տանում է խաղացանկի բեռը: Թատրոնի կեսդարյա ծանրակշիռ վաստակը այն առհավատչյան է, որ նրա գործունեությունն էլ ավելի լիարժեք, բարձրարվեստ կլինի հաջորդ հիսնամյակում»:

Գիրքը հետաքրքիր մի տարեգրություն է, ուր ընթերցողը հաճույքով ծանոթանում է թատրոնի բոլոր բեմադրող ռեժիսորների, նկարիչների, երիտասարդ ուժերի գործունեությանը: Գիրքը կհետաքրքրի ոչ միայն թատրոնի պատմությամբ զբաղվողներին, այլև մասսայական ընթերցողներին:

Քննարկվող գիրքը ապացուցում է, որ հանձին Ի. Ալավերդյանի թատրոնն ունի իր գրող-թատերագետ բարեկամը, որը դեռեւս կասի իր խոսքը մեր մշակույթի այդ կարեւոր օջախի պատմության մասին:

*«Սովետական Ղարաբաղ»,
23 հուլիսի, 1983 թ.*

«ՌԻԶԱՐԴ ԵՐԿՐՈՐԴ»

Դժվար է հաշվել գեղագիտական հաճույքի այն պահերը, որ նվիրել են Շեքսպիրի դրամատիկական երկերը հողագոյի բազմամիլիոն հանդիսատեսներին: Չորս դարից ավելի է, ինչ նա մտել է քաղաքակիրթ աշխարհի մշակույթի անդաստանը եւ դարձել բոլոր ժողովուրդների հոգեւոր զավակը:

Հանճարեղ գրողի ստեղծագործությունները թարգմանության, բեմականացման, ինչպես նաեւ շեքսպիրագիտության բնագավառներում հայ մշակույթի ներկայացուցիչները քայլում են շեքսպիրի երկրպագուների առաջին շարքում: Անգլիական մեծ գրողի պիեսները դեռեւս 19-րդ դարից սկսած հաստատուն կերպով մտել են հայկական թատրոնների ռեպերտուարների մեջ: Դերասանական մի քանի սերունդներ են դաստիարակվել շեքսպիրյան պիեսների բեմադրությունների շնորհիվ, և այդ կարեւոր գործը հարատեւում է:

Այդ փառավոր ավանդույթի շարունակողներից է Կիրովականի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնը: Աբելյանցիները հանդիսատեսի դատին են հանձնել Շեքսպիրի «Ռիչարդ Երկրորդ» պատմական քրոնիկը: Բնականորեն, նրանք ձեռնամուխ են եղել բարդ ու դժվարին գործի: Սակայն շտապենք ասել, որ կոլեկտիվը պատվով է բռնել քննությունը, նրա ուսերը չեն կքվել պիեսի հարուցած դժվարություններից:

Ո՞րն է հաջողության գրավականը:

Նախ պետք է նշել թատրոնի գլխավոր ռեժիսոր Վահե Շահվերդյանի կատարած քրտնաջան աշխատանքը: «Ռիչարդ Երկրորդ»-ի գաղափարական բովանդակության եւ գրողի գեղագիտական իդեալի բացահայտման հարցում բեմադրիչը գտնվել է անհրաժեշտ բարձրության վրա: Դրա շնորհիվ էլ անմահ ստեղծագործության գաղափրը գտել է իր թատերական մարմնացումը:

Շեքսպիրի պատմական քրոնիկոններում, այդ թվում եւ «Ռիչարդ Երկրորդ»-ում, պատկերված է անգլիայի միջնադարյան անցյալը առանձնապես թագավորական տարբեր դինաստիաների անկման ու առաջացման պատմությունը: Շեքսպիրը իր հանճարի մեծ ուժով ներկայացրել է այն էպոխաները, երբ մի կողմից ֆեոդա-

լական ազնվականությունը քայքայվում էր, ջախջախվում, իսկ մյուս կողմից համակենտրոնացվում եւ ուժեղանում էր թագավորական իշխանությունը: Էնգելսը այդ ժամանակաշրջանի մասին գրել է. «Եվ քաղաքներում, եւ գյուղերում, ամեն տեղ, ազգաբնակչության մեջ աճում էր այն էլենենտների քանակը, որոնք ամենից առաջ ցանկանում էին, որպեսզի վերջ տրվեր անվերջ եւ անմիտ պատերազմներին, ֆեոդալական երկպառակություններին, որը հասցրեց այն բանին, որ երկրի ներսում տեղի էր ունենում պատերազմ նույնիսկ այն դեպքում, երբ արտաքին թշնամին երկրում էր, որպեսզի վերջ տրվեր այն անընհատ եւ միանգամայն անհմաստ ավերածությունների վիճակին, որը շարունակում էր անփոփոխ գոյություն ունենալ միջին դարերի ամբողջ ընթացքում: Այդ էլենենտները, իրենց ցանկությունները իրագործելու համար թույլ լինելով՝ ուժեղ պաշտպանություն էին գտնում ֆեոդալական կարգերի պարագլուխ թագավորի մոտ»:

Գրելով իր պատմական քրոնիկոնները, Շեքսպիրը ջատագովել է այն ժամանակվա համար առաջադիմական միտում՝ կենտրոնական թագավորական իշխանություն ունենալու զաղափարը, որովհետեւ, ինչպես Էնգելսն է ընդգծել. «Նա հանդիսանում էր կարգի ներկայացուցիչը անկարգության մեջ, ձեւավորվող ազգի ներկայացուցիչը ի հակադրություն խռովություն բարձրացնող վասալային պետության անջատվածության»:

Բեմադրիչը լավ է հասկացել Շեքսպիրին: Նա գործին կպել է նվիրումով, ստեղծել արժանավայել բեմական մնայուն արժեք: Նա պիեսում որոշ կրճատումներ կատարելով հանդերձ, ուշադրության կենտրոնում է պահել շեքսպիրյան ենթատեքստի այն երանգները, որոնցով պարզ ընդգծվում է միջնադարյան ֆեոդալական կարգերի դաժանությունը, երբ պալատական եղբայրները կարող էին սրախողխող անել միմյանց, կարող էին իրենց կապերը անվերադարձ խզել հայր եւ որդի, երբ մեքենայությունները, խարդախությունները, մատնությունները, դավաճանությունները դարձել էին գործունեության ընդունված ձեւեր՝ ազնվականության շրջանում: Դա պիեսի ճանաչողական կողմն է: Բեմադրիչը ձգտել է պահպանել երկի դաստիարակչական արժեքը, այսինքն արդիական հնչո-

ընթացումն էլ անհրաժեշտ է համարել: Ներկայացման մեջ գլխավոր ել երկրորդական սյուժետային գծերի հնուտ բացահայտումը ժխտում, բացառում է պատերազմները, դավաճանությունը, նենգությունը, ժողովրդի շահերի անտեսումը: Ներկայացման հասարակական այդ հնչողությունը հարազատ է ժողովրդի ազնիվ ձգտումներին: Բեմադրիչը դրսևորել է իր կոնցեպցիոն մոտեցումը պիեսին, ընդգծել է բարոյական ու գեղագիտական արդիական հնչողություն ունեցող գաղափարներ: Շեքսպիրի պիեսի ընձեռած ծավձալ շերտերը բացվել են նորովի: Բեմադրիչ-դերասան ուժերը գնացել են դեպի ներկայացման խորքը, ստեղծել գեղագիտական հաճույքի շատ ակունքներ: Երեք ժամից ավելի տևող ներկայացումը անտես թելերով թափանցում է հանդիսատեսի արյան մեջ ել այնտեղից անցնում սրտին ու մտքին: Աբելյանցիների մարմնավորած կերպարները հնչեցնում են մարդու ել մարդկային, բարու ել բարության հաղթանակի կոչեր, մղում չարի ել չարության, մոլախոտի ել մոլության վերացման: Այդ կերպարները ներկայացնում են ոչ թե որպես փոշածածկ պատմական էտապի վկաներ, այլ իրենց գործ ու փորձով այսօրվա բարոյականության դիտակետից հանդես եկող խորհրդատուներ:

«Ռիչարդ Երկրորդ»-ի բեմադրությունը խիզախություն է արելյանցիների համար: Նախ, Միության թատրոններում երբեք չի բեմադրվել այն, երկրորդ, Կիրովականի թատրոնը չի կարող համեմատվել ավելի մեծ կարողություններ ունեցող կենտրոնական թատրոնների հետ: Այնուամենայնիվ, արելյանցիներն ապացուցեցին, որ ուր որոնում են, այնտեղ գտնում են, գրավում են բարձունքներ: Պիեսը ենթատեքստային շերտեր ունեցող գործ է: Շեքսպիրյան ռեալիզմը հեռու է ճշան տենդեցիոզությունից: Հանճարեղ գրողի գեղագիտական իդեալը լուսավոր միապետ ունենալու միտում է: Բայց պիեսում նման իդեալական թագավոր չկա: Ոչ Ռիչարդ Երկրորդը, ոչ էլ Հենրի Բուլիմբրոկը գրողի իդեալները չեն: Շեքսպիրը, խարազանելով նրանց գահածարավ ձգտումները ել գահակործան արարքները, քարոզում է իր երազածը, իր իդեալը: Ահա թե ինչպիսի հակասական, հիրավի բարդ կերպարներ պիտի մարմնավորեն դերասանները, գրողի լուսավոր երազանքների ինչպիսի

Չողեր պիտի ծիածանվեին բեմական հնարքների եւ պիեսի ընտիր, համապատասխան մասերը հնչեցնելու օգնությամբ: Թատրոնի դերասանական խումբը պատվով է կատարում իր գործը: Ներկայացման ծանր բեռը ամբողջ կոլեկտիվի վրա է ընկած, բայց այդ բեռի առյուծի բաժինը գտնվում է դերասան Ռ. Խոսրոբեի (Ռիչարդ Երկրորդ), ՅՍՅՅ վաստակավոր արտիստ Յ. Ազիզյանի (Յենրի Բոլինբրոկ) եւ դերասանուհի Յ. Ալեքսանյանի (Ժամանակ) ուսերին:

Ռ. Խոսրոբե-Ռիչարդ Երկրորդը գահին իշխելու առաջին րոպեներից մինչեւ այն լքելու պահը ցուցադրում է մերթ հաղթանակած ու բորբոքում, հրամայող ու հետամուտ, մերթ տազնապած ու անհաջողակ, տանուլ տված ու կորցրածը հետ բերելու անընդունակ իշխողի հոգեբանություն: Դիմամիկ զարգացումի եւ զառիթափ անկումի կերպար մարմնավորելով, Ռ. Խոսրոբեը ներկայանում է որպես բեմական լայն հնարավորություններ ունեցող, փորձառու եւ ինքնատիպ դերասան: Նա իր առնական ծայնի ու չղավաճանող հիշողության շնորհիվ ամբողջ ներկայացման ընթացքում շեքսպիրյան բնագրի փիլիսոփայական, իմաստուն ընդհանրացումները հասցնում է հանդիսատեսին, ալեկոծում, հուզում նրան, ստիպում նայել իր ներսը, գնահատել իրեն այսօրվա բարոյականության պահանջների չափանիշով:

Յ. Ազիզյան-Յենրի Բոլինբրոկը տաքարյուն ու հաշվենկատ, խորամանկ ու վրիժառու կերպար է: Հանդիսատեսի անկեղծ ու չխամրող սիրուն արժանացած Յ. Ազիզյանը ինչպես իր բոլոր պատասխանատու դերերում, այնպես էլ Յենրի Բոլինբրոկի կերպարում ինքնամոռաց ու անմիջական է, բնական ու անկաշկանդ: Դերասանը կերպարի հոգեբանության բացահայտման վարպետ է:

Նա իր հերոսի բարդ ապրումների աստիճանական շարքը՝ մեծամարտ՝ պատվասիրության մղումով, աքսորականի տառապանք, վրիժառուի ճկունություն, իր նախորդի դիակի վրայով գահ բարձրանալու վճռականություն եւ իրականացում,- ներկայացնում է բազմազան երանգներով, կատարողական մակարդակով, ապրումների խորքով:

Միջնադարյան-ազնվականական Անգլիայի ոգին ներկայացման մեջ արտահայտվում է ժամանակի կերպարի միջոցով, որը

մարմնավորում է երիտասարդ դերասանուհի Հասմիկ Ալեքսանյանը: Ջարմանալի ճկունությամբ, արտասանական նախանձելի կարողությամբ նա, մերթ նգովելով ու ողբալով, մերթ հրճվելով ու թախծելով, ներկայացնում է Շեքսպիրի մարգարեական ընդհանրացումները էպոխայի ոգու ու վերահաս աղետների մասին: Որպես իրադրությունների ակտիվ մասնակից ու վկա, Հ. Ալեքսանյանի մարմնավորած ժամանակը մեծապես նպաստում է ներկայացման հաջողությունը:

«Ռիչարդ Երկրորդ»-ում զբաղված բոլոր դերասանները իրենց տեղում են: Նրանք ճիգ ու ջանք չեն խնայում հաջող դերակատարումների, հանճարեղ տեքստը հանդիսատեսին հասցնելու, բազմազան իրավիճակները սրընթաց ու ազդեցիկ ցուցադրելու համար: ՀՍՍՀ վաստակավոր արտիստներ Ա. Հովհաննեսյանը (Ջոն Գոնտ), Լ. Փաշինյանը (Յորքի դքսուհի), Է. Աղամյանը (թագուհի), Գ. Պապյանը (Յորքի դուքս), Հ. Թորոսյանը (Դուժա Օմեռ), Ժ. Գաբրիելյանը (կոմս Նորթենբերլենդ), Ս. Փիլոյանը (Թոմաս Մաուբրի) եւ ուրիշներ, մի խոսքով՝ ամբողջ կոլեկտիվը, ստեղծել են մոնումենտալ ներկայացում՝ մասսայական տեսարանների հղկվածությամբ:

Բեմադրիչ Վ. Շահվերդյանը, ձեւավորող Խ. Ղարաբեկյանը գտել են ներկայացման գաղափարական բովանդակության ինքնատիպ ու կոլորիտային լուծումը: Շղթաներից կախված եւ շղթաներով օղակված գահը, միջնադարյան բերդի գորշ պատերը հիշեցնող վարագույրները, ձիգ խուցերը եւ երկաթակուռ դռները խորհրդանշում են թագավորական իշխանության խախտությունն ու ինտրիգները, ժամանակի դաժան ոգին: Հաճելի տպավորություն են թողնում զգեստների բազմազանությունը (հեղինակ՝ Ն. Կազիրելովա) եւ երաժշտությունը (ձեւավորող՝ Մ. Չուլակյան):

Շեքսպիրի «Ռիչարդ Երկրորդ»-ը ոչ միայն արեւմտագիտության հաջողությունն է, այլեւ սովետահայ թատերական արվեստի նվաճումներից, որով կարող է հպարտանալ յուրաքանչյուր կոլեկտիվ:

**«Սովետական Ղարաբաղ»,
12 հոկտեմբերի, 1985 թ.**

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՐՈՐԲՈՔ ՀՈԳՈՒ
(Մարզո Բալասանյան-70)

Աշխարհահռչակ դերասան Վահրամ Փափաջյանի ծննդյան 110-ամյակին նվիրված հանդիսավոր երեկույթի ժամանակ ելույթ ունեցավ նաև ժողովրդական արտիստուհի Մարզո Բալասանյանը: Նրա խոսքի մեջ ծիածանվեց եւ հպարտության, եւ ավստսանքի օրինական մի զգացում: Հպարտության զգացումը պայմանավորված էր երկու պատճառով, առաջին, որ հայ բեմը ունեցել է Վ. Փափաջյան, երկրորդ, որ ինքը մեծանուն արվեստագետի անհամար Դեզդեմոնաների շարանում գրավել է իր ուրույն տեղը: Ավստսանքի զգացումը կապված է արագ անցնող ժամանակի հետ: Արդեն մի քանի տարի է, ինչ Վ. Փափաջյանը բացակայում է թատրոնից ֆիզիկապես, իսկ երեկվա թռվռուն, վարդագույն ու վարդաժպիտ դերասանուհին այսօր 70 տարեկան է:

Կնոջ տարիքը չեն հարցնում եւ չեն ընդգծում: Սակայն այս անգամ երախտագիտության զգացումով եւ հոգեկան ներքին խանդաղատանքով նշենք, որ Մարզո Բալասանյանը արդեն յոթ տասնամյակների ծաղկազարդ բարձունքին է հասել հոգին վառ աստղերով լեցուն, սիրտը երազներով, շրթերին իր մշտահուլով խոսքը. «Ես քոնն եմ, իմ թատրոն, եւ քո միջոցով իմ ժողովրդինը»:

Բոլոր նրանք, ովքեր սերտորեն կապված են եղել Ստեփանակերտի Վ. Փափաջյանի անվան հայկական դրամատիկական թատրոնի հետ, կարող են հաստատել, որ Մ. Բալասանյանը այդ օջախի առաջին մեծության աստղերից է, նրա նվիրյալը, խոնարհ ծառան ու հոգատար մայրը, տառապյալն ու երջանիկը, խաչակիրն ու տիրուհին: Թատերասերներն ու թատերագետներն այդպես են ճանաչում նրան, որովհետեւ գիտեն, որ նա ընտրել է թատրոնը ոչ թե ապրելու համար, այլ նրան ապրեցնելու, թելավորելու, իմաստավորելու: Այդ են վկայում հինգ տասնյակ տարիների ընթացքում նրա մարմնավորած 120-ի հասնող մնայուն կերպարները եւ ընդհանրապես օջախը կանգուն պահելու նրա անձնուրաց ծառայությունը:

Մ. Բալասանյանը արցախյան ոգու խորհրդանիշերից է: Նրա աստվածային շնորհքը անթիվ է և անքուն գիշերների տառապանքի շնորհիվ փարոսվել է որպես դերասանական արվեստի խտացում: Եւ եթե այսօր կամ վաղը որեւէ մեկը հարցնի, թե որտե՞ղ կարելի է տեսնել սիրելի դերասանուհուն, յուրաքանչյուր ոք կարող է հիացմունքով պատասխանել. «Մ. Բալասանյանին որոնեցեք իր կերտած բազմաթիվ կերպարների պատկերասրահում, Արցախ աշխարհի լեռնալանջերին ու ծերպերին ծվարած գյուղերի բնակիչների կրծքերի տակ, հայ մայրերի հոգիներում, երիտասարդների թռիչքներում, զինվորյալների հաղթական հայացքներում, հայոց թատրոնի երկնակամարի աստղերի մեջ»:

Մ. Բալասանյանը այդ սիրուն արժանացել է իր տաղանդի լույսը շող առ շող հանդիսատեսներին ընծայելու շնորհիվ: Նա, հիրավի, բախտավոր դերասաններից է, որովհետեւ Գայանե է խաղացել Ավետարանոց գյուղի հին բերդի պարիսպների մոտ, այն բնության գրկում, որի օդն էր շնչել Գայանեն, որտեղ գործել է իր անօրինակ հերոսությունը: Նա Անահիտ է խաղացել Հացիկ գյուղում, Անահիտի զուլալ աղբյուրի մոտ, իսկ Ռուզանին ներկայացրել է Գանձասարի հայացքի տակ, ջրաբերոցիների բուն ծափահարությունների ուղեկցությամբ: Հայրենասիրական ջերմ մղումներով նա ոգերով է մեր ժողովրդի լուսավոր ավանդներով եւ օգետրել հանդիսականներին:

Այդ հանդիսատեսը, որ Մ. Բալասանյանի սերնդակիցն է, հետադարձ հայացք ձգելով մեր թատրոնի հետպատերազմյան շրջանում անցած 50-ամյա փառավոր ճանապարհին, նրա բոլոր խաչմերուկներում կարող է տեսնել սիրելի դերասանուհու որոնումներն ու զննումները, մաքառումներն ու հավատը ժողովրդի հոգեւոր հացի համն ու հոտը տեղը բերելու ձգտումով: Այդ մղումով է նա սիրահարվել թատերական արվեստին ու միշտ մնացել նրա նվիրյալը:

1945 թ. Ստեփանակերտում ավարտելով միջնակարգը, նա ընդունվեց Երեւանի թատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետը: 1949 թ. գերազանց դիպլոմով աշխատանքի անցավ

Սոր Բայազետի շրջանային պետական թատրոնում: Կարճ ժամանակամիջոցում նա այնտեղ մարմնավորեց 13 կերպար, որոնց թվում էլմիրը Սուլիերի «Տարտյուֆ» պիեսում, Ջեմման ըստ Վոյնիչի «Բոռ» ստեղծագործության, Սալոմեն Գ. Սուդուկյանի «Էլի մեկ զոհում», Նատաշան Շիրվանզադեի «Մորզանի խնամին» կատագերգության մեջ արժանացավ թատերասերների ջերմ ընդունելությանը եւ թատերագետների դրվատանքին:

1953 թ. Մ. Բալասանյանը հրավիրվեց Ստեփանակերտ: Նրան վստահեցին պատասխանատու դերեր: Սովորելով հայ բեմի վարպետներից, անցավ ինքնաբացահայտման, ինքնաճանաչման եւ ինքնահաստատման կամուրջներով ու գրավեց իր տեղը թատրոնում: Հանդիսականների սերն ու հարգանքը վայելող Կ. Ալվարյանի, Ա. Հովսեփյանի, Ա. Արզումանյանի, Գ. Հարությունյանի, Մ. Կորզանյանի, Ա. Ղազումյանի, Ս. Համգոյանի, Օ. Սարգիսբեգյանի, Բ. Օվչյանի, Ջ. Գեւորգյանի, Մ. Միքայելյանի, Ն. Ասատրյանի, Մ. Հարությունյանի եւ մյուս ճանաչված վարպետների հետ միասին նա ապահովեց մեր թատրոնի վերընթացը:

Մ. Բալասանյանը աշխարհ է եկել թատերական արվեստի համար: Նա պետք է հայուհու բոլոր բարենասնությունները թատերական բեմահարթակներից ցուցադրեր մարդկանց: Հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական եւ ողբերգական էջերի բոլոր երազները նա կարողացավ բացահայտել Ռուզանի (Մուրացանի համանուն պիեսում), Սուսանի (Շիրվանզադեի «Նամուս»-ում), Արմենուհու (Շիրվանզադեի «Արմենուհի» դրամայում), Անահիտի (Ղ. Աղայանի համանուն հեքիաթում) եւ տասնյակ այլ բարդ դերերի կատարումներով:

Հայոց թատրոնը, որ անցել է ավելի քան երկու հազար տարվա ճանապարհ, միշտ կապված է եղել համաշխարհային թատերագրության հետ, սնվել է նաեւ անմահ դրամատուրգների թատերկերի բեմականացմամբ: Այդ ավանդույթը սկիզբ է առել դեռեւս մ.թ.ա. 53 թվականից, երբ Արտաշատում բեմադրվել է հույն ողբերգակ Էվրիպիդեսի «Բաքոսուհիներ» պիեսը: Այդ ավանդույթին նոր օրերում անմասն չմնաց նաեւ Ստեփանակերտի թատրոնը: Այս

Մուղղությամբ եւս իր հոգու գույները պիտի ցուցադրեր Մ. Բալասանյանը որպէս Դեզդենոնա (Շեքսպիրի «Օթելլո»), Յերմիոն (Շեքսպիրի «Ձմեռային հեքիաթ»), Սի-Ֆին («Թալֆուն»), Վասսա (Մ. Գորկու «Վասսա ժելեզնովա»), Վալյա (Արքուզովի «Իրկուտսկյան պատմություն»), Գոսենա (Վ. Գազլուեի «Ասք մոր մասին»), Ժիվկա (Բ. Նուշիչի «Տիկին մինիստրուհին»), Տատիկ (Ալ. Կասոնայի «Ծառերը կանգնած են մահանուն») եւ այլն եւ այլն: Այդ դերակատարումները ոչ միայն դերասանական արվեստի ինքնատիպ բացահայտումներ են, այլեւ տարբեր ժողովուրդների ազգային բնավորությունների հոգեբանական դրսեւորումներ, որ կարող են ցուցադրել ոչ բոլոր դերասանուհիները:

Թատերական արվեստի, դերասանական խաղի ամեղծվածային նրբերանգներին տիրապետած Մ. Բալասանյանը նաեւ ուղեցույց աստղ է մեր տեղական հեղինակների համար: Նման բարձրության հասած դերասաններ կան, որոնք մտածում են իրենց ժամանակի ճիշտ օգտագործման, միայն դասական եւ արդի հանրահայտ հեղինակների կերտած կերպարների մարմնավորման մասին: Սակայն այդպիսին չէ Մ. Բալասանյանը: Նա մոր, քրոջ, դստեր սիրով է վերաբերվել Արցախում ապրող եւ ստեղծագործող գրողների դրամատիկական երկերին ընթացք տալու գործին: Նա գլխավոր դերերում հանդես եկավ Ի. Ալավերդյանի «Ախ սեր», Վ. Օվյանի «Մեծ Լոռեցին», Ա. Դանիելյանի «Վառվող պատիվ», Վ. Յակոբյանի «Արցախյան բալլադ» պիեսների թատերականացման ժամանակ: Դրանք եւս դեպի հայրենի օջախն ունեցած ազնիվ սիրո վկայություններ են:

Մ. Բալասանյանի հայրենասիրության, ժողովրդասիրության փայլուն ապացույց կարող է ծառայել նաեւ ժողովրդի տառապանքին մշտապես հաղորդակից լինելու, նրա ցավը կրելու, հուսավառելու պատրաստակամությունը: 1988 թ. սկզբից սկսած ամենածանր օրերին նա ձեռքը դրեց հայ ժողովրդի վերքին, ոգեշնչումի անսպառ եռանդով շարունակեց իր ազգանվեր գործը:

Իր թատերական կյանքի հիսուն տարիները Մ. Բալասանյանի հուշերի աշխարհում ծփում են որպէս ցորենի հասուն հասկեր, մր-

Վառատ այգիների բուրյան ծածանումներ, ժպիտների ու արցունքների ամենամարդկային դրսևորումներ, հասարակական եւ ստեղծագործական աշխատանքների ներդաշնակություն: Նրա իմաստալից կյանքը սերտորեն հյուսված է Ստեփանակերտի թատրոնի կոլեկտիվի կողմից 20 հազար անգամ խաղացված 400 բեմադրությունների հետ, որի առյուծի բաժինը պատկանում է սիրելի հոբելյարին:

Ամեն օր Ստեփանակերտի Ազատամարտիկների փողոցով դեպի Վ. Փափազյանի անվան թատրոն է քայլում Մ. Բալասանյանը: Նա առաջվա պես գնում է մասնակցելու նոր պիեսների բեմականացման փորձերին, գնում է իր երկրպագու հանդիսատեսին հաճույք պատճառելու, իր սուրբ օջախի կրակը վառ պահելու, երիտասարդներին թելավորելու համար, գնում է իր ազատագրված Արցախի նորածին հանրապետության եռագույնի ծփանքների տակ համաքաղաքացիներին ողջունելու եւ Մեծն Չարենցի բառերով դիմելու իր ժողովրդին,

*Ինչքան որ հուր կա իմ սրտում - բոլորը քեզ,
 Ինչքան կրակ ու վառ խնդում - բոլորը քեզ,-
 Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա,
 Դու չմրսես ծնռան ցրտում,- բոլորը քեզ...*

Այս անգամ բազմավաստակ դերասանուհին թատրոն է հաճախել իր ինքնատիպ արվեստի երկրպագուների, իր գործընկերների հրավերով, որոնց սրտերի մեջ եւ հոգիներում ալիքվում է երիտասարդության ջերմ զգացումը, առողջության, երկարակեցության եւ նորանոր հաջողությունների բարեմաղթանքները:

**Ստեփանակերտ
 1988 թ.**

ԱՍՔ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԳՈՅԱՍԱՐՏԻ

Անվանի հայագետ Ս. Աբեղյանը հայ դպրությունը համարել է մաքառման գրականություն: Դարերի ընթացքում Հայոց աշխարհի դեմ կազմակերպված բոլոր պատերազմներում հայ ժողովրդի հերոսական գոյամարտը իր արտացոլումն է գտել գրականության մեջ: Այդ իսկ պատճառով հայ մշակույթը առաջին հերթին գնահատվել է որպես ազատության ու անկախության համար մղված պայքարի գեղարվեստական տարեգրություն: Ազերիների կողմից Արցախ աշխարհին պարտադրած պատերազմը նույնպես իր արտացոլումն է պահանջում: Եթե մենք ինչ որ չափով կարող ենք բավարարված խոսել մեր պատերազմական առօրյան պատկերող բանաստեղծության ու պոեմի, պատմվածքի ու ակնարկի մասին, ապա թատերական երկերի մասին ոչինչ ասել չենք կարող: Այդ այն դեպքում, երբ մեր հանրապետությունն ունի դրամատիկական թատրոն, որտեղ աշխատում է փորձառու եւ շնորհալի մի կոլեկտիվ, որից բազմիցս լսել եմ արդարացի պահանջ. «Ինչո՞ւ գրողները մեր պայքարի մասին պիես չեն գրում»...

Եվ ահա, ի պատիվ մեր գրական օջախի, բանաստեղծ Վ. Հակոբյանը գրել է «Արցախյան բալլադ» պիեսը, որը Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան հայկական դրամատիկական թատրոնը հանդիսատեսի դատին ներկայացրեց վերջերս:

«Արցախյան բալլադը» գրողի երրորդ պիեսն է: Մեր թատրոնը բեմադրել է նրա «Հայելիներ» եւ «Քո սերը քո տունն է» գործերը, որոնք բավականին ջերմորեն են ընդունվել հանդիսատեսի կողմից: Ասել է թե՛ դրամատուրգիական փորձն ու կուտակումը կա: Դա հնրավորություն է տվել հեղինակին ստեղծելու գեղարվեստական յուրովի առանձնահատկություններով հագեցած մի պիես, որը կառուցվածքային առումով էլ հետաքրքիր է ու թարմ: Հեղինակը ձգտում է հեռու մնալ ծեծված միջոցներից, եւ դա նրան հաջողվել է: Պիեսը աչքի է ընկնում կերպարների լիարյունությամբ, ենթաբնագրային շերտերով, հոգեբանական բացահայտումներով, խոս-

քի դինամիզմով, ժողովրդական ասացվածքի հասնող կենսափիլիսոփայական ընդգծումներով: Օրինակ՝ «Ճշմարիտ բառերը լույս են արձակում», «Ամեն հայի մեջ մի վանք. եկեղեցի կա», «Արարատից ձյուն են բերել Արցախի հրդեհը մարելու համար», «Ամին կորցրել են Արցախում, եկել են՝ գտնեմ» եւ այլն:

Հակոբյանը մատը դրել է հայ ժողովրդի ամենացավոտ վերքի՝ մեր հայրենիքի կորուսյալ տարածքների վրա: Ավարայրից մինչեւ Արցախ մաքառող հայոց ոգին անպարտելի է: Դարավոր թշնամին նորից է սուր բարձրացրել: Ուրեմն սուրբ է պայքարը, սուրբ է մեր թափած արյունը: Պիեսի կերպարները գործում են մեր օրերի ոգուն հարազատ, հանդիսատեսի սրտից բխող երեւույթների շուրջ, խոսում են մեր հոգեկան ապրումների, մեր ցավի եւ տառապանքի, մեր հավատի մասին: Հեղինակը իր պիեսը իզուր չի անվանել բալլադ: Ստեղծագործության երկխոսությունները, դեպքերի եւ դեմքերի քնարական գունավորումները, լարվածությունը, վերջապես հերոսական բնույթը հնարավորություն են տվել ստեղծագործելու մի բեմադրություն, որը դիտվում է ուշադրությամբ:

Բալլադի թեման լրիվ արդարացնում է իրեն: Ստեփանակերտցիների նկուղային ծանր կյանքը ոչ միայն պիեսի, այլեւ մեծակտավ երկերի է արժանի: Թեկուզ փոքրիկ Արցախը չունի թիկունք ու ճակատ, որովհետեւ թշնամու հեռահար արկերը պայթել են ամենուրեք, ինքնաթիռները ռմբակոծել են բոլոր քաղաքներն ու գյուղերը, միեւնույն է, մեր ազատամարտիկների թիկունքում ապրել են նրանց հարազատները, որոնց համբերությունը եւ հավատի շողերը ծիածանվել են թիկունքից դիրք, դիրքից՝ թիկունք: Պատահական չէ, որ ազերիների ղեկավարներից մեկը իր ժողովրդին խրախուսելու նպատակով օրինակ է բերել ստեփանակերտցիների դիմացկունությունը, նշելով, որ հայերը ռմբակոծվող իրենց քաղաքից դուրս չեն եկել, իսկ ազերի զինվորները թողնում են իրենց դիրքերը եւ ճողոպրում:

Հեղինակի գեղագիտական իդեալի դիրքերից բացահայտված մեր մարդկանց հերոսականության, ոգու արիության, պայքարի

վճռականության, հաղթանակի հավատի, անձնուրաց սիրո, ծնողների եւ զավակների ինքնամոռաց նվիրվածության եւ այլ ազնիվ գաղափարների բեմականացմամբ ստեղծվել է խոսու՛ն բովանդակություն ունեցող ներկայացում:

Այստեղ կարելու է համարում ընդգծել Կ. Աբրահամյանի բեմադրական աշխատանքը: Ռեժիսորական հնարքները՝ կոլորիտ ստեղծելու նպատակով, արդարացնում են իրենց: Նա դրամատուրգիական վիճակները հմտորեն վերածել է տեսարանների եւ միզանցեմանների, նկարչության եւ երաժշտության համադրմամբ ստեղծել գործողության միջավայր՝ դրսեւորելով պիեսի գաղափարական բովանդակությունը: Ռեժիսորը ճիշտ է ընտրել դերակատարներին: Նկատի ունենալով պիեսի բալլադային առանձնահատկությունները, տեղին է օգտագործել տեսիլքային երանգը՝ նահատակված հերոսի երկխոսությունը մոր հետ, խորհրդային ժամանակների ճառային մթնոլորտը ներկայացնող ամբիոնը եւ այլն:

Մ. Բալասանյան-Անուշի սերը թռան եւ ռազմաճակատում մարտնչող որդու ու հարսի նկատմամբ հայ տատիկի անմիջական եւ բնական զգացում է: Հոգեբանորեն համոզիչ են նրա տազնապն ու հպարտությունը: Ներկայացման սկզբից մինչեւ վերջ տաղանդավոր արտիստուհին հանդիսատեսին տանում է դեպի իր ապրած օրերը, բացահայտում արցախյան տատիկների քնքուշ սրտերի թրթիռներն ու հույզերը: Հավատում ես Բալասանյանի Անուշին՝ հասարակ ու տառապյալ, վշտաբեկ ու կենսասեր այդ մեծ մորը:

Բեմական արվեստի առինքնող մի էպիզոդ է Ժ. Սովսիսյանի՝ հայրական վշտից բխած ճիչը: Նա որդեկորույս հոր տառապանքը բացահայտում է անկաշկանդ ու համոզիչ: Ծանր վշտի մեջ նրա «բա իմ արյան կարգը ո՞րն է» բացականչությունը վիրավոր ազատամարտիկին արյուն տալու կապակցությամբ, ավելի լիարյուն է դարձնում կերպարը: Արդարացվում են նրա հոգեբանական անցումները՝ «պարտիական» ժորայից մինչեւ որդեկորույս հայր եւ ապա դիրքերը մեկնող ազատամարտիկ:

Չնայած ժանրի ընձեռած սուղ հնարավորություններին, կոմիկական խաղով հաճելի տպավորություն է թողնում Մ. Միքայելյանը Պուղուն մարմնավորելիս: Բնական խաղով իր բարձրության վրա է մեր բեմի վարպետ Բ. Օվչյանը (Արշակ): Մ. Հարությունյանը (Սերոժ) ստեղծել է հյութեղ, խիստ կոլորիտային, համոզիչ մի կերպար: Բ. Հարությունյանի (Հակոբ) դերամարմնավորումը անկաշկանդ է ու անմիջական: Բալլադային ժանրից բխող միջամտություններն ու մեկնաբանումները հաջող է կատարում Ռ. Ավինյանը (Պատմիչ): Ա. Պետրոսյանի Գեղամը արժանի է ամենայն գովասանքի: Ներկայացման ընթացքում Գեղամը լրիվ դրսևորում է իրեն: Մեր պատերազմը եւս ունեցավ իր օրենքները: Դրանցից ամենակարեւորը համատարած հայրենապաշտության եւ հերոսականության դրսևորումն է: Կենսական ու ռեալ է Գեղամի կերպարը: Տասնյակ նման պատանիներ Դիզակից մինչեւ Ջրաբերդի դիրքերը իրենց դրսևորել են որպես հայրենիքի նվիրյալներ: Գեղամը նրանց նախնական ձգտումների մարմնավորումն է, ապագա զինվորյալների խոստումնալից առահավատչյան:

Ներկայացման հաջողությանը նպաստում են Ս. Վիրաբյանը (Հովե), Ս. Ալոյանը (Արեգնուհի), Ս. Եվրիյանը (Մուշեղ), Ս. Թովմասյանը (Կին), Ն. Ավետիսյանը (Սաթենիկ), Մ. Հայրապետյանը (Վարդան): Միայն եղեռն տեսած ժողովրդի դուստրը կարող է սիրած տղայի նվիրած ծաղիկը դնել ճյուղատված ծառի ճեղքում ու ասել. «Այստեղ թռչունի բույն է ավերվել»:

Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի կոլեկտիվը ստեղծել է մի ներկայացում, որը մեր սրբազան գոյամարտի բեմական վավերացման առաջին փորձն է եւ արժանի է ամենայն խրախուսանքի:

*«Եղիցի լույս»
Փետրվար, 1995 թ.*

**ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՄԵԶ ՀՈՒԶՈՂ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Սիրո եւ ընտանիքի թեման միշտ էլ եղել է համաշխարհային գրականության հոլովվող առանցքում: Հին հույն ողբերգակներից մինչեւ մերօրյա գրողներն իրենց պարտքն են համարել արծարծել կենսական նշանակություն ունեցող այդ հիմնահարցը, որը դարեր շարունակ հանդիսացել է մարդկային բարոյականության ամենազգայուն եւ կարեւոր ազդակը՝ անձնական կամ հասարակական առումով: Ամենուրեք թեւավոր խոսք է դարձել այն համոզմունքը, որ հաստատում է առողջ ընտանիքի կարեւորությունը առողջ հասարակության համար: Այս առումով խրախուսելի բայլ է կատարել Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը՝ բեմադրելով ֆինն դրամատուրգ Է. Ռսլակիի «Այլանդակ էլզան» կատակերգությունը:

Պիեսի հեղինակը ընտանիքի եւ սիրո խնդիրն արծարծել է ժամանակակից կյանքի ֆոնի վրա: Կոմիկական հնարքներով թեմայի բացահայտման համար նա ստեղծել է ճակատագրով միմյանց հետ կապված չորս զույգերի: Գեղագիտական իդեալը անչափ մարդկային է՝ եւ գեղեցիկ՝ եթե սիրել, ապա ջերմ ու ազնիվ, անձնուրաց ու անդավաճան: Սիրո զգացումը անհարիր է նյութական շահերին: Դրամատուրգը թեմայի իր մտահղացումը մարմնավորելու համար օգտվել է երգիծական ժանրերին հատուկ ե՛ւ չափազանցությունից, ե՛ւ գրոտեսկից: Նա կերպարների ու վիճակների ծիծաղելի կողմերը խտացնում է հմտորեն՝ չմոռանալով գեղարվեստական հնարավորությունների ճշմարտացիության եւ տիպականության կարեւորությունը: Սիրո- ընտանիքի կազմավորման հարցերի շրջանակում է. Ռսլակին հասել է կենսական ընդհանրացումների՝ ցուցադրելով մի կողմից բարոյական սնանկության առկայությունը, մյուս կողմից՝ այդ սնանկությունը վերացնելու անհրաժեշտությունը: Դրամատուրգը մարդկային բնավորության թուլությունների ցուցադրումով միաժամանակ հաստատում է սիրո

Մուժն ու գեղեցկությունը:

Պիեսի հեղինակին խորապես հասկացել է թատրոնի գլխավոր ռեժիսոր Լ. Չարությունյանը: Նա իրականացրել է մի այնպիսի բեմադրություն, որն արդիական հնչողության հետ մեկտեղ ունենալու է երկար կյանք, որը բխում է պրոբլեմի կենսականությունից եւ բեմականացման հղկվածությունից:

Պիեսի բեմադրության վերնագիրը նույնն է՝ «Այլանդակ Էլզան»: Իրո՞ք Էլզան այլանդակ է, թե՞ այլանդակության ձգտող մարդիկ են նրա անվանը կցում այդ մակդիրը: Պարզվում է, որ «կյանքի ծիրից» դուրս համարվող երիտասարդ Էլզան ավելի նուրբ, ավելի մաքուր սիրտ ունի, քան նրան շրջապատող մարդիկ, որոնց հատուկ է եղկելին՝ սիրո մեջ առուծախի ձգտումը, ուրիշին տիրելու ծարավը, դիմացինի սիրտը փշրելու անզգա վերաբերմունքը:

Կատակերգության հեղինակի եւ բեմադրող ռեժիսորի ջանքերով մի շարք պատկերներում եւ տեսարաններում Էլզայի միջոցով խարազանվում են մարդկային փոխհարաբերություններում եղած կեղծիքը, շահամոլությունը, խաբեությունը, ստորությունը: Դիտավորյալ խաղերի դիմելով՝ Էլզան պատռում է դիմակն այնպիսի մարդկանց, որոնք խոսում են բարոյական վեհ զգացումների մասին, բայց առաջինն են ոտնահարում դրանք: Պրոֆեսոր Չարյուլան, որը որոշել է ամուսնանալ Էլզայի որբեւայրի մոր՝ Վիվիի հետ, ձգտում է արժանանալ իր ապագա դստեր շոյանքնրին ու սիրուն եւ պատրաստ է անզամ խուզել իր միրուքը, որովհետեւ այդ մասին ձեռ առնելու չափ ակնարկել էր Էլզան: Էլզայի առաջին խաղը պսակվում է հաջողությամբ: Ապա կատակերգության ընձեռած թյուրիմացության, հաճախ եւ անեկդոտային վիճակների մեջ Էլզան ի ցույց է բերում ուսանող Ուսկո Սամունենի եւ անասաբույժ Երկկիի բարոյական երերումները սիրո մեջ: Չէ՞ որ Ուսկոն եւ Երկկին սեր էին խոստացել Էլզայի քույրերին՝ Պաուլային ու Իրմային: Բայց հեղինակային մտահղացումը չի ավարտվում դրանով: Երկար բացակայությունից հետո Էլզային հանդիպում է մանկության եւ պատանեկության տարիների ընկեր Պեսի Օրա-

սը, եւ նրանց սրտերում ծփանք է տալիս իսկական, ազնիվ, անմիջական սերը: Հենց այդ անբացատրելի, աստվածային սիրո կրակի առկայությամբ էլզան ապացուցում է իր «այլանդակության» մաքրությունն ու բարձրությունը: Եվ հենց նրա ցանկությամբ էլ պրոֆեսոր Հարյուլան էլզայի համար բերած ծաղկեփունջը նվիրում է Վիվիին, Էրկկին՝ Պաուլային, Ուսկոն՝ Իրմային:

Բեմադրող ռեժիսոր Լ. Հարությունյանը դերերի բաշխումը կատարել է արտիստների արտաքին եւ ներքին բարեմասնություններին եւ դերասանական կարողություններին համապատասխան: Դա անչափ կարելոր է բեմադրության հաջողությունն ապահովելու առումով: Օգտվելով խոսքի եւ դրության կոմիզմի հնարքներից՝ դերասանները հաջողությամբ բացահայտում են իրենց մարմնավորած կերպարների հոգեբանությունն ու բնավորության գծերը: Սվետա Թովմասյան-Վիվին դեռեւս կյանքի հաճույքների ծարավ, սիրո դառնությունն ու քաղցրությունը զգացող մոր կերպար է, Արեգա Պետրոսյանի Պաուլան ընտանիքի սրբագործված սահմաններում սիրո վեհությանն հավատացող օրիորդ, Վեներա Ավազյանի Իրման՝ սիրո մաքրամաքուր նվիրումներին կարոտ անձնավորություն: Արմիդա Գաբրիելյանի Մինին ընտանիքի բոլոր անդամների վստահությանն ու սիրուն արժանացած աշխատակցուհի է: Քաջիկ Հարությունյանի մարմնավորած Ուսկո Սամունենը ուսանողական երազանքների ծանրակշիռ կրողն է, Սամվել Վիրաբյանի Էրկկին՝ իր մասնագիտությանը ինքնամոռաց նվիրված, միաժամանակ սիրո խաղերի հակուն ունեցող երիտասարդ է, Բենիկ Օվչյանի պրոֆեսոր Հարյուլան կյանքի խաչմերուկներով անցած, սիրո ջերմությունը դեռեւս չմարած, ընտանիքի կազմելուն նյութականը կարելորդ, միաժամանակ սիրո խաղերում ծիծաղ հարուցող անձնավորություն է: Հաճելին մաւ այն է, որ հանդիսատեսը դիտում է դերասանական ավագ, միջին եւ երիտասարդ սերունդների համատեղ ջանքերով իրականացված մի ներկայացում, որտեղ դերակատարների բնավորությունները բնական եւ անմիջական դրսևորումներով արժանանում են հանդիսականների ջերմ ընդունելությանը:

«Այլանդակ Էլզան» ներկայացման ծանրությունը Նարինե Ավետիսյան-Էլզայի ուսերին է: Երիտասարդ դերասանուհին ներկայացման սկզբից մինչեւ վերջը խաղի մեջ է՝ հոգեբանական տարբեր բացահայտումներով, կատակերգության ընձեռած բոլոր միջոցների օգտագործմամբ: Նա մերթ լուրջ է, մերթ՝ կատաղի, մերթ՝ ծիծաղող, մերթ՝ թաղճոտ է, մերթ՝ կենսախինդ, եւ բոլոր դեպքերում էլ՝ այնքան անկաշկանդ ու անմիջական, որ ուրախանում ես, այսօր թատրոնն ունի նման երիտասարդ ուժ՝ ծնված միայն ու միայն բեմի համար: Ներկայացման ընթացքում նրան լրացնում է Մարատ Դավթյանի Պերտի Օրասը: նրանց հանդիպման պահից վերածնված պատանեկան հուշերը, խենթության հասնող գուրգուրանքները, ժողովրդական ավանդական խաղեր հիշեցնող գրկախառնումներն ու թռիչքները ամենահաղթ ու անբիծ սիրո արտահայտություններ են: Տեղին է նշել, որ այս պիեսը առաջին անգամ բեմադրվում է մեր թատրոնում:

Հանդիսատեսը գերագույն հաճույք է ստանում արեւելյան հեքիաթներին հատուկ ավարտով, երբ բոլոր զույգերը արժանանում են միմյանց: Մարդկային բարոյականության հեղիեղուկ ու շահախնդիր դրսեւորումների այս ժամանակներում կարելորվում է «Այլանդակ Էլզան» պիեսի բեմականացումը, որ մեր թատրոնի վերջին տարիների նվաճումներից է:

Դիտելով «Այլանդակ Էլզան» ներկայացումը ես, որպես մեր թատրոնի հին եւ նվիրյալ բարեկամներից մեկը, կցանկանայի արտահայտել իմ ե՛ւ տագնապները, եւ առաջարկները՝ կապված մեր այդ կարեւոր մշակութային օջախի ներկայի եւ ապագայի հետ:

Թատրոնի ներկայացումների ժամանակ հանդիսականների թիվը 50-ից չի անցնում: Ինչո՞ւ է օրեցօր պակասում հանդիսականների թիվը: Առանձին ընկերներ վկայակոչում են նաեւ խոշոր քաղաքների նույն վիճակը: Սակայն դա արդարացում չէ: Մեր փոքրիկ քաղաքը մշակութային առատ օջախներ չունի, որտեղ երիտասարդները (եւ ոչ միայն երիտասարդները) կարողանային անցկացնել իրենց հանգիստը: Նշանակում է՝ պետք է ակտիվացնել

Քատրոնի հետ կապող օղակները: Անհրաժեշտ է առաջին հերթին սովորող երիտասարդների համար կազմակերպել կոլեկտիվ հաճախումներ եւ անմիջական քննարկումներ: Առանձին կոլեկտիվների ղեկավարներ պետք է նպաստեն արճենմենտների ձեռք բերմանը իրենց աշխատողների կողմից, կարելուովւմ է նաեւ գործարար ընկերների հովանավորչական օգնությունը՝ թեկուզ եւ արճենմենտ գնելու եւ զոհված ազատամարտիկների ընտանիքներին նվիրելու ուղղությամբ:

Թատրոնի լավագույն ներկայացումները կարելի է նկարահանել եւ ցուցադրել հեռուստատեսությամբ: Դա կնպաստի ե՛ւ հաջողված ներկայացումների մասսայականացմանը, ե՛ւ հանդիսատեսների ուշադրության սելեռմանը դեպի թատրոն: Նախկինում այդ գործը հաճախակի էր կատարում հանրապետության ռադիոհաղորդումների խմբագրությունը: Այսօր այն եւս կարծես մոռացել է այդ կարեւոր գործը: Վերջերս չեն գրախոսվում նոր բեմադրությունները: Մեր մամուլի աշխատողներին պետք է որ անհանգստացնի այդ հանգամանքը:

Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության ղեկավար աշխատողների (պրն. պրն. Ա. Սարգսյան եւ Ա. Թովմասյան) հետ ունեցած զրույցների ժամանակ նշվել են այն դրական ձեռնարկումները, որ ցուցաբերվում են թատրոնի հանդեպ, կարելի է է՛լ ավելի ուժեղացնել այդ օգնությունը: Պետական լուրջ վերաբերմունքն առաջին այն ազդակն է, որ ակտիվ եւ աշխույժ կպահի մեր թատրոնը: Այդ այն օջախն է, որ իր ստեղծման օրվանից իրականացրել է 400 բեմադրություն, որ խաղարկվել է 20 հազար անգամ: Պատմական այդ առաքելությունը հրամայական է ե՛ւ այսօրվա, ե՛ւ վաղվա համար: Մեր թատրոնը մեր ժողովրդի հոգեւոր հացը ապահովող կարեւոր օջախներից մեկն է, այնպես անենք, որ չչորանա այդ զարկերակը, այլապես մեղանչած կլինենք մեր խղճի եւ մեր սերունդների առջեւ:

*«ԼՂՀ Հանրապետություն»,
18 հունիսի, 1998 թ.*

ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ԷՋ ՄԵՐ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Երկու հազարամյա մեր թատրոնի պատմության մեջ արդեն նշմարվում է Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի նպաստը: Համարձակորեն կարող ենք ընդգծել, որ նշակույթի այդ օջախը իր գործունեության շառավիղներով կարող է մրցել հայոց ամենահայտնի թատրոնների հետ մի քանի առումներով: Հիմնադրվելով 1932-ին, Ստեփանակերտի դրամատիկական թատրոնը, որ ստացավ Մ. Գորկու անունը, իր ուսերին առավ կրկնակի բեռ: Այն դարձավ ոչ միայն Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքի թատերասեր հասարակայնությանն սպասարկող կենտրոն, այլև հոգեւոր ջահակիր՝ Արցախ աշխարհի եւ շրջկենտրոնների, եւ ամենահեռավոր բնակավայրերի համար: Մեր լեռնաշխարհի թե տարեց եւ թե երիտասարդ յուրաքանչյուր բնակիչ կարող է հաստատել նշակութային այդ օջախի մեծ ծառայությունները: Կարճ ժամանակաընթացքում ձեւավորվելով հանրահայտ դերասան ու ռեժիսոր Կ. Ալվարյանի գլխավորությամբ, թատրոնի կոլեկտիվը ստեղծեց իր ձեռագիրը եւ տաղանդավոր դերասանների աստղաբույլով մասսաների մեջ ցանեց պատմական անցյալի լույսը եւ առօրյա ձեռքբերումների դասը: Թատրոնի կոլեկտիվը, նախապատրաստվում է 2002 թվականին նշելու իր փառավոր 70-ամյակը: Տարիների սովորական գումար չէ դա, այլ քրտնաջան աշխատանքի շնորհիվ նվաճած համաժողովրդական սեր ու հարգանք, թատերարվեստի փայլատակումների ծածանում, տաղանդավոր մարդկանց պատմական առավելության շնորհակալ դրսեւորում: Հիրավի, թատրոնը հյուսել է իր պատմությունը, որի լուսաբանումը, սակայն գոհացուցիչ չէ: Մշակույթի պատմությունը ստեղծվում է էջ առ էջ, վավերագրվում է բանիմացությամբ եւ կտակվում սերունդներին: Ցավոք, յոթանասուն տարիների ընթացքում հարյուրավոր ներկայացումների մասին տպագրված գրախոսությունները, հոդվածները դեռեւս ցրված են մամուլի էջերում, որոնք նույնիսկ չեն արժանացել մատենագիտությամբ զբաղվողների ուշադրությանը: Այս ֆոնի վրա երախտիքով պիտի նշենք արձակագիր, թատերագետ Ի. Ալավերդյանի անունը: Նա երկար տա-

Պրինցեր աշխատելով որպես թատրոնի գրական մասի վարիչ, իր հոգու պարտքն է համարել ժրաջան մեղվի պես հավաքել, պահպանել այն բոլոր մասունքները, որ կարող են ներկայացնել այդ օջախի դիմագիծը: Եվ ոչ միայն այդ: Ի. Ալավերդյանը սիրով ստեղծել է տպագրել է «Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայկական պետական դրամատիկական թատրոն» աշխատությունը հայերեն էլ ռուսերեն (1982), նույնը Երեւանում ավելի ծավալուն (1983), «Օվսաննա Սարգսյան», «Գուրգեն Զարությունյան», «Մարգո Բալասանյան», «Բենիկ Օվչյան» մենագրությունները: Արժե նշել նաեւ Ժ. Անդրյանի «Միքայել Կորգանյան» աշխատությունը: Այս ամենը որոշակի տեղեկություններ են բերում թատրոնի անցած ճանապարհի մասին: Հաճելի է նշել, որ այսօր Ի. Ալավերդյանի գործը շարունակում է նրա դուստրը՝ բանասեր-թատերագետ Կարինե Ալավերդյանը: Ի դեպ, Կարինեն վարում է թատրոնի գրական մասը, այստեղ էլս փոխարինելով իր հորը: Հաճույքի զգացումը այստեղ ընդգծում ենք այն առումով, որ Կարինեն նպատակադրվել է հրատարակել անվանի այն գործիչներին վերաբերող պատմական վավերագրությունները, որոնք իրենց կարողություններն ու կյանքը նվիրաբերել են թատրոնի կայացմանը, զարգացմանն ու հարատեւմանը: Այս տեսակետից ողջունելի է նրա «Լեոնիդ Զարությունյան» ուսումնասիրությունը, որը հրատարակվել է վերջերս, «Ազատ Արցախ» հրատարակչության կողմից: Մեր թատրոնը, իր ճանապարհին ստեղծագործական ելեւէջումներ քիչ չի ունեցել: Մենք ականատես ենք եղել, թե ինչպես տարիների ընթացքում տարբեր բեմադրիչներ հաճախել են այլ քաղաքներից, կատարել բեմադրություններ, թողել ու գնացել: Շատ քչերը՝ ասենք Կ. Ալվարյանն ու Ի. Հովհաննիսյանն են բոլորանվեր ծառայել թատրոնին, ապրել նրանով ու նրա հետ: Այդ ընտրյալներից է ԼՂՀ արվեստի վաստակավոր գործիչ Լեոնիդ Զարությունյանը: Գրքի «ինքնահաստատում» մուտքում Կ. Ալավերդյանը նշում է, որ այս թատրոնում են անցել Զարությունյան-բեմադրիչի որոնումները, մաքառումները, ինքնահաստատման տարիները, այստեղ է վիճակվել նրան կաթիլ առ կաթիլ ըմպել ստեղծագործական տառապանք կոչվող երջանկությունը, ճաշակել հիասթափությունների դառնությունը եւ ըմբռնել հաղթանակի հրճվածքը:

Մենք միանում ենք գրքի հեղինակին եւ շնորհակալությամբ

վկայում, որ գրքի հերոսի նվիրումը եղել է տաղանդավոր ու անշահախնդիր արվեստագետի ժողովրդանվեր առաքելություն, որ այսօր էլ նա շարունակում է իր դժվարին ու պատվաբեր գործը: Ուստի նրա մասին ստեղծված այս գիրքը համարում ենք տեղին եւ ժամանակին, զնահատում որպես թատրոնի պատմության մի հրաշալի էջ:

Լ. Հարությունյանի բեմադրությունների թիվը հասնում է 30-ի: Դրանց թվում Մ. Գորկու, Ա. Օստրովսկու, Ա. Շիրվանզադեի եւ այլ դասականների, ինչպես նաեւ ժամանակակից ճանաչված դրամատուրգների մնայուն արժեք ներկայացնող թատրերկերը:

Կ. Ալավերդյանը աշխատության մեջ ցուցաբերել է մի կողմից բանասիրական, մյուս կողմից էլ թատերագիտական իր գիտելիքներն ու յուրահատուկ ընկալումները: Նա բանիմացությամբ դիտարկել ու զնահատել է դրամատիկական երկերի ժանրային առանձնահատկությունները, դերասանական կոլեկտիվի եւ առանձին անհատների կատարողական արվեստի երանգները, եւ որ կարելու է, բեմադրիչ Լ. Հարությունյանի ստեղծագործական երեւակայությունն ու կոլեկտիվի միջոցով այն մարմնավորելու անուրանալի տաղանդը: Այս ֆոնի վրա ընթերցողը տեսնում է Լ. Հարությունյանի անցած ճանապարհը՝ 1975-ից առ այսօր: Մեր առջեւ հառնում է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեժիսորական բաժինն ավարտած մի արվեստագետ, որն իր հոգու գույները լրիվ ծիածանել է մեր թատրոնում: Գրքից իմանում ենք, որ «Համարձակությունն ու ինքնավստահությունը նույնիսկ ավելցուկով միշտ էլ հերիքել են Լ. Հարությունյանին» (էջ 6): Հիրավի, հենց ինքնաճանաչման այդ կարողությունն է մղել բեմադրիչին հանդիսատեսի դատին հանձնելու դասական այնպիսի գործեր, ինչպիսիք են Մ. Գորկու «Քաղքենիներ», Դիկկենսի «Դավիթ Կոպերֆիլդ», Ա. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Ա. Շիրվանզադեի «Չար ոգի», նաեւ ժամանակակից գրողներ Ա. Պապայանի «Գնա մեռի, արի սիրեմ», Ռ. Աբրահամյանի «Սուրբ Շուշանիկ» եւ այլ ներկայացումներ:

Կ. Ալավերդյանը վերլուծական հմտությամբ կարողանում է իր գրքի ընթերցողին մերթ տանել դեպի թատրոնի վերջին 25-ամյա պատմության սկիզբը, մերթ՝ արցախյան պատերազմի ահեղ օրերը, մերթ էլ ներկայացնել առօրյա հոգսերն ու դժվարությունները՝

Դրանք հաղթահարելու հավատով: Գրքի արժանիքներից մեկն էլ այն է, որ հեղինակը համոզիչ փաստերով ցույց է տվել Լ. Յարությունյանի գործունեությունը փորձառու, ճանաչված ժողովրդական արտիստներ Ժ. Գալստյանի, Ս. Բալասանյանի, Բ. Օվչյանի եւ մյուսների հետ, ինչպես նաեւ դժվար աշխատանքը երիտասարդության շրջանում:

Գրքի առավելությունները քիչ չեն: Յենց այն հանգամանքը, որ Կ. Ալավերդյանը առաջինն է գիրք տպագրել թատրոնի բեմադրիչի մասին, խոսում է նրա օգտին: Եվ դա կատարվել է բազմապլան: Գրքում երախտագիտությամբ են նշվում ավագ եւ միջին սերնդի տաղանդավոր այն ներկայացուցիչների անունները, առանց որոնց բեմադրիչը չէր կարող դրսևորել իր տաղանդը: Մյուս կողմից, հեղինակը իր հերոսին ներկայացնում է թատրոնի վերջին 25-ամյա պատմության ֆոնի վրա կոլեկտիվի հետ:

Սակայն կցանկանայինք կատարել որոշ դիտողություններ, որ հեղինակը պետք է նկատի ունենա հետագայում մենագրություններ հրատարակելիս: Օրինակ Լ. Յարությունյանը բեմադրել է 30 պիես: Դրանց մեծ մասը գրախոսվել է, ու տպագրվել է տեղի եւ Յայաստանի մամուլում: Ավելի կշահեր գիրքը, եթե Կարինեն վկայակոչեր այդ կարծիքները, հաստատեր կամ ժխտեր: Դա ավելի կընդգծեր բեմադրիչի կատարած գործի գնահատականը տարբեր ժամանակներում: Գիրքը կշահեր նաեւ այն դեպքում, երբ պահանջվող էջերում արտատպվեր որոշ աֆիշաներ: Շատ լավ կլիներ, եթե գրքի վերջում բերվեր Լ. Յարությունյանի ներկայացումների մասին գրված գրախոսությունների մատենագիտությունը: Սակայն այս դիտողությունները ստվեր չեն ձգում գրքի արժեքի վրա: Կ. Ալավերդյանը կատարել է շնորհակալ եւ խրախուսելի գործ: Կցանկանայիք, որ նա ԼՂՅ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության օգնությամբ, գործարար շրջանների եւ կարող մարդկանց հովանավորությամբ հրատարակեր Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի աստղերի մասին գրած իր մենագրությունները: Վստահ ենք, որ այդպես էլ կլինի:

**«Ստեփանակերտ»,
օգոստոս, 2000 թ.**

ԹԱՏՐՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԻՄԱՍՏԱԼԻՑ ԿՅԱՆՔ
(Միքայել Հարությունյան -70)

Հիսուներեք տարին կես դարից ավելի է: Ուրեմն, հինգ տասնյակ եւ էլի երեք տարի է, ինչ Միքայել Հարությունյանը իր կյանքը կապել է Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հետ, դարձել՝ նախ նրա զավակը, հետո՝ սյուններից մեկը եւ ապա նախշերի մեջ գրավել իր մնայուն տեղը: Իսկ այսօր 70-ամյա մեր Միքայելը ուղղակի հայրություն է անում իր, նաեւ մեր բոլորիս թատրոնին: Այդ նշանակում է, որ հանրապետության վաստակավոր արտիստի հոգու ջերմությունն ու սրտի թրթիռները պետք է որոնել մեր լեռնաշխարհի բազմահազար հանդիսատեսների հուշերում, խոհերում, մեր թատրոնի պատմության ուլունքված էջերում, ներկա դժվարին արարումներում եւ ապագայի հանդեպ եղած հավատի մեջ: Դերասանը եւ ծնվում է, եւ դառնում: Միքայելը ի ծնե դերասանի պարթեւ հասակ, հպարտ քայլվածք, դարաբաղցու ասած՝ շենք ու շներիք ունեցող հայ է: Միքայելը դրան գումարել է թատերարվեստի հանդեպ ունեցած իր անմնացորդ սերը, անխաթար ձգտումը, քրտնաթոր աշխատանքն ու դարձել վաստակաշատ դերասան: Մենք բոլորս, որ նրա հասակակիցներն ենք, մեզնից հետո եկած դարաբաղցիները, ասել է թե՛ միջին սերունդը եւ այսօրվա երիտասարդությունը դարից ավելի է՝ լրացնում են միմյանց եւ իրարից անջատ չեն էլ պատկերացնում ոչ երեկը, ոչ՝ այսօրը եւ ոչ էլ՝ վաղը:

Երջանիկ մարդ է Միքայել Հարությունյանը: Թեեւ միայն ավարտել է միջնակարգը, թատերական բարձրագույն կրթություն չի ստացել, սակայն Աստծո օրհնանքով նա հանդիպել է այնպիսի գործիչների, որպիսիք են Կարո Ալվարյանը, Արզո Արզումանյանը, Գուրգեն Հարությունյանը, Միքայել Կորգանյանը, Աղասի Բաղալյանը, Բենիկ Օվչյանը եւ էլի տաղանդավոր ռեժիսորների եւ դերասանների մի աստղաբույլ, որոնք միաժամանակ թատերարվեստի դպրոց են հանդիսացել նրա համար: Ուրեմն, 53 տարի շարունակ Մ. Հարությունյանը էջ առ էջ, շող առ շող իր մեջ ամբարել է այն երանգները, որ պետք են խստապահանջ հանդիսատեսին գեղագիտական հաճույք պատճառելու համար: Նա երջանիկ է նաեւ այն

Մառունով, որ ունեցել է տաղանդավոր խաղընկերներ, որոնք այսօր էլ բեմի վրա են. Մ. Բալասանյան, Ժ. Գալստյան, Լ. Հարությունյան, Մ. Միքայելյան, Ք. Հարությունյան, Ն. Ասատրյան եւ էլի ուրիշ լուսատուներ:

Եթե Մ. Հարությունյանի մարմնավորած դերերը շարք կանգնեցնենք, մի յուրատիպ ջոկատ կկազմի: Նրանց թվարկելն անգամ մեծ ժամանակ ու տարածություն է պահանջում: Բայց արժե հիշատակել մի քանիսը, ժորժ («Սորգանի խնամին»), Վարազդատ («Վարազդատ»), Սեյրան («Նամուս»), Քսանթոս («Եզովպոս»), Ջորջ («Տոսկանայի արծիվը»), Պոլիքսենես («Ձմեռային հեքիաթ»), Սարգիս («Էլի մեկ զոհ»), Մասիսյանց («Խաթաբալա»), Բագրատ («Պատվի համար»), Բեսսենենով («Քաղքենիներ»), Պրեզիդենտ («Սեր եւ խարդավանք») եւ այլն: Նրա կյանքի կոչած 100-ից ավելի դերերը մեր թատրոնի նվաճումներից են: Սակայն դերակատարումները միայն թվի հետ չենք կապում: Ամեն մի դեր կատարելիս դերասանը անքուն գիշերներ է անցկացրել, փորձել է, ժխտել, հաստատել, վերջապես գտել դերի մեջ մտնելու դուռն ու դարպասը եւ ստեղծել տպավորիչ կերպարներ:

Մ. Հարությունյանի սիրտը այսօր կարող ենք որոնել նաեւ մեր ազատագրված Արցախի գյուղերում, ավաններում, շրջկենտրոններում: Դա էլ դերասանի համար բախտավորություն է, երբ Գանձասարի հայացքի տակ հայրենասերի դեր է կատարում, Թարթառի ափին՝ գետի շառաչները խառնում իր երազներին ու խոսքերին, երբ Քիրսի հովանու ներքո խոսում է Գոչավանքի անունից եւ հաստատում մեր պատմությունն ու նորօրյա ընթացքը: Արցախ աշխարհում մեծից մինչեւ փոքրը գիտեն ճանաչված արտիստին, գոհունակությամբ են խոսում նրա դերասանական հղկված արվեստի մասին եւ միշտ սպասում են նրա այցելությանը:

Չէինք ցանկանա շրջանցել Մ. Հարությունյանի տաղանդի ցուցադրումը նաեւ համադրական արվեստի մի ուրիշ տեսակում՝ կինոյում: Արժե հիշատակել հայտնի կինոռեժիսոր Հայ-Արտյանին, որ Միքայելին հրավիրել է նկարահանվելու «Հյուսիսային ծիածան» ֆիլմում: Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի մոտիվներով այս ֆիլմում նա մարմնավորել է Աղասուն փոխարինող Վարդանին: Ապա հանդես է եկել «Լավարի որսը» ֆիլմում:

Մ. Հարությունյանի մարմնավորած դերերի պատկերասրահը

բազմաբնույթ է:

Նա մարմնավորել է դրամատիկ, ողբերգական, կատակերգական եւ քնարական դերեր: Տարբեր խաղաոճերում եւ արտահայտչաձեւերում Միքայելը հմտորեն դրսեւորել է իրեն, իր նպաստը բերելով թատրոնի հարուստ ավանդույթների հարստացմանը:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին մեր թատրոնի կուլեկտիվը, ինչպես միշտ կատարեց հայրենամովերմեծ գործ: Իր խաղընկերների հետ էր Մ. Հարությունյանը: Իրենց ելույթներով, նույնիսկ նկուղներում, ժողովրդի հետ էին մեր դերասանները: Նման պահին հանդիսատեսների սրտում հավատի ջահը վառ պահելը եւս հայրենասիրության արտահայտություն է: Այս կարծիքը հաստատում է հոբելյարը եւ կոնկրետ գործով, եւ խորհուրդներով: Տարիներ առաջ արձակագիր-թատերագետ Ի. Ալավերդյանը գրել է. «Միքայել Հարությունյանը իր որոնումներով, ինքնամովեր աշխատանքով վարպետացավ, գտավ իր ստեղծագործական դիրքը, իր հաստատուն տեղը թատրոնում... Մ. Հարությունյանի կյանքը իմաստավորվել է թատրոնով, բեմարվեստով, որին նվիրվել է հոգով ու սրտով, անձնուրաց սիրով»:

Չես կարող չհամաձայնվել այս գնահատականի հետ: Եվ ոչ միայն անցյալի նրա ծառայությունն է այդպիսին, այլեւ առօրյա նրա ոգորումներն ու սպասելիքները:

70 տարեկան է Մ. Հարությունյանը՝ լի թատրոնին ծառայելու իր անսպառ եռանդով ու պատրաստականությամբ: Մեր թատրոնի բոլոր հանդիսականների, բարեկամների անունից մաղթում ենք նրան քաջառողջություն եւ թատերարվեստին նոր գույներ գումարելու եռանդ:

Միքայելը իր խոսքի տերն է: Նա վերջերս թատրոնի ներկայացումներից մեկի քննարկման ժամանակ ասել է. «Ձահել եմ ես ու ձիս՝ ջահել»: Թող մեծ ճանապարհ անցած նրա Քուռկիկ Ջալալին իր տիրոջը տանի դեպի թատերարվեստի նոր բարձունքներ: Իսկ մենք հավատում ենք դրան:

**ԼՂՀ մշակույթի, երիտասարդության
հարցերի եւ սպորտի նախարարություն:
Բուկլետ, 2000 թ.**

ԵՐԳԻ ԹԵՎԵՐՈՎ ԶԱՐԴԱՐՎԱԾ ԿՅԱՆՔ

Երգը ժողովրդի սրտի կանչն է, առած հավերժական թելեր: Երգը հայրենի հողի շունչն է, ձուլված նրա ծառ ու ծաղկի ծփանքներին: Երգը հարազատ օջախի ծխանի ծուխն է, փարված կապուտաչ աստղերին: Երգը անցյալից ակունքնված ծիածան է՝ ներկայի հոգով կամրջված ապագային: Երգը աստվածային ամենատեսությամբ գտնում է իրեն օրորող սրտերին, փոխվում ճախրանքի, տխրության պահին մարդկանց սփոփում, պայքարի ժամին՝ հերոսացնում: Երգը, երբ գտնում է իրեն օրորող սրտին, նրան պարգևում է աղբյուրը երջանկության եւ հուշում ժողովրդին գեղագիտական հաճույք պարգևելու հրամայականը: Երգը լեզու է գտնում երգչի հոգու հետ, ապրում նրա սրտում եւ շնջում. «Ես քոնն եմ, դու՝ իմը, իսկ երկուսով մեզ ծնող ժողովրդինն ենք՝ նրան ենք ծառայում անմնացորդ, անձնուրաց»: Ամեն անգամ լսելով հանրապետության վաստակավոր երգչուհի Էլմիրա Առստամյանի երգերը, սիրտս շոյում են այս զգացումները, լցվում երախտիքի շշունջներով առ սիրված երգչուհին. «Երջանիկ ես դու, Էլմիրա, քանզի կյանքդ կարկաչում է երգի հոսքով, տարիներդ անցնում են երգի թելերով, ժողովուրդը անունդ լսելիս՝ երգիդ կարկաչն է ունկնդրում կրծքի տակ, հոգու խորքում: Երգը ոչ թե գտել է քեզ, այլ ծնվել է քեզ հետ, ծնվել է Մարտակերտում, 60 տարի առաջ եւ քո երազներով փարվել Արցախա սարերին ու գետերին, ծառերին ու ծաղիկներին: Ուստի դու քեզ կարող ես գտնել արցախցիների սրտերի մեջ, ձայնդ լսել Թարթառի եւ Խաչենագետի կարկաչներում, մեր ամենօրյա արարումներում, մեր հաղթական շքերթներում: Ահա, թե ինչով ես երջանիկ, Էլմիրա»:

Երգը չի ծերանում, չի ծերանում նաեւ երգի կատարողը: Կատակով հարցրի «Էլմիրա, 40-ամյա՞կդ ենք նշում»: Էլմիրան սրամտեց՝ «Ոչ, 30-ամյակս»: Կատակը թողած մի կողմ, նշեմ, որ շնորհաշատ, զավակներով հարուստ Արցախ աշխարհի ճանաչված

Պրուստրերից է Էլմիրա Առստամյանը: Մարտակերտի միջնակարգում սովորելիս երազում էր դառնալ դերասանուհի: Մայրը՝ Արցախի առաջին դեղագործ բժշկուհի Վարյա Պետրովնան, որ պատմական Ջրաբերդի Վանք, Մարգուշեան գյուղերում եւ Մարտակերտի շրջկենտրոնում առաջին անգամ հիմնադրել էր դեղատներ, քնքշալից նայում է մանկավարժ-հաշվապահ ամուսնուն՝ Սովսես Սարգիսովիչին եւ հորդորում. «Մեր աղջիկը եթե որոշել է դառնալ դերասանուհի, թող այդպես էլ լինի, թող ինքն ընտրի իր ապագա մասնագիտությունը, արի չխանգարենք»: Եվ 1958-ին ճանապարհը նրան բերեց Ստեփանակերտի Մ. Գորկու (այժմ Վ. Փափազյանի) անվան հայկական պետական դրամատիկական թատրոն: Եվ չէին կարող չընդունել նրան՝ սլացիկ հասակով, գանգուր մազերով, գեղեցիկ քայլվածքով, մետաքսե ձայնով, միջնակարգ գերազանց կրթությամբ, նախանձելի հիշողության տեր, արվեստին սիրահարված այդ պարմանուհուն: Սակայն նախախնամությունը նրան ընծայել էր նաեւ հայուհու ավանդական թավշյա ձայն եւ կատարողական ինքնատիպ շնորհք: Նրա կարողությունը բացահայտվելու ու կատարելագործվելու համար ստեղծվեցին պայմաններ: Ձեւավորվեց Լեռնային Ղարաբաղի հայկական երգի-պարի պետական համույթ՝ կոմպոզիտոր Տելեմաք Տեր-Ավետիսյանի ղեկավարությամբ: Շուտով համույթը համալրվեց շնորհաշատ երգիչներով, երաժիշտներով, պարողներով:

Վաստակաշատ երգահան-ղեկավարը լսեց նաեւ Էլմիրային եւ վստահորեն հաստատեց. «Դու երգի համար ես ծնվել, քո աշխարհը երգն է»: Էլմիրան իրեն ընծայեց երգաշխարհին: Անհանգիստ ժամեր, սպասումներ, երազներով լի փորձեր... մինչեւ առաջին համերգը, որ տեղի ունեցավ 1959 թվականին: Համույթի աշխատանքին լծվեց նաեւ պարուսույց Ազատ Ղարիբյանը: Պատրաստվեց նաեւ համերգային ծրագիրը: Համույթի մասնակիցները ոգեւորված էին, չէ՞ որ իրենք Լեռնաշխարհի երգարվեստի ճանապարհին առաջին ծիծեռնակներն էին եւ հասկանում էին իրենց պատմական

Պառաքելության արժեքը:

Համույթի առաջին համերգը տեղի ունեցավ հայկական պետական դրամատիկական թատրոնի շենքում:

Դահլիճը լեփ-լեցուն էր: Վարագույրը բացվելուն պես բեմուն երեւում է Էլմիրա Առստամյանը որպես համերգավար: Ուրեմն ծնվել էր երգչուհի-համերգավարը՝ երկշերտ տաղանդի խտացումով: Առաջին անգամ նրա շրթերին հնչեց համույթի ղեկավարի «Ծիրանի ծառը ծաղկել է» երգը:

Ապա ունկնդիրները ջերմ ծափահարություններով ընդունեցին Ալեքսանդր Դոլուխանյանի «Երեւանի գիշերները», Աշոտ Սաթյանի «Լուռ գնաց» երգերը: Երգչուհի-հաղորդավարը հենց առաջին համերգում իրեն դրսեւորեց պահանջվող մակարդակով ու բարեմասնություններով:

Եվ սկսվեց Էլմիրա Առստամյանի երգարվեստով զարդարվող ճանապարհը՝ որպես նպատակ եւ հաճույք, որպես ինքնաբացահայտում եւ նվիրում ժողովրդին: Այդ ճանապարհը իր սկիզբն առավ Լեռնաշխարհի երգի-պարի համույթից եւ այսօր էլ ընթացում է նրա հետ, որի ղեկավարն է վաստակավոր արտիստ Աշոտ Բաբայանը: Աստվածային շնորհքով օժտված անհատը լրիվ չի բացահայտի իրեն, եթե չսիրի իր ընտրած արվեստը եւ քրտնաջան աշխատանք չկատարի՝ հղկելու, հարստացնելու այն: Էլմիրան լավ էր հասկանում արվեստի այդ խիստ պահանջը, ուստի ամեն ժամ՝ ամեն օր հաշիվ էր տալիս ինքն իրեն՝ քանի՞ երգ սովորեց, որը չընդունվեց ունկնդրի կողմից, ինչպիսի՞ նոր երգեր երեւան եկան, որո՞նք են համապատասխանում իր ճաշակին եւ կատարողական հնարավորություններին:

Հարստացրե՞ց իր երգացանկը, թե՛ բավարարվում է ձեռք բերածով: Եվ նա պատասխանատվության մեծ զգացումով օրեցօր աճում էր, տիրապետում երգարվեստի գաղտնիքներին, հղկում նաեւ համերգավարի իր շնորհքը: Այդ ամենը տալիս էր իր պտուղները: Նրա շրթերին սկսեցին թեւածել Ռ. Մելիքյանի «Վարդը»,

Ս.Տեր-Ավետիսյանի «Լիրիկական», Գուսան Աշոտի «Ծառերը ծաղկում են», «Մանուշակածոր», «Երգ մոր մասին», Խ. Ավետիսյանի «Տավիղ», «Մախմուր աղջիկ», Արամ Սաթունցի «Յոթ քույր» եւ էլի ժողովրդայնություն վայելող բազմաթիվ երգեր: Եվ Էլմիրայի ճանապարհը Արցախից սկիզբ առավ դեպի հեռուները, դեպի հայկական երգի ծարավ սրտերը: Նրա հոգիներ ջերմացնող երգերը հնչեցին Հայաստանում, Վրաստանում, միջինասիական եւ մերձբալթիական հանրապետություններում, Ուկրաինայում, Բելոռուսիայում, Ղազախստանում, Մոլդավիայում եւ այլուր: Իր հարազատ համույթի հետ նա դարձել էր հայ երգի դեսպանը՝ քնքշասիրտ ու հոգեբուխ: Եվ նրա ծառայությունը բարձր գնահատվեց ժողովրդի եւ մշակույթի ակամավոր գործիչների կողմից: 1983-ին Էլմիրա Առստամյանը արժանացավ հանրապետության վաստակավոր արտիստուհու կոչման: Այդ բարձր պարգևը պարտավորեցնող երեւույթ հանդիսացավ Էլմիրայի համար: Նրա երգացանկը դարձավ ավելի բազմերանգ՝ հարստանալով հայկական ժողովրդական եւ գուսանական երգերով, տարբեր ժողովուրդների երգահանների ստեղծագործություններով: Էլմիրա Առստամյանի երգարվեստի զարգացման ճանապարհին աստղի նման փայլեց հռչակավոր երգահան Ալեքսեյ Յեքիմյանը: Նրա երկու տասնյակ երգերին Էլմիրան թեւեր տվեց Արցախի եւ Հայաստանի շրջաններում, նախկին ԽՍՀՄ հանրապետություններում: Յեքիմյանի «Յասամանի ծառի տակ», «Ղարաբաղի եղնիկ», «Անուշ Հայաստան», «Գարուն հայրենիք», «Իմ սիրելի», «Ղարաբաղցին» եւ այլ երգեր հմտորեն կատարեց Էլմիրան: Դրանց մեջ ավելի հմայիչ հնչեց «Կռունկ, բարով դառնաս» երգը, արժանանալով մեծ երգահանի բարձր գնահատականին: Էլմիրայի հաջողության գրավականը նրա աստվածային շնորհքի եւ սեփական ձայնին հմտորեն տիրապետելու, երգերի էությունը ճիշտ հասկանալու, բեմական կուլտուրան անընդհատ հղկելու, ազատ պահվածքի մեջ է: Նա կարողանում է ընթերցել եւ մեկնաբանել կատարվող երգի շերտերը:

Ուն բախտ է վիճակվել Էլմիրա Առստամյանի հետ մասնակցելու կազմակերպվող մշակութային միջոցառումներին, նա չի կարող հիացմունքով չընդգծել երգչուհու հանդեպ եղած ժողովրդական համակրանքը եւ իր իսկ մարդկային առինքնող բարեմասնությունները:

1987 թ., արցախյան ազգային ազատագրական պայքարի խնորման տարում, կազմակերպվել էր Արցախի մշակույթի ճանաչված ներկայացուցիչների ագիտորիգադ, որի կազմի մեջ կային դերասաններ, երգիչներ, գրողներ: Էլմիրան եւս բրիգադայի հետ էր: Յուրաքանչյուր միջոցառումից հետո բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանի հետ արտահայտում էինք մեր գոհունակությունն ու հիացմունքը Էլմիրայի կատարողական արվեստի, ունկնդիրների հանդեպ եղած նրա թեւավորող վերաբերմունքի նկատմամբ: Այդ օրերին նա առանձնահատուկ սիրով էր կատարում երգահան Է. Ղազարյանի գրած երգերը՝ Արցախի բանաստեղծների տեքստերի հիման վրա, որոնցում փառաբանվում էին մեր հարազատ լեռնաշխարհն ու նրա աշխատասեր մարդկանց մարտական ոգին: Էլմիրա Առստամյանի եռանդուն մասնակցությունը ագիտորիգադայի աշխատանքներին կրկին ապացուցում էին այն ճշմարտությունը, որ արվեստի ակունքը կյանքն է, որ արվեստագետը իր երջանկությունը գտնում է ժողովրդին ծառայելու մեջ: Այդպիսին եղել է, կա եւ կլինի հայոց երգարվեստի վաստակաշատ ներկայացուցիչներից մեկը՝ Էլմիրա Առստամյանը, որի երգերին կարոտով է սպասում ժողովուրդը եւ սրտանց շնորհավորում նրա հոբելյանը, մաղթելով հաջողություններ եւ երջանիկ կյանք իր զավակների եւ արեւաչ թոռների հետ:

*ԼՂՀ մշակույթի, երիտասարդության
հարցերի եւ սպորտի նախարարություն:
Բուկլետ, 2002 թ.*

«ԱՐՏՈՆՎԱԾ ԵՂԵՌՆ» - ՑԱՎԻ ՃԻԶ

Համայն հայությունն աշխարհի արդարամիտ ժողովուրդների հետ մեկտեղ այս տարի նշում է Հայոց մեծ եղեռնի 90-ամյակը՝ որպես ցավի ճիչ, ոգեկոչումի դաս: Այդ տարելիցին է նվիրված Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան հայկական դրամատիկական թատրոնի նոր՝ «Արտոնված եղեռն» ներկայացումը, որի առաջնախաղը տեղի է ունեցել ապրիլի 15-ին: Ներկայացմանը ներկա էին համրապետության պետական այրեր, գրողներ, մշակույթի եւ ՋԼՄ-ների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ պիեսի հեղինակ Աննա Պետրոսյանն ու գրականագետ Լիլիթ Արզումանյանը՝ Երեւանից:

Ներկայացման բնագրի հիմքում ընկած է Ա. Պետրոսյանի «Եղերապատում» փաստագրությունը, որի մոտիվներով բեմադրության է պատրաստել թատրոնի զեղարվեստական ղեկավար, ԼՂՀ ժողովրդական արտիստ Լ. Հարությունյանը:

Բավականին ընդգրկուն է ներկայացման թեման: Այն ներառում է 1895-97 թթ. Սուլթան Համիդի կողմից կազմակերպված կոտորածները, 1909 թ. Ադանայի ջարդերը, 1915 թ. Մեծ եղեռնը: Պարզ է, որ նման իրադարձությունների ցուցադրումը մեծագույն ջանքեր պիտի պահանջեր կոլեկտիվից՝ ուժերի լարումով ներկայացնելու երիտթուրքերի կազմակերպած հայոց ցեղասպանությունը: Նշենք, որ թեմատիկ այս ընդարձակ ընդգրկումը պիեսին հաղորդել է հրապարակախոսական հնչողություն, որի արդյունքում գործող անձանց բախումների, երկխոսությունների փոխարեն ներկայացվում են փաստերը, նշվում թուրքական կառավարիչների դաժանությունները: Եթե նկատի առնենք դասական դրամայի կառուցվածքը, գործողությունների անհրաժեշտությունը, կերպարների ինքնաբացահայտման հոգեբանական գործոնը՝ կարող ենք ասել, որ պիեսը ավանդախախտման օրինակ է: Սակայն չմոռանանք, որ ժամանակակից դրամատուրգիական ժանրերում առկա են լուրջ

Վիճակագրություններ, ուստի, պետք է ընդունենք հրապարակախոսական դրամայի ձեւավորումը եւ այս դիտակետից գնահատենք «Արտոնված եղեռն» ներկայացումը: Պիեսում գործող անձերի թիվը հասնում է 50-ի: Ներկայացման մեջ դրանք մարմնավորում են ընդամենը 19 դերասաններ եւ սիրողներ: Որոշ արտիստներ հանդես են գալիս 5 կամ 7 դերակատարումներով: Եթե մի կողմից նշելու լինենք նրանց հսկայական շնորհակալ աշխատանքը, ապա, մյուս կողմից, պետք է խստովանենք, որ նույն գործողության մեջ, նույն տեսքով տարբեր դերերի մարմնավորումը հանդիսատեսի վրա առանձին տպավորություն չի թողնում: Դեռ ավելին՝ հանդիսատեսին թվում է, թե դերասանը խաղում է միայն մեկ դերում: Ահա թե ինչու այստեղ զգալ է տալիս հրապարակախոսական հնչերանգը:

Ներկայացման ընթացքում պատկերվում են երկու հակադիր ուժեր՝ օսմանյան թուրքերը, որոնք հայ ժողովրդի բնաջնջման խնդիրը դնում են հենց նրա համար, որ վերջիններս հայ են, իսկ թուրքերին պաշտպանող եվրոպական դիվանագետները ցուցաբերում են անտարբերություն հայոց ազգային աղետի հանդեպ՝ ընդհուպ մինչեւ ցարական կառավարության հանցավոր նպատակը՝ «Յայաստանն առանց հայերի»: Ներկայացման մեջ թուրքը հանդես է բերված իր բնույթով, հենց թուրք ավագակաբարո գործիչներն են նշում, որ Յայաստանը պիտի ավերեն այնպես, որ տեսնողն ասի՝ «այստեղով թուրքն է անցել»: Ներկայացման մյուս կողմը հայ ժողովուրդն է՝ որպես զոհ: Յայ ժողովրդի ծանր ու ողբերգական ճակատագիրը՝ Ադամայի դեպքերից սկսած, ներկայացվում է ռեալիստորեն: Այստեղից էլ՝ այն ծանր ապրումները, որ ունենում է հանդիսատեսը: Մենք չենք բաժանում այն ընկերների կարծիքը, որոնք գտնում են, թե բավական է՝ ինչքան ցուցադրել ենք մեր տառապանքն ու ցավը: Գտնում ենք, որ եղեռնը ճշմարտացի հրամցնելը կրկին ու կրկին ի ցույց է դնում երիտթուրքերի դաժանությունը, հուշում, որ թուրքական իշխանությունների արդի ներկայացուցիչ-

ներին չի կարելի հավատալ, անհրաժեշտ է ջանքեր չխնայել, որ եւ աշխարհի բոլոր երկրները, եւ թուրքիան ճանաչեն հայոց ցեղասպանությունը:

Ներկայացման մեջ բավական տպավորիչ տեսարաններ կան, որոնցում տեսանելի են դառնում թուրքերի զագանությունները խաղաղ ու անզեն հայ բնակիչների հանդեպ եւ Ադանայում, եւ երկրի տարբեր շրջաններում: Երեւում է դերասանական կոլեկտիվի քրտնաթոր աշխատանքը: Ներկայացմանը մասնակցում են ավագ, միջին եւ երիտասարդ սերունդների ներկայացուցիչներ: Բենադրող ռեժիսորին հաջողվել է ստեղծել կոլեկտիվ տեսարաններ՝ առանձնապես թուրքական բնավորությունները եւ դաժանությունները ցուցադրելու միտումով: Ցնցող ու սրտաճմլիկ են Ադանայի կոտորածի պայմանական ցուցադրումը՝ կարմիր ու սեւ վարագույրի օգնությամբ, երիտթուրքերի ընդհանուր հավաքներն ու նենգությունը բացահայտող պատկերները, 1918 թվականին մեջլիսում հայկական կոտորածներին վերաբերող քննարկումը, որի ժամանակ թուրք պառլամենտականները հարայ-հրոցով ժխտում են եղեռնը: Կոլեկտիվ տեսարաններում հանդես են գալիս ԼԳՅ ժողովրդական արտիստներ Ք. Հարությունյանը (Էնվեր), Ս. Հարությունյանը (Օսման բեյ), Ժ. Մովսիսյանը (Ջելալ Նուրի), վաստակավոր արտիստներ Ս. Թովմասյանը (Մարի Յակոբսոն), Ա. Պետրոսյանը (ահաբեկված կին), Ս. Վիրաբյանը (Թալեաթ): Ներկայացման հաջողությանն իրենց մասնակցությունն են բերում Կ. Առաքելյանը, Մ. Դավթյանը, Ա. Հովսեփյանը, Ս. Մկրտչյանը, Ա. Հայրիյանը, Ա. Գաբրիելյանը, Ա. Առաքելյանը: Կցանկանայինք առանձնապես շեշտել Ք. Հարությունյանի, Ս. Թովմասյանի, Ս. Վիրաբյանի, Ա. Պետրոսյանի անկաշկանդ եւ բնական խաղը:

Խրախուսելի է, որ ներկայացմանը մասնակցում են թատրոնի «Աստղիկ» մանկապատանեկան ստուդիայի երիտասարդ սաները՝ Լ. Մանգասարյանը (առաջին վկայող), Ա. Հակոբյանը (երկրորդ վկայող), Ա. Սարգսյանը (երիտասարդ ֆուլատ), Օ. Մարտիրոսյանը

Եւ դերասանական լուրջ հայտ ներկայացնող Վ. Հայրապետյանը (տարբեր դերերում):

Հրապարակախոսական դրամայի ընդհանուր դժվարությունների հաղթահարման կարեւոր մասը երկրորդ գործողության ավարտն է, որ նվիրված է Արցախյան ազգային-ազատագրական պայքարին: Ճիշտ է վարվել բեմադրող ռեժիսորը՝ Արցախյան գոյամարտը համարելով հայ ժողովրդի վերածննդի նորօրյա դրսեւորում: Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել նկարիչ Ա. Քեչիշյանի հայտնությունները եւ Ա. Բարսեղյանի երաժշտական հոգեհարազատ ձեւավորումը:

Հայոց մեծ եղեռնի 90-ամյակին նվիրված այս ներկայացումն առօրյա հնչողություն ունի, որի անհրաժեշտությունն զգացվում է որպէս պատասխան թուրք եւ ազերի զեղծարարներին, որոնք ձգտում են ամեն մի միջոցով ժխտել հայոց ցեղասպանությունը, ազատվել արդար դատաստանից:

*«Ազատ Արցախ»,
23 ապրիլի, 2005 թ.*

ՊԱՏՎԻ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ՀՈԼՈՎՈՒՄԸ

(Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի նոր բեմադրությունը)

Վերջին տարիներին հաճախակի էինք լսում դժգոհություններ Արցախի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի աղքատ խաղացանկի, դերասանական փայլուն ուժերի սակավության, ղեկավարության եւ հանդիսատեսի անտարբերության մասին: Լսում էինք ու ասես հաշտվում տխուր իրավիճակի հետ: Սակայն մի հավատ հուսավառում էր մեզ, որ դեպի իր ութսունամյակը քայլող մեր հարազատ թատրոնը նորից կասի իր խոսքը, եւ նորից ներկայացումներ կընթանան անշլագ, եւ դահլիճը կթնդա ջերմ ծափահարություններից:

Եվ եկավ պահը, որ ինքնահոսի չէր, այլ տեղի ունեցավ ԼՂՀ կառավարության ուշադրության շնորհիվ, որ պատվիրեց Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի ներկայացումը, նշանակվեց նոր տնօրեն՝ հանձին հանրաճանաչ արձակագիր եւ լրագրող Կ. Դանիելյանի, որպես գեղարվեստական ղեկավար իր գործին նոր եռանդով լծվեց ԼՂՀ ժողովրդական արտիստ, արվեստի վաստակավոր գործիչ Լ. Հարությունյանը:

Դժվար է գերազնահատել «Պատվի համար» դրամայի բեմականացման պատմության նշանակությունը հայոց թատերարվեստի զարգացման ընթացքում: Միայն այն հանգամանքը, որ այդ պիեսը Արցախի թատրոնում բեմադրվել է 1934, 1936, 1939, 1943, 1953, 1971 թթ., եւ 2006-ինը 7-րդն է, ինքնին խոսում է իր մասին: Ավելորդ չէ նշել, որ մեր թատրոնում բեմական կյանք են առել անմահ դասականի նաեւ «Նամուսը», «Չար ոգին», «Մորզանի խնամին», «Քառուր», «Եվգինեն», «Արմենուհին»:

Եվ ահա, կրկին բեմադրվեց «Պատվի համար» դրաման, որ իրականացրեց Երեւանից հրավիրված բեմադրող-ռեժիսոր Կարեն Աբրահամյանը, որ Արցախյան պատերազմի այն ահեղ օրերին բե-

մադրել է Վ. Հակոբյանի «Արցախյան բալլադը» եւ արժանացել դրվատանքի:

«Պատվի համար» դրաման ունի արդիական հնչողություն: Կուռ են նրա կոմպոզիցիան եւ սյուժեն, բոլոր գործող անձերն իրենց տեղում են եւ նպաստում են երկի հանգուցալուծմանը:

Դրամայում, ինչպես եւ ներկայացման մեջ, հանդես են գալիս Անդրեաս Էլիզբարյանի ընտանիքի բոլոր անդամները, որոնցից յուրաքանչյուրն ունի իր աշխարհընկալումն ու բնավորությունը: Նրանց միջեւ չթուլացող հակասությունները տանում են դեպի ոչ միայն դիմացինի, այլեւ ինքնամերկացում:

Թատրոնի ավագ սերնդի ներկայացուցիչներից ներկայացմանը ներառվել է ԼՂՀ ժողովրդական արտիստ Մ. Հարությունյանը: 76-ամյա դերասանը, որ թատրոնում մարմնավորել է մի քանի պատասխանատու դերեր, այս անգամ եւս ծանր բեռ է առել իր ուսերին: Այստեղից էլ նրա պատասխանատվության զգացումը՝ ներկայացման ընթացքում պիեսի հոգեբանական-սոցիալական ցայտուն կոնֆլիկտը ցուցադրելու ուղղությամբ: Եվ նրան հաջողվում է ընթացք տալ գործողությունների մեջ հանդես եկող բարոյականության տարբեր շահերի տեր մարդկանց, որոնք իր հարազատներն են՝ կապիտալի թելադրանքով դարձած անհաշտ թշնամիներ: Հարությունյան-Անդրեաս Էլիզբարյանի մուտքով ներկայացման մեջ սկսվում է ինքնաբացահայտման պատմությունը: Բարեգործական ընկերության ձեռնարկումների դեմ նրա խոսքը հնչում է այսօրվա նշանակությամբ: Ժողովրդի բարեկեցության հանդեպ նրա անտարբերությունը վերաճում է արհամարհանքի՝ բնութագրելով իր իսկ դաժանությունն ու ազահությունը: Բնական է հնչում նրա խոսքը, «Ազգային ազոավներ... Հավաքվել են մի դյուժին անգործներ ու դռնեդուռ ընկել, թե ինչ է՝ «Աշխատանքի տան» համար փող ենք հավաքում: Աշխատանքի տո՞ւնս որն է...»: Ժողովրդական դերասանը, մտնելով դերի մեջ, բացահայտում է խարդախության ու խաբեության հաշիշով զմռսված իր վարքագիծը: Եվ իր արարք-

ներն արդարացնելու համար ավելացնում է. «Աշխատող մարդը ինքը գործ էլ կունենա, տուն էլ: Հավաքել են ծուլերին ու անպիտաններին, ձրի կերակրում են, թե ազգ ենք փրկում»:

Ներկայացման հանգույցն սկսվում է այն պահից, երբ Օթարյանը վճռական քայլերի է դիմում իր ընտանիքի ոտնահարված իրավունքները վերականգնելու համար: Այստեղից սուր բնույթ է ստանում պայքարը հերոսների միջև: Ծավալվող հակասություններում Հարությունյան-Էլիզբարյանը բացահայտում է ե՛լ իր, ե՛լ իր դարաշրջանի էությունը: Հանդիսատեսը նրա անկաշկանդ խաղի վկան է դառնում կնոջ՝ Երանուհու հետ անմարդկային վերաբերմունքի, Օթարյանի նկատմամբ ցուցաբերած մերթ շողոքոթ, մերթ սիրալիիր արտահայտության, որդիների հանդեպ խառնաշփոթ ապրումների պահերին: Առանձնապես տպավորիչ է ներկայացման վերջին տեսարաններում Մարգարիտի հանդեպ երկդիմի բնավորությունը ցուցադրող խաղը: Մ. Հարությունյանին հաջողվում է կատարել առանցքային իր դերը ներկայացման մեջ:

Ե՛վ դրամայում, ե՛լ ներկայացման մեջ Անդրեաս Էլիզբարյանի գործակիցը Սաղաթելն է, որի դերը մարմնավորում է ԼՂՀ ժողովրդական արտիստ Ք. Հարությունյանը: Ուշագրավն այն է, որ իր բնութագրական խաղի ընթացքում Քաջիկ-Սաղաթելը Միքայել-Անդրեասի ստվերը չի դառնում: Թեկուզ ամեն դեպքում նա հաստատում է Էլիզբարյանի դատողությունները, սակայն հմտորեն ցուցադրում է մի բնավորություն, որ ամբողջությամբ տիպական է եւ ավելացնում է կապիտալի դաժան իրականության ճիրաններում այլանդակվող մարդկանց շարքը: Անդրեասի գործակից-բարեկամը՝ Քաջիկի Սաղաթելը, ինքնատիպ է, անմիջական, անկաշկանդ, նա դեր չի խաղում, մտնում է դերի մեջ եւ իրեն ներկայացնում որպես Սաղաթել՝ շահամոլ, խարդախ, խաբեբա, անգութ: Բնավորության այդ գծերը բացահայտվում են ներկայացման հենց սկզբից, երբ Սուրենը գիշերային ռեստորաններում շվայտ կյանք վարելու նպատակով նրանից 300 ռուբլի է խնդրում, փոխարենը

Մտանապատիկ վերադարձնելու վճռով, այն էլ՝ հոր մահից հետո: Տիպական է Անդրեասից 500 սաժեն հող պահանջելու տեսարանում Սաղաթել-Քաջիկի համոզիչ խաղը, նրա սառն ու անտարբեր դիրքը, երբ Անդրեասը Մարգարիտի մնջասենյակից վերցնում է Օթարյանի ներկայացրած փաստաթղթերը, իսկ երբ Անդրեասը մտատանջվում է՝ ասելով՝ «Այդ աղջկա կերպարանքը կեսգիշերին, սարսափած դեմքը, ձայնը ես մինչեւ գերեզման չեմ մոռանա», Սաղաթել-Քաջիկը նոր երանգով է ցուցադրում իր խաղը՝ սառնասիրտ խորհրդով. «Երեխա ես, ուրիշ ոչինչ: Դու այն ասա, ուրիշները չիմանան»: Ապա. «Պետք է սառը լինել, այնուամենայն էլ չզցել: Մտածիր, թե ինչ ահագին հարստություն ես ազատել, այն ժամանակ արածդ քեզ ոչինչ կերելա»: Անդրեասի համար ստեղծված հոգեկան այդ ծանր պահին ստանալով 500 սաժեն հողի փաստաթուղթը՝ Քաջիկ-Սաղաթելի շուրթերին միանգամայն այլ տոնով է հնչում խոսքը. «Իսկապես, ի՞նչ ես արել: Մի քաղցած գայլի ատամները հանել ես, պրծավ գնաց: Թող այժմ գոռա՝ ինչքան ուզում է, թե էլիզբարովը նրա հորը կողոպտել է: Փաստեր կպահանջենք»:

Անդրեաս էլիզբարյանի հակապատկերը նրա կրտսեր աղջիկը՝ Մարգարիտն է՝ կոնֆլիկտի կենտրոնական դեմքերից մեկը: Մարգարիտը սիրում է Օթարյանին, սիրում է ազնվորեն, ժողովրդական գեղեցիկ ավանդույթներին հավատարիմ եւ ունի պատվի իր մաքրամաքուր հասկացողությունը, որը միանգամայն հակադիր է հոր՝ պատվի զգացումին: Արտաշեսի տված փաստաթղթերը Մարգարիտը ներկայացնում է հորը եւ պահանջում արդարություն: Ու հոր եւ աղջկա միջեւ սկիզբ է առնում մի պայքար, որ վերածվում է սոցիալական շահերի եւ անձնական զգացումների անհաշտ բախումի: Ահա այս լարված պայքարն է, որ ներկայացումը դարձնում է ժամանակակից թե՛ նյութով, թե՛ գաղափարով: Մարգարիտի դերը մարմնավորում է 17-ամյա Արմինե Գրիգորյանը, որն ավարտել է թատրոնի ստուդիան: Հուրախություն մեր թատրոնի եւ թատերասեր հասարակայնության՝ ընդգծենք, որ Ա. Գրիգորյանը հաստա-

տեց, որ ինքը ծնվել է թատերական արվեստի համար: Ուշադրություն պիտի դարձնել նորահայտ այդ դերասանուհուն, վստահել բարդ-հոգեբանական դերեր: Ներկայացման մեջ Արմինեն Մարգարիտ է բառի ամենամուրբ իմաստով՝ արդարամիտ է, ազնիվ, անբիծ, գթասիրտ, ծնողասեր, անաչառ: Իր անմիջական խաղով Արմինեն արդարացնում է եւ գրողի գեղագիտական իդեալը, եւ բեմադրող-ռեժիսորի ակնկալիքները: Նա կարողանում է բացահայտել իր հարուստ ներաշխարհը թե՛ իր հարազատների եւ թե՛ սիրած տղայի՝ Արտաշես Օթարյանի հետ երկխոսության տեսարաններում: Առանձնապես հուզիչ են Արմինեի բեմական պահվածքն ու խոսքը վերջին տեսարաններում: Հոր՝ Անդրեասի հանդիմանությանը նա պատասխանում է տրամաբանական պահանջվող շեշտով. «Տես, հայրիկ, ես չոքում եմ քո առջև: Խղճա՛ ինձ, խնայիր ինձ: Քեզանից է կախված իմ կյանքը: Լավ լսիր, կյանքս եմ ասում: Մի՛ արա, հայրիկ, այդ բանը, մի՛ արա, գողությունը սոսկալի հանցանք է»: Իսկ երբ հայրը հորդորում է, որ աղջիկը ծնկաչոք վիճակից վեր կենա, ներս կմտնեն, կտեսնեն, Արմինե-Մարգարիտը խոսքի նոր հնչերանգով է շարունակում խնդրանքը. «Ո՛չ, ո՛չ, ես վեր կկենամ միայն պատիվս հետ ստացած... Հայրի՛կ, տուր ինձ այդ թղթերը»:

Անդրեասը քարսիրտ է, թղթերը նետում է վառարանի մեջ: Արմինե-Մարգարիտն անուժ է ու մեռակ, չի կարողանում կրակի միջից հանել փաստաթղթերը: Ալիքվում է Մարգարիտի աղետուր կանչը. «Այստեղ եկեք, Ռոզալիա, Բագրատ, ամենքդ եկեք, տեսեք ինչ է կատարվում այստեղ: Հայրն այրեց իր աղջկա պատիվը»: Ինքնասպան լինելուց առաջ Արմինե-Մարգարիտը փորձում է փրկել իր հոր պատիվը՝ դիմելով Արտաշեսին. «Ես այրեցի այն թղթերը»: Այստեղ եւս նա ցուցադրում է անմիջական խաղ:

Մեր թատրոնի երիտասարդ, խոստումնալից ուժերից է Վահան Հայրապետյանը, որը հանդես է գալիս Սուրենի դերում: Վահան-Սուրենն իր միջավայրի ծնունդն է եւ իր արարքներով բնութագ-

րում է ժամանակաշրջանը: Նա մի կողմից ներկայացնում է իր բազմաբղետ ընտանիքը, մյուս կողմից՝ «ոսկի երիտասարդությանը»: Սուրենը եւս ունի պատվի իր ընկալումը: Վահան-Սուրենը բոլոր տեսարաններում շարժումներով անկաշկանդ է, խոսքի մեջ՝ ազատ ու համարձակ: Վահանն ուղղակի քանդակում է Սուրենի կերպարը՝ հարբեցող, Աբուլովի մրցակից, օպերային երգչուհի Առլովային տիրող ասպետ, ցոփ ու շվայտ կյանքի իրավունքով վարվող երիտասարդ: Վահան-Սուրենը կարողանում է ճարպկորեն արդարացնել իր վարքագիծը տնեցիների մոտ, ընդգծել իրենց ընտանիքի էությունը: Համոզիչ է հնչում նրա բնութագրող խոսքը. «Մեր փողը կեղտ է, նրան փչացնողը մեղք չէ»: Իսկ եղբորը՝ Բագրատին, շշպռում է արտիստիկ կեցվածքով. «Ես կեղտը փչացնում եմ, իսկ դու պաշտում ես»: Համոզիչ է նաեւ նրա փոփոխվող վերաբերմունք-խաղը Օթարյանի հանդեպ: Ավելի վճռական է հնչում Վահան-Սուրենի վերջնական ինքնաբացահայտման խոսքը՝ ուղղված Մարգարիտին եւ մորը. «Թող հայտնի լինի մեզ, որ շուտով կիրառվեն իմ բաժին ժառանգությունից, քան կհամաձայնվեն, որ մարդիկ երեսիս ասեն. «Դու կողոպտիչի որդի ես»:

Ալ. Շիրվանզադեն պիեսի գործող անձանց ներկայացնող ռեժիսորներում Բագրատին բնութագրում է այսպես. «Էլիզբարյանների ավագ որդին: Ժամանակակից գործնական երիտասարդ, 27 տարեկան եռանդուն դեմքով: Ձեւերն ու շարժումներն արագ են, ոճը՝ կտրուկ ու դրական»: Դիտելով Սամվել Եվրիյանի խաղը Բագրատի դերում՝ խորհում ես, որ բեմադրող-ռեժիսորն ուղղակի գտել է նրան: Ս. Եվրիյանը, որ վերջին մի քանի տարիների ընթացքում չի աշխատել թատրոնում, սակայն եղել է մեր մշակութային կյանքի ասպարեզում, ողջունելի քայլ է կատարել՝ վերադառնալով թատրոն եւ հանձն առնելով այնպիսի մի դեր, որ «Պատվի համար» դրամայի կոնֆլիկտն ապահովող հիմնական ուժերից մեկն է: Պիեսի հեղինակը Բագրատին ներկայացնում է գործարար ու եռանդուն ձգտումներով, որն ունի նպատակ եւ հեռանկարային

Ծրագրեր: Նա երիտասարդ բուրժուա է, կրթված ինժեներ-տեխնոլոգ, երազում է դառնալ ֆինանսական հզոր սյուն: Իսկ այդ ճանապարհին նա չի խորշում ոչ մի միջոցից, թեկուզ մերձավորների դիակների վրայով քայլելու: Սամվել-Բագրատը ներկայացման ընթացքում ցուցադրում է հղկված խաղաոճ: Սամվել-Բագրատի խոսքը կտրուկ է, տեղ հասնող, ինքնաբացահայտումները՝ համոզիչ, նպատակային՝ պատվի իր ընկալումով: «Մեր ժամանակներում բանականությունը եւ փողը միշտ պետք է շարժման մեջ լինեն, ընդգծում է նա՝ ներկայացնելով իր հոգեկան աշխարհը՝ շիկացած իր շահերով: Նրա խոսքը հնչում է վստահ, երբ դեռեւս ներկայացված չեն Օթարյանի փաստաթղթերը, խոսում է օրենքի անուկից, հոխորտում է իրենց գերդաստանի պատվի համար: Իսկ երբ Մարգարիտը հայտնում է, որ Օթարյանի փաստաթղթերն իր մոտ են, նա խորհուրդ է տալիս քրոջը՝ չվերադարձնել դրանք: հանդիմանում է Մարգարիտին՝ համոզիչ ընդգծումով, «Խղճի եւ ազնվության մասին ամեն մարդ իր գաղափարն ունի: Էականն այն է, որ եթե այդ թղթերն անցնեն Օթարյանի ձեռքը, ես կզրկվեմ իմ գործարանից... Ես ուզում եմ լինել հզոր ֆինանսական սյուն, մեկն այն հսկաներից, որոնց ձեռքումն է մեր ժամանակի ամենամեծ ուժը՝ կապիտալը»: Քրոջ հանդիմանությանը նա պատասխանում է. «Ձավակները պատասխանատու չեն իրենց հայրերի փոխարեն: Մեր ծնողների անցյալը մեզ համար մեռած պատմություն է»: Ապա՝ «Ո՞ւմ հայրը չի զրկել մեկին կամ մյուսին այս կամ այն կերպ: Վերջապես, հենց նորերից ո՞ր մեկը չի զրկում կամ հարստանում: Տարբերությունն այն է, որ հները զրկում էին հին ձեռով, նորերը զրկում են նոր ձեռով»: Սամվել-Բագրատը կարողանում է ներկայացնել իր դարաշրջանի արատավոր գծերն ու անմարդկային բնույթը: Ս. Եվրիյանի մարմնավորած Բագրատը համոզում է բոլորին, որ նրա մասնակցությունը այսօրվա թատերական կյանքին անհրաժեշտ եւ շահեկան է:

Ռոզալիայի դերն իրականացնում է Նունե Մելքունյանը: Նունե-

ի խոսքն անմիջական է, խաղը՝ բնական, կերպարի հոգու աշխարհի բացահայտումը՝ համոզիչ: Խոսքային առիմքնող երանգները Նունեն հմտորեն է ծուլում դիմախաղային միջոցներին: Էլիզբարյանների ընտանիքի երես առած աղջկա ներաշխարհը նա ներկայացնում է բնականոն հնարանքներով: Փետրազարդ գլխարկների, պարահանդեսների, անիմաստ հաճույքների սիրահար Նունե-Ռոզալիան հոր հարստությունը աջ ու ձախ վատնողներից է եւ բոլոր տեսարաններում արդարացնում է իրեն այդ բարդ դերում:

ԼՂՀ վաստակավոր արտիստուհի Սվետլանա Թովմասյանը արտաքին տվյալներով, նուրբ խոսելաձեւով համապատասխանում է Շիրվանզադեի ռեմարկով պատկերված Երանուհուն: Սվետլանա-Երանուհին մեծապես նպաստում է ներկայացման հաջող ընթացքին: Դերասանուհին իր հմուտ եւ զուսպ խաղով ներկայացնում է չգնահատված ու տառապած կնոջ, նրբասիրտ մոր, ազնվասիրտ ու զարմացած քրոջ բազմերանգ հոգեբանությունը: Սվետլանան խաղի մեջ ազատ է, բնական, բնութագրական են նրա արտահայտությունները Սուրենի մասին. «Փողը նրան փչացրեց, փողոցները գցեց», իսկ Բագրատի վերաբերյալ՝ «Փողը երկնային թագավորի պատիժ է»: Սրտառուչ են նրա ապրումները Մարգարիտի կրած տառապանքի պատճառով: Պարզապես ներկայացման մեջ Սվետլանան գտել է Երանուհուն, Երանուհին՝ Սվետլանային:

«Պատվի համար» դրամայում եւ ներկայացման մեջ կենցաղային հարաբերությունները սոցիալական հակասության վերաճելու ճանապարհին առաջնային կռվանը Օթարյանի փաստաթղթերն են: Արտաշեսի հայրը եղել է Անդրեաս Էլիզբարյանի երբեմնի գործընկերը: Մահվանից առաջ նրա եւ Անդրեասի միջուկ կնքվել են պայմանագիր-փաստաթղթեր, որոնց համաձայն, Էլիզբարյանը պետք է խնամի ընկերոջ ընտանիքի անդամներին, ապա պահանջվելու դեպքում Արտաշեսին վերադարձնի կտակած հարստությունը: Սակայն Անդրեասը հրաժարվում է՝ դիմելով խարդախության, այն է՝ ամեն գնով ձգտել չվերադարձնել հարստությունը: Ահա,

Սյուժետային այս գլխավոր գծի ցուցադրումը ներկայացման մեջ վիճակված է Արտաշես Օթարյանին, որի դերակատարումը հանձնարարված է դերասան, հերթական ռեժիսոր Մարատ Դավթյանին: Ճիշտ է՝ Մարատ-Արտաշեսը ինչ-որ չափով խաղի մեջ է պահում էլիզբարյաններին, սակայն գտնում ենք, որ Մարատ-Արտաշեսը սառն է եւ Մարգարիտի հետ հանդիպումներում, եւ իր պահանջով բորբոքվող հակամարտություններում: Արտաշեսի խոսքը պետք է լինի հնչեղանգներով, որպեսզի ազդի հանդիսատեսին: Անհրաժեշտ է լուրջ խորհել այս կապակցությամբ: Խորհելու առիթ ունի նաեւ հաշվապահի էպիզոդիկ դերակատար Կ. Առաքելյանը: Չպետք է մոռանալ, որ ներկայացման մեջ յուրաքանչյուր դերակատար պետք է կենդանի եւ շոշափելի իր մասնակցությունը բերի երկի սյուժետային գլխավոր գծի հանգուցալուծմանը:

«Պատվի համար» ներկայացման հաջողությանն իր շնորհակալ ներդրումն է բերել բեմանկարիչ Անտոն Քեչիշյանը՝ ժամանակակից, լուսառատ ու նպատակային ձեւավորումով: Բովանդակալից ու բնութագրական է նաեւ երաժշտական ձեւավորումը, որի հեղինակը Գագիկ Չարությունյանն է:

«Պատվի համար» դրաման ներկայացնելու համար բեմադրող-ռեժիսորը կատարել է որոշ փոփոխություններ, որ բնական է: Կրճատվել են Անդրեաս էլիզբարյանների գրասենյակի երիտասարդ սպասավոր Վարդանը եւ աղախին Ջարուհին: Սակայն կրճատված երկու գործող անձերի փոխարեն ներկայացման ընթացքին ներառվել է Տեր-Սիմոնը, որ պիեսում հիշվում է հազվադեպ, իսկ բեմում խոսում է մարդկային խղճի, բարության, ազնվության, մարդասիրության մասին՝ իհարկե, տեխնիկական միջոցների ընձեռնամբ: Ուշագրավ է նաեւ ներկայացման մուտքը, որը կանխատեսում է խճճված դեպքերի, դաժան գործողությունների, ողբերգական ճակատագրերի վերահասությամբ: Ընդունելի է նաեւ ներկայացման վերջում, Մարգարիտի ինքնասպանության պատճառով Անդրեասի կաթվածահար լինելը: Պիեսի վերջում հայրը՝ էլիզբար-

յանը, երկու ձեռքով խփում է գլխին եւ իրեն անվանում որդեսպան, ասել է թե՛ նա խղճի խայթ է զգում: Բեմադրող-ռեժիսոր Կ. Աբրահամյանն էլ ներկայացման մեջ ընդգծել է տալիս հայրական խղճի արթնացումը:

Պետք է նշել նաեւ ներկայացման մեջ նկատվող որոշ թերություններ, որ հետագայում կարելի է շտկել: Դրամայում գրողը Օթարյանի փաստաթղթերը նետել է տալիս վառարանի կրակի մեջ: Սակայն այստեղ Անդրեասը թղթերը նետում է կուլիսների հետեւ, եւ միայն խոսքի միջոցով է հասկացվում, որ դրանք հրի ճարակ դառան: Ժամանակակից էլեկտրատեխնիկական միջոցներով դժվար չէ բեմում ցուցադրել պայմանական կրակը, որ ավելի հուզիչ կդարձնի տեսարանը: Ներկայացման ընթացքում միզանսցենաները չեն հաջող: Անհրաժեշտ է սրբագրել դրանք: Կարելուր գործոն-առարկա է նաեւ Անդրեասի աթոռը, որի վրա պիտի բազմի միայն ինքը: Ինչ-որ պահի այդ աթոռը պայմանական արգելքի խորհրդանիշ է դառնում: Բայց ստացվում է այնպես, որ յուրաքանչյուր դերակատար բեմ մտնելուց կարող է նստել այդ աթոռին:

Կուլիսների ետեւում չար ոգիների^օ, թե՞ սատանաների ստվերային շարժումներն արդարացնում են իրենց: Սակայն բեմի վրա էլիզբարյանի շուրջը պտտվելու տեսարանը ավելորդ է թվում:

Չնայած այս մասնակի թերություններին ամբողջության մեջ «Պատվի համար» դրամայի բեմադրությունը հաճելի երեւույթ է եւ խոսում է այն մասին, որ մեր թատրոնը վերածնունդ ապրելու քիչ հնարավորություններ չունի: Մնում է, որ օջախի ղեկավարներն իրենց շուրջը համախմբեն շնորհալի ուժերին եւ համբերությամբ աշխատեն նրանց հետ՝ չմոռանալով մեր ժողովրդի թատերասիրությունը եւ մշակույթը գնահատելու դարավոր ավանդույթը:

*«Լուսարար»,
2006, թիվ 23*

ԱՊՐԵՍ, ԱՐՄԵԼԱ

(Արմելա Առաքելյան - 60)

Թատրոնը կոլեկտիվ ջանքերի խորհրդանիշ ու արդյունք է: Այն միայն առաջին մեծության աստղերի լույսով չի ճառագում, այլ կոլեկտիվի տարբեր այրումներ ունեցող լուսատուների շնորհիվ: Եվ ինչքան միաձույլ ու իրար լրացնող են լինում դերասանները, ինչքան միեւնույն տազնապով ու պատասխանատվությամբ են կատարում իրենց գործը, այնքան առինքնող ու ջերմացնող է դառնում կոլեկտիվը: Իմ այս կարծիքը ակունքված է Արցախի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի պատմությունից, որին առնչված են ել իմ թատերասիրությունը, ել խորին հարգանքը մշակույթի մեր օջախի դերասանական ուժերի հանդեպ: Եվ երբ հետադարձ մի հայացք են ձգում մեր թատրոնի ներկայացումների փնջին, նրանում այնպայմանորեն տեսնում են Արմելային, որի աստվածատուր շնորհքը եւ սերը իր ընտրած գործի հանդեպ միշտ բերել եւ կանգնեցրել են պատասխանատվության եւ հանդիսատեսի ծափերին արժանանալու խաչմերուկում:

Եվ այսօր` իր ծննդյան 60-ամյա բարձունքից, դերասանուհի Արմելա Առաքելյանը բաց ճակատով, հանգիստ խղճով կարող է իր հազարավոր հանդիսական-երկրպագուներին դիմել հետեւյալ խոստովանությամբ.

«Ես թատրոնիցն եմ, նաեւ ձերն եմ, իմ հայրենակիցներ, ինձ որոնեցեք իմ մարմնավորած դերերի մեջ, որոնց ձայնը հնչում է ոչ միայն մեր թատրոնի բեմում, այլեւ Արցախի բոլոր գյուղերում, ավաններում, հինավուրց բերդերում... Եվ շնորհակալ եմ ձեզ, որ ինձ պարգեւել եք իմ շնորհքը ցուցադրելու ուժ ու եռանդ»: Եվ Արմելան թող հավատացած լինի, որ բոլոր հանդիսականների շրթերին հնչում է հպարտության խոսքը. «Ապրես, մեր Արմելա, սպասում ենք քո նոր, կատարյալ դերերին»:

**ԼՂԴ մշակույթի, երիտասարդության
հարցերի եւ սպորտի նախարարություն:
Բուկլետ, 2006 թ.**

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԴԵՐԱՍԱՆԻ ԾԱՂԿԱԼԻՑ ՈՒՂԻՆ
(Սամվել Վիրաբյան-55)

Տակավին պատանի էր նա, երբ սիրահարվել էր թատրոնին: Բուլորը գիտեն, որ իր նախասիրություններն ունեցող անհատն իրեն ամբողջությամբ դրսևորում է այն բնագավառում, որտեղ հաջողվում է աշխատել՝ միշտ երազի թելերին, միշտ ծարավ ու միշտ պատասխանատու: Նման ճակատագիր է վիճակվել Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասան Սամվել Վերբյանին: Դերասանի ճանապարհի սկիզբը կապվում է Կիրովականի ՅոՎի. Աբեյանի անվան թատրոնի հետ: Նա ե՛լ սովորում էր թատրոնին կից թատերական ստուդիայում, ե՛լ ճանաչված կուլեկտիվի հետ հանդես գալիս իրեն տրամադրված դերերով: Հմուտ կուլեկտիվը Սամվելի մեջ նկատեց աստվածատուր այն շնորհքը, որ անհրաժեշտ է դերասան դառնալու համար: Եվ այդ հավատն ու վերաբերմունքը ոգեւորեցին նրան գնալ եւ սովորել Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական բաժնում: Դեռեւս ուսումնառության տարիներին Սամվել Վիրաբյանը թե տեսական, եւ թե գործնական պարապմունքներում ապացուցեց, որ ինքը ճիշտ է ընտրել իր ուղին եւ ամբողջ եռանդով ու կարողությամբ պատկանում է թատերական արվեստին: Եվ ահա, 1976 թ. Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ավարտական քննությունների ժամանակ նա մարմնավորում է Ջիմզիմովի դերը Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգության մեջ: Բեմադրությանը ներկան էր նաեւ այն ժամանակվա Ստեփանակերտի պետական թատրոնի տնօրեն Գուրգեն Գաբրիելյանը, որը հավանելով երիտասարդ շրջանավարտի խաղը, նրան հրավիրեց Ստեփանակերտ: Սամվելի համար այդ հրավերը եւ անսպասելի էր, եւ ցանկալի: Ինչպես խոստովանում է Վիրաբյանը՝ սիրում էր Արցախը եւ իր սերը ձգտում էր արտահայտել նրան ծառայելով: Առանց վարանելու երիտասարդ դերասանը գալիս եւ որդեգրվում է Արցախ աշխարհին: Լռու գեղատեսիլ

բնության զավակը, հոգու մեջ առած ծննդավայրի հմայքը, նետվեց աստվածակերտ Արցախի գրիկը եւ ասաց. «Այսօրվանից ինձ էլ համարիր քո զավակը, Արցախ»: Եվ Սամվել Վիրաբյանը չորժեց իր երդումը, իրեն ոմանց պես, տնփեսա չհամարեց, աչքը դրսում չպահեց, իրեն ընծայեց մի այնպիսի օջախի, որ 70 տարուց ավելի է, ինչ լույս է ցանում հարազատ ժողովրդի հոգում ու երազներում անմնացորդ ու անխոնջ: Իր նախընտրած թատրոնի ավագ ու երիտասարդ սերունդների հետ մեկտեղ 30 տարվա ընթացքում Վիրաբյանն իր մարմնավորած 100-ից ավելի դերերում հանդես եկավ Լեռնային Ղարաբաղի բոլոր շրջկենտրոններում, գյուղերում, ավաններում, զինվորների առջեւ:

Ժողովուրդն ավանդում է. «Ասա, ով է քո ընկերը, կասեմ, թե ով ես դու»: Իսկ Վիրաբյանի երիտասարդ գործընկերները 1970-ական թթ. սկսած աստղաժպիտ ժաննա Գալստյանն էր, Քաջիկ Չարությունյանը, որոնք արժանացել են ժողովրդական դերասանի բարձր կոչման, Արեգա Պետրոսյանն է եւ Արմելա Առաքելյանը: Նրանց հետ էին նաեւ Ջ. Չարությունյանն ու Ս. Բաղինյանը, որոնք հեռացան Արցախից, իսկ ոմանք էլ փոխեցին իրենց մասնագիտությունը՝ մեկընդմիջտ հրաժեշտ տալով թատրոնին: Սամվել Վիրաբյանը հաղթահարեց կյանքի տրամադրած բոլոր դժվարությունները եւ այսօր ճակատը բաց ու մաքուր խղճով կարող է հաստատել տարիներ առաջ արտաբերած իր երդումը. «Ես քո նվիրյալ զավակն եմ, Արցախ քո ցավը իմ ցավն է, քո հաղթանակը իմ բաղձանքը»: Իսկ Արցախի բոլոր բնակիչները կարող են հպարտությամբ ասել. «Չարազատ զավակը երկրին ծառայում է իր նվիրվածությամբ, դու այդպիսին ես, Սամվել»:

Սամվել Վիրաբյանի մարմնավորած բոլոր դերերի պատկերասրահին ականատես եմ եղել: Ամբողջ կյանքում, 1970-ական թթ. սկզբից սկսած, սերտորեն կապված եմ եղել մեր թատրոնին: Եվ ինձ համար հաճելի է, որ Սամվելի մասին խոսք բացելիս, իմ հուշերի աշխարհում հառնում են նրա անձնավորած Բարխուդարը եւ Ռուստամը «Նամուս», Ադամյանը՝ «Այստեղ ապրել է մարդը», Նիլը

«Քաղքենիներ», Պրուքսը «Դավիթ Կոպերֆիլդ», Չորժին «Կապույտ եղնիկը», Հովույանը «Բնակարանամուտ» թատերերկերում: Այդ դերակատարումները վերաբերում են 1976-1982 թթ. թատերաշրջաններին: Օր-օրի իր կատարողական արվեստը հղկող դերասանը հետագա տարիներին խստապահանջ հանդիսատեսին գոհացրեց Ակոբի («Խանումի արարքը»), Անդրոյի («Անդրոն ու Սանդրոն»), Բուշտեցի («Շարքայիներ») Սամյանի («Վերջին ուսուցիչը»), թագավորի, քաղաքագլխի («Երջանիկ արքայազնը»), տանուտերի («Գողացած երջանկություն»), Գիժ Դանիելի («Չար ոգի»), Սուրենի («Վաճառքի ենթակա չէ»), Նինոսի («Արա Գեղեցիկ»), Գեներալի («Դիպլիբիտո»), Անտոնիոի («Ցիլինդր»), Բազազ Արտեմի («Գիքոր») եւ այլ դերերում:

Հետաքրքիրն այն է, որ Սամվել Վիրաբյանը հավասարապես իրեն դրսեւորում է կատակերգական, դրամատիկ, ողբերգական խառնվածք ունեցող դերերում: Վաստակաշատ դերասանը ելնելով իր կենսափորձից գտնում է, որ դերասանի համար պատասխանատու եւ երջանիկ առիթ է դասական կերպարի մարմնավորումը, որովհետեւ նա հղկում է իր վարպետությունը թե՛ դրական եւ թե՛ բացասական կերպարները ներկայացնելիս:

Սամվել Վիրաբյանի հետ ունեցած զրույցի ժամանակ իմացանք, որ վաստակաշատ դերասանը դեռեւս կոչում չունի: Սակայն համոզվեցինք, որ մեր նորանկախ պետության պատասխանատու այրերը նկատի կունենան նրա ծառայությունները եւ կգնահատեն ըստ արժանվույն:

*«Ստեփանակերտ»
Հունվար, 2005 թ.*

**ԲԵՍԱՐՎԵՍՏԻ ՄԵՐ ՎԱՐՊԵՏՆԵՐԸ
(ԳԻՐՔ Ա)**

Դարերի ընթացքում թատրոնը եղել է հայ ժողովրդի հոգեւոր մշակույթի առողջ երակներից մեկը իր տեսանելի, սրտերի հետ խոսող, ինքնաճանաչման եւ ինքնահաստատման առաքելութեամբ: Այդ է հաստատում նրա անցած երկար ու ծանր, դժվարին ու փառապանծ ուղին սկսած մեր թվարկությունից առաջ 53 թվականից, երբ Արտաշատում առաջին անգամ բեմադրվեց Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» պիեսը, եւ որի ներկայացմանը մասնակցում էր նաեւ Տիգրան Մեծի որդին՝ Արտավազդ Երկրորդ թագավորը: Ամենադժվարին պահերին անգամ չի մարել թատերական կյանքը Հայաստանում: Այն աշխուժացել է առանձնապես 19-րդ դարում: Այդ բնագավառում ակնառու է 1860-70-ական թվականներին ձեւավորված Թիֆլիսի, Բաքվի, Կ. Պոլսի, Շուշիի եւ այլ քաղաքների հայկական դրամատիկական թատրոնների գործունեությունը:

Ժողովրդին հոգեւոր սնունդ մատուցելու ուղղությամբ թատրոնի դերի ու տեղի հարցը միշտ էլ եղել է հայ մշակույթի մեծ երախտավորների ուշադրության կենտրոնում: Առկա են Ս. Նալբանդյանի, Գ. Սունդուկյանի, Մ. Պեշիկթաշյանի եւ մյուս դասականների վերաբերմունքն արտահայտող տասնյակ հոդվածներն ու ողջույնի ելույթները թատերական կյանքի տարբեր առիթներով:

Հայոց թատրոնի պատվաբեր, բայց միաժամանակ դժվարին գործունեությունը զբաղեցրել է նաեւ Մեծ Լոռեցուն: Նա լուրջ խորհուրդներ է տվել պատասխանատու ընկերներին դերասանական խմբի ձեւավորման, ռեպերտուարի ստեղծման, ազգային պիեսների ընտրության, դասական հայ գրողների դրամատիկական երկերի բեմադրման, թատերական գործիչների սոցիալական-կենցաղային պայմանների բարելավման կապակցությամբ: Նրան անչափ հուզել է նաեւ հասարակության վերաբերմունքն իր իսկ սեփական ազգային այդ կարեւոր օջախի հանդեպ: 1910 թ. Թիֆլիսի հայոց թատերաշրջանի բացման առիթով գրած խոսքը Հ. Թումանյանի

յանն ավարտում է իմաստուն խորհրդով. «Ողջունելով Թիֆլիսի հայոց թատրոնի բացումը՝ մենք սրտագին կցանկանայինք, որ հասարակությունը գնահատեր ու պաշտպաներ իր մայրենի բեմը, իր դրամատուրգներին ու դերասաններին՝ այսպիսով նրանց հնարավորություն տալով ավելի ուժեղանալու եւ իրեն համար էլ իրավունք ձեռք բերել ավելի խստապահանջ լինելու»:

Մեծն Թումանյանի այս նարգարեական պատգամը առօրեական հնչողություն ունի նաեւ մեր մշակութային կյանքի աշխուժացման համար, առանձնապես, Արցախի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դեպքում: Մշակութային այս օջախը, որ բացվել է 1932 թ. օգոստոսի 11-ին եւ սկզբնապես կրել մեծ գրող Մ. Գորկու անունը, բեմարվեստի անզուգական վարպետ Կ. Ալվարյանի գլխավորությամբ ու ջանքերով շատ արագ արժանացել է թատերասեր հասարակության ջերմ ընդունելությանն ու հարգանքին: Եվ թատրոնը անցել է պատվավոր ճանապարհ: Իր առաջին Վ. Վաղարշյանի «Օղակում» պիեսի բեմադրությունից սկսած թատրոնը, հավատարիմ իր պատմական առաքելությանը, թատերական արվեստի հանդեպ իր առողջ հունդերն է ցանել ոչ միայն Արցախի գյուղերում, այլեւ Ադրբեջանի մյուս հայաշատ բնակավայրերում: Այսպես, մեր թատրոնը իր անցած 75 տարիների ընթացքում կարողացել է ստեղծել իր ձեռագիրն ու սեփական պատմությունը, իր խոսքն է ասել Երեւանի Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի կողքին:

Այսօր հրամայական է դարձել վերաարժեքավորելու մեր թատրոնի եւ կոլեկտիվի, եւ նրա աստղերի կատարած գործը, նաեւ այն գործիչների, ովքեր հյուսել են այդ օջախի պատմությունը եւ կտակել սերունդներին: Այս ուղղությամբ երախտիքի է արժանի արձակագիր-թատերագետ, մշակույթի վաստակավոր աշխատող Ի. Ալավերդյանը: Նա առաջինն էր, որ ընթերցողի դատին հանձնեց «Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական հայկական դրամատիկ թատրոն-50» գիրքը: Նրա «Գուրգեն Հարությունյան», «Մարգո Բալասանյան», «Բենիկ Օվչյան» դիմանկարային մենագրությունները, նշանավոր դերասանների մասին կազմած բուկլետ-

ները, ներկայացումների կապակցությամբ գրած տասնյակ թատերախոսությունները խոսուն վկայություններ են խորհրդային շրջանի հայ թատրոնների ընդհանուր պատմության մեջ:

Կրկնակի հաճելի եւ ուրախալի է այն վերաբերմունքը Ի. Ալավերդյանի թողած ստեղծագործական ժառանգության հանդեպ, որ ցուցաբերում է նրա դուստր բանասեր-թատերագետ Կարինե Ալավերդյանը: Այդ գործի առհավատչյան «Բեմարվեստի մեր վարպետները» Ա գիրքն է, որ լույս է տեսել վերջերս՝ ԼՂԶ կառավարության հովանավորությամբ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչության կողմից:

Գրքի հեղինակները հայր եւ դուստր Իսահակ եւ Կարինե Ալավերդյաններն են:

Որպես այդ ժողովածուի խմբագիր ինձ անչափ հուզել եւ գրավել է Կարինեի սրտացավ վերաբերմունքը թատրոնի եւ բեմարվեստի մեր վարպետների նկատմամբ, նրա որդիական սիրո զգացումն իր վաստակաշատ հոր հիշատակի հանդեպ եւ այն համոզմունքը, որ հոր թողած ժառանգությունը պետք է դառնա ժողովրդի սեփականությունը, հայոց մշակույթի պատմության արցախյան խոսնակը: Հենց այս հավատով էլ գրքի առաջաբանում նա գրել է. «Այսօրվա նորաստեղծ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության թատրոնը վերածնված արցախահայության ազգային մտածողության վերակենդանացման կարեւոր գործոններից մեկն է որպես լեզվամտածողության, հայրենասիրական ոգու, բարձր գաղափարների եւ ազգային դիմագծի կրող:

Հարուստ ավանդույթներ ունեցող մշակույթի այս օջախում ստեղծագործել են նշանավոր արվեստագետներ, որոնցից յուրաքանչյուրի կյանքն ու գործունեությունը թատրոնի պատմության անքակտելի մասն է կազմում»:

Հայտնի է, որ Ի. Ալավերդյանը 1968-1990 թթ. վարել է մեր թատրոնի գրական մասի վարիչի պաշտոնը: Այդ նշանակում է, որ նրա հոգու երանգներին են ձուլվել այն ձեռքբերումներն ու ակնկալիքները, որ ունեցել են կոլեկտիվն ու բեմի վարպետները: Այսօր հոր գործը թատրոնում շարունակում է Կարինեն եւ շարունակում է նա-

խանձախնդիր ոգեւորությամբ ու սրտացավությամբ:

Գրքի առյուծի բաժինը կազմում են Ի. Ալավերդյանի մենագրությունները մեր թատրոնի երեք վարպետների՝ Գ. Հարությունյանի, Մ. Բալասանյանի եւ Բ. Օվչյանի մասին: Ծանոթանալով այդ աշխատություններին՝ ընթերցողը գոհունակության զգացումով է լցվում Ի. Ալավերդյանի կատարած տքնաջան աշխատանքի հանդեպ: Նա հետազոտողի պատասխանատվությամբ ու բանիմացությամբ ներկայացրել է այնպիսի իրադարձություններ ու փաստեր, որոնք բնութագրում են ոչ միայն դերասանների կյանքն ու գործը, այլեւ խորհրդահայ թատրոնի առջեւ ծառայած բարդ ու կարեւորագույն խնդիրները, որոնց լուծմանն ու իրականացմանն իր նպաստն է բերել նաեւ մեր թատրոնը:

Վերոհիշյալ ժողովրդական երեք արտիստների կյանքն ու գործը Ի. Ալավերդյանի կողմից ներկայացված են գրողի եւ թատերագետի նախասիրությունների, պատկերավորության, պատուհի ինքնատիպության սահմաններում: Նրանց անցած ճանապարհը խորհրդանշում է Արցախի եւ Արցախցիների ճակատագիրը ծանր ու վտանգված անցյալով, խորհրդային կարգերի ընձեռած հնարավորություններով, Արցախյան ազգային-ազատագրական պայքարի վճռականությամբ, հաղթանակի բերած ակնկալիքներով:

Արցախցիների մի քանի սերունդ ականատեսն ու գնահատողն են եղել մի անպիսի վարպետի, որպիսին Գ. Հարությունյանն է (1905-1973): Ի. Ալավերդյանը մենագրության տարբեր բաժիններում ասես վրձնապատկերում է տաղանդավոր դերասանի անուրախ մանկությունը Գանձակում, նրա հետաքրքրությունները թատրոնի հանդեպ, ծանոթությունը Մեծ Արեւյանի հետ եւ առաջին դերասանական քայլերը, ապա նրա տաղանդի արտահայտությունը որպէս ծիծաղի վարպետ՝ Ստեփանակերտի պետական հայկական դրամատիկական թատրոնում: Նրա վարպետ խաղով են մարմնավորվել Հասան Ջալալ Տոլայի («Ռուզան»), Մարութխանյանի («Քառս»), Տեր Ավետիսի («Մխիթար սպարապետ»), Մերուժանի («Սամվել»), Սարգիսի («Էլի մեկ զոհ»), Մուրոմսկու («Դատական գործ»), Ջուռնա Խաչու («Հողի լեզուն»), Բարսեղ ապոր

«Ուն հետ ես դու»), Ղազարի («Գլխի գինն է 50 միլիոն»), Պերեցի («Ինչպես կառարավարել կնոջը»), Չժոու Պուի («Թայֆուն») եւ այլ նշանակալից դերեր:

Աշխատության մեջ նշվում է նաեւ Գ. Հարությունյանի հմուտ խաղը «Հեղնար աղբյուր» կինոնկարում Ուստա Ավետիսի դերում:

Ժողովածուի երկրորդ բաժինը նվիրված է ՀՀ եւ ԼՂՀ ժողովրդական արտիստուհի Մ. Բալասանյանի (1927-2007) կյանքին եւ թատերական գործունեությանը: Ի. Ալավերդյանը այստեղ իրեն դրսեւորել է որպես հմուտ կենսագիր եւ տարեգիր: Անդրադառնալով ականավոր արտիստուհու մանկության եւ ուսումնառության տարիներին հայրենի Ստեփանակերտում, գրող-թատերագետը որպես ականատես ու գործընկեր, հյուսել է իր հերոսուհու անսպառ եռանդի եւ դերասանական տաղանդի դրսեւորումները մոտ 60 տարվա բեմական կյանքում: Ներկայացված են Երեւանի թատերական ինստիտուտի շրջանավարտ Մ. Բալասանյանի պրոֆեսիոնալ դերակատարումները Նոր Բայազետի շրջանային պետական թատրոնում:

1953-2007 թվականները Մ. Բալասանյանի բեմարվեստի ամենաիմաստալից եւ բեղմնավոր տարիներն էին հայրենի քաղաքի դրամատիկականում: Նա մեր ազգային դրամատուրգիայի գլխավոր հերոսների փայլուն մարմնավորողն էր: Ի. Ալավերդյանը թատերախոսի ամենատեսությանը բնութագրում է անվանի արտիստուհու տաղանդի դրսեւորումները Գայանեի («Մելիքի աղջիկը»), Եվգինեի («Եվգինե»), Աշխենի («Սամվել»), Շուշանիկի («Քառս»), Անահիտի («Անահիտ»), Ռուզանի («Ռուզան»), Սոնայի («Չար ոգի»), Սաթենիկի («Մխիթար սպարապետ»), Կեկելի («Պեպո»), Վարդուհու («Աշխարհն, այո, շուռ է եկել»), Սուսանի («Նամուս»), Մարգարիտի («Պատվի համար»), Արմենուհու («Արմենուհի»), Սալոմեի («Էլի մեկ զոհ») եւ այլ դերերում: Նշվում է նաեւ Մ. Բալասանյանի վարպետ խաղը ռուս եւ համաշխարհային դրամատուրգիայի ամենապատասխանատու դերերում:

«Մ. Բալասանյան» մենագրությանը կցված է տաղանդավոր արտիստուհու դերակատարումների տարեգրությունը: Ահա

Մայսպետ, Արցախի թատրոնի Մեծ տիկինը իր մարմնավորած 128 դերերով զարդարել է հայ թատերական արվեստի պատմությունը, որի մասին գրված աշխատությունը Ի. Ալավերդյանի խիզախումներից է:

Արցախի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի պատմությունը սերտորեն կապված է նաև մեր բեմի աստղ՝ ՀՀ եւ ԼՂՀ ժողովրդական արտիստ Բենիկ Օվչյանի (1918-2005) հետ:

Դժվար է առանց հուզմունքի կարդալ տաղանդավոր դերասանի մասին Ի. Ալավերդյանի խանդատանքով ու լույսով շաղախված աշխատությունը, որի մուտքը միայն մի խոսուն դիմանկար է:

«Օվչյանը բազմաշնորհ դերասան է,- գրում է հեղինակը,- նա հախուռն կրքոտությամբ խաղում է բարդ, դրամատիկ դերեր, անձնավորում իրապատում խաղաոճով, ամենափոքրիկ մանրամասների ասեղնագործությամբ հասարակ մարդկանց հուզիչ բեմապատկերներ ստեղծում, հարանման հաջողությամբ հանդես է գալիս մերթ որպես ցայտուն կատակերգու, մերթ որպես ողբերգու, մերթ որպես ռոմանտիկ հովերով ապրող սիրահար, մերթ էլ որպես դաժան ու նենգ ամենաբացասական խարակտեր:

Դերերի բազմաբնույթ լինելը խոսում է Օվչյանի դերասանական խառնվածքի հարստության, մարդկային իրարամերժ, հակադիր հոգեբանություններ բացահայտելու կարողությունների մասին: Օվչյանը չի սիրում խաղալ կիսատոներով: Նրա խաղարվեստում թանձր գույներ կան, ցայտուն շեշտեր, հյութեղ ծալքեր...»:

Այս բնութագրական մուտքից հետո Ի. Ալավերդյանն ստեղծում է Բ. Օվչյանի ուղղակի հերոսապատումը՝ սկսած 1947 թ. մինչև իր կյանքի վերջը: Այդ Բ. Օվչյանն էր, որ 175 դերերի մարմնավորմամբ Արցախի հանդիսատեսին հասցրեց ոչ միայն հայ, այլև համաշխարհային դրամատուրգիայում արտահայտված համամարդկային արժեքները գաղափարներ:

Ականավոր դերասան Բ. Օվչյանի վարպետությամբ մեր բեմում մարմնավորվեցին Գրիմի (Շիլլերի «Ավագակներ»), Վիկտորի (Աֆինոգոնովի «Մաշենկա»), Խազուայի (Ա. Շանշիաշվիլու «Ձորի

Մահապետ Գոչան»), Ֆերդինանդի (Օ. Բալզակի «Խորթ մայրը»), Ռոդրիգոյի (Շեքսպիրի «Օթելլո»), Նեզնամովի (Ա. Օստրովսկու «Ամենը մեղավորներ»), Վասկա Պեպելի (Մ. Գորկու «Հատակում»), Արիստարխի (Վ. Շուկշինի «Ձեռներեց մարդիկ») եւ այլ կերպարներ: Ճիշտ է ասված, որ վարպետի մասին գրողը պետք է ունենա ե՛ւ արարելու շնորհք, ե՛ւ հարուստ կենսափորձ: Հենց այս երկուսի համադրմամբ էլ Ի. Ալավերդյանը էջ առ էջ բնութագրել է Բ. Օվչյանի խաղարվեստը՝ տարբեր հոգեբանության եւ երանգներ պահանջող դերերում: Բ. Օվչյանի դերակատարումների տարեգրությունը, որ կցված է մենագրությանը, բավական է դրվատանքի ամենաջերմ խոսքը հնչեցնել Ի. Ալավերդյանի հասցեին:

Տեղին է ասված, որ պտուղը ծառից հեռու չի ընկնում: Իր վաստակաշատ հոր գործը շարունակելով Կ. Ալավերդյանը կրկին ապացուցում է ժողովրդական խոսքի ճշմարտացիությունը: Վկան գրախոսվող ժողովածուի չորրորդ բաժինը Կարինեի հեղինակությամբ: Այն վերաբերում է մեր բեմարվեստի կարկառուն գործիչներից մեկի՝ Իվան Հովհաննիսյանի (1905-2001) կյանքին եւ գործունեությանը: Մենագրության մուտքում բերված է հետեւյալ բնութագրականը. «Ժողովրդական արտիստ, ռեժիսոր Իվան Հովհաննիսյանը Արցախի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հիմնադիր կազմի դերասաններից է: Մշակույթի այդ օջախի հետ անցել է փառավոր ճանապարհ, դարձել նրա ստեղծագործական թռիչքների ու վայրէջքների վկան, վայելել երջանիկ տարիների ուրախությունը, բազմահազար հանդիսատեսների ջերմ հարգանքն ու սերը: Իր ամբողջ ստեղծագործական կյանքը նվիրելով Արցախի թատրոնին՝ զեղեցիկ, հարուստ ու մնայուն էջեր է արձանագրել նրա տարեգրության մեջ եւ իր պայծառ արվեստով լուսավորել նրա անցած բեղմնավոր ուղին»:

Հենց այդ մնայուն էջերի ու պայծառ արվեստի մասին է հյուսել իր մենագրությունը Կ. Ալավերդյանը: «Կյանքի շեմին», «Սիրված դերասանը», «Բեմադրիչ Իվան Հովհաննիսյանի խոստումնալից մուտքը թատերարվեստ», «Պատմահայրենասիրական պիեսների բեմադրությունները՝ ազգային ոգու պահպանման միջոց», «Դա-

Մական դրամատուրգիան՝ ժամանակի հնչողությամբ», «Կյանքին համընթաց քայլերով» բաժիններում հեղինակը թատերագետի հմտությամբ ստեղծել է Ի. Հովհաննիսյանի բազմաշերտ ու բեղուն գործունեության պատմությունը: Միաժամանակ փայլուն մի շտրիխ է, որ նա մենագրությանը կցել է Ի. Հովհաննիսյանի 76 բեմադրությունների տարեգրությունը:

Իսահակ եւ Կարինե Ալավերդյանների «Բեմարվեստի մեր վարպետները» Ա գիրքը փայլուն մի վկայություն է մեր հարազատ թատրոնի անցած բեղմնավոր ճանապարհի մասին: Այն միաժամանակ մեկ անգամ եւս հիշեցումն է մի ճշմարտության: Մեր ժողովուրդը թատերասեր է, քանզի նրա ոգին իր իսկ հարատեւման ավիշն ու դասն է: Ուստի, անհրաժեշտ է, որ մեր պետական այրերը լուրջ վերաբերմունք ցուցաբերեն մեր թատրոնի հանդեպ: Նրա վերանորոգումը կամ վերակառուցումն օրակարգի հարց պետք է դառնա: Դերասանական կոլեկտիվի համալրումը նոր, երիտասարդ ուժերով պետք է ամհանգստացնի համապատասխան նախարարությանը: Դերասանների նյութական ապահովվածության հիմնախնդիրը լուծելու ժամանակն է:

Համոզված ենք, որ այդ խնդիրները լուծելուց հետո մեր թատրոնը կրկին դառնալու է այն սիրված օջախը, առանց որի դժվար է պատկերացնել քաղաքակիրթ հասարակություն, անհրաժեշտ դաստիարակություն, զեղազիտական հաճույքի բավարարում:

Ինչ վերաբերում է մեր թատրոնի տարեգրության ստեղծմանն ու տպագրությանը, ապա այն մեր օրերի հրամայականն է:

Չմոռանանք, որ մեր թատրոնի պատմությունը եւս մեր ժողովրդի հավերժախոս հարստությունն է:

*«Լուսարար»,
16 հոկտեմբերի, 2007 թ.*

**ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆ Է
(«Բենարվեստի մեր վարպետները», ԳԻՐՔ Բ)**

Հիշողությունը ժողովրդի հարատևման ավիշն է: Առանց հիշողության ե՛լ անհատն է վերածվում մանկուրտի, ե՛լ հանրությունը: Ով պատմություն ունի նա չի կարող հետ չնայել՝ շոշափելու, կրկին հաստատվելու, հարստանալու եւ ճանապարհը շարունակելու միտումով: Հակիրճ ձեւակերպելու դեպքում կարող ենք ընդգծել, որ հայ ժողովրդի մշակույթը մաքառման ու հարատևման փիլիսոփայություն է: Մեր մշակույթը մեր հարազատ ժողովրդի բաժին ճակատագրի գեղարվեստական վավերագրությունն ու ցուցադրումն է եղել, եւ է՛:

Մեր մտորումներն այս անգամ առնչվում են Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի անցած մոտ 80-ամյա ճանապարհին, նրա նկատելի վաստակին, որն արդեն ունի իր կենսագիրները՝ հանձինս նախ անվանի արձակագիր ու թատերագետ Իսահակ Ալավերդյանի եւ ապա նրա դուստր, բանասեր ու թատերագետ Կարինե Ալավերդյանի:

2007 թվականին լույս էր տեսել «Բենարվեստի մեր վարպետները» ժողովածուի Ա գիրքը՝ Ի. Ալավերդյանի եւ Կ. Ալավերդյանի համահեղինակությամբ: Դա լուրջ աշխատություն է, որի էջերից հառնում են ժողովրդական արտիստներ Գ. Հարությունյանը, Ս. Բալասանյանը, Բ. Օվչյանը եւ Ի. Հովհաննիսյանը՝ իրենց հաղթ ուսերին առած այն լուսառաք բեռը, որ խոսում է ոչ միայն նրանց ինքնանվիրումի մասին, այլեւ ընդգծում է մեր թատրոնի վաստակն ու մեծ առաքելությունը ժողովրդի հոգեւոր կյանքում: Կարելու ենք համարում հիշեցնել մեր ընթերցողներին, որ նշյալ գիրքը բարձր է գնահատվել՝ արժանանալով ԼՂՀ կառավարության եղիշեի անվան մրցանակի: Դա արժանի ու թելավորող գնահատական էր: Եվ ահա հրապարակի վրա է «Բենարվեստի մեր վարպետները» Բ գիրքը, որը դիմանկարների խոսուն մի փունջ է հայոց թատերա-

կան արվեստի պատմության մեջ: Ժողովածուի առյուծի բաժինը ստեղծել է Կարինեն, եւ նա ճիշտ է վարվել՝ աշխատության մեջ զետեղելով նաեւ հոր՝ Իսահակ Ալավերդյանի երկու աշխատանքը՝ մեծանուն արվեստագետ, Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնի հիմնադիր Կարո Ալվարյանի եւ վաստակավոր արտիստուհի Օվսաննա Սարգիսբեկյանի մասին:

4. Ալավերդյանի քրտնաջան եւ արդյունավետ աշխատանքը կրկին ու կրկին ապացուցում է, որ համահայկական թատերական իր կյանքին իր մասնակցությունն է ունեցել նաեւ պատմական Մեծ Հայքի Արցախ նահանգը, որն իր խոսքն է ասել հայ մշակույթի հոլովույթի մեջ: Կարինե Ալավերդյանը հորից ժառանգելով հարուստ թատերական արխիվ, շարունակեց նրա գործը՝ ներկայացնելով մեր թատրոնի մշանավոր արվեստագետներին՝ դերասաններին, ռեժիսորներին, բեմանկարիչներին, մարդկանց, ուն կյանքն ու գործունեությունը վաղուց վերածվել է մվիրումի, անձնուրացության եւ բարձր արվեստի ուսանելի դպրոցի:

Չեղինակը բանիմացությամբ է ներկայացնում թատրոնի ավագ եւ միջին սերնդի երկու տասնյակից ավելի ականավոր գործիչների կյանքը եւ բեմական գործունեությունը՝ չկրկնելով ինքն իրեն, պատումներն ստեղծելով կոմպոզիցիոն տարբեր ձևերով: Ընթերցելով նյութերը, մտքի աչքերով ասես տեսնում ես անմոռանալի Մ. Կորգանյանի, Թ. Մելքունյանի, Ս. Միքայելյանի, Ժ. Մովսիսյանի, Ս. Հարությունյանի, Ա. Ղազունյանի, Ս. Համգոյանի, Ռ. Հարությունյանի եւ մյուս երախտավորների խաղը, լսում նրանց ձայնը, որ հնչել է ոչ միայն թատրոնի շենքում, այլեւ Արցախի բոլոր գյուղերում եւ նրա սահմաններից դուրս՝ Կովկասի հայաշատ բնակավայրերում:

Ժողովածուի առավելություններից մեկն էլ այն է, որ հեղինակը ներկայացրել է նաեւ ճանաչված բեմանկարիչներ Ս. Հովհաննիսյանին, Գ. Ծատուրյանին, Ս. Ավետիսյանին:

Գրքում զետեղված է նաեւ «Իսահակ Ալավերդյանը եւ նրա

«Մերնդակիցները» աշխատանքը, որը պատմագրական ու թատերագիտական կարեւոր արժեք է ներկայացնում՝ Արցախի 1930-40-ական թվականների գրական-թատերական կյանքի խմորումներին ծանոթանալու եւ ուսումնասիրելու առումով: Ուշագրավ են նաեւ «Հայ բեմի մեծանուն վարպետների արցախյան հյուրախաղերը (1932-1975 թթ.)», «Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին (1989-1994 թթ.)» ուսումնասիրությունները, որոնք թատրոնի պատմության հայտնաբերելու էջերի վավերագրություններ են:

Չենք կասկածում, որ Կ. Ալավերդյանը շարունակելու է խրախուսանքի արժանի գործը, ներկայացնելու է մեր թատրոնի այն բոլոր գործիչներին, ովքեր, շարունակելով ավագների ավանդույթները, իրենց հոգու լույսն ու ջերմությունն են տվել Ստեփանակերտի թատրոնին՝ վառ պահելով մշակույթի այդ օջախի կրակը, որի հետ հանդիսատեսները դեռ շատ հույսեր են կապում:

*«Ազատ Արցախ»,
3 ապրիլի, 2010 թ.*

ԶՈՐԱՊՈՐՏ ՍԵՃԱՐՈՒՄ Է

(Ալ. Շիրվանզադեի ծննդյան 150-ամյակի առթիվ)

Հայ ժողովրդի հոգեւոր հունձքը միշտ առատ է եղել: Անգամ այն պահերին, երբ նա հզոր ու նենգ բռնապետությունների, ծանր հարվածների պատճառով զրկվել է պետականությունից, հարատեւելու դժվարին ընթացքի մեջ չի նոռացել «Ոչ միայն հացիկ» աստվածաշնչյան իմաստությունը: Եվ արարել է նա ոգու երանգներով, մտքի թռիչքով, սրտի թրթիռներով: Այսպես, ամեն մի դար ծիածանվել է մտքի-սրտի-ոգու եռամիասնությամբ, դարձել մատյան, ասք ու դյուցազներգություն, վիպասանություն ու պիես, շարական ու աղոթք:

Երիցս հպարտանալու եւ թելավորվելու առիթները հուշում են հայոց հանճարի օրինակը որպես դաս ներկայացնել նոր սերնդին եւ ընդգծել մեր ժողովրդի մաքառման ոգին ու հարատեւելու առեղծվածը: Դրա փայլուն վկայություններից է 2008-ի մեծարանքի հաղթարշավը՝ նվիրված աշխարհահռչակ Վիլյամ Սարոյանի, աստվածապատկեր Վազգեն Առաջինի, մեծանուն Վիկտոր Համբարձումյանի ծննդյան 100-ամյա հոբելյաններին եւ հայ վիպագրության ու դրամատուրգիայի հսկա Ալեքսանդր Շիրվանզադեի 150-ամյակին:

Անմահ Շիրվանզադեի հոբելյանին առնչված են այնպիսի իրադարձություններ, որ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել մեր ընթերցողներին՝ որպես անցյալը ներկային կամրջող, գալիքին միտված հոգեւոր մասունքներ:

1908 թվականին Ալ. Շիրվանզադեն դարձավ 50 տարեկան: Այդ կապակցությամբ նրան հեռագրերով ողջունեցին Հ. Թումանյանն ու Վ. Տերյանը, իսկ Բաքվի հայկական դրամատիկական թատրոնից Աբելյան-Արմենյան խումբն այցելեց Կ. Պոլիս եւ Վարիեթեի թատրոնում ներկայացրեց «Պատվի համար» դրաման: Այդ կապակցությամբ նույն խորագրով թատերախոսություն գրեց մեծանուն Գրիգոր Զոհրապը: Հոդվածը տպագրվեց դեռ նոր հիմնադրված «Ժամանակ» թերթում, որի 100-ամյակը եւս նշվում է ընթացիկ տարում: Ուրեմն, լրանում է նաեւ Կ. Պոլսում «Պատվի համար» պիեսի ներկայացման եւ այդ առիթով Գ. Զոհրապի համանուն գրախոսության 100-ամյակը: Դրանք կարելուր փաստեր են մեր մշակույթի պատմության մեջ:

Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի ներկայացումը Կ. Պոլսում՝ ցարական Ռուսաստանի եւ Օսմանյան թուրքիայի հայահալած քաղաքականության պայմաններում թշնամական ուժերին դիմակայելու եւ ազգային դիմագծով գոյատևելու խոսուն արտահայտություն էր, որին չէր կարող չարձագանքել նորավեպի մեծ վարպետը, որ այդ ժամանակաշրջանում ծավալել էր քաղաքական-հասարակական-մշակութային անմասնադատ գործունեություն: Նրա տվյալ թատերախոսությունը սովորական հողված չէ, այն հագեցած է ազգային ոգին բորբոք պահելու, թատերական արվեստը բարձր հիմքերի վրա դնելու, արեւելահայ եւ արեւմտահայ մշակութային գործոնները մերձեցնելու գաղափարներով:

Գ. Ջոհրապին հիացրել էր դրամատիկական փոքր խմբի բարձր արվեստը, որ ցուցադրվել է ներկայացման ընթացքում: Հողվածագիրը նպատակահարմար է գտել նախ ներկայացնել պիեսի գաղափարական բովանդակությունը եւ բնութագրել կերպարները՝ պոլսահայ հասարակությանը Շիրվանզադեի դրամային ծանոթացնելու միտումով: «Պ. Անդրեաս Էլիզբարյան,- գրում է Ջոհրապը, - ջոջ վաճառական է... Դրամապաշտ պուրժուազիի թիւին է ան, մարդկության վախճանը միայն դրամի մեջ փնտրող»: Ապա ընդգծում է, որ այս հոգեբանությունն է հենց Անդրեասին դարձնում կեղծ բարեպաշտ, պարտամուրհակները շահարկող, հափշտակող, ընկերոջը թալանող, ազնիվ զավակին ողբերգության հասցնող տիպ:

Գ. Ջոհրապը ահավոր կերպար է համարում Էլիզբարյանի կնոջ եղբորը՝ Սաղաթելին, որը չարության ու ապերախտության խտացում է: Հողվածում Էլիզբարյանի չորս զավակները նկարագրվում են որպես տարբեր, ընդգծված բնավորությունների տեր անհատներ, որոնք չեն կրկնում իրար: «Բագրատ,- գրում է թատերախոսը,- էմժենիյոր է, դրամական ու նյութական փիլիսոփայությամբ սնած երիտասարդ մին անոնցմէ, որոնք սրտի խղճահարությունները չեն ճանչնար»: Այս դիտարկումից հետո անդրադառնում է Բագրատի քրոջ՝ Ռոզալիայի կերպարին եւ նշում. «Ռոզալիան հարուստի շփացած ու փճացած աղջիկ է... արդուզարդի ունայնությանց եւ իր պատկանած դասակարգին իրավունքները խստությամբ պահպանելու հետամուտ...

Ազգային զգացումն ալ բացակա է իր սրտեն: Օտարացած աղ-

ջիկ»: Նրանց եղբայրը՝ Սուրենը, բնութագրվում է որպես տան անառակ որդի, մսխող, խաղամոլ ու զվարճասեր, սակայն որի «հոգիին մետաղը ազնիվ ու մաքուր է»: «Ասոնց աչքին,- նշում է Ջոհրապը,- պատիվը դրամն է ու ամեն բան ընելու կարող են այս պատվի համար»:

Յողվածում Մարգարիտը բնութագրվում է որպես «սրտի ու մտքի տեր աղջիկ», մռայլ խորհուրդներով ծանրաբեռնված այս տան մեջ միակ լուսավոր դեմքը»:

Ընտանիքի մայրը՝ Երանուհին, համարվում է պարզամիտ ու աստվածավախ կին, որ իր աղվորությանը համար Անդրեասին հետ ամուսնացած է»:

Թատերախոսության առանցքային հարցը վերաբերում է Արտաշես Օթարյանին:

Ջոհրապը «Պատվի համար» պիեսը համարում է հրաշակերտ մի կոթող, որտեղ Շիրվանզադեն լիաբուռն սփռել է ժամանակակից բուրժուազիայի բոլոր տիպերը: Պիեսի կառուցվածքն իր պարզության մեջ համարվում է հոյակապ երևույթ:

Ջոհրապը համաշխարհային թատերագրության համապատկերի վրա դրվատանքի իր խոսքն է ընդգծում Շիրվանզադեի մասին:

Անդրադառնալով ներկայացմանը՝ Ջոհրապն այն համարում է հայտնություն բոլորի համար, նշում, որ «Պաքուի տրամատիք խումբը Շիրվանզադեի հոյակապ գործը նույնքան հոյակապ արվեստագիտական տաղանդով մը ի հանդես բերավ»:

Նա բարձր է գնահատում Աբեյյանի խաղը Անդրեաս Էլիզբարյանի դժվարին դերում, որն անմիջական կատարելությամբ կարողացել է բացահայտել Շիրվանզադեի ստեղծած վաճառականի կերպարի բնավորության բոլոր գծերը, նրա «հոգեկան ազդակները, ընկերական ըմբռնումները, առուտուրի մարդու բարոյականը, խորամանկություններն ու ճարտարությունները»:

Ներկայացման մեջ Մարգարիտի դերը մարմնավորած դերասանուհին պարզապես հրաշալի էր չորրորդ արարվածի մեջ, երբ իր հորն աղաչեց ետ տա գողացված թղթերը:

«Չայրի՛կ, հայրի՛կ» աղաղակը բոլոր սրտերը դրդեց: Ու թուղթերուն կրակի մեջ նետվելով, փճանալու պահուն իր դեմքին զարհուրած արտահայտությունը, իր քարացումը, արձանացումը, կապկպված լեզվին տեղ՝ մեծ-մեծ բացված, գեղեցիկ աչքերուն

Մնայվածքը այն միմիկայի գլուխգործոցներն է, որոնց իրականացումը մեծ տաղանդներու վերապահված է»:

Գ. Ջոհրապը թատերական կոլեկտիվի հաջողությունը կապում է Արմենյանի (Սուրեն), Բիրոյանի (Բագրատ), Ադյանի (Սաղաթել), Ոսկանյանի (Օթարյան), տիկին Պուրժուալյանի (մոդայիկ աղջիկ), տիկին Ջապելի (ավագակ ամուսին ճանկած ջերմեռանդ կին) հմայիչ ու անմիջական դերակատարումների հետ: Ջոհրապը նշում է նաեւ, որ Պետրոս Ադամյանի մահից հետո Պոլիսը նման արվեստով ներկայացում չի տեսել, որ ֆրանսիական թատերախմբերի ցուցադրումներն անգամ այդպիսի տպավորություն չեն թողել հանդիսատեսների վրա այն պատճառով, որ նրանց մեջ մեկ-երկու առաջնակարգ դերասանի շուրջ բոլորված են անհավասար եւ աններդաշնակ կարողություններ: Իսկ Աբեյյան-Արմենյան թատերախմբում բոլորը ներդաշնակ են, միեւնույն արվեստակցությամբ, միեւնույն զարգացմամբ եւ ըմբռնմամբ: «Առանց վերապահության կրնամ հայտարարել,- գրում է Ջոհրապը,- որ այս տրամաթիք խումբը հայոց գեղարվեստական փառքն է»:

Կ. Պոլսում Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար» պիեսի ներկայացումից եւ Գ. Ջոհրապի նույնանուն թատերախոսությունից յոթ տարի անց երիտթուրքերը կազմակերպեցին Հայոց Մեծ եղեռնը Արեւմտյան Հայաստանում՝ հաշվեհարդար տեսնելով նաեւ Պոլսի հայ մտավորականության հետ, որոնց թվում էր նաեւ մեծատաղանդ Գ. Ջոհրապը, իսկ Բաքվում Ադրբեջանի կառավարող շրջանները 1988-1990 թթ. իրականացրին Սումգայիթի ցեղասպանությունը եւ Բաքուն կառուցող հայ բնակչության բռնազաղթը:

Այսօր դժվար է առանց ցավի ու ցասման զգացումի պատկերացնել Պոլիսն ու Բաքուն քաղաքակրթության օրրաններ դարձրած հայերի կրած տառապանքը, նրանց հանդեպ ցուցաբերած դաժանությունը թուրք հրոսակների կողմից: Սակայն կա նախախնամության սահմանած սփոփանքի ապրեցնող ուժը: Ժամանակների փոշին երբեք չի իջնի հայ ժողովրդի տաղանդավոր զավակների ստեղծած հոգեւոր գանձերի վրա, որոնց կենտրոնում հառնում է նաեւ Ալ. Շիրվանզադեն, որի ստեղծագործությունը հմայել է դարաշրջանի մի ուրիշ հանճարի՝ Գ. Ջոհրապին:

*«Ազատ Արցախ»,
18 հոկտեմբերի, 2008 թ.*

ՓԱՌՔ ԷՂՈՒԱՐԴԻՆ ՈՒ ՆՐԱ ԳՈՐԾԻՆ
(Էղուարդ Ղազարյանց)

Յուրաքանչյուր ժողովուրդ ունենում է հայտնություններ՝ ի դեմս իր տաղանդավոր զավակների: Երաժշտության ասպարեզի բոլոր հայ երաժիշտ-արվեստագետների շարքում երևելիներից մեկը Էղուարդ Ղազարյանցն է, որի թողած ժառանգությունը երբեք չի մոռացվելու, որովհետև այն մեր ժողովրդի ոգուց է բխած, որի մեջ խտացված են մեր ազգային ճակատագրի երանգները՝ դառն ու լուսավոր, թախծոտ ու բերկրալից: 1950-60-ական թվականների Բաքվի երաժշտական կյանքում Է. Ղազարյանցը հայտնվեց որպես տիեզերքից իջած ապրեցնող երաժշտական հնչյունների մի աշխարհ:

Է. Ղազարյանցը եկավ Արցախ՝ իր հարազատ մոր գիրկը, լծվեց նրա ազատագրական պայքարին իր երգերով, սիմֆոնիկ երկերով: Հպարտ են, որ նրա «Ռուզան» բալետի լիբրետտոն գրել են ես:

Է. Ղազարյանցը մի հայտնություն էր Արցախի բանաստեղծական աշխարհի համար: Նա ոգեւորված՝ իր մոտ էր հրավիրում պոետներին, խնդրում, որ կարդան իրենց քնարական գործերը, տեղն ու տեղը նստում դաշնամուրի առջեւ, եւ թուպներ անց պատրաստ էր երգը: Այդպես է ստեղծել նաեւ մի շարք մեղեդիներ իմ «Այրող հուշ», «Արցախ», «Մեր գյուղը» եւ այլ բանաստեղծությունների հիման վրա: Գերագույն հաճույք զգացինք միասին, երբ արդեն պատրաստ էին երգերը՝ «Ռուզան» բալետի համար:

Իմ սրտին շատ մոտ է «Մեր գյուղը» երգը, որով այսօր սկսվում են «Արցախի բալիկներ» համույթի համերգները:

Փառք Էղուարդին, նրա անմոռանալի գործին ու հիշատակին:

**ԼՂՀ մշակույթի, երիտասարդության
հարցերի եւ սպորտի նախարարություն:**
Բուկլետ, 2009 թ.

ԿՅԱՆՔ՝ ԲԵՄԻ ՎՐԱ

Գիրք՝ նվիրված ժողովրդական արտիստներ

**Մ. Միքայելյանի եւ Ն. Ասատրյանի բեմական գործունեությանը
ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ**

Տեղին ու ճշմարիտ է ժողովրդական իմաստությունը. «Կյանքը երազ է, երազը՝ կյանք»: Այս օրերին, երբ գիրք է գրվում հորս՝ ժողովրդական արտիստ Մամիկոն Միքայելյանի եւ մորս՝ ժողովրդական արտիստուհի Նվարդ Ասատրյանի մասին, մտքով տեղափոխվում եմ այն տարիները, երբ նրանք ավելի շատ թատրոնում էին լինում, քան՝ տանը: Ուշ երեկոյան, ներկայացումից հետո գալիս էին հոգնած, եւ տունը լցվում էր մեր՝ երեք քույրերիս ուրախության ճիչերով: Ծնողներս քիչ հանգստանալուց հետո քննարկում էին արդեն կայացած ներկայացումը, գնահատում խաղընկերներին, նշում առավելությունները, ընդգծում թերությունները: Եվ հետագա օրերին ցնծում էին, երբ վերացվում էին նկատված բացթողումները եւ արժանանում հանդիսատեսների ջերմ ընդունելությանը:

Ե՛վ հաճելի է ճանաչված դերասանի զավակ լինելը, ե՛ւ դժվար: Հաճելի է այն առումով, որ գտնվում ես թատերական արվեստի անընդմեջ հոլովումների ընթացքում, ծանոթանում ես համաշխարհային եւ հայրենի դասական դրամատուրգների ստեղծագործություններին, ապա դիտում ներկայացումները: Դժվար է այն պատճառով, որ ծնողներդ լինելով դերասաններ, ամբողջությամբ նվիրվում են իրենց գործին, անգիր են անում պիեսներից իրենց տրամադրված մասերը, կրկին ու կրկին անդրադառնում թատերագիտությանը՝ յուրացնելու վարպետների փորձն ու խորհուրդները: Սակայն նշեմ, որ այդ դժվարությունների արդյունքում մեծ գոհունակություն ես ապրում, երբ անվանի դերասանների շարքում նշվում եմ նաեւ ծնողներիդ անունները:

Ես եւ քույրերս երջանիկ ենք համարում մեզ: Կա՞ ավելի գեղեցիկ զգացում, քան այն, որ առնչված է ծնողներիդ 60 տարիների բեմական գործունեությանը, յուրաքանչյուրի 200-ից ավելի դերե-

Պրի մարմնավորման հետ:

Ցանկանում եմ ընդգծել, որ մենք՝ քույրերս, միշտ պաշտել ենք մեր ծնողներին եւ այսօր էլ նրանց համարում ենք մեր վարք ու բարքի անմար ջահերը:

Հայրս մահկանացուն կնքել է 2002 թվականին: Մայրս 83 տարեկան է, որի ուշքն ու միտքը դարձյալ իր ընտրած թատրոնի հետ է: Եվ դա բնական է, չէ՞ որ իր եւ ամուսնու ամբողջ կյանքը անցել է բեմի վրա:

Հիշում եմ հորս 80-ամյա եւ մորս 75-ամյա հոբելյանները, որ նշվեցին 2000 թվականին: Հայրս դիմել էր բանաստեղծ-գրականագետ Սոկրատ Խանյանին (նա 25 տարուց ավելի է, ինչ մեր թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամ է եւ դիտել է բոլոր ներկայացումները), որ իր բեմական գործունեությունը լուսաբանող մի ուսումնասիրություն գրի: Այսօր իմ ու քույրերիս անունից շնորհակալություն ենք հայտնում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Աղալարի Խանյանին, որ ստեղծել է սույն ժողովածուն ծնողներիս մասին՝ համոզված լինելով, որ պատմությանն է հանձնում մեր թատրոնի անհրաժեշտ ու կարելոր էջերից մեկը:

Հասմիկ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

**ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
ԱՐՑԱԽՅԱՆ ԲԵՄԻ ԾԻԾԱՂԻ ԱՐՔԱՆ
(Մամիկոն Միքայելյան)**

2007 թվականին հայ թատերասեր հասարակայնությունը մեծարանքով նշեց Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի 75-ամյա հոբելյանը: Հիրավի, դա համաժողովրդական տոն էր, որ առաջին հերթին առնչված է Արցախի լեռնալանջերին թառած գյուղերի, շրջկենտրոնների եւ Ստեփանակերտ քաղաքի ավելի քան յոթ տասնյակ տարիների հոգեւոր աշխարհին: Եվ ոչ միայն այդ, թատրոնի գործունեությունը ծավալվում էր պատմական Գյուլիստանի (Շահումյանի) շրջանի, Գարդմանաց երկրամասի մի քանի տասնյակ գյուղերի, Կովկասի բազմաթիվ հայաշատ բնակավայրերի հայ ազգաբնակչության մշակութային պահանջներն ապահովելու, գեղագիտական հաճույք պատճառելու առաքելությամբ:

Այսօր, երբ խոսք է բացվում հայոց թատրոնի ավելի քան երկու-հազարամյա անցած ուղու մասին, մենք՝ արցախցիներս, կարող ենք նշել, որ մեր թատրոնը եւս իր նպաստն է բերել հայկական թատերական արվեստի հարստացմանը՝ իր սեփական ձեռագրով: Սակայն թատրոն ասելով, առաջին հերթին պետք է նկատի առնել դերասանական կոլեկտիվի այն աստղաբույլին, առանց որի հնարավոր չէ խոսել ոչ թատրոնի պատմության, ոչ էլ նրա մատուցած ծառայության մասին: Մշակութային մեր այս օջախը սկզբնավորման տարուց (1932) ունեցել է այնպիսի փայլուն դեմքեր, որոնցով կարող է հպարտանալ յուրաքանչյուր հասուն դերասանական կոլեկտիվ: Ավելորդ չէ՝ կրկին նշել նրանց անունները. թատրոնի հիմնադիր Կ. Ալվարյանը, Գ. Հարությունյանը, Մ. Կորգանյանը, Բ. Օվչյանը, Մ. Բալասանյանը, Ս. Համզոյանը, Թ. Մելքունյանը, Ի. Հով-

Պհաննիսյանը, Ն. Հովսեփյանը, Մ. Հարությունյանը եւ ուրիշներ, որոնց լուսառատ շարքը լրացնում էր Մ. Միքայելյանը:

Յուրաքանչյուր թատրոն տաղանդների իր բույլի մեջ ունենում է դերասանական առանձնահատուկ խառնվածք ու նախասիրություն ունեցող անհատներ: Դրանց թվում առանձնանում էր Մ. Միքայելյանը՝ որպես կոմիկ: Նրա 200-ից ավելի մարմնավորած դերերը ինքնատիպ էին, անկրկնելի: Նա դերից-դեր հասունանում էր, կերպարների հոգեկան ինքնաբացահայտման համար գտնում նոր երանգներ, նոր եղանակներ:

Ավելի քան 60 տարի Մ. Միքայելյանը բեմի վրա էր, որ ասել է թե՛ սիրտը մաս առ մաս ընծայել է իր սիրած թատրոնին, հոգու ջերմությունը շող առ շող գումարել հայրենի լեռնաշխարհի բոլոր բնակավայրերի թատերասեր հանդիսականների հոգիներին, ծուլվել նրանց երազանքներին, տեսել ավանդական իր երկրի ազատագրությունը օտար լծից: Նա ճակատը բաց, խիղճը մաքուր, ձեռքը դրել է կրծքին եւ շշնջացել. «Ես քոնն եմ, իմ մայր ժողովուրդ, իմ ամբողջ կարողությունն ու եռանդը նվիրել եմ քեզ, որովհետեւ դու ես դրանք ընծայել ինձ քո սիրո ու փայփայանքի ջերմությամբ»: Եվ սրտաբուխ իր խոսքին պատասխանել է մայր ժողովուրդը. «Դու իմ վաստակաշատ զավակն ես, Մամիկոն, ես հպարտ եմ քեզնով, դու քո ծիծաղի ուժո ոգեւորել ես ինձ, այդ ծիծաղով հաճախ սրբել նաեւ իմ ցաված սրտից բխած արցունքը»: Այսպես մոր եւ որդու զրույցը տեւել է այնքան ժամանակ, մինչեւ զավակը կնքել է իր մահկանացուն 2002 թ. նոյեմբերի 20-ին, սերունդներին թողնելով դերասական արվեստի մեջ իր հյուսած ծիածանը, որպես ավանդույթ, որպես դպրոց:

Տաղանդավոր դերասանի մահվան կապակցությամբ ես իմ ավստասանքի խոսքը ասել եմ բանաստեղծությամբ, որը բերել եմ այստեղ.

ԱՓՈՍԱԼՔ

**ժողովրդական արտիստ Մամիկոն Միքայելյանի
պայծառ հիշատակին**

Այս ի՞նչ արեցիր, Վարպետ Մամիկոն,
Ինչու՞ մոռացար քո դերերը նոր,
Դու շփոթեցիր ժամանակը քո,
Թատրոնը քեզ է սպասում այսօր:

Դու աշխարհ եկար մեծերի զարմից,
Դարձար ծիծաղի մի հզոր վարպետ,
Քո խոսքն ու երգը արվեստի բեմից
Շողշողում էր մեր ժպիտների հետ:

Կես դարից ավել պարգեւել ես մեզ
Մեր սիրտն ու հոգին ջերմացնող ծիծաղ,
Քո ամեն մի դեր զարդարել է քեզ
Ու թեւեր առել ոնց զարնան ծիծառ:

Քո զնգուն խոսքի, երգի թելերը
Լույս էին դառնում մեր կրծքերի տակ՝
Ինչո՞ւ մոռացար քո տեղն ու դերը,
Լաց պարգեւեցիր ծիծաղի տեղակ:

Այս ի՞նչ արեցիր, Վարպետ Մամիկոն,
Քո տեղն ու դերը ինչո՞ւ մոռացար,
Ո՞վ է բռնելու բեմում տեղը քո,
Բեմի քո գահից ինչո՞ւ հեռացար,
Ո՞վ պիտի թելի մեր ծիծաղի հետ,
Այս ի՞նչ արեցիր, սիրելի Վարպետ:

* * *

Դժվարին, բայց պատվաբեր ուղի է անցել Ս. Միքայելյանը: Նա ծնվել է 1920թ. հունվարի 3-ին, Ղարաբաղի Սզնեք գյուղում: Ավարտել է Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցը: Նրան եւս վիճակվել է ոչ միայն տեսնել, այլև սեփական կաշվի վրա զգալ անհատի պաշտամունքի տարիներին ստեղծված հեղձուցիչ քաղաքական մթնոլորտի հարվածները, երբ անարդարացի եւ անիմաստ մե-

Պղաղրվում էին անմեղ մարդիկ, աքսորվում, մահվան դատապարտվում: Այս առումով, նպատակահարմար ենք գտել բերել հենց իր՝ Մ. Միքայելյանի գրած *ինքնակենսագրությունը*, որը լրիվ պատկերացում է տալիս եւ իր կենսագրության, եւ ժամանակաշրջանի էության վերաբերյալ:

* * *

«ԱՍԱ՝ Ո՞Վ ԷՐ ՀԱՅՐԴ» ...70 տարի շարունակ այս հարցն էին տալիս ինձ, եղբորս ու քրոջս, եւ մենք չէինք կարողանում պատասխանել, որովհետեւ՝ քույրս 6 տարեկան էր, եղբայրս՝ 4, իսկ ես՝ երեք ամսական, երբ մեր հայրը 1920 թ-ին Արցախը թուրքական յաթաղանից փրկող հրամանատարներից մեկի՝ Թեւան Ստեփանյանի հետ գնաց Թավրիզ (Իրան): Թե ի՞նչ եղավ այնուհետեւ՝ մեր ընտանիքին հայտնի չէ՝ ոչինչ: Հետաքրքրվել հնարավոր չէր... իսկույնեւեթ կգնդակահարեին ողջ մնացած մեր պապին՝ ջրաղացպան Հայրապետ Տեր Միքայելյանին: Պապս լինելով տերտերի թոռ, գրագետ մարդ էր (միակը գյուղում), հետագայում՝ արծաթագործ ու ոսկերիչ, որով չորս տարի աշխատել էր Իրանում եւ ջրաղաց կառուցել Սզնեք գյուղում, որտեղ իրենց աղունն էին աղում հարեւան Վերին Սզնեք, Սղնախ, Ավետարանոց, Ջրաղացներ, Կարմիր գյուղ, Խաչմաչ գյուղերի բնակիչները:

1933 թ. պապս թողնում է ջրաղացն ու փախչում Բաքու, ազատվելու «կուլակ» կոչվելու չարիքից... Մեր ունեցածն այդ ջրաղացն էր. նույնիսկ կո՛վ չունեինք, ոչ էլ ձի՛ կամ ավանակ: Չմեռվա վառելիքն անտառից շալակով բերում էինք ես ու եղբայրս: Մեր ընտանիքը սովամահ էր լինում արդեն, որովհետեւ չունեինք եկամուտի եւ ոչ մի աղբյուր: Ես եւ մայրս հա՛սկ էինք հավաքում հեռու Ամարասի «Ալի-բալի», «Ղզղայա» արտերում: Եվ դա տեւեց տարիներ.- 1935-37 թվերին: Եղբայրս էլ տեղափոխվեց Բաքու, նրա հետեւից՝ ես: Մայրս ֆուրգոնով հասավ Եվլախ, այնտեղից գնացքով Բաքու: Ես եւ եղբայրս պրոֆտեխուսումնարանում տեղավորվեցինք, որ ուներ հանրակացարան:

Ես չդիմացա՝ ուսումնարանի պայմաններին... Նրա «ուսանողների» մեծ մասը մանկատների սաներից էին: Ծխում էին, խմում,

Պրանակահարում իրար: Այդտեղից էլ փախա: Եղբորս հետ սեւագործ բանվոր էինք «Բիրիհեյբաթ» կոչված ավանում... Մենք կարողացանք մեկ սենյականոց մի խարխուլ բնակարան վարձել, որտեղ մեզ միացավ մեր մայրը: Եղբայրս, որին հեռացրել էին Կիրովաբադի ռազմական ուսումնարանի վերջին կուրսից՝ դաշնակցականի զավակ լինելու պատճառով, կրթված էր, առողջակա՛զմ, աշխատասեր ու ազնիվ, հոգատար՝ մեր հանդեպ: Նա օգնեց շարունակել կրթությունս. ես ընդունվեցի Մ.Ֆ. Ախունդովի անվան թատերական ուսումնարան, որը կարճ ժամանակաընթացքում դարձավ ինստիտուտ: Ես այն ավարտեցի 1941թ-ին: Սկսվեց պատերազմը, բոլորին զորակոչեցին, նաեւ ինձ: Եղբայրս Լենինգրադի՝ ճակատում էր, ես՝ Յուլիսային Կովկասի: Նա այնտեղ ծանր վիրավորվեց, ես՝ Չեչնիայում... Մեր մայրը Բաքվի Վոլոդարսկու անվան ֆաբրիկայում աշխատում էր առավոտից-իրիկուն, կերակրվում եւ քնում այնտեղ... Ինձ բերին Բաքու, վիրավոր էի, այնտեղից էլ ինքս եկա Ստեփանակերտ: Քույրս արդեն ուսուցչուհի էր Կարմիր գյուղում: Դպրոցի ուսմասվարն էր 1942-43թթ.: Մինչեւ այդ ուսուցչուհի էր Սարուշենում եւ Սզնեքում:

Ես տեղավորվեցի Ստեփանակերտի № 2472 հոսպիտալում, երեք ամիս բուժվելուց հետո ստացա փաստաթուղթ այդ բուժման համար եւ կրկին մեկնեցի գործող բանակ, որտեղ մնացի մինչեւ պատերազմի ավարտը:

1945-ին ինձ պահեցին՝ վարժեցնելու նորակոչիկներին. («պատերազմը վերջացած չէր...»): Այդպե՛ս էին բացատրում մեզ... Յետագայում հասկացա դրա իմաստը: Վերջապես, 1946թ. հուլիս ամսում Ավստրիայի Բուխբերգ քաղաքից մեզ տուն ուղարկեցին... Ես վերադառնում էի հաղթանակած, հավատալու՛մ, որ այլեւս չէին հետապնդի ինձ, որպես դաշնակցականի որդու՝ Թեւանի տեղակալ՝ Սզնեքցի «Գրիշայի լակոտի...»: Ես Բուդապեշտի գրավման համար ունեի մեդալ եւ Շնորհավորագիր՝ Ստալինի ստորագրությամբ... Բա՛յց ինձ այլ կերպ դիմավորեցին Ստեփանակերտում... Ամենից առաջ ինձնից պահանջեցին հորս ծննդյան վկայականը, բռնագրավեցին բոլոր իմ պատվոգրերն ու պարգևատրումները,

Մնաեւ իմ «հիվանդության պատմություն» փաստաթուղթը, որը տրված էր № 2472 հոսպիտալի կողմից... Այսպե՛ս, կործանման եզրին էի ընտանիքով հանդերձ... (մայրս, կինս, երեք փոքրիկ աղջիկներս): Ինձ վտարեցին պարտիայի թեկնածուական շարքերից... Բայց ո՞նց ապացուցեի, որ իմ հորը «Գրիշա» է կոչել պապս՝ չհավանելով ծննդականում եւ անձնագրում հաստատված Սողոմոն անունը... Գյուղում էլ բոլորը հորս անունը կարծում էին, թե Գրիշա է եւ ոչ Սողոմոն... Եվ ահա մեր Սզմեքի գյուղսովետի եւ կոլտնտեսության նախագահը, որի անունը չեմ ուզում գրել, տեղեկանք է հղում ՊԱԿ, որ ես թաքցնում եմ հորս անցյալը... Ես այս մասին տեղեկացնում եմ քրոջս ու հորաքրոջս: Նրանք փնտրում եւ գտնում են հորս ծննդականը եւ վստահելի մի անձնավորությամբ ինձ հասցնում այդ փրկիչ փաստաթուղթը... Մի քանի օրից հետո էլ, Լեւոնի գրադից է ՊԱԿ հասնում մի փաստաթուղթ՝ «արխիվի» հեղինակավոր կնիքով հաստատված, այն մասին, որ «Մամիկոն Սողոմոնի Միքայելյանը կռվել է Զյուսիսային Կովկասում, պարզեւատրվել «Արիության համար» երկու մեդալներով, վիրավորվել եւ բուժվել № 2472 հոսպիտալում»: Այս փաստաթուղթն էլ պահպանվում է ինձ մոտ: Նախկինում զայրացած ՊԱԿ-ի գործակալը շնորհավորում է ու մի ապտակ նվիրում (այս անգամ արդեն թեթեւ եւ բարեկամական...) ասելով, «լեզուդ տեղը՝ պահիր եւ ամեն սրիկա ընկերոջ մոտ պատմություններ մի՛ արա...» ու ցույց է տալիս իմ «ընկերների» գրած անստորագիր նամակը, որ՝ իբրեւ ֆրոնտից փախել են, պարզեւները զոհվածների դոշից են հանել եւ այլ կեղտոտ հորինվածքներ...

Զայրս զնացել էր անվերադարձ, որովհետեւ ցարական բանակի սպա էր եւ մեր հարեւան գյուղերում Արցախի պաշտպան Թեւանի հավատարիմ հրամանատարը (կապիտանի կոչում ուներ): Ականատեսների պատմածով հայրս գեղեցկադեմ տղամարդ էր, խիզախ մարտիկ, հավատարիմ իր համոզմունքներին: Նա անզիջում էր թուրքերի հանդեպ. այո՛, կռվել էր նրանց դեմ, որովհետեւ գրագետ մարդ էր եւ տեղակ էր թուրքերի դարավոր հարձակումների՝ հայ ժողովրդի կոտորածների: 1915 թվից ընդամենը հինգ

Մտարի անց 1920 թվին թուրքերը նորից հարձակվում էին մեր գյուղերի վրա: Այդ ժամանակ եկան բոլշևիկ ռուսները, թուրքերի հետ միացած կռվեցին հայերի դեմ: 1992 թվին դարձյալ այդպես չեղա՞վ... (Պոլյանիչկո, Վեզիրով, Սաֆոնով եւ այլ սրիկաներ Գորբաչովի թույլտվությամբ): Այս ամենը՝ ի միջի այլոց... թեպետ՝ պատմությունը կանդրադառնա՝ այս խնդրին...

Փառաբանված սովետական երկրում, ուր «մարդը շնչում էր ազա՞տ»... Սումգայիթում հայ երեխաներին վառում էին գազոջախների վրա... Սակայն ԽՍՀՄ նախագահը 3 օր ահարկու ջարդերից հետո հայտարարում է մարդկությանը, թե ուշացել էր ընդամենը 2-3 ժամով: Ու՞մ էր խաբում Գորբաչովը: Մինչեւ օրս իմ հիշողությունից չի՛ անցնում նրա «անմեղ», «ափսոսանք» ընդունած հայացքը... Այդպես չէ՞ր 1920 թ-ին: Մայրս պատմում էր զայրույթով, որ մի օր բոլշևիկ զինվորները ներխուժել են մեր տուն, կտորել մորս բաժինքի սնդուկը եւ այնտեղից հանել 500 փամփուշտ, մեկ թմբուկով գեղեցիկ ատրճանակ, որը հիշատակն էր հորս հետ թուրքերի դեմ կռված իր հավատարիմ ընկեր ու հրամանատար Արզումանից՝ մահվանից առաջ (կարծեմ Ծուվատեղ գյուղից էր նա):

Ես 1936 թվին 16 տարեկան էի՝ միամիտ, անկեղծ ու չտես մի գյուղացի, որ էլեկտրական լամպ չէր տեսել, Ստեփանակերտն էլ Փարիզից զարմանահրաշ էր: Իսկ գնացք, առաջին անգամ 1937 թ-ին տեսա, երբ տանում էին Բաքու: Կարճ ասած, «Տմբլաչի հաչանը Փարիզում»: Պատմեմ նաեւ, որ ես մեր ներքնահարկի մի հսկայական «ճուվարանի» տակ նկատել էի մի հրացան... Մայրս էր թաքցրել, հորս «Մոսեմ» կոչվող հրացանն էր, որը վաղուց պիտի դեն շպրտեինք... այլապես, եթե նկատվեր բոլշևիկների կողմից Սիբիր պիտի քշեին... Պապս իմանալով այդ մասին մի գիշեր ջարդեց ու շպրտեց ձորը: Մայրս ծածուկ լաց եղավ. նա ընդամենը քսանյոթ տարեկան էր. երկրորդ անգամ չամուսնացավ. պահեց իր որբերին մեծ դժվարությամբ: Շատ ցավալի է, որ քույրս էլ թուրքերի զոհ եղավ. 1991թ-ին, Բաքվից փախավ Հայաստան իր տղաների, հարսերի եւ թոռների հետ, թողնելով թուրքերին իրենց գույքն

ու բնակարանը: Եղբայրս՝ Հայրենական պատերազմի հաշմանդամ, Բաքվի հիվանդանոցում էր, չիմացավ ինչ դեղ սրսկեցին եւ ասացին՝ «զնա Ղարաբաղ, էսա գալիս ենք, այնտեղ կշարունակենք սրսկումները»...

Հայրենական մեծ պատերազմից հետո ես աշխատում էի Բաքվի Հայկական պետական թատրոնում, որ գոյություն ուներ դեռ ցարական կառավարության օրոք, 1870 թվականից: Այդտեղ եմ աշխատել հայ թատրոնի կարկառուն արտիստներ Աբեյյանը, Ջարիֆյանը, Ադամյանը, Սիրանուշը, Ժասմենը, Երամյանը: Դեռ աշխատում էին ժողովրդական արտիստներ Ալեքսանդր Հովհաննիսյանն ու Արզո Արզումանյանը, Խորեն Հարությունյանն ու Սերժ Հայրիյանը, եւ էլի՛ երկու տասնյակ անվանի արտիստներ, որոնք օգնել էին ադրբեջանցիներին ազգային թատրոն ստեղծելու: 1949թ. ազերի դեկավարները փակեցին մեր հայկական պրոֆեսիոնալ թատրոնն ու ձեւակերպեցին, որ այն միաձուլվում է Ստեփանակերտի թատրոնի հետ: Բաքվի հռչակավոր թատրոնի ամբողջ գույքն ու հանդերձարանը տարան Ազիզբեկովի անվան ադրբեջանական թատրոն, Ստեփանակերտ ուղարկեցին փալաս-մլուսներ եւ հնացած կոշիկներ: Մեր թատրոնի հայտնի մի շարք դերասանների Բաքվում տեղավորեցին՝ մեկին որպես պահեստապետ, մյուսին՝ ադմինիստրատոր ֆիլհարմոնիայում, մի երկու հոգի էլ՝ կոշկակարությամբ զբաղվեցին: Շուտով կյանքին հրաժեշտ տվեց Ալ. Հովհաննիսյանը: Խորեն Հարությունյանն ու Նվարդ Սանթրոյանն էլ գլուխները պահում էին մի կերպ:

... Պատմությունը բարդ է եւ երբեմն դաժան...

Սակայն սփոփելին եւ նշանակալիցն այն է, որ այսօր գոյություն ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որի քաղաքացին եմ ես, որով ապրում եւ շնչում եմ ոչ միայն ես, այլեւ իմ մտավորական ընկերները: Ես հպարտ եմ, որ 60 տարի ծառայել եմ մեր թատրոնում, իմ կարողությանը չափ սիրտս ու հոգիս նվիրել մեր մշակույթին, մեր ժողովրդին:

Մարդու անձնական կյանքը հավերժական չէ, մի օր էլ ես հրա-

Ժեշտ կտամ կյանքին: Միայն մի ցանկությամբ կդիմեի ինձնից հետո կյանք մտած մեր շնորհալի երիտասարդներին, որ փայփայեն թատրոնը, չթողնեն, որ նրա լուսարար ջախը մարի, որովհետև առանց թատրոնի հնարավոր չէ պատկերացնել ժողովրդի հոգեւոր հացը, նրա մշակույթը...

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ»:

* * *

2000 թվականին օտարի լծից ազատագրված Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետության թատերսեր հասարակայնությունը մեծ շուքով մշեց ժողովրդական արտիստ Ս. Միքայելյանի ծննդյան 80 եւ բեմական գործունեության 60-ամյա հոբելյանը: Դա դերասանի գործունեությանը նվիրված սովորական միջոցառում չէր, այլ բեմի համար ծնված մի այնպիսի արտիստի, որի շնորհքը դեռևս երիտասարդական տարիներին արժանացել է Մեծն Փափազյանի եւ Աբելյանի խրախուսանքին:

Ս.Միքայելյանը, որպես դերասան, ծեւավորվել է Բաքվի Լ. Երանյանի անվան հայկական դրամատիկական թատրոնում: Հանդիսատեսները ջերմորեն են ընդունել նրա մի շարք դերակատարումներ՝ առանձնապես Սուրենը՝ Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայում, Եզրուշկան՝ Գ. Բորյանի «Բարձունքում» պիեսում:

Ադրբեջանի կառավարող ջրջանների կողմից իրականացվող հայահալած քաղաքականության արդյունքում 1949-ին Բաքվում փակվեց Լ. Երանյանի անվան հայկական դրամատիկական թատրոնը: Ս.Միքայելյանը մի շարք ընկերների հետ մեկտեղ իր ճակատագիրը մկրնդմիշտ կապեց Ստեփանակերտի Մ. Գորկու, այժմ Արցախի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հետ: Եվ դա ճիշտ որոշում էր: Չնայած ժամանակաշրջանի հարուցած որոշակի դժվարություններին, Ս. Միքայելյանը հայրենի հողի վրա, իրեն ծնած ու փայփայած ժողովրդի գրկում կարողացավ լրիվ դրսևորել դերասանի իր կարողությունները եւ դառնալ հայրենի թատրոնի հզոր սյուններից մեկը:

Մ. Միքայելյանի դերասանական շնորհքը աստվածատուր էր: Նա ցանկացած կերպար մարմնավորում էր առանց ավելորդ ճիգ ու ջանքի, բնական, անմիջական խաղով: Նա դեր չէր կատարում, իրեն պատկերացնում էր հենց մարմնավորվող կերպարի հոգեվիճակով, նրա ներաշխարհով: Այդ ունակությունը հնարավորություն էր տալիս նրան մարմնավորել ոչ միայն կատակերգական, այլև խարակտերային դերեր՝ խոր ապրումներով: Վերլուծելով ֆրանսիական դրամատուրգ Մարկ-ժիլբեր Սուվաժոնի «Գիշերային իրարանցում» ներկայացումը (բեմադրություն Ա. Հովսեփյանի), որտեղ Հայր-Վարեսկոյի կերպարը մարմնավորել է Մ. Միքայելյանը, բանաստեղծ-գրականագետ Վ. Հակոբյանը գրել է. «Բեմական արտահայտիչ կերպար է ստեղծել Մամիկոն Միքայելյանը, որը բազմիցս թատերասերներին ուրախացրել է դերերի վարպետ կատարումներով: Այս անգամ նրա խաղացած կատակերգության մեջ դժվար չէր ողբերգականության շեշտեր որսալ: Նման դեպքերում բանաստեղծը կասեր՝ «Կատակերգակ տեսքով ողբերգություն է խաղում»: Շնորհաշատ դերասանը դրանով իսկ ակնհայտեց այն ճշմարտությունը, որ հավասարապես եւ՛ իր օգտին է խոսում, եւ՛ հանդիսատեսի»:

Մ. Միքայելյանը միշտ իր սեփական խաղի կնիքն էր դնում դերի վրա եւ ապահովում անհատականության պահանջը: Նա խաղի սեփական ձեռագրով էր ստեղծում բեմական իր կենսագրությունը: Այս առումով Մ. Միքայելյանը կանգնում է մեր թատրոնի բեմարվեստի մեծերի կողքին: Ի դեպ, Մ. Միքայելյանը հավասարապես էր օգտվում եւ ցուցադրում թե խոսքի եւ թե՛ դրության կոմիզմի հնարավորություններից: Արցախի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի ոսկե ֆոնդի խոսուն էջերից են անվանի արտիստի մարմնավորած կերպարները:

Այստեղ բերում ենք Մամիկոն Միքայելյանի դերակատարումների ոչ լրիվ ցանկը, որ ինքնին խոսում է տաղանդավոր արտիստի եւ՛ վաստակի, եւ՛ համաշխարհային դրամատուրգիայում իրեն դրսևորելու բազմաշերտ կարողության մասին:

Դերը	Պիեսը	Ղեկիմակը
Անդրո	«Անդրո եւ Սանդրո»	Խուզան
Յուսով	«Եկամտաբեր պաշտոն»	Օստրովսկի
Սերոբ	«Բնակարանամուտ»	Ժ. Անանյան
Մարգար	«Աշխարհն, այո, շուռ է եկել»	Ա. Պապայան
Սուրեն	«Պատվի համար»	Ալ. Շիրվանզադե
Տարոն	«Գնա մեռիր, արի սիրեմ»	Ա. Պապայան
Ավտոլիկոս	«Ձմեռային հեքիաթ»	Շեքսպիր
Գնդապետ	«Էլի մեկ զոհ»	Գ. Սունդուկյան
Պրոխոր	«Վասսա ժելեզնովա»	Մ. Գորկի
Պետո	«Պըլը-Պուղի»	Վ. Օվյան
Փաղշահ	«Մարդն ու նամարդը»	Իլովայսկի
Շոշիա	«Մեղադրական եզրակացություն»	Ն. Դումբաձե
Կնյազ	«Սերը ճամպրուկի մեջ»	Ժ. Անանյան
Կակուլի	«Պեպո»	Գ. Սունդուկյան
Պերչիխին	«Քաղքենիներ»	Մ. Գորկի
Կրյաժ	«Ծիածան»	Ն. Ջարուդնի
Աշուղ	«Լավարի որսը»	Վ. Միրաքյան
Իսայի	«Խաթաբալա»	Գ. Սունդուկյան
Արմեն	«Կամրջի վրա»	Գ. Բորյան
Բարգոս	«Սամվել»	Րաֆֆի
Լիստիկով	«Յոդմերի քաղաքը»	Կիրշոն
Արտիստ	«Յատակում»	Մ. Գորկի
Միլորդ	«Ինչպես կառավարել կնոջը»	Ֆլետչեր
Լապչենկո	«Իրկուտսկյան պատմություն»	Արբուզով
Գզիր	«Արշալույսին»	Ա. Գուլսկյան
Ժորկա	«Մայրիկ»	Սունարկովա
Շնավոն	«Արտի արատ»	Ժ. Յարությունյան
Լուկաշին	«Բաղնիքդ անուշ»	Ոյազանով
Կնյազ	«Տաքսի-տաքսի»	Ժ. Անանյան
Սոկրատ	«Յավերժական սիրո գաղտնիքը»	Գ. Սարգսյան
Սերոբ	«Իմ տունը քո տունը չէ»	Ժ. Անանյան
Ջիմի	«Ստախոս կինը»	Պսաֆաս
Բուդաղ	«Այրվող պատիվ»	Աբ. Դանիելյան
Պուղի	«Արցախյան բալլադ»	Վ. Յակոբյան
Յայր-Վարեսկո	«Գիշերային իրարանցում»	Մարկ-Ժիլբեր Սովաժոն
Շոֆեր Ծատուր	«Յողի լեզուն»	Բ. Ուլուբաբյան, Ի. Ալավերդյան
Արշակ-Պարթեւ	«Ա՛խ, ներվեր, ներվեր»	Գ. Տեր-Գրիգորյան

Նրանք, ովքեր դիտել են Մ. Միքայելյանի դերակատարումները, չեն կարող մոռանալ բեմի վրա ծիծաղ հարուցող նրա դիմախաղը, ազատ-անկաշկանդ եւ բնական խաղառճը, անհրաժեշտության դեպքում նրա նվագն ու երգը, խաղընկերներին բարդ իրավիճակներից հանելու եւ հունի մեջ բերելու ճկունությունը, հանդիսատեսի հոգեկան աշխարհը թափանցելու նրա հմտությունը եւ այլն եւ այլն:

* * *

Մ. Միքայելյանի դերակատարումները միշտ եղել են թատերագետների, գրողների, արվեստաբանների եւ լրագրողների ուշադրության կենտրոնում: 1982 թ. լայնորեն նշվել է Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնի 50-ամյակը: Այդ առիթով մի խումբ դերասաններ արժանացել են բարձր կոչումների: Մ. Միքայելյանը արժանացել է հանրապետության Ժողովրդական արտիստի պատվավոր կոչման: Այդ երեւոյթը չի վրիպել գրող-իրապարակախոս Մ. Հովհաննիսյանի ուշադրությունից: «Կոմունիստ» հանրապետական թերթի 1983 թ. հունվարի 8-ի համարում տպագրվել է նրա «Վաստակ եւ ճանաչում» հոդվածը՝ նվիրված Մ. Միքայելյանի անցած դերասանական ուղուն եւ նրա տաղանդի գնահատմանը: Անվանի գրողը նկատի առնելով ժողովրդական արտիստի աստվածային առինքնող շնորհքը, ընդգծել է. «Կոմեդիա խաղալու համար անվերապահ լրջություն է պետք, կոմեդիական կերպարը պետք է չափազանց լուրջ խաղալ: Ստանիսլավսկու կանոն դարձած այս պահանջը լավ է յուրացրել արտիստը եւ հենց դրա շնորհիվ է նա կարողանում առավելագույն արդյունքի հասնել: Նա բեմ է ելնում միանգամայն լուրջ, անտեղյակ ու անգիտակ, որ իր հերոսը զավեշտական վիճակում է, ավելին, նրա հերոսը մինչեւ վերջ համոզված է, որ այդ վիճակում ոչ մի ծիծաղելի բան չկա: Եվ դերասանը ինչքան լրջորեն է կատարում իր դերը, այնքան ուժեղանում է դահլիճում ծնունդ առնող ծիծաղը, որը հաճախ դառնում է համընդհանուր... Անշուշտ, դրան հասնելու համար դերասանը պետք է բնությունից օժտված լինի, իսկ Մ. Մի-

Քայելյանը, իրոք, օժտված դերասան է, բայց երեւի շնորհքն ու օժտվածությունը քիչ են դրա համար: Դերասանը պետք է նաեւ տիրապետի ինքնադրսեւորման արվեստին: Մ. Միքայելյանը այսօր մեր թատրոնի անվիճելի առաջատարներից է»:

Մեր թատրոնը իր խաղացանկի մեջ մշտապես ունեցել է նախկին ԽՍՀՄ հանրապետությունների եւ համաշխարհային դրամատուրգների հաջողված պիեսները: Այդ առումով խորախուսելի քայլ է համարվել ուկրաինացի դրամատուրգ Ն. Ջարուդնիի «Ծիածան» պիեսի բեմադրությունը: Գրող-թատերագետ Ի. Ալավերդյանը գնահատելով ներկայացումը, Մ. Միքայելյանի մասին գրել է. «Բավականին բարդ եւ հակասական կերպար է Անտոն Կոյաժը, ներկայացման կենտրոնական դեմքը, հիմնական կոնֆլիկտ սնողն ու կրողը: Բեմավիճակներն այնպես են կառուցված, որ Կոյաժը միշտ տեսարանի կենտրոնում է, գործողության տնօրինողի վիճակում:

Արտիստ Մամիկոն Միքայելյանը ստեղծել է դրամատիզմով հագեցված, ազնիվ բռնկման ընդունակ բավականին հետաքրքիր մի կերպար: Նրա Կոյաժը ինքնահավան է, ինքնավստահ: Խռով է նրա հոգին, բայց նահանջի տեղ ունի... Արտիստը ստեղծել է զարգացող, շարժուն կերպար...»:

Արձակագիր-թատերագետ Ի. Ալավերդյանը, որ երկար տարիներ ղեկավարել է թատրոնի գրական-գեղարվեստական բաժինը եւ ուշի-ուշով հետեւել է կոլեկտիվի բեմական ձեռքբերումներին, մեկ անգամ չի հանդես եկել նոր ներկայացումների եւ առաջատար ուժերի, այդ թվում եւ Մ. Միքայելյանի գնահատմամբ: Այս առումով բնութագրական է նրա «Ծիծաղը կյանքի էլիքսիրն է» հոդվածը՝ տպագրված «Սովետական Ղարաբաղ» թերթի 1977 թ. ապրիլի 16-ի համարում: Գնահատելով անվանի դերասանի ինքնատիպ, բնական խաղաոճը, թատերագետը նշում է. «Հատուկ հոգ չտանելով արտաքին, ցցուն դերապատկեր ստեղծելու համար, Միքայելյանը թեթեւ ու հաճելի խաղաձեւերով անձնավորում է ցանկացածո կերպարը՝ բնական, ճշմարիտ, հավաստի»:

Ի. Ալավերդյանը կարելուրում է արտիստի անցած դպրոցը՝ նրա ձեւավորման առնչությամբ, ընդգծում Կ. Ալվարյանի, Ա. Մայիլյանի, Ժասմենի, Ա. Յովսեփյանի դերը Միքայելյանի առաջ թատե-

արավեստի գաղտնիքները բարձր մակարդակով բացելու ուղղությամբ: Եվ հաճելին այն է, որ Միքայելյանը ըմբռնել է մեծերի արվեստի գաղտնիքները եւ դարձել վարպետ:

«Բազմաթիվ մեծ ու փոքր դերեր է խաղացել Միքայելյանը մեր թատրոնի բեմում,- գրում է Ի. Ալավերդյանը,- եւ նրա դերակատարումները միշտ էլ աչքի են ընկել հմայող պարզությամբ, հավաստիությամբ, յուրօրինակ խաղաոճով: Արտիստը ստեղծել է մի շարք բեմական կերպարներ, որոնք խոշոր տառերով են արձանագրված մեր թատրոնի տարեգրության մեջ, ըստ պատշաճին արժեքավորված, գնահատված մամուլում՝ թատերարվեստի բազմափորձ արվեստագետների կողմից եւ վերջապես խոր դրոշմված նրա արվեստի բազմահազար երկրպագուների հիշողության մեջ»:

Ի. Ալավերդյանը արտիստի կենսագրության պայծառ էջերից է համարում այն երեւոյթը, որ նա եղել է Վ. Փափազյանի խաղընկերը «Կորրադո» ներկայացման մեջ եւ Իսայի՝ «Խաթաբալա» կատակերգությունում՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ավետ Ավետիսյանի հետ, եւ բեմի այդ երկու հսկաներն էլ գոհ են մնացել նրա խաղից:

Ի. Ալավերդյանը լինելով խստապահանջ եւ հետեւողական թատերագետ, տարիների ընթացքում եղել է Մ. Միքայելյանի հետեւողական գնահատողը: Վերլուծելով Գ. Սարգսյանի «Յավերժական սիրո գաղտնիքը» ներկայացումը, որտեղ դեր ուներ նաեւ Մ. Միքայելյանը, Ալավերդյանը գրել է. «Շնորհալի կատակերգու Մ. Միքայելյանի Սոկրատը կոմիկական թանձր մտվածք ունի: ... Միքայելյանը կաշառում է իր անկաշկանդ ու հավաստի խաղով, համոզիչ մեկնաբանությամբ ու վարակիչ կոմիզմով»: Իսկ Գ. Բալայանի «Մայրը մնում է մայր» ներկայացման առթիվ ընգծել է. «Մ. Միքայելյանը խարակտերային արտիստի թանձր գույներով է անձնավորել շրջկոպի նախագահ Վաչագան Կարպիչի կերպարը: ... Վաչագանի դերակատարումը շնորհալի արտիստի եւ ներկայացման անմոռանալի հաջողությունն է»:

Մեր թատրոնը մեկ անգամ չի անդրադարձել Արամաշոտ Պապայանի պիեսներին: Թատրոնը երկրորդ անգամ բեմ է հանել նրա «Աշխարհն, այո, շուռ է եկել» կատակերգությունը: Ներկայացման

Մնասին դրվատանքի խոսք է տպագրել բանաստեղծ Վ. Հակոբյանը: Նա Մ. Միքայելյանի դերակատարման առթիվ ընդգծել է. «Վարպետ Մարգարի դերը մարմնավորում է... Մ. Միքայելյանը: Կերպարի բեմական զարգացումն ընթանում է դինամիկ: ... Մարգարի կերպարում Մ. Միքայելյանը ամբողջականացրել է աշխատանքի մարդու բոլոր լավագույն հատկանիշները, ընտանիքի հոր ու հասարակության ակտիվ անդամի վեհ բարեմասնությունները:

Այս կերպարին մի առանձին հմայք են տալիս հունորի խոր զգացումը, կենսախիճի լինելն ու պարզությունը»:

«Ծիծաղի վարպետը» խորագիրը կրող հոդվածում գրող Վագեն Օվյանը սրտաբուխ իր խոսքն է ասել արդեն համաժողովրդական սիրուն արժանացած դերասանի մասին. «Մամիկոն Միքայելյանը այն արտիստներից է, որոնք ունեն իրենց նախասիրությունները, իրենց անձնական մոտեցումը այս կամ այն գործի նկատմամբ, իրենց սեփական խոսքը եւ ցանկացած դերի վրա դնում են իրենց անհատականության կնիքը»: Իր այս դիտարկումը հաստատելու համար թատերախոսը մատնացույց է անում նրա մարմնավորած Կակուլին («Պեպո»), Ավտոլիկոսը («Ձմեռային հեքիաթ»), Միլոդը («Ինչպես կառավարել կնոջը»), Արմենը («Կամուրջի վրա»), Ֆերեկիսը («Պահանջվում է ստախոս») եւ այլն: Վ. Օվյանը իր խոսքը համեմուծ է թատրոնի զեղարվեստական ղեկավար Հովհաննես Կարապետյանի գնահատականով. «Մամիկոն Միքայելյանը այն կատակերգուներից է, որոնք իրենց խաղով կարող են պատիվ բերել ուզածդ թատրոնին: Նրա խաղը համոզիչ է, հումորը՝ դիպուկ, ծիծաղը՝ կենսուրախ»:

Մ. Միքայելյանի դերակատարումներն ամենուրեք անցել են հաջողությամբ, որոնց վերաբերյալ իրենց դրվատանքի խոսքն են ասել անվանի գրողներ Մ. Դավթյանը («Երբ առկա է կարողությունը»), Մ. Հարությունյանը («Սերը ճամպուրակի մեջ»), Գ. Գաբրիելյանը («Վաստակաշատ դերասանը»), («Սեր հավերժական ու մշտաբարբառ Պըլը-Պուղին»), Բ. Հովակիմյանը («Գեղեցիկ սիրով»), Է. Պետրոսյանը («Հատակումը» Ստեփանակերտի Մ. Գորկու անվան թատրոնում), գրականագետ Ժ. Անդրյանը («Լավվարի որսը») եւ ուրիշներ:

Ս. Գորկու «Չատակում» պիեսի ներկայացման մասին իր ծավալուն հոդվածում է. Պետրոսյանը ընդգծել է. «Ստեղծագործական լուրջ հաջողություն է Ս. Միքայելյանի մարմնավորած Արտիստը: Միքայելյանը լավ է հասկացել դերի հոգեբանական խնդիրները: Առաջին գործողությունից մինչև ներկայացման ֆինալը նա հանդիսատեսի ուշադրությունը իր վրա է պահում: Իսկ չորրորդ գործողությունում վառարանի վրա նստած նրա լուռ խաղը արժանի է առանձին դրվատանքի»:

«Սերը ճամպուրակի մեջ» ներկայացման մասին գրած նույնանուն հոդվածում անվանի բանաստեղծ Միքայել Չարությունյանը հիացմունքով է խոսել Ս. Միքայելյան-Կնյազի մասին, ընդգծելով. «Դերասան Մամիկոն Միքայելյանն իր «տարերքի» մեջ է, եւ սակայն նրա մոտ, «տարերային» ոչինչ չկա, մշակված է յուրաքանչյուր խոսքը, շարժումը, նույնիսկ երբ նա ոչինչ չի ասում, հանդիսատեսը լսում է նրան, որովհետեւ տեսնում է իսկական մարդուն, հավատում նրա վարպետ խաղամիջոցներով մատուցված «չափազանցություններին»»:

Իսկ անվանի բանաստեղծ Գ. Գաբրիելյանը իր «Վաստակաշատ դերասանը» հոդվածում նկատել է. «Ճշմարտության առաջ մեղանչած կլինենք, եթե չասենք, որ նա բարձր է նաեւ որպես մարդ: Նրա անշահախնդիր ու համբերատար օգնությունը դեռ երկար կհիշեն մարզի ինքնագործ խմբերում: Քանի՜-քանի՜ պիեսներ է բեմադրել, քանի՜-քանի՜ ինքնուս դերասանների օժանդակել իր բարի խորհուրդներով»:

Ս. Միքայելյանի վարպետ դերակատարումների մասին գրված հոդվածներն ու կարծիքները կարող են մի ամբողջական հատոր կազմել: Մենք հավատում ենք, որ ապագա թատերագետները մեկ անգամ չեն անդրադառնալու տաղանդաշատ այդ դերասանի գործունեությանը, որը հայոց թատրոնի պատմության ոսկե էջերից է:

Վ. Փափագյանի անվան պետդրամթատրոնի տնօրեն, արձակագիր Կոմիտաս Դանիելյանը նշում է. «Մամիկոն Միքայելյանը մեր թատրոնի ամենաերեւելի, ամենաբեղուն, ամենասիրված դերասաններից մեկն էր, ում յուրահատուկ ձեւով էր ընդունում հանդիսատեսը: Նրա գունեղ, առինքնող, հունդրաշաղախ խաղը չէր

կարող անտարբեր թողնել ամենախիստ հանդիսատեսին անգամ: Նա իրավամբ համարվում է արցախյան 75-ամյա բեմի չգերազանցված կատակերգակ դերասանը»:

Խոսուն ու վառ վկայություն է ժողովրդական արտիստ Քաջիկ Չարությունյանի խոսքը իր երկար տարիների խաղընկերոջ մասին. «Մամիկոն Միքայելյանը անհանգիստ հոգու տեր, շատ աշխատասեր դերասան էր: Աստվածային էր նրա արտիստական շնորքը: Մ. Միքայելյանը եւ Ս. Չամգոյանը մի հաճելի դուետ էին կազմել: Երբ թատրոնի կոլեկտիվը լինում էր գյուղերում, հանդիսատեսները հարցնում էին. «Մամիկոնն ու Սուրենը հանդէ՞ս են գալու ներկայացման մեջ: Եթե՝ այո, ուրեմն բավականություն ենք ստանալու»»:

Մամիկոնը անզուգական էր բեմի վրա: Նա հնարավորություն էր տալիս խաղընկերոջը, որ լրիվ մտնի բեմի մեջ եւ լրիվ բացահայտի իր արտիստական կարողությունները:

Մեկ էլ մեր թատերաբեմը ե՞րբ կունենա Մ. Միքայելյանի նման արտիստ, դժվարանում են ասել: Բայց շատ է ցանկալի, որովհետեւ նման դերասաններն են ստեղծում անհրաժեշտ ու կարող կոլեկտիվ:

**ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ
ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԱՐՏԻՍՏՈՒՋԻՆ
(ՆՎԱՐԴ ԱՍԱՏՐՅԱՆ)**

Չայ բեմը արտիստուհիների աստղաբույլի երկնականարի է նման: Սիրանուշից մինչև Վարդուհի Վարդերեսյան մի անթառամ ծաղկեփունջ է, և ինչպե՞ս չհպարտանալ նրանցով: Իսկ երբ խոսք է բացվում Արցախի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի մասին, ու երբ թերթվում են նրա պատմության էջերը, ազգային հպարտության զգացումով մեջբերվում են նշանավոր դերասանուհիներ Թամարա Մելքունյանի, Նինա Չովսեփյանի, Թագուհի Սահակյանի, Արուս Ղազումյանի, Օվսաննա Սարգիսբեկյանի, Շուշիկ Գրիգորյանի, Ասյա Սիմոնյանի, Մարգո Բալա-

Մասնյանի անունները: Սիրով այսօր ընդգծվում է նաև ժողովրդական արտիստուհիներ Նվարդ Ասատրյանի, ժաննա Գալստյանի, վաստակավոր արտիստուհիներ Սվետլանա Թովմասյանի, Արեգա Պետրոսյանի բեմական գործունեությունը, որ բարձր է գնահատվում և՛ կառավարության, և հանդիսատեսի կողմից:

Նվարդ Ասատրյանի ծառայությունը իրավունք է տալիս մի պահ ետ նայել, ստուգել արտիստուհու անցած ճանապարհը, համոզվել և դրվատանքի ու երախտիքի խոսք ասել նրա անցկացրած անքուն գիշերների, ընկերական շրջապատում ու ռեժիսորների հետ ունեցած մասնագիտական վեճերի, ոգևորությունների, բեմական ձեռքբերումների մասին: Ամենախիստ վերաբերմունք ցուցաբերելու դեպքում էլ գոհության ժպիտն է թառում շուրթերիդ, պարզ տեսնում ես պատվաբեր մի ուղի, քրտնաթոր աշխատանքով նվաճված ինքնատիպ ու գեղեցիկ մի վաստակ: Ավելի քան 60 տարի ծառայել բեմին և երբեք չհոգնել, երբեք չկորցնել սեփական ոճը, խենթ ու փոթորկուն մրցումների մեջ ստեղծել սեփական դիմանկարը, սա քչերին է տրված:

Սերը դեպի թատրոնը Նվարդ Ղազարի Ասատրյանի մեջ արյան կանչ է եղել՝ աշակերտական երազանքի և ձգտումի հետ շաղախված, մայրական կաթի հետ երակներին անցած եռք: Եվ բախտը նրան տանելով թատերական միջավայր, աշխատասիրության շնորհիվ այդ սերը դարձել է կերպարների մարմնավորման արվեստ ու քաղցր տառապանք:

Ոչ ոք իրավունք չունի ետ չնայել: Երախտագիտությամբ ետ նայելը ներկային ամուր հենվելու և հավատով գալիքին ծառայելու հիմնական աղբյուրն է: Այսօր Նվարդ Ասատրյանը հարգանքի ու ափսոսանքի, կարոտի ու հպարտության զգացումով է հիշում Բաքվի Լ. Երամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի անվանի դերասաններ Յովսեփ Ոսկանյանին, Նվարդ Սանթրյանին, Ժիրայր Ավետիսյանին, Արտաշես Յովհաննիսյանին, Կարո Ավարյանին, որոնք առաջինը նկատեցին նրա շնորհքը և օրհնեցին դերասանուհու ճանապարհը՝ չսխալվելով դրանում:

Ն. Ասատրյանը ծնվել է 1925թ. մայիսի 25-ին, Հայոց պատմական Նախիջևեանի Շահբուզի շրջանի Կունայրի գյուղում: Հորից զրկվելով փոքր հասակում նա տեղափոխվում է Բաքու՝ բարեկամների մոտ, հաճախում քաղաքի Հ. Թումանյանի անվան օրիորդաց դպրոց եւ հաջողությամբ ավարտում այն: Սերը թատրոնի հանդես նրան տանում է դեպի բեմարվեստի աշխարհ: Նա սովորում է Բաքվի թատերական ուսումնարանում, ապա քաղաքի հայկական թատրոնին կից գործող ստուդիայում: Հետագայում կյանքը, բեմական գործունեությունը, նվիրումի եռանդը հղկեցին նրան, բյուրեղացրին և մասսայական տեսարաններում երևացող տազնապած աղջնակը դարձավ հանրապետության ժողովրդական արտիստուհի Նվարդ Ասատրյան: Դերասանական մկրտությունը ստանալով Բաքվի հայկական թատրոնում, Ժասմենի և Ալեքսանդր Հովհաննիսյանի խորհրդով 1949 թ. Նվարդը գալիս է Ստեփանակերտ, Մ. Գորկու անվան թատրոն, այն օջախը, որի պողից տաքացավ, ջատագովը դարձավ, և որի կրակը բորբոքուն պահողն ու օրինական տիրուհիներից մեկն է այսօր: Նա հարյուրավոր դերեր է մարմնավորել: Եթե հոգու և մտքի աչքերով դիտենք նրա մարմնավորած կերպարների շքերթը, կտեսնենք, որ արտիստուհին բազմիցս տնտղել է իր սիրտը, ինքն իրենից դժգոհել, ինքն իրենով հիացել, եղել է նաև, որ ընդունել է խստապահանջ ընկերների դիտողությունները, արդյունքում արժանացել հանդիսատեսների բուռն ծափահարություններին ու սրտաբուխ ժպիտներին:

Նվիրվելով իր մասնագիտությանը, միաժամանակ չբավարարվելով ձեռքբերումներով, արտիստուհին միշտ ձգտել է կատարելության: Իսկ նրա կատարելիությունը սերտորեն առնչված է Արցախի թատրոնի պատմության հետ: Ով դիտել է Շիրվանզադեի «Նամուսը», չի կարող մոռանալ Նվարդ Ասատրյան-Մարթային, ով տեսել է «Չար ոգին», նա միշտ կհիշի Ջավահիրին: Ու՞մ չի հուզել Նվարդ-Նատոն (Սունդուկյան, «Էլի մեկ գոհ»), Ռոզիտան (Բաուչի-ձե, «Բակում չար շուն կա»), Նաստյան (Մ. Գորկի «Հատակում»), Գեղանուշը (Գ. Տեր-Գրիգորյան, «Վերջին մեխակները»), Վերգինեն (Շիրվանզադե, «Արմենուհի»), Արուս Նանը (Հ. Մաթևոսյան, «Աշնան արև»), Ռոզ (Ժ. Անանյան, «Տաքսի, տաքսի»), Սոֆիկ (Ա. Պապայան, «Գնա մեռիր, արի սիրեմ»), Պոլինա (Շեքսպիր, «Ձմեռային հեքիաթ») և այլն: Հնարավոր չէ մեկ առ մեկ թվարկել Ն.

Ասատրյանի մարմնավորած բոլոր դերերը: Վաթսուն տարիների նրա վաստակը շափաղում է իր մարմնավորած կերպարների շարքի մեջ: Դա պատվով ուսած, սրտով հյուսված, ժողովրդաբույր ու հաստատուն բեռ է, խղճի ու ինքնահաստատումի վկայություն:

Որպես մեր թատրոնի ջերմ բարեկամ ու հանդիսատես, ես Ն. Ասատրյանի խաղը դիտել եմ մոտ 60 տարի առաջ... Հաղործի շրջանի Աղբուլաղ (այժմ Ակնաղբյուր) գյուղում ներկայացումներով հաճախակի հանդես էր գալիս թատրոնի կոլեկտիվը: Հիշում եմ, ամառային մի ուշ երեկո, մեր յոթամյա դպրոցի սրահում ներկայացվեց Ջ. Ջաբարլու «Թառամած ծաղիկներ» պիեսը: Ն. Ասատրյանը խաղում էր Փերիի դերում: Ընդհանրության մեջ ողբերգական շտրիխներ ունեցող այդ ներկայացումը անջնջելի տպավորություն թողեց հանդիսատեսների վրա: Արտիստուհին բոլորին հմայեց իր անմիջական, բնական խաղով: Հետագայում տեսա նրա Նադյան («Բաղնիքի անուշ»), բախտ ունեցա դիտել մեր թատրոնի կենսագրության մեջ պայծառ էջ հանդիսացող «Չմեռային հեքիաթը»: Հանճարեղ Շեքսպիրի այդ ողբերգությունում Ն. Ասատրյանը հանդես եկավ Պոլիմայի դերում: Այս և մյուս կերպարներով նա իրեն ներկայացրեց որպես բազմաժանր խարակտերային դերասանուհի:

Մոտ երկու հարյուր մեծ ու պատասխանատու, փոքր ու էպիզոդիկ դերեր՝ հյուրախաղային կարևոր ներկայացումներում, հեռավոր գյուղերում, զարդարում են վաստակաշատ արտիստուհու կենսագրությունը: Նա չի դավաճանել իր մասնագիտությանը, ընթացել է՝ միշտ երազելով բարձունքներ, ինքն իրեն ժխտող ու հաստատող, միշտ նոր դերակատարումների ծարավ:

Ռեալիստական հավաստի գույներով, նախանձելի եռանդով դերասանուհին միշտ ասել է իր խոսքը:

Ն. Ասատրյանը նաև թատրոնի սերնդափոխության հանդեպ ունեցել է սրտացավ վերաբերմունք, դերասանական հարուստ փորձով հիանալի օրինակ հանդիսացել երիտասարդության համար: Նա իր հոգու անսպառ կրակները նվիրումով ցանել է հանդիսատեսների սրտերում, ջերմացնելով նրանց հոգիները, ծառայելով գեղեցիկին ու բարուն: Իսկ ով ծառայում է գեղեցիկին, ապրում է գեղեցկության հավերժական աշխարհում:

Երջանիկ դերասանուհի է Նվարդ Ասատրյանը: Ընտանիք կազմելով տաղանդավոր դերասան Մամիկոն Միքայելյանի հետ, նա կյանքը անց է կացրել թատերական արվեստի հնոցում թե՛ բեմում եւ թե՛ տանը: Նրանց նվիրումը ընտանիքում շողարծակվել է ոչ միայն երեք հիանալի դուստրերի՝ Յասմիկի, Արմինեի, Արեգայի հանդեպ, այլեւ ստեղծագործական արդյունավետ վեճերում ու խորհուրդներում: Մեր թատրոնի հանդիսատեսները գեղագիտական կրկնակի հաճույք էին ստանում, երբ միեւնույն ներկայացման մեջ հանդես էին գալիս ամուսիններ Նվարդն ու Մամիկոնը: Այսպես, վառ տպավորություն են թողել «Բաղնիքը անուշ» ներկայացման մեջ Նվարդ-Նադյան եւ Մամիկոն-Լուկաշինը, ապա «Տաքսի-տաքսի»-ում Նվարդ-Ռոզը եւ Մամիկոն-Կնյազը, «Հավերժական սիրո գաղտնիքը» ներկայացման մեջ Մարիի կերպարը մարմնավորել է Նվարդը, իսկ Սոկրատի դերը՝ Մամիկոնը: Նվարդ-Նուշիկի եւ Մամիկոն-Սերոբի դերակատարումները հիանալիորեն լրացնում էին միմյանց: Հանդիսատեսների հիշողության մեջ երկար ժամանակ վառ են մնացել Նվարդ-Կետին եւ Մամիկոն-Ջիմին («Ստախոս կին»), Նվարդ-Ռոզալիան, Մամիկոն-Սուրենը («Պատվի համար»), Նվարդ-Ստեֆանյան, Մամիկոն-Միլորդը («Ինչպես կառավարել կնոջը») ներկայացումներում: Նման միասին կայացած դերակատարումների շարքը կարելի է ավելացնել: Այս փաստը խոսում է երկակի հաճելի երանգի մասին. առաջինը նրանց հայկական-նահապետական ամուր ու ազնիվ ընտանեկան սիրո եւ ապա որպես դերասաններ՝ մեկը մյուսին ոգեւորելու ու հղկելու առումներով: Բերենք մի քանի կարծիք Ն. Ասատրյանի դերակատարումների մասին.

«Սամվել» ներկայացման մեջ Նվարդ Ասատրյանի մարմնավորած Նվարդի կերպարը երկար ժամանակ է ապրելու հանդիսատեսների հիշողության մեջ»- գրել է բանաստեղծ Աբրահամ Բախշունին «Կիրովաբադի կոմունիստ» թերթում:

Գրող-թատերագետ Ի. Ալավերդյանը «Սովետական Ղարաբաղ» թերթի տարբեր համարներում նշել է. ««Բնակարանամուտ» ներկայացման մեջ Նվարդ Ասատրյանի Նուշիկը կենսախիճն է, համարձակ, շատ գործունյա, ակտիվ»:

«Մեր թատրոնի կողմից ներկայացվեց Գ. Սարգսյանի «Հա-

Վերժական սիրո գաղտնիքը» պիեսը: Մարիի դերը կատարեց Ն. Ասատրյանը: Կոմեդիական առումով հետաքրքիր կերպար է ստեղծել Ն. Ասատրյանը: Հատկապես հաջող է արտիստուհու խաղը ներկայացման առաջին մասում, երբ սիրախաղերի դասեր է տալիս Արմենուհուն: Նա հմուտ ռեժիսորի պես միզանսցեններ է հորինում ընկերուհու համար, որպեսզի խանդ բորբոքի նրա ամուսնու մեջ»:

«Մայրը մնում է մայր» ներկայացման մեջ Ն. Ասատրյանը երիտասարդ Հռիփսիմեի դերը կատարում է ամբողջ հոգով, հավասարակշռված, կենդանի ու զուներդ»:

Ուշագրավ է բանաստեղծ-գրականագետ Վ. Հակոբյանի կարծիքը «Սովետական Ղարաբաղ» թերթում.

«Արամաշոտ Պապայանի «Գնա մեռիր, արի սիրեն» պիեսի ներկայացման մեջ Նվարդ Ասատրյանը մարմնավորեց Սոֆիկի դերը: Նվարդ-Սոֆիկը ոչ միայն այս ներկայացման մեջ, այլև ընդհանրապես մեր բեմի վրա կերտված լավագույն կերպարներից մեկն է: Ինչպիսի բարեհոգություն, խնամք է ցուցաբերում Սաթիկը ամուրի մնացած հարեւանի հանդեպ: Եվ այստեղ է, որ Ն. Ասատրյանը իր համոզիչ, հյութեղ խաղով ընդգծում է Տարոնի հոգու բարեմասնությունները: Ասատրյանը ստեղծել է բեմական հարուստ կերպար»:

Լրագրող Վ. Հիթչյանը «Սովետական Ղարաբաղ» թերթում ընդգծել է.

«Ախ, ներվեր, ներվեր» ներկայացման մեջ Արշակ Պարթևի կնոջ՝ ուսուցչուհի Անյայի դերը կատարում էր դերասանուհի Նվարդ Ասատրյանը: Շնորհալի էր Ասատրյան-Անյան, նրա ամբողջ էությունը շնչում էր խելացիությամբ, լրջությամբ եւ ողջախոսությամբ: Նվարդ Ասատրյանը կարողացավ բեմում մարմնավորել ոչ միայն շրջահայաց կնոջն ու դաստիարակին, այլև հոգատար ընկերոջն ու սիրասուն մորը»:

Ն. Ասատրյանի դերակատարումը հուզել է բանաստեղծ Մ. Հարությունյանին: Նա «Սովետական Ղարաբաղ» թերթում նշել է.

«Ժ. Անանյանի «Սերը ճամպուրկի մեջ» պիեսը ներկայացվեց Մ. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնում: Վաստակաշատ դերասանուհի Նվարդ Ասատրյանը Կնյազի կնոջ՝ Ռոզի դերում նորից արժանացավ հանդիսատեսի ջերմ համակրանքին: Նրա Ռոզը կենսասեր է, հպարտացող մայր, բայց եւ հաջողություններից շլացած պճրուհի, հախուռն է Նվարդի-Ռոզը, կոմիկական

Վզույներով հարուստ»:

Շնորհաշատ դերասանուհու արվեստը արժանացել է բանասեր Մ. Առաքելյանի դրական կարծիքին: «Սովետական Ղարաբաղ» թերթում ընթերցում ենք նրա խոսքը. «Քաոսը» Ստեփանակերտի թատրոնում... Ուշագրավ է Մարութխանյանի կինը՝ Մարկոս Աղայի դուստր Մարթան, որի դերը կատարում է Ն. Ասատրյանը: Մարթան Մարութխանյանի բոլոր ստոր ու մութ գործերում նրա գաղափարակիցն է եւ նույնիսկ ավելին: Հոր կտակից չափազանց դժգոհ Մարթան ձգտում է ստոր ուղիներով ձեռք բերել հայրական իր բաժին ժառանգությունը: Ծնողական, ազգակցական կապերը նրա համար մինչեւ այն ժամանակ գոյություն ունեն, քանի դեռ սեփական շահերը չեն ոտնահարվել: Բնավորության այդ գծերը համոզիչ են դարձնում Մարթայի կերպարը»:

Ն. Ասատրյանը եւ Մ. Միքայելյանը 1993 թ. հանդես են եկել Էջմիածնի Շառլ Ազնաուրի անվան դրամատիկական թատրոնի կոլեկտիվի հետ՝ Ժ. Անանյանի «Կարուսել» կատակերգության ներկայացման մեջ: «Հայաստանի Հանրապետություն» թերթում այդ առթիվ հանդես է եկել թատերագետ Էդ. Շահիրյանը: Նա մասամբ ընդգծել է. «Քաղաքի Շառլ Ազնաուրի անվան դրամատիկական թատրոնում առաջին բեմելն անցան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդական արտիստներ, ամուսիններ Նվարդ Ասատրյանը եւ Մամիկոն Միքայելյանը:

Տարիների վաստակ ունեցող, հանդիսատեսի ջերմ սերն ու համակրանքը իրենց ինքնաբուխ տաղանդով վաղուց նվաճած բեմի վարպետները այս անգամ հանդես եկան ժիրայր Անանյանի «Կարուսել» կատակերգության ներկայացման մեջ:

Գլխավոր հերոսի դերը անձնավորում էր Մ. Միքայելյանը, որի անբռնազբոս, բնական դերակատարումը գեղագիտական մեծ հաճույք պատճառեց թատերասերներին եւ երկար կմնա նրանց հիշողության մեջ: Արժանի խաղընկեր էր Ն. Ասատրյանը, որը շատ բանով նպաստեց ներկայացման հաջողությանը»:

* * *

Ն. Ասատրյանի եւ Մ. Միքայելյանի համատեղ կյանքը թե ընտանիքում եւ թե՛ բեմում, չի վրիպել թատերասեր հասարակայնության ուշադրությունից: Այսպես. 2000թ. հուլիսի 21-ը իմաստավորվեց

Քայլ դերասաններին նվիրված հոբելյանական երեկոյով, որը տեղի ունեցավ Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի դահլիճում: Միջոցառմանը ներկա էին թատերասերների, մտավորականների, հասարակության տարբեր խավերի 400-ից ավելի ներկայացուցիչներ, որոնք եկել էին իրենց սիրո ու հարգանքի տուրքը մատուցելու ճանաչված ու սիրված ժողովրդական արտիստներին՝ Մ. Միքայելյանին եւ Ն. Ասատրյանին: ԼՂՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության մշակույթի վարչության պետ Վլ. Միքայելյանի բացման խոսքից հետո հանդես եկան թատերագետներ, գրողներ, դերասաններ, հանդիսատեսներ: Նրանց խոսքի մեջ առաջին հերթին ընդգծվում էին Մ. Միքայելյանի ծննդյան 80 եւ Ն. Ասատրյանի՝ 75-ամյա իմաստնալից կյանքը եւ նրանց համատեղ բեմական գործունեության 60-ամյակը: Հոբելյարներին շնորհավորելու համար Հայաստանից Արցախ էին ժամանել մի խումբ պատվավոր հյուրեր: Նրանցից թատերագետ Բ. Հովակիմյանը խոսելով հոբելյարների կյանքի եւ բեմական գործունեության մասին, ընդգծել է, որ թատրոնի պատմության մեջ տաղանդավոր արտիստական զույգեր եղել են, բայց Նվարդ Ասատրյանը եւ Մամիկոն Միքայելյանը եզակի զույգեր են, որ վեց տասնամյակ շարունակ խաղացել են կողք-կողքի, ծառայել նույն թատրոնին, նույն գործին:

Երեկոյի ընթացքում հոբելյարներին իրենց ողջույնի խոսքում մեծարեցին ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի փոխնախարար Կարեն Արիստակեսյանը, նախարարության արվեստի վարչության պետ Ռազմիկ Աբրահամյանը, ապա նախարարության անունից պատվոգիր եւ հուշանվեր հանձնվեցին հոբելյարներին: Ընթերցվեց նաեւ նախարար Ռուլանդ Շառոյանի ուղերձը:

«Հարգելի Մամիկոն Սողոմոնի.

Սիրելի Նվարդ Ղազարի.

Ձեր 60-ամյա ստեղծագործական գործունեությունն անքակտելիորեն կապված է Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի հետ, որի պատմության հուշամատյանում գրանցվել են յուրօրինակ եւ ինքնատիպ էջեր:

Դուք բախտ եք ունեցել ապրելու եւ ստեղծագործելու ավագ սերնդի մեծամեծ վարպետների՝ Վ. Փափազյանի, Հր. Ներսիսյանի,

ՄԱ. Ավետիսյանի հետ, ստեղծելու կերպարներ, որոնք իրենց ուրույն տեղն ունեն թատերասեր հասարակայնության հիշողության մեջ:

Դերասանի համար երդում չի գրվում եւ երբեւէ չէք երգվել բարձրածայն, բայց Ձեր սիրով ու անմնացորդ նվիրումով դեպ հանդիսատեսը՝ սրբորեն պահպանել եք թատրոնում ստեղծված ու թրծված բոլոր գրված ու չգրված օրենքները՝ ժպտալ, երբ հոգում թախիծ է ու տրտմություն, թախծել՝ երբ հոգում ցնծություն է:

Ձեր հանդիսատեսի սիրուն ու համակրանքին ի տրիտուր՝ արարման եռանդ Ձեզ:

Մաղթում եմ Ձեզ նորանոր հաջողություններ Ձեր բարեշնորհ ծառայության մեջ»:

Հոբեյարներին իրենց ելույթներում մեծարեցին նաեւ Երեւանի «Մետրո» թատրոնի տնօրեն, ռեժիսոր Նիկոլայ Ծատրյանը, Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար, տնօրեն Լեոնիդ Հարությունյանը, ԼԴՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար Արմեն Սարգսյանը: ՀՀ թատերական գործիչների միության նախարարի տեղակալ Հայկազ Երանոսյանը ողջունեց հոբեյարներին, ապա միության անունից հանձնեց թանկարժեք նվեր: Երեկոյին ելույթ ունեցա նաեւ ես՝ խոսքիս վերջում ներկայացնելով իմ հետեւյալ բանաստեղծությունը.

ԿՅԱՆՔԸ ԲԵՄ Է ՈՒ ԲԵՍԸ ԿՅԱՆՔ

Մի Նվարդ է, մի Մամիկոն,
 Մի Մամիկոն ու մի Նվարդ,
 Ե՞րբ էր՝ Նվարդն ինչպես կոկոն,
 Մամիկոնը՝ ձիգ ու հպարտ:
 Բեմում՝ պայքար, տանը՝ համբույր,
 Տանը՝ խաղաղ, բեմում՝ կռիվ,
 Տանը հաշտ ու հեզահամբույր,
 Բեմում խենթ ու հուզախռիվ:
 Բեմում խանդոտ՝ բաժան-բաժան,
 Տանը՝ մանկանց բարի ծնող,
 Բեմում հաճախ չար ու դաժան,

Կյանքում սիրտ ու հոգի սնող:
Այդպես՝ կյանքը բեմ էր նրանց,
Բեմը կյանք էր՝ միշտ հուսավառ,
Տարիների հոսքը անանց
Ուղեկցում է ոնց հուշարար,
Մի հուշարար՝ միշտ ժպտադեմ,
Հուշերի մեջ խոսքը զվարթ,
Բեմը կյանք է ու կյանքը բեմ,
Մի Մամիկոն ու մի Նվարդ:

21.07.2000թ.

Ինչպես ընդունված է՝ երեկոյի վերջում իրենց խոսքն ասացին հոբելյարները, որոնց արարող կյանքը անցել է հենց այդ բեմի վրա, որոնք գնահատվել են որպես թատրոնի «պահապան հրեշտակներ» եւ որոնց հանդեպ հանդիսատեսների անհուն սերն ու համակրանքը խորհրդանշվեց բուրունմավետ ծաղկեփնջերով ու ողջագուրունքներով:

Իսկ կա՞ ավելի թանկ նվեր դերասանի համար, քան հանդիսատեսի հոգեբուխ ողջագուրանքն ու ծափողջույններն են: Երեւի՝ ոչ:

Մ. Միքայելյանի ու Ն. Ասատրյանի հոբելյանական երեկոն այդ անփոխարինելի ընծայի վկայություններից էր:

*ք. Ստեփանակերտ
2008 թ.*

ՀԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԲԱՔՎՈՒՄ
(1960-1966 թթ.)

ԳՈՐԾԱՐԱՆԻ ԲԵՄԻ ՎՐԱ

Դանդաղ բացվում է Լեյտենանտ Շմիդտի անվան մեքենաշինական գործարանի մշակույթի պալատի բեմի վարագույրը: Հանդիսատեսները բուռն ծափահարություններով են դիմավորում աշխատանքի իրենց ընկերներին, որոնք գործարանային բեմի վրա հունվարի 15-ին ներկայացրին Արշավիր Դարբնու «Երբ բացվում է մանուշակը» պիեսը:

Հանդիսատեսների աչքերի առաջ ծավալվում են նախասովետական հայ գյուղում տեղի ունեցող դեպքերը, գյուղացիների միասնական պայքարը հանուն ազատ, լուսավոր կյանքի: Եվ գյուղացիների պայքարը պսակվում է հաջողությամբ: Սակայն ովքե՞ր են դերակատարները: Պրոֆեսիոնալ արտիստնե՞ր են: Ոչ: Նրանք գործարանի բանվորներ են:

1930 թվականից գործում է Բաքվի Լ. Շմիդտի անվան մեքենաշինական գործարանի հայկական դրամատիկական խմբակը: Գործարանի տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ են մասնակցել նրան, բեմի վրա դրսեւորել իրենց շնորհքն ու դերասանական կարողությունները:

«Երբ բացվում է մանուշակը» պիեսի գլխավոր՝ Արամի դերում հանդես եկավ մեխանիկական ցեխի խառատ Ռ. Աղաբեկյանը: Նա արտադրության առաջավոր է: Յոթնամյակի առաջին տարին եզրափակել է լավագույն ցուցանիշներով, իսկ երկրորդ տարվա առաջին իսկ օրերից արտադրական առաջադրանքները կատարում է 150-200 տոկոսով: Եվ ահա նա իր ունակությունները դրսեւորում է նաեւ դրամատիկական ինքնագործ խմբակում:

Ներկայացման սկզբից մինչեւ վերջ հիացմունք պատճառեցին Աթա ապերը, Ջառի մանը, նրանց զավակներ Ռսկանը եւ մարալը: Աթա ապոր դերը կատարեց բանվոր Ա. Բաղդասարյանը: Նրան գործարանում բոլորը ճանաչում են որպես առաջավոր աշխատող: Նա բազմիցս հանդես է եկել խմբակի ներկայա-

ցումներում եւ իր լավ խաղով նվաճել բանվորների հարգանքը: Այս անգամ էլ նրա խաղն արժանացավ հանդիսատեսների ջերմ ընդունելությանը:

Բաքվի № 2 կոշկի ֆաբրիկայի բանվորուհի Թ. Սուսայեյանը հաջողությամբ կատարեց Ձառի նանի դերը:

Գործարանի ինքնագործ խմբակի հիմնադրման առաջին օրից նրա աշխատանքներին մասնակցում է մեխանիկական ցեխի խառատ Ի. Սաֆարյանը, որը «Երբ բացվում է մանուշակը» ներկայացմանը հանդես եկավ ռուս-ճապոնական պատերազմին մասնակցած, մի ձեռքը ռազմաճակատում կորցրած Ոսկանի դերում: Նրա կերտած Ոսկանը համարձակ է, աշխատասեր, ազնիվ քաղաքացի:

Վերգոյի դերում իրեն դրսեւորեց մեքենավար Ա. Եոյանը՝ գործարանի առաջավոր բանվորներից մեկը:

Գործարանային դրամատիկական խմբակում մի շարք բանվորներ մասնակցում են իրենց ընտանիքների հետ միասին: Բանվոր Ա. Գրիգորյանը կատարեց խմբապետ Ղազարի դերը, իսկ նրա կինը՝ Ա. Գրիգորյանը հիանալի խաղաց Մարալի դերում: Փականագործ Ժ. Աղաբաբյանի (Շամիր) հետ գործարանի բեմի վրա հանդես են գալիս իր կինը՝ Ս. Գալոյանը (օրիորդ Դրախտիկ) եւ քույրը՝ Լ. Աղաբաբյանը (Մայիս):

Աշուղ Շիրինի դերում հանդես եկավ նավթագործ Լ. Շահնագարյանը:

Ներկայացման ժամանակ իրենց դերերը հաջող կատարեցին Վ. Մելքունյանը (Ալեքսեյ), դարբին Շ. Խաչատրյանը (Իվան), խառատներ Շ. Ասրյանը (Աշոտ), Ռ. Ղազարյանը (Վարոս), Ռ. Մելքունյանը (Արուս), Բ. Մելքունյանը (տանուտեր), Մ. Ալթունյանը (սպա), Ս. Սեւունյանը (Մուկուչ):

«Երբ բացվում է մանուշակը» պիեսը բեմադրության է պատրաստել դերասան Ա. Աղաբեկյանը, որը 11 տարի է, ինչ ղեկավարում է գործարանի դրամատիկական խմբակը:

Ներկայացումն անցավ հաջողությամբ:

«Կոմունիստ»,
1960 թ.

ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԵՐԳՉՈՒՅԻՆ
*(Տաթեիկ Սազանդարյանի բեմական գործունեության
 25-ամյակի առթիվ)*

Ավելի քան քսան օր է, ինչ Բաքվում գաստրոլային ներկայացումներով հանդես է գալիս Երեւանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի կոլեկտիվը, իսկ Երեւանում՝ Ադրբեջանի Մ. Ֆ. Ախունդովի անվան օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնը:

Երեւանի օպերայի եւ բալետի թատրոնի կոլեկտիվի հետ ահա քանիներորդ անգամն է, ինչ Բաքվում ելույթներ է ունենում ՍՍՌՍ ժողովրդական արտիստուհի Տաթեիկ Տիգրանի Սազանդարյանը, որի բեմական գործունեության 25-ամյակը լրացավ այս օրերին:

Իր ստեղծագործական բեղմնավոր աշխատանքի 25-ամյակի կապակցությամբ արտիստուհին այսօր հանդես կգա ֆրանսիական անմահ կոմպոզիտոր Բիզեի «Կարմեն» օպերայում Կարմենի դերում:

Չեռաքրքիր ու բազմաբովանդակ կյանքի ուղի է անցել Տաթեիկ Սազանդարյանը: Նա ծնվել է 1916 թվականին Չայաստանի Խնծորեսկ գյուղում: 1920 թվականին Սազանդարյանների ընտանիքը տեղափոխվում է Բաքու:

Դեռեւս մանուկ հասակից դրսեւորվում է Տաթեիկ Սազանդարյանի երաժշտական հիանալի ունակությունը: Շուտով նա հաճախում է երաժշտական դպրոց: Չայտնի կոմպոզիտոր Անտոն Մայիլյանը ունկնդրելով Տաթեիկին, նրան ընդունում է իր գլխավորած դպրոցական երգեցիկ խումբը, որտեղ նա կատարում է հայկական եւ եվրոպական կոմպոզիտորների երգեր:

1929 թվականին Տաթեիկը տեղափոխվում է Մոսկվա, այստեղ ավարտում միջնակարգ դպրոցը: Նա մեծ սիրով մասնակցում է ինքնագործունեության խմբակներին, իր վրա հրավիրելով մայրաքաղաքի երաժշտասեր հասարակության եւ անվանի կոմպոզի-

Մտորների ուշադրությունը:

1933 թվականին երգչուհին գալիս է Երեւան, ընդունվում երաժշտական ստուդիա եւ միաժամանակ սովորում դրամատիկական ստուդիայում:

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի դուները Տաթևիկ Սազանդարյանի առջեւ լայնորեն բացվեցին 1937 թվականին: Սկսվեց արվեստի բարձունքներին տիրապետելու նոր, դժվարին ճանապարհը: Առաջին դերը, որ կատարեց Սազանդարյանը,- դա Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայում Գայանեն էր: Այնուհետեւ նրան հանձնարարեցին Ալմաստի բարդ դերը: 1939 թվականին Մոսկվայում, հայկական արվեստի եւ գրականության առաջին տասնօրյակի ժամանակ, արտիստուհին փայլեց Ալմաստի` դրամատիզմով հագեցած ողբերգական կերպարով:

Անցնում են տարիներ: Գնալով ավելի մշանակալից են դառնում Սազանդարյանի տեղն ու դերը սովետահայ օպերային արվեստի զարգացման գործում: Սակայն Սազանդարյանը միայն ազգային օպերայի շրջանակներով չի սահմանափակվում: Սազանդարյանը (մեցցո սոպրանո) հայ բեմում մարմնավորում է ռուսական եւ արեւմտաեվրոպական կլասիկայի, ինչպես նաեւ սովետական օպերային գրականության վարպետորեն վերարտադրված մի շարք կերպարներ. Ալմաստ (Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ»), Փառանձեն (Ա. Չուխաջյանի «Արշակ Երկրորդ»), Թամար (Ա. Տիգրանյանի «Դավիթ բեկ»), Շուշան (Ա. Բաբաեւի «Արծվաբերդ»), Երգչուհի (Ուզ. Հաջիբեկովի «Քյոռ օղլի»), Կարմեն (Բիզեի «Կարմեն»), Ամներիս (Վերդիի «Աիդա»), Լյուբաշա (Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն»), Ուլյանա Գրոմովա (Յու. Մեյթուսի «Երիտասարդ զվարդիա») եւ այլն:

Տ. Սազանդարյանը սովետահայ ազգային դպրոցի ժամանակակից երգչական մշակույթի բարձր մակարդակով մուտք է գործում սովետական օպերային թատրոն, հարստացնում այն իր ստեղծած կերպարների յուրահատուկ մեկնաբանություններով:

Տ. Սազանդարյանի համար սիրելի բնագավառ է նաեւ կամերային երգեցողությունը: Բավական է նշել, որ նրա երգացանկում ներկայացված է հայ, ռուս, արեւմտաեվրոպական եւ արեւելյան կոմպոզիտորների ավելի քան երեք հարյուր երգ:

Տաղանդավոր երգչուհին համերգներով հանդես է եկել Սովետական Միության բազմաթիվ քաղաքներում, ինչպես նաեւ աշխարհի մի շարք երկրներում: Նրան հիացնունքով ունկնդրել են Չեխոսլովակիայում, Հունաստանում, Իրանում, Սիրիայում, Լիբանանում եւ մամուլում բարձր գնահատել նրա կատարողական ինքնատիպ արվեստը:

Տաթևիկ Սազանդարյանը տաղանդավոր երգչուհի լինելուց բացի հասարակական գործիչ է: Բարձր գնահատելով Տ. Սազանդարյանի հայրենանվեր գործունեությունը, 1958 թվականին Հայաստանի Կոտայքի շրջանի աշխատավորները նրան ընտրեցին ՍՍՄ Գերագույն Սովետի դեպուտատ:

Տաթևիկ Սազանդարյանը լիարյուն ստեղծագործական աշխատանքով է ապրում: Թող նրա շրթերին միշտ կարկաչի եղբայրության, երջանկության, խաղաղության երգը, որն այնքան հուզում է ունկնդիրներին:

*«Կոմունիստ»,
3 հունիսի, 1962թ.*

ՄԵԾ ՀԱՄԵՐԳ

Բաքվում հաջողությամբ շարունակվում են Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի հայկական պետական ակադեմիական թատրոնի գաստրոլային ներկայացումները: Բաքվեցիները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում թանկագին հյուրերի յուրաքանչյուր ելույթի նկատմամբ:

Մայիսի 28-ին Մ. Ֆ. Ախունդովի անվան օպերայի եւ բալետի թատրոնի շենքում տեղի ունեցավ մեծ համերգ՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի լավագույն ուժերի մասնակցությամբ:

Համերգի ծրագրի մեջ մտցված էին հայկական, ադրբեջանական, ռուսական, ինչպես նաեւ եվրոպական կոմպոզիտորների երգեր եւ հատվածներ օպերաներից ու բալետներից:

Համերգի առաջին բաժինը բացվեց Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից քայլերգով, որը կատարեց թատրոնի նվագախումբը:

Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Ա. Պետրոսյանը փայլուն կերպով կատարեց Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից՝ աշուղի եւ Ուզ. Հաջիբեկովի «Քյոռ օղլի» օպերայից՝ Քյոռ օղլու արիաները: Տաղանդավոր արտիստը ունկնդիրներին հմայեց երկու ժողովուրդների երաժշտության այդ հոյակապ նմուշներով:

Հանդիսատեսների բուռն ծափահարություններին արժանացավ Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստուհի Ա. Թութունջյանը, որը հայտնի է որպես Անուշի լավագույն դերակատարներից մեկը: Լավ տպավորություն գործեց նաեւ Ջ. Պուլչինիի «Չիո-Չիո-Սան» օպերայից նրա կատարած արիան:

Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստ է. Բաղդասարյանը հանդես եկավ Պ. Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայից Լենսկու արիայի կատարմամբ: Երիտասարդ արտիստը դրսեւորեց կատարողական բարձր տեխնիկա: Բոլոր ռեգիստրներում նրա ձայնը

ինչում էր մաքուր եւ ուժեղ: Ունկնդիրների պահանջով ծրագրից դուրս նա կատարեց Ջ. Վերդիի «Ռիգոլետտո» օպերայից Յերցոգի արիան:

Օպերայի մենակատարներ Ա. Կարապետյանը եւ Մ. Թերզյանը ցույց տվին Պ. Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայի վերջին պատկերը: Երկու արտիստներն էլ արժանացան ունկնդիրների ջերմ ընդունելությանը:

Երիտասարդ բալերինա Բ. Յովնանյանը ճկունությամբ եւ նազանքով, նուրբ ու պլաստիկ շարժումներով ու խոր ապրումներով կատարեց Գ. Եղիազարյանի «Արեւելյան պարը»:

Բեմի վրա են բալետի արտիստուհիներ Լ. Մարտիրոսյանը, Ն. Ուսյանը, Դ. Ալեքսանյանը եւ Ռ. Կարապետյանը: Նրանք հանդես եկան Պ. Չայկովսկու «Կարապի լիճը» բալետից փոքրիկ կարապների պարով:

Յամերգի առաջին բաժինը եզրափակվեց Պ. Չայկովսկու «Կարապի լիճը» բալետից իսպանական պարով, որը հաջողությամբ կատարեցին Յայկական ՍՍՌ վաստակավոր արտիստներ Վ. Խանամիրյանը, Վ. Բորիսովը, արտիստուհիներ Բ. Յովնանյանն ու Գ. Մարգարյանը:

Յամերգի երկրորդ բաժինը սկսվեց Յայկական ՍՍՌ վաստակավոր արտիստուհի Լ. Լազարեվայի հետ Յայկական ՍՍՌ վաստակավոր արտիստ Մ. Երկաթի կատարած Ջ. Վերդիի «Ռիգոլետտո» օպերայից դուետով: Այստեղ եւս դրսևւորվեց Մ. Երկաթի հնչեղ ձայնի եւ կատարողական արվեստի ամբողջ հմայքը:

Ուշադրության արժանացավ Յայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Նար Յովհաննիսյանը, որն ունի սքանչելի թավ, ուժեղ ձայն: Նա Ա. Տիգրանյանի «Դավիթ-բեկ» օպերայից Դավիթ-բեկի արիայով հաճույք պատճառեց ունկնդիրներին:

Բուռն ծափահարությունների տակ բեմ է դուրս գալիս ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի, Պետական մրցանակի լաուրեատ Տ. Սազանդարյանը: Նա կատարում է Ա. Տիգրանյանի «Դավիթ-բեկ»

Օպերայից Թամարի արյան: Տաղանդավոր արտիստուհին հիանալի հնչեղությամբ, մաքուր եւ հստակ ձայնով կատարեց Թամարի երգը, որում արտահայտեց Թամարի քնքուշ ու ջերմ հույզերը, բոլոր ելեւեջներում երանգավորելով այն: Նրա հարուստ վոկալ տվյալները իրենց վառ արտահայտությունը գտան նաեւ Դավիթ-բեկի ու Թամարի դուետում:

Մինկուսի «Դոն-Կիխոտ» բալետից «Պա-դե-դե» պարով հանդես եկան Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստուհի Է. Սեմանովան եւ արտիստ Մ. Մարտիրոսյանը: Նրանք ցուցաբերեցին կատարողական բարձր տեխնիկա: Համերգն ավարտվեց Ա. Տիգրանյանի «Դավիթ-բեկ» օպերայից «Լեկուրի» եւ «Լեզգիկա» պարերով, որոնք կատարեցին թատրոնի բալետի արտիստները:

Համերգն անցավ մեծ հաջողությամբ եւ անջնջելի տպավորություն թողեց ունկնդիրների վրա:

Թատրոնի մի խումբ արտիստներ երեկ հանդիպում ունեցան Բաքվի Ձերժինսկու շրջանի երիտասարդության հետ, իսկ մի ուրիշ խումբ համերգ տվեց Մ. Մազումաեւի անվան պետական ֆիլիարմոնիայում:

Այսօր Մ. Ֆ. Ախունդովի անվան օպերայի եւ բալետի թատրոնի շենքում առաջին անգամ կներկայացվի Ա. Բաբաեւի «Արծվաբերդ» օպերան, իսկ վաղը կցուցադրվի Պ. Չայկովսկու «Կարապիլիճը» բալետը:

**«Կոմունիստ»,
30 մայիսի, 1962**

«ԿԱՄՈՒՐՋԻ ՎՐԱ»

Ծանոթանում ես Երեւանի Գ. Սունդուկյանի անվան Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական ակադեմիական թատրոնի խաղացանկին եւ բավականություն ես զգում: Նրանում ժամանակակից կյանքը պատկերող պիեսները քիչ չեն: Դրանցից է Գ. Բորյանի «Կամուրջի վրա» պիեսը, որը ներկայացրին սունդուկյանցիները Բաքվի հանդիսատեսների համար:

Գ. Բորյանի «Կամուրջի վրա» պիեսը առատ դեպքեր, հարուստ ու սրընթաց գործողություններ չունի, սակայն հիմնված է գաղափարական սուր կոնֆլիկտի վրա: Կենդանի բնավորություններ են նրա գործող անձերը, որոնք հանդես են գալիս իրար բախվող երկու աշխարհըմբռնումով, կյանքի նկատմամբ ունեցած երկու տարբեր տեսակետներով: Նրանց արանքում մի կամուրջ է զցված: Կամուրջի երկու կողմերում տարբեր մարդիկ են, եւ նրանցից յուրաքանչյուրը մարդ կոչումը կյանքում յուրովի է հասկանում: Պիեսում հերոսների մի խումբը (Ավայյան, Տոնյան) կյանքի իմաստը տեսնում է ամեն գնով անձնական բարեկեցությունը ապահովելու մեջ, իսկ մյուս խմբի հերոսները վսեմ գաղափարների ու գեղեցիկ զգացմունքների կրողներն են, ժողովրդին, հայրենիքին անշահախնդիր նվիրված մարդիկ: Այդ վսեմ գաղափարների ու գեղեցիկ զգացմունքների դրոշակակիրն էլ պիեսում Արսեն Լուսինյանն է, որից կախված է հետեւողականորեն զարգացող դրամատիկ սուր կոնֆլիկտը: Եվ այդ կոնֆլիկտն իր օբյեկտիվ հիմքն ունի: Դա Տոնյանի եւ Լուսինյանի առկայությունն է պիեսում, որոնք հակադիր խարակտերներ են:

Պիեսի այդ կոնֆլիկտն էլ հենց հնարավորություն է տվել ստեղծել մի այնպիսի ներկայացում, որը սկզբից մինչեւ վերջ գրավում է հանդիսատեսի ուշադրությունը: Հանդիսատեսը ներկայացման ընթացքում սիրում է, հարգում, ատում, զայրանում եւ, վերջապես, գոհանում, երբ հաղթանակում է դրականը, նորը:

Շինարարական տրեստի պատասխանատու աշխատակից Բագրատ Տոնյանը շեղվել է ճիշտ ճանապարհից: Նրա հետ է բաժ-

Մի վարիչ Արտեմ Ավայանը, որը զարտուղի ճանապարհներով պետությունից զգալի գումարներ է յուրացնում: Բագրատ Տոնյանը յուրացումների հաշվին առանձնատուն է կառուցել: Փողը հետզհետե կուրացնում է նրան: Նա չի զբաղվում որդու՝ Արմենի դաստիարակության գործով: Արմենը երեք տարի է, ինչ ավարտել է միջնակարգը, սակայն անգործ թրեւ է գալիս, ոչ մի տեղ չի ուզում աշխատել կամ սովորել: Նա ասես կորցրել է հավատը իր նկատմամբ: Արմենի մայրը՝ Նունեն, մտատանջությունների մեջ է: Քույրը՝ Սեդան, որը շուտով պիտի ավարտի բժշկական ինստիտուտը, ցանկանում է, որ եղբայրը կամ արհեստ սովորի կամ կրթություն ստանա:

Այդ ամենը Բագրատ Տոնյանին քիչ է հետաքրքրում: Նա միայն մտածում է հարստանալու մասին: Այդ տենչը մթազնել է նրա ուղեղը: Նրա տեսակետը կյանքի նկատմամբ դառնում է հետեւյալը. «Կյանքը կառուցում է՝ իր հայեցողությամբ, մարդը վերցնում է՝ իր կամեցողությամբ... Ինչ վերցրիր՝ վերցրիր, չհասցրիր՝ ուրիշինն է: Եվ ուժեղը՝ շատ վերցնողն է...»:

Նրա տեսակետը բաժանում է Արտեմ Ավայանը: Դեռ ավելին: Վերջինս դիմում է հանրային սեփականությունը գռվելու ավելի ստոր միջոցների:

Բագրատ Տոնյանի տանն է ապրում Նունեի եղբայրը, պաշտոնաթող գնդապետ Արսեն Լուսինյանը, որը Գուրգեն Տոնյանի վաղեմի ընկերն է: Նրանք 1920 թվականին XI կարմիր բանակի հետ մտել են Երեւան: Հետագայում Արսենը դարձել է զինվորական, Հայրենական պատերազմի արհավիքների միջով հասել Բեռլին: Ռազմաճակատում գոհվել է նրա միակ որդին, մահացել է կինը, իսկ ինքը մնացել է մենակ: Արսեն Լուսինյանը քրոջ տանը տեսնելով իրերի դրությունը, չի հաշտվում փեսայի հետ, քննադատում է նրա արարքները, ձգտում է նաեւ ամեն կերպ դարձի բերել Արմենին: Ահա հենց այդ ճանապարհին էլ բախվում են Տոնյանի եւ Լուսինյանի գաղափարները: Վերջապես մերկացվում են Տոնյանն ու Ավայանը: Տոնյանը հեռացվում է իր պաշտոնից, Ավայանի գործը դատի է տրվում: Լուսինյանը ցանկանում է փեսային՝ Տոնյանին իր

Իհետ տանել այն սովխոզը, որի դիրեկտոր են նշանակել իրեն: Սակայն սրտի ինֆարկտը խանգարում է նրան: Վերջին անգամ Ավալյանի հետ ունեցած վեճից հետո դադարում է բաբախելուց Լուսինյանի սիրտը: Արմենը մորեղբոր ազդեցության տակ դարձի է գալիս, գնում է Կիրովականի նոր գործարանում աշխատելու: Խաղողաբուծական սովխոզ աշխատանքի է գնում նաև Բագրատ Տոնյանը: Այսպիսով Արսեն Լուսինյանը դառնում է այն ուժը, որը կամուրջ է գցում երկու ափերի միջև, մի կամուրջ, որի վրայով մոլորված մարդիկ անցնելով գտնում են իրենց ճիշտ ճանապարհը:

Արսեն Լուսինյանի դերում հանդես եկավ Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի լաուրեատ Դ. Մալյանը: Տաղանդավոր արտիստը կրկին իր փայլուն խաղով արժանացավ ջերմ ընդունելության: Մալյան-Արսենը հանդիսատեսի աչքում բարձրացավ որպես մարդու նկատմամբ ունեցած ջերմ հավատի մարմնացում, որպես հարուստ կենսափորձ ունեցող, համբերատար ու հմուտ դաստիարակ, որպես լավի, նորի օրինակ:

Հայկական ՍՍՌ Վաստակավոր արտիստ Խ. Աբրահամյանը մարմնավորեց Արմենի դերը: Այդ դերը կատարելը, իհարկե, որոշ դժվարություն է ներկայացնում: Արմենը անգործության է մատնված, հարբեցողությամբ է զբաղվում, սակայն նրա մեջ դեռևս չի մեռել մարդկայինը: Նրա սրտի մի անկյունում դեռևս շողում է այն կայծը, որը հետագայում պետի բոցկլտա: Այդ կայծը աստիճանաբար հուրհրատում է, աստիճանաբար գալիս է վառելու, մոխրացնելու այն ամենը, ինչը շեղել էր Արմենի ուղին: Խ. Աբրահամյանը Արմենի այդ հոգեվիճակը բացահայտում է բնական անզուգական խաղով: Հանդիսատեսը մերթ կորցնում է հավատը նրա հանդեպ, երբ հարբած, օրորվելով բեմ է մտնում, մերթ հավատում է նրան, երբ նստում է մորեղբոր մոտ և հարցնում, թե ինքը, արդյոք, մարդ կդառնա՞: Այդ հոգեվիճակի հմուտ բացահայտման շնորհիվ է, որ հանդիսատեսը ծափահարում է Արմենին՝ Ավալյանի մասին իր հորը դիմած հետելյալ արտահայտության համար. «Հայրիկ, խաբել են՝ ներել ես, կեղծել են՝ հանդուրժել են: Ինչո՞ւ: Չեմ սովորում-համբերում ես, թրեւ եմ գալիս՝ համբերում ես, ինչո՞ւ... Ինչո՞ւ»:

Բագրատ Տոնյանը պիեսի գլխավոր հերոսներից է: Նրա ուսերին է ընկած ներկայացման կոնֆլիկտի մի մասը, նրանից է նաեւ կախված կոնֆլիկտի լուծման հաջողությունը: Եվ ՌՍՖՍՌ վաստակավոր արտիստ Գ. Հակոբյանը հրաշալի կերպով կատարեց Տոնյանի դերը: Հակոբյանի Բագրատը հարստանալու տենչով վառված, իր երբեմնի ճիշտ ճանապարհը մոռացած, պաշտոնասեր մի անձնավորություն է: Հակոբյան-Տոնյանը մերթ հանգիստ է, մերթ վրդովված, մերթ ժպտում է, ըստ իրեն՝ աշխարհը լավ չհասկացող մարդկանց վրա, մերթ նախատում նրանց, ովքեր նեղն ընկած տեղը չեն պաշտպանում իրեն, թեկուզ եւ մեղավոր է: Այս ամենը արտիստը դրսեւորում է համոզիչ կերպով:

Սիրող մայր, սիրող կին, սիրող քույր է Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստուհի Ա. Արագյանի Նունեն:

Իրենց դերերը հմտորեն կատարեցին վաստակավոր արտիստներ Վ. Մարգունին (վարպետ Ստեփան), Է. Համբարձումյանը (Արտեմ Ավայան), արտիստուհի Կ. Ղարազյոզյանը (Սեդա):

«Կամուրջի վրա» ներկայացումը դիտվում է չթուլացող հետաքրքրությամբ եւ դրանում իրենց արժանի վաստակն ունեն ռեժիսյոր՝ ժողովրդական արտիստ Դ. Մալյանը, վաստակավոր նկարիչ Ս. Ստեփանյանը, կոմպոզիտոր Ջ. Կիրակոսյանը, բեմադրության ղեկավար, ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր Վարդան Աճեմյանը:

Գ. Բորյանի «Կամուրջի վրա» պիեսի բեմադրությունը Գ. Սունդուկյանի անվան թատրոնի կոլեկտիվի ստեղծագործական նվաճումներից է:

*«Կոմունիստ»,
09 հուլիսի, 1964թ.*

ՀԱՃԵԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Վրաց դրամատուրգ Կ. Բուաչիձեի «Բակուն կատաղի շուն կա» կոմեդիան մտել է ինչպես մի շարք թատրոնների, այնպես էլ Կիրովականի Յ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի խաղացանկի մեջ: Պիեսում հեղինակը խարազանում է խարդախ, անազնիվ, քաղքենիական հոգեբանության տեր մարդկանց եւ միեւնույն ժամանակ հանձին դրական կերպարների հաստատում նորը, առաջավորը:

Բնակելի տուն թբիլիսիում. տնվորները, տարբեր մասնագիտության, տարբեր բնավորության տեր մարդիկ՝ զբաղված են իրենց առօրյա աշխատանքով ու հոգսերով: Եվ ահա Վանո Լայթաձեն այդ կոլեկտիվի համար դառնում է չարիք, մի պալար՝ հասարակության առողջ մարմնի վրա: Նա իր կնոջ հետ միասին թունավորում է հարեւանների հանգիստն ու քունը: Մինչեւ ուշ գիշեր անստորագիր նամակներ է գրում թերթերին ու վերադաս օրգաններին, զրպարտելով ազնիվ մարդկանց: Լայթաձեն այնքան է տարվում բանասրկություններով, որ անգամ փորձում է «ինքնասպանության» դիմել, դրանով իսկ նպատակ ունենալով մեղք գցել հարեւանների վրա: Վերջապես, նա պատահմամբ խեղդամահ է լինում: Խաղաղվում է բակը:

Դրական եւ բացասական կերպարների միջեւ ծավալվում է դրամատիկական պայքարը: Հեղինակը դրական հերոսների ֆոնի վրա ծաղրել, խարազանել է Վանո Լայթաձեին: Այդ տեսակետից դրամատուրգը հասել է իր նպատակին:

«Բակուն կատաղի շուն կա» պիեսը բեմադրել է թատրոնի գեղարվեստական ղեկավար Ս. Աքմաքչյանը: Ռեժիսորը հյութեղ, համոզիչ գույներ է գտել կերպարների, բեմական անցուդարձի համար: Գ. Գելորգյանի Լայթաձեն գունեղ է, հավաստի, նա իսկական կոմիկական կերպար է: Գելորգյանը Վանոյի կերպարը հասցնում է իրականության մեջ բացասական հատկություններ կրող տիպական հերոսի աստիճանին: Սկսած առաջին գործողությունից Գելորգյան-Վանոն տարերքի մեջ է: Եվ նա հատկապես ուժեղ տպավոր

րություն է թողնում երրորդ գործողության վերջում, որը եւ կազմում է կոմեդիայի կուլմինացիան:

Ներկայացման մեջ հետաքրքիր եւ սուր է լուծված Վանո Լայթաձեի եւ նրա կնոջ Փեփելայի (Մ. Տիրոսյան) փոխհարաբերությունը: Բոլոր մանրամասնություններով մտածված ու խորացված բնութագիր ունեն Գ. Գեւորգյանի Վանոն եւ Մ. Տիրոսյանի Փեփելան՝ սկսած նրանց արտաքին կերպարանքից մինչեւ երկերեսանի, բացասական մարդու հոգեբանությունը բացահայտող խոսքերն ու շարժումները:

Բացասական հերոսների խումբը լրացնում է Ռ. Գոբլյանի ստեղծած Ցացանայի կերպարը, որը ներկայացման հաջող կերպարներից մեկն է դառնում դերասանուհու հետաքրքիր մեկնաբանությամբ ու անկաշկանդ խաղով:

Հասարակության համար չարիք դարձած Վանոն եւ Փեփելան ունեն միայն մի աղջիկ՝ Ռոզիտա անունով, որի դաստիարակությամբ չեն զբաղվում ծնողները: Հեղինակը դաստիարակության այս հարցը մտցրել է կոմեդիայի սյուժետային հիմնական ոլորտի մեջ եւ առանձնահատուկ ուշադրություն դարձրել դրան: Բեմադրողը պահպանել է հեղինակի մտահղացումը: Է. Մկրտչյանը հիմնականում կարողացել է մարմնավորել Ռոզիտայի կերպարը: Սակայն պետք է նշել, որ նա որոշ տեսարաններում չի կարողանում լրիվ բացահայտել այդ թեթևսուլիկ աղջկա էությունը...

Ներկայացման ուշագրավ կերպարներից է նաեւ Վարվարա Կարպովան, որը միայն մտածում է իր շնիկի՝ Ջուլիայի մասին: Քաղքենիական հովերով տարված, ընտանիքում իրեն դժբախտ զգացող այդ կնոջ կերպարը համոզիչ շտրիխներով է մարմնավորում Ա. Էիրանջյանը: Կոմեդիայի հեղինակը, խտացնելով Վանոյի, Փեփելայի, Ցացանայի կերպարները, միեւնույն ժամանակ կրքոտությամբ պաշտպանում է ազնիվ կացութաձեւը, հաստատում նորը, առաջադիմականը՝ հանձին քանդակագործ Իրինե Կախիձեի, պարաշյուտային սպորտի վարպետ Էլլոյի, ճարտարապետ Լեոյի, հրշեջ պահակ Չինչախելիի եւ դրական այլ կերպարների:

Անմիջական է վաստակավոր արտիստ Ա. Շագաֆյանի խաղը

Չինչախելիի դերում: Աշխատանքում եւ կենցաղում ազնիվ, հարեւանների հարգանքին արժանացած մարդու կերպար է մարմնավորել դերասանը: Բայց կցանկանայիք նշել, որ որոշ տեսարաններում Շագաֆյան-Չինչախելին սխեմատիկ է դառնում:

Իրինե Կախիձեի կերպարի հիմնական հատկանիշներն են աշխատասիրությունը, համեստությունը, ընդհանուրի շահի պաշտպանումը: Ռ. Կարապետյանը հմտորեն է բացահայտում Իրինեի հոգեկան խոր աշխարհը: Նույնը կարելի է ասել ճարտարապետ Լեոյի դերակատար Զ. Ազիզյանի խաղի մասին:

Ինչպես միշտ, այս ներկայացման մեջ եւս իր էպիզոդիկ դերում փայլում է Ռ. Մխիթարյանը, որը մարմնավորում է քրդուհի Սարիի կերպարը:

Իրենց դերերում հաջող են Ս. Հովհաննիսյանը (Մինդելով), Ս. Խառատյանը (Ելլո), Ա. Օհանյանը (Թամազ), Ռ. Մարգարյանը (Գուրամ), Մ. Հակոբյանը (գերագույն սովետի ներկայացուցիչ), Վ. Աղաջանյանը (ժուռնալիստ):

Ներկայացման հաջողությանը նպաստում է նաեւ վաստակավոր գործիչ Ռ. Նալբանդյանի պարզ, անպաճույճ, կոլորիտային ձեւավորումը:

**«Կոմունիստ»
18 հունիսի, 1965թ.**

«ՊԵՊՈ»-Ն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Բաքվի Շահումյանի անվան կուլտուրայի տան ժողովրդական թատրոնի կարող կոլեկտիվը կատարում է մեծ, դժվարին եւ շնորհակալ աշխատանք: Նա օրերս Գ. Սունդուկյանի ծննդյան 140-ամյակի կապակցությամբ բեմադրեց դրամատուրգի «Պեպո» կատակերգությունը:

Դա հեշտ չէր: Նախ, այն պատճառով, որ կոլեկտիվի մեջ ընդգրկված են ոչ պրոֆեսիոնալ դերասաններ եւ, երկրորդ, այն պատճառով, որ արդեն մոտ 100 տարի է, ինչ «Պեպո»-ն բեմադրվում է առաջատար շատ թատրոններում (առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1871թ. ապրիլի 30-ին):

Սակայն ուրախությամբ պետք է նշել, որ ժողովրդական թատրոնի կոլեկտիվը կարողացել է հաղթահարել իր առջև ծառայած դժվարությունները, ստեղծել հետաքրքիր ներկայացում:

Պիեսը բեմադրել է թատրոնի հնագույն ու փորցառու սիրողներից մեկը՝ բանվոր Ալեքսանդր Մարտիրոսյանը: Նա 30 տարուց ավելի է, ինչ սիրով մասնակցում է մշակույթի տան հայկական դրամատիկական կոլեկտիվի աշխատանքներին, եւ այդ աշխատանքային փորձը նրան հնարավորություն է տվել ճիշտ մեկնաբանելու հեղինակին, բացահայտելու պիեսի մեջ արծարծված գաղափարը: Ներկայացման սկզբից մինչեւ վերջ հանդիսականների աչքերի առջև 19-րդ դարի 60-70-ական թթ. ժողովրդական կյանքի պատկերներն են, դարաշրջանի հիմնական հակասությունը՝ բուրժուազիայի եւ աշխատավորական զանգվածների միջեւ: Ներկայացման մեջ հաջող կերպով է ընդգծված այն հակադրությունը, որը գոյություն ունի զինգիմովների եւ պեպոների միջեւ: Մի տեղ Պեպոյի աղքատիկ տնակն է, որի խարխուլ պատերի արանքում հարստահարված, իր հալալ աշխատանքով, դժվարությամբ մի կտոր հաց վաստակող մի ընտանիք է, որի բարեկամներն ու յուրայինները եւս գտնվում են աղքատության գրկում, մի տեղ էլ Ջինգիմովի պալատն է, ուր շռայլորեն վայելում են թշվառներից խլած ու կողոպտած վաստակը: Երկու հակադիր բեւեռներ. մեկի մեջ աշխատավոր ժողովրդի ներկայացուցիչներն են՝ Պեպոն, Շուշանը, Կեկելը, Կակուլին, Գիքոն, մյուսում՝ հարստահարիչների ներկայացուցիչ, հարուստ վաճառական Ջինգիմովն է, իր կնոջ՝ Էփեմիայի հետ:

Դերասաններից յուրաքանչյուրը գտնվում է իր դերում եւ հաջողությամբ է բացահայտում իր մարմնավորած կերպարի ներաշխարհը:

Պեպոյի դերում հանդես եկավ ժողովրդական թատրոնի հնագույն արտիստներից մեկը՝ Բաքվի ապակու գործարանի բանվոր Վարդան Բեգյանը: Առաջին անգամ Վարդան Բեգյանը Պեպոյի դերը մարմնավորել է 1925թ., երբ սկսել է մասնակցել նույն մշակույթի տան դրամատիկական ինքնագործ խմբակի աշխատանքներին: Եվ ահա 40-ամյա փորձ ունեցող պեհեր դերասանը երիտասարդական ավյունով կրկին խաղաց Պեպոյի դերը: Բեգյան-Պեպոն ներկայացման մեջ կարողանում է հանդես գալ որպես իր խավի ներկայացուցիչն ու պաշտպանը: Նրա Պեպոն վեհանձն է, արդարամիտ, խիզախ: Բեգյանը ճիշտ է բացահայտում Պեպոյի աստիճանական զարգացումը: Նրա Պեպոն սկզբում հավատում է Ջինգիսկանին, սակայն հետագայում հիասթափվում է նրանից՝ երեսին շարտելով դառն ճշմարտությունը: Բեգյանի Պեպոն մի նոր առաջընթաց քայլ է դերասանի համար: Նրանով նա հարստացնում է իր հաջող դերերի պատկերասրահը:

Պետրոս Վարդանյանը քանի՜-քանի՜ անգամ է բեմ բարձրացել սրտի թրթիռներով, արժանացել հանդիսականների ջերմ սիրուն ու հարգանքին: Նա մեծ սիրով է հիշում այն ժամերը ու թուպները, որոնք ծախսել է իր դերերի վրա: Դերից-դեր նա հմտացել է եւ գտել դեպի հանդիսականի սիրտը տանող ճանապարհը: Եվ այսօր, երբ խոսք է բացվում նրա մասին, բոլորը միաբերան ասում են. «Պետրոս Վարդանյանը ասես պրոֆեսիոնալ դերասան է»:

Հիրավի այդպես է: Վարդանյան-Ջինգիսկանի խոսքը, դիմախաղը, շարժումները միասնություն դարձած, լրիվ բնութագրում է Ջինգիսկանին, ցույց տալիս, որ դատարկ մտքի եւ դատարկ սրտի տեր, գծուծ, խորամանկ այդ վաճառականի կյանքը խաբեության աշխարհն է: Ջինգիսկանը գռվող է, կատարյալ ավազակ, որը զբաղվում է միայն թալանով, շահագործումով եւ երբեք չի սահմանափակում իր անկշտում ախորժակը: Առանց ավելորդ ճիգերի Վարդանյանը դրսեւորում է Ջինգիսկանի գայլային ներաշխարհը: Հանդիսականը նրա մարմնավորած Ջինգիսկանի նկատմամբ լցվում է զայրուքով ու ատելությամբ:

Ժողովրդական թատրոնի կոլեկտիվը այժմ ղեկավարում է Լու-

Միա Ֆանդունցը: Ուշադրության արժանի է նրա կատարած աշխատանքը: Նա իր ամուսնու՝ Ալեքսանդր Մարտիրոսյանի հետ միասին տասնյակ տարիներ է, ինչ մեծ եռանդով մասնակցում է դրամատիկական այդ կոլեկտիվի աշխատանքներին, կոլեկտիվ, որը վերջերս արժանացավ ժողովրդական թատրոնի կոչման: Լ. Ֆանդունցը հանդես է գալիս տարբեր դերերում: «Պեպո»-ի ներկայացման ժամանակ նա խաղաց իրար հակադիր, իրար չնմանվող Շուշանի եւ Էփեմիայի դերերում: Երկու դեպքում էլ նա իրեն դրսեւորեց որպես շնորհալի դերասանուհի: Շուշանի դերում նա սիրող մայր է՝ որդիների բախտով տառապող, բարեսիրտ մայր, Էփեմիայի դերում՝ կեղծ, քաղքենի եւ ցոփ կյանք վարող կին:

«Պեպո»-ի ներկայացման մեջ գլխավոր դերերից մի քանիսը կատարեցին երիտասարդները: Կեկելի եւ Գիքոյի դերերը մարմնավորեցին ուսանողներ Վայա Հարությունյանը եւ Կարո Դադայանը, իսկ Կակուլու դերը՝ ռադիոհաղորդավար Յուրի Պողոսյանը:

Հարությունյան-Կեկելը արժանացավ հանդիսականների համակրանքին իր անկաշկանդ, բնական խաղի շնորհիվ: Ներկայացման ամբողջ ընթացքում Հարությունյանը ապացուցեց, որ ժողովրդական թատրոնը հանձին նրա ունի մի շնորհալի դերասանուհի:

Յուրի Պողոսյանի հաջող դերակատարումների մասին մեկ անգամ չէ, որ գրվել է: Նա մեծ սիրով եւ ակտիվորեն մասնակցում է գեղարվեստական ինքնագործունեության պատվաբեր աշխատանքներին: Այս անգամ եւս հաջող էր նրա խաղը: Պողոսյանի Կակուլին ընկերասեր է, աշխույժ, տաքարյուն: Պողոսյանը ստեղծել է Կակուլու հաջողված կերպարը, որն ազնիվ է, սրամիտ:

Ուսանող Կարո Դադայանը բավականաչափ հաջող կատարեց Գիքոյի դերը: Գիքոն դանդաղաշարժ, շատախոս ծերուկ է, ունի իր հոգու գեղեցկությունը, ազնվությունը:

Ներկայացման մեջ հանդես եկան նաեւ բանվորներ Էդիկ Պետրոսյանը (Գիգուլի) եւ Արկադյա Աթաբեկյանը (Սամսոն):

«Պեպո» ներկայացման հաջողությանը մեծապես նպաստել են նկարիչ Բորիս Մանգասարյանի աշխատանքը եւ վաստակավոր արտիստ Ենոք Քոչարովի հուզիչ նվագը:

«Կոմունիստ», 19 հունվարի, 1966թ.

ՆՐԱ ՍԻՐՏՆ ԷՐ ԵՐԳՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԻ ՍԻՐՈՎ
(Ավագ Պետրոսյանի անմոռաց երգը)

Չազարամյակների ընթացքում մարդկությունը աստվածային առեղծվածների շատ էջեր է ընթերցել, սակայն չուսումնասիրված եւ չընթերցված այնքան գաղտնիքներ կան, որոնց վերծանմանը դեռ պարտք են սերունդները: Այդ ամենի շարքում կա մի էջ, որ հոգեբանների մի ամբողջ խմբի ջանքեր է պահանջում, որպեսզի լուսաբանվի ըստ էության: Դա բանական մարդու հիշողության խնդիրն է: Ի՞նչ նշանակություն ունի այն մարդկային գործընթացի մեջ, ինչքանով է նպաստում առօրյա կյանքի ճիշտ կազմակերպման եւ առավելագույնս՝ առաջընթացի ապահովման գործին: Առանց հիշողության ինչպիսի՞ արժեք կունենա նյութական աշխարհը եւ արդյո՞ք կունենա: Ինչպիսի՞ պայմանավորվածություն կա հոգեւորի եւ նյութականի միջեւ, եւ դրանցից ո՞րն է վերածվում արյան կանչի, կարոտի, մղում արարման, ինքնաճանաչման ու ինքնահաստատման: Այս համապատկերին հիշողությունը ի՞նչ դեր է կատարում ժողովրդի հողեղեն եւ ոգեղեն համածուլվածքն ապահովելու սրբազան գործում:

Կասկածից դուրս է, որ կենսական նշանակություն ունեցող այս հիմնախնդիրը միշտ հուզել է բոլոր հայերին, որովհետեւ մեր՝ հայոց կյանքն ինչքան էլ դառն լիներ, զարդարվել է Նահապետ Չայկից սկիզբ առած հերոսական հուշապատումով, որ դարձել է առասպելված հոգեւոր հաց ու շարունակում է մեզ թեւավորել որպես այդպիսին: Չետաքրքիրն այն է, որ մեր նախնիները մաքառումի իրենց պատմությունը հյուսել են փանդիռի ու դուդուկի նվագակցությամբ ու երգի ծածանումով: Եթե այդպես չլիներ, հազիվ թե ունենայինք Նահապետ Քուչակ ու Սայաթ-Նովա, Աշուղ Ջիվանի ու Գուսան Աշոտ, հազիվ թե համաշխարհային մեծությունների շարքում հառնեին 19-20-րդ դարերի մեր երգահաններն ու երգիչները, առանց որոնց չէինք կարող զրուցել քաղաքակիրթ աշխարհի հետ՝ հավասարը հավասարի իրավունքով:

Իմ այս մտորումները ծնունդ առան ինձ համար մի հաճելի ու անմոռանալի անհատականության մասին խոսք ասելու առիթով, մի անհատականություն, որի հետ բախտ եմ ունեցել հանդիպելու

Մոչ մեկ անգամ, զրուցելու հայ մտավորականի ազգային-օրինական զգացումներով ու հպարտությամբ: Այդ անհատը *Ավագ Պետրոսյանն* էր, որի կոչումները դիտավորյալ չնշեցի, որովհետեւ նա իր երգարվեստով ստեղծել է իր ժամանակը, եւ այդ ժամանակը կարող ենք կոչել հենց իր անունով՝ պետրոսյանական: Այստեղ կարելուրում են մի հանգամանք, որ կարող է լույս սփռել Ավագ Պետրոսյան քաղաքացու, կոմկրետ հայ մարդու ազնվական կեցվածքի, ազգային եւ համամարդկային մշակույթի նրա իմացության ու կողմնորոշման վրա:

Ճակատագիրս դասավորվեց այնպես, որ 1953 թվականին Բաքվի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության բաժինն ավարտելուց անմիջապես ինձ աշխատանքի վերցրին «Կոմունիստ» (հայերեն) հանրապետական թերթում՝ որպես լրագրող: Բազմատիրաժ թերթ էր, լույս էր ընծայվում 1920 թվականից, խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո: Ի դեպ, այդ տարիներին Ադրբեջանում ապրում էր մեկ միլիոնից ավելի հայ, որից 400 հազարը՝ միայն Բաքու քաղաքում, իսկ մյուս մասը՝ Ադրբեջանին բռնակցված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում, Հյուսիսային Արցախում եւ այլ հայաշատ բնակավայրերում:

«Կոմունիստ» (հայերեն) թերթը հարյուր հազարից ավելի տպաքանակով տարածվում էր հայաշատ բոլոր քաղաքներում ու գյուղերում: Կարելի է ասել, որ հայերին հուզող հիմնախնդիրների լուսաբանման միակ լրատվական միջոցն այդ թերթն էր:

Ես աշխատում էի թերթի գրականության եւ արվեստի բաժնում, ուստի, պետք է առաջին հերթին լուսաբանեի մշակութային այն երեւույթներն ու միջոցառումները, որ ընդհանրության մեջ տեղի են ունենում հանրապետությունում: Ահա այստեղ պետք է գտնվեի մշակութային կյանքի կենտրոնում՝ «Կոմունիստ» թերթում լուսաբանելու համար:

1950-ական թվականներին լայն մասսայականություն էին վայելում խորհրդային հանրապետությունների մշակութային կոլեկտիվների կոնտակտային կապերը: Փոխադարձ այցելություններն ավանդույթի ուժ էին ստացել: Այդ համապատկերին տեսանելի էին Երևանի թատերական կոլեկտիվների եւ առանձին գործիչների ե-

լույթները Բաքվում եւ Բաքվի գեղարվեստական կոլեկտիվների պատասխան միջոցառումները Երեւանում: Երեւանից ամեն տարի Բաքու էին ժամանում Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի աշխարհահռչակ թատրոնի կոլեկտիվներն ու անվանի համույթներն ու գործիչները:

Ինչպես վերեւ նշեցի, «Կոմունիստ» թերթից հանձնարարութիւն էի ստանում ուշի ուշով հետեւել Երեւանյան կոլեկտիվների ելույթներին եւ լուսաբանել մամուլի էջերում: Իսկ այդ ժամանակաւրնթացքում հայոց թատրոններում գործում էին այնպիսի դերասաններ ու երգիչներ, որոնց հռչակը ծիածանվել էր ամբողջ Սիւնթիւնում եւ նրա սահմաններից դուրս: Դրանց թվում էր նաեւ անմոռանալի Ավագ Պետրոսյանը, որ աստվածային մի նվեր էր մեր ժողովրդին, նրա դարավոր հարուստ մշակույթին՝ որպէս երգիչ, դերասան, մշակութաբան, արվեստագետ:

1959թ. մայիսի 20-ին տոնական տեսք էր ստացել Բաքվի երկաթուղային կայարանը, որ գտնվում էր հայակերտ ու հայաշատ քաղաքի կենտրոնում: Գարնանային մեղմ քամուց փողփողում էր տրանսպարանտը, որի վրա գրված էր. «Ողջուն Յայաստանի արվեստի ներկայացուցիչներին»: Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի հայկական պետական ակադեմիական թատրոնի արտիստներին դիմավորելու էին եկել քաղաքի մշակույթի գործիչներ եւ հասարակայնության ներկայացուցիչներ: Կայարանում հնչում են հայկական եւ ԽՍՀՄ մյուս ժողովուրդների երգերի մեղեդիները:

Գնացքը դանդաղորեն մոտենում է կառնատույցին: Ապա եւ գնացքից դուրս են գալիս ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սազանդարյանը, Յայաստանի ժողովրդական արտիստ Ավագ Պետրոսյանը, Արմեն Գուլակյանը եւ ուրիշներ, որոնց ներկայութիւնը ոգեւորում ու ցնծութիւն է պարգեւում հարյուրավոր այն հայերին, ովքեր եկել էին դիմավորելու իրենց արյունակից արտիստներին:

Յայաստանից ժամանած արտիստներին ողջունում է Ադրբեջանի մշակույթի փոխնախարար Բ. Սեիդգադեն եւ մաղթում հաջողութիւններ իրենց առաքելութեան ժամանակաւրնթացքում:

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի դիրեկտոր եւ գլխավոր ռեժիսոր Արմեն Գուլակյանը պատասխան

խոսքում իր ընկերների անունից շնորհակալություն հայտնեց իրենց ջերմորեն դիմավորելու համար եւ հավաստիացրեց, որ թատրոնի կոլեկտիվը կձգտի, որպեսզի հյուրախաղերն անցնեն գեղարվեստական բարձր մակարդակով եւ երբ հայտարարեց, որ նույն երեկոյան ներկայացվելու է Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան, որոտացին ծափահարությունները: Հայաստանից ժամանած արտիստներն անմիջապես շրջապատվեցին իրենց հայ ընկերներով ու բարեկամներով: Դա ուրախության ու կարոտի անմարում զգացումի արտահայտություն էր եւ առանձնապես այն ցանկալի սպասումի, որ «Անուշ»-ի ներկայացման մեջ Սարոյի դերը կատարելու է Ավագ Պետրոսյանը:

Մարդ պետք է ներկա լիներ այդ երեկոյին, որպեսզի զգար այն ազգային հրճվանքի զգացումը, որ ծիածանվեց «Անուշ» օպերայի հաջող ներկայացման, առանձնապես, Ավագ Պետրոսյանի դերակատարման շնորհիվ:

* * *

Հայկական օպերային արվեստի գագաթնակետային մի դրսեւորում էր մայիսի 28-ի մեծ համերգը, որ տեղի ունեցավ քաղաքի օպերայի շենքում՝ հայ արտիստների լավագույն ուժերի մասնակցությամբ:

Համերգի ծրագրում մտցված էին հայկական եւ եվրոպական կոմպոզիտորների երգեր եւ հատվածներ օպերաներից ու բալետներից:

Համերգի առաջին բաժինը բացվեց Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից քայլերգով, որը կատարեց նվագախումբը:

Հայաստանի ժողովրդական արտիստ Ավագ Պետրոսյանի փայլուն կատարմամբ ունկնդիրներին արվեստի ջերմացնող ու ոգեշնչող անզուգական աշխարհը տեղափոխեցին «Ալմաստ» օպերայից Աշուղի եւ Ուզ. Հաջիբեկովի «Քյոռ օղլի» օպերայից Քյոռ օղլու արիաները: Ունկնդիրները նրա կատարումն ընդունեցին բուռն օվացիաների եւ կրկնելու պահանջող բացականչություններով:

Հանդիսատեսների բուռն ծափահարություններին արժանացավ վաստակավոր արտիստուհի Ա. Թութունջյանը, որը հայտնի է որպես Անուշի լավագույն դերակատարներից մեկը:

Վաստակավոր արտիստ Է. Բաղդասարյանը հանդես եկավ Պ.Հայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայից Լենսկու արիայի կա-

տարմամբ: Ունկնդիրների պահանջով ծրագրից դուրս նա կատարեց Ջ. Վերդիի «Ռիզոլետո» օպերայից Յերցոզի արիան:

Օպերայի մենակատարներ Ա. Կարապետյանը եւ Մ. Թերզյանը ցույց տվին Պ. Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայի վերջին պատկերը: Նրանք արժանացան ունկնդիրների ջերմ ընդունելությանը:

Երիտասարդ բալետի պարուհի Բ. Հովնանյանը ճկունությամբ եւ նազանքով, նուրբ ու պլաստիկ շարժումներով ու խոր ապրումներով կատարեց Գ. Եղիազարյանի «Արեւելյան պարը»: Այնուհետեւ բեմահարթակում երեւացին բալետի արտիստներ Լ. Մարտիրոսյանը, Ն. Ուսյանը, Գ. Ալեքսանյանը, Ռ. Կարապետյանը: Նրանք հանդես եկան Պ. Չայկովսկու «Կարապի լիճը» բալետից փոքրիկ կարապների պարով:

Համերգի առաջին բաժինը եզրափակվեց Պ. Չայկովսկու «Կարապի լիճը» բալետից իսպանական պարով, որը հաջողությամբ կատարեցին վաստակավոր արտիստներ Վ. Խանամիրյանը, Վ. Բորիսովը, արտիստներ Բ. Հովնանյանն ու Գ. Մարգարյանը:

Համերգի երկրորդ բաժինը սկսվեց վաստակավոր արտիստուհի Լ. Լազարելայի հետ վաստակավոր արտիստ Մ. Երկաթի կատարած՝ Ջ. Վերդիի «Ռիզոլետո» օպերայից դուետով: Մ. Երկաթի հնչեղ ձայնի եւ կատարողական արվեստի շնորհիվ դուետը հմայեց ունկնդիրներին:

Ուշադրության արժանացավ ժողովրդական արտիստ Նար Հովհաննիսյանը, որն ուներ թավ, ուժեղ ձայն: Նա Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայից Դավիթ Բեկի արիայով հաճույք պատճառեց ունկնդիրներին:

Բուռն ծափահարությունների տակ բեմ դուրս եկավ ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դափնեկիր Տ. Սազանդարյանը: Նա կատարեց Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայից Թամարի արիան: Նրա հարուստ վոկալ տվյալներն իրենց վառ արտահայտությունը գտան կատարման ժամանակ:

Համերգն ավարտվեց առանձին պատկերով ընտրված Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայից:

* * *

Հետեւյալ օրը ներկայացվեց Ա. Բաբաեւի «Արծվաբերդ» օպերան, որտեղ Ա. Պետրոսյանը փայլուն կատարեց Կարոյի դերը:

Ունկնդրելով այդ կատարումը՝ ինձ հիացրեց այն աստվածային տաղանդը, որ ունեւր դրամատիկ-տենոր Ա. Պետրոսյանը եւ կարողանում էր բարձր մակարդակով մարմնավորել այնպիսի տարբեր դերեր, որպիսիք են Սանթուրը՝ Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ», Տիրիթը՝ Տ. Չուխաշյանի «Արշակ Բ», Սոսը՝ Վ. Տիգրանյանի «Սոս եւ Վարդիթեր», Վահանը՝ Զ. Ստեփանյանի «Հերոսուհին», Սեյրանը՝ Լ.Խոջա-Էյնաթյանի «Նամուս», Սարոն՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», Աշուղը՝ Ա. Սպենդիարյանի «Ալմաստ», Ռադամեսը եւ Մանրիկոն՝ Վերդիի «Աիդա», «Տրուբադուր» օպերաներում: Բացի դրանցից, նրա համերգային երգացանկում տեղ են գտել հայ, ռուս, արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ, հայկական ժողովրդական երգեր, ու բարձր է գնահատվել նրա կատարողական արվեստը. արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի, պարգևատրվել Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: Այդքանով հանդերձ, նա համեստ էր, լիքը՝ ցորենի այն հասկի պես, որ ծանրությունից խոնարհվում է հայրենի հողին, ժողովրդածին այնպիսի դյուցազմի նման, որ իր ուժն ու հմայքը նվիրումով ծառայեցնում է իր ժողովրդին:

* * *

Հունիսի 22-ին, աշխատանքային հերթափոխից հետո հանդիսատեսներով լեփ-լեցուն էր Լ. Շմիդտի անվան մեքենաշինական գործարանի ակումբի դահլիճը: Այստեղ էին հավաքվել գործարանի ինտերնացիոնալ կուլեկտիվի ներկայացուցիչները. նրանք եկել էին հանդիպելու Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի եւ բալետի հայկական ակադեմիական թատրոնի մի խումբ արտիստների հետ:

Հյուրերի երեւալը բեմում առաջ է բերում հանդիսատեսների բուռն ծափահարությունները: Դիմելով ներկաներին՝ Լ. Շմիդտի անվան գործարանային կոմիտեի նախագահ Վ. Ֆեոդոսովը նշում է, որ իրենց հյուր են եկել Երեւանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի մենակատարները, որոնց արվեստն արդեն մեկ ամիս է, ինչ հմայում է բաքվեցիներին:

Ելույթ է ունենում գործարանի գլխավոր ինժեների տեղակալ Պ. Մելքունյանը: Նա խոսում է այն մասին, որ հայ արտիստների յուրաքանչյուր ներկայացում, յուրաքանչյուր համերգ արժանանում է

Բաքվի աշխատավորների ջերմ ուշադրությամբ: Այսօր հնարավորություն կունենանք մեր գործարանի ակունքում նույնպես լսել թանկագին հյուրերին:

Ելույթ է ունենում գործարանի ինժեներ Ս. Հայկազովը: Նա ասում է.

- Այսօր ձեր գալուստը մեր գործարան ցույց է տալիս, որ դուք սերտորեն կապված եք աշխատանքի մարդկանց հետ:

Այնուհետև հյուրերին ողջունում է գործարանային ցեխի փականգործ Վ. Հարությունյանը:

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի կոլեկտիվի անունից հանդես է գալիս թատրոնի կուսակցական կազմակերպության քարտուղար, Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստուհի Թ. Գրիգորյանը, որը շնորհակալություն է հայտնում ջերմ ընդունելության համար:

Ամբիոնի մոտ է Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի դիրեկտոր եւ գլխավոր ռեժիսոր Ա. Գուլակյանը: Նա ասում է.

- Թանկագին բարեկամներ: Ժամանելով Բաքու՝ մենք միշտ էլ ձգտել ենք այցելել ձեր գործարանը: Եվ ահա այսօր ձեզ մոտ ենք: Ձեր գործարանը ոչ միայն թողարկում է արտադրանք, այլև դաստիարակում է մարդկանց: Ձեր կռած պողպատի պես ձեր գործարանում կոփվում է նաև տարբեր ազգերի ներկայացուցիչների եղբայրությունը: Մենք շատ ուրախ ենք, որ այցելել ենք ձեզ: Մենք ծառայում ենք աշխատավոր մարդկանց եւ արվեստը սովորում ենք ժողովրդից:

Տեղի ունեցավ մեծ համերգ, որին մասնակցեցին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի մենակատարները: Նշեն, որ գործարանի բանվորների 80 տոկոսը հայեր էին, նրանց մեջ էին ավելի շատ հայ երիտասարդներ, որոնց հավաքագրում էին Ադրբեջանի իշխանությունները: Համերգի ժամանակ նրանք պահանջում էին, որ Ա. Պետրոսյանը ծրագրից դուրս կատարի հայկական ժողովրդական երգեր: Այդպես էլ լինում էր:

Վերջում արտիստներին ծաղկեփնջեր մատուցեցին գործարանի բանվորների երեխաները: Լ. Շմիդտի անվան գործարանի բանվորների անունից հուշանվերներ հանձնվեցին արտիստներին:

* * *

Մի քանի օր շարունակ Բաքվում էին գտնվում հայ ժողովրդի պատվիրակները: Այդ օրերին կազմակերպվեցին հետաքրքիր շատ հանդիպումներ: Հայաստանից ժամանած հյուրերը եղել են նավթավերնաշկողների եւ մեքենաշինարարների մոտ, մի շարք նորակառույցներում, զբոսայգիներում, պատմության թանգարանում եւ այլուր եւ ամեն տեղ արժանանում էին ջերմ ընդունելության:

Սրտառուչ հանդիպում էր կազմակերպվել Սոնտինի անվան զբոսայգում, ուր հյուրերն ու բաքվեցիները միասին երգել են, պարել, միմյանց հետ փոխանակել հասցեներ: Այստեղ եւս կենտրոնում Ա. Պետրոսյանն էր, որ հայ ունկնդիրների պահանջով կատարեց Սայաթ-Նովայի երգերից:

* * *

Օգոստոսի 23-ին Ս. Մ. Կիրովի անվան կուլտուրայի եւ հանգստի կենտրոնական զբոսայգում հայ արտիստների ուժերով տեղի ունեցավ մեծ համերգ:

Ջբոսայգու կինոդահլիճում ցուցադրվեցին Սովետական Հայաստանի առօրյային նվիրված վավերագրական կինոֆիլմ:

Բաքվի նավահանգստի կուլեկտիվի անունից ողջույնի խոսք ասաց տեղամասի պետի տեղակալ Է. Միրզոյանը: Իսկ Հայաստանի պատվիրակների անունից պատասխան խոսքով ելույթ ունեցավ Կիրովի անվան զբոսայգու դիրեկտոր Մ. Շահբաջյանը: Նա ջերմ շնորհակալություն հայտնեց ներկաներին՝ իրենց նկատմամբ ցուցաբերված սրտառուչ ընդունելության համար:

Երեկոն վերջացավ հայ արտիստների մեծ համերգով, որի առյուծի բաժինը դարձյալ Ա. Պետրոսյանինն էր:

* * *

Կոնտակտային կապերի ծրագիրը կազմվեց այնպես, որ Ավագ Պետրոսյանը պետք է Բաքվի օպերայի եւ բալետի թատրոնում ադրբեջաներեն ներկայացվող «Անուշ» օպերայում հանդես գար Սարոյի դերում: Բոլոր դերակատարներն ադրբեջանցիներ էին: Պետրոսյան-Սարոն երգում էր հայերեն: Այս գործընթացը չափազանց դժվար էր, պետք է պատկերացնել, թե ինչքան ջանքեր էին պետք, ինչպիսի համբերություն ու եռանդ: Ես, որ ներկա էի լինում փորձերին, տեսնում էի Ավագ Պետրոսյանի քրտնաջան աշխատանքները:

Մտանքը, նրա բացատրությունները: Պարզապես նա հաճախ կատարում էր բենադրոդ-ռեժիսորի գործը, ձգտում, որ Արմեն Տիգրանյանի «Անուշը» ներկայացվի հայկական կոլորիտով ու բնավորությունների ազգային երանգներով:

- Մեր Անուշը հայոց լեռների դուստրն է, եւ պետք է ներկայացվի որպես հայուհի,- ասում էր նա համակող դիտողությամբ, եւ մարդիկ հասկանում էին նրան: Արդյունքում ստացվում էր այնպես, ինչպես պատկերացնում էր Ավագը:

Ամբողջ քաղաքը, առանձնապես հայ հանդիսատեսները սրտատրոփ սպասում էին «Անուշ» ներկայացմանը, որպեսզի տեսնեն Ավագի խաղը, լսեն նրա անզուգական ձայնը... Իսկ լրագրող հայ մտավորականների մի խումբ, որի հետ եւ ես, ցնծություն էինք ապրում Ավագի հաջողության համար:

Ավագը Սարոյի դերում առաջին հերթին իր յուրահատուկ տաղանդի շնորհիվ բենահարթակ էր մտնում հայ հովվի քայլվածքով, մասիսված շարժուձեւերով, եւ երբ սկսում էր երգել, դահլիճը թմրում էր բուռն ծափահարություններից: Նա մեծ հոգեբան էր բենում: Անուշի հետ հանդիպման ժամանակ, ուրախության ու տխրության պահերին ուսերն ու կոնքը խաղացնում էր այնպես, ասես նոր էր թողել մեր ավանդական «Քոչարին» եւ շտապել Անուշի մոտ:

«Անուշի» ներկայացման ժամանակ լինում էին գագաթնակետային այնպիսի պահեր, երբ դահլիճը ծափահարություններով խնդրում էր, որ կրկնվի այս կամ այն արիան: Առանձնապես հուզական-տեսիլքային մի պատկեր էր դառնում այն բարձրակետը, երբ Ավագը դիմում էր իր ցավակից սարերին: Խոսքը հնչում էր մեսրոպյան լեզվով: Մեզ՝ հայ ունկնդիրներին, թվում էր, թե Ավագի երգին հետեւում էին Մեծ Լոռեցին եւ Արմեն Տիգրանյանը: Դահլիճում ներկա հայուհիները նույնիսկ արտասվում էին՝ լսելով մեծ երգչի առինքնող ձայնը:

Շունչներս պահած, մտքի թելերով, հայոց լեռների գիրկը հասած՝ հետեւում էինք Ավագի՝ սիրտ թափանցող երգը, մինչեւ Սարո-Ավագն ամբողջ էությամբ երգի փոխված՝ ավարտում էր դիմում-խոսքը.

*Ա՛խ, կմեռնեմ՝ ամա նա
Վա՛յ թե հանկարծ իմանա,
Ես ազատվեմ էս ցավից,
Աչքը լալով նա մընա:*

Եվ թնդում էր դահլիճը, եւ Ավագը մի պահ հառնում էր որպէս Լոռվա սարերը խտացնող մի դյուցազուն, որն ասես գալիս է դարերի խորքից՝ հոգու մեջ վառած նորօրյա մի տենչ՝ ազատ սիրելու, երջանիկ ապրելու պահանջով:

Ներկայացման հաջորդ օրը նրան երկրպագող բաբվեցի հայ ունկնդիրներից շատերն այցելում էին Ավագին. յուրաքանչյուրն արտահայտելով իր գոհունակությունն ու ստացած գեղագիտական հաճույքի աստիճանը, ձգտում էր հյուրասիրել նրան: Իսկ Ավագը ազնվականական վերաբերմունքով արտահայտում էր իր շնորհակալությունը եւ հասկանում, որ ինքը պետք է պատրաստվի հաջորդ ներկայացմանը: Այդ ամենից հետո շարունակվում էր մեր զրույցը՝ թերթի հաջորդ համարներում տպագրելու համար: 1950-ական թվականներին Բաբվի օպերայի եւ բալետի թատրոնում ներկայացվում էր նաեւ Ուզեիր Յաջիբեկովի «Քյոռ-օղլի» օպերան: Կոնտակտային կապերի ծրագրով կրկին կենտրոնում Ավագ Պետրոսյանն էր: Նա պետք է մարմնավորեր օպերայի գլխավոր հերոսին՝ Քյոռ-օղլուն: Նորից նույն քրտնաթոր ջանքերը, արվեստագետի նույն պատասխանատվությունը՝ առաջին հերթին իր հանդեպ, հանդիսատեսի ջերմ ընդունելությանն արժանանալու ձգտումը, տվյալ դեպքում՝ հայկական թատերական արվեստի բարձր մակարդակի պահպանումը: Այստեղ կարելու եմ համարում ընդգծել Ավագ Պետրոսյանի բնավորության գծերից մեկը... Նա երբեք չէր շահարկում աստվածատուր իր տաղանդը, չէր բավարարվում ձեռք բերածով. «Երեկվա երգը երեկվանն է մնում,- ասում էր նա,- այսօրվանը պետք է ավելի կատարյալ լինի, այլապես զարգացումը կլճանա»: Այս միտումով էլ նա թեկուզեւ նույն ներկայացման նախօրյակին պատրաստվում էր իր դերակատարմանը՝ ինչպէս առաջին անգամ: Հենց դրա շնորհիվ ամեն նոր ներկայացման մեջ իր դերին ավելացնում էր մի նոր երանգ՝ հարստացնելով եւ իր արվեստը, եւ ներկայացումը:

Այդ մոտեցմամբ էլ նա պատրաստվեց Քյոռ-օղլու դերի մարմնավորմանը: Ցանկալի է այստեղ նշել Ավագ Պետրոսյանի մի մոտեցումը տվյալ դերի վերաբերյալ: Մի անգամ ասաց. «Քյոռ-օղլու դերը կատարում է հանրապետության ժողովրդական արտիստ Բյուլ-Բյուլը: Ես չպետք է կրկնեմ նրան, ընդհակառակը, պետք է մրցեմ Բյուլ-Բյուլի հետ»: Ես ներքին մի հպարտությամբ սեղմեցի

Մերա ծեռքը՝ արտահայտելով մեր օրինական բարձր կարծիքը հայ արվեստագետների անզուգական կարողությունների վերաբերյալ:

«Քյոռ-օղլի» օպերայի ներկայացումը Ավագ Պետրոսյանի մասնակցությամբ դարձավ մի նոր երեւոյթ խորհրդային մշակութային կյանքում: Այդ երեւոյթն արձագանք գտավ «Կոմունիստ» (հայերեն), «Կոմունիստ» (ադրբեջաներեն), «Բակինսկի ռաբոչի» եւ «Վիշկա» ռուսալեզու թերթերում: Ավագ Պետրոսյանը դարձավ այդ օրերի մշակութային հերոսը: Ի՞նչ երանգներով աչքի ընկավ Պետրոսյանի Քյոռ-օղլին: Սա մի հարց է, որի պատասխանը տարիների հեռվից նոր լույս կարող է սփռել ականավոր երգչի բազմակողմանի զարգացածության եւ իր ներքին հուզաշխարհի վրա:

Բերում են մեր այն գրույցը, որ մինչեւ հիմա նույնությամբ մնացել է իմ հիշողության մեջ:

- Ընկեր Պետրոսյան,- մի անգամ դիմեցի նրան ներկայացման հաջորդ օրը,- ի՞նչ վերաբերմունք ունեք Քյոռ-օղլու մասին ստեղծված ժողովրդական ավանդավեպին: Վերջապես ի՞նչ ծագում ունի Քյոռ-օղլին, ազգությամբ ո՞վ է նա...

Մաստորոն երեւի չէր սպասում նման հարցի: Նա այդ ծեռքը տարավ դեպի ճակատը, ցուցամատը դրեց քունքին, քիչ խորհեց ու պատասխանեց.

- Քյոռ-օղլուն չի կարելի անձնավորել որեւէ կոնկրետ ազգի պատկանելությամբ: Նման մոտեցումն անիմաստ է: Ասեմք, ադրբեջանցի որոշ ֆուլկլորագետներ պնդում են, որ նա իրենց ժողովրդի զավակներից է: Այդ կարծիքը կարելի է ժխտել երկու կռվանով: Նախ՝ 16-17-րդ դարերում ադրբեջանական ժողովուրդը հասկացություն չի եղել, եւ երկրորդ՝ Քյոռ-օղլին պետք է ներկայացվի որպես Արեւելքի բոլոր ժողովուրդների սոցիալական բողոքի մարմնացում: Իհարկե, 17-րդ դարի պատմագիր Առաքել Դավրիժեցին նշում է Քյոռ-օղլու անունը: Նա պատմական անձնավորություն է, որ կազմակերպել է ժողովրդի ապստամբությունը դաժան ու ազահ խաների դեմ: Սակայն չպետք է մոռանալ, որ պատմական Քյոռ-օղլին հետագայում մտել է արեւելյան աշուղական արվեստի մեջ որպես նախատիպ՝ դառնալով բոլոր ժողովուրդների սոցիալական բողոքի կրողը:

Նա քիչ լռելուց հետո շարունակեց.

- Հայ աշուղների ստեղծած ավանդապատումների մեջ Քյոռ-օղ-

լին ներկայացվում է որպես հայ: Եվ դա բնական է, որովհետև մեր աշուղները եղել են մեր տառապյալ ժողովրդի առաքյալները հզորների չար աշխարհում: Հայտնի է, չէ՞, Ղազարոս Աղայանի երգաշարը Քյոռ-օղլու մասին, եւ ինքն էլ Քյոռ-օղլու ռոմանտիկ հասակը եւ ուժն է ունեցել: Ինչպե՞ս վարվել: Վիճաբաններ Արեւելքի եւ Միջին Ասիայի ֆոլկլորագետների հետ եւ պնդենք, որ նրանք իրավո՞ւնք չունեն մեր հայ Քյոռ-օղլուն իրենցը համարելու: Նման մոտեցումը ճիշտ չէր լինի: Արեւելքի բոլոր աշխատավոր ժողովուրդներն անցել են նույն ֆորմացիաների միջով, կրել են սոցիալական նույն ծանրությունը, մաքառել անմարդկային դաժանությունների դեմ: Ես այսպես եմ դատում: Այդ միտումով էլ ես կատարում եմ Քյոռ-օղլու դերը: Երբ բեմ եմ բարձրանում եւ մարմնավորում Քյոռ-օղլուն ադրբեջանցի արտիստների հետ, որոնք երգում են ադրբեջաներեն, ես ինձ պատկերացնում եմ որպես Արեւելքից ժամանած մի հերոս, որ այցելել է՝ օգնելու հալածված աշխատավորական մասսաներին: Այս մոտեցումն էլ ինձ ավելի է համակում ժողովրդասիրության ազնիվ զգացումով, որն էլ նպաստում է իմ հաջողությանը:

Ես լսում եմ նրան եւ կրկին ապրում մի ջերմացնող զգացում եւ Ավագ Պետրոսյանի հանդեպ, եւ այդ օրերին Բաքվում եւ նրա շրջաններում հանդես եկող այնպիսի աստղերի, որոնցից էին Տաթևիկ Սազանդարյանը, Միհրան Երկաթը, Արշավիր Կարապետյանը եւ ուրիշներ: Իսկ Ավագ Պետրոսյանը իր գրույցով հաստատում էր այն ճշմարտությունը, որ ժողովրդականություն վայելող արվեստագետը պետք է բառի բուն իմաստով լինի արվեստի մարդ, պատմության իմացությամբ աչքի ընկնող մտավորական:

Ավագ Պետրոսյանի հետ ունեցած այս գրույցի ընթացքում, այնուամենայնիվ, ես չթաքցրի բանաստեղծ-լրագրողի իմ հետաքրքրությունը՝ կրկին դիմելով նրան.

- Ընկեր Պետրոսյան, Քյոռ-օղլու դերը մարմնավորելիս բեմում ի՞նչ մտորումներ եք ունենում եւ ինչպե՞ս եք զգում Ձեզ:

Նա լեռնականի ազնվությամբ ժպտաց ու պատասխանեց.

- Բեմում թվում է, թե իմ մեջ զգում եմ Առյուծածեւ Միերի ու Սասունցի Դավթի ուժն ու ժողովրդի պաշտպանության հրամայականով հնչող ձայնը: Չթաքցնեմ, երբ ձիով բեմ եմ մտնում, մի պահ ինձ թվում է, թե բազմած եմ ոչ թե Քյոռ-օղլու նտյոգին, այլ Քուռ-

կիկ-Ջալալուն: Իմ մեջ միշտ խոսում է մեր ժողովրդի ճակատագիրն ու մեր դյուցազունների արդար պայքարի օրինակն ու դասը:

* * *

1957 թվականի հունիսի 15-ից մինչև հուլիսի 15-ը Բաքվի հայ հանդիսատեսները գեղարվեստական մեծ բավականություն ստացան Երեւանի Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնի ներկայացումներից: Սունդուկյանցիները ցույց տվեցին իսպանական դրամատուրգ Ս. Կաստնայի «Ծառերը կանգնած են մահանում», հարավսլավական դրամատուրգ Բ. Նուշիչի «Փիլիսոփայության դոկտոր», Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ», Զ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», Վ. Փափազյանի «ժայռ», Ալ. Շիրվանզադեի «Նամուս» բեմադրությունները: Քաղաքի հայ հասարակությունը մեծագույն հաճությամբ բեմի վրա տեսավ սիրված արտիստներ Զ. Ներսիսյանին, Օ. Գուլազյանին, Ա. Ավետիսյանին, Դ. Սալյանին, Գ. Ջանիբեկյանին, Մ. Սիմոնյանին եւ ուրիշների եւ ստացավ գեղարգիտական մեծ հաճույք: Հանդիսատեսները կրկին հիացան հռչակավոր ռեժիսոր-բեմադրող Վ. Աճեմյանի անզուգական վարպետությամբ: Ուշադրության կենտրոնում էր նաեւ Ն. Ջարյանի «Փորձադաշտ» կատակերգության բեմադրությունը, որտեղ գլխավոր դերերում հանդես էին գալիս Զ. Ներսիսյանն ու Ա. Ավետիսյանը:

Բաքվի հայ հասարակայնությունը միշտ սպասում էր Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի ու բալետի թատրոնի հանրաճանաչ կոլեկտիվին: Մինչև օպերայի կոլեկտիվի 1962-ի այցելությունը Բաքվում 1961-ին տեղի էր ունեցել աշուղների երրորդ համագումարը, որին մասնակցելու համար հրավիրվել էր ականավոր գուսան Հավասին՝ իր խմբի հետ: Երկու օր տևած համագումարի ընթացքում Հավասին երկու համերգ տվեց Արմենիքենդի (Հայկավան) մշակույթի տանը եւ քաղաքի մամուլի տան մեծ դահլիճում: Երբ նրան հարցրին, թե ինչով են տարբերվում հայ աշուղներն ադրբեջանցի աշուղներից, նա որոշակի հուճուրդ պատասխանեց. «Ադրբեջանցի աշուղները զարգացման հեռանկար չունեն, որովհետեւ ըստ ավանդույթի՝ նրանք բավարարվում են գոյություն ունեցող 70 պատրաստ եղանակի գոյությամբ: Նրանք հորինում են բանաստեղծությունը, հարմարեցնում պատրաստ եղանակին եւ

երգում: Իսկ հայ գուսաններն իրենք գրում են բնագիրը, նվագում ու երգում: Այդպես է եղել ի վերուստ: Այլապես չէինք ունենա Սայաթ-Նովա, Ջիվանի»: Կոմստանտին անունով շամախեցի երիտասարդ աշուղը տեղից բացականչեց. «Նաեւ գուսան Չավասի»: Դահլիճը մեկեն թնդաց բուռն ծափահարություններից, ու ոգելորված Չավասին իր երիտասարդ կնոջ հետ կատարեց իր ախորժաւուր երգերի մի փունջ:

* * *

1962-ի ամռանը սպենդիարյանցիները կրկին Բաքվում էին, նորից հայաշատ քաղաքի մշակութային օջախներում: Ավագ Պետրոսյանի սրտապարար ծայրն էր հնչում ու հմայում ազգային երգի կարոտ հայությանը: Ես, որ ժողովրդական ու գուսանական երգի սիրահար եմ եւ սրնգի ու ժողովրդական երաժշտության տարբեր գործիքներով կատարում եմ հանրահայտ մեղեդիներ, միշտ ձգտում էի ունկնդրել իմ պաշտելի երգչին: Համերգների վերջում, հնարավորության սահմաններում, զրուցում էի հետը, առանձնապես՝ հայ արվեստի մասին:

Մի անգամ հիշեցի գուսան Չավասու խոսքը եւ Ավագ Պետրոսյանին պատմեցի այդ մասին: Սաեւտրոն ժպտաց եւ հաստատեց. «Չավասին լուրջ գուսան է, նրա երգը կապրի մշտապես»: Մի քիչ լռեց եւ ներքին մի շիկացումով շարունակեց. «Սայաթ-Նովան հրաշք է, անկրկնելի է... դարավոր մեր գուսանական արվեստը եկավ ու ծովացավ Սայաթ-Նովայի հոգում, ծովացավ-գուլավեց, դարձավ մեր ժողովրդի հոգու կարկաչող աղբյուրը, որ դարերի հոլովությամբ հագեցնի սերունդների ծարավը...»:

Լսում էի նրան, ու թվում էր, թե նա գալիս է դարերի խորքից՝ հոգու մեջ առած ոչ միայն ժողովրդի ապրեցնող երգը, այլեւ իմաստությունն ու լավատեսությունը: Եվ դա անսպասելի չէր... Ախր, նա լեռների ծնունդ էր, լեռների պես աստղագնա...

1962-ին էր, որ Ավագ Պետրոսյանն արժանացավ Ադրբեջանական ԽՍՀ ժողովրդական արտիստի կոչման: Բաքվի բոլոր թերթերը բարձր գնահատեցին այդ երեւոյթը:

Այդ օրերին հանդիպեցի նրան մի համերգից հետո: Ջրուցեցինք: Մինչեւ այդ մի մենահամերգով Բաքվի օպերայի եւ բալետի

Քատրոնում հանդես էր եկել Ադրբեջանի եւ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, հանրահայտ երգիչ Բյուլ-Բյուլը: Չեմ շրջանցում, նա, իրոք, ընդունված երգիչ ու արտիստ էր, որին լավ զիտեր եւ ընդունում էր Ավագ Պետրոսյանը: Ահա այդ գրույցի ժամանակ ես պատմեցի Բյուլ-Բյուլի մենահամերգի մասին, որին ներկա եմ եղել որպես լրագրող: Ինձ շատ էր հուզել մի հանգամանք՝ կապված ադրբեջանցի երգչի երգացանկի հետ:

- Ընկեր Պետրոսյան,- դիմեցի մեծ երգչին,- ի՞նչ կարծիք ունեք այն երեւոյթի մասին, երբ որեւէ ազգային երգիչ կատարում է հարեւան ժողովրդի ստեղծագործությունը՝ բնագիրը հարմարեցրած իրենց մայրենի լեզվին, ընդգծելով, որ դա իրենցն է:

- Ի՞նչը նկատի ունեք,- լրջորեն հարցրեց մաստրոն:

- Բյուլ-Բյուլի մասին է խոսքը,- պատասխանեցի ես,- հենց այդ երեկոյի ժամանակ նա կատարեց մեր հայկական երգերից մի քանիսը՝ ադրբեջաներեն տեքստերով՝ հայտարարելով, որ դրանք ադրբեջանական են:

- Օրինակ՝ ո՞ր երգերը,- հարցնում է Ավագ Պետրոսյանը:

Ես երգերի առաջին տողերը բերելով՝ պատասխանեցի.

- «Ափսոս, որ այս գիշեր երկինքը ամպել ա», ապա շարունակեցի՝ «Բոյիդ, բուսիդ մատաղ, մարալ, մարալ...»: Այնուհետեւ համարյա լրիվ բերեցի «Սարի գյալին» («Սարի աղջիկ») երգը: Այնուհետեւ խոսեցի այն մասին, որ չգիտես ում հորինած ադրբեջաներեն խոսքերով, Բյուլ-Բյուլը կատարեց Կոմիտասի գրի առած մի շարք երգեր՝ որպես իրենց ազգաշեն երգեր:

Ավագ Պետրոսյանը մի պահ խորհեց եւ ասաց. «Մենք, այո, թուրքերի հետ հարեւաններ ենք, ոչ ոք չի կարող ժխտել: Բացի այդ, որ հարեւան ժողովուրդները կարող են սովորել միմյանցից եւ նույնիսկ տեղի տալ փոխառություններին՝ դա եւս օրինական է: Բայց անթույլատրելի եւ անօրեն է, երբ ձգտում են սեփականել հարեւանի արվեստը:

Չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր ժողովրդական երգ ունի ազգային ցայտուն դիմագիծ: Մեր ժողովրդական երգի արմատները խրված են դարերի խորքում, ունեն ազգային երանգ, ազգային ոճ եւ լեզու, նրանք առանձնանում են իրենց կառուցվածքով,

մեղեդու եւ ռիթմի, խոսքային եւ երաժշտական բարեմասնությունների բազմազանությամբ ու ինքնատիպությամբ:

Նույնիսկ մեր այն աշուղները, որ թուրքերեն են հորինել շատ երգեր, նրանցում եւս առկա են հայկական ազգային երգարվեստի նրբերանգները: Այնպես որ, ինչքան էլ ձգտեն յուրացնել մեր երգերը, երբեք չի հաջողվի նրանց: Տվյալ դեպքում անընդունելի է Բյուլ-Բյուլի վերաբերմունքը: Մենք ունենք մեր երգը, թուրքերը՝ իրենցը: Ամեն մի արվեստագետ պետք է տեր կանգնի իր ժողովրդի ստեղծածին, հակառակ դեպքում նա կորակվի որպես երգագող»:

Մինչեւ հիմա իմ հոգու խորքում հնչում է նրա այս արդարացի եւ ուսանելի խոսքը:

Տարիներ են անցել, երբեք չեմ մոռացել անվանի երգչի դայլայլող ձայնն ու ուսանելի զրույցները մեր երգարվեստի ու բեմարվեստի, մեր ժողովրդի հոգու գեղեցկության եւ արարող տաղանդի մասին:

Իսկ երբ երգում էր Ավագ Պետրոսյանը, զգում էի, որ երգում է նրա սիրտը՝ ժողովրդի սիրով - ժողովրդի համար:

Դեկտեմբեր, 2009 թ.

ՀՐԱՇՔՆԵՐԸ ԾՆՎՈՒՄ ԵՆ ԱԶԳԱՅԻՆ ՈԳՈՒՑ

Մեսրոպյան գրերի 1600-ամյա փառաբանման տեսակներն ու միջոցները հայ ժողովրդի դժվարին ու պսակավոր պատմության վկայություններն են: Դրանք սերունդներին թեւավորող եւ ուղեկցող իրենց ուժով հասել են մերօրյա ընթացքին՝ մեկ դարձած շարական ու տաղ, մեկ՝ պոեմ ու վիպերգ, մեկ թեւածող խաչքար, մեկ էլ՝ այբուբենված հավերժախոս հուշարձան: Դարերի ընթացքում մեր ժողովրդի արարող մտքի սերուցք հանդիսացող գավակները մեսրոպյան գրերին հաղորդել են իրենց հոգու գույներն ու սրտի թիթեռները, երազներն ու ակնկալիքները՝ դրանք համարելով հարատեւման զինվորյալներ եւ իմաստության առհավատչյաներ:

Այդպես, մեր պատմության խաչմերուկներում յուրաքանչյուր սերունդ արտահայտել է հպարտության ու երախտագիտության իր զգացումները՝ ժողովրդի հավերժության առեղծվածների բանալին արարող Մեծն Մաշտոցի հանդեպ: 2005-ը հանդիսանում է հայոց համաժողովրդական հանդիսությունների մի նոր պսակադրում՝ հայոց այբուբենին, որոնց ծնունդով ապահովվեց Մաշտոց ծնող ժողովրդի շքերթը՝ ի հեճուկս բոլոր գույնի ոսոխների եւ չարականների: Ահա, այս մտորումներն ու խոհերն են համակում քեզ, երբ այցելում ես Արցախի պետական համալսարան, բարձրանում երկրորդ հարկ եւ կանգ առնում մի հրաշքի առջեւ, որի հեղինակը *Ստեփան Վաղարշակի Դադայանն է*: Այդ հրաշակերտ կոթողի ծնունդը եւ բնական է, եւ զարմանալի: Բնական է, որովհետեւ հայ մարդու վարպետության աստիճանը հաստված է ի վերուստ՝ Արարչի ձեռամբ: Չարմանալի է այն առումով, որ այն ստեղծել է մի քանի մենագրությունների հեղինակ՝ պատմաբան-պրոֆեսորը, գիտնական-մանկավարժը, բուհի պրոռեկտորը իր ամենօրյա լարված աշխատանքից հետո: Հիրավի, զարմանք եւ հիացմունք հարուցող մի հուշարձան, որ կարող է զարդարել քաղաքակիրթ աշխարհի ուզածո թանգարան: Արվեստի աշխարհում ստեղծագործական առաջին աստիճանը մտահղացումն է: Ստեփան Վաղարշակին իր մտահղացման դռները բացել է «Հայոց գրերը» խոսուն վերտառությամբ՝ Մաշտոցյան յուրաքանչյուր տառը համարելով հայոց մանրաքանդակի եւ մանրանկարչության մի ամբողջություն: Հենց այս բովանդակալից գնահատմամբ նա ձեռնամուխ է եղել

երեք մեծադիր կոթողների արարմանը, որոնք եւթամբ ի ցույց են դնում հայ ժողովրդի 1600-ամյա ուղին՝ ներարկված Մեսրոպյան ոգու հողեղենված փիլիսոփայությամբ:

Սոտենալով կոթողներին, որպես այցելու, ասես ճանապարհորդում ես 405-2005 թվականները եզրագծող մեր պատմության միջով: Առաջին պլանի վրա 2 մետր բարձրությամբ եւ 90 սմ լայնությամբ կոթողն է՝ կերտված արցախյան 500-ամյա ընկուզեմու փայտյա հարթակից: Կենտրոնում Մեսրոպ Մաշտոցի դիմաքանդակն է, որի հարդարմանը մասնակցել է երիտասարդ նկարիչ Համլետ Ջիվանյանը: Ներքեւում փորագրված «եղիցի լոյս եւ եղեւ լոյս», ապա՝ «Ս.Էջմիածնի, Ամարասի, Բագրեւանդի, Դերջանի, Սիւնեաց, Շատգոմքի վարդապետարաններ» նախադասությունը, որում նշված են այն բնակավայրերը, որտեղ դպրոցներ է հիմնադրել մեր Առաջին ուսուցիչը: Մաշտոցի դիմապատկերի շուրջ՝ կամարածեւ փորագրված է տողերիս հեղինակի պոետական խոսքը՝ «Դու հարատեւման ջահակիրը մեր, հանճարեղ դպիր, Ով Մեծն Մաշտոց, Քո սուրբ գրերով փրկել ես հավետ երկիրը հայոց»:

Խոնարհվելով Սուրբ Մաշտոցի դիմաքանդակի առջեւ, սրբագործված մի նոր, ջերմ զգացումով, թեքվում ես աջ եւ արձանանում երկրորդ կոթողի դեմ-դիմաց, որ հառնած է 2,3 մետր բարձրությամբ, 90 սմ լայնությամբ: Այն ներկայացնում է Մաշտոցյան այբուբենը՝ անբողջությամբ, երկաթագիր տառատեսակով: Ընդգծված է մեր ժողովրդի այբուբենված ճանապարհի եւթյունը: Կոթողի վերեւից, առանձին փորագրված է Հայոց դպրության ազգապահպան ուժի խորհրդանիշ **«Է»-ն**: Այբուբենի յուրաքանչյուր տառ աստվածային պատկերով մի պահ քեզ հաղորդակից է դարձնում 16 հարյուրամյակների ընթացքում ստեղծված մագաղաթյա մատյաններին ու երկերին, որ սերունդներին են հանձնել մեր պատմահայր Մ.Խորենացին ու Գ.Նարեկացին, Խ.Աբովյանն ու Հ.Թումանյանը, Ե.Չարենցն ու Պ.Սեւակը եւ մյուս հանճարները: Այդ այբուբենով տիեզերքի լեզուն են ընթերցել Դ.Անհաղթն ու Ա.Շիրակացին, Մ.Հերացին ու Վ.Համբարձումյանը եւ այլք՝ իրենց երկերը կտակելով նոր սերունդներին: Մեր զորավոր այբուբենի շուրջ այդ կոթողում դարձյալ փորագրված է իմ տրամադրած խոսքը՝ «Քրիստոսի լույսով օծված կանթեղն եք մեր, հոգին ու լեզուն հավատի, մեսրոպածին հայոց գրեր, դեպի դարեր տանող ճամփին»:

ՔԱՆՊԱԿԱԳՊՐԾՊԻՊՑՊԻՆ

Վանցագիրն եք ու թուրը մեր հաղթանակի»:

Այբուբենի վերելուն փորագրված է **ՄԵ**, որ նշանակում է 405, իսկ կոթողի հիմնամասում ծաղկազարդ 15 շրջանակներ են՝ Մեծ Հայքի 15 նահանգների խորհրդանիշերը, որոնցից 10-րդը Արցախն է՝ քանդակագործ Ս.Բաղդասարյանի «Մենք ենք, մեր սարերը»՝ հուշարձանի վերարտադրմամբ:

Հրաշքի երկրորդ մասից անցնում են երրորդին՝ 2 մ. բարձրությամբ, 90 սմ լայնությամբ: Այն նվիրված է Հայոց եկեղեցուն: Փորագրված է սրբազան խաչը՝ վերելից օղակված զարդաքանդակով, որպես հավերժական գահի խորհրդանիշ, իսկ խաչի երկու կողմերից՝ կյանքի ծառերն են: Խաչի ամբողջական պատկերը հայոց լեզվի մաքրության առհավատչյան է, որի ակունքներին միշտ հովանի ու զորավիզ է եղել վահանված հայոց առաքելական եկեղեցին: Խաչի չորս բուրբուխները հանրապետությանն են, «Տիրոջ սուրբ աջի ու փրկարար խաչի զորությամբ, սրբատուն մեր հնամյա, հառնեց քեզնով լեզուն հայոց ու դպրոցը լուսեղեն»:

Ս.Դադայանը, որ տասնյակ փայտյա հուշաքանդակի հեղինակ է, եւ որոնցից մի քանիսը արդեն առաքված են Սփյուռք, իր այս քանդակով մի նոր երանգ ավելացրեց ոչ միայն սեփական, այլև հայկական հուշակոթողների արվեստի մեջ: Ի դեպ, Ս.Դադայանը 1995թ. «Սկահակ» եւ «Վահան» քանդակների համար արժանացել է ԼՂՀ նախարարների խորհրդի Եղիշեի անվան ամենամյա մրցանակի:

Իր այս նոր քանդակում հմուտ վարպետը մեսրոպյան գրերի արժեքի գաղափարը ներդաշնակել է հայ մանրաքանդակների եւ մանրանկարչության արվեստին՝ հավատարիմ մնալով մեր դարավոր մշակույթի հարուստ ավանդույթներին:

Հիրավի, դա հրաշակերտ մի կոթող է՝ հառնած հիերոգլիֆային, սեպագրային գրությունները, արամեական եւ հին հունական գրերը պատկերող պատվանդանի վրա:

Ս.Դադայանի «Հայոց գրերը» հուշակոթողը ոչ միայն արվեստի հրաշագործություն է, այլև այբուբենված հայրենիքը պաշտպանելու, աշխարհի հետ մեր քաջ պապերի լեզվով խոսելու, մեր պետության եւ եկեղեցու շուրջը միաբանվելու, մեր ազգային դիմագիծը պահպանելու վեհաշուք մի ազդակ:

ՆԱ ԱՊՐՈՒՄ ԷՐ ԱՐՑԱԽՈՎ

Սույն թվականի հուլիսի 4-ին Հայաստանի ազգային հեռուստատեսությունը հաղորդեց, որ ԱՄՆ-ում 78 տարեկան հասակում իր մահկանացուն է կնքել սփյուռքահայ անվանի գրող, հասարակական-քաղաքական գործիչ, գրականագետ, մանկավարժ Վահե Օշականը: Հայ մշակույթի այդ անխոնջ ներկայացուցչի մահը մեծ կորուստ է աշխարհասփյուռ հայության, ինչպես նաև արցախցիներիս համար:

Վահե Օշականը հոգու ամենաազնիվ թելերով կապված էր Արցախի հետ՝ թե՛ ստեղծագործական եւ թե՛ կոնկրետ օգնությամբ: Արցախյան ազգային-ազատագրական պայքարի հենց սկզբից նա երազել է գալ եւ մոտիկից իր նպաստը բերել արցախցիների գոյամարտին այն ամենով, ինչով կարող էր: Իսկ նա մշակույթի մարդ էր, ուստի ցանկություն հայտնեց գրականագետ-մանկավարժի իր հարուստ փորձով առաջին հերթին օգնել Արցախի պետական համալսարանին եւ Ստեփանակերտի դպրոցներին: Եվ նա 1993-ից 3 ամսանոց անընդմեջ Արցախ: Առաջին այցելության ժամանակ նա իր հետ բերել էր բավականին գրականություն, հանդիպումներ ունեցել ԼՂՀ գրողների միության անդամների հետ, դասավանդել ԱրՊՀ՝ բանասիրական ֆակուլտետում: Չնայած պատկառելի տարիքին, նա իր ընտրած գործի առաջին գծում էր...

Վահե Հակոբի Օշականը ծնվել է Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում, 1922թ.: Նրա հայրը հանրահայտ գրող Հակոբ Օշականն է: 1923թ. ընտանիքը տեղափոխվում է Կիպրոս: 1926թ. մինչեւ 1934թ. նախակրթությունն ստանում է Մելքոնյան վարժարանում: 1935թ. բնակություն է հաստատում Երուսաղեմում: Այնտեղ ընդունվում է անգլիական բուհի հայկական բաժին եւ ավարտում 1940-ին: 1946թ. ընդունվել է Սորբոնի համալսարանը եւ ավարտել 1951-ին: 1952թ. Օշականների ընտանիքը տեղափոխվում է Բեյրութ: 1967-ին Վ. Օշականը պաշտպանում է ատենախոսություն՝ «Արեւմտահայ վեպը 1850-1930թթ. եւ նրա կրած ազդեցությունները» թեմայով, արժանանում բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին: 1993թ. ընտանիքով տեղափոխվում է Ավստրալիա, պաշտոնավարում Սիդնեյ քաղաքի նորաբաց վարժարանում, որի տնօրենը իր կինն էր՝ Արսինեն:

Վ. Օշականի գործունեությունը բարձր է գնահատվել: Նա Գեորգ Մելիտինյանի Փարիզի Գավաթյանի գրական մրցանակի,

Չայաստանի գրողների միության Յ. Թումանյանի անվան մրցանակների դափնեկիր է: 1999թ. Չայաստանի կառավարության անունից պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

Վ. Օշականը 1997-ից Արցախի գրողների միության անդամ է: Նա ավելի քան 10 բանաստեղծական եւ արձակ ժողովածուների հեղինակ է: 1996, 1998թթ. մեկանայա ժամկետով Արցախի պետհամալսարանում դասավանդել է «Արեւմտահայ գրականության պատմություն» եւ «Սփյուռքահայ գրականություն» առարկաները:

1998-ին նա Արցախ է ժամանել կրտսեր որդու հետ, որը լրագրող-նկարիչ է: Չայր ու որդի կազմել են գունավոր ալբոմ՝ Արցախի պատմության եւ առօրյա կյանքի մոտիվներով:

Վ. Օշականը որդիական կարոտով ու տագնապով էր վերաբերվում Արցախին: Այդ են վկայում նրա բազմաթիվ նամակները: Ստորեւ բերում ենք նրա նամակներից մեկը՝ հղած Ավստրալիայից:

Սիրելի արն Խանեան

Իմ շատ յարգելի բարեկամիս Վերապատուելի Գրիգոր Եունուսաքեանին Ղարաբաղ այցելութենէն կօգտուիմ ձեզ նամակ մը գրելու, ինչպէս եւ երեսունէ աւելի Անգլիական գրականութեան գլուխգործոցներէն ղրկելու ձեր համալսարանի մատենադարանին: Գիտեմ, որ անգլիական բաժինը բաւարար գիրք չունի արդի երիտասարդ մտաւորականի մը կրթութեան համար: Չայերէնը սակայն ունիք, գոնէ Արեւելահայ գրականութեան գիրքերէն: Այս Աւստրալիան այնքան բոպիկ է ոչ անգլիական գրական գործերու տեսակէտէն, որ անկարելի եղաւ Ֆրանսերէն ղրկել: Իսկ Արեւմտահայ գրականութեան հատորները հոս չկան: Չարուստ ու բաւական մեծ գաղութ է մեր Աւստրալիան, սակայն մշակոյթի կողմէն նախանձելի ոչինչ ունի, բացի իր հոյակապ վարժարանէն, որուն նմանը հայաշխարհի մէջ գոյութիւն չունի: Կակնարկեմ միայն դպրոցի շէնքերու համալիրին խաղավայրերուն, մարզադաշտերուն, թատերասրահին, հողին տարածութեան ու դասարաններու արդիական կառոյցին: Մենք հոս եկանք երեք տարուայ համար, մնացինք վեց տարի, եւ հիմա կը պատրաստուինք մեկնիլ ետ Միացեալ Նահանգները: Մէկ ամիսէն...: Տխրութիւն մը կը կրճէ մեր սիրտը, անշուշտ, ամէն բաժանում քիչ մը մեռնիլ է, կըսեն ֆրանսացիք, ու վեց տարուայ բարեկամութիւններ պիտի կտրուին: Կայ տակաւին մեր բոլորովին անստոյգ ապագան գործի իմաստով, որովհետեւ դեռ ապրուստի կայուն մի-

Չոց չունինք Միացեալ Նահանգներուն մէջ: Աստուծոյ մեծութեան կը վստահինք: Սակայն կացութեան վարդազոյն կողմն ալ կայ- ետ կ'երթանք մեր ընտանեկան պարագաներու մտերմութեան, ու ետ հայ կեանքի կեդրոններուն մէջ, բան մը որմէ զրկուած ապրած են վերջին տարիներուն: Արսիւնէն, անշուշտ, նոր գործ պիտի գտնէ, ես ալ՝ եթէ տարիքս իմ դեմ չ'աշխատի: Ամերիկան միայն ու միշտ երիտասարդ ուժերու կը վստահի ու յիսունը անց՝ մարդիկ հանգստեան վայրի մը ու թօշակի մը երագով կ'ապրին:

Այլապէս լաւ է մեր կեանքը: Կը գրեմ, սակայն նոր գործ հրատարակելու միջոցը չունիմ տակաւին: Անցնող տարին հօրս մահուան յիսնամեակի ոգեկոչումներու հանդէսներու հարցին տուի ժամանակս, աշխարհի չորս կողմերը գրելով այդ մասին: Սակայն դիւրին բան չէ- սերունդներն ու գրական հետաքրքրութիւններն ու ճաշակը փոխուած են 1948 էն ի վեր, ու հակառակ որ հօրս գործը անմահ է որքան հայութիւնը կ'ապրի՝ մարդիկ կը դժկամին լուրջ հարցերու ժամանակ տալ: Հայաստան գրած են Աբգար Ափինեանին, սակայն գիտեմ, որ Օշականի շուրջ դեռ վերապահութիւններ եւ արմատացած կեցուածքներ կան հին սերունդին մէջ մանաւանդ, եւ որ արգելք են ամէն լուրջ աշխատանքի: Գանատա պիտի տօնուի Յունիսին իմ ներկայութեանս, Նիու Եորք ալ, Պէյրութ եւ Հալէպ ալ: Թերթերու մէջ բաւական բան գրուցեալ արդէն, ու յոյս ունիմ վերահրատարակութիւններ հրապարակ հանել Պօղոս Սնապեանին հետ գործակցաբար:

Ղարաբաղը նորէն ու միշտ լուրերուն մէջ է: Սակայն յստակ չէ, թէ Հայաստանի հետ միացումի հարցը ուր մնաց: Վստահ եմ, որ փոխուած պիտի գտնեն երկիրը՝ եթէ ու երբ գամ նորէն: Այս յոյսը, անմար կանթեղի մը նման, վառ կը մնայ մէջս: Դժբախտաբար ոչ հեռաձայնը, ոչ ալ հաղորդակցութեան բնական միջոցներ գոյութիւն ունին տակաւին: Մինչեւ ե՞րբ պիտի տեսէ այս անբնական կացութիւնը: Ձեզի շատոնց գրած կ'ըլլայի եթէ ճամբարները բաց ըլլային: Այս 33 գիրքերը, որ համալսարանին կը դրկեն, ամիսներ առաջ գնած են, սակայն ճամբորդի կը սպասեն որ գան: Նոյնպէս ուրիշ գրքեր, դեղեր, գոյքեր եւ այլն: Սպասենք եւ յուսանք...

Բարեւներս համալսարանի իմ պաշտօնակիցներուս, որոնց յիշատակը քաղցր կարօտի մը զգացումը կ'արթնցնէ մէջս: Աստուած լոյս ու կեանք տայ ինծի՝ նորէն կու գամ:

*Սիրով ու կարոտով՝ ՎԱՅԷ ՕՇԱԿԱՆ
24 ապրիլ, 1998, Քիլլարա*

ՀԱՅՐԵՆԱԿԵՐՏՈՒՄԻ ՎԱՍՏԱԿ

1998-ի ապրիլի 20-ից մինչև 24-ը Արցախի պետական համալսարանի հրավերով Ստեփանակերտում էր գտնվում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Անթիլիասի կաթողիկոսարանի մեջ «Խաչեր Գալուստյան» մանկավարժական կազմավորման կենտրոնի վարիչ Գրիգոր Ղուկասի Ծահինյանը: Անվանի գիտնական-մանկավարժի հետ զրույց ունեցավ Արցախի պետական համալսարանի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սոկրատ Խանյանը: Ստորել բերում ենք այդ հարցազրույցը:

-Պարոն Ծահինյան, երկրորդ տարին է, ինչ ժամանում եք Արցախ, դասախոսություններով օգնում տեղի պետական համալսարանի հումանիտար ֆակուլտետի բանասիրական բաժնի ուսանողներին: Ի՞նչն է մղում Ձեզ այդ պատկառելի տարիքում գալ Արցախ:

-Ես մտածում եմ, որ ամեն մի հայ մարդու պարտականությունն է իր կարողության սահմաններում օժանդակել հայրենակերտումի այն աշխատանքին, որ կկատարվի Արցախի դարավոր հողի վրա: Ես ուսուցիչ մարդ եմ, եւ իմ մարզի մեջ ուսուցչությամբ կարող եմ նպաստել այս աշխատանքին: Կան նաեւ ավելի եսասեր պատճառներ: Ինձ համար խոր հաճույք է գտնվել այստեղ, շփվել ինձ պաշտոնակից դասախոսների հետ եւ դասախոսել Արցախի ուսանողների համար:

Ուսուցումն իմ կյանքի իմաստն է, այնպես որ պիտի շնորհակալ լինեմ Արցախի պետհամալսարանի ռեկտոր Պավել Գեւորգյանին եւ հայոց լեզվի եւ գրականության ամբիոնին, որ ինձ հնարավորություն ընձեռեցին ազգային պարտականությունս կատարելու եւ հոգեկան խոր բավարարվածություն զգալու: Շնորհակալ եմ նաեւ ուսանող-ուսանողուհիներին, որոնք ներշնչող ունկնդրությամբ, հարցումներով, կարծիքների փոխանակումով կենդանացրին մեր դասաժամերը եւ արհեստավարժական վայելք պարգեւեցին ինձ:

Անցյալ ուսումնական տարում ես հանդես եկա «Եղիշե Չարենցը եւ Նիկոլ Աղբալյանը», «Լեւոն Շանթ» եւ «Գրականության դա-

«սավանդման մեթոդի առաջարկ» թեմաներով: Սովորողները ցանկություն հայտնեցին լսել սփյուռքահայ գրականության ականավոր ներկայացուցիչների մասին: Ես պարտավորվեցի այս տարի կատարել այդ լրացումը: Եվ ահա բախտ վիճակվեց կրկին լինելու Արցախում: Իմ աշխատանքային պլանի մեջ մտցրել եմ «Նիկողոս Սարաֆյան» (Փարիզ), «Վահե Օշական» (Լոս Անջելես), «Գրիգոր Բլդյան» (Փարիզ) եւ «Երիտասարդ արձակագիրներ՝ Իշխան Ջինբաշյան եւ Վահե Բերբերյան» (Լոս Անջելես) թեմաները: Հիմնական նպատակս է՝ վերլուծել վերոհիշյալ երկերի հատկանշական էջերը, որոնց պատճենահանումները բերել եմ ինձ հետ եւ բաժանել ուսանողներին:

Ինձ համար հաճելի է նաեւ ընդգծել այն ավանդույթը, որ հիմնադրել է Արցախի պետական համալսարանի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնը: Հայտնի է, որ այստեղ սփյուռքահայ գրականության վերաբերյալ դասախոսություններով հանդես են եկել սփյուռքահայ գրականագետ, գրող Վահե Օշականը, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը: Անհրաժեշտ է շարունակել այդ ավանդույթը: Դա մեծապես կնպաստի հայկական միասնական գրականության ընկալմանը, «մեկ ժողովուրդ՝ մեկ գրականություն» կարգախոսի արմատավորմանը: Դա աշխարհասփյուռ մեր ժողովրդի միասնականության ապահովման կարեւոր օղակներից մեկն է:

-Մեր ընթերցողներին, անշուշտ, կհետաքրքրի լիբանանահայ գաղութի, նրա կրթօջախների արդի վիճակը: Խնդրում եմ՝ մի քանի խոսք այդ մասին:

-Լիբանանի հայ գաղութը ձեւավորվեց 1920-ական թվականներից սկսած: Ունի իր կրոնական, մշակութային, քաղաքական կառույցները: Սրանց կարգում կարեւոր տեղ է գրավում կրթօջախների համակարգը: Մենք ունենք ազգային իշխանության ուսումնական խորհրդին ենթակա 15 վարժարան, կաթողիկե եւ ավետարանական 8 վարժարան, մշակութային միություններին պատկանող 7 վարժարան, Համազգային հայագիտական հիմնարկը, Հայկազյան համալսարանը եւ Կիլիկիո կաթողիկոսության «Խաչեր Գալուստյան» կենտրոնը: Կարեւորն այն է, որ «Փոքրիկ Հայաստան» կոչվող այդ հոծ գաղութի մատաղ եւ պատանի սերունդը դաստիարակվում է հայաշունչ մթնոլորտում՝ ամուր կանգնելով հայկական դարավոր ավանդների ակունքների մոտ: Երիտասարդների մի մա-

Սը բարձրագույն կրթություն է ստանում տեղի Հայկազյան համալսարանում, մյուս մասն էլ՝ օտարալեզու բուհերում երբեք չհեռանալով իր արմատներից:

Լիբանանահայ գաղթօջախն ունի իր մամուլը: Կարելոր մշակութային գործ են կատարում «Բագիրն», «Շիրակ» գրական պարբերականները, «Արծիվ», «Նաիրի», «Ազդակ», «Ձարթոնք», «Արարատ» թերթերը:

-Ձեր տպավորությունները՝ ԱրՊՀ ուսանողության մասին:

-Ինձ տպավորողը ուսանողների լրջությունն է եւ մյուսի հանդեպ ցուցաբերած հետաքրքրությունը: Մասնավորապես, գոհ եմ նրանց հարցասիրությունից, դասին մասնակցելու ծարավից: Անցյալ տարվա համեմատ այս տարի ուսանողների հետաքրքրությունը ավանդվող մյուսի նկատմամբ ավելի շեշտված է: Անցյալ տարի սովորադներն ինչ-որ չափով կրավորական էին, իսկ ընթացիկ տարում ներգործուն վերաբերմունք են ցուցաբերում: Նրանց հետաքրքրում են ոչ միայն մշակութային կուտակումները Սփյուռքում, այլեւ՝ նրա մտավորականության դերն ու տեղը հայապահպանման, Սփյուռք-Հայաստան-Արցախ կապի ամրապնդման գործընթացում:

-Ի՞նչ կմաղթեիք արցախցիներին...

-Ես քաղաքական գործիչ չեմ: Բայց ինձ շատ է հետքրքրում Արցախի բնակչության ճակատագիրը: Իմ ցանկությունն է, որ հաջորդ այցելությանս ժամանակ ներկայիս փաստորեն ԼՂ Հանրապետությունը տեսնեն իրավական գոյություն ունեցող երկիր մայր Հայաստանի հետ օրգանապես կապված, Սփյուռքի հետ սերտորեն կամրջված: Ես հավատում եմ դրան եւ անխուսափելի եմ գտնում նման գործընթացը, որովհետեւ նկատում եմ, որ մեր ժողովուրդը համախմբված է իր պետության շուրջը, եւ միասնաբար ընթանում են դեպի մեր երազած վերջնական հաղթանակ:

«ԼՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

25 ապրիլի, 1998թ.

**ՀԱՆՃԱՐԻ ԱՇԽԱՐՀԱՍՓՅՈՒՌ ԼՈՒՅԱԸ
(Մոցարտ-250)**

Ուղիղ 46 տարի առաջ էր, 1960 թվականը: Աշխատում էի «Կոմունիստ» հանրապետական թերթում որպես լրագրող, միաժամանակ խմբագրության կոմերիտկազմակերպության քարտուղարն էի: Մայիսի վերջին թերթի խմբագիր Հրանտ Բաբայանն ինձ հրավիրեց իր մոտ եւ բարի ժպիտը շուրթերին ասաց. «որպես լրագրող եւ կոմերիտկազմակերպության քարտուղար՝ լավ ես աշխատում, ուստի երաշխավորել եմ, որ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ս. Խրուշչովի՝ Ավստրիա մեկնելու նախօրյակին քեզ էլ մտցնեն աչքի ընկնող լրագրողների խմբում, որ շուտով մեկնելու է Ավստրիա՝ 20 օրվա ժամկետով: Հո դե՞մ չես»:

Այնքան հաճելի եւ այնպես անակնկալ էր առաջարկը, որ ես երախտագիտությամբ տեղից վեր թռա եւ հայտնեցի իմ շնորհակալությունը՝ ասելով. «Ինչպե՞ս կարող եմ դեմ լինել, երբ պիտի մեկնեմ Հայդնի, Շտրաուսի եւ Մոցարտի հայրենիքը»: «Դեհ, ուրեմն, շնորհավորում եմ, հունիսի 4-ին մի խումբ լրագրողներ մեկնելու եք Բաքվի երկաթուղային կայարանից: Նախ՝ գնալու եք Մոսկվա, այնտեղից ԽՍՀՄ տարբեր քաղաքների լրագրողների հետ մեկնելու եք Վիեննա: Վերադառնալուց՝ կգրես քո ստացած տպավորությունների մասին», - ասաց նա եւ սեղմեց ձեռքս՝ մաղթելով բարի ճանապարհ:

Ուրախությանս սահման չկար. նախ, այն բանի համար, որ կլեկտիվը եւ դեկավարը գնահատում են իմ աշխատանքը եւ ապա՝ առաջին անգամ այցելելու եմ եվրոպական մի այնպիսի երկիր, որն աշխարհին նվիրել է գրականության, գիտության, երաժշտության այնպիսի հսկաներ, առանց որոնց դժվար է պատկերացնել համաշխարհային քաղաքակրթությունը:

Մոսկվա հասնելուն պես ԽՍՀՄ Երիտասարդության միջազգային տուրիզմի բյուրոյում մեզ հայտնեցին, որ ճանապարհվելու ենք հունիսի 4-ին: Ուրեմն, մեկ օր Մոսկվայում մեր տրամադրության տակ էր: Այդ օրերին մայրաքաղաքում հյուրախաղերով հանդես էր գալիս Վիեննայի աշխարհահռչակ բալետը սառույցի վրա: Տուրիստների մեր խումբը երեկոյան եղավ Լուժնիկիի ստադիոնում, ուր հանդես էր գալիս բալետը: Առաջին իսկ տպավորություն

Վաստրիական բալետային արվեստից ցնցող էր: Բալետի խաղացանկի մեջ մտնում էին տարբեր ժողովուրդների պարեր: Հմայիչ էին Չայկովսկու եւ Մոցարտի երաժշտության մոտիվներով կազմակերպված պարերը:

Հետեւյալ օրը ուղեւորվեցինք դեպի Չոպ քաղաքը, որը գտնվում է Ուկրաինայի եւ Հունգարիայի սահմանում: Մենք եղանք Բուդապեշտում, այցելեցինք քաղաքի տեսարժան վայրեր, հետեւյալ օրը հասանք Վիեննա:

Մեր այցելումների ծրագրում մտցված էր նաեւ Ջալցբուրգը՝ Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի ծննդավայրը՝ աշխարհի բոլոր երեժտասերների երազային քաղաքը. իսկ եւ իսկ հեքիաթային մի ուխտավայր: Ջալցբուրգը փռված է համանուն գետի երկու ափերին: Ամեն տարի միլիոնավոր տուրիստներ են լինում այդտեղ: Դա քաղաք չէ, այլ մի ինքնատիպ թանգարան, որի մի շարք կառույցները հոյակապ տաճարներ են, դղյակներ, հասարակական շենքեր, որոնք իրենցից ներկայացնում են միջին դարերի ճարտարապետական հրաշալի կոթողներ:

Գտնվելով Ալպյան լեռների ստորոտում, Ջալցբուրգի բնությունը շատերին է գրավում: Բնակչության թիվը 1960-ին հասնում էր 105 հազարի: Քաղաքում գործում է 105 կաթոլիկ եկեղեցի, որոնք իրենց շքեղությամբ մրցում են միմյանց հետ: Բնակչությունն այդ եկեղեցիները համարում է սրբատեղի: Ջալցբուրգի ամենանշանավոր շենքերը երեքն են: Նրանցից մեկում 1756թ. ծնվել, իսկ մյուս երկու շենքերում հետագայում ապրել ու ստեղծագործել է Մոցարտը:

Այն օրը, որ պիտի այցելեինք Մոցարտի տուն-թանգարանը, եկեղեցական մի արարողություն կար, որ կոչվում է դողանջատուն: Վաղ առավոտյան հյուրանոցից ուղղվեցինք դեպի քաղաքի կենտրոն: Ժողովուրդը ցնծությամբ դուրս էր եկել քաղաք՝ ունկնդրելու 105 եկեղեցիներից հնչող տարբեր տրամաչափի հազարավոր զանգերի ռիթմիկ ու համաչափ դողանջները: Մենք՝ խորհրդային երիտասարդներս, որ հեռու էինք եկեղեցական արարողություններից, առաջին անգամ էինք լսում նման դողանջների աստվածային մեղեդին: Հաճելի մի զգացում համակել էր մեզ: Այդ պահին խորհում էինք խորհրդային տարիներին անարդարացիորեն եւ անտեղի մեր փակված եկեղեցիների, նրանց զանգակատներում լռեցրած զանգերի մասին: Միաժամանակ, քնքույշ մի ծայն մեր հոգու խորքից

ասես հուշում էր մեզ, որ հենց Ձալցբուրգի եկեղեցիների զանգերի այդ դողանքների ելել էջներն են հնչել մանուկ ու պատանի Սոցարտի սրտի ծալքերում, որ անմիջապես փարվել են ժողովրդական մեղեդիների ծփանքներին ու դարձել մոցարտյան հոգու դողանք՝ թափանցելով աշխարհի միլիոնավոր մարդկանց սրտերը:

Ձալցբուրգյան դողանջատոնի հաճելի հնչյունների տակ մենք ուղղվեցինք դեպի Սոցարտի տուն-թանգարան. այն մի հսկայական շենք է, որ կարող է դառնալ ուզածդ ամենախոշոր քաղաքի զարդն ու ուխտատեղին:

Ինչպես միշտ, այդ օրը եւս Սոցարտի տուն-թանգարանը լեփլեցուն էր այցելուներով: Այդ հանգամանքն ավելի էր գրավում մեզ՝ մանրակրկիտ ծանոթանալու անմահ կոմպոզիտորի կյանքին՝ ծննդյան պահից մինչև ողբերգական մահը՝ հավերժական ծննդի արշալույսը: Թեկուզ արգելված էր ձեռք տալ թանգարանային նմուշներին, մենք խնդրեցինք աշխատակցուհուն, որպեսզի թուլատրի դիպչել այն դաշնամուրի ստեղծներին, որոնք թրթռացել են հինգ տարեկան Սոցարտի մատների տակ՝ դառնալով հմայիչ երաժշտություն: Դաշնամուրի մոտ նրբածայն ջութակն է, որ ուղղակի խոսել է մեծ երգահանի տաղանդի շնչով:

Թանգարանի տարբեր սենյակներում ցուցադրված են աշխարհահռչակ կոմպոզիտորի բոլոր ստեղծագործությունների ձեռագրերը, նշված դրանց կատարման տարիները, քաղաքները, թատրոնները: Ջարմանալին ու հմայիչն այն է, թե ընդամենը 35 տարի ապրած այդ հսկան ինչպես է հասցրել մարդկությանը նվիրել մի քանի տասնյակ գլուխգործոցներ, արժանացել Բախի, Չայկովսկու, Մարտինի նման հսկաների բարձր գնահատականին: Պարզ է, Սոցարտն առաջին հերթին ունեցել է հարուստ բնական ձիրք, նախանձելի աշխատասիրություն, իսկ նրա տաղանդի ձեւավորմանը նպաստել է հայրը՝ ջութակահար եւ կոմպոզիտոր Լեոպոլդ Սոցարտը: դեռեւս չորս տարեկան էր նա, երբ հմտորեն նվագեց կլավեսին, իսկ 5-6 տարեկանում ձեռնամուխ եղավ ստեղծագործական աշխատանքի: Վեց տարեկանից համերգներով հանդես եկավ եվրոպական երկրներում:

Ծանոթանում ենք թանգարանի ցուցափեղկերին, հմայվում ութ տարեկանում գրած սիմֆոնիկ երկի ձեռագրով, ապա 11-12 տարեկանում ստեղծած երաժշտադրամատիկական այնպիսի գործե-

րով, ինչպիսիք են «Ապոլլոնը եւ Հիակինթոսը», «Բաստիեն եւ Բաստիենան»: Մարդկային տաղանդի հանդեպ հիացնունքի զգացումով ենք համակվում, երբ տեսնում ենք 14 տարեկանում Բոլոնիայի ֆիլիարմոնիկ ակադեմիայի՝ նրա անդամության փաստաթուղթը: Թանգարանում ապրում ես նաեւ ավստրալիացի մի խոր զգացում՝ իմանալով, որ անմահ այդ հանճարը ընկել է կյանքի ծանր փորձությունների մեջ, ունեցել աշխատանքի տաժանակիր պայմաններ, զգացել վիրավորող մթնոլորտի ցավը: Սակայն Մոցարտի հանճարի ծաղկման շրջանը կյանքի վերջին տաս տարիներն էին, երբ կյանքը կապեց Վիեննայի հետ: Մեկ առ մեկ մոտենալով նրա ծեռագրերին, նկատում ես, որ հանճարեղ կոմպոզիտորը պահպանել է արվեստագետի անկախությունն ու ազատատենչ բնույթը: Նա ստեղծել է 23 օպերա, 49 սիմֆոնիա, շուրջ 50 կամերա-գործիքային անսամբլներ (տրիո, կվարտետ, կվինտետ), տարբեր գործիքների եւ նվագախմբերի համար գրված 27 կոնցերտներ, 17 դաշնամուրի, 43 ջութակի եւ դաշնամուրի սոնատներ, 12 մեսսաներ, 33 սերենադներ ու դիվերտիսմենտներ, որոնք աչքի են ընկնում հավասարազոր գեղարվեստական արժանիքներով:

Մեզ վրա թողած տպավորության ամենախոսուն արժեքները նրա «Առեւանգում հարեմից», «Ֆիգարոյի ամուսնությունը», «Դոն ժուան», «Կախարդական սրինգ» օպերաների ծեռագրերն են:

Մի քանի ժամ Մոցարտի տուն-թանգարանի ցուցանմուշներին ծանոթանալուց հետո այցելուների մատյանում մարդիկ զրառում էին իրենց տպավորությունները: Ես մեսրոպատառ մեր մայրենիով կատարեցի իմ գրառումը, որ հիշում եւ բերում եմ նույնությամբ. «Հայ ժողովուրդն իր բարձրաբերձ լեռներում Կոմիտասի անմահ երգերի հետ մեկտեղ միշտ հնչեցրել է անմահ Մոցարտի հոգեպարար երաժշտությունը՝ որպես ազգերի համերաշխության, գեղագիտական հաճույքի անսպառ աղբյուր»:

Մոցարտի տուն-թանգարանի յուրաքանչյուր այցելու մի անհուն խանդաղատանքով է հեռանում՝ հոգու մեջ փայփայելով աստվածային մի զգացում. «Անմահ այնպիսի արվեստագետը, որպիսին է Մոցարտը, պատկանում է հանուր մարդկությանը՝ բարության, համերաշխության, գեղագիտական հաճույք ընծայելու իր հավերժախոս առաքելությամբ»:

**«Ազատ Արցախ»,
4 փետրվարի, 2006թ.**

**ԼՈՒՅՍԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ ԳՈՐԵԼԵՆ
(Լավրենտ Ղալայան-70)**

Տարիներ առաջ, առանձնապես խորհրդային ժամանակահատվածում, երբ Հայոց Արցախը զրկված էր իր մայր Հայաստանի ոչ միայն նյութական առնչություններից, այլ նաև հոգեւոր ջերմությունից, օրորվում էր ազերական մուղամների եւ աշուղական նեյնիմների ամենօրյա «ղայլայլներից», տարածվել էր այն թյուր կարծիքը, թե Արցախը զուրկ է սեփական երգարվեստից, ուստի հայերեն երգ չունի:

Սակայն կյանքն ապացուցեց հակառակը: Պարզվեց, որ Մռով ու Քիրս սարերին իջած թուխ ամպերը տեղածին չեն, որ նրանց մռայլի տակ ժամանակավոր հող հայրենիին կառչած են անձրեւաբեր այն ամպերը, որոնք հարուստ են կենսառատ ավիշով՝ նյութական (հացիվ) եւ հոգեւոր (ոգու) առումներով: Ու եկավ աստեղային ժամը: 1960-ական թվականներից սկսած օտարի լծից փրկվելու ազատաբաղձ ցնցումները նպաստեցին, որ ծլարծակվի նաև մեր երգը՝ արցախաթույր-հայաբույր երգը: Եվ այդ լուսախոստում պահին միանգամից արցախյան անթեղված մեղեդիների հրաբորբոք միջուկից հառնեց Գուրգեն Գաբրիելյանը՝ շրթերին արցախյան նվազները, որ պեղել էր մեր նախնիների կենդանի հոգիներից եւ ժամանակակիցների հուսավառ սրտերից: Եվ նրա տասնյակ ժողովրդահողով երգերի շարանում ծածանվեց «Ղարաբաղի հորովելը»՝ ծիածանվելով սրտերից-սիրտ ու գահավորվելով Մեծն Կոմիտասի «Հորովելի» մոտ: Բայց գահավորվեց ոչ թե ոսկեփոշով օծվելու եւ թանգարանային մասունքի փոխվելու երազանքով, այլ իր արնաշող բարձունքներից թեւածելու, սրտերին փարվելու, հիշեցնելու, հուզելու, ոգեշնչելու առաքելությամբ: Եվ ժամանակների թեւերին այն դարձավ մեռոնաբույր օրհներգ, կարկաչեց որպես լեռնաղբյուր՝ ցողելով եւ սնելով արվեստի տարբեր տեսակների աշխարհը. բեմականացվեց, սիմֆոնացվեց, նկարազարդվեց: Եվ առաջին նկարազարդողը եղավ Արցախի զինամշանի հեղինակ, ԽՍՀՄ, իսկ այժմ՝ Արցախի նկարիչների միության անդամ, պրոֆեսոր, տաղանդավոր արվեստագետ Լավրենտ Բահաթուրի Ղալայանը: Մինչ այդ Լավրենտը անթերի ու սրտագրավ երգում էր «Ղարաբաղի հորովելը», հաճախ այն նրբորեն կամրջելով Կոմի-

Մտասի հորովելին, հաստատելով, որ ինչքան իրար մոտ են դրանք, այնքան էլ տարբեր են՝ ինչպես մի մոր կաթով սնված երկվորյակներ՝ եւ հոգեհարազատ, եւ ինքնատիպ: Եվ օրերից մի օր էլ Լ.Ղալայանը՝ ի հիացում բոլորի, լույս աշխարհի հանեց Գ.Գաբրիելյանի «Հորովելի» նկարագարող ալբոմը: Պարզվեց, որ Լ.Ղալայանը զգացել է ոչ միայն երգի հույզն ու գաղափարը, այլև շոշափել ու տեսել է երանգները: Պարզապես նկարիչը ցույց է տվել այն, ինչ հեղինակը թողել է ենթաբնագրային շերտերում՝ ներկայացնելով բանաստեղծ-երգահանի մտահղացման եւ իրացման գեղագիտական արժեքին համահունչ: Ղալայանը հոգեբան-արվեստագետի ներքնատեսությամբ է թերթել բնագրի յուրաքանչյուր բառ ու տող, ի տես բերելով կոթողի ճանաչողական, դաստիարակչական եւ գեղագիտական արժեքները: Գործը սովորական նկարագարողում չէ, այլ ամբողջության մեջ արցախցու դիմանկարի խոսուն վկայություն անցյալի, ներկայի եւ ապագայի համադրմամբ, հոգսի, հույսի եւ հավատի շաղախով:

Որպես նկարիչ Լ.Ղալայանը կրկնապատկել է բանաստեղծ-երգահանի պաշտամունքը առ հայրենիք ու ժողովուրդ: Նրա մեկնաբանությունը արեւագոծ ու նրբագեղ է՝ ինչպես ազգային-գոյատեւման խորհրդանիշ: Երգի դարակազմիկ կառուցվածքը Լ.Ղալայանի վրձնակերտումների շնորհիվ շնչավորվել է ու դարձել հավերժախոս արցախապատկեր՝ հող հայրենիի ու նրա տիրոջ միասնությամբ: «Հորովելը» Ղալայանի համար հանդիսացել է հենք, որ դարձել է արցախցու հոգու գունագեղ գորելենը ու փռվել սերունդների առջեւ: Հոգեբուխ ու սրտառուչ են ալբոմի բոլոր նկարները, իսկ ընդհանրության մեջ՝ հեքիաթային ու կենսահաստատ: Նրանում արցախցու հազարամյա կանչի եւ աստղագնա բաղձանքի պատկերն է վրձինված, նրա հայակերտ պարն է ժողովուրդների տիեզերական շուրջպարի մեջ: Այդ ալբոմը Ղալայան-արվեստագետի սեփական ձեռագրի մի նոր հաստատումն է՝ արցախյան լեռնաշխարհի կոլորիտի եւ նրա տիրոջ դիմանկարի համաձույլ արարումով: Դիտելով ալբոմը, ինքդ շոշափում ես քո իսկ պաշտամունքը՝ քո սեփական անցյալի, ներկայի եւ գալիքի օրհնանքներով:

Նրանում բացառված է անտարբերությունը մարդկային հոգու գեղեցկության հանդեպ, այնտեղ լուսարձակվում է խորհուրդների մի հարուստ աշխարհ, դեպի հույսի բարձունք տանող մի ճանա-

պարհ, որ պապենական է, սերնդապահ, գունավոր երագ է, հարատեւելու պատգամ:

Դա արվեստի գանձ է, ազգային հարստության մի հոյակապ մասունք: Այն տառապանքից ծնված հույսի գունավոր կանչ է՝ ոչ ողբերգություն, հողվորի ծարավ է՝ ոչ հուսալքություն, ծանրաբեռ օջախ է՝ ոչ կորամեջք, սոցիալական ըմբոստություն է՝ ոչ պարտություն, գեղջուկ է՝ ոչ թափառական, շարժում է՝ ոչ երերանք, արդյունքում պետություն է ու բանակ, շքերթ է հավատաշող:

Լ.Ղալայանի նկարագարդ ալբոմը՝ Գ. Գաբրիելյանի «Հորովելի» մոտիվներով, ազգային արժանապատվության, հայրենասիրության, ինքնաճանաչման եւ ինքնահաստատման դասագիրք է, արվեստի մի կոթող, որ ունի փիլիսոփայական եզրահանգումներ՝ մաքառելու, արարելու, հարատեւելու գունավոր խորհուրդներով:

Յ. Գ., 1... ԼՂՀ նախագահի հրամանագրով՝ արվեստի զարգացման բնագավառում ԼՂՀ-ին մատուցած ծառայությունների, երիտասարդ նկարիչների սերնդի դաստիարակության գործում ունեցած մեծ ավանդի համար Լավրենտ Ղալայանին շնորհվել է ԼՂՀ վաստակավոր նկարչի պատվավոր կոչում: Ի սրտե շնորհավորում ենք նրան:

Արցախի Համալսարան
2008թ

Յ. Գ., 1... 2010թ. Ստեփանակերտի «Դիզակ պլուս» հրատարակչությունը տպագրել է «Ղարաբաղի հորովելու» նկարագարդ գիրք-ալբոմը, որը, հիրավի, հայ ժողովրդի արցախյան հատվածի ազգային-էթնիկական կենցաղն ու ապրելակերպը, հայրենի հավատն ու հոգեբանությունը պատկերող անմահ ստեղծագործություն է: Ուշագրավ ու հաճելի է այն փաստը, որ գիրք-ալբոմի առաջին մասում իրենց հիացմունքի խոսքն են զետեղել գրող-հրապարակախոս Զ. Բալայանը, արվեստագետ Յ. Իգիթյանը, ակադեմիկոս Լ. Ներսիսյանը, արվեստաբան Մ. Երզնկյանը, նկարիչներ Ռ. Գաբրիելյանը, Բ. Հովհաննիսյանը, լրագրող Ա. Մովսիսյանը, արվեստաբան Գ. Օրդյանը, տողրիս հեղինակը, հոգեբան-պրոֆեսոր Ա. Մխիթարյանը, որոնք Լ. Ղալայանի սույն գործը եւս համարում են խոշոր ներդրում հայ արվեստի պատմության մեջ:

11.02.2011թ.

ՓԱՌԱՎՈՐ ՈՒՂԻ
(Արզիկ Մխիթարյան - 60)

Հայոց պոեզիայի մեծ երախտավորներից Համո Սահյանը կասեր. «Տարինե՛րս, տարինե՛րս... Ո՛ւր գնացին... Իմ սիրավոր, Իմ ծիավոր Տարիներս ո՛ւր մնացին»: Արցախի պետական համալսարանի պրոֆեսոր, հունանիտար ֆակուլտետի դեկան Արզիկ Մխիթարյանի դեպքում կարող ենք ասել, որ նրա մանկության տարիներն անցել են Մոսկվա սարի լանջերին ծառ ու ծաղիկների մեջ փոփած հայրենի Կոճողոտ գյուղում: Այդ իսկ պատճառով նման էր մայիսյան բուրունմավետ վարդի, մինչեւ հիմա էլ այդպիսին է:

Կարող ենք ասել, որ նրա պատանեկությունը թելին է տվել Արցախի ողնաշարը կազմող Ջրաբերդ-Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցում, գիշեր ու տիվ իր սիրելի ուսուցիչների հանձնարարած գրքերը կարդալիս եւ իմաստության դասեր առնելիս, 1963-ին ավարտական քննությունները հանձնելուց հետո ոսկե մեդալի ելել էջներում: Ապա կարող ենք ասել, որ նրա ծիավոր տարիները ճախրել են Երեւանի պետական համալսարանի լսարաններում, որտեղ ունկնդրել է ականավոր լեզվաբանների, հոգեբանների, պատմաբան-փիլիսոփաների մի աստղաբույլի եւ 1968թ. Ժպտադեմ ու ճակատը բաց, հայոց լեզվի եւ գրականության մասնագիտության դիպլոմն առած, վերադարձել հայրենի Արցախ ու շնջացել նրան որդիաբար ծառայելու իր երդումը ոչ միայն որպես ուսուցչուհի, այլեւ եռանդուն, կենսախինդ, նվիրյալ քաղաքացի, որպես Սասնա դյուցազնավեպի հերոս կանանց՝ Արմաղանի եւ Խամդուք Խաթունի ժառանգորդ, որպես նորօրյա Այծեմնիկ:

Իսկ Արզիկ Մխիթարյանի սիրավոր տարինե՞րը... Այստեղ էլ կարող ենք ընդգծել, որ աստվածային սիրո դաշինքը նա կնքել է տաղանդավոր նկարիչ Լավրենտ Ղալայանի հետ, որ մեր ժողովրդին են ընծայել չորս արցախցի դյուցազունների՝ իրավաբան Աշոտին, տնտեսագետ Արային, իրավագետ Լեռնիկին, տաղանդավոր նկարիչ Սասունին, որոնցով կարող է հպարտանալ յուրաքանչյուր հայ ծնող, յուրաքանչյուր ժողովուրդ: Կարող ենք ասել, որ Արզիկ Մխի-

Քարյանի սիրավոր ու ծիավոր տարիներն իմաստավորվել են դեռևս 1965-ին, երբ Երեւանում որպէս ուսանողական գաղտնի կազմակերպության անդամ իր ծայնն է հնչեցրել Հայոց ցեղասպանության 50-րդ տարին նշելու պահանջով: Կարող ենք հպարտության զգացումով բարձրաձայնել, որ Արզիկ Միքայելի Մխիթարյանի անցած ոչ միայն ամեն տարին, այլև ամիսը, օրը եղել են զեղեցիկ ապրելու, անձնական կյանքը ժողովրդանվեր գործելն դարձնելու լուսառաք երանգներ: Այդ նա է՝ հայոց փափկասուն կանանց աստղաժպիտ դուստրը, որ 1988-ի հենց սկզբից կրակ կտրեց Արցախում ընթացող համահայկական ազգային ազատագրական պայքարի թեժ ու ճակատագրական տարիներին, որպէս «Կռունկ» հասարակական-քաղաքական կազմակերպության վարչության անդամ եւ հանրահավքների կազմակերպման պատասխանատու, որպէս արցախյան հիմնախնդիրը քննարկող պատվիրակությունների ակտիվ մասնակից Երեւանում եւ Մոսկվայում, որի պատճառով մեկ անգամ չի ենթարկվել տնային կալանքի պոլյանիչկո-սաֆոնովյան ռեժիմի կողմից: Նրա տարիներն ու օրերն իմաստալից ասքերի են փոխվել այն պահերին, երբ արիասիրտ որդիները դարձել են Արցախյան գոյամարտի մասնակիցներ, երբ զավակներից Լեռնիկը զինվորագրվել է Էջմիածնի 5-րդ լեզենդար բրիգադի հատուկ նշանակության զնդին եւ ցուցաբերած խիզախության համար պարգևատրվել «Մարտական Խաչ 1-ին աստիճանի» եւ «Սպարապետ Վազգեն Սարգսյան» շքանշաններով ու մի շարք մեդալներով:

Արզիկ Մխիթարյանի օրերն ու ժամերը հոգու ջերմացնող թրթիռների են փոխվել, երբ նկարիչ ամուսինը դարձել է զինված հակամարտության առաջին զենք կրողներից մեկը եւ ապա հայոց քաջարի սերունդներին նվիրել ԼՂՀ Զինանշանը՝ որպէս նրանց ազատաբաղձ ոգու խորհրդանիշ: Ինչպէս տեսնում ենք, մեր հոբելյարի անձնական ապրումներն ու ձգտումները վերածվել են անանձնականի, թեւածել միաձուլ ու երջանկաբեր ճախրանքով: Սակայն հարգարժան գործընկերուհու հմայքը միայն վերոնշյալով չի ընդգծվում: Նման դեպքում են նշում, որ բնությունը շռայլ է գտնվել նրա հանդեպ:

Արզիկ Մխիթարյանի կյանքն ու գործը հիանալի օրինակ են առանձնապես երիտասարդների համար: Թերթում ենք նրա կենսագրության էջերը եւ հստակորեն տեսնում նրա նվաճումները գիտամանկավարժական գործունեության անընդմեջ ընթացքում: 1969 թվականից նա իր հարուստ գիտելիքներն ուսանողներին է հաղորդում նախ՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում, ապա նույն հիմքի վրա հառնած Արցախի պետական համալսարանում՝ որպես հոգեբան: Կա մի հերթապահ միտք, ըստ որի՝ պնդում են, թե այսինչը կամ այնինչը ծնվել է երջանիկ աստղի տակ: Դա անընդունելի խոսք է: Անհատի երջանիկ աստղը ժպտում է աշխատասիրության, կամքի, ձգտումի, նպատակասլացության շնորհիվ, որի վառ օրինակ կարող է հանդիսանալ Արզիկ Միքայելին: Նախ նշենք միեւնույն աշխատավայրում մշտական քրտնաջան վաստակ ունենալու նրա ձգտումը, գիտելիքների անընդհատ ձեռքբերումի նրա ծարավը, որոնց արդյունքում 1986-ին պաշտպանեց թեզ եւ արժանացավ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի, այնուհետեւ՝ դոցենտի կոչման: Սակայն նա լավ գիտակցեց, որ գիտական աստիճանն ու կոչումը արդարացվում են գիտահետազոտական լուրջ աշխատանքներով: Եվ այսօր նա ներկայանում է իր քսանից ավելի գիտամեթոդական հոդվածներով եւ ուսումնասիրություններով, դպրոցական «Հոգեբանություն» դասագրքով: Նշենք նաեւ նրա բազմաթիվ ելույթները համալսարանում եւ միջհանրապետական շրջանակներում կազմակերպված գիտաժողովներում: Իսկ վարած դասախոսությունների բարձր մակարդակն ու գործնական պարապմունքների արդյունավետությունը բուհում, ուսանողների դիպլոմային աշխատանքների եւ մագիստրոսական թեզերի սրտացավ ու բանհմաց ղեկավարումը նոր կողմերով են զարդարում դասախոսի նրա հեղինակությունը: Վերոնշյալ գիտամանկավարժական գործընթացի շնորհիվ էլ նա 2000թ. արժանացել է պրոֆեսորի կոչման: Պատահական չէ նաեւ, որ 1989թ.-ից ղեկավարում է տարբեր ֆակուլտետներ՝ որպես դեկան, միաժամանակ բուհի ռեկտորատի եւ գիտխորհրդի անդամ է: Բացի այդ, 1986-ից Ռուսաստանի ազգային ակադեմիայի հոգեբանների միության, իսկ 1990-ից ՀՀ ԳԱ հոգե-

բանների միության նախագահության անդամ է: Նա նաեւ ՀՀ Երկրապահ կամավորական միության անդամ է:

Ա. Մխիթարյանի ծայնը հնչել է ԱՊՀ տարբեր երկրների ուսումնական կոնտրոլներում, ԱՄՆ Լոս-Անջելես, Նյու-Յորք, Նյու-Ջերսի եւ այլ քաղաքներում կազմակերպված միջոցառումներում, որտեղ իր կրակոտ ելույթներով ամերիկահայությանն է փոխանցել Արցախի մարտնչող ժողովրդի պատգամն ու ազատ եւ անկախ ապրելու վճռականությունը եւ անկոտրում կամքը:

Արզիկ Միքայելին անհանգիստ հոգու տեր մտավորական է: Նա դասախոսություններով հանդես է գալիս տարբեր կրթօջախներում, ԼՂՀ պաշտպանության բանակի զինվորների եւ սպայական կազմի առջեւ, հոգեբանական հաղորդումներ է վարում Արցախի հանրային հեռուստեսությամբ:

Ա. Մխիթարյանի արդյունավետ աշխատանքը բարձր է գնահատվել մեր նորանկախ պետության եւ իշխանությունների կողմից: Այդ են վկայում «Աշխատանքի վետերան», «ԱրՊՀ-30», «Արցախյան շարժման 5 տարին», «Վաչագան Բարեպաշտ» մեդալներն եւ տարբեր հուշանդամներն ու պատվոգրերը:

Ասում են՝ կնոջ տարիքը չեն հարցնում եւ չեն հիշեցնում: Սակայն այս կարծիքը համարենք պայմանական եւ մեր հոբելյարին ճանաչող բոլոր ընկերների անունից դիմենք նրան. «Սիրելի Արզիկ Միքայելի, ճիշտ է, լրանում է Ձեր 60-տարին, սակայն Աստված շռայլ է գտնվել Ձեր հանդեպ՝ ընծայելով գերադաս գեղեցկություն, արարելու անսպառ եռանդ ու շնորհք, գիտությանը ծառայելու անձնուրացություն, հոգեբան-մանկավարժի նախանձելի ներաշխարհ, կոլեկտիվի սիրելի լինելու անմիջականություն, հոգեպարար անուսնու, մոր, տատիկի անսեթեւեթ քնքշանք, վերջապես ոչ միայն ծնողաց, այլեւ ժողովրդի փառավոր դուստրը դառնալու նվիրում ու արժանապատվություն:

Ուրեմն, շնորհավոր 60-ամյակդ եւ թող Ձեր ընկերները մասնակից լինեն նաեւ 100-ամյա հոբելյանիդ»:

**«Ազատ Արցախ»,
9 նոյեմբերի, 2006թ.**

ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏՆ ԵՐԳԵՐԻ ՄԵՋ

Աշխարհի բոլոր մեծությունների իմաստասիրությունը հյուսվել է ժողովուրդների կենսափորձից, որի հրամայականով ձեւավորվել են նրանց ապրեցվող, թեւավորող, բռունցքող գործոնները: Քաղաքակրթության ձեւավորման ու զարգացման հազարամյակների ընթացքում իր նպաստն է ներդրել նաեւ հայ ժողովուրդը, որ իր հանճարի լույսով աշխարհին ընծայել է մարգարեների ոչ մեկ աստղաբույլ իրենց մտքի շափաղումներով, խորհուրդներով, պատգամներով: Անսալով իրենց ծնող ժողովրդի պատգամները, նրանք բոլոր սրբազան երեսույթներն ու իրողությունները կոչել են մայր անունով. «Մայր հայրենիք», «Մայր լեզու», «Մայրաքաղաք» եւ այլն:

Հայոց մեծերը ոչ միայն գիտակցել են ժողովրդի կյանքում մայրաքաղաքի նշանակությունը, այլեւ փառաբանել են նրա լինելիությունը՝ նրանում տեսնելով երկրի զորությունը, տնտեսության զարգացման զարկերակը, գիտության, գրականության եւ արվեստի նվաճումների գործոնները, զինուժի կոփման դարբնոցը, ժողովրդի պաշտպանության անառիկ բերդը, մի խոսքով այն ամենը, առանց որի ժողովուրդը կնմանվի անտիրական որբերի:

Պատահական չէ, որ մայրաքաղաքը հանդիսանում է պետության գլխավոր քաղաքը, վարչաքաղաքական կենտրոնը: Ահա, թե ինչու պետության, իշխանության եւ կառավարման բարձրագույն մարմինները գտնվում են մայրաքաղաքում: Ելներով այս երեսույթից, մեր ժողովուրդն անցյալում մայրաքաղաքի համար օգտագործել է քաղաքամայր, նախագահ-քաղաք անվանումները: Պատմության մատուցած արհավիրքների պատճառով մեր նախնիները մեկ անգամ չեն կորցրել իրենց կերտած մայրաքաղաքները: Աշխարհին են հայտնի հայոց Արմավիր, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Կարս, Անի եւ այլ մայրաքաղաքները: Ավելի քան 600 տարվա պետականության կորստից հետո Սարդարապատը վերագտավ Երեւան դարձած իր էրեբունին եւ նրա սեպագիր հայտնության խորհրդի ուղեկցությամբ հանձնեց աշխարհասփյուռ հայության մայրաքաղաք Երեւանի հեքիաթային բանալին: Իսկ այսօր մայր Հայաստանի մոտ հնչում է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» պատվաբեր անունը,- մեր Արցա-

խը՝ փրկված իր հավատով, նվիրումով ու անձնուրացությամբ... Եվ օրեցօր ծաղկում ու գեղեցկանում է մեր մայրաքաղաքը, մեր ամբողջ ժողովրդի հպարտությունը՝ մեր Ստեփանակերտը, մեր հույսերի ու երազների օրրանը:

Այսօր հոգով ու սրտով ողջունում ենք նրանց, ովքեր մտահղացել են «Ստեփանակերտի օր» սահմանելու որոշումը, որ արտահայտում է մեր ժողովրդի իղծերն ու ակնկալիքները:

Ես համոզված եմ, որ արտահայտած կլինեն բոլորիս հպարտության զգացումը, եթե Ստեփանակերտի փառաբանման ակունքները հասցնեն դարերի խորքը, կրկին շեշտելով այն ավանդույթը, որ հատուկ է եղել մեր պատմիչներին, մեր հայրենասեր գեղագետներին: Դիմենք անմահ հորենացուն: Իր «Հայոց պատմության» ոսկի մատյանում Պատմահայրը նկարագրելով Հայկ Նահապետի կռիվը զավթիչ Բելի դեմ, գրում է. «Աղեղնավոր Հայկը... իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային (Բելին), մինչեւ վերջը քաշում է լայնալիճ աղեղը, երեքթեւյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, եւ սլաքը շեշտակի անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում եւ գոռոզացած Տիտանյանն այս կերպով կործանվում, ընկնում է գետնին ու շունչը փչում:

...Բայց ճակատամարտի տեղը հաղթական պատերազմի պատվին շինում է դաստակերտ եւ անունը դնում է Հայք» (էջ 89):

Եթե մինչեւ հիմա ուշադրություն չի դարձվել Քերթովահոր այս հաղորդմանը, ապա այսօր համարձակորեն կարող ենք հաստատել, որ հայկածին մեր ժողովրդի՝ Հայկ նահապետի հիմնադրած առաջին մայրաքաղաքը Հայքն է:

Ս. հորենացին բարձր է գնահատել մայրաքաղաքի դերը ժողովրդի կյանքում: Նա հիացնում էր նկարագրում Երվանդաշատ քաղաքի գեղեցկությունը: Ահա այդ անզուգական պատկերը. «Ինձ համար քաղցր է պատմել նաեւ գեղեցիկ Երվանդակերտ դաստակերտի մասին, որ նույն Երվանդը շինեց գեղեցիկ եւ չքնաղ հորինվածով: Որովհետեւ մեծ հովտի միջին մասը լցնում է բնակչությանը եւ պայծառ շինություններով, լուսավոր, ինչպես աչքի բիբը, իսկ բնակչության շուրջը կազմում է ծաղկանոցներ եւ բուրաստաններ, ինչպես բբի շուրջը աչքի մյուս բոլորակը: Իսկ այգիների բազմությունը նմանվում էր խիտ արտեւանունքի գեղեցիկ գծին, որի հյուսիսային կողմի կամարածեւ դիրքը իսկապես համեմատվում

Եր գեղեցիկ կույսերի հոնքերին: Իսկ հարավային կողմից հարթ դաշտերը հիշեցնում էին ծնողների գեղեցիկ ողորկությունը: Իսկ գետն իր երկու ափերի բարձրություններով պատկերանում էր մի բերան, իր երկու շրթունքներով: Եվ այս գեղեցիկ դիրքը կարծես անթարթ հայացքն ուղեւ է թագավորանիստ բարձրավանդակի վրա: Արդարեւ բերրի եւ թագավորական դաստակերտ» (էջ 176):

Հետագա դարերում եւս աչք են շոյել Հայոց մայրաքաղաքները՝ իրենց ազգային ճարտարապետության առանձնահատկություններով, գիտության եւ լույսի զորության ու պաշտպանության պատվար դառնալու ձգտումով ու կայացմամբ: Այսպես, երգերի մեջ հռչակվել են մեր մայրաքաղաքները՝ Հայք դաստակերտից մինչեւ Երեւան:

Հայոց Արցախ նահանգի Վարարակն կենտրոնը, որ որպես օտարածին ծաղրանուն, 1847-1923թ. կոչվեց Խանքենդի, 1923-ից կրեց հայ ժողովրդի մեծանուն զավակներից մեկի՝ Ստեփան Շահումյանի անունը՝ դառնալով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կենտրոնը:

Արցախահայությունը ջանքեր չէր խնայում այն դարձնելու արդյունաբերական, մշակութային օրինակելի քաղաքամայր, եւ ինչ-որ տեղ հաջողվում էր նրան: Սակայն Լեւինի եւ Ստալինի թուրքամետ քաղաքականության պատճառով ազերի-թուրքերի հայակուլ երախը նետված Ստեփանակերտը զգաց ահավոր վտանգը դեռեւս 1920-ական թվականների սկզբից: Օտարի լուծը թոթափելու դժվարին, բայց անհրաժեշտ բաղձանքը չքնեց երբեք նրա ազատաբաղձ որդիների հոգիներում՝ մինչեւ այցելեց վճռական պահը՝ 1988-ին փայլատակեց Հայոց Թուր-Կայծակին, վրձաց Սասնա Քունկիկ Ջալալին, պարզվեց Խաչը փրկաբեր, եւ ծածանվեց պատվո եռագույնը մեր արծվաթեւ, եւ հնչեց օրհներգը մեր Հայկազոշ-Առանաշունչ, Մայր Հայաստանը սարի պես հառնեց նրա թիկունքին, Մայր-Աթոռ Էջմիածինն օրհնեց Ղազանչեցոց եկեղեցու եւ Գանձասարի զանգերի ղողանջները, Սփյուռքը հարազատի խանդադատանքով բացականչեց. «Դուն իմն ես, ես՝ քունը»: Եվ Ստեփանակերտը ոչ միայն ծածանեց պետականության սրբազան դրոշը, այլեւ մտավ իր խանդավառված բանաստեղծների եւ երգիչների հուզաշխարհը՝ դարձավ լեզենդ, բալլադ, ձոն եւ հոլովվեց երգերի մեջ:

Խորհրդային տարիներին առաջին լուրջ բանաստեղծը, որ երգ է ձոնել Ստեփանակերտին՝ ի դեմս դարմետաքվոմբինատի, եղել է Հակոբ Հակոբյանը: Մինչեւ 1988-ը մեր մարզկենտրոնի մասին երգաչար չի ստեղծվել: Պարզ է, թե ինչու: Հայ բանաստեղծը չէր կարող շրջանցել այն վտանգը, որ դամոկլյան թրի պես կախված էր իր ժողովրդի եւ նրա կենտրոնի գլխավերեւ: Ինչպես նկատել է ակադեմիկոս Ս. Սարինյանը, Ղարաբաղը երգի մեջ է մտել կարոտի երանգներով: Նրա զավակները ապրելով եւ ստեղծագործելով Արցախից դուրս, միայն փառաբանել են նրա բնության գեղեցկությունները: Հիրավի այդպես է: Խորհրդային տարիներին ստեղծված ու ընդունված միակ երգը ստեղծել է երգահան Կիմ Առաքելյանը՝ Վ. Օվյանի «Ստեփանակերտ» բանաստեղծության հիման վրա: Ստեփանակերտը 1988-ից երգերի մեջ հոլովվեց որպես մարտնչող զինվորյալ, որպես քարանձավից ելած Սասնա Միեր, որպես ազատության զոց դարպասները ջարդող դյուցազն:

Այս առումով պոետների առջելից քայլում է Վ. Հակոբյանը: Սովորական ձոներ չեն ստեփանակերտյան նրա պատկերները: Ռեալիստական վառ գույներով նա ներկայացնում է Արցախի մայրաքաղաքի հիասթափությունը անցած 70 տարիների սուտ մարգարենների խոստումներից ու արարքներից: «Տաճարն աստծո» պոեմն ասածի հստակ վկայությունն է: Այստեղ նկարագրվում է Թումանյան փողոցը, որտեղ «Տանկերը փողերն ուղղել են մերոնց վրա»: Պոետը հիշում է իր պապին, որ ժամանակին տանկերի հետքերով երգում էր...

*Իսկ հիմա
տանկը գնում է հողի վրայով,
ուր ոսկորներն են պապիս ու նրա նախնիների...
եւ հողի կողերը ցավում են խիստ
աստղերի արյունոտ կարմիրից, պլըկարմիրից,
եւ տատս չանչ անելով դեպի, չգիտեմ՝ ուր,
գնում-գտնում է ռազմական գդակն իր հայի,
պոկում է վրայից տանկի վրա տեսած
հնգաթեւ կարմիրը
եւ նետում է տանկերի ոտքերի տակ:
Տանկը անցնում է կարմիրով,
ուր դեռ փետրվարին 88-ի*

*Մենք մեր գլխից վեր տանում էինք
ծիչերը մեր
միամիտ,
երեխայական՝
«Լենին», «Պարտիա», «Գորբաչով»,
ցավեցնելով հողի տակ կրկին
պապերի վերքերը չսպիացող:*

Այնուհետև պոեմում ներկայացվում են պարետային ժամերը եւ ոտնձգությունները ստեփանակերտցիների հանդեպ: Հուզիչ պատկեր է քանդակագործ Արմեն Հակոբյանի զոհվելու պահի նկարագրությունը, զեներալ Սաֆոնովի ձեռնարկած խժոյժությունները ներկայացված են հանոզիչ ընդհանրացումներով:

Բանաստեղծը լուրջ հաջողությունների է հասել Արցախի անցյալի եւ ներկայի կապը ծիածանող հյուսվածքներում: Առանի, Սաթենիկի, Վաչագանի, Անահիտի կերպարների ապրումն ու գործը բերվում-միաձուլվում է Արաբո-Սոսեի, ապա արցախցիների ընթուստությանն ու երազանքին: Պատմական անցյալից բոլոր ուղիները գալիս-հանգում են Վարարակնի խորհրդավոր ջրին: Պոեմում զագաթնակետային է հետեւյալ պատկերը. «Վաչագանը ձեռքերը իրարու բերեց, բուռ արավ երկու ափով ու արնացուլք ջրիկը կաթկթեցնելով մատների արանքով, տարավ դեպի Անահիտի ծարաված շուրթերը.

-Այս ակն իմ սրտից է բխում, Անահիտ...

Եվ դրա համար այդքան վարար է,- ծարավը կոտրեց Անահիտը:- Վարարակն... Վարարակն...

Եվ աղբյուրը կոչվեց Վարարակն: Եվ Վարարակնի ափին վերակերտվեց

արքայական
ամառանոց՝
Վարարակն...

Այս պատկերից հետո պոեմում բերվում է Արքայի հրամանը՝ Հայրենիքի սիրո հրամանը, որն ազդարարում է. «Առանի նիզակի ծայրին էր մեր գոյության աղբյուրը»: Վարարակնը պոեմի սյուժեի կիզակետն է, որը դառնում է Արցախն Արցախ պահող ուժ ու դաս... Պոեմն ավարտվում է հետեւյալ ընդհանրացմամբ.

*Ես իմ Աստծո անձեռակերտն եմ,
եւ իմ արձակած նետի սուր ծայրին*

հայոց աշխարհում
բարձրանում-ելնում-
վերընձյուղվում է
Տաճարն Աստժո:
Ես միշտ գնում եմ:
Ես միշտ գալիս եմ:
Իսկ մի ծաղիկ
խորհրդավոր,
խորհրդաշատ
միշտ թեքվում է Վարարակնի
վարար ակին-
գրվանի տակ չդրվող լո՛ւյս...

Ստեփանակերտը հղիվում է Վ. Հակոբյանի ստեղծագործու-
թյուններում տարբեր առիթներով: Ուշագրավ են նրա «Թուղթ Անա-
հիտ Չարենցին գրված Ստեփանակերտից» բանաստեղծությունը,
որի տողերում մեր փոքրիկ մայրաքաղաքը ժողովրդական ոգու
երանգներով հասնում է Արցախի չորս կողմերը, թեև ծում Գանձա-
սարում, որը համարժեք է Արցախ-Հայաստան ձգված ծիածանին:
Չարենցի դասերը ներկայացվում է որպես անհուն կարոտի
ծփանք, որ ալիքվում է Ստեփանակերտից մինչև Երեւան: Թեմա-
յի բացահայտման հետաքրքիր պատկեր է Վ.Հակոբյանի «Գարե-
գին Նժդեհի փողոցի վրա» հյուսվածքը: Այստեղ եռամիասնություն
են կազմում Ստեփանակերտի Գ.Նժդեհի փողոցը, քնարական հե-
րոսը՝ Սարգիսը եւ Նժդեհյան պատգամը՝ ուղղված ապագային:
Սարգիսը կամքի թելադրանքով մասնակցում է մարդահամարին,
քթի տակ ձգելով մի երգ. «Ելնեն Սասուն, առնեն Վան»: Սարգսի
ոտքերի տակ Գարեգին Նժդեհ փողոցն էր արձագանքում:

Ստեփանակերտին նվիրված յուրաքանչյուր պատկերի մեջ Վ.
Հակոբյանը բացում է Արցախի եւ արցախցու պատմությունն ու հո-
գու հարստությունը ապրումի մի նոր երանգով: Արժե ընդգծել նրա
«Պայտ» ստեղծագործությունը: Քաղաքի արվարձաններից մե-
կում՝ Արմենավանում, քնարական հերոսը գտնում է մի պայտ՝
«Կորված, իսկը՝ մարմնամարզուհու բարակ մեջք»։ Նա վերցնում է
պայտը եւ հյուսաթելով կախում պարանոցից, համոզված լինելով,
որ «պայտից թռչող կայծերը լուսավորում են» իր ուղին:

Ի՞նչ է իրենից ներկայացնում ազատագրված, անկախության

ճանփով ընթացող Ստեփանակերտը: Այս հարցի պատկերավոր պատասխանը կարող ենք կարդալ Վ. Հակոբյանի «Աղանց ընկուզենու տակ», Հ. Բեգլարյանի «Հավատ», Ռ. Եսայանի «Թիրախ», Ծ. Բաղդասարյանի «Քաղաք իմ», տողերիս հեղինակի «Վարարակն» եւ այլոց ստեղծագործություններում:

Վերջերս Երեւանում լույս է տեսել Էդ. Միլիտոնյանի «Արցախական» գրքույկը, որը, արտահայտում է համաժողովրդական այն հպարտությունն ու համակրանքը, որ վայելում են Արցախ աշխարհն ու հերոսացած արցախցիները: Նրանում զետեղված «Ստեփանակերտ» բանաստեղծությունը, որն իսկ եւ իսկ մեր աստղանոտ լեռնաշխարհի, նրա մայրաքաղաքի, նրա քաղաքացու զեղեցկության ու ոգու զեղարվեստական պատկեր-դիմանկարն է, որը բերում ենք ամբողջությամբ.

Ասեմ որտեղ է ապրում ռազմի որդին՝

Կանաչ լռությունը:

Այստեղ, այս քաղաքում:

Ասեմ որտեղ է ապրում սրերով խոցված

Կարմիր ցուլն ազատության,

Այստեղ, այս քաղաքում:

Կասեմ որտեղ է ապրում

Իսկական դեղնականաչն հավատի:

Այստեղ, այս քաղաքում:

Որքան էլ փոքրիկ է մայրաքաղաքն այս,

Կասեմ, աշխարհի ամենամեծ կապույտը մաքառման

Ապրում է այստեղ, լեռներում երկնահաս:

Ստեփանակերտին նվիրած երգերը նոր են պատրաստվում թռիչքի: Մեր պոետները անելիքներ շատ ունեն: Հերոսական մեր քաղաքը, տառապանքի եւ հույսի շողերով օժված ու կոփված մեր համաքաղաքացիներն արժանի են եւ սպասում են նոր, բարձրարժեք ստեղծագործությունների: Առկա է աղբյուրը, բորբոքուն է հավատը, սերն անմարում: Հունձքը լինելու է առատ:

«Ստեփանակերտ»,

16 հոկտեմբերի, 2007թ.

ՊԱՇՏԱՍՈՒՆՔԻ ՀԱՍՆՈՂ ՍԵՐ
(Մետաքսե - 70)

Արդի հայ պոեզիայի տաղանդավոր ներկայացուցիչներից մեկը՝ Մետաքսեն, իր բազմալար քնարերգության մեջ տարիների ընթացքում ստեղծել է Արցախի յուրօրինակ պատկեր-կերպարը: Հարազատ դստեր նրա սերն ուղղակի վերածվել է պաշտամունքի՝ բացահայտվել բազմաթիվ ստեղծագործություններում: Պատահական չէ, որ Մետաքսեն «Արցունքները չեն ծերանում» ընտրանու առանձին մի բաժին անվանեց «Իմ հայրենի Ղարաբաղ»: Այդ շարքը ներբողական ոճից բարձրանում էլ դառնում է հարազատ մորը սիրող զավակի տազնապած սրտի թրթիռ, Արցախի ճակատագրի համար անհանգիստ հոգու ծփանք: Այստեղ բանաստեղծուհու հյուսած պատկերները Արցախի հրաշք բնության, պատմական հուշարձանների, հաղթանակների եւ նահանջների, ակնկալությունների եւ տվայտանքների ծածանումներն են: Նա սեփական հոգու ցավն այնպես է ծուլում լեռնաշխարհի գեղեցկություններին, որ ընթերցողը շոշափում ու տեսնում է այդ մխացող տազնապը: Արցախի գետերը ասես բանաստեղծուհու «աչքերից են սկիզբ առնում» եւ «ողողում ծմեռները տառապանքի»:

Մետաքսեն Արցախը համարում է «լեռնապարիսպ հայ աշխարհի», որ թրթռում է յուրաքանչյուր հայի «շնչավոր երազներում»: Արցախը հայաոճ տաճար է, «Երեւելի քարեղեն հավատ», որ «Վիրավոր, տառապյալ կանգնել մահին ընդդեմ... գույն է պահում խռով»: Բանաստեղծուհին արցախյան շարժման հենց սկզբից կոչ է արել սթափվել «հույսերի նվաղումից» եւ ոտքի ելնել: Թշնամին վերքեր է հասցրել Արցախին, այրվել են նրա խորանների կամարները, գնդակներից խոցված են գմբեթները, բայց մաքառել է պետք, որովհետեւ դա է ազատության միակ ճանապարհը:

Մետաքսեն ոտքով շրջել է Արցախում, տեսել, թե ինչպես ահն ու սարսափն էր իշխում ազերի հրոսականների եւ խորհրդային զինվորների տեսքով, ու ցավով գրել.

*Եվ մենք անցնում ենք մեր այս ծորերով,
Որպես շփոթված հյուր ու անցավոր,
Անմեղ հանցավոր...*

*Բայց ե՞րբ ենք, արդյոք, ե՞րբ ենք անցնելու
Որպես տեր, իշխան,
Որպես թագավոր,
Առա՛նց ահերի,
Առա՛նց դավերի,
Ախ, առա՛նց, առա՛նց, առա՛նց, ցավերի...*

(«Մեր հին ծորում»):

Երգից երգ Մետաքսեի քնարական հերոսը ցավից ու լացից քայլ քայլեց դեպի մաքառման դաշտը: Բանաստեղծուհին մերթ դիմեց Արցախա սարերին («Մռով»), մերթ՝ սրբանախշ խաչքարերին («Խութրավանքի խաչքարերը»), մերթ՝ զրույց է բացում 9-րդ դարում արաբական զավթիչներին ծնկի բերող Արցախա իշխան Եսայի Աբու-Մուսեի հետ՝ դիմակայելու թշնամու «դավադիր խաղին» եւ «քառուղիներում այս ահեղ դարի» վերածնելու «Լույսի կապույտ զարթոնքը» երգի: Բանաստեղծուհին շնչավորում է Արցախի սրբավայրերը՝ դրանք դիտելով որպես արցախցու եւ Աստծո միջեւ եղած հավատի առհավատչյա: Տարիներ շարունակ մոռացության մատնված Գանձասարը տաք է մնացել մեր հավատի պես, նրա «խաչքարերին դաջել են կարմիր վերքեր», բայց էլի կանգնուն է մնացել:

Եկել է բանաստեղծուհու երագած պահը: Ծփում է ազատ եւ անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եռագույնը: Նրա ծփանքների տակ հնչում են Գանձասարի զանգերը, եւ Մետաքսեն ոգելորված գրում է.

*Ուսերիդ առած դարերի ոգին
Եվ կորուստներիդ ցավը խելահեղ,
Գոյատեւման ճամփիդ կանգուն ես էլի,
Իմ երանելի...*

Սրտանց շնորհավորում ենք Մետաքսեի ծննդյան 70-ամյակը եւ մաղթում արցախյան սեր ու երկարակեցություն:

**«Ազատ Արցախ»,
24 դեկտեմբերի, 1998թ.**

ԵՐԳՈՂ ՄՐՏԻ ԸՆԾԱՆԵՐԸ

(Դավիթ Միքայելյան - 50)

Աստված բանաստեղծներին ընտրել է որպես իր քարտուղարը երկրի վրա: Դավիթը ի ծնե բանաստեղծ է՝ հոգու երգիչ: Հոգին չի ծերանում: Դավիթը միշտ ջահել է մնալու երազով, երգով: Բերենք Դավթի բանաստեղծական ինքնախոստովանանքը.

Լույսը

Հավատիս ուղեկիցն է

Ու արձագանքը խոհերիս,

Որ անվերջ տառապում է

Ինքնայրման բոցով,

Լուսնի պես շիկանում,

Հույսի պես երկնում...

Ինչպես տեսնում ենք, Դավիթ բանաստեղծի հավատի ուղեկիցը եւ խոհերի արձագանքը լույսն է եղել եւ է: Այստեղ չենք կարող չմատնանշել «Սուրբ գրքի» խորհուրդը՝ «Եղիցի լույս»:

Դ. Միքայելյանը իր «Լույսը պահապան» ծրագրային բանաստեղծությամբ բացել է պոետական հոգու դռները եւ ընթերցողին հրավիրել իր փայփայած երգերի պարտեզը: Բազմազան են այդ պարտեզի երգ-ծաղիկները: Դրանց բույրը ընթերցողը զգացել է դեռեւս 1989թ., երբ Երեւանում «Խորհրդային գրող» հրատարակչությունը լույս ընծայեց նրա «Հավատի ժամ» անդրանիկ ժողովածուն: Նրանում զետեղված բանաստեղծությունները ամնացորդ բացահայտեցին հեղինակի նախասիրությունները: Դրանք հյուսված են հարազատ լեռնաշխարհի մարդկանց կենսափիլիսոփայությունից ու հոգեբանությունից: Այդ մարդիկ արմատներով ու ճյուղերով սերտորեն կապված են հայրենի եզերքին, ձգտումներով, բարոյական դիմագծով իրենց նախնիների լավագույն ավանդույթների խտացումն ու շարունակողներն են՝ նրբասիրտ ու խիզախ, հպարտ ու գեղեցիկ, արմատներով առողջ, երազներով ծիածանագույն:

Դ. Միքայելյանի համար Արցախը կենսաբեր պատկերների կոնկրետ համաձուլվածք է՝ հայաշունչ, հայակերտ, հայապահպան: Նրա երգերում Արցախ-այգու ծառերը պապի ձեռքով են

պատվաստված, այդ ծառերը միշտ արթուն են, «բներին՝ ծալ-ծալ կնճիռ-ծալքերը», նրանցից «ամեն մեկը դալար շյուղերին կրում է պապի հայկական մատնահետքերը» («Պապիս ծառերը»):

Դ. Միքայելյանի ստեղծագործական խառնվածքը արարունմի իր երանգներն ունի, ինչ անում է՝ իրենն է, ինչ ասում է՝ իրենը, ինչ արցախյան է՝ երգի մեջ է առնում: Դրանով պետք է բացատրել նրա խոսքի անմիջականությունը: Դավթի համար արցախյան թթեմին այգու եւ տան նախշ ու հավատ է, որ պետք է փայփայել եւ հանձնել սերունդներին: Արցախ-այգու առվակը հավերժության հիմն է («Հոգու առվակը»), զարունը սերմնացան է՝ հասուն հունդեր է պահ տալիս հողին («Կանաչ զարնամանուտ»), թրաշուշանի ծաղկաթերթերը բոցկլտացող մոմեր են («Թրաշուշանի ծաղկաթերթերը»), ծիրանիները ծաղկաշոր հագած նորահարսեր են («Բաղձանք»): Այս օրինակները կրկին հաստատում են մի ճշմարտություն՝ որ լավ երգը ծնվում է հայրենի օջախների լույսերից եւ նրանց տերերի խոհերից ու ապրումներից:

Դ. Միքայելյանի համար լույսը նաեւ՝

*Ծառ է ծիրանի,
...Կարոտի ծիչ է լույսը կենարար
Ու տաք շշուկն է սեւաչ բալիկիս:
Լույսը պահապան
Օջախիս,
Խղճիս...*

Բազում դարերի տարիք ունեցող հայ երգի լույսի թրթիռը հասել է Դ. Միքայելյանին, եւ նա հայրենիքի աչքերում ու հոգում լույսի շողեր է կարդում, լույս, որով գծված է մեր պատմության դժվարին ու փառավոր ճանապարհը: Այդ լույսի շափաղումներով էլ Դ. Միքայելյանը իր խոսքն է ուղղում առ Հայաստան ու Արցախ, առ Վայոց ձոր ու հայրենի գյուղ: Եվ նա իր գրչեղբայրների պես բացում է խոհի ու խորհուրդի շերտերը, որտեղ էլ ծնվում է իսկական բանաստեղծությունը: Հայաստանին նա խոստովանում է.

*Եվ առավոտս ծաղկում է քեզնով:
...Քայլերս
Անվերջ ճամփադ են փնտրում,
Ու տառապանքս նեղվում է ցավից,
Մինչեւ ե՞րբ պիտի*

Հարագատ մորն իր
Որդին երագի աչքերով նայի,
Հեռվից կարոտի...

Սակայն այդ հարցը չի մշուշում բանաստեղծի սրտից ծնված երգը: Ի հեճուկս հին ու նոր թշնամիների, նա ավելի խորն է պատմում այն ամենը, ինչ արցախյան-հայկական է՝ ե՛լ երգը, ե՛լ թթենին, ե՛լ արեւը, ե՛լ անտառը, եւ, առանձնապէս, հողը:

Դ. Միքայելյանի բանաստեղծական շարքերը՝ նվիրված հորը, մորը, սիրած էակին, խոսում են նրա քնարական հերոսի ազնիվ սրտի, մարդկային չխաթարվող կերպարի մասին:

Բանաստեղծի երգող սրտի ջահել մնալու գաղտնիքը միայն ոտանավորը չէ: Ընթերցողը կարող է հաստատել, որ ով անտարբեր չէ իմաստնացած ծիծաղի հանդէպ, նա չի ծերանա: Վկան՝ Դ. Միքայելյանի «Լուսածորցի Մուքին կատակում է» երգիծական պատմվածքների ժողովածուն է: Բանաստեղծի հունորը արմատներ ունի: Դրանք հայ ժողովրդական բանավոր սրամիտ զրույցներն են, Պըլը-Պուղու երգիծական իմաստությունները, ժամանակակից անեկդոտները: Դավիթը երգիծելու իր շնորքը դրսեւորում է սովորական մի արցախցու՝ Մուքու անունով: Մուքին սրամիտ է, հնարամիտ: Նրա շրջապատը լուսածորցիներն են եւ հարեւան բնակավայրերի գյուղացիները: Բայց նա զիտն նաեւ աշխարհն ու նրա մարդկանց: Մուքին իր կատակներում եւ հաղթող է, եւ նահանջող, բայց միշտ՝ կենսախիճն է կենսահաստատ: Նրա կերպարում հեղինակը խտացրել է ժողովրդի կենսափորձից ծնված իմաստությունը՝ լինել հպարտ, ամուր, հայրենասեր, արդարամիտ, բարի, թշնամու հանդէպ անզիջում: Միքայելյանի Մուքին մանրութների մեջ չի խճճվում: Հասարակության քաղաքական, սոցիալական, բարոյական եւ այլ խնդիրներ գտնվում են գրողի ուշադրության կիզակետում: Մուքին ազգային խորհրդանիշ է, նա կա Արցախի բոլոր շրջաններում, բոլոր գյուղերում: Ասել է թե՛ նա ծնված է ժողովրդի հարատեւող լավատեսությունից եւ ակնկալիքներից:

Ընթերցողները որպէս՝ հաճելի նվեր ընդունեցին Դ. Միքայելյանի «Մեղրագետ» գիրքը, որը բանաստեղծի անհանգիստ սրտի արդյունք է:

Յուրաքանչյուր անգամ, երբ հիշում ենք Գ. Գաբրիելյանի հորինած երգերը իր իսկ կատարմամբ, անմիջապէս դիմում ենք նաեւ

Գ. Միքայելյանին: Նրա աստվածատուր ծայնն ու ժողովրդական երգերը կատարելու հմտությունը քանի-քանի անգամ են մեզ պարուրել ուրախության եւ լուսավոր թախծի ելեւէջներով: Դավիթը նաեւ ինքնուս երգահան է: Նրա տասնյակ երգեր՝ ծնված արցախյան պատերազմի նահատակների սուրբ հիշատակին, արդեն մտել են մի շարք համույթների երգացանկերի մեջ: Նրա «Ցավից ծնված երգեր» ժողովածուն թախծից ու կարոտից ակունքված կարոտների արտահայտություն է: Արժանի գնահատական է ԼԴՅ կառավարության եղիշեի անվան մրցանակը, որ ստացել է Դավիթը այդ սրտառուչ երգերի համար: Այդ երգերը եւս Դավթի երգող սրտի ընծաներն են երկրին, ժողովրդին:

Լայն են Գ. Միքայելյանի հետաքրքրությունների շրջանակները: Վերջերս տպագրված նրա գիրքը Արցախի թեմի պատմության հետազոծով, լուրջ եւ անհրաժեշտ ուսումնասիրություն է:

Դավիթը նաեւ տաղանդավոր լրագրող է: Ծնվելով Բալուջա (Այգեստան) գյուղում, ստանալով բանասիրական բարձրագույն կրթություն՝ նա իր ուժերը նվիրել է արցախյան մամուլի զարգացմանը: Մեծ է նրա վաստակը որպես «Խորհրդային Ղարաբաղ», «Կարմիր դրոշ» թերթերի թղթակից, ինչպես նաեւ «Արցախ» հրատարակչության տնօրեն: Նա ԼԴՅ կառավարության մամուլի քարտուղարն է, միաժամանակ «Հայաստանի Հանրապետության» թերթի թղթակիցն Արցախում:

*«Ազատ Արցախ»,
19 նոյեմբերի, 2002թ.*

**ՌՌԲԵՐՏ ԵՍԱՅԱՆԻ ՊՈՆՁԻԱՆ
(Առաջաբանի փոխարեն)**

Արցախյան ազգային-ազատագրական պայքարը ոչ միայն հայ ժողովրդի զինվորական ոգու արթնացման կոչ համդիսացավ, այլ մի նոր մղում եղավ բանաստեղծության առատ հունձքի համար: Գոյամարտի տարիներին ճանաչված գրողների շարքերը համալրվեցին աստվածաշնորհ ստեղծագործողներով: Ինչպես պատմության ընթացքում, այնպես էլ 1988-ի հրամայականով իրենց բանաստեղծական խոսքն ասացին նաեւ երիտասարդ պոետները: Նրանք են ընկերացան զենքին, են զենքին գումարեցին իրենց մարտական երգը: Նման բանաստեղծներից են Ն. Գասպարյանը, Դ. Միքայելյանը, Զ. Ալեքսանյանը, Ա. Քոչարյանը, Ժ. Բեգլարյանը, Ա. Գրիգորյանը եւ ուրիշներ: Հաճելի է ընդգծել, որ այդ նոր անունների շարքում իր բեղմնավոր գործով եւ պոետական ինքնատիպ ձայնով աչքի է ընկնում Ռ. Եսայանը, որն արժանացել է ոչ միայն ընթերցողների լայն շրջանների, այլեւ գրականագետների եւ ակադեմիկոսների ուշադրությանը:

Իր ստեղծագործական ճանապարհը Ռ. Եսայանը զարդարեց «Հեմակետեր», «Ծարաված հետքեր», «Տարածություն եւ հոգի», «Նժար», «Քառս եւ լույս», «Հետագիծ», «Սիրո գիրք», «Ելք», «Երազի սահանքներ», «Անդրժամանակի հենարաններ», «Ատուլների եզերք» ժողովածուներով:

Գրքից-գիրք ավելի հասունացավ բանաստեղծի տաղանդը: Դեռեւս 1989թ. ռուս բանաստեղծ Պյոտր Կոշելը ծանոթանալով Ռ. Եսայանի բանաստեղծական շարքերին, հիացմունքով գրել է. «Լեռնային Ղարաբաղից Ռոբերտ Եսայանի պոեզիան արժանի է սելեռուն ուշադրության: Այն նրա հասակակիցների կողմից իսկույն թարգմանվեց ռուսերեն ու հրատարակվելու երաշխավորվեց մոսկովյան ամսագրերում: Հայ մշակույթն իրավունք ունի հպարտանալու իր զավակով, պոեզիայի երկնականարում հայտնվել է մի նոր տաղանդ»: Այս հաճելի գնահատականը ավելի պարտավորեցրեց երիտասարդ բանաստեղծին, նա իր հանդեպ ցուցաբերեց ավելի խստապահանջկոտություն, նորանոր գրքեր ընծայելով ընթերցողներին: Ինչպես ասում են՝ նրա աճը տեղի ունեցավ օրերով,

Ժամերով: Այդ երեւոյթը նկատեց նաեւ տաղանդավոր բանաստեղծ Գ. Էմինը եւ ոգեւորող նամակ գրեց Ռ. Եսայանին, որտեղ ասված է. «Եթէ մեկն ուզենա թվարկել մեր այսօրվա տաղանդավոր բանաստեղծներին, ապա դու անկասկած պիտի լինես նրանց շարքում: Ի սրտե շնորհավորում եմ քեզ եւ սպասում քո նոր գրքերին»:

Ռ. Եսայանի ստեղծագործությանը հետեւել եմ ուշի-ուշով, գրախոսել նրա գրքերը, ողջունել, համծին նրա տեսել մեր պոեզիայի զարգացմանն ու հարստացմանը նվիրված աստվածաշնորհ մի ինքնատիպ պոետ:

Սույն աշխատությունս երկար տարիների ընթացքում իմ տասնյակ հոդվածների հանրագումարն է Ռ. Եսայանի մասին: Այն շնորհավորանքի սրտագին արտահայտություն է վաստակաշատ բանաստեղծի ծննդյան 50-ամյակի առթիվ: Հավատում եմ, որ նրա տաղանդը առաջիկա տարիներին նոր հրաշքներ պիտի գործի՝ ի փառս հայ պոեզիայի զարգացման:

Օրհնում եմ նրա գալիք 50-ամյա ուղին, ակնկալելով նրա բարձրարվեստ հատորները: Սերունդներին անհրաժեշտ են դրանք:

1. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՔՆԱՐԸ

Ռ. Եսայանի ճանապարհը հայրենիքի հանդեպ սիրո եւ նվիրումի ուղի է: Եվ պարզ է, որ դրանից էլ ծնվել է նրա ունեցած որդիական զգացմունքների բանաստեղծականացման ջերմությունն ու ինքնատիպությունը:

Ռ. Եսայանը ծնվել է 1958թ. դեկտեմբերի 26-ին, Ժդանովի շրջանի (Արցախ աշխարհի պատմական Բայլականի) Նոր-շեն գյուղում: Բանաստեղծի ծնողները Արցախի տափաստան են իջել Խաչենի հովտում գտնվող Քոլատակ գյուղից: 1930-ական թվականներից սկսած Ադրբեջանի կառավարող շրջանները վարելով հայահալած քաղաքականություն, հայերին իրենց ավանդական լեռնային գյուղերից տեղափոխում էին տափաստաններ երկու նպատակով՝ նախ շենացնելու եւ կերտելու ադրբեջանական շրջաններն ու քաղաքները, եւ ապա, որ իրենց համար կարելու էր, հայաթափ անելու Արցախը եւ Ադրբեջանի կազմի մեջ մտցրած մյուս հայաշատ շրջանները: Սիւս, հենց այս հայադավ քաղաքականության արդյունքում էլ տափաստան են տեղափոխվել ապագա բանաստեղծի

Ծնողները եւ հազարավոր հայերի հետ մեկտեղ հիմնադրել Նոր-չեն գյուղը, որ զբաղվում էր բամբակի մշակումով:

Ռ. Եսայանը միջնակարգ կրթությունն ստացել է Ստեփանակերտ քաղաքում: 1984-1989թթ. սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում: 1986-ին աշխատել է Ասկերանի շրջանային «Կարմիր դրոշ» թերթի խմբագրությունում՝ որպես թղթակից: 1989-92-ին Լեռնային Ղարաբաղի հեռուստահաղորդումների կոմիտեում աշխատել է որպես խմբագիր: 1992-94-ին բանաստեղծը մասնակցել է արցախյան պատերազմին՝ որպես հրետանավոր:

Բանաստեղծն ապրում եւ ստեղծագործում է Շուշի քաղաքում, ուր ղեկավարում է ԼՂՀ գրողների միության մասնաճյուղը: Նա ԼՂՀ Կառավարության Եղիշեի անվան, Արցախի գրողների միության Յ. Շիրազի անվան, Հայաստանի գրողների միության Դ. Վարուժանի անվան մրցանակների դափնեկիր է: Այժմ «Հայրենյաց պաշտպան» թերթի խմբագիրն է:

Ռ. Եսայանի հայրենապատումը գնահատվել է մի շարք գրողների եւ գրականագետների կողմից: Նրա պոետական ճանապարհը օրհնողներից մեկը եղել է բանաստեղծ Վ. Հակոբյանը: Ապա տողերիս հեղինակը բավականին տեղ է հատկացրել իր «Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում՝ (1950-1990-ական թթ.)» գրքում, որտեղ նշել են. «Ռ. Եսայանի հայրենասիրական երգերը ոգեկոչելու ուժ ունեն, որովհետեւ դրանք հնչում են որպես գոյության նոր դասեր, գինվորագրվելու ազդակներ... Հայացքն ուղղելով Տիրոջը, Ռ. Եսայանը բացում է մշուշոտ վարագույրը, համարձակ մեջտեղ բերում ընդվզումից հառնող իր հենակետերը... Նրա հենակետերը ակունքվում են հողից, ճակատագրից, հավատից»:

Հիրավի, Ռ. Եսայանի հայրենապատումը նման ապրումների հյուսվածք է՝ անմիջական, առինքնող:

Ուսումնասիրելով Ռ. Եսայանի ժողովածուները, չես կարող չվերհիշել մեր ժողովրդի ծանրածանր գոյընթացը եւ պատմական ամենաողբերգական պահերին անգամ նրա մտավոր կարողությունների փայլատակումն ու գեղեցիկ խոսքի կուտակումը, որով կարող է հպարտանալ յուրաքանչյուր քաղաքակիրթ ժողովուրդ:

Ահավասիկ, 451 թվականը... Պարսից թագավոր Հազկերտի հայակործան գառանցանքը, որի դեմ կայծակեց Վարդանանց գո-

յամարտը: Հենց այդ փոթորկալի էտապում ծնունդ առան հինգերորդ դարի հայ պատմագրությունն ու վարքագրությունը, հոգեւոր երգն ու թուղթը, կանոնն ու ճառը:

Ահավասիկ, 7-10-րդ դարերը, երբ մուլեզմեւ էին արաբական խալիֆայության դաժանությունները հայոց աշխարհում: Մեր ժողովուրդը բռնկեցին իր ֆիզիկական ու բարոյական ուժերը անողորմ թշնամու դեմ, միաժամանակ փայլեցրեց իր հանճարը աստղաբաշխության ու մաթեմատիկայի, ճարտարապետության ու մատենագրության, հոգեւոր ու աշխարհիկ պոեզիայի բնագավառներում:

Ահավասիկ, 11-18-րդ դարերը: Հայոց երկրի ամենամղձավանջային ժամանակները՝ մահու եւ կենաց զոտեմարտերի, կորուստների ու գտնումների, հալածանքների եւ հույսի դարաշրջանները: Հայ ժողովուրդը սելջուկյան մահահոտ կռիւներին պարզեց իր մարդասիրական անկաւարժությունն ու Գր. Նարեկացու պոեզիան, մոնղոլական արնաներկ նետերին՝ Ֆրիկի եւ Երզնկացու ըմբոստ ու քնքուշ երգը, թուրք ու պարսիկ բռնատիրությունների արշավանքների դեմ հնչեցրեց Նահապետ Քուչակի եւ Սայաթ-Նովայի սիրո սրտամորմոք հայրեններն ու կենսահաստատ տաղերը:

Եվ ապա Աբովյանի վերքեր բուժող «Վերք»-ը, Արաքսի կորստի լացով մայր գետի հանդեպ մեր սերն արթուն պահող պատկանյանական «Մայր Արաքսի ափերով» երգը, հեթանոսական ավյունով իր ցեղի սիրտը մարդկությանը պարզող Վարուժանի «Ցեղին սիրտը» շարքը, աշխարհի արդարության ճակատին թքող Սիամանթոյի ազնիվ ճիչը, հայոց երկնահաս սարերի վեհությունն ու հավերժությունն ընդգծող թումանյանական «Հայոց լեռներում»-ը եւ էլի երկեր՝ մեր համագգային ցավից ծնված, մեր ցավը բուժող, մեր երթը ոգեշնչող ու լինելիությունը հաստատող երգեր:

Եվ մեր նորօրյա թեժ պայքարի օրերին ի հեճուկս մեր թշնամիների, արցախահայ երիտասարդները գեղեցիկ խոսքեր փնջեցին, ինքնատիպ բանաստեղծություններ ծրարեցին ընթերցողներին եւ ազդարարեցին, որ մեր ժողովուրդը կռվել գիտե եւ գենքով, եւ երգով, որ մեր ժողովուրդը ինքնահաստատման իր խոսքը ուղղում է երկրին ու մարդուն, աշխարհին ու ապագային:

Տառապանքից են ծնված երիտասարդ պոետի երգերը: Ռ. Եսայանը իր նախորդներից փոխ է առել արյան հյուլեն, որն իր մեջ գե-

Մից բացի ներառում է բազմադարյան հիշողությունը, բոլոր կշիռները լուծում արցունքի մեջ, արեւով ցրում վիշտը եւ հասունանում արագ.

*Մեկ էլ ե՞րբ եմ, Տեր իմ, կարոտել ինձ այսքան,
Հասունացել այսքան կորուստների ահից:*

Եվ հասունացած բանաստեղծը խոսում է իր իմաստուն ժողովրդի անունից, գիտակցելով, որ մեր ցավը շատ կողմերով կապված է չմաքրված աշխարհի հետ, ուր

*Ահը ահի մեջ է տեղավորվում դարձյալ,
Մեղքն է տեղավորվում անքավ մեղքի վրա:*

Բանաստեղծը ճնշված ժողովրդի լուսեղեն գալիքը տեսնում է մաքրված աշխարհի մեջ. «Աշխարհը թող մաքրի իրեն, զուլալվի տառապած աչքի պես»...

Խոսելով հոգու աստղերի քարավաններ ունեցող արվեստագետի անունից, Ռ. Եսայանը ծջում է. «... Սա կյանք չէ, տեր իմ, իմ բնությանը վայել»: Սակայն դա հուսալքված մարդու թեւաթափ խոսքը չէ: Նա ունի զարման ու գոյության, տագնապի ու հույսի հենակետեր, որոնք արմատակալած են եւ ընդունակ վերընձյուղման: Գոյության կանչն է թրթռում բանաստեղծի սրտում.

Իմ արձագանքը մայթին՝

Կոչվում է ստվեր:

Իմ արձագանքը ծառին՝

Կոչվում է ընձյուղ:

Իմ արձագանքը հողին՝

Կոչվում է հիմք:

Իմ գոյատևման օդն եմ շնչում ես

Բառի եւ տողի անհուն թռքերով,

Այնպես եմ շնչում, որ օրն է դառնում

Իմ շնչի ներքո հավատի ստեղ...

Ապրածի ցավը դարձել է առօրյա չարչարանք եւ փաթաթվել օրերի ուսերին, որից անհրաժեշտ է ազատվել: Իսկ այդ ազատությունը կապված է հող հայրենիի փրկության հետ, առանց որի չի լինի եւ ոգու ազատություն: Բանաստեղծը նպատակին հասնելու համար հենակետեր է որոնում եւ առաջինը որ գտնում է, դա հենց իր երիտասարդ տարիքն էր: Նա ստացել է ավանդ ու ժառանգություն, այդ բեռը ծա՞նր է, թե՛ թեթեւ, իրենն է, իրաժարվել չի լինի:

Իրենն են լեռն ու դաշտը, գետն ու անտառը, իրենն են անարդարության հարվածները կրող հարազատները: Ուստի կյանքի հրամայականը խրախուսում է նրան, որ, նախ, գլուխ խոնարհի քաջ պապերի հիշատակի առջեւ, ձեռքը մեկնի պատից կախած նրանց թրերին եւ իր սերնդին կոչի պատվի, լեզվի, օջախի հարատեւման: Ռ. Եսայան-բանաստեղծը բացառում է արցունքը եւ ընդգծում.

Ես...

*Արցունք չունեն: Ինչպես ամեն նոր
Ու աշխարհ եկող սերունդ, ունեն խոսք,
Որը ծնունդ է արցունքի նման
Եվ երկնքի պես հանգստացնող...*

Ես...

*Արցունք չունեն: Քրքրված, քամված
Կանգնել են շենին տիեզերական
Եվ անհրական փոփոխումների,
Երակիս լեզուն արյունս է անմահ...*

Գրախոսելով «Յենակետեր» գիրքը, նկատել ենք, որ «Ռոբերտ Եսայանը որոնում է կյանքի առեղծվածները եւ գտնում:

Կարդալով բանաստեղծի երգերը, ոգեւորվում ես, որովհետեւ դրանք հնչում են որպես նոր գոյության դասեր, զինվորագրվելու ազդակներ:

Ռ. Եսայանն ընդգծում է ինքնաճանաչման պահը, որից էլ սկիզբ է առնում նոր ճանապարհը: Հայացքն ուղղելով Տիրոջը, նա բացում է մշուշոտ վարագույրը, համարձակորեն մեջտեղ բերում ընդվզումի հասնող իր հեռակետերից մեկը-եւս.

*... Սա կյանք չէ, տեր իմ,
իմ բնությանը վայել,
անվերջ մաշվում են այսպես
քավարանի մեջ տողի,
Ո՞վ է բացի քեզանից
իմ դժոխքի մեջ նայել...*

Բանաստեղծը ինքն է գտնում պատասխանը: Նա պատրաստվում է ընդկայնելու իր մեջ ինքնաըմբռնման լույսը, որովհետեւ համոզված է, որ սեփական ժողովրդից դուրս ոչինչ չի լինելու: Հաղ-

Քանակը կապված է նրա անվան եւ արյան հետ: Ինքնաճանաչման այս իմաստությունից էլ հենց ծնվում է ուժը, որի առջեւ ոչինչ դիմանալ չի կարող: «Հենակետեր» ժողովածուի համար Ռ. Եսայանը արժանացավ ԼԴՀ գրողների միության Հ. Շիրազի անվան ամենամյա մրցանակի:

Ռ. Եսայանի հասունությունը չափվում է օրերով: 1991թ. «Մաշտոց» հրատարակչությունը լույս ընծայեց նրա «Ծարաված հետքեր» ժողովածուն, 1992թ. «Արցախ»-ը տպագրեց «Տարածություն եւ հոգի» գիրքը: Այս ժողովածուները մեկը մյուսի շարունակությունն են. բանաստեղծի նույն ոճն է, ապրումի նույն ծփանքն ու նույն երանգը, որ նոր են, ինքնատիպության տանող լուծումներ:

«Ծարաված հետքերում» Ռ. Եսայանի խռովքը դարձյալ հայրենիքի եւ մայր ժողովրդի ճակատագիրն է (գիրքը բացվում է «խռովք» քնարական պոեմով: Մեջբերելով Սիամանթոյի «Արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ» հայտնի պոետական ցատունը, Եսայանը որպես ժառանգորդը մեծ երգչի, նոր օրերի մեջ փոփոխված ոչինչ չի գտնում: Հայոց երկիրը այսօր էլ «Չի գտնում ծով լայնության մեջ խղճի մի կետ», «խրճիթներում... անկոչ հյուր է դարձել օդը: Մանուկների արյունոտած ատամներից... Կարմրում է ակամայից... հայոց բառը»: Բանաստեղծի սիրտը ցավում է, երբ տեսնում է, թե ինչպես «Լույս ու մութի միջեւ օրն է հոգեվարում, Եվ վիժում է արգանդի մեջ լուսաբացը...»: Երիտասարդ երգիչը երեկվա եւ այսօրվա թշնամական ոհմակներին լավ է ճանաչում: Ի՞նչ է փոխվել, ոչինչ: Քոչվոր ոճիրների մի հոծ ամբոխ նորից կույր խավարից հանում է ոխը, պղծում ամեն մի երազ ու սրբություն եւ ձգտում տերը դառնալ «Այլաքրտինք խոյանքների ու պատմության...»: Մնում է նահատակված հոր պես թքել արդարության ճակատին: Սակայն դրանով չի վերջակետվում ժառանգորդի վրդովմունքը: Գտնում է ելքը: Դիմելով ընթուստացած Հայոց Արցախ մորը, նա զինվորյալ է դառնում եւ կոչում.

*Քո լույսը հող է եւ ունի կշիռ,
Եվ քո անձրեւը աստղատարափ է.-
Երկունքիդ լույսից այնպես երակվիր,
Որ քո անցյալն ու գալիքը արբեն:*

Ռ. Եսայանի խոսքը իր բոլոր գրքերում ունի հենակետեր, ակունքվում է հողից, ճակատագրից, ցավից, հավատից: Մի դեպքում նա դիմում է Արցախի առաջին արվեստագետ մահատակ Արմեն Չակոբյանին, մի ուրիշ դեպքում՝ բզկտված հող հայրենիին, մի ամբողջ էլ հիշում անցյալը, լավ գիտակցելով, որ ով պատմությունը չի հիշում, նա զրկվում է ներկան գնահատելու կարողությունից եւ ապագային փարվելու հույսից: «Ես հիշում եմ...» բանաստեղծությունը դրա հիանալի օրինակն է: Բանաստեղծի համար մախնիների խիզախությունը անպարագիծ է, նրանք տան սյուններ էին, նրանց համբերության երակը միշտ տաք էր, նրանց համար «լույսը հող էր, Ահը՝ հագուստ, լեզուն՝ դրոշ»։ Սակայն այդ բարենասունությունները փոշեծածկ հուշեր չեն, այլ «արյան խիզախ շիթեր», որոնց անունից բանաստեղծը հաստատում է.

*Եվ գրում եմ գրչո՞վ,
Օ, ոչ՝ մանկա՞ն ճիչով,
Ճիչով կարմիր,
Որ կարեցավ մեր գոյության
Կիսված օրը լույսով կարել,
Որ ապրենք ու շարունակենք
Անբողջանալ...*

Ռ. Եսայանի բանաստեղծական ծայրը երկրի եւ ժողովրդի ճակատագրի արձագանքն է՝ անցած հոգու միջով: Դրա շնորհիվ էլ նրա երգը հնչում է որպես հարատեւման խոստովանություն: Դիմելով Արցախի մայրական բարբառին, բանաստեղծը նրանում առաջին հերթին լինելիության դասն է կարդում, որովհետեւ «լույսն է թագ ամեն տառի գլխին», նրանով խոսող ամեն մի շուրթ մի ճրագ է, այն պարզապես «մեր շունչն ու հորովելն է»: Մեր բարբառը հիշողության մատյան է, խիզախության էջեր պարունակող դասագիրք: Երգից երգ Եսայանը ավելի անմիջական է դառնում: Նրա մտորումները, խոհերը, բաղձանքները այնպես են ձուլվում հայրենիքի ճակատագրին, որ դժվարանում ես տարանջատել, թե որն է որից սկիզբ առնում: Նա ոտքից գլուխ վերածվում է երկրի շնչառության: Բանաստեղծը ծանր ու թեթեւ է ամուսն խոհ ու մտորում եւ գալիս մի եզրակացության, որ հուշերի վրա չի կարելի մեռնել, այլ մտնել հավատամքի շուրջպարի մեջ եւ մաքառել հանուն ապագայի:

Ռ. Եսայանի «Տարածություն եւ հոգի» գիրքը պոետական մի նոր շերտի բացահայտում է: «Երբ շարժվում է տողը իբրեւ տիրոջ ընծա» տողով սկսվող բանաստեղծությունը տարածության եւ հոգու միջեւ ընկած գույների խտացում է: Այդ խտացումը «Կայծքարե ցավ» է, «ոգու թելերի տակ կծկված երազ», «վախվորած մանկան երազ»: Այստեղ կարելուովում է նաեւ «անհաս տենչի արծանը», որ երգի տեսքով բերում է բանաստեղծի վճիռը.

Իբրեւ վրեժ-դարձնեմ տողս զոհասեղան,

Իբրեւ պարզեւ-խառնեմ շունչս Անսահմանին

Ու ոլորեմ աստղերն ի վեր ծես մի կարմիր:

Գրքի քնարական հերոսի ինքնաարտահայտման շրջանակները լայն են: Մերթ շիկնած խոհերի, մերթ սիրած էակի, մերթ էլ ցավի ու վշտի դեմ դիմաց բանաստեղծը աշխարհին իր ասելիքն է բերում: Նրա սիրտը լիքն է մեկ «անլուսամուտ անորոշությամբ», մեկ «մերկ ու փափուկ վայրկյաններով», մեկ «քաղցր շշուկով» ու մեկ էլ «գորովանքով տխուր»: Տխրության եւ վայելքի փեշերը ծփանքով լցնում են հոգու դատարկությունը եւ հուշում. «Ու էլ չի կրի աշխարհն այս իր մեջ-հավերժական վիշտ»:

Ռ. Եսայանի բանաստեղծական խոհն արդեն ծաղկավորվել ու պտղաբեր է դարձել բոլոր առումներով: Խոսքի կուտակումի եւ կենսափորձի գումարը համերաշխվել են, ուստի երգը հնչում է որպես զգացածի եւ իմաստության հյուսվածք: Լինում է, երբ բանաստեղծը կասկածում է «դեռ նոր արթնացած Աստծու» պահպանիչ ուժի վրա, բայց միաժամանակ հավատ է ընծայում Մուսային, ասելով.

Եվ բացելով հոգիս` Աստծո դեմքն ես բացում,

Եվ դնում ես շուրթիս շողերը ծիածանի

Որպես տողեր` սնվող կաթով Անսահմանի:

1997թ. լույս տեսավ Ռ. Եսայանի «Քաոս եւ լույս» ժողովածուն: Մինչեւ այդ նա հրատարակել էր «Յենակետեր», «Ծարաված հետքեր», «Տարածություն եւ հոգի», «Նժար» գրքերը: Դա յուրովի ընտրանի է, որում զետեղվել են բանաստեղծի 1988-1997թթ. գրած լավագույն գործերը: «Չայրենասիրությունը» ժողովածուի հիմնական շաղախն է կազմում: Քնարական հերոսը դատում է այսպես.

Իմ պապն ու տատը արթնանում են իմ մեջ,

Որպես զրույցների եղենային երկիր:

Շատերին կարող է թվալ, թե Ռ. Եսայանը մոդեռն երկեր է գրում: Սակայն այդպես չէ: Ինչպես նկատել է Գ. Էմինը, Ռ. Եսայանը հեռու է «մոդեռնից» եւ ուզածդ «իզմից»: Եվ ճիշտ է դա: Բանաստեղծի ոտքերի տակ տառապած հող-հայրենին է՝ ըմբոստացման հրամայականով: Եվ Եսայանը այդ ավանդական, ոտքի ելած երկրի զավակն է, նրա զինվորյալ երգիչը, պաշտպանն ու դեսպանը: Նրա խոսքն անմիջական է, հստակ, ոչ ճառային: Կեղծ շեշտեր չունի, քնարական հերոսը երկրի հետ խոսում է, ինչպես զավակը կարող է դիմել մորը, առավել եւս այն ժամանակ, երբ որդին տագնապած է.

*Իմ ստվերը պատի վրա
Մեծ է այնքան,
Ինչքան իմ վախը,
Հայրենիք:*

(«Իմ ստվերը»):

Բանաստեղծի խոսքը հուշում է հայրենի հողը, այդ խոսքը իմաստնանում է ժողովրդի խոհերով, որոնց մեջ պատմությունն է արծագանքում, զալիքն է ողջունում: Ժողովրդի եւ երկրի դասերը ապրեցնող են, ոգեւորող.

*Բառդ խորան է
մաքրող
եւ
փրկող,
ուր մտնում եմ ես դող ու երկյուղով,
արշալուսացած ելնում ու գնում...*

Բնութագրումների մեջ երգիչը սրտաբուխ է, պայծառատես: Նրա Արցախ երկիրը «առասպելված» արյան, ծլող եղյամի, զսպանակված շքերթի, տրոփող երկնակամարի, պարող ոտնահետքերի, կյանքի ու սիրո ակունքի թեւավոր ոգու օրրան է.

*Արցախ, դու ես սերը եւ խորհուրդը լույսի,
Քո մեջ արարումն է ապրում որպես Աստված,
Դու ծաղկունքի օրրան, դու շողերով հույսի
Փայփայում ես սուրն ու անդաստանդ փրկված...*

(«Արցախ»):

Կարդալով Ռ. Եսայանի հայրենապատումը, չես կարող չբռնկվել այն աստվածային զգացումով, որ կոչվում է սեր առ հայրենին: Նրանում արցախցի հայի նկարագիրն է, որ կա օջախ-օրորոցում.

*ժամանակն օրորում է տողերս
Բարուրի նման,
Սակայն լացի ծայնից միայն
Ես եմ ցնցվում:*

Քնարական հերոսը չի թեւահատվում երբեք, լավատես է, իսկական «երազի մշակ է», որ հուսալից բացականչում է.

*Բառ, քո բարձունքի օրորոցներում
Մանկություններ կան,
որոնք իմ շրթով ընկում են կաթը
Տիեզերական:*

(«Շաղորդության շեն»):

Ռ. Եսայանի հայրենապատումը խոհի եւ երազի, տվայտանքի եւ ակնկալիքի, սիրո եւ դրժումի, ճակատագրի եւ մաքառման խտացում է: Նրա բանաստեղծությունները ազգային հող ունեն: Նա տազնապում է, երբ նկատում է, որ «միջնադարը նայում է ժամանակի վիհերից», որ «ճակատագիրը քնում է բիբերի... մոխիրի մեջ», երբ «երազանքը շփոթում են ավազի հետ» եւ այլն: Սակայն բանաստեղծը հավատով է նայում կյանքին, դառնում այգաբացի բարի լրաբեր.

*Ես գնում եմ իմ ստվերի միջով՝
Քանդելով ճակատագրի
պարիսպները մութ:
Բառերիս շուրթերի վրայով
Գլորվում է լուսաբացը...*

(«Ինքնասպառում»):

Տաղանդավոր պոետի հայրենապատումի մեջ հետաքրքիր երեւույթ է «խռովք» քնարական պոեմը: Անդրադառնալով ժողովրդի պատմական անցյալին, հեղինակը խարազանում է աշխարհում եղած անարդարությունը՝ առանձնապես հայոց աշխարհի հանդեպ: Նա ընդհանրացնում է.

*Հայոց երկրի շուրթը պրկել որպես աղեղ
ժամանակը խոսքն է նետի պես արծակում,
Որ սուրալով տարածքներում տիեզերքի
Չի գտնում ծով լայնության մեջ խղճի մի կետ,
Որտեղ խրվի ցավամոռաց ու երեքա.
«Արդարություն, թող ես թքնեն քու ճակատիդ»:*

Պատկերելով հայոց խրճիթները, դարերի միջով բանաստեղծը ասես անցնում եւ հասնում է մեր օրերին, որտեղ «արտերի լուսակոհակ բարբառը» լցվել է «աստղահամ քրտինքով»: Ջրուցելով հայրենիքի հետ, քնարական հերոսը տեսնում է նրա «խաղաղ հունձքի երազը» եւ հավատ ընծայում ապագային: Իսկ լուսավոր ապագային հասնելու միակ ճանապարհը պայքարի ուղին է.

*Ա՛խ, հայրենիք, մեծ է եղել խաղաղ հունձքի
երազը քո եւ ստեղծումի խոյանքների՝
Անպարագիծ, ու պաշտել ես դու բիրլիական
Մի սրբությանը աղ ու հացի գրույցն անբառ,
Եվ գալիքն է ձգտել անգամ քեզ մերձենալ,
Ընպել լույսդ, թերթել ոգիդ մազաղաթյա:
(«Խռովք»):*

Ռ. Եսայանի հայրենապատումը հայոց հին ու նոր օրերի դժվարին եւ փառավոր ուղի անցած երկրի գեղարվեստական վավերագրություն է, որը ճանաչողական, դաստիարակչական եւ գեղագիտական մեծ արժեք ունի:

Ռ. Եսայանի «Ասուպների եզերք» գիրքը, որը լույս է տեսել 2008-ին, առանձնահատուկ մի ընտրանի է, որը հստակորեն բնութագրում է նրա բանաստեղծական դիմանկարը: 50-ամյա պոետը գիրքը ներկայացրել է որպես հաշվետվություն՝իր անցած ստեղծագործական 30 տարիների հունձքի հիման վրա: Ի դեպ, այս ժողովածուին հետեւելու է նրա երկրորդ հատորը, որը պատրաստ է տպագրության:

«Ասուպների եզերք»-ում գետեղվել են նաեւ այն ստեղծագործությունները, որոնք գրվել են վերջին տարիներին եւ տեղ չեն գտել նախորդ գրքերում: Թե՛ տարիներ առաջ եւ թե՛ նոր շրջանում

Մրա հյուսած երկերում նկատվում է անընդհատ աճ եւ՝ գաղափարական, եւ՝ գեղարվեստական առումներով: Ազատ բանաստեղծության սահմաններում նա կարողանում է աշխարհընկալման իր բոլոր երանգները ի տես բերել՝ խոհափիլիսոփայական նստվածքով: Ուշագրավն այն է , որ այդ խառնվածքը դրսևորվում է հայրենասիրական, սիրային եւ այլ թեմատիկ շարքերում, որը բացատրվում է իրերի աշխարհը թափանցելու եւ բնության ու մարդկային կյանքի առեղծվածները բացահայտելու նրա կարողությամբ: Գրքի հայրենասիրական երգերում նկատվում են հայրենիք հասկացության լայն ընդգրկումները: Տարածքային առումով նա ներառում է եւ՝ Հայոց կորուսյալ հողերը, եւ՝ Հայաստանի Հանրապետությունը, եւ՝ Արցախն ու Սփյուռքը: Այս հանգամանքը նրա երգերին հաղորդում է զգացմունքային երանգներ եւ մտքի ու ոգու հետ միասին դառնում անբաժանելի մի համաձուլվածք, որին Մեծն Սեւակը անվանում էր «սիմֆոնիզմ»: Հենց այս համանվագայնությունն է, որ ապահովում է պոեզիայի այսօրվա պահանջը: Ժողովածուի համար որպես մուտք հեղինակը զետեղել է մի քառատող, որը կարելի է համարել բանալի՝ նրա ստեղծագործական խառնվածքը եւ գրական հունձքը գնահատելու համար: Սիւս այդ քառատողը.

*Մարդը հավատի պատերը քանդում
 Եւ կորչում է դեռ իր աղոթքից դուրս,
 Հետո... գտնում է կարոտի անդունդ,
 Հետո... տենչում է քառսի մեջ լույս...*
 (էջ 4)

Դժվար չէ նկատել, որ այս պատկերը միաժամանակ բանաստեղծի որոնումների, մաքառումների եւ գտնումների ճանապարհն է հաստատում, որ անձնականի եւ անանձնականի գիրկընդգիրկ արտացոլումն է:

«Ասուպների եզերք»-ը բացվում է «Արցախ» բանաստեղծությամբ: Դա սովորական ձոնն չէ, այլ երկրի ճակատագրի գեղարվեստական վավերագրություն: Բանաստեղծի դիտողունակությունը, նրբանկատությունը եւ սրտացավությունը տվել են հրաշալի արդյունք: Երգի առաջին մասը հայրենիքի անցած ճանապարհի եւ ներկայի կամրջված փիլիսոփայությունն է: Քնարական հերոսի

Իհամար Արցախը մի երկիր է «ուր քարն է հոսում, ինչպես արյան ճակատագիր»: Դա նաեւ «Չարված է հիշողությունից: Ոգի, որ սրբագործում է ճակատն Ապագայի...»: Դեռ ավելին. «Չողը լույսն է համընդհանուր Շարժման»: Բանաստեղծը անդրադարձի հնարանքով ընթերցողին տանում է այն օրերի գիրկը, երբ լեռներն անգամ արտաբերում էին «Ար-ցախ: Չա-յաս-տան: Մի-ա-ցուն» հրաբխված կոչը: Քնարական հերոսի հուզաշխարհը ժամանակի համապատկերի վրա ներկայացվում է խորհրդանիշերի միջոցով՝ անձնավորված դիպուկ նշանառությամբ: *Չորովելի, Լույսի, Երկնքի, Երկփեղկված հորիզոնի* խոսուն բառ-պատկերները տեսանելի են դարձնում ցավի խորությունը: Ամեն ինչ կախված էր «միապետության ցցերից...»: Դա մի ժամանակաշրջան էր, երբ

*Կիսված էր շնչառությունը այս լեռնաշխարհի,
եւ կտրված երակից հոսում էր անընդհատ
արյունը պատմության:*

Պատմության հոսող արյունը Մեծ Չայքի սրտից է հորդում: Միապետության տիրակալներ Լենինն ու Ստալինը հարազատ մորից խլեցին ավանդական Արցախը եւ նետեցին նորաթուխ Ադրբեջանի հայակուլ երախը: Իսկ ի՞նչ կարող էր անել «Չայացքներ մամլող հասարակությունը» Մութի դռներ կողպող գործողությունների հանդեպ: Ըմբոստության օրերին ամբոխը ճարահատյալ ճչում էր. «~~Լենին պարտիա գործաշուկ~~»: Նա չէր էլ գիտակցում, որ խաբված է հենց այդ կուռք-եռամիասնության կողմից: Բանաստեղծը ճշմարտացիորեն բերում է ժամանակի դաժանությունը արդարացի պահանջի հանդեպ, որ միաժամանակ հավատի փլուզում էր նշանակում:

*Դանակի պես սրված հայացքով Առաջնորդի
կիսվում էին Չարության գաղափարն ու լույսը,
եւ կտրված երակից հոսում էր անընդհատ
արյունը Քրիստոսի:*

(էջ 5):

Չայ ժողովրդի վճռականությունը ազգային ազատագրական պայքարի մրրկաշունչ ընթացքում այդ ժամանակահատվածում ներկայացված է թարմ ու դիպուկ արտահայտամիջոցներով, որը պատկեր-գործողության եւ պատկեր-ապրումի միաձուլ օրինակ է:

Փոխաբերությունների ինքնատիպ միջոցներով բանաստեղծը բնութագրում է պայքարի ելած ժողովրդի ճանապարհը՝ որպես սխրագործության ոգի, հայոց երազի ցերեկ: Այդ ճանապարհին զինվորական շարքերից բխում է հույսի արեւը եւ նոր սխրանքի թեւեր է ձեռք բերում ինքնության ոգին: Բանաստեղծությունը շարունակվում է հերոսների հանդեպ եղած ազնիվ երախտիքի արտահայտությամբ.

*Հայոց աշխարհի հերոսներ՝ արի-սյուներ ոգեղեն,
Ոտնահետքերից ձեր հիշատակի աստղեր են ելնում,
այս ճանապարհը-հավիտենության աննված եղեգ,
որից ասքերը ծնվում են միայն՝ իբրեւ հայտնություն:
(էջ 6):*

Ռ. Եսայանը հետսեւեւական շրջանի այն բանաստեղծներից է, որոնք ձեւավորեցին եւ իմաստավորեցին պոեզիայի նոր ուղի՝ տեսական ընդգծվածությամբ եւ բովանդակային հարստությամբ եւ թարմ արտահայտամիջոցներով: Նա 60-ականների հետեւորդներից է՝ Երեւանում Ա. Հարությունյան, Յ. Էդոյան, Յ. Գրիգորյան, Դ. Հովհաննես, Արցախում՝ Վ. Հակոբյան: Ընդամենը նրանցից մեկ տասնյակ տարի հետո ասպարեզ իջած Ռ. Եսայանը այսօր մտնում է այդ աստղաբույլի մեջ՝ իր սեփական ոճով: Նա եւս անկախության շրջանի պոետական ներուժը բացահայտողներից է: Այդ նրանք էին, որ համարձակորեն հոգեւոր դաշտում ցրեցին ժամանակի ծխածածկույթը եւ բանաստեղծորեն պատկերեցին կյանքը՝ ինչպես որ կար: Այդ է հաստատում նաեւ Ռ. Եսայանի հայրենապատումը, որ ներառում է եւ՝ երկրի զարկերակը, եւ՝ նրա քաղաքացու վերաբերմունքը հայրենիքի հանդեպ, իսկ հայրենիք հասկացության մեջ պոետը առաջին հերթին ընդգրկում է ժողովրդի ճակատագիրը: Ժամանակի դաժան էության, հայերի վտանգված կյանքի մի պատկեր է «Սունգայիթ» բանաստեղծությունը: Քաղաքը, որ կառուցել են հայ շինարարները, վերածվել է դժոխքի, որտեղ «ժամանակի ստինքից կաթում էին խավար արցունքները մորթված առավոտի», որտեղ «կատաղած ամբոխն է ծվատում քարտեզը Գոյի».

*Իսկ մոխրացող բիբերից երեխայի
մեկեն դուրս էին նետվում*

*խաղալիքներ...
Յոգեվարող մանկություններ՝
ան-դի-մու-թյան զո-հա-սե-ղա-նին:
(էջ 9):*

Ռ. Եսայանի պոետական անդրադարձներում վերապատկերվում են խորհրդային տարիներին Արցախի ճակատագրում տեղի ունեցած ահասարսուռ երեւոյթները: Արցախն իր անցյալը չի մոռացել երբեք, միշտ թարմ է նրա հիշողությունը, որը միայն քաղցր ու լուսավոր պահերի ուլունքաշար չէ, նրանում խոսում են նաեւ թախիծն ու ցավը, վտանգված ուղին ու մաքառումը, որ թելադրում են զգոնության դասեր: Այս գաղափարի արդյունք է «Պարետային ժամի մագիլները» ստեղծագործությունը: Առարկաների, երեւոյթների համապատկերների ծիրում թեւածում է տեսիլքը եւ ներկայացնում այն ժամանակաշրջանը, երբ արցախահայությունը ոտքի էր ելել իր ազատ ապրելու իրավունքը նվաճելու, սակայն շրջապատվել էր խորհրդային զինվորների եւ ադրբեջանական ոստիկանների ամենաթող խմբերով: Այս ամոթալի երեւոյթը պարետային ժամ անվան տակ ցնցում էր բնակիչներին: Ռ. Եսայանի պոետական տողերում ժամանակաշրջանը վերստին հիշվում եւ հնչեցվում է որպէս ճիչ.

*Փողոցի ազատությունը պատանդ է մի,
որը պահվում է շան հազվադեպ լսվող
հաչոցի մեջ: Չմեռ: Ես ծխախոտ եմ վառում եւ
ընթրում, որ ծխախոտից անգամ փաթիլվում եմ
ձմեռվա երազն ու հաչոցը շան:*

(էջ 12):

Այս պատկերին անմիջապէս հաջորդում են քնարական հերոսի մտորումները հոր ապրումների երանում, մոր երազներում, որը սակայն խոցոտվում են, «խոսքը ապտակ» է դառնում, «միտքը՝ զսպաշապիկ»:

Ռ. Եսայանի հայրենապատումը ծլարծակում է հայրենի հողից ու ժողովրդի տվայտանքից ու ակնկալիքներից, անմոռանալի թե՛ լուսավոր եւ թե՛ վտանգավոր իրադարձություններից: Ստեղծագործական այդ սկզբունքների արդյունք են «Երկրաշարժից հետո», «Ազատության որոգայթում» երգերը եւ առանձնապէս «Պա-

տերազմի եւ խաղաղության միջեւ» շարքը:

Արցախյան գոյամարտին զինվորագրված մարտիկ-բանաստեղծ Ռ.Եսայանի պատերազմական պատկերները վերացական չեն, դրանք կռվող զինվորի վկայություններ են այն հողի անունից եւ լեզվով, որի համար արյուն է հեղվել: Առաջին դեմքով հանդես եկող բանաստեղծի «ես»-ը ներկայացնում է ընդհանուր կրած տառապանքը եւ հույսը պատերազմական օրերին: Պատկերելով «գորշավուն ստվերը մարտադաշտի», բանաստեղծը նշում է արյունոտված վարդերի թախիծը, որ վերածվում է նախնիների հիշողության, նորօրյա բռնցքված վրեժի:

*Ես նայում եմ հողից ելնող բռնցքներին...
Բարձրացնում եմ տեսողությունը նախնիներիս
զագաթը ժամանակի,
որպեսզի տիեզերքի շնչառությունից
բխի հո՛ւյսը կյանքի...*

(էջ 18):

Ռազմաճակատային առօրյային հատուկ բառամթերքների միջոցով բանաստեղծը նկարագրում է Ադրբեջանի կողմից Արցախին պարտադրած պատերազմի դաժանությունը եւ դրան հաջորդող հայ ազատամարտիկների արդարացի պատասխանը, ավա՛ղ, զոհերի գնով: Բառ-պատկերների միջից ասես արյուն է ծորում, ցավի զգացումը դառնում է խոցող: Քնարական հերոսը սարսռում է՝ տեսնելով «ճամփին ընկած վիրակապը, որ կեղեւն է պատմության» եւ «որի անցքերով ելունուտ են անում մրջյունները»: Ասես «Եզերքից-եզերք ձգվում է երկնքի հիշողությունը»-սփռելով կայծեր:

«Ոչ պատերազմ- ոչ խաղաղություն» հոլովման առաջին՝ 1994 թվականից անցել էր ուղիղ 10 տարի, երբ մարտիկ բանաստեղծը իր ծվեն-ծվեն հիշողություններից հյուսեց շարքը: Նա նկատում է, որ «Պատերազմի եւ խաղաղության միջեւ առաձգական է Ցավը», «Չսպաշապիկ է զանգը դպրոցական, որից ազատվում են դասաժամերը» եւ «Չամբույրը ծաղկում է տազնապի շուրթերին», «Երազի զոհասեղանից թելում են երկինքները թռչունների...»: Իսկ «Պատերազմ» բառը դառնում է զսպաշապիկ, որից դեռ չի ազատվել տարածության ոգին:

Ռ. Եսայանի մի շարք բանաստեղծություններ քաղաքական

տեսիլների հյուսվածքներ են: Դա եւս ոճական առանձնահատկութիւնն է, որ գրողին հեռու է պահում ճառայնությունից, ճակատային նկարագրականությունից: Նման գործեր են «Հայոց բանակ», «Հիշողության փեղկից երեւացող փողոց», «Պարետային ժամ, որ մնաց անհունի աստիճաններին» եւ այլ հյուսվածքներ:

«Ասուպների եզերք» ժողովածուի հաջողված ստեղծագործություններից է «Ռեքվիեմ»-ը: Բնաբան ընտրելով Վ. Հակոբյանի «Սեւ սամուը եղեռնական մոլեգնում է Արցախ սուրբ լեռների մեջ» երկտողը, Ռ. Եսայանը տեսիլքային պատկերների փնջով տեղափոխվում է Հայաստան՝ կորուսյալ երկրի եւ փրկվածի համահավաք տարածքներով: Այստեղից էլ երկի բովանդակության ընդգրկուն լինելը: Բանաստեղծը ընթերցողին նախ տանում է Հայոց աշխարհի ճակատագրական այն ծանր ժամանակահատվածը, երբ Հայաստանում «Վայրենի ոգու սմբակների տակ կոխկրտվում էին մագաղաթ բիբերը պատմության» եւ փլվում էին «դարպասները արքայական դարերի» եւ «փշրվող խաչքարերը վերածվում մոռացության»:

Յեղիմակն իր պատումն սկսում է 1915 թվականի դաժան իրադարձությունների նկարագրով: Ի դեպ, Հայոց դարերը եւ առանձնապես մեծ եղեռնը ռեքվիեմների նյութ են դարձել անվանի պոետներ Վ. Դավթյանի եւ Ռ. Դավոյանի պոեզիայում: Եւ պետք է նշել, որ թեկուզ թեմատիկ առումով նույն տեսադաշտի վրա է նաեւ Ռ. Եսայանի երկը, սակայն նա չի կրկնել իր ավագ գրչընկերներին, գտել է թեման բացահայտելու իր գեղարվեստական հնարքներն ու արտահայտամիջոցները: 12 մասից բաղկացած նրա այս հյուսվածքի մեջ բացահայտված են ժողովրդի կորստի եւ ցավի, մաքառման եւ հույսի զգացումները: Հայաստան-մոր «հառաչանքների մոխիրները» սրտի ափերի մեջ առնելով, բանաստեղծը քայլ առ քայլ ընթերցողին տանում է դեպի դժոխային իրադարձությունների այն աշխարհը, որտեղ «Երկինքը ապակե մի գոհարա՞ն է... Ծայրե ծայր թփրտում է ոգին հորիզոնի եւ կախվում ծիրերից կտորածների»:

Աշխարհում վայրենությունը շարունակվում է: 20-րդ դարասկզբին տեղի ունեցած «Ջարդերի դասե՞րը փոխանցվում են արյան ճշգրիտ կողերով՝ Համիդից-Թալեաթ, Թալեաթից-Բաղիրով, վերածվում սուր-սուր կացիների, փոխարկվում մահվան հրդեհներ-

րի... փողոցից փողոց եւ քաղաքից քաղաք»: Սահմնկեցուցիչ այս տառապանքների համապատկերի վրա բանաստեղծը բացահայտում է հայոց հարատւեւման առեղծվածը.

*Հայաստան...
Մուրճի հարվածներ՝
ճառագայթի սպիտակ սալերին...
Դարբնոցում ոգու
Վերածնվում են գրերը հայոց...
(էջ 35):*

Այս ստեղծագործության մեջ հայոց հողը ներկայացվում է ոչ միայն որպէս ժողովրդի հարատւեւման հենարան, այլեւ «տառերից ծլարծակող հունդ», որն էլ ապահովում է առեղծվածների ծնունդը: Իսկ գոյատւեւման առեղծվածը մաքառումն է, հողն էլ է հուշում՝ բարձրացնել նորահայտ խաղն «ազատության միակամ երթով»: Ընթերցելով հայոց հողի այս ճակատագիրը, բանաստեղծն ընդհանրացնում է.

*Մենք սերներ ենք ցանել
մեր որբ ճակատներին,
համաճակատ հերկից
ծով հավա՛տ ենք հնձել...
(էջ 36):*

Ցավի եւ հույսի համաձուլվածք է Ռ. Եսայանի «Ռեքվիեմը»: Նա հստակ տեսնում է ժողովրդի հազարամյա ճանապարհից ժայթքող հավատը, վկայում, որ «Վերքերի խոլ հրդեհների միջից ցայտում են աստղերը հույսերի»: Հայաստանը երկրագնդի փեշերից մեկն է, հայ ժողովուրդը՝ քաղաքակիրթ մարդկության մի մասնիկը: Սակայն Ամենատեսի աչքերի առաջ Աշխարհը խրվում էր ծանր մեղքերի օվկիանոսում՝ անտարբեր մնալով այն հանցագործության հանդեպ, որ կատարվել է Օսմանյան Թուրքիայում: Բանաստեղծը գրում է, որ աշխարհի խիղճը անդունդ է, որի մեջ թքում է կիսալուսինը եւ ուղիներ հարթում նոր խառնակչության... Բանաստեղծը հաստատում է, որ քաղաքական խաղերը միշտ ավարտվում են փոքր ազգերի տեղահանությամբ, կամ բնաջնջմամբ, նայած թե խոշոր տերութւոյունների շահերի հողմը ո՞ր ուղղությամբ է մարտա-

Վարուն: Արդյունքում ստացվում է «Անժողովուրդ հող, անհող ժողովուրդ»:

Հայոց հողը ըստ բանաստեղծի ամբողջությամբ սիրտ է եւ ոգի, իսկ ոգին թեւածում է այն դեպքում, երբ ժողովուրդը պորտալարով կապվում է հողի, երկրի ճակատագրի հետ:

Փիլիսոփայական այս ընդհանրացմամբ բանաստեղծը դիմում է հայության մայրաշունչ օրրանին.

Հայաստան...

*Պարիսպներիդ լռության մեջ փաթաթվում են
հրեշտակները,*

որ չլսե՛ն սրտի զարկերը տառապյալ հողի...

Ցավն իր լույսո՛վ է ճանապարհորդում...

Խոսքն իր բեռներն է նետում անդունդը...

Հետքերիդ վրայով գլորվում է երկինքը՝

լուսավորելով խավա՛րը խղճի...

(էջ 37):

Հայաստանի խոշտանգված ճանապարհների, տանջահար բաների, ժամանակի ռիթմի, հիշատակի խաչքարերի, կարոտների ծիրերի, հուսո երազների, ցավի եւ հավատի անդաստանների միջով բանաստեղծը հասնում է թունանյանական լավատեսության բարձունքին եւ հաստատում.

Հայաստան...

Ծառը քո ոգու արտահայտությունն է,

որ ծաղկել է հիմա

այս տարածության ընթրնումից դու՛րս...

Դու մնում ես միշտ դարերին հենված

օրհնվա՛ծ տառով,

ճիչով ծնվողի՛...

(էջ 43-44):

Աշխարհի բոլոր անվանի պոետները հաստատել են, որ պոեզիան սեր է արդարության հանդեպ, ճիչ է չարության դեմ, խղճի թրթիռ է երկրի ճակատագրից բխած: Ռ. Եսայանի հայրենապատումը եւս այդ ճշմարտության գեղարվեստական վավերագրություններից է:

2. ԽՈՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ

Ռ. Եսայանի պոեզիան համանվագային հնչեղություն ունի: Այդ ընդհանուր երանգների մեջ առյուծի բաժինը խոհական երգերն են: Ռ. Եսայանի բանաստեղծական իրական պատկերներից ուղղակի վեր է սլանում երեւակայության մի շքեղ ու խշշուն բարդի: Եվ այդ շրշունի մեջ ռեալիստական ու ռոմանտիկական զգացումները վերածվում են տեսիլքային գորգի, որ թելեր ունի եւ կարող է ընթերցողին թռցնել մարդկային ապրումների ուզածդ երկինքներով:

Կարդալով պոետի խոհական երգերը, պարզորոշ նկատում ես նրա կենսահայեցողության երանգները, աշխարհը փիլիսոփայորեն ընկալելու եւ պատկերելու կարողությունը: Աշխարհի խաչմերուկներում բանաստեղծը ծանոթ ծայներ է լսում եւ դառնում մարդկանց ճամփաներում լույսեր սերմանող արվեստագետ: «Անհայտության ավազուտներում» անգամ նա կարոտում է կյանքին, մարդուն: «Անհունի արմատը» որոնելու նրա ձգտումը տալիս է իր արդյունքը եւ տեսնում է իր ոտնահետքերը.

*Ոտնահետքերս,
անհայտից իրենց պորտը կտրելով,
աստղային կապույտ կաթիլ են ըմպում,
եւ արթնանում են հույսի խորքերը...
(«Ոտնահետքերս»):*

Գրողի փիլիսոփայության ակունքը ժողովրդի եւ արվեստի աշխարհն է: Ճշմարտացիորեն պատկերելով կյանքը, Եսայանը կատարում է կենսական ընդհանրացումներ, ուր ընդգծվում են բանաստեղծի հավատն ու ակնկալիքները: Նա լույսի, վաստակի, հույսի, արարման սիրահար է, ուստի ինքն էլ փոթորկվում է, երբ տեսնում է «հավերժության ափերի» քանդվելը («Հույսի երկինքը»): Բանաստեղծը պոետական պատկերների մեջ է առնում «երկնքի խավարը ճեղքող» կայծակներ, երկրպագուն ոգեւորության եւ արարման ուժը.

*Քերթողական արվեստի աստեղնային անդրադարձ,
երկնի առէջ, ելքի դող եւ համբույրի անսպառ հաց:
(«Անդրադարձ»):*

Ռ. Եսայանի խոհափիլիսոփայական բանաստեղծությունները զետեղվեցին «Ելք» ժողովածուում: Այդ հատընտիրը մի նոր որակ է ոչ միայն նրա, այլև ժամանակակից հայ պոեզիայի համար: «Ճակատագրի լուսանցքներում», «Ելք», «Հաղորդության շղթա» պոեմներում, բազմաբանակ սոնետներում եւ ութնյակներում բանաստեղծը շարունակում է դասական պոեզիայի լավագույն ավանդույթները, ներկայացնելով նաեւ ազատ բանաստեղծության առանձին օրինակներ:

Հայտնի է, որ սոնետի ժանրը սկիզբ է առել Եվրոպայում: Համաշխարհային պոեզիայի ականավոր ներկայացուցիչներ Դանթեն, Պետրարքան, Շեքսպիրը, Վ. Տերյանը, Մ. Մեծարենցը, Ե. Չարենցը, Վ. Թեքեյանը ստեղծել են սոնետի հոյակապ նմուշներ: Իր ուժերը այդ ժանրում փորձել է նաեւ Ռ. Եսայանը: Բանաստեղծը տարբեր թեմաների արծարծումներում ձգտել է ներկայացնել իր խոհական մտորումները, բանաստեղծը կյանքի սահմանները տեսնում է լայն ասպարեզների վրա, նա սովորական օրերի մեջ ձգտում է գտնել փիլիսոփայական հենքեր եւ ներկայացնել ընթերցողին: Մի շարք դեպքերում Ռ. Եսայանին հաջողվել է թափանցել մարդու հոգու խորքերը, պարտված արքայի ապրումների մեջ անգամ տեսնելով ջերմ թրթիռներ:

Բառ-պատկերների օգտագործման մեջ Եսայանը բավականին հմտացել է: Առանձին բառեր վերածվել են մետաֆորների: Դրանցից են «Սահանք», «Հենակետեր», «Պտտահողմ», «Տագնապ», եւ այլ բառ-պատկերները: Այդ առումով հետաքրքիր են «Այդ աշունը չէ», «Հիշողության բեկոր» եւ այլ երգեր:

Գյոթեն արվեստի ուժը տեսել է ճշմարտացիության մեջ: Թեկուզ հաճախ երեւում է բանաստեղծի երկվությունը, սակայն երգերի մեջ կյանքի հաստատման երանգները չեն խամրում: Կենսահաստատ եւ նրա երգերը: Նույնիսկ այնպիսի ստեղծագործություն, ինչպիսին «Խռովք» պոեմն է, որտեղ ընդգծվում է հենց բանաստեղծի խռովքը, Ռ. Եսայանն արտահայտում է իր դիտարկումները կյանքի նկատմամբ եւ կատարում լուրջ ընդհանրացումներ: Պատկերների հաջողված հյուսվածքներում երեւում են բանաստեղծի հասուն ու լուրջ ընդհանրացումները: Քաղաքական թե հասարակական խմորումների մթնոլորտում բանաստեղծը տազնապում է ժողովրդի ճակատագրի համար: Նա քնարական հերոսին կոչ է անում հետեւել Ավարայրի ճակատամարտի խիզախումներին:

*Հիմա՞ էլ դու պիտի լռես
Ու չհանես Ավարայրի գոռ պատյանից
Սմբակացայտ փոշիներից սրված թուրդ...*

Մեր ժողովրդի հեռավոր եւ մոտավոր պատմությունը նման օրինակներ չատ ունի. Ավարայրից մինչեւ Մեծ եղեռնի սարսափները մեր պատմությունը հերոսական եւ ողբերգական իրադարձությունների մատյան է: Մեր պատմության եւ ոգու փիլիսոփայությունը հուզում է բանաստեղծին: Նա որոնում է արտահայտվելու եղանակներ եւ դիմում է սոնետի ժանրին: «Ելք» ժողովածուի «100 սոնետ» շարքը դրա վկայությունն է: Ի դեպ, որպես շարքի նախաբան, Ռ. Եսայանը գրում է. «Երկար ժամանակ իմ մեջ մեծ կարոտ էր խտանում դեպի ավանդական չափը, հանգը, նվագը: Ես ուզում էի ինքս ճանաչել բանաստեղծական այդ չափը՝ սոնետը, ինքս շոշափել նրա հնայքն ու հնարավորությունները: Եվ մտնելով նրա մեջ, ես համոզվեցի, որ բանաստեղծական այս չափն ունի (բացի արտաքին տեսքից) ներքին կառուցվածք ու ընթացք եւ իր ընթացքի մեջ ինքն է կարգավորում մտքի ու հույզի ուղղությունը: Գրելու պահին անընդհատ պայքարի մեջ են եղել իմ ինքնությունն ու սոնետի կառուցվածքը, եւ եթե այս բանաստեղծությունների շարքը որեւէ արժեք ունի, հենց այդ պայքարի արդյունքն է» (էջ 4): Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ այդ պայքարի հիմքում ընկած է բանաստեղծի աշխարհընկալման նոր դրսեւորումը, որից էլ ծնվում է քաղաքացու խոհն ու մտորումը: Բանաստեղծը խոստովանում է.

*Տողս օ՞դ է աղերսում երազներիս տաք ափից,
Որ դիպվածի լույսի տակ, պատռվածքից մշուշի
Իր շողերն է արձակում:*

(«Արթնացում»):

Քնարական հերոսին վառում է հուշը եւ թափանցում «հոգու տարածքը համր»: Ինչքան ծանր ու բազմաշերտ լինեն այդ հուշերը, բանաստեղծը բռնկվում է երկնային-արարման հրով, որպես Աստծո հղած «նոր Արթնացում»: Արթնացումի հրից էլ երեւան է գալիս հայտնությունը եւ շարժվում է «տողը իբրեւ Տիրոջ ընծա»: Այդ տողերի հյուսվածքում քնարական հերոսը դառնում է երագ.

*Ես իմ հոգու թելերի տակ կծկված երազ,
Ես՝ վախվորած մանկան հայացք, որ Անհունի
Խորքն է նայել, զգացել իր մաշկի վրա
Գեղեցկություն մի ահավոր, որ տեսք չունի:
(«Հայտնություն»):*

Անտեսք գեղեցկությունն արտահայտությունը փոխաբերական իմաստ ունի եւ շոշափելի է: Այնքան է զգայուն, որ բանաստեղծի տողը դարձնում է զոհասեղան եւ նրա շունչը խառնում անսահմանին: Շարքի սոնետները գաղափարի ծիրերով հյուսված են իրար: Հայտնությունից ծնվում են կարոտներ եւ «փայլատակում արցունքով կույսի» եւ դառնում «Օրերի շունչը ու ալիքը հորդուն»: Սիրո ճերմակ ցավը մի կողմից, կյանքի հորձանուտը՝ մյուս, ստիպում են, որ քնարական հերոսի սիրո երգը լցվի աստղերով («Իմ կորուստները...»):

Հարուստ հուզաշխարհ եւ ապրումների խլրտում ունի Ռ. Եսայանի քնարական հերոսը: Ինչ որ տեղ անսովոր են նրա երազները, ինչ որ տեղ էլ՝ երկրային: «Ճանապարհների շունչը» նմանվում է կայծքարի, որից էլ բացվում է «դեմքը ներշնչանքների»: Տիրոջ հետ սիրո տառապանքի մասին գրուցելով, բանաստեղծը հանգում է երկրապատկեր հեռաստանների անհաս բարձունքների առեղծվածը բացելու գաղափարին: Եվ նա դիմում է ոգեւորության դիցուհուն՝ մուսային, որ բանաստեղծի «բառերի մեջ ապրող հոգի ու ցավ» է՝ Աստծու դեմքը բացող աստղային շունչ: Մուսան երբեք չի դավաճանել պոետին, օգնել է, որ մարդկանց նվիրի ոգեշնչումի դողը, իսկ առեղծվածի շնչին՝ բույրը: Եվ ապա բանաստեղծի ապրումը դառնում է խոստովանանք.

*Եվ բացելով հոգիս՝ Աստծո դեմքն ես բացում,
Եվ դնում ես շուրթիս շողերը ծիածանի,
Որպես տողեր՝ սնվող կաթով Անսահմանի:
(«Մուսայիս»):*

Սոնետներում բանաստեղծի խոհերն ու խորհուրդները երկրային ծնունդ ունեն՝ ոգեղենացած: Խաչքարերը-ջարդված ճակատագրեր են, որ նստած են հողին պատմության պես ծանր: Նրանք հողից աղոթքների ճիչեր են հանում, քամում են երազների լույս:

Բանաստեղծի համար այդ խաչքարերում երկինքներ կան,

թախծի գալարներ, որք մորմոքներ, ինչպես նաև «աստղային բա-
ռեր՝ արցունքների նման, նաև ներսուզումի հնա՛րք»: Հարցումին
հետևում է առիմքնող պատասխանը: Ջարդված ճակատագրերը
թևեր են առնում եւ հառնում:

*Ի՞նչ են խաչքարերը... հառնող ճակատագրեր,
Հողից լույսն է ծլում-գալիքների հյուլեն,
Եվ չի՛ անցել մտքով ոսոխներիս քոչվոր,
Որ իմ ցավը մի նոր գոյություն է պեղում,
Որ իմ ամեն երակ իր կտրված տեղում
Սպիանո՛ւմ է նոր ծնվողների ծիջով...*

(«Ի՞նչ են խաչքարերը»):

Ռ. Եսայանի սոնետներում քնարական հերոսը ոգի է եւ արնա-
մած երագ: Նրա ուսերին «տարածության դագաղ» կա, ուստի
իրեն ներկայացնում է որպես աշխարհի ցավով տառապող ոգի:
Նա տեսնում է, թե ինչպես աշխարհը դառնում է «կրքի եւ ոխի» մո-
լեռանդ ասպարեգ: Ահա թե ինչու նա իրեն համեմատում է «մոլոր-
ված երագի» հետ, քանզի «ցավը իր արյունից է սերված»: Արյու-
նից ծնված ցավը «ոգու հոլովությի» է վերածվում, հանգչում՝
կարմրավուն լույսեր արծակելով:

Բանաստեղծը աշխարհի մասունքներում իր ոգորումը տեսնում
եւ կյանքի ու մահվան խաչմերուկի վրա նշմարում է հազար
անցում, ուր ինքն իր առջեւ ծնվում է եւ մեռնում: Խոհը ավելի է ծի-
ածանվում եւ դառնում առեղծված:

*Օ՛, հոլովությ Ոգու, որ տանում ես ճամփաս
Մահի ու ծնունդի հանգույցների միջով,
Ինձնից թողնո՞ւմ ես դու հիշողության մի փայլ,
Որ երբ պարուրվեմ ես վերադարձի քաղցով,
Եվ քառսը ձգվի կյանքի-մահի միջեւ,
Չոռնա՛մ կուրությունից-իմ կուրության առջեւ...*

(«Ոգու հոլովությ»):

Բնությունը եւ առարկաները անձնավորվում են Ռ. Եսայանի եր-
գերում: Մարդը եւ բնությունը ներկայացվում են դեմ առ դեմ, հա-
վասար: Նրանց կյանքը պայմանավորված է մեկը մյուսով:
«Թռչունը եւ ես» սոնետում բանաստեղծը թռչունի աչքերում նկա-
տում է իր հայտնությունը եւ շոշափում նրա ավեր բույնը: Այս երեւ-

ույթը անընդհատ է: Մի պահ ամեն ինչ քառս է թվում, սակայն այդ քառսի միջից թռչունը իր թևերից վանդակներ է թափում ծառի ճյուղերին, դառնում կյանքի հավերժությունը հաստատող: Ապա «Իմ առաջին մեղքն են թռչեցնելով քավում» տոնետուն քնարական հերոսը իր հոգու խորքում ծիծեռնակների բների հյուսումն է զգում եւ նկատում է, որ «նրանց տաք թևերից երկինքներ են հոսում եւ փոթորկվում՝ որպես գեղեցկության տարերք»: Այդ ամենի եռքի մեջ վերածնվում է բառը «Ամհայտի տաք շնչից»: Ծիծեռնակների թևերի մեջ ամբարվում է լույսը, ասես քավում է մարդու մեղքը: Մարդու եւ բնության միասնությունը այնքան է ընդգծված, որ դժվար է տարանջատել նրանց: Բանաստեղծը գրում է. «Մառախուղն իր լեզուն իմ վերքերից հանում եւ քսում է հողի մազադաթե դեմքին»: Բանաստեղծի «Ես»-ի մեջ խտացվում է մարդկության ցավը, ինչպես ընդհանրացնում է պոետը «Ու խավարի սալին իբրեւ մատաղացու անտեր այս աշխարհի նիրհող խիղճն է մորթվում» («Տենդ»): Երկրի վրա բնությունը, իսկ վերեւ Աստվածն է քնարական հերոսի դեմքը լվանում: Եռանկյունի հրաշքը՝ Աստվածը-մարդը-բնությունը, կյանքի հարատեւման պարի մեջ են: Բանաստեղծը հաստատում է, որ «Հույսը թռի՛չք է», որ այն ծնվում է ցավից եւ անոքիչ է:

Օրերի շարանի մեջ բանաստեղծը որոնում եւ գնահատում է մարդկային երազների հյուսվածքը: Սակայն աղավաղվող աշխարհում իշխում է նաեւ ձանձրույթը, որ ստիպում է բանաստեղծին՝ դիմել Աստծուն.

*Տեր իմ, փրկի՛ր դու ինձ այս ձանձրույթից անդուռ,
Փրկի՛ր կուրությունից հանընդհանուր դարձած,
Եվ թոթափիր հոգիս պատրանքներից ազդու:
Ազատությունն է, տես, դարձել քարե արձան.
Բոլոր օրենքների սապատները ջարդիր,
Իմ ընթա՛ցքը աստղի լույսով երփներանգիր:
(«Օրը պատուհան է...»):*

Ռ. Եսայանի գեղագիտական իդեալը աշխարհի հանդեպ մերթմշուշվում է՝ «սքողված դիմակ»-ի պես, մեկ փայլում՝ հույսի շողերով: Աշխարհը, որ «տեսել է խոցված խղճի հոգեվարքներ», կարծես դարձել է «դավեր զոդող», իսկ մարդը իրեն համարում է եռացող քառս: Եվ անհատը բացականչում է.

*Այնքան է արագ իմ շուրջը կործանվում
Ամեն բան, որ ես... չե՛մ հասցնում գոռալ...
-Այն ո՞վ է պեղելով երագս վերծանում:*

(«Բանտաճաղերը...»):

«Ելք» ժողովածուի «Հաղորդության շղթա» շարքը Ռ. Եսայանի փիլիսոփայական մտորումների պոետական ընդհանրացման հիանալի օրինակ է: Առաջին հերթին, այն բանաստեղծի ստեղծագործական խառնվածքի դրսևորում է, եւ ապա՝ այդ ընկալումները պատկերային նոր թարմությամբ վերարտադրելու օրինակ: Եսայանը շարքը ստեղծել է 1990-2002թթ. ընթացքում: Ընդգրկված է 52 բանաստեղծություն, որ կոմպոզիցիոն առումով կարելի է համարել քնարական պոեմ: Շարքի առաջին հատվածները հրատարակվել են 1998թ. առանձին գրքույկով: Հետագայում հեղինակը վերանայել է ընդհանրացրել է այն եւ զետեղել «Ելք» ժողովածուում:

Պատերազմական արհավիրքների տարիների ազդեցությունը նկատվում է շարքի առաջին հատվածներում: Սակայն այդ խոհերը նկարագրման շրջանակներից հեռու են, պարզապես նրանցում ընդհանրացվում են մարդու եւ կյանքի, նրա արարող ուժի եւ ապագայի հանդեպ ունեցած հավատի երանգները: Ահա շարքի առաջին հատվածը.

*Իմ երագանքի հատակին պառկած
Ես մտորում եմ: Շուրջս՝ ոսկորներ-
պարկուճներ խղճի, որոնց լույսն ի վեր
Մի մրջյուն արդար իր բեռն է տանում,
Ասես տանում է թա՛զն արեգակի:*

(էջ 104):

Մրջյունի արդար բեռը, որ համենատվում է արեգակի թագի հետ, փոխաբերական մեծ իմաստ ունի: Այն ակունքված է հայ բանաստեղծի ազգային հոգեբանությունից եւ միտված է հավատի երանգներ ունեցող գալիքին:

Բանաստեղծի համար «Երկինքը նյութի մշուշում թաղված» հարության գանգ է, որի դողանջները միահյուսվում են «բառի կեղեից կաթկթող կամքի հորիզոններին»: Սակայն դրանով չի ավարտվում բառի ծնունդն ու առաքելությունը, այն հեռագնա առաքելու-

թյուն ունի, այն պետք է մաքրի առեղծվածային գոյությունները եւ ծնկի գա «ցավից սապատված հողին երագի»:

Ռ. Եսայանը իր խոհական հյուսվածքներում ներկայացնում է դարաշրջանի չարությունը՝ հանձին նեռի: Ոչինչ չի կարելի մոռանալ, չի կարելի շրջանցել: Մարդկային հիշողությունը մարդու դիմագիծը պահպանող ավիշն է.

*Երբ խցանվում է մարդկային հիշողությունը,
մարդը դառնում է խոսող մի իր,
եւ երկրում անարգել շարժվում է
երագներ խուզող մկրատը...*

Բանաստեղծի խոհերը կյանքի առեղծվածների մասին ունեն հենք ու հող: Նրա հույզերը առնչվում են այն լեռնաշխարհին, այն քաղաքին, որտեղ հասակ է առել քնարական հերոսը, որտեղ «պտտվում են աշխարհի ամենածանր անիվները, որոնց տակ փետրահա՛ն է լինում ժամանակը»: Այս ժամանակը ունի հասցե եւ պատկեր: Դա 1988թ. սկիզբ առած այն տարիներն են, որոնց ընթացքի մեջ խոսեցին արցախցիների երագն ու ըմբոստությունը եւ ապա ազերի-սելջուկյան նեռն ու հրեշը հրով ու սրով ձգտեցին ավերակել Յայոց-Արցախ աշխարհը, ուր ամեն ժայռ ու քար, գետ ու աղբյուր խոսում են հայերեն՝ ժխտելով ազերական մոլուցքն ու բարբառանքը: Ռ. Եսայանի քնարական հերոսը չի ընկրկում դաժանության եւ չարության առջեւ, նա հպարտությամբ խոստովանում է.

*Երբ սեղմում եմ իմ բռան մեջ
Արցախի հողը
տաք,
կարծրանում է բառը,
ինչպես...
գրահ...*

Ահա, այսպես, բանաստեղծի համար հավասարվում են բառն ու զենքը, ասել է՝ թե երգի ու զենքի ուժով է փրկվում երկիրը եւ ապահովվում նրա ազատությունը: Այդ խոհը ծնվում է բանաստեղծի հավատից.

*Ես գրում եմ
 ոչ թե թղթին,
 այլ՝ հայացքին ժամանակի:
 Մաշկիս խուցերում-փրկության հույսով...*

Բանաստեղծի «ամեն տողից ցավի ծովն է ելնում», սակայն նրա տողերի մեջ հնչում է հավատի ձայնը, որ «Կափարիչի լուծությունը ճեղքող խիզախ հեւք է... տարերքի սյուն... լույսի-մութի միջեւ»:

*Երկրիս ամեն երազի վրա
 մի կափարիչ է դրված,
 որով չի՝ թափանցում լույսը...
 Բոլոր դռներն էլի բացվում են
 Դեպի ծաղկո՞ղ ծառերը...*

Ռ. Եսայանի խոհն ու խորհուրդը երկրի ճակատագրի ձայնն է, այն հայրենի ռազմակոչ է, որի հորդորով «ոտքի ելանք, զինվելով լույսով, հավատով նախնյաց, կռվեցինք անդուլ» եւ արդյունքում հույսը համբուրեց մեր ժողովրդի վեհ ճակատը, զոհեր եղան, «բայց փրկվեց հողը՝ եզերքն հայրենի»: Բանաստեղծը հպարտությամբ ընդգծում է.

*Մեր շունչը ծաղիկը բացեց սերունդների
 համար իբրեւ լույս:
 Երկիրը բախտ արարեց, նոր կյանքի երգով
 բացեց ակոսներ,
 ապրելով՝ հիշեց, կոթողներ հիմնեց, մեր
 ոգուց հիմներ արարեց,
 որ լինենք մենք ու ապրենք նոր կյանք:
 Չավերժի մեջ ենք, մենք կանգառ չունենք...*

«Չաղորդության շղթա» շարքի 35-րդ հատվածը բանաստեղծի ծրագիրն է՝ անելիքի խոստումը: Առաջին հերթին Ռ. Եսայանը իր սրտի զարկերը առնչում է երազանքի բարձրությանը, ոտնահետքերը համարում քարտեզագրեր, բեռը՝ երկնքից կախված ճանապարհ, որից երգն է հոսում, վերջապես իր անունը գնահատում է որպես «քառսի անդունդը ծածկող մի կափարիչ»: Ահա, այսպես,

Երգը «ճակատի չընթերցված գիր» համարելով, պոետը ընդհանրացնում է.

*Իմ արյունից պոկված թափառակա՜ն տողեր,
որ ցրվել էք ճանապարհի քարե ծալքերում,-
ծեր արթնացումը
իմ գոյության անդրադարձո՜ւմն է
տիեզերքի զարկերակի մեջ:*

Ռ. Եսայանը պատմության ճակատը համեմատում է անդունդի հետ, այնտեղ միտքը շրջում է «Ես»-ի լապտերով, երազանքը «կիսվում է դեմքի պես», «Մութից եղեռնի տեսիլն է հոսում» եւ մարդիկ «լուսեղեն շեղբի քառսում» կորցնում են իրենց: Բայց մարդը այդ քառսի համար չի ծնվել, այլ Տիրոջ ստեղծած բարիքները վայելելու:

Ինչ որ տեղ Ռ. Եսայանի մտորումներում հնչում է Գ. Նարեկացու ձայնը: Հազարամյա հանճարի թռռը իր Մեծ նախորդի պես երազում է տեսնել մեղքից մաքրված մարդ՝ մաքրված աշխարհում.

*Մի սովեր բարձրացավ աստիճաններով,
մյուսը՝ իջավ, երրորդը՝ կանգ առավ՝
ծուլվելով պատին:
Այսպես ապրում ենք աշխարհում
զարմացնելով Աստծուն
Պտույտո՜վ մեղքի:*

Ռ. Եսայանի խոհական երգերում բառը շունչ ու մարմին ունի, մարդկային հոգեկան ապրումի մի ամբողջական պատկեր է.

*Լեզուս ծանրացել է...
Նրա վրա փռված են բառերի
անթիվ շիրիմներ,
եւ խրված են խաչեր
Լեզվիս մեջ:
Չայնս կփշրվի
ժամանակի անողոք հարվածներից,
ինչպես հնագույն հետքերն
իմ նախնյաց:*

*Ես իմ լռությունն եմ:
Եվ պտույտն իմ արյան
անծափ թափոր է,
որ մի օր, անշուշտ, կանգ է առնելու...
խավարի դիմաց:*

Երգը թեւեր ունի Ռ. Եսայանի խոհերում: Կյանքի-մահվան սահմանագծում հավատը լույս է, միտքը՝ թերթվող հայացք, որից լույս է ցայտում եւ սփռում կարոտ: Այդ կարոտը քնարական հերոսին տանում է պատմության խորքը, հիշեցնում «պապենական քայլերի ոճը, ինչպես շող», եւ եթե համբուրես պապերի քայլերը, նրանք «կվառվեն մոմերի պես», անցյալի եւ ներկայի միասնությունից է, որ շարունակվում է հավերժությունը.

*... Ստվերս իմ արյան
ժառանգորդը չէ,-
ես-հավերժությունն եմ...*

Ռ. Եսայանը իսկ եւ իսկ հայ բանաստեղծ է: Նրան հատուկ է թախիծը, իսկ այն լուսավոր է՝ թաթախված հավատի շողերում.

*Ես գնում եմ իմ ստվերի միջով՝
քանդելով ճակատագրի
պարիսպները
մութ:
Բառերիս շուրթերի վրայով
Գլորվում է լուսաբացը...*

«Չաղորդության շղթա» պոեմ-շարքը կրկին ու կրկին ապացուցում է Ռ. Եսայան-բանաստեղծի խոհերի առեղծվածային երանգները՝ հողոտ, աստղոտ, կյանքոտ: Անհունների ընդգրկումների մեջ բանաստեղծը նշմարում է լույսը: Դա ճառագայթի նաիրյան թրթիռ է, որի թեւերի մեջ «հույսի գարուն է», որ փնտրում է հավերժության աստղը: Բանաստեղծի մտորումներում փողոցը եւս մտորում է, կարոտը բարուրվում է, ճամփան լցվում բույրով: Չարենցյան Տաղարանի օրինակով Ռ. Եսայանը շարքի վերջում իր խոհերը կիսում է հայրենի երկրի հետ, մտքի թեւերով հասնում հայրական օջախ, հիշում պապին, տատին, հորը, հարազատներին,

Վրույց բացում Տիրոջ հետ՝ հանուն բարու, լույսի, երկրի:

Մարդու կյանքի իմաստն ու նպատակը հուզում է բանաստեղծին: Նրա քնարական հերոսը հեռանալուց առաջ հայացքը ծեփում է հույսի պատերին, հեռադիտակով նայում զարդանախշ դարձած հետքերին, խորհում, որ իր անցյալը դարձած ներկա՝ փոխարկվի լույսի եւ խաչի: Այդ հավատով էլ պոետը եզրափակում է շարքը.

*Գագաթն իմ Լեռան
ոչ թե փառքի հանգած կրակ է
մի ունայն,
այլ՝ ծնվողի՝ ճիչ
որով օղակվում է
տիեզերքի զորեղ
հաղորդությա՜ն շղթան:*

«Երագի սահանքներ» ժողովածուի «Եթե ես հասնում եմ ինձ» նախերգում Ռ. Եսայանը խոստովանում է, որ «Նորը հոգին է...», որ պոետի համար «Առնչություն է տողը...», որ «Բանաստեղծությունը ինքնահաղթահարում է», որ

*Բառերը հայացք ունեն:
Բառերի հայացքի ներքո վերոփոխվում է
իմ լռությունը:
Բառերի հայացքի ներքո վերափոխվում է
հոգեբանությունը օդի:
Ես առնչությունն եմ
երկու (եւ ավելի) իրականությունների միջեւ
եւ գնում եմ դեպի նոր օրվա երագը...
(էջ 3):*

Նոր օրվա երագին ընդառաջ գնացող բանաստեղծն է իր գրքի քնարական հերոսը՝ մաքառող-երագող-փիլիսոփայոլ բնավորությամբ:

Ռ. Եսայանի տեսադաշտում իր ապրած ժամանակաշրջանն է՝ բնութագրված անցած եւ անցնելիք ճանապարհով: Այս առումով խորհրդանշական է «Ճանապարհ» շարքը:

«Չարատեւելու միակ հյուլէն» համարելով «ներդաշնակության ոգի», բանաստեղծը իր մեջ է ներառում աշխարհը, անդրաշխարհն

Մու անձնական ուրախությունը եւ «փշրված եսի ոսկրալույսով գտնունմ» գոյատեւության դուռը: Այս մտորումների հիմքը ձգտումն է, որ շարունակվում է գոյատեւության ծարավով եւ հասնում ազատության, որը նաեւ հավատի լույս է քնարական հերոսի համար:

Ազատություն

Երբ իմ կապանքներից ազատվեմ

իրերը,

ես կծնվեմ վերստին

եւ կքայլեմ սահմանների բեկորների միջով...

Բառերը կլիզեն իմ հարությունը

ժամանակի զագաթներին...

(էջ 6):

Պոեզիայում բառի նշանակությունը գնահատել են մեր մեծությունները: Հ. Թումանյանը տեղին օգատգործվող բառը համարել է մի աշխարհ, Ե. Չարենցը զգացել է բառի համը, Պ. Սեւակը նկատել է, որ բառը գժվում է: Ռ. Եսայանի քնարական հերոսի բարդ ու հակասական ապրումների արտահայտամիջոց-խորհրդանիշը դարձյալ բառն է, որ շնչում է, ապրում, գործում, ցավում, երազում, ժպտում, լացում, լցվում հարատեւման երազով: Բանաստեղծը այս ապրումների փակագծերի միջից հանում է բառը եւ դարձնում խոհափիլիսոփայական զգացումների կենտրոնական արտահայտիչը եւ պատվիրում:

Հերկիր ցավը

տառապանքի լույսով միայն,

քո՛նն է ժամը

եւ դարպասը ներգործության...

(էջ 6):

Համաշխարհային պոեզիայում դարերի խորքից եկող հակիրճ ժանրերի օրինակները քիչ չեն: Պարսկական բեյթն ու քառյակը, ճապոնական թանկան ու հոքուն, հայկական հայրենն ու իտալական տերցինը այսօր էլ արտացոլում են առեղծվածներն ու մարդկային ապրումների աշխարհը: Ռ. Եսայանը համարձակորեն կյանքի փիլիսոփայությունը եւ նրա պոետական պատկերը ներկայացնում է նույնիսկ մեկ տողով, ժողովրդական թեւավոր խոսքի ընդ-

Իհանրացմամբ: «Հակաաշխարհ» բանաստեղծությունը բաղկացած է 9 մասից, որից 6-ը՝ մեկ տողային: Դրանցից են, «Այս լռությունը դարձել է անդունդ», «Պահը տեսնում է անդրադարձներով», «Հեռուն տեսնում է ծաղկաթերթերով», «Ճամփաս տեսնում է բիբո՛վ Անհունի»: Որպես օրինակ բերենք նաև մի ուրիշ բանաստեղծություն՝ բաղկացած 3-տողից՝ 3-շարքից.

Իմ գոյությունը

1

Աստժո հայացքից կախված մի թել է իմ գոյությունը

2

Լռությունն ինքն է բառ առ բառ բացում իրերի հունը

3

Իսկ մնացածը՝ անընդգրկելի... անհայտություն է...

«Ժամանակը անդունդ է, որ լցվում է երգերիս ճիչով»- գրում է Ռ. Եսայանը: Եվ բանաստեղծը անընդհատ մերձեցնում է լույսի եւ ստվերի շնչառությունը: Նա նկատում է, որ առօրյայի ձեռքերում խարտվում են բառերը եւ վերադառնում չափածոյի դմբերից ներս: Ահա, այս նկատառումի եզրերից նա վառում է «Պոեզիայի հիշողության ճրագը» եւ «լուսավորում հոգու ռիթմերի լաբիրինթոսը»:

Նկատվել է, որ հնարավոր չէ պատմել քնարական բանաստեղծությունը: Ռ. Եսայանի այս ժողովածուի երգերը՝ առանձնապես: Բայց այն ունի մի առավելություն, որ պոետները հասնում են չքնող տաղանդի եւ հարուստ կենսափորձի շնորհիվ: Այս բնութագրումը վերաբերում է անընդհատ աճող Ռ.Եսայանին: Նա քայլում է մի ճանապարհով, ուր «Անհայտությունն է թել առ թել բացում հոգու երկինքը», ուր «Գոյատեւման եզրերի վրա սարսռում է շունչս ու պայթում գարնան բողբոջի նման», ուր «Սրբում են ճակատագրի արցունքն աչքերից հորիզոնի»: Նման դիպուկ եւ ինքնատիպ պատկերներ շատ կան գրքում:

Ռ. Եսայանի ստեղծագործությունները յոթը պորտով են կապված իր ժամանակի հետ: Նա մատը դնում է դարաշրջանի զարկերակին եւ ոչինչ չի սքողում, ժամանակակցի ապրումների ճշմարտացի գորելենն է հյուսում:

*Իմ ունեցած-չունեցածը այս է որ կա՝
անդիմության վիհի եզրին համառող կյանք:*

*Ու աղոթող շուրթի կարոտ խոսքի խորան,
 ու տվայտանք խուլ բակերի ու կույր դռան:
 Ու անստվեր երազանքի պղծված շավիղ,
 ու կասկածի անհուն քարայր ու վիհ դավի:
 Ու աներեր հավատանքի քարե մատուռ,
 ու ակունքի մահից սարսող նահապետ ջուր:
 Ու կավճաբույր գրատախտակ, որ դագաղի
 կույր կափարիչ դառնալու սեւ երկյուղն ունի:
 (Էջ 114):*

Ներկայացնելով նոր ժամանակների նոր մարդու այս մտորումները, բանաստեղծը ապաշխարանքի իր խոսքն է ուղղում Աստծուն, որ նա իր լույս հոգով բացի անսահմանության երազը, ծաղկափթիթ հայացքը ուղղի իր ստեղծածին, շշուկը հասցնի մարդուն բողբոջների միջից, տիեզերական համբույրով օրհնի աշխարհը: Վերջապես ճչում է.

*Տեր իմ,
 տուր շուրթերին իմ բառերի
 առեղծվածի լույսը...*

Ռ. Եսայանի «Երազի սահանքներ» գրքի «Խզում» բաժինը երազի, աղոթքի, հառաչանքի, սիրո, լույսի, արցունքի, անհունի, հավատի, ապաշխարության եւ հարատեւման փիլիսոփայություն է՝ պատկերավոր մտածողության նոր դրսեւորումներով: Այս խոհերի շրջանակի մեջ քնարական հերոսին հուզում են պատերազմի եւ խաղաղության, աշխարհի ճակատագրի, քաղաքականության, սխրանքի, անձնուրացության, հաղորդակցության եւ այլ հարցեր: Գրքի մի մասը կազմում է «Ապաշխարություն կամ հրաժեշտի 40 օրերը» պոեմը: Այստեղ բանաստեղծը ճեղքել է ժանրի ընդունած սահմանները թե՛ կոմպոզիցայի եւ թե՛ սյուժեի տեսակետից: Նույնիսկ քնարական պոեմին ներկայացվող պահանջները շրջանցված են: Սակայն ստեղծագործության մեջ ներառված հարցերի բույլը քնարական հերոսին տանում է կենսափիլիսոփայության աշխարհը: Բանաստեղծը տարբեր խնդիրների քննարկումը վերածում է ապաշխարանքի, այն դարձնելով ինքնադեպ մի աղոթարան: Այստեղ հղովվում են վարքի, հույսի, հոգեվարքի, երազանքի, մեղքի, փրկության աղոթքներ:

Կարդալով «Ապաշխարություն կամ հրաժեշտի 40 օրերը» պոեմը, զգում ես Գ. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի եւ Պ. Սեւակի «Եղիցի լույս»-ի առնչությունները: Ծագումնաբանական այս կապերը սակայն չեն ստվերում Ռ. Եսայանի ինքնատիպության դրսևորումները: Բանաստեղծի երազի սահանքները ակունքվում են իր դարաշրջանի շերտերից, տիպաբանության դերը դառնում է առաջնային եւ հաստատում բանաստեղծի ինքնությունը:

Լիտվացի հանրահռչակ բանաստեղծ Էդուարդաս Մեժելայտիսը Վ. Դավթյանին նվիրած իր գրախոսականում նշել է. «Պոեզիան մաքրում է արյունը»: Մեծ խորհուրդ է պարունակում այս ձեւակերպումը՝ առնչված բանաստեղծության արարող ոգու հետ: Հստակ կարելի է պատկերացնել պոետական բոլոր այն երանգները, որոնց ավիշով, հիրավի, մաքրվում է արյունը: Նրանք են՝ զգացմունքը, խոհը, հոգին, միտքը եւ նաեւ այնպիսի աստվածային նվիրումներ, որ դեռեւս հնարավոր չէ պատկերացնել:

Ռ. Եսայանի պոեզիան եւս խոհականության երանգներ ունի, որ նրա պոետական խառնվածքին հատուկ է եղել դեռեւս առաջին գրքում եւ գնալով ավելի նկատելի է դարձել: Նշենք, որ խոհը սերտորեն կապված է ստեղծագործական հոգեբանության, բնության առեղծվածների խորքը թափանցելու, կյանքի բազմապիսի շերտերը շոշափելու, իրականի եւ երազի էջերն ընթերցելու ձգտումի հետ: Ծանոթանալով Եսայանի «Ասուպների եգերք» գրքում զետեղված խոհական բանաստեղծություններին, կրկին ու կրկին համոզվում ես, որ նա ոչ միայն ձգտել է, այլեւ ապրել է արարման տառապանքը եւ զգացել սեփական հունձքի հաճույքը: Բացում ենք նշված ժողովածուն եւ հանդիպում «Տառապանքի ածուխով գրում են տողերը կյանքիս» հյուսվածքը եւ համոզվում դրանում: Փոխաբերությունների ինքնատիպ ու թարմ մի փունջ է այդ բանաստեղծությունը: Ասուպի թռիչքին կարոտ երգիչը տառապանքի ածուխով է գրում իր կյանքի տողերը եւ նշում. «Աշխարհն ինձնից դուրս է, սակայն հայտնվում է լուսանցքներում ներշնչանքի»: Ահա այս ներշնչանքն է, որ բանաստեղծին տանում է խոհերի ու խորհուրդների աշխարհը, որտեղ իր զգացումներին գումարում է երեւակայությունն ու Ոգու թեւաբախումը եւ «աշխարհից մի կետ վերցնում, դնում պոեզիայի հատակում, որ նրա վրա հենվի երկինքը»: Երգիչը խոստովանում է, որ իր տողերի զսպանակից հետզհետե տեղաշարժվում է ոգին եւ լուսավորում ծիրը Անհունի, որտեղից.

Մի ծայն հավաքում է ծվենները Ոգու եւ
կերտում կերպարանքը միֆի:
Շիրմատներից հավաքիր
կորիզները անեզրության,
միջոցն իբրեւ շորեր՝ հագիր,
ածիր քեզնից, ինչպես մի ցավ,
որ աստղով է լուսավորում
ճամփաները հաղորդության...
(էջ 11):

«Անարձագանք ոգի» պատկերը ժամանակի ճշմարիտ արձագանքն է: Բանաստեղծը չի ընդունում նյութապաշտությունը, ծառանում է ոգու սովի դեմ եւ ճշում. «Կարծես ետեւում է մնացել շնչառությունը պատմության: Թռիչքը մտքի»: Բանաստեղծը սակայն բացասական երեւոյթները սոսկ արձանագրողը չէ, նա համոզում է ընթերցողին, որ

Լույսը դեմքն է հողի: Առանց հայացքի՝
չի՛ կայանում անգամ պատմությունը... Երկրի:
(էջ 26):

Ռ. Եսայանի աշխարհընկալումը առնչված է ժամանակի ընթացքին, որ ձգտում է հանգրվանի: Այդ ճանապարհին նա ըմբռնում է «Չասված բառերի խորհուրդը» եւ ձգտում սրտերին հասցնել բառի ճառագայթները, խորհրդածելով.

Բառը կրակ է, կրակը՝ հավատ,
Իսկ ընթացքը այս նո՛ր հանգրվան է...
Որտեղ Անհայտի խիղճն է լուսանում...
Բառը հոգի՛ է եւ խիղճ հալածված,
որ լուսանում է արեւի ծիրում:
(էջ 28-29):

Ռ. Եսայանի խոհը արտացոլում է ժամանակի էությունը, որ դեռեւս խնդրվում է խավարի եւ լույսի հակասությամբ: Նկատելով այդ, բանաստեղծը դառնում է առողջ հավիտենության որոնողը: Նրա քնարական հերոսը կարծես հնչեցնում է Գ. Նարեկացու «ես եմ համայնը» աշխարհասիրության փիլիսոփայությունը: Նրա շրթերին հնչում է «ես իմ հավատն եմ» համոզմունքը: Ներթափան-

Ելելով իմաստասիրական եռք, Ռ. Եսայանը բացում է իր ժամանակակցի խոհերի միջուկը եւ նրա անունից հայտարարում.

*Չիշողության երկինքը ուսած՝
քայլում եմ ես,
կյանքը դարձնելով երազանքի հենակ:
(էջ 397):*

Չավատի այս բացահայտումը առինքնող է, այն ընթերցողին մղում է դեպի կյանքը մաքրելու պահանջ.

*Ես հոգու լույսով բացեցի ճամփան,
հայտնաբերելով հայացքն իրերի,
որն աշխարհ բերեց աստղը մանկության
եւ հեքիաթային շունչը ծիրերի...
(էջ 348):*

Խոհափիլիսոփայական իր երգերի կենտրոնում ինքն է, աշխարհաճանաչումը իր ձգտումն է, իր ինքնահաստատումը, իր խորհուրդները: Այդ նշանակում է, որ նրա բանաստեղծական սուբյեկտիվ ապրումի հիմքում դրված է օբյեկտիվ աշխարհի իմաստը՝ մարդկային ապրումների խառնարանով.

*Գոյատեւման եզրերի վրա
սարսռում է շունչս
եւ պայթում գարնան բողբոջի նման:
Տողերս օդային համբույրներ են հղում
Անհայտի ծիծեռնակին,
որ ժպտում է իբրեւ ընթերցողն իմ ապագա...
(էջ 402):*

Ռ. Եսայանին հուզում է իր ժամանակի ընթացքը՝ մարդկային գոյաբանության իմաստով: Նրա գեղարվեստական պատկերը ձեռք է բերում կյանքը գնահատելու ավիշ, որով կարելի է գնահատել նրա աշխարհայացքի եւ գեղագիտության գույները: «Արյուն, աշխարհ եւ անդրաշխարհ» շարքում ընդգծված երեւում են բանաստեղծի ընդհանրացումների ինքնատիպությունը, խոհերի հարստությունը: Նախ նա ընդգծում է ինքնահաղթահարման կարելիությունը, հաստատում, որ իր «ծայնով մաս առ մաս ընդլայնում է ճակատագրի ասելիքը», որ իրենն է.

*Աստղի շունչ
ունի բառս,
տողս ունի շուրթ,
որով եւ
աղոթում է հուսավառ երկինքը...*
(էջ 405):

Այդ խոհերի անմիջական շարունակությունն է «Գունավոր պահեր» գողտրիկ հյուսվածքը: Բնության երեւոյթների եւ կենսական թրթիռների ներքին կապը այստեղ բացահայտված է վարպետորեն: Տողից-տող անցումը տրամաբանական այնպիսի շեշտերով է կատարված, որ ընթերցողը տեսնում է իրեն, հեղինակ-քնարական հերոսի ապրումները վերագրում իր սրտին ու հոգուն: Սա բանաստեղծության փիլիսոփայություն է բառի բուն իմաստով: Այստեղ մարդկային հուզաշխարհը մաքուր է, անբիծ: Այստեղ «Պահը կապույտ է ու կարմիր», «Ճերմակ է պահը ու ներշնչող»: Այստեղ կյանքի իմաստը բնության երանգներով գնում-հանգում է ազգային ճակատագրի սրբատեղին:

*Իմ շուրթը՝ խորան,
ուր հայ գրերը
մոմեր են վառվող-
գունավոր պահեր,
թեւավոր դարեր...*
(էջ 406):

Ռ. Եսայանը ձգտում է յուրովի բացատրել փիլիսոփայական արդեն ստուգաբանված կատեգորիաները: Օրինակ, հայացքը տարածություն է, որտեղ աղջիկը կարող է մոտենալ իր ճերմակ երազին եւ քնարական հերոսին հեռացնել իրականությունից: Դեռ ավելին «հայացքը հորիզոն է... հայացքը կամուրջ է», այդքանով հանդերձ:

*Անորոշության տխուր կայաններ,
որտեղ երազն իր դեմքն է կորցրել...*
(«Շրջապտույտ», էջ 407):

Կյանքի ճանաչողությունը տեսանելի եզրեր չունի, հորիզոնի է նման: Իսկական բանաստեղծը նկատում է այդ առեղծված-հրաշքը եւ արտահայտում նոր գտնումներով: «Փոխադարձ բացակայություն» ստեղծագործության մեջ Ռ. Եսայանը խոհի նոր երանգներ է փնջում: Այստեղ կարդում ենք. «Ես իմ ստվերի խորհրդատուն եմ», «Երկիր ծաղկամանում ապրող արմատն եմ ժամանակ-ստվերի», «Երկինքն իմ շուրթերից ընկած համբույրով զիզգազվում է», «Համապատկեր» բանաստեղծության մեջ բնության եւ կյանքի դիալեկտիկան դիտարկվում է միանգամայն նոր գտնումներում: Օրվա դեմքը այստեղ ներկայացվում է որպես «մանկան երազ ու ծերունու ձեռնափայտի ընդհանրացում», որպես «Գետնատրոփ քայլերի ձայն կանուրջների հիշողության խղձերտերում», ինչպես «պատվի երիզ ու հայացքի տաք պատառիկ»:

Խոհափիլիսոփայական թարմ պատկերներ են նաեւ գրքի «Հիշողության շրջանակից դուրս» շարքը, «Ուղենիշեր», «Դուրսը», «Ծնունդ», «Հողը...», «Խզում», «Տարածության դեմքը» եւ այլ ստեղծագործություններ:

Պատահական չէ նրա «Տարածության օղակները» խորհուրդը՝ ուղղված պոետին, որտեղ բանաստեղծի հայացքը գնահատվում է որպես «տարածության օղակ, որից կառչում է շնչառությունը այս մոլորակի եւ լցվում շնչով մաքրագործության...»: Դեռ ավելին, երգիչը «հաղորդության բաց շղթա է... Անհունից է գալիս նրա տողը» որպես հոգու լույս օղակ: Գնալով ահագնանում են բնութագրումները.

*Բացվող բողբոջների սարսուռն ես դու, պոետ...
Քո ամեն բառը փոթորկված ալիքն է տարածության
օղակների...*

*Դու մեծ բացակա-
հոգիդ լույս է տալիս
տիեզերական անդրադարձներով...*

(էջ 432):

Ընդհանրության մեջ Ռ. Եսայանի բանաստեղծությունները կյանքի փիլիսոփայությունը բացահայտելու եւ գնահատելու լուրջ փորձեր են, որոնցով հաստատվում է նրա ինքնատիպ ոճն ու ձեռագիրը:

3. ՍԻՐՈ ՉՍԱՅՔՆ ՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆ

Սերը հայ պոեզիայի հավերժական թրթիռն է, որ ծնունդ է առել առասպելական շրջանից եւ թեւաբախում է XXI դարի շքամուտքին, որպէսզի նոր ավյունով թեւածի դեպի ապագա դարերը: Առանց սիրո կյանքը կկորցնէր իր իմաստը, աշխարհը կդառնար անօդ տարածք, իսկ ծաղիկները կդառնային անասնակեր: Վերջապէս սերն է, որ ջերմացնում է մարդկանց սրտերը, ինչպէս երգել է Սայաթ-Նովան՝ սերը սեր կուբերէ:

Երբ անդրադառնում ես մեր երիտասարդ պոետների երգերին, կրկին համոզվում ես, որ նրանք հայ դասական պոետների ժառանգորդներն են նաեւ սիրային քնարերգության մեջ: Այսպէս, Ռ. Եսայանի տասից ավելի ժողովածուներից յուրաքանչյուրում մի զգալի բաժին հատկացված է սիրային երգերին: Դրանով չի բավարարվել պոետը, մի առանձին ժողովածու է հրատարակել «Սիրո գիրք» խորագրով: Ինչպէս մյուս թեմաների, այնպէս էլ սիրո երգերի մեջ Ռ. Եսայանը ներկայանում է իր յուրատիպ ոճով, բանաստեղծական ազատ ճախրանքով, բառի այրումով, մտքի եւ զգացումի անբաժան զգացումով:

Ենթաբնագրային նուրբ ու ջերմացնող պատկերների հոսք կա Ռ. Եսայանի սիրային տողերում: Նա դիմելով սիրած էակին, մի կողմից բացում է սրտի դռները՝ խոստովանանքի ազնվությամբ, մյուս կողմից՝ ասպետորեն նշում, որ իր ցավը սփռվելու միակ դեղը նրա սերն է.

*Ես սիրում եմ քո տաք շուրթերը, երբ
թեթեւ եմ, վրան էլ բառեր չկան,
էլ կասկած չկա, կան լոկ սպասումներ,
ուր ես փորձում եմ մոռանալ ցավը
եւ անդէմ կյանքիս իմաստն համբուրել...*

(էջ 5):

Բանաստեղծը սիրո զգացումներով ծոներգում է իր աստվածային դիցուհուն: Սակայն պոետական ընդհանրացումներում սեփական հոգու դայակը չի դառնում: Զգացումը նման դեպքում երգի տողերին ձուլված թափանցում է ընթերցողի սիրտը, ծիածանվում սիրո հմայքով ու շոյանքով: Օրինակ, կնոջը՝ Անահիտին նվիրած

Երգի հենց սկզբից Եսայանը հոգեբանական-փիլիսոփայական ընդհանրացում է կատարում, եզրակացնելով, որ սիրող կողմերի միջև բոլոր բառերը արգելակներ են, որ իր շշուկները այնքան փափուկ են քսվում նրա վարսերին, կարծես լինեն մրջյունի երազ կամ խոտի աղոթք: Այստեղ էլ ապրումն է անմիջական, եւ խոսքն է թարմ՝ պատկերային առումով:

Ռ. Եսայանի համար սերը նաեւ աշխարհաճանաչման լուսարձակ է: Ինչպես ինքն է խոստովանում. «Մեն մի համբույր, եւ ես հատեցի սահմանը ճանաչման»: Երկու կողմերի հոգու կրակը այնքան է վառ, որ նրանց միասնությունը դառնում է աստվածային օրհնանք.

Վարդագույն էր մեր շուրջն

ամեն բան: Անգամ

Ոչինչը:

Յետո

Չիմացա՛ այլեւս,

թե որտեղ եմ ավարտվում

Ես

Եվ որտեղից ես սկսվում՝

Դու՛:

(էջ 12):

Այստեղ հետաքրքիրն այն է, որ կարդալով տողերը, անվերապահորեն հիշում ես Պ. Սեւակի բանաստեղծությունը: Սակայն նկատում ես, որ Եսայանը կարողացել է դուրս գալ իր մեծ ուսուցչի ազդեցության ոլորտից եւ խոսքն ասել ինքնատիպ:

Այն վայրը, ուր տեղի է ունենում քնարական հերոսի հանդիպումը սիրած էակի հետ, այն պահը, որ ջերմություն է պարգևում նրանց, այն երազը, որ ծնվում է նրանց շնչառություններից, դառնում են բնապատկեր, պատկեր ապրում, պատկեր գործողություն եւ իրենց թեւերին առնում նաեւ ընթերցողին.

Վայրն այս,

ուր հիմա

համբուրվում ենք մենք,

զուցե եղել է երբեւէ հատակ

մոռացված ծովի կամ գաղտնի

անկյուն, ուր մերկացել է ճակատագիրը՝

*մարդկանցից հոգնած,
հոգսից, ցավերից մի կերպ ազատված...
Վայրն այս,
ուր հիմա
համբուրվում ենք մենք,
կդառնա մի օր հոգու թանգարան...
(էջ 13):*

Նման դեպքում է, երբ խոսք է բացվում բանաստեղծական գյուտի մասին, այն էլ մի երգի մեջ ոչ միայն մեկ, այլ մի քանի գյուտի: Ռ. Եսայանի հայտնության նվերներն են սրանք:

Ռ. Եսայանի սիրային երգերում մատները խելահեղ հայացք ունեն, նրանցից մարմնահամ լույս է բխում, սիրողը աստղ է դառնում, լռությունը եռում է, տենչը վերածվում է խելակորույս ընթացքի, համբույրը ջրերի վրա օրորվող նավակ է («Մոտեցող-հեռացող համբույր»): Եսայանի սիրային երգերի արմատները հասնում են Ն. Քուլալի հայրենների, ուր խոսքը եւ անմիջական է, եւ մարմնային զեղեցկությունների ցուցադրում:

*Քո կրծքի ալիքների վրա
թրթռում է
երկնքի մի կտոր:
Դու նետում ես քո շորը
խոտերի վրա-
եւ մարմինդ ի վեր
զալարվում է
հոգեվարքը ձկան:*

(էջ 15):

Լավն այն է, որ Ռ. Եսայանի սիրային երգերում հանդես են բերված սիրո երկու կողմերը որպես գործող անձեր: Այս դեպքում երգը ավելի տեսանելի է դարձնում նրանց սրտերի զարկերը, ավելի համոզիչ՝ զգացումների ծփանքում, ավելի վարակիչ՝ սիրո լույսի շոյանքում:

*Մեր շուրթերի միջեւ
տարածությունն այնքան
արագ կրճատվեց,
որ ես չզգացի
իմ մեջ կատարվող փլուզումները,
մեր շուրթերի միջեւ*

*խելագարված օդը
ընկավ հողի վրա՝
իբրև կանաչ հրդեհ:*
(էջ 17):

Սերը խենթացնող ուժ ունի, եթե այն փոխադարձ է: Բանաստեղծի երգերում պատկերված սերը եւ փոխադարձ է, եւ չմարող: Ահա, թե ինչու քնարական հերոսը զարմանում է՝ ինչու սիրո արարողության կրկնվող պահերին չի խենթանում: Տարբեր հյուսվածքների մեջ քնարական հերոսը հանդիպելով սիրուն, միանգամից գտնում է կորցրածը: Համբուրում է սիրած էակի մատները, ասես ճակատագրի հերկերը թափվում են իր երազների թրթռների վրա: Դեռ ավելին, հանդիպման պահերին նրանք ասես լսում են Տիրոջ խոսքը... Իսկ Տերը արարիչ է, կենսապարգեւ:

*Մի շարժվիր,
Իմ եւ քո շուրթերի միացման կետում
թռչունի բույն է հյուսվում...*
(էջ 24):

Սիրո ճամփան ըստ բանաստեղծի գեղեցիկ եւ իմաստնալից է ոչ միայն հանդիպումների ջերմությամբ, այլեւ անցած օրերի հուշերով, որոնք կրում են սիրո շշուկների եւ երազների կնիքը: Լինում է, երբ Եսայանի քնարական հերոսը կանգնում է իր մոռացության եւ սիրո էակի միջեւ, եւ ամեն ինչ դառնում է կարոտ՝ սպիացող վերքի, ծաղիկ դարձած վարսերի եւ շրթունքների, խոցող համբույրների, սիրով լեցուն ոտնահետքերի («Ես կանգնել եմ...»): Կարոտի հուշերի մեջ ընդգծվում են քայլերի ծայնը, գգվանքների քնքշությունը, ճաքած հույսը, տենչի աչքերը («Հուշի պատանդը...»): Լինում է նաեւ, որ քնարական հերոսի սիրտը փոթորկվում է մռայլ ապրումներից, բախտը հղկվում է որպես շիրմաքար, մահվան պատանդներ են պտտվում շուրջը, քայլերը արձակում են անհասության արձագանք, թախիծը դառնում է զոհասեղան, բայց միեւնույն է, նա չի կորցնում սիրո հույսը, աչքերը փնտրում են գգվանքներ («Այդ աշունը չէ»): Քնարական հերոսը չի հաշտվում սիրո բացակայության հետ, հայացքը միշտ սրտի վրա է, բառերը՝ հոգու մեջ, հեռվից-հեռու անգամ համբույրի հետքեր են մնում երազների մեջ:

Քանաստեղծը հոգեբանական նուրբ բացահայտումներով ներկայացնում է քնարական հերոսի ապրումները: «Քո սովերը,- խոստովանում է նա,- նստած է հոգուս մեջ, ինչպես արեւին կապկող ոսկեհատիկ փոշին մայթի եզրերին»: Ինչ էլ լինի, սերը միշտ սիրողի արյան մեջ է, ինչպես հաստատում է քնարական հերոսը.

*Քո քայլերի
հուրն անջատվել ճամփեքից այս
ու սուզվել է ալիքներում հիշողության:
Գուցե քեզ էլ
չե՛մ սպասելու:
Բայց քիչ հետո
ես զգացի, որ
կանգնած եմ,
եւ շուրթերիս կայծկլտում է
անունիդ տա՛ք սկզբնատառը:
(էջ 66):*

Այս խոստովանանքից հետո էլ քնարական հերոսը իրեն զգալով կյանքի օվկիանոսի ալիքների մեջ, խորհում է սիրո առեղծվածների մասին, որոնք ե՛ւ տառապանք են բերում ե՛ւ այդ տառապանքից ծնվող քաղցրություն: Ռ. Եսայանի սիրո փիլիսոփայությունը այդպիսին է:

«Ասուպների եզերք» գրքի զարդանախշերից է նաեւ սիրային երգերի շարքը: Այդ փունջը հուշում է հետաքրքիր մի ավանդույթ, որ զալիս է միջնադարյան հայ պոեզիայից, առանձնապես Նահապետ Քուչակից: Ռոբերտի սիրային զեղումները եւս բաց են, համարձակ, ծարավ, նաեւ անմիջական: Դա բխում է քնարական հերոսի խառնվածքից, դեպի սերն ունեցած ուխտավորի զգացումից: Այսպես, «Կրծկալիդ գիշերն է սահում» բանաստեղծության մեջ քնարական հերոսը ուղղամտորեն խոստովանում է.

*Կրծկալիդ գիշերն է սահում...
եւ լույսի ջրվեժն է խփվում
հայացքիս պատկերին,
որոնք փշրվում են բեկոր առ բեկոր
դարսվում հատակին,
ընկղմվելով
գիշերվա համբերության մեջ:
(էջ 423):*

Ապա ծորում է պաղատանքը քնարական հերոսի, որ Սերը իր լույսը դնի լռության շրթունքին, որպեսզի պահի հաճույքի սահմաններից դուրս բառերը ստանան հոգու ջերմությունը: Եվ դա բնական է, ընդունելի: Երջանկությունը, արդյոք, պայմանավորված չէ աստվածային սիրո զգացումից: Ոչ ոք չի կարող ժխտել: Նշանակում է՝ երիցս ճշմարիտ է բանաստեղծը, որ առանց սիրո կյանքը համարում է դատարկություն եւ խնդրում է.

*Վերադարձրու, սեր իմ, համբույրիդ խորքերից
շուրթերս,
որ կյանքի տեղում
չիշխի՝ երբեւէ
դատարկությունը:*

(Էջ 413):

Քնարական հերոսի համար սերը հիշողություն է նաեւ, որ կարող է վերադարձնել սիրողի ձեռքերը, որպեսզի «Բախտի տեղում չիշխի երբեւէ ունայնությունը», որպեսզի «Ելքի տեղում բացվի ծաղիկն անսահմանության»:

Սիրո խոստովանություն է «Հավերժության բանալին» շարքը: Պատկերային հյուսվածքով, ապրումի ջերմությամբ, հոգու բացահայտմամբ շարքը առիւթնող ուժ ունի, արյունը մաքրելու ավիշ, կյանքը քաղցրացնող երազների գունար: Քնարական հերոսը նախ ներկայացնում է իրականության կողմից իրեն պարտադրած քառսը, որից ազատվելու ելքը միայն սերն է, եւ խոստովանում է. «*Ես փնտրում էի քո աչքերը եւ գտա...*»

Նման աղերսանքից, երազին հասնելուց հետո անգամ քնարական հերոսը դեռ անդունդների վրա կախված սիրո իր բառերն է որոնում: Սիրո ծարավի արտահայտությունն է, որ ճշմարիտ է, ընդունելի: Սիրո անհասանելի բարձունքի կարո՞տը չէ, արդյոք, Սայաթ-Նովայի տաղերի ատաղծը:

Քնարական հերոսը բոլոր դժվարին պահերին սպասում է սիրո այցելությանը: Սերը «Հույսի առաջին կաթիլն է», «ճակատագրի հետքն է», «Ժամանակի արցունքն է», «Հշուկի այրող թելեր է», իսկ նրա «համբույրը՝ զոհասեղանին ընկնող լույս»:

Ռ. Եսայանի պատկերացմամբ սերը եւ ցավը երկվորյակներ են, որոնց արանքում է միայն զգում աստղային պահեր.

Հոգիս աստղային պահեր է ապրում
 քո շրթունքների եւ ցավի միջեւ,
 կրքեր փորձարկող դավերի միջեւ
 հոգիս աստղային պահեր է ապրում:
 Երբ հույսն է ծլում լռության ափում,
 երազը՝ համբույր, կարոտը շունչ է,-
 հոգիս աստղային պահեր է ապրում
 Քո շրթունքների եւ ցավի միջեւ...
 (էջ 377):

Փոխադարձ սիրո գաղափարը շարքի հիմնական երակն է կազմում: Ժողովրդի դարավոր կենսափորձից ծնված այս համոզմունքը ոչ միայն անհատի սրտաբուխ հաճույքի առեւակատչյան է, այլև առողջ կենցաղի, ընտանիքի, հասարակության լուսաշինչ աղբյուրը: Ռ. Եսայանի սիրո երազանքը այս փիլիսոփայության արտահայտություններից է:

Խոստովանությունների եւ հաճույքների ուլունքաշարից հետո քնարական հերոսը գալիս է մի եզրակացության, որ սերը առողջ զարկերակ է, սպասումները սարսռացող պահեր, կյանքի իմաստ, հույսի տերեւ, շնչի թանգարան, հավերժության բանալի, հույսի վարսեր, զղջման թեւեր, խելահեղ լույս, լռության տարածք, ճրագի լույս, հնայքի ծով, ծոցի երազ, բախտի զոհասեղան եւ այլն, եւ այլն:

Սիրո անրջանքի եւ խռովության հրաշալի մի փունջ է նաեւ «Ելք» շարքը, որտեղից կցանկանայինք բերել «բաղցր շշունջներ» հյուսվածքը.

*Սեր իմ, կարոտդ լույս է ճյուղավոր,
 Որից քաղում եմ թախծի հատիկներ,
 Հետո փոխարկում շուրթիս ալիքով
 Ծիածանների: Երգս քանի քեզ
 Սիրահետուն է այգու ծաղիկով՝
 Ես ներքաշվում եմ դեպի խորքն աստղի,
 Ուր լռությունն է եռում ալիքով
 Անակնկալի, ուր բախտն է հղի...
 (էջ 389):*

Ռ. Եսայանի սիրային բանաստեղծությունների հենքն ու հյուսվածքը եւս ինքնատիպ են, թարմ, իր սեփական ձեռագրի վկայություններ:

* * *

Արցախում ստեղծվող պոեզիան հայ գրականության մի անբաժանելի մասն է կազմում: Նրանում ի հայտ են եկել գեղարվեստական զարգացման այն բոլոր միտումները, ինչ հատուկ է ընդհանրապես հայ գրականությանը:

1960-ական թվականների սկզբից ասպարեզ իջած գրողների շարքերը համալրվեցին նոր անուններով՝ առանձնապես Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին: Այդ բանաստեղծներից են Ռ. Եսայանը, Ն. Գասպարյանը, Յ. Ալեքսանյանը, Ժ. Բեգլարյանը: Նրանց ստեղծագործական աճին մեծապես նպաստեց 1989թ. Ստեփանակերտում տպագրվող «Արցախ» ամսագիրը, որի հիմնադիրը ԼՂՀ գրողների միության վարչության նախագահ Վ. Յակոբյանն է:

Խրախուսելին այն էր, որ ազատագրական պայքարի համապատկերի վրա գրականությունը զարգանում էր գնահատման պահանջվող չափանիշներով եւ ուսանելի խորհուրդներով: Ակադեմիկոսներ Ս. Սարինյանը, Ս. Արզումանյանը, գրականագետներ Ս. Դանիելյանը, Կ. Աղաբեկյանը, Վ. Յակոբյանը եւ ուրիշներ հանդես էին գալիս գրախոսություններով եւ ընդհանրացնող հոդվածներով: Ս. Սարինյանը գրեց «Արցախը դեռ պիտի խոսի», «Արցախի լեզենդը», «Բանաստեղծությունը, որի համար ծնվել է մարդը», «Ուրվագծեր ետադարձ հայացքով», «Բանաստեղծության գիտությունը» հոդվածները: Անվանի գրականագետն ընդգծեց, որ պոետական Արցախը ոչ միայն ասել եւ ասում է իր խոսքը, այլեւ ժամանակն է, որ հայ գրաքննադատությունն իր խոսքն ասի հայ մշակույթի ինքնատիպ եւ ուշադրության արժանի մասը կազմող Արցախի գրականության մասին: Ահա այդ ուշադրության արժանի պոեզիան ստեղծողների շարքում իր ավանդն է ներդնում Ռ. Եսայանը:

1988-ին սկսվեց Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտը, որը դարձավ Ավարայրի եւ Սարդարապատի շարունակությունը: Պատերազմին զինվորագրվեց նաեւ մեր նորօրյա գրականությունը:

Ռ. Եսայանի աճը նկատելի դարձավ հենց առաջին գրքերով: Ավանդական Արցախի գետերն ու սարերը՝ Թարթառը, Խաչենագետը, Իշխանասարը, Մռավը, Քիրսը, Արեսարը գեղարվեստական

մետաֆորներ դարձան հայրենասիրական երգերում: Արցախյան պայքարը գեղարվեստորեն վավերագրվեց նաև նրա ստեղծագործություններում: Լինելով ազատամարտիկ, անմիջականորեն ներկայացրեց մեր ժողովրդի մաքառումը, սակայն՝ խոհական երանգներով: Պետք է ասել, որ նա համարյա չի հետելում հայ դասական պոեզիայի կառուցվածքային, հանգավորման, ռիթմի ավանդույթներին: Ավելի շատ նա դիմում է ազատ ոտանավորի հնարանքներին: Եվ դա հաջողվում է նրան: Նա ձեռք է բերել նաև փորձ՝ իր աշխարհընկալումները պոետական յուրահատուկ ձևի մեջ վերարտադրելու համար:

Հայրենասիրության թեմայից բացի խոհը եւս ընդգծված է Ռ. Եսայանի ստեղծագործություններում: Նրան հատուկ է բառապատկերի ստեղծման ձգտումը: Հայրենիքի եւ ժողովրդի հանդեպ սերը նա արտացոլում է սիմվոլների եւ խոհականության ատաղձով:

Սիրո փիլիսոփայությունը տարբեր երանգներով է ծփում Ռ. Եսայանի երկերում: Բնապատկերների համապատկերի վրա նա զրուցընկեր է ընտրում սիրած էակին եւ նրա առջեւ բացում իր սիրտը:

Ռ. Եսայանը այսօր համահայկական ճանաչում ունի: Նրա պոեզիան ամբողջության մեջ արդի հայ գրականության լուսավոր էջերից է:

2008թ.

ԿՅԱՆՔ ԵՎ ՊՈՆՁԻԱ
(Առաջաբանի փոխարեն)

Ժամանակներն ինչքան հեռանում են 1988թ. Արցախյան ազգային-ազատագրական պայքարի շեփորահարումից, այնքան ավելի է ընդգծվում նրա նշանակությունը ոչ միայն Արցախ աշխարհի անկախության նվաճման, այլև ազգային մշակույթի զարգացման առումով: Եվ դա բնական է, որովհետև միայն ազատ է ինքնիշխան ժողովուրդը կարող է հարստացնել իր նյութական ու հոգեւոր արժեքները: Հիւրավի, այդպես էլ տեղի ունեցավ մեր լեռնաշխարհում: Արցախը ողջ հայության օգնությամբ, դուրսագլուխ գավակների արյան գնով հասավ իր երազին՝ թոթափելով Ադրբեջանի հայահալած ծանր լուծը:

Ինչպես ընդունված է ասել, Արցախյան պատերազմին զինվորագրվեց նաև հայ գրականությունը: Պայքարի առաջին օրերին արտոնված է չարտոնված հանրահավաքներում հնչում էր Հ. Շիրազի «Ղարաբաղի ողբը» բանաստեղծությունը: Հայրենաշունչ իրենց երգերը գրեցին Գ. Գաբրիելյանը, Վ. Հակոբյանը, Հ. Բեգլարյանը, Ա. Հովհաննիսյանը, Ս. Խանյանը, Ն. Ավագյանը և ուրիշներ: Մի շարք երիտասարդներ, որ զինվորագրվել էին Արցախի պաշտպանության բանակին և մարտնչում էին ռազմաճակատում, սկսեցին տպագրել իրենց առաջին փորձերը՝ երկրի ազատության համար մղվող պայքարին օգնելով նաև իրենց երգերով: Նրանք իրենց բանաստեղծություններն առաջին հերթին տպագրում էին «Արցախ» ամսագրում, ապա՝ «Եղիցի լույս» թերթում: 1990-ական թվականների սկզբից ավելի հաճախակի էին տպագրվում նաև Ն. Գասպարյանը և Հ. Ալեքսանյանը:

Ն. Գասպարյանը ընթերցողի սեղանին դրեց «Հավատ Արցախի», «Արեւոտ օր», «Պար», «Զվարճալի պատմություններ հորինողը» ժողովածուները: Հրանտ Ալեքսանյանը տպագրեց «Կենսադաշտ», «Խրախճանք», «Ամառն Ամարասում», «Վարդի խռովություն», «Անկման սիմետրիան», «Խորանարդներ նորին գերազանցությանը», «Եզրային ուսուցումներ և երեք զոլֆստրիմ» և այլ հավաքածուներ:

Երիտասարդ պոետները ևս իրենց ավագ գրչեղբայրների հետ հանդես էին գալիս անզիջում պայքարի շեշտերով հագեցած գործերով, որոնցում կոչ էր արվում համախմբվել մայր Հայաստանին վերամիավորվելու գաղափարի շուրջ: Ապա պատերազմական թեժ օրերին ստեղծեցին իրենց հայրենապատումը՝ հագեցած անձնուրաց պայքարի շեշտերով: Հետաքրքիրն այն է, որ երիտասարդները գրում էին նաև խոհափիլիսոփայական և սիրային երգեր:

ՆՈՐԵԿ ԳԱՍՊԱՊԱՐՅԱՆԻ ՊՈՆՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՐ
(Ն. ԳԱՍՊԱՊԱՐՅԱՆ-50)

Ն. ԳԱՍՊԱՊԱՐՅԱՆ - բանաստեղծի *հայրենական երգը* ծնվեց կրակների միջից: Նա Արցախյան ազգային-ազատագրական պատերազմի անմիջական մասնակից է՝ որպես հեռուստալրագրող: Նա իր հայրենապատումի մեջ ցավով է խոսում լքված գյուղերի, պապենական օջախների մասին: Ն. Գասպարյանի հայրենապատումի փիլիսոփայությունը «երկիր» հասկացության բնութագրումն է, նա լավ է հասկանում, որ տարածքը հայրենիք է կոչվում նրանում ապրող եւ այն շենացնող ժողովրդով: Լինելով պատերազմական հրդեհներից ավերված հայրենի գյուղերում՝ բանաստեղծի սիրտը ճնլվում է, սակայն չի հուսալքվում:

*Գյուղ է լքված ու լուռ է,
Խոտը բուսել է կալում,
Մի հավ թուխս է, տխուր է,
Որ որբուկ ճտեր է պահում:
Տուն է, տանիքը փակ է,
Մկները հատակ են պեղում,
Սարդերի հյուսած ցանցի մեջ
Ծաղիկ է աղբսում մեղում:*

(Ն. Գասպարյան, *Հավատ Արցախի, Եր., 1991, էջ 21*)

Եիշտ է, բանաստեղծի այս հյուսվածքի մեջ թախծի ու տազնապի զգացումն է նկատվում, սակայն նրանում երանգվում է նաեւ լավատեսությունը՝ հայրենի գյուղը վերակերտելու եւ շեն դարձնելու իղծը:

Արցախը ոտքի է ելել վերամիավորվելու մայր Հայաստանին: Սակայն նենգ «հարեւանը» կազմակերպեց Սումգայիթի, Բաքվի, Գանձակի, Մինգեչաուրի եւ այլ բնակավայրերի հայության ջարդը: Այդ չարագործությունը թելադրեց մեր պոետներին՝ չհավատալ թուրքին, մարտնչել եւ՝ երգով, եւ՝ զենքով, միշտ լինել զգոն:

«Հավատ Արցախի» ժողովածուն խոսում է Ն. Գասպարյանի հայրենապատումի ինքնատիպության մասին: Այդ առանձնահատկությունը բխում է քնարական հերոսի վճռականությունից: Նա չի հաշտվում Արցախի անորոշ վիճակի, վտանգված ճանապարհի հետ, ուստի ելնում է պայքարի:

«Հավատ Արցախի» գիրքը բացվում է «Կեսօր» շարքով: Այն

քնարական պոեմի տպավորություն է թողնում: Հետաքրքիր է Ե. Չարենցից բերված բնաբանը՝ «Խորհուրդ չի ընդունում ապագայի երգը»: Անդրադառնալով մեր պատմական անցյալին՝ բանաստեղծը նրանից փնջում է լուսավոր երազներ, հաստատում ներկան, հավատով նայում գալիքին: Բանաստեղծը գիտակցում է իր անելիքը, «Ցնծության օրորոցներից» ելնում է՝ կորցրածը գտնելու համար.

*Ես չեմ կասկածում,
որ կը փոխվի կյանքում ինչ-որ ձեւ,
Մեկ է, կհիշեմ,
որ տանս սյուն է պակասում մի նոր,
որ ժամանակն է հին դուռը փոխել:*

Նույն տեղում, էջ 14:

Զգալով «արյան ցավը»՝ բանաստեղծը կոչ է անում չլքել երկիրը, խտացնել նրա արեւի լույսը, լսել արդարության ձայնը: Դա ժամանակի շունչն է, որ զգացվում է «Ծնունդը ցավի», «Ծնունդն անքնության», «Ծնունդը տազնապի», «Ծնունդն անտարբերության», «Ծնունդը տխրության» հյուսվածքներում: Նրանցում ընդգծվում են աշխատանքի, ուժի, հավատի, կարոտի, լույսի, ներշնչանքի ծփանքները:

Ն. Գասպարյանի հայրենապատումը հողաբույր է, հուշերն առնչված են հայրենի օջախների, նրանցում եղած մասունքների հետ: Դրանք մի կողմից կարոտ են ընծայում քնարական հերոսին, մյուս կողմից կոչ անում մարտնչել հանուն հող հայրենիի փրկության:

Ուշադրության արժանի է նաեւ «ճեղքված կեղեւ» պոեմը, որտեղ տարբեր պատկերների միջոցով բանաստեղծը բացում է սիրտը ժողովրդի առջեւ, երգվում մինչեւ կյանքի վերջը լինել նրա ազնիվ զավակն ու քաջարի զինվորը:

* * *

1988 թվականից սկսված Արցախյան գրական ընտանիքի առաջ ծառայած գրականության մի հիմնախնդիր, որ մինչեւ այդ դրա մասին հնարավոր չէր խոսք անգամ ասել, որովհետեւ Արցախում ապրող եւ ստեղծագործող հայ գրողները քառակի մանլիչի տակ էին՝ ԽՄԿԿ Կենտկոմ՝ տոտալիտար ու քարացած իր գաղափարաբանությամբ, Ադրբեջանի հայատյաց իշխանություն, ՊԱԿ եւ

ԼՂ մարզկոմի սատրապներ: Արցախում հայոց ազգային-ազատագրական շարժման շնորհիվ հայ գրողի 70 տարվա փակ լեզուն բացվեց, ազատասիրության, հայրենասիրության մոտիվները շոշափվեցին համարձակորեն՝ գիտակցելով, որ Ադրբեջանը պետք է պարտադրի պատերազմ Արցախի ավանդական տերը հանդիսացող հայության դեմ: Ահա նման իրադարձությունների արդյունք հանդիսացավ Ն. Գասպարյանի ոչ միայն սոնետների շարքը, այլև «Պատերազմ» ստեղծագործության, որ հեղինակը բնութագրեց որպես հավերժ անավարտ պոեմ:

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում երբեք ուրիշին պատերազմ չի պարտադրել, բայց միշտ պատերազմներ է մղել հզոր ու նենգամիտ հարեւանների դեմ, եւ մեր ամբողջ գրականությունը հյուսվել է անվերջանալի մաքառման գաղափարով: Նորեկը ճիշտ ու տեղին է գտել բնութագրող իր ենթավերնագիրը:

Որպես բնաբան, Նորեկը բերել է Ավետարանական-մարգարեական այն խորհուրդը, որ ասես պատգամվել է հենց մեր ժողովրդին: «Որովհետեւ օրեր կգան քեզ վերայ, եւ քո թշնամիներդ չորս կողմովդ պատնեշ կկապեն եւ կպաշարեն քեզ եւ ամեն կողմից քեզ կնեղացնեն: Եվ հիմնահատակ կանեն քեզ, ու քո որդիքն էլ քո միջումը: Եվ չեն թողնի քար-քարի վրա, որովհետեւ չճանաչեցիր քեզ այցելության ժամանակը»: Եվ եկավ ժամանակը՝ ճանաչելու իրեն եւ բարձրացնելու սուրը՝ թշնամյաց դեմ:

Օգտագործելով հնչերանգի հռետորական հարցի տեսակը՝ խոսքի հուզական շեշտվածությունը բարձրացնելու նպատակով, Ն. Գասպարյանն ընթերցողին տեղափոխում է պատմական անցյալ, որտեղ դաժան թշնամիներն ավերել են անտիկ ու պարսպապատ մեր երկիրը, թալանել լինելության գաղտնիքները խոր:

*Այս ինչպե՞ս եղավ, որ մեր դաշտերի ցորյանը լիկեց,
ջրի համ ստացավ կարասների մեջ գինին մուեզնող,
հին տների մեջ ծաղկող բարբառը հագավ օտար շոր,
մութ փողոցներում թափառում են դեռ մանուկներ որբուկ:*

(էջ 34)

Բանաստեղծը ցավով նորից վերհիշում է հողի տակ թաղված մեր հոյակապ տաճարները, գմբեթներից գլորված զանգերի, սարսափի նկուղներ նետված իմաստուն մտքերի ճակատագիրը եւ ընդգծում, որ իրեն «բաժին հասավ երկիրն այս փոքրիկ ու պատա-

՞ռոտված», երկիր, որտեղ խաչքարերը ջարդված են, «մեր բառերը էլ չեն դողանջում», եւ իր երկիրը չի ճանաչում:

Սակայն խոսքը չի վերջակետովում. բանաստեղծ-քնարական հերոսը նշում է, որ «պատերազմը սկսվել էր վաղուց», որի հետեւանքում «գոմեշների պինդ կճղակների տակ տրոփում էր հիշողության չոր աղաղակը, տրորվում էին սերմեր, տրոփում էր նաեւ միտքը: Դեռ ավելին, պատերազմը սկսվել էր վաղուց.

*Երբ ցեղս ազնիվ չարչարանքի մեջ ու տիեզերքում
դեռ որոնում էր լինելության ուղին դժվարին...*

Երբ օրորոցի կողերը կլոր

չարունակում էին փափկել մանչուկի ծեռքի հպումից,

*երբ դաշտեր տանող տաք ճանապարհին չէր միջահատվում երթը
ծանրաբեռ սահող սայլերի,*

եւ շինականի ափերը ճաքած շողերն արեւի,

ապագա բերքի հետ էին խառնում...

(էջ 30)

Ն. Գասպարյանը ճշմարիտ պատկերներով մատնացույց է անում մեր լեռնաշխարհին հասած հարվածները, որի հետեւանքով երկրի տիրոջը վռնդել են «իր ակունքների դռներից կանչող եւ ավերել են ճանապարհները մեծ վերադարձի»: 1989 թվականին, երբ երկրորդ տարին էր, ինչ մեր ժողովուրդը դեռեւս հավատում էր Խորհրդային Միության վերադասին, եւ ոտքի ելած ժողովուրդը վանկարկում էր. «Լենին-Պարտիա-Գորբաչով», բանաստեղծը, որպէս ընթոստության արտահայտություն, գոչում է.

Ո՞վ եմ ես հիմա, մի զոհ խղճալի ու ոգեկորույս,

դարի վերքերում հագիվ նշմարվող մի թշվառ ներկա,

նեղ նրբանցքներում ծուլ-ծուլ սողացող մի թանձր ստվեր,

Ո՞վ եմ ես հիմա... ես արտոյալ եմ, ես վաղուց չկամ:

(էջ 37)

Բանաստեղծի այս ինքնաժխտումը հուսալքության արտահայտությունն է, այլ ցավի բարձրագոյ ճիչ, որ մղում է դեպի ռազմի Աստծուն, դեպի ռազմի դաշտ:

Ն. Գասպարյանն իր «Զվարճալի պատմություններ հորինողը» ժողովածուի առաջաբանում ընդգծում է հայրենի հողի քաղցրությունն ու նշանակությունը անհատի եւ ժողովրդի կյանքում: Նա բե-

րում է մի զրույց երկու բանաստեղծների միջև. «Ես վերջերս սովորական ջրից հողի հոտ եմ առնում»: Խոսակիցն ավելացնում է. «Մարդ ինչքան ծերանում է, այնքան մոտենում է հողին, էդ հոտը դրանից է»: Զրուցակիցներից առաջինը ծեր է, երկրորդը՝ ավելի ծեր:

Այս երկխոսությունը Ն. Գասպարյանը բերում է որպես բաց դաս, որն իր բանաստեղծական շարքերում առնում է ճախրանքի թելեր, դառնում հայրենապատումի պատկերավոր իմաստություն եւ ընթերցողին թեւանցուկ՝ տանում հայրենի օջախներ, հանդ ու անդաստաններ, դաշտեր ու սարեր, եւ ոչ միայն այդ, միաժամանակ նշում, որ այդ ամենը պետք է պաշտպանել, պահպանել եւ կտակել սերունդներին:

Ն. Գասպարյանի հայրենապատումը միագիծ ու ճառային չէ, ինչ ասում է՝ պատկերավոր է, ինչ հրամցնում է՝ պոետական տարբեր հնարանքներով, ձեւերով, բանաստեղծական զանազան տեսակներով: Նորեկն իր ասելիքն ավամեջ է դնում հոգեբանական երանգավորումներով: Եվ դա հաջողվում է նրան: Ուղղակի ասենք, որ Նորեկը հասել է մի սահմանագծի, որ ուղիղ տանում է ընթերցողի սիրտը:

Նորեկն ունի հյուսվածքների մի շարք՝ «վերջին մարտը» խորագրով: Այն բաղկացած է 14 սոնետից:

Ավելորդ չեմ համարում ներկայացնել սոնետի ժանրային առանձնահատկությունները: Սոնետը իտալերեն նշանակում է հնչել-հնչյակ: Այն բանաստեղծության կայուն ձեւ է՝ բաղկացած 14 բանատողից, սկզբում երկու քառատող տուն, ապա՝ երկու եռատող տուն, տարբեր հանգավորմամբ:

Սոնետի վարպետներից են վերածնության դարաշրջանից՝ Դանտեն, Պետրարկան, ապա Շեքսպիրը: Գոյություն ունի «սոնետների պսակ»՝ կազմված 15 սոնետներից, յուրաքանչյուր սոնետի վերջին տողը դառնում է հաջորդ սոնետի առաջին տող, իսկ վերջին՝ 15-րդ սոնետն ստեղծվում է նախորդ 14 սոնետների առաջին տողերից:

Հայ գրականության մեջ սոնետն արմատավորեցին Վ. Տերյանը, Մ. Մեծարենցը, Վ. Թեքեյանը, Ե. Չարենցը եւ ուրիշներ:

Ն. Գասպարյանը, յուրացնելով սոնետի կառուցվածքն ու պատմական յուրահատկությունները, հասել է նպատակին: Շարքի մտահղացումն ինքնին հրաշալի է, այն առումով, որ քնարական

Իհերոսը, իրեն ներկայացնելով որպես այլ մուլտրակի բնակիչ, երակների խորքում զգում է օտար հառաչանք՝ մշելով. «Ես մենակ եմ, չունենմ այս աշխարհում ոչինչ»: Մենակության զգացումին գումարվում է շրջապատի վերաբերմունքը, նրան «հալածում եմ... Խնջույքներից հուշի», «Խոհի ակոսներից բերրի», սակայն երեւան է գալիս սփոփիչը, ինչպես եզրափակում է հեղինակը.

*Բայց վերքերիս վիհից, որպես կապույտ հուզում,
դուրս է գալիս մի եզ՝ դանդաղաշարժ ու սեզ,
դուրս է գալիս մի եզ ու վերքերս լիզում...*

(էջ 18)

Եզան պատկերը սիմվոլիկ է: Այն անցյալի խորհրդանիշն է, ուստի սոնետաշարքի հեղինակ-հերոսը նրա հայացքում տեսնում է «խեղված, կիսակործան օրեր եւ հողի մեջ խրված զանգակների ուղերձ»: Պատմական անցյալի ձայնն ասես սթափեցնում է քնարական հերոսին, վերհիշել տալիս օջախների տաք շունչը եւ առաջացնում ավստասանքի ավրում.

*Ո՞ւր են հիմա նրանք՝ կորուստներից կթած
այրը ոսկեմատիկ, վարպետները հսկա,
մի՞թե էլ չի դառնա զորքս հաղթանակած...*

(էջ 19)

Բանաստեղծը հաղթանակած զորքի տեսիլքային աչքերի մեջ ուզում է տեսնել «ցեղի ցնծությունը... տվայտանքը հպարտ, հոգեվարքը զոհի եւ կտակը կարմիր ամեն անհատի»: Եվ նրա հոգու աշխարհը բացահայտվում է արեցնող շեշտերով, նա երագում է, որ «պտղի միտքը զինվորյալի, ծաղկի հույսը... երերա դաշտը մծույզների վարզից եւ... զնգա փառքը մանուկների խոսքում»:

Վերհիշելով երկրի արած դարամորմոք զառանցանքը, հին երախտավորներին՝ քնարական հերոսը նորից մտորում է.

*Մնացել եմ անզեն ես մենության ավին...
կիսակործան ու թույլ եւ չգիտենմ, բնավ,
կենդանի՞ ե, արդյոք, իմ ծվարված ոգին...*

(էջ 20)

Սոնետից-սոնետ շարունակվում է հարցադրումը, որոնում պատասխանը, արում ոգու բռնկման պահեր:

Ոտքերի տակ զգալով երկրի լքված փողոցների շունչը, ցավի ճիչը, քնարական հերոսը, ասես, գտնում է իրեն եւ մշում.

*Բայց չեմ զգում ես ցավ, ոչ էլ մահվան սարսուռ,
ես չեմ ծշում վախից, ծիծաղում եմ մոլի,
Ինձ թվում է՝ օտար մի մարմին եմ տանջում...*

(էջ 21)

Չարենցյան «Դանթեական առասպելի» ցավը նորովի է զգում Նորեկը եւ ներկայացնում ինքնատիպ պատկերներով: Այնտեղ, սպի-
նեթի խորքում որոնում են խաչեր, այրում են անտիպ մատյաններ,
հոգեվարքը խելառ է, զառանցանքը՝ դեղին, հիշողության գեներ դա-
հիճների ձեռքին է: Ի՞նչ է մնում անել: Լսենք հեղինակ-հերոսին.

*Ես բացում եմ դուռը սքենածեւ խցի,
արծակում եմ ազատ ծգնողներին բոլոր
ու գնում եմ դեպի իմ զինվորը վերջին:*

(էջ 22)

Ն. Գասպարյանի բանաստեղծական պաթոսը զգոնության կոչ է,
մաքառման խորհուրդ, պայքարի ոգի: Չինվորը չպետք է լինի «հա-
լածական ու մերկ, այս աշխարհից խռով, մեղսագործի քայլքով, մե-
ղանչողի նման»: Քնարական հերոսը հոգու թելադրանքով վճռում է.

*Ես թողնում եմ ճամփիս հանցանքներս դաժան,
հալածում եմ ինձնից վհատության փոշին
եւ սպասում եմ անգութ պատերազմին վաղվա:*

(էջ 23)

Կարդում ես Նորեկի սոնետները, ջերմանում գաղափարահու-
զական շեշտադրությամբ, վերհիշում Խրիմյան Յայրիկի կոչը՝ ու-
նենալ երկաթե շերեփ, Գարեգին Նժդեհի Վարդանվաժ աննախա-
դեպ հավատը՝ ժողովրդի սեփական ուժի հանդեպ, որի վկայու-
թյուններից է 7-րդ սոնետի քառատողը.

*Ես սպասում եմ հանգիստ, հավատի մեջ իմ տան,
հավատի մեջ գրչի, տաք ակոսի ներսում,
քանդակելով խաչեր ժեռ մտքերի դեմքին
եւ սանձելով մի կերպ հղացումները բազում:*

(էջ 24)

Քնարական հերոսի ճանապարհը որոշ է դառնում: Նա, կրելով
ժողովրդի ճակատագիրը, շարժվում է՝ կարմիր ժամանակին հլու,
հաղթահարելով ամեն տեսակ դժվարություն, վճիռը դառնում է
շոշափելի.

Ավերում եմ ցավի պարիսպները բոլոր,

Ինձ ընծայված փառքի փորակները դատարկ,
որոնում են ոգիս դեռ մխացող դաշտում
եւ արտորված արթուն շիրիմները ճերմակ:

(Էջ 25)

Բանաստեղծի ըմբոստությունը շիկանում է, քանզի չի հաշտվում ոչ տիրակալի հայացքի, ոչ էլ կյանքի կողմնակի կանչերի հետ ու «չի թողնում ճամփին պարտվածներին անտուն»: Քնարական հերոսի հայացքի աջեւ՝

Վերձանվում են գծեր, տառ ու ծեսեր վայրի,
հաղթանակներ մռայլ, արշավանքներ հզոր,
եւ ելնում են ինձնից օրենքները գոյի...

(Էջ 26)

Փողոց ելնելու կոչն է թեւածում, «հազարերակ ու տաք» սերմեր ցանելու իղձն է բողբոջում, եւ անարդյունք չեն անցնում դրանք.

Եվ կանգնում է կողքիս հազար անտուն ու խեղճ,
համբուրում են աջս, քղանցքներս փոշոտ՝
ինձ պատմելով դեպքեր խրախճամբից անծեւ,
Եվ փռում են իմ դեմ հիացական կանչեր
եւ հայտնում են իրար, փսփսում են վախով.
- Ժամանել է տերը, դարպասները բացեք...

(Էջ 27)

Ն. Գասպարյանի սոնետների շարքը ժամանակի եւ տարածության գրականագիտական լուծման հաջող օրինակ է: Դարերի եւ տասնամյակների իրադարձությունների գեղարվեստական պատկերումն ընթանում է իրականին եւ ռոմանտիկականին գիրկընդխառն: Նրանում հանդես է գալիս հեղինակը, ուստի գրողի անձնավորության եւ կյանքի հասկացությունների պատկերն ընթերցողին տանում է դեպի անցյալ եւ այնտեղից դեպի մեր օրերը: Սոնետների շարքում հանդես եկող բանաստեղծը խոսում է որպես ժողովրդի ճակատագրի կրող՝ բարոյական, մտավոր, հուզական զարգացման ելակետերով: Հենց այստեղ է, որ գրողի ներկայությունը հնարավորություն է տալիս տեսնելու եւ զգալու քնարական հերոսի եւ՝ հոգեբանությունը, եւ՝ տրամադրությունը, եւ՝ միտումը: Այսպես, բանաստեղծ-քնարական հերոսի ճանապարհին փոփոխված ժամանակը նպաստում է ի տես բերելու նրա միտումը: Այդ նոր ժամանակ-տերն է, որ

*Չի կամենում տեսնել իշխաններին անբան,
Ծույլ այրերին՝ բռնած անկումների շղթան:
ակոսներում չոքած մշակներին պարապ,
երանելուն՝ անհոտ, թագավորին՝ անթագ:*

(էջ 28)

Դարի կնճիռներից սրբելով փոշին՝ ժամանակը «աղոթում է անխաչ ու խոնարհված վանքում...»: Ուշագրավ են բանաստեղծի բնութագրումները անխաչ աղոթելու մասին: Հեղինակը դրանով նշում է, որ երբեք չի կարելի մոռանալ դարավոր այն ավանդույթները, որոնցով ներկայանում է ազգը իր քրիստոնեական աղոթքներով ու սրբագործված խաչով: Իսկ ո՞վ էր նա, ի՞նչ էր ուզում.

*Նա մի այր էր ազատ, նա մի այր էր ազնիվ
եւ չէր ծնկում անգոր սին հավատի առաջ,
ուղեկցում էր նրան միշտ աստվածը ռազմի:
Հիմա փլվել անուժ սնոտիքին այդ թաց,
հիմա նստել մենակ շիրմաքարին փառքի,
որոնում է կրկին իր անցյալը ճաքած:*

(էջ 29)

Որոնելով անցյալը՝ քնարական հերոսը «դատապարտում է մահվան ցնորքներն անմիտ», քանզի եկել է ժամանակը՝ սմբած գաղափարը թաղելու, թաղելու ծերունի խոհերն ու վտիտ արքաներին:

Ներում խնդրելով իր մեղքերի համար՝ տան շեմին փռում է արնոտ ավետիսը եւ բացականչում.

Ես եմ դարձել միայն սեւ գեհենից մարտի:

Շարքի 14-րդ սունետը բանաստեղծի միտումի գազաթնակետային ընդհանրացումն է: Քնարական հերոսը սեւ գեհենից ելել է մարտի, բացել դուռը թշվառների առաջ, նետել անթիվ շղթաները, հրաժարվել ուղու սառած փականներից: Հաստատուն ու վճռական է նրա գոյի բանաձեւը.

*Իմ ձեռքով է պահը իր մեղքերը սանձում,
իր երակից հանում պտուղները աղի,
Ես եմ դարձել հուշի կացարանը միակ,
ճգնարանը մտքի եւ պատկերը դարի:*

(էջ 31)

Հրաժեշտ տալով օտար վայրերին՝ քնարական հերոսը բարձրաձայնում է. «Փնտրում եմ անվերջ իմ երկիրը անգո»:

1989թ. գրված սոնետների այս շարքը ազդարարում էր Արցախյան ազգային-ազատագրական պայքարի թեժացումն ու այդ գոյամարտին արժանի երգի ծնունդը:

Ն. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ պոեզիային հատուկ է **խոհականությունը**: Դա բխում է նրանից, որ բանաստեղծը հեռու է ճակատային հյուսվածքներից: Ավելի շատ ձգտում է գտնել կյանքի առեղծվածների պատասխանները, այստեղից էլ՝ փիլիսոփայական երանգները նրա երկերում: Եթե անգամ ընթերցողը չհամաձայնվի բանաստեղծի պատասխաններին, միեւնույն է, խորհելու առիթ են տալիս: Այս գրելաձեւն ավելի շատ ընդգծվեց «Պար» ժողովածուում, որը պոետական հասուն գրչի արգասիք է:

Ն. Գասպարյանին հատուկ է երգերի շարքով հանդես գալը: Այս առումով նա շարունակում է հայ դասականների, առաջին հերթին, Ե. Չարենցի ավանդույթները: Դրա առավելությունն այն է, որ բանաստեղծը կարողանում է դրսևորել իր ապրումները՝ առնչված թեմայի հետ: Կարելի է անգամ այդ շարքերը համարել քնարական պոեմ, ինչպես վարվել է Ավ. Իսահակյանը «Ալագյազի մանրեր» պոեմն ստեղծելիս:

Մեզ հուզել է ժողովածուի «Պար» վերնագիրը: Թվում է, թե բանաստեղծին ծանոթ է Կոմիտասի այն դիտարկումը, որ տիեզերքը հավերժական պարի մեջ է, որ այդ տիեզերական պարի մեջ իր տեղն ունի հայ ժողովուրդը: Իհարկե, հասկանալի է մեզ, որ խոսքը սովորական պարի մասին չէ, այլ կյանքի հավերժական օրենքների, հակասությունների առկայության, մահվան ու վերածննդի հոլովման մասին: Երբ ծանոթանում են Ն. Գասպարյանի երգերին, կյանքի կնճռոտ խնդիրների ընթացքն է հուզում, թվում է, տրվող հարցերին դու էլ ես մասնակցում ու սպասում պատասխանների:

Հետաքրքիրն այն է, որ Ն. Գասպարյանն իր կենսաթրթիռ խոհերը պոետական հյուսվածքի մեջ է բերում բնության եւ առարկաների օգնությամբ: Եվ այդ ձեւն արդարացնում է իրեն, քանզի պատկերավորության միջոցները նպաստում են խոսքը դարձնել պատկերավոր, ենթաբնագրային բացահայտումներով: Գրքի առաջին

Եջերուն գետեղված է «Պարող ծառ» շարքը, որը բաղկացած է ութ բանաստեղծությունից: Երգող, տխուր, ուրախ, ճամփեզրի, պարող, չորացած, փողոցային, հեռացող ծառի ընդհանրական պատկերում մեզ ներկայանում է կյանքի բեռն ուսած մարդու պատկերը:

Նախ՝ անդրադառնանք «Երգող ծառ» ստեղծագործությանը: Երգի խորհրդանիշն առաջին հերթին վերաբերում է ստեղծագործող մարդուն: Երգը դժվարին ծնունդ է, նրա ստեղծողի առջեւ ժամանակը լարում է իր մեղկ ընթացքը, եւ երգող ծառի համար ամենաներջանիկ պահն այն է, «երբ արագիլ-թռչունն իր բույնը վստահում է քեզ», իսկ արմատները հանգիստ ննջել չեն կարող, «արմատներին տիրում է անհայտ մի իրարանցում»:

Կյանքի առեղծվածների համապատկերը ներկայացվում է մարդկային բնավորությունների հակասական բարդույթի առկայությամբ: Թեկուզ «անձրեւները քեզ չեն ճանաչում... թռչունները քրքջում են տաք ու մրջյունները լքում են բույնը, անտառի համար դառնում են օտար», միեւնույն է,

Իսկ դու երգում ես,

եւ պտուղներդ լցվում են գինով,

մեղրահյութ է կաթում շիվերիդ,

Նոր թռչուններ են ստվերդ կտցում,

Որ երթը գվարթ տանեն բաժանեն երկրներում տաք:

Ն. Գասպարյան, Պար, եր., 2003, էջ 3

Բայց միեւնույն է, հեղինակի հոգին չի խաղաղվում, քանզի կյանքը նրա համար տոնահանդես չէ, քանզի «մարդը բազմել է» ծառի կատարի հեւքին, «սարը ցկնել է» ծառի վերքերի վրա «եւ ոստայնն իր կախել է ամուր»։ Այդ նշանակում է, որ գիշերվա խնջույքը լինելու է խելառ:

Գրքի բնութագրականում նշված է, որ մարդկանց ու աշխարհը բանաստեղծն ընկալում է ինքնատիպ գեղարվեստական ներշնչանքով, որը վերածվում է նաեւ գեղարվեստական նույնքան ինքնատիպ ոճի «ծավալումների»։ Ահա այս գնահատականը կարծես հուշում է ընթերցողին, որ բանաստեղծի երգերի աշխարհը մտնելիս նկատի առնի պոետական հնարանքները, որ հատուկ են Ն. Գասպարյանին:

Պարզվում է, որ բնության եւ մարդկային կյանքի միջեւ գոյություն ունի անվերժանելի մի կապ, ավելի շատ՝ նմանություն: Ահա

այս նմանության թելադրանքն է, որ Ն. Գասպարյանին ընծայել է «Տխուր ծառ» խոհը: Երգի առաջին տունը հնչում է այսպես.

*Եվ ամեն գարուն
գալիս ճյուղերիդ կրկին շարուն է աշխույժ ծաղիկներ,
որ հետո փութով ժիր մեղունների երամները գան,
հետո էլ անսանձ շողերն արելի
ծառը տանեն ու երկնքից կախեն,
ծաղիկ ու մեղու ունենան խելառ մի գլխապտույտ:*

(Նույն տեղում, էջ 4)

Բայց ի՞նչ է պարզվում: Ծառի այս նվիրումից հետո գարունը անտարբեր է դառնում նրա հանդեպ: Բանաստեղծության վերջին ընդհանրացումը դարձյալ հեղինակի տառապանքն է, որին չես կարող չհամաձայնվել.

*Դե, ծառ իմ,
արի այդքանից հետո դու քեզ հավատա
ու մի անվանիր գարնանը ցնդած
ու թե կարող ես,
երկնքին կապող ճյուղերդ կտրիր՝
ու թե կարող ես, ապրիր այդպես մերկ...*

(Նույն տեղում, էջ 4)

Շարքի երրորդ քայլի վրա բանաստեղծը խոսքը տալիս է ուրախ ծառին: Ծառը ցնծում է, որ իր «պտուղները բաժին հասան խեղճ մուրացկաններին», իսկ տերեւները փռում է այնտեղ, որտեղ քարերը հոշոտում էին ոտքերը ջահել ճանապարհորդի: Իսկ եւ իսկ՝ մարդկային բարության ընդգծում: Հայ ժողովրդական հեքիաթներից, վիպերգերից, դասականների իմաստուն երկերից այսօրվա սերունդներին հասած բարի գործի փառաբանումը բանաստեղծն իր հոգու ձայնն է դարձնում ծառի անունով, ծառի լեզվով: Ահա թե ինչով է հպարտանում ծառը.

*Իմ ստվերի տակ
հոգնած մշակի հրճվանքը ծաղկեց,
եւ թռչունների համար ճոճանակ դարձան շիվերս:
Արմատներիս մեջ
չկար թռչնելու ցանկություն անմիտ,
պարարտ արելի գոլ համբույրներից
Երբեք չդարձա մեղքի հպատակ:*

*Հազար ծառի մեջ ինձ էր վիճակված
քամիների հետ կնքել հաշտություն
եւ գայթակղել գայլերին քաղցած...*

(Նույն տեղում, էջ 5)

Ն. Գասպարյանը չի սքողում կյանքի արատները, ծխածածկույթով չի ծածկում, խարազանում է երախտամոռությունը, քծնանքը, շողոքորթությունը, անբարտավանությունը եւ մարդկային արգահատելի այլ արարքներ: Կյանքում գոյություն ունեցող սոցիալական շերտավորումների բերած չարիքը չի հանդուրժում բանաստեղծը: Ծառն իր բարությունն ու բարիքը շռայլում է արարածների առջեւ, իսկ ճոխ պալատներում վնգստում են եւ լիզում ոտքերը դոյակ մտնողի, քնքշանք ու ծաղիկ մատուցում, միաժամանակ ծառի չորուկ ճյուղերը զուգում հույսերով:

Բարության եւ բարու հիասթափությունից հեռու է քնարական հերոսը: Ի հեճուկս չարերի՝ ծառը փորձում է «հրճվել զույներով բերքի»: Սա հակասությունների մեջ խճճված կյանքի գասպարյանական փիլիսոփայությունն է:

Բանաստեղծի գրիչը փոխվում է վրձնի, իսկ բնությունը՝ ներկայանալի ամբողջ շարքի մեջ: Ճամփեզրի ծառը «տառապալների համար է ստեղծված». հետաքրքիր դիտարկում է այս պատկերը: Բայց ինչո՞ւ ծառի պտուղը չի հասցնում ըմպել արեւի հյութը, չի հասցնում դառնալ փայլփլուն ու վառ: Ստանում ենք պատասխանը՝ համոզիչ ու խոհուն.

*Ճամփորդի միտքը անզոր է նրա բունը զարդարել,
անզոր է բերկրանք տալ արմատներին:*

Երբ մանուկները

խաղալիքների նման կախվում են շիվերից

բարակ,

խակ պտուղներ են

Բարձրանում լույսի մերկ շողերն ի վեր:

(Նույն տեղում, էջ 6)

Դեռեւս 2500 տարի առաջ անտիկ աշխարհի մեծ փիլիսոփա, գրականագիտության հիմնադիր Արիստոտելը նշել է, որ բանաստեղծությունը կյանքի փիլիսոփայությունն է: Խոսելով պոետի եւ պատմաբանի մասին՝ գիտնականն ընդգծել է. «Պոետը պատմաբանից տարբերվում է նրանով, որ մեկը պատմում է իրապես կատարվածի, մյուսը՝ ամեն հնարավորի մասին: Դրա համար էլ պոե-

Վրացի պատմությունից ավելի փիլիսոփայական է եւ խոր...»:
(Արխատոտել, Պոետիկա, Եր., 1955, էջ 163-164):

Այս դրույթը չի հնացել, եւ շահել են այն գրողները, ովքեր աստվածային շնորհ ունենալով հանդերձ, ձգտել են տնտղել կյանքի փիլիսոփայությունը: Կարող ենք նշել, որ այժմ ճշմարտության խորքային դրսեւորումն ուղեկցել է հայոց բազմադարյան պոեզիային: Նարեկացուց մինչ Պ. Սեւակ, Քուչակից մինչեւ Հ. Սահյան: Եվ երիցս ճիշտ էր ակադեմիկոս Ս. Սարինյանը, երբ ընդգծում է. «Գրականության փիլիսոփայությունը աշխարհընկալման ուրույն փոփոխածեւոյթն է, ուր հասկացությունների, իդեաների տրամաբանական ապացույցներն անջատվում են գրողից եւ վերաճում գրական երկի կամ հերոսի կենսափիլիսոփայության»: (Հայ գրականության երկու դարը, Եր., 2004, էջ):

Ծանոթանալով Ն. Գասպարյանի բանաստեղծություններին՝ նկատում ես, որ նրա տողերը քնարական հերոսի կենսափիլիսոփայության արտահայտություն են: Դիմենք «Պարող ծառ» բանաստեղծությանը: Հենց սկզբից պարող ծառ-քնարական հերոսը ներկայացնում է կյանքի հակադիր ծփանքները՝ մի կողմից տխուր ծառերն են, մյուս կողմում անապատի մեջ պարելու ցանկություն արտահայտած ծառը: Մեջտեղ են բերվում նաեւ բոլոր պարող ծառերը, եւ նրանց դեմ է ուղղվում նախատինքը՝ թռչուններին նստելու տեղ է պետք, ճնճղուկները մեղք են: Իսկ ինչո՞ւ ծառը երագում է պարել անապատում՝ քանզի «այնտեղ ճնճղուկներ չկան, իսկ օձերը վաղուց են կորցրել փարթան թելերը, եւ քամին սովոր է մատուցել պարի լավագույն մեղեդին»: Ծառը նման պահերին անգամ մենակության մեջ չի մոռանում իր առաքելության նպատակը: «Ես կպարենմ մենակ, բոլոր տխուր ու բոլոր պարող ծառերից հեռու»,- ասում է ծառը: Նա պատրաստ է սլացիկ շարժումներով սիրաշահել քամիներին, արմատներին նվիրել անծանոթ զգացումներ, որպեսզի անապատում բոլորը զան «անապատային պարը դիտելու»: Վերջապես ինքը հանգիստ կառնի, երբ իր թելերին կտեսնեն գոնե մի թռչուն:

Շարքի մեջ բանաստեղծը չի մոռացել եւ՝ չորացած, եւ՝ փողոցային ծառերին: Չորացած ծառը ինքնաբնութագրման նպատակով զնահատում է շրջապատը: Չորացած ծառին տանում են անտառի, կայտառ ծաղիկների, մեղուների միջով, որպեսզի իր «ծելերը լինեն ավելի խղճուկ ու տկար», որպեսզի «ծաղիկ ու խոտ

Մանտարբեր հաշտվեն» իր կորստի հետ, եւ նրան «համարեն ժամանակից դուրս»: Այս պատկերի մեջ ներկայացված են սերունդների փոխհարաբերության խնդիրը, անյցալի ու ներկայի ներքին կապը, սերնդափոխության բարոյական համակարգի փոփոխությունը: Բանաստեղծը ծառի շուրթերով ընդգծում է.

Աշխարհում ուրիշ ոչինչ չի փոխվում,

Ծեր սարդն էլի նախկին եռանդով հետեւում է իր զոհի աղերսին,

գառանյալ գայլը պալատի խորքում

կրկին ողբում է բոլորից թաքուն,

անպատիժ քամին ժիր մեղուներին

հայտարարում է մի նոր պատերազմ:

Ամեն օր մեռնող ճնճողուկների ահ կա երկնքում:

Ն. Գասպարյան, Պար, եր., 2003, էջ 2

Կյանքի առեղծվածները բազում են. կա եւ՛ երգող ծառ, եւ՛ պարող, եւ՛ չորացած, կա եւ փողոցային ծառ, որի աչքերի առջեւ «այգիները ոտնահարում են ժամանակը»: Փողոցային ծառը շեշտում է, որ ինքն «այնտեղ է փրկում ցանկությունները»: Պարզվում է, որ փողոցը այդ ծառի սիրուհին է: Իսկ փողոցային ծառերը, դեն նետելով իրենց բոլոր հանդերձները, խոստովանում են.

Մենք ապրում ենք ազատ

եւ չենք դատում իրար,

երբ մեզանից մեկին զմայլում են

ուրիշ տարածքներ ու խաչեր,

երբ մեզանից մեկին

տիրանում են օտար թռչուններ ու կրքեր,

երբ մեզանից մեկին

մատուցում են եւ՛ զահ, եւ՛ ընծաներ, եւ՛ փառք

կամ խառնում են տռփոտ զավակների երթին...

Նույն տեղում, էջ 9

Ահա թե կյանքն ինչ անակնկալներ է ներկայացնում:

Շարքն ավարտվում է «Յեռացող ծառ» բանաստեղծությամբ: Այստեղ խոսում է, ասես, բազում տառապանք ու վերելք տեսած բանական մարդը: Կյանքի խաչմերուկներից իմաստուն ծառ-քնարական հերոսի համար բազում շնորհներ պետք չեն մեռնելու համար, որովհետեւ հարմար ժամանակն է բացակայում, որովհետեւ

Մտիեզերքում նույնիսկ հոգնել են հոգիները անհերթ ընդունելուց: Ցավը մեռնելը չէ, ցավը անհետք ապրելն է: Այս համապատկերի վրա տենչում է պոետի խորհուրդը.

*Մեռնելու համար մեզ հարկավոր չեն բազում շնորհներ,
 Թե հետքեր ունես լայնախոհ ու պինդ,
 վեր կաց ու գնա,
 Թե ունես ապրած թելուզեւ մի օր,
 վեր կաց ու գնա,
 Թե հանդիպել ես մի օր Աստծուն,
 վեր կաց ու գնա,
 Վեր կաց ու գնա եւ ետ մի նայիր
 Եվ դա համարիր երկնային պարզեւ:*

(Նույն տեղում, էջ 10)

Հայ հարուստ պոեզիայում կյանքի եւ մահվան փիլիսոփայությունը արծարծված է մեր դասականների ստեղծագործություններում՝ Գ. Նարեկացուց մինչեւ Սայաթ-Նովա, Մ. Նալբանդյանից մինչեւ Պ. Սեւակ: Լավ գործի անմահության գաղափարն է ընկած Հովհ. Թումանյանի մի շարք երկերում ու պոեմներում, Ավ. Իսահակյանի խոհական բանաստեղծություններում: Հիանալի օրինակ է Պ. Դուրյանի «Իմ մահը» հյուսվածքը.

*Եթե դժգույն մահու հրեշտակ
 Անհուն ժպտով մ'իջնե իմ դեմ...
 Շոգիանան ցավս ու հոգիս,
 Գիտցե՛ք, որ դեռ կենդանի եմ:
 Իսկ աննշան եթե մընա
 Երկրի մեկ խորշն հողակույտն իմ,
 Եվ հիշատակս ալ թառամի,
 Ահ, այն ատեն ես կը մեռնի՛մ...*

**Պ. Դուրյան, Երկերի ժողովածու՝ երկու հատորով,
 հ. 1, Եր., 1951, էջ 67**

Վերընթերցելով նման բանաստեղծությունները տարբեր սերունդների աշխարհընկալմամբ՝ կրկին հիշում ես Հովհ. Թումանյանի խորհուրդը ինչ-ի եւ ինչպես-ի վերաբերյալ: Մեծ Լոռեցու եզրակացությունը՝ «ոչ թե ինչ-ը, այլ ինչպես-ը» այս դեպքում եւս ապացուցում է ճշմարիտ լինելը: Կյանքի եւ մահվան թեման արտացոլված է գեղարվեստական տարբեր միջոցներով: Ավելորդ չենք համարում բերել նաեւ անվանի բանաստեղծ Գ. Սարյանի երգը.

Մի՛ սարսափիր մահից դու,
 Իմ բարեկամ, իմ ընկեր,
 Մահը կորուստ չէ՛ մարդու,
 Կործանում չէ՛ դեռ:
 Սարսափիր դու՝ երբ գիտես՝
 Ապրում ես ու կաս,
 Ու քո կյանքում մեր կյանքին
 Բան չունես, որ տաս:

**Գ. Սարյան, Երկերի ժողովածու, երկու հատորով,
 հ. 1, եր., 1989, էջ 3**

Բոլոր դեպքերում մնան բանաստեղծությունների մեջ ընդգծվում է հայ ժողովրդի ստեղծարար եւ շինարար ոգին՝ կյանքն անմահ գործերով զարդարելու միտումով:

Ն. Գասպարյանի «Ուրախ թաղում» շարքը եւս խոհափիլիսոփայական մտորումների արդյունք է: Բանաստեղծը կյանքը ճանաչում է խորապես եւ որ ամենակարեւորն է, արտացոլում է պատկերային թարմ մեկնաբանումներով: 35 հյուսվածքներից բաղկացած շարքն ապացուցում է Ն. Գասպարյանի բեղուն գրիչն ու աշխարհը եւ մարդուն լուսավոր ու երջանիկ տեսնելու ակնկալիքը:

* * *

Պոեզիան անընդհատ զարգացման ընթացք է, եւ այն արարում են սերունդները, իրենց ժառանգությունը կտակում նորերին՝ երբեք չհավակնելով, որ իրենք հավերժական դաս ու ազդակ են հանդիսանալու գալիքի երգասանների համար: Այդ վերաբերմունքը բոլոր մեծ երախատվորների անունից արտահայտել է Չարենցն իր «Յոթը խորհուրդ գալիքի երգասաններին» քերթվածքում ընդգծելով.

*Եվ ասում եմ ահա - ձեզ, որ պիտի երգեք՝
 Կարդալով մատյանն այս խորախորհուրդ,-
 խորհուրդ չի ընդունում ապագայի երգը,-
 Եվ ա՛յս է իմ խորհուրդը յոթերորդ...*

Այժմ՝ Ն. Գասպարյանի խոհական երգերի մասին: Ընդհանրապես, Նորելին հատուկ է խոհականությունը, ասել է թե՛՝ երելույթները նկարագրում է մարսելուց, ծանրութեթեւ անելուց հետո: Ասածի խոսուն վկայություն է «Եվ գրույցը, որը պիտի տեղի ունենար

«Խարյուր տարի առաջ» շարքը, որտեղ անցյալի եւ ներկայի գնահատականը տրված է դժգոհությամբ՝ չարածի համար եւ արարու-մի երազանքով՝ հայավայել.

*Ամեն լուսայգի թվում է՝ ամեն ինչ սկսում,
եւ իմ խոհերի բերրի դաշտերում տիրում է մի պարզ,
գարնանային օր,
եւ տառապանքից ծաքծքած հողից ելնում են
ցորյան նրբամաշկ ծիլեր
եւ ընդերքներից մտածողության
ջրվեժում է մի զովաշունչ ալիք...*

(էջ 59)

«Մի քանի սոնետ» շարքը եւս խոհերի փունջ է, որտեղ երազը վառ է, գործը՝ շոյող, զգացումը՝ թեւավորող, ընկերությունը՝ ազ-նիվ, մահը՝ երանելի.

*Ես չեմ փորձում թաքցնել տառապանքս անգութ,
բայց Չարենցի նման երազում եմ մեկ-մեկ.
ունենայի զոնե մի բազմամարդ թաղում...*

(էջ 64)

Խոհական երգերի մեջ Նորեկը կամ կոնկրետից է գնում դեպի ընդ-հանուրը, կամ՝ հակառակը: Ամեն դեպքում ընդգծվում է երգերի հասա-րակական արժեքը՝ անձնականի եւ անանձնականի միահյուսվածու-թյամբ, երկրի ու ժողովրդի հանդեպ միշտ պարտքի զգացումով.

*Եվ երանի տամ ինձ, եւ երանի տամ ինձ,
ինձ համարեմ հսկա, ամենազոր ու մեծ,
ասեմ՝ դու ես տանում քո երկիրը ուսած,
դու ես նրա համար տառապողը միակ:*

(էջ 72)

Նորեկի բանաստեղծական խառնվածքին հատուկ է հունորը: Այդ են վկայում նրա «Վիճակս», «Մոլորություն...», «Վերջին օրերը կամ մի խենթություն...» եւ այլ ստեղծագործություններ, որտեղ պոետական խոսքի տարբեր հնչերանգներով պատկերում է կյան-քի առեղծվածները, անհատի դերը դրանց հյուսվածքներում: Օրի-նակ՝

*Ես արդեն երկնքից գլորվում եմ ցած՝
հավաքած աստղերի վերջին փշրանքները...
իսկ սիրտս անտարբեր քրքջում է...*

*Ես ծառերի բոլոր ճյուղերից գլորվում եմ ցած՝
հավաքած վերջին տերեւները...
Եւ մարմինս անտարբեր քրքջում է...*

(էջ 111)

Նույնիսկ բանաստեղծությունների վերնագրերն են ծածանում Նորեկի հումորը: Այսպես, «Դիլիջան, հանգստյան տուն, որտեղ տասը օր տառապեց բանաստեղծ Նորեկ Գասպարյանը», «Փոքրիկ մի տնակ, որտեղ տաս տարի ապրել է բանաստեղծ Նորեկ Գասպարյանը կամ մտորումներ, որ կարող են ձեզ չհետաքրքրել», «Փոքրիկ մի տնակ, որտեղ ընդամենը երկու օր ապրել է բանաստեղծ Նորեկ Գասպարյանը կամ խիստ անձնական մտորումներ» եւ այլն: Նրանցում եւս նույն խորհող Նորեկն է՝ կենսասեր, երազող, բարեսիրտ:

Արտահայտչական մի նոր ձեւ է «Ուրախ թաղում» երգերի շարքը: «Ուրախ թաղումի» պատրանքը կյանքի հանդեպ ունեցած վերաբերմունքի խոհերի պատկերն է, անցողիկի ու մնայունի համեմատության յուրովի բացահայտում:

*Եվ մենք վազում ենք՝ աներկյուղ, ու մերկ պտուղը շողում է,
վազում ենք, տեսնենք, հոտոտենք, խծնենք - պտուղը շողում է,
ճախրում է ծառը, ծառը ճախրում է, ճախրում է ծառը,
մեռնելուց առաջ կյանքը ցնորք է - պտուղը շողում է...*

(էջ 137)

Ուշագրավ ելույթ է նաեւ Նորեկի ստեղծած «Մի քանի գծանկար» շարքը, որի բնաբանը եւս հուշում է, որ ընթերցողը գործ կունենա հումորի հետ, «Մի քանի գծանկար, որոնց տակ հեղինակը չի կամեցել ստորագրել» խոստովանությունը, հիրավի, ծիծաղ է հարուցում: Ծանոթանալով շարժին՝ նկատում ես, որ բանաստեղծի խոհերը դարձյալ սերտորեն առնչված են կյանքին՝ բնապատկերների միջոցով: Այսպես, «Գարնան օրեր», «Պոետը», «Մի ձուկ», «Գիշերը՝ ցուլի մռնչյուն» եւ այլ գործերում խոսում են բանաստեղծի կենսահայեցողությունն ու աշխարհընկալումը գրականության գլխավոր պրոբլեմի՝ մարդու մտորումների, ներաշխարհի մասին՝ միանգամայն յուրատիպ ձեռագրով: Նշեմ, որ Նորեկը ներկայացնում է մարդուն՝ ռեալ գույներով, նաեւ տեսիլքային հյուսվածքի մեջ: Նույնիսկ անորոշության մեջ ներկայացվում է մարդն ընդունելի եւ բնական երազանքի ու զգացումների շրջանակներում: Այսպես.

Մարդ է, չգիտես կանգնա՞ծ է, կախվա՞ծ է,
քայլո՞ւմ է անտարբեր,
գուցե անշա՞րժ է, անխոս կամ ծիծաղում է...
մարդ է... կարող է եւ հարբած է, եւ պարում է
ծառերի կատարներին...
Շորերին էլ ծաղկեփնջեր են.
վարդեր, մեխակներ, քրիզանթեմ դաշտային,
չգիտես տանում է բաժանո՞ւմ, թե զարդարում է իր
արդեն ծերացող օրը...
Մարդ է... կարող է եւ չգիտի, կարող է հենց այնպես,
միամիտ-միամիտ տանում է...

(էջ 172)

Դժվար չէ նկատել, որ անորոշության մեջ ներկայացվում են մարդկային ապրումները: Ասել է թե՛ Նորեկը գնում է դեպի մարդեր-գույքան ոլորտներ:

Խոհական երանգների կոնրետ ու տեսիլքային մի հյուսվածք է «Ընտրություն» երկը: Մարդն անընդհատ ընտրում է ծաղիկ, բանաստեղծություն, հանդերձ, առաջնորդ, կին, խնձոր, մստարան՝ զբոսայգում, նաեւ «թաղվելու տեղ՝ գերեզմանատանը խիստ բնակեցված»... Բանաստեղծը, սակայն, այս համապատկերի վրա շոշափում է նաեւ մարդուն ընտրելու փիլիսոփայությունը, որ Նորեկի հաջող գտնումներից է.

Իսկ մեզ առանց ընտրության տանում են
ոսկեփետուր թռչունները՝
հեռավոր երկրներում, ծառերի կատարներին եւ
ծաղիկների մեջ վայելելու...

(էջ 173)

Ն. Գասպարյանի խոհական ստեղագործությունները խոսում են հարուստ կենսափորձի տեր, ինքնատիպ ձեռագիր ունեցող բանաստեղծի մասին, որ ունենալու է իր ընթերցողն ու ուսումնասիրողը:

Ն. ԳԱՍՊԱՐՅԱՆԸ «Պար» ժողովածուի խորհուրդն ընտրել է **սիրային երգերի** համանուն շարքից: Սակայն հենց սկզբից ասեմ, որ այն կարդացի, նորից վերընթերցեցի, խորհեցի, հետո համեմատեցի մեր դասական ու նորագույն շրջանի սիրային երգերի հետ

Եւ համոզվեցի, որ բանաստեղծը ծօղել է եւ՝ շարունակել դասականներին, եւ՝ չնմանվել նրանց: Եվ հիրավի, Ն. Գասպարյանը չի նմանվում նրանց եւ՝ սիրո գնահատումների, եւ՝ այդ զգացումները պատկերելու առումով: Վերջապես եկա մի եզրակացության, որ Ն. Գասպարյանը ինչ-ի եւ ինչպես-ի հարցում որքան էլ ինքնատիպ, միեւնույն է, սիրո զգացումի մեջ Ադամի թոռն է, գուցե Ադամի թոռն իր հայրն է, որից ծնվել է պոետը, իսկ ինքը եւ՝ հոր զավակն է, եւ՝ Ադամի ծոռը: Ինչպես էլ մոտենալու լինի սիրո էակին, բանաստեղծը կնամենծար է, սիրապաշտ ու սիրերգակ:

Ընդհանրապես, նա, ով առաջին անգամ կարդա Ն. Գասպարյանին, գուցե տարակուսի, այսինքն՝ մտորի՝ ինչո՞ւ բանաստեղծը կեռնանների է դիմում, դարաբաղցին կասի՝ «ստեղավ-ընդեղավ ա ընգում»: Բայց դա՝ առաջին պահից: Յետո, երբ անդրադառնում ես նրա երգերին, համոզվում ես, որ նա նուրբ սիրտ ունի, ազնիվ հոգի, մաքրություն է տենչում նույնիսկ այն պահերին, երբ դիմում է գռեհկաբանության, դարձյալ կապույտի-ամբիժի երկրպագուն է: Ես այսպես ընկալեցի Ն. Գասպարյանի սիրային երգերը: «Պար» շարքի մորմոքը կոչվում է «Սկիզբ», այն սկսվում է այսպես. «Թաքցնելու բան չկա, ես սիրում եմ գրել իմ մասին, եւ դա ինձ ուղղակի հաճույք է պատճառում»: Որպես ընթերցող՝ կասեի, որ աշխարհի բոլոր պոետներն ընթերցողների հետ խոսել են իրենց ես-ի անունից, բայց այդ ես-ը եղել է նրա, նրանց, բոլորի անունից: Այնպես որ, մոտեցումը ճիշտ է, ուստի, ողջունում եմ պոետի այդ խոստովանությունը: «Սկիզբ» մենախոսությունն էլ ավարտվում է այսպես. «Այս շարքը նույնպես եսասիրական մղումներից ու մտածումից ծնված երեւոյթ է, այսինքն՝ ամեն ինչ կրկին իմ մասին է»: Այստեղ ես ողջունում եմ բանաստեղծին եւ ապա քայլում դեպի նրա շարքը: Շարքը բաղկացած է 20 երգից, որի քնարական հերոսները բանաստեղծը եւ Մարիամն են: Ամբողջությամբ երկխոսություն է շարքը, որտեղ ավելի շատ հնչում է պոետի խոսքը: Պոետական այդ խոսքը իսկ եւ իսկ այսօրվա մասին է, աղջիկների առօրյա պահվածքի, արտաքին տեսքի մասին: Այլապես նա չի «բողոքի» Մարիամին. «Այս ինչ քրքիջ է, Մարիամ, կանանց շատերը ցնդել են, մեկն էլ որպես թարմություն, վերցրել ու հոգին փչել է»: Դեռ ավելին, քնարական հերոսը կարծես չի տանում աղջիկների մարմնական երեւացող բարենասնությունները, ուստի ընդգծում է. «Այդ

Ե՞րբ են տեսել ինձ այսքան հարբած»: Պարզվում է, որ պոետի «ամբաստանության վրա ժպտում է Մարիամը, իսկ բանաստեղծը մեղանչում է. «Եվ դու ասա ինձ, Մարիամ, որ սա նորընծա մի սկիզբ է»: Շարքի երկրորդ երգում Մարիամն իջնում է երկնքից, պոետը լիզում է փոշոտ քղանցքը, այդ համարում ընծա, պաշուն «մատները բարակ, ստինքը մոռանալով կծում», եւ խորհում տխրե՞լ, թե ցնծալ: Եվ ապա բանաստեղծն իրեն ներկայացնում է որպես հեթանոս մի հայ՝ ապրումների ու խոսքի մեջ անկաշկանդ եւ ազատ.

*Ասեմ, մինչեւ քեզ, Մարիամ, ինձ չի խժռել կին էակը,
Վայրի ապրել եմ մեռակ, որպես անտեղյակ մի ցուլիկ,
Բերրի դաշտ եմ որոնել, բուրմունքը պրզերիս օղակ,
Մաշկիս ծաղիկներ գույն-գույն եւ էգի հոտը անցողիկ:*

**Ն. Գասպարյան,
Պար, եր., 2003, էջ 114**

Քնարական հերոսը մեր օրերի մարդ է, նա տեղի է տալիս, ընդունում է ժամանակի եւ՝ հազուստը, եւ՝ հայացքը, ջերմանում նրա շնչով եւ խոստովանում.

*Հիմա ամեն ինչ նոր է, ծայնը, որ այսքան փափուկ է,
եւ ցեղիս կանչը զվարթ՝ չի եղել ինձ այսքան մոտիկ,
Խոժոռ բառաչը երբեք անփորձ ռունգերս չի կիզել,
Առաստաղի փոխվել իմ դեմ երկինքը ծաղկե ու անտիկ:*

(Նույն տեղում, էջ 114)

Շարքում երգից երգ քնարական հերոսը ճամփա է անցնում՝ չմոռանալով նախօրոք տեսածը եւ լսածը, զգացածը եւ ասածը: Երկրորդ երգում կասկածի աճյունը հանձնելով մեկին՝ տեսնում է, որ «կանայք մերկ-մերկ պարում են, պաճուճում մահիճը պարապ եւ իրենց ձեռքերը նրանց «ուսերին, կրծքերին շարում են»: Քնարական հերոսը ցնդում է նրանց բույրից, ասես վաղուց ծանոթ են իրեն նրանց «ծայնը, ոտքերը, խաղը, ծանոթ է անգամ հուզումը», բայց չի հաշտվում, որ «խառնվել են, մեկ են պոռնիկը, կատուն եւ շունը»: Նա գոհ է, որ Մարիամը եկել է, եւ ինքն իրեն համարում է արքա: Հետաքրքիրն այն է, որ նման ապրումների մեջ սիրո վառող համապատկերին փիլիսոփայում է քնարական հերոսը՝ ամեն ինչ համարելով սուտ: Ապա չորրորդ երգում կյանքը համարվում է եւ կատակ, «վաղը՝ տեսիլ հեղձուկ, հետոն՝ թուլի խաղալիք»: Վայել-

քը միայն «այս պարզ ստեղծված ներկան է»:

Ձարմանալի խոհերի հակասական մի դաշտ է Ն. Գասպարյանի սիրային շարքը: Ճշմարտությունը պահանջում է ասել, որ այդ հակասական զգացումները համապատասխանում են իրականությանը: Ասել է թե՛ Ն. Գասպարյանի սիրային երգերը կյանքի բազմերանգ ծփանքների արտահայտություն են, որոնցում կա եւ՛ արդի տրամադրություն, եւ՛ արդի հոգեբանություն, մյուս կողմից՝ սիրո կենսաթրթիռ ծարավ:

*Հիմա կարող եմ կանանց համոզել, որ ես ոչինչ եմ,
հիվանդ, մոլագար մի այր, որին բոլորը կերան,
որը մի ամբողջ բանակ կարող է զարկել ու փշրել,
ասել թեկուզեւ հարբած՝ ես քեզ սիրում եմ, Մարիամ:*

(Նույն տեղում, էջ 116)

Ցեղի ու անհատի փոխանցվող արյան երանգներ են Ն. Գասպարյանի սիրային երգերը: Մարիամի անբիծ եւ հավերժող սիրո խորհրդանիշի փոխարկված սիրո զգացումը այստեղ ոգեւորում է պոետին՝ բացականչելու. «Եվ մի մռնչոց գինի կավետի մոր սկիզբը ցեղիս: Այդ ես եմ, ես եմ, Մարիամ, քո որձը, ցուլը եւ արուն»: Նման արտահայտությունների պատճառով է, որ նշում են Ն. Գասպարյանի օգտագործած գռեհկաբանությունները: Բայց ինչպե՞ս վարվել, երբ նման բառ-պատկերներ այսօր ստեղծվում են եւ՛ արտասահմանյան, եւ՛ հայ գրականության մեջ: Սեզ մոտ՝ Գուրգեն Խանջյան, Վիլեն Գրիգորյան: Այսօր անգամ ես չեմ հաշտվում գռեհկաբանությունների օգտագործման հետ, իսկ վաղվա ընթերցողի փոխարեն չեմ կարող կարծիք հայտնել: Եվ վերջապես՝ կարելորն այն է, որ բանաստեղծը պոեզիա է բերում սիրո իր զգացումը, իր խոսքը:

«Պար» շարքն ուղեկցվում է արծակ մտորումների հյուսվածքով: Դրանցում առաջին հերթին զգացվում է բանաստեղծի վերաբերմունքը պոեզիայի հանդեպ, ինչքան ժխտողական, այնքան էլ սիրալիկ, եւ ապա ընդգծվում է հավատը իր իսկ տաղանդի հանդեպ: Դա ոչ թե մեծամտություն է, այլ արարելու իր շնորհքի գիտակցում, որ բնական է եւ ընդունված համաշխարհային գրականության մեջ: Ինչքան էլ Ն. Գասպարյանը հայիոյի բանաստեղծությունը, միեւնույն է, առանց նրա ապրել չի կարող: Այդ նշանակում է, որ ժխտելով, կրկին զնում է այդ երգ կոչեցյալի գիրկը: Դիմենք բանաստեղծություններին: Ութերորդ երգում քնարական հերոսը

Մարիամի լինելության դաշտում իր խոհը համարում է ծաղիկ, արյունը՝ զվարթ, որ «աշխարհում այս գորշ ու փակ» միայն ինքն է լսելու Մարիամի ծայնը, խաղաղ շշուկը. «Ես եմ, այդ ես եմ, ցուլիկ, քո երգը եւ կի՛նը միակ»: Դեռ ավելի՛ն Մարիամը բացականչելու է.

*Ես եմ, այդ ես եմ, ցուլիկ, քո երգը եւ կի՛նը միակ,
Ահա, եկել եմ անդարձ, մոռացած վարդերը ցեղիս,
թողած սեթեւեթ ձեւեր, որոմներ հոգիներում պերճ,
ի՛նձ կեր, ի՛նձ խմիր, ծարավ սարերում, դաշտերում դեղին:*

(Նույն տեղում, էջ 119)

Չնչուն է պատասխանը Մարիամի սիրած էակի, որի ձգտումը սիրո օրհնյալ տեսակի փոփոխությունն է, արյունը անարատ պահելը, փորձությունների չենթարկվելը, պտղելու շնորհ պարզելը, որը գոյի պատկերն է: Ահա սիրո երազանքն ու ավիշն է, որ հուզում է քնարական հերոսին:

Դարը փոխվում է, սերունդները հաջորդում են միմյանց, նոր բարդություններ են աշխարհ գալիս, մեկ է՝ սերը հավերժ է, եւ բանաստեղծը ողջունում է Մարիամին:

**ՀՐԱՆՑ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԽՈՂԵՐԸ
(Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ-50)**

Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ *հայրենապատումն* ազատասիրության խոհե-
րով է պարուրված: Նրա զգացումներն ազատ բանաստեղծության
սահմաններում դառնում են առինքնող ու ջերմացնող հույզեր.

*Եթե հողի մեջ չես տեսնում
Վճիտ արտացոլանքդ, վրան՝
Երազիդ հետքերը կապույտ,
Ուրեմն՝ սառն են այդ հողի հանդեպ
հոգիդ, մարմինդ, կարոտներիդ չուն,
Ուրեմն՝ մի օր արհամարհել ես
Քո պարզ ինքնության խոյանքը շիտակ
եւ դարձել պոռնիկ պատրանքին ընկեր,
Հողը՝ հայելի, որ չի փշրվում,
Եթե հարվածես մատնության քարով,
այլ փշրվում ես ինքդ,
եւ բեկոր չի մնում քեզնից:*

Հ. Ալեքսանյան, Կենսադաշտ, Եր., 1989, էջ 7

Հ. Ալեքսանյանի հայրենասիրական երգերում բազմազան
երանգներով հնչում է ազատության եւ անկախության կոչը: Մերթ
դիմում է Անահիտ դիցուհուն, որպեսզի ելնի եւ «կապույտ աչքե-
րով» տեսնի, «թե ցավի ինչ նոր փոթորիկ պայթեց ցեղի հոգնած գլ-
խին», մերթ կոչ է անում «Մոռացության անձավներում լինել, իմա-
նալ ժողովրդի ցավը եւ տալ նրան զորացումի նոր հնարներ»:

Չետաքրքիրն այն է, որ Հ. Ալեքսանյանը անձնավորում է անց-
յալը, Անահիտ դիցուհու երթի մեջ տեսնում հայ ժողովրդի վերած-
նության եւ հաստատման ուժը, ուստի հորդորում է, որ բեղունու-
թյան վառ կրակով ճամփա ընկնի «երկրով հայոց» եւ իր «հրաշք
խոսքն» ասի.

*Հայ հարսներին տուր շոյանքն այն,
որ երկունքեն նրանք անվերջ
ու կորստյան ողբերի մեջ
չսպառվեն ու լինեն արի:
Հայ այրերին տուր կորովն հաղթ,*

որ չճկվեն ոչ մի կռվում
բազուկները նրանց արդար,
եւ հայրենի տունը սիրեն
իրենց անձից խիստ առավել:
Հայոց հողին տուր զարթոնքն այն,
որ բաժանված կտորները
Նորից իրար հետ է ձուլում...

(Նույն տեղում, էջ 8)

Հայ ժողովրդի ճակատագիրն իր մեջ ներառել է հավերժական մաքառման մի ոգի, որ միայն իրեն է հատուկ: Այստեղից էլ՝ այն վճռականությունը, որ նկատվում է նաեւ մեր երգերի մեջ: Տեղին է նշված Հ. Ալեքսանյանի երգում. «Տագնապի ոգին ասես մեր բախտի լուսապսակն է», որից հետո էլ ընդգծված է.

Եվ ամեն մեկն էլ մեզնից տագնապ է,
Երբեւէ չեղած ու անկրկնելի,
Օրերի փեշից բռնած գնում ենք
մեր կենսադաշտը գտնելու հույսով:

(Նույն տեղում, էջ 21)

Հ. Ալեքսանյանը, գտնում է, որ կենսադաշտը գտնելու համար պետք է հավատալ, որ «Արդարությունը ստվեր չի գցում ոչ հողի վրա, ոչ ձգտումների, ոգի-թռչունի պես նա թեւածում է իրականության ծփանքից վերեւ»: Բայց երազանքը դեռեւս իրականություն չէ: «Չէ՞ որ գողունի սահման է քաշվել «արդարության ու այս կյանքի միջեւ»: Ի՞նչ է մնում անել: Հ. Ալեքսանյանի քնարական հերոսը մատնացույց է անում ճանապարհը.

Անհոգ մի նայեք բռնապետներին,
Նրանց ձեռքերը եւ ձեզ կհասնեն,
Թող լինի թեկուզ բռնությամբ հայտնի,
Կալանք բոլոր բռնապետներին:

(Նույն տեղում, էջ 23)

Հայրենասիրության եւ ազատասիրության պոետական հաջողված օրինակ է «Արցախի ամառը, 1989» շարքը: Նրա քնարական հերոսը տեսնում է «նոր աստիճանի վրա» թրթռացող «մաքառման սլաքը»: Այստեղ ուրախությունը նվաճվում է դժվարությամբ: Գորբաչովյան շրջանն է, Արցախը եռում է: Գնալով մթնոլորտը ծանրանում է եւ դառնում դաժան: Ինչպես գրում է բանաստեղծը՝

Հրե հոսանքներով
շոգր ալեբախվում է տեղանքի վրա,
Խեղելով շարժման նրբագեղությունը:
Բնակավայրերում գայրույթն արքա է,
Սարդկանց միությունը ամրապնդող:

7. Ալեքսանյան, Անկման սիմետրիա,,Եր., 1996, էջ 4

Եվ ընթուստացած ժողովուրդը քայլեց մաքառման ճանապարհով: Ահա այս ճանապարհի փառաբանումով էլ Հ. Ալեքսանյանը հյուսում է իր հայրենապատումը՝ հաստատելով, որ օջախը պետք է պաշտպանել, այլապես կխլեն քեզնից:

* * *

Հ. Ալեքսանյանի հայրենապատումը գնալով նոր երանգներ էր ստանում թե՛ գաղափարական եւ թե՛ գեղարվեստական առումներով: Հրանտը լինելով հայ ժամանակակից պոեզիայի ավանգարդ թեւի ներկայացուցիչներից՝ միշտ ձգտել է գտել է բանաստեղծական խոսքի ու կառույցի նոր ձեւեր, որոնք ընդգծված երեւում են նրա «Բանի երկրի բարիտոնը» գրքում (2007): Բնաբանի փոխարեն բերված «Դեմքս սեւահարվեց...» տողով սկսվող բանաստեղծության մեջ Հրանտն իրեն ներկայացնում է «Բանի սարահարթում՝ որպես դարաբաղյան ձի» ինքնեղացած «Երկրի անթարգման բլուրներին» (էջ 7): Այստեղ ես ընդգծում եմ «ինքնեղացել» բառը, որը բանաստեղծի ինքնաճանաչման ու ինքնահաստատման խոստովանություն է: Այդպես էլ կա: Հրանտը երգչի ինքնեղացումը տեսնում է «Երկրի աղը» ճաշակելու եւ «օրն ըմպելու» մեջ, այս դեպքում միայն արվեստագետը կարող է ընծա դառնալ «հազարան հավքին», արժանանալ Աստծո օրհնանքին ու տեսնել «երկնի կապույտ մագաղաթի վրա» պատճենահանված հոգին՝ մարմնացած:

Հ. Ալեքսանյանն իրավունք ունի իրեն ներկայացնել որպես նպատակին հասած քերթող, որովհետեւ էն գլխից, ինչպես ինքն է ասում՝ «աքսորյալ եղա Բանի ճամբարներում»: Նման դեպքում է միայն բանաստեղծն ապացուցում, որ ինքն Աստծո քարտուղարն ու ժողովրդի պատգամախոսն է:

Անկախության շրջանի հայ պոեզիայում ստեղծված լավագույն ու ինքնատիպ երգեր քիչ չեն ստեղծվել, որին իրենց ներդրումն են ունեցել Ա. Հարությունյանը, Հ. Էդոյանը, Հ. Գրիգորյանը, Վ. Հակոբյանը, Հ. Սարուխանը, Է. Միլիտոնյանը եւ այլ ճանաչված բանաս-

տեղծներ: Զ. Ալեքսանյանի «Օրորոցային Հայոց աշխարհի համար» քնարական պոեմը գալիս է լրացնելու հայապատումի բարձրարվեստ գործերի շարքը՝ միանգամայն նոր արտահայտչամիջոցներով, հոգեբանական խորքային բանաստեղծություններով:

Տասնմեկ մասից բաղկացած պոեմի յուրաքանչյուր հատված միջնորդված է արձակ բանաստեղծությամբ: Դիմելով Հայոց աշխարհին՝ բանաստեղծը որդիական իր սերն արտահայտում է՝ հարազատ մնալով հայրենի երկրի եւ հարազատ ժողովրդի դժվարին ճակատագրին՝ հերոսական ու ողբերգական, թախծոտ ու լուսավոր, տրտում ու կենսահաստատ: Հայոց հայրենապատումի մեջ մեր նոր բանաստեղծները մեծամասամբ երկրին դիմում են ոգեւորության բռնկումով, ավելի շատ ներբողական հնչողությամբ: Հրանտն այստեղ միանգամայն խոսքի նոր ելակետեր ու գաղափարահուզական նոր շերտեր է գտել՝ արտահայտելու օրորոցային երգերին հատուկ իր մաղթանքները՝ մերթ ծնողական տազնապած սիրով, մերթ էլ որդիական սրտացավությամբ ու խրախուսանքով:

Պոեմ-օրորոցայինում բանաստեղծը դիմել է գեղարվեստական խոսքի տարբեր միջոցների: Նրանում տեղին ու դիպուկ են օգտագործված համեմատությունը, մակդիրը, չափազանցությունը, նվազաբերությունը այլաբերություններն ու խորհրդանիշերը: Ստեղծագործությանը մի նոր երանգ են հաղորդում շարահյուսական միջոցները՝ բառային հակադրությունը, աստիճանավորումը: Այս ամենը բխում է թեմայից, ասել է թե՛ մեր ազգային ոչ սովորական ճակատագրից: Երկի հենց առաջին մասում հեղինակը պատումի ներկա ժամանակով անդրադառնում է մեր անցյալին, որը նաեւ այսօրն է, որ ասես համարյա ոչինչ չի փոխվել: Հայոց աշխարհը նույն «մերժված ջրանույշի տրտմությամբ» է «կանգնում... Փակսիրտ գիշերվա շեմին», որտեղ «վերակացու դենն» է, որ «տնտղում է անձնագիրը» եւ «ներս թողնում բարաք գիշերն ի ձիգ»: Օրորոցայինը վերածվում է իրական պատկերի՝ ի ցույց դնելով երկիր-ժողովրդի ապերջանիկ ընթացքը.

*Մահիճդ ասես հրաբխային ապարից է,
փափուկ անկողնաշորդ միշտ թռցնում են գող ու հսկիչ,
եվ փխրուն մարմինդ խեղվում-կարծրանում է
քարե ներքնակի ու քարե հույսի վրա...*

(էջ 5)

Սակայն ցավալին դեռես այդ չէ, այլ այն, որ «օրոր ասող չկա»: Մի հեզնոտ լռություն շուրջկալել է հայրենի երկիրը, որի պատճառը եւ՛ ներսից է, եւ՛ դրսից,- իշխանավորաց եւ թշնամաց կողմից: Ճշմարտացիության այս բանաստեղծական ընդգծումից հետո հեղինակի օրորոցայինը բացում է հրեշտակային իր թելերը, որ հնարավոր չէ շնջալ առանց այրող հուզմունքի. «Քնիր, մերժվածս: Քնիր, իմ անուշիկ, Քաղցր գիշեր քեզ, ծիրան երազներ: Մղձավանջներդ վանել եմ ետ, անդորրի տոն եմ Աստծուց աղաչել քեզ համար, աշխարհիկս, քեզ համար: Տես, մի քանի շագանակ եմ բերել խրախճանողների մեծ կրակից, դնեմ բարձիդ տակ, կճաշակես վաղը, բայց ոչ միայնա՛կ, բարեկամաց հետ, անուշիկ»: Փակիր աչքերդ, քնիր, իսկ ես օրորեմ քեզ, իմ սիրելի» (էջ 5-6):

Հրամտը կրկին բարձրաձայնում է «անուղղելի ճշմարտությունը», ընդգծում, որ աշխարհն անենավերջին ժլատի պես է «աղերսվում իր խոնարհ ու անուժ տնվորներին»: Ի՞նչ է մնում անել: Պատասխանն առկա է.

*Գտիր պահը եւ խուժիր այնտեղ,
ուր պահպանվում են ներկայի մարգարիտները,
ոգին, ուրանը,*

*թե հապաղես, եղո՛ւկ, առանց աչք թարթելու քո
բաժինը այլոք կպարտակեն:-*

*Շուքն ու անառիկ ապարանքները կողոպտիչների
հանգրվաններն են:*

(էջ 6):

Եվ այսպես, երեկվա եւ այսօրվա իրական աշխարհի վարագույրները բացելով, պոեմի քնարական հերոս-բանաստեղծը ծածանում է օրորոցային ճշմարտապատումը. «Քնիր, կողոպտվածս, քնիր... Քնիր, տառապալս»: Ապա հաջորդում է եւ՛ խրախուսանքի, եւ՛ զգոնության խոսքը, այն, որ «Երկիրն Հայոց պետք է սքափվի եւ սիրի ու գնահատի իրեն, հեռու մնա «սին պարծանքից», հրաժարվի «կապույտ ինքնասիրտ պարապից: Բանաստեղծի այս սրտացավ խոսքը նորահունչ մի երեւոյթ է արդի մեր պոեզիայում.

«Քնիր, ինքնամերժս, քնիր անտրտունք: Քո անայլայլ ծայրը լսիր ներսից»: Եվ ապա՝ «Քնիր, խեղճս... Քնիր, հիմարիկս: Քնիր, իմ արյամբ պտտվող ասեղ, քնիր, մոլորյալս, Քեզ կգտնի դեռ մեծ սիրահարը, եւ կսիրի քեզ նույնիսկ վերակացու դելը գիշերվա: Քնիր, հրեշտակս (էջ 7):

Քնարական հերոս-բանաստեղծը սրտացավությամբ հանդիմանում է Հայաստան-մորը, զգուշացնում, որ չի կարելի «ծածկվել քաղաքակրթության թաց ջրերով», որովհետև.

*Ծիծաղում են երեսիդ, բամփում գլխիդ եւ
քեզ սերտել տալիս «սպանդ» բառի
բոլոր հոմանիշները*

մայրենի թե օտար բառերով...

(էջ 8)

Շարունակվում է օրորոցային հոգեբուխ հիմնը՝ զգոնության կոչով. «Քնիր, ընդունակա: Քնիր, խենթուկա: Մի տանջիր քեզ մշտադալար ստով-ոչ սիրելին ես եւ ոչ որքը ազգաց, շարքային զինվոր ես ինտերզնդում: Քնիր, աշխարհիկա: Կյանքի հողմն անցնում է իր ծածկագրած ուղեգծերով, դու հողմի բյուրհուլով լեզուն սերտիր, որ չքշվես նրա երախի մեջ: Ամեն օրվա ետեւ ժածք ու ցունամի կա դարանակալ: Քնիր, զգոնս» (էջ 8)

Հայոց աշխարհի հեթանոսական անցյալի ու քրիստոնեական ընթացքի միաձուլլ էությունը Հրանտի գրչի շնորհիվ դարձել է թարմաշունչ ու հրեշտակաթեւ մի ամբողջական պատկեր, որ հասուն մտքի արդյունք է: Բանաստեղծը անդրադարձի հրամայականով ընդգծում է Հայոց հեթանոսական կիրքը եւ քրիստոնեական ճերմակ շղարշները՝ շարունակելով մեծատաղանդ Դ. Վարուժանի «Հեթանոս երգերի» ավանդույթը: Հեթանոսական կիրքն է, որ միշտ փայլատակել է անկեղծ ու ազատաթույր: Ժողովրդի այս աներկբա բնույթը նշմարելով՝ նրա պոետ որդին դիմում է այսպես.

*Ամեն հովի հետեւից հուզավառ վազորդ,
ամեն պորտ ու դաշինք ծոներգող փամբիռ,
ամեն քրքում կրծքիդ փակցնող առաքյալ,
ամեն աստղի վրա անունդ գրել կամեցող մանչ...*

Բայց այսքանով հանդերձ, նա մնում է կիսադեմ, քանզի նրա «անֆասը դեռ չի պատճենում գերարդիական եւ ոչ մի սարք»: Եվ դրան հետեւում է որդիական օրորոցայինի նոր հայտնագործումը. «Քնիր, անհավատս... Քնիր պարականոն մի աղոթքով թեկուզ... Քնիր Վանա ծովից եկած հայի ժիր հոգնությամբ... Քնիր... Իմ խելոք առլեկին, իմ գիժ հովվապետ (էջ 9):

Հավատա՞լ, թե՞ չհավատալ աշխարհին, Եվրոպային ու եվրոպիկն, որոնք կարող են փաղաքշանքներով կողպել ատոմակայանը,

Կարող են գործի դնել շանտաժն ու ահաբեկիչներին: Չպետք է մոռանալ, որ

*Արցախի սիրուն մինչեւ վերջին լուման
վճարել ես դու,-*

*ոչ ոք իր ավիշից անհատույց կաթիլ իսկ
չի տա քո կտրտված ճյուղերի
վերընծյուղման համար:*

*Բաց է փակված սահմանդ Օսմանի հետ -
պղտոր, ամեն վայրկյան ճեղքումին
հլու մի ամբարտակ է
շառաչում անվերջ քո քթի տակ,- ինչ անկցելի է,
ոչ մի ջանք*

նրանց չի դարձնի մեկնույն ուղեծրի զույգ:

Դեռ ավելին, Երկրի բանաստեղծ որդին ավամեջ է բերում նաեւ մի ուրիշ փորձված ճշմարտություն, որ ինքդ պիտի պաշտպանես քեզ:

Խոսքը շարունակվում է օրորոցայինի հաջորդ ծածանումներում, որ ճշմարիտ հորդոր է, երեւոյթներն ըստ էության հասկանալու կոչ, հույսն իր վրա դնելու խորհուրդ՝ «Քնիր, միայնակս»: Քնիր քո աստվածատուր մեռության վեմին: Հաճախ ես մրսում մինչեւ թոքաբորբ: Բարեբեր օդը քո երազների հովիտներում է: Քնիր, իմ երազկոտ: Ինչ անհաս է քեզ, կարծում ես՝ մի օր ոտքդ դրել ես այդ բարձունքներին եւ պատմում ես քո հիպերբոլները պարապ ամբուխին: Քնիր, մեծամիտս» (էջ 10):

Հրանտը չի սքողում ոչ պատմության անողոք էջերը եւ ոչ էլ «Չեչոտ դեմքը ժամանակի»: Ուստի ելնելով անցյալ-ներկա ընդհանուր բնութից՝ հորդորում է մայր հայրենիքին՝ միշտ վառ պահել ոգին ինքնության, որպես «մացառներում կարմրող մասրենի»: Բանաստեղծը ներկայացնում է հակասական աշխարհը, երկդիմի արարածներին իր պատկերավոր խոսքով, որը եւ խրախուսանք է, եւ շրջապատը ճանաչելու ազդակ. «Քնիր, ապուշիկս: Քեզ դեռ երկար են պաճուճելու ճիշտ-անմիտ ու նոր մականուններով: Սարսռո՞ւն են քո «ար» արմատից: Քնիր, արիաջանս: Դեռ կանգնած են հերթի արնաքամի պիղծ դարաշրջանները: Քնիր, արեզնագանս» (էջ 10):

Կրկին ու կրկին, տարբեր ժամանակների ներկայացմամբ, Հա-

յոց փառքի ծովածավալ դարաշրջանների հրամայականով բանաստեղծը դիմում է իր «փոքրիկ... խատուտիկ... շուշան... խռովկան... միամիտ... բալասան... ամենատես... լիիշխան...» օրրաննորը եւ հնչեցնում նարեկացիական աղոթքը, թունանյանական հույսը, չարենցյան հավատը իր ինքնատիպ ծայնով, իր հոգու երանգների խտացմամբ, զինվորյալի իր ընծայականով. «Քնիր, անհամբերս: Քո զարմից ոչ ոք չի մնա անհետ տարագիր հեռվում, զավակներդ կգան ծափ ու ծնծղաներով, Քնիր, երկմտողս, քնիր, անհառաչ: Քոնն է բովանդակ գիշերն այս իր զարմանազան վայելք-անդորրներով, դեռ քոնն է վաղը վաղվաղակի, քոնն է գալիքն անհնազանդ՝ զանգակածաղիկներով, ուրցի բույրով» (էջ 14-15):

Հայրենասիրական անկեղծ զգացումների թարմ պատկերներ են «Երկինք Նաիրի» բանաստեղծական շարքը: Բանաստեղծի զրույցը ճայի հետ է, զրույց՝ շերտավորված պատմության դասերով եւ իմաստավորված: Ճայը սուրում է պատմության դասերով եւ իմաստավորված: Ճայը սուրում է «թախիծն ի վեր», սակայն քնարական հերոսը ուրիշ խնդրանք ունի.

*Ճայ իմ, բացիր մի նոր երկինք -
խոստումի պես աստվածառաք -
թախծի վրա այս ինքզինք
եւ քայլերիս՝ տեր ու ծառա:*

(էջ 53)

Երկրին տեր ու ծառա երագող բանաստեղծը փոխում է կոմպոզիցիոն ձեւը եւ դիմում որդուն կենսափորձով հարուստ հոր հավատով.

*ոչինչ չի անեանում
ժամանակի փակվող խորշերի մեջ,
առավելս՝ սերն ու ցավը վերահաս...*

(էջ 55)

Սիրո եւ ցավի զուգահեռ ընթացքում շափաղում է լույսը, որի հավատով քնարական հերոսը դիմում է որդուն.

*Քո ապագան իջնում է բոլոր աստղերի
արտացոլքով...*

Հայաստան-մոր ճակատագիրը Հրանտը կապում է աշխարհի հետ՝ ներկայացնելով նրա գեղարվեստական պատկերն այնպես, ինչպես կա: Այս առումով հատկանշական է «Ալպիական բարիտոնով» պոեմը: Ինչպես հատուկ է բանաստեղծի ոճին, նա գործը բա-

Ժամել է 11 արիայի: Մի կողմից Արեւելքն է՝ տեսիլքի հետապնդումով, մյուս կողմից «Համերաշխության թղթե վարդերով ողողված վեհաժողովներն ու առանձնատները, ամառային ծովափերն ու ակունքները, գիշերային ուղտերն ու կապուզիմները միջհամայնքային»:

Բանաստեղծը մատնացույց է անում այն տերություններին, որոնք ժպտալով մահվան հասցեներ են բաժանում զինյալ ու քաղքենի ամբոխներին եւ հարցնում. «Կա՞ մեկն այնտեղ, որ տեսնի անվրեպ, թե Աղետյալը ինչպես է զգում իրեն, չէ՞ որ.

*Ծուխ է ելնում մարդու պրկված հոգուց
եւ երկրի ջղերից կարմրատակած,
թմրաքաղցից զալարվում են առավոտները...*

(էջ 70)

Բանաստեղծը չի հաշտվում Աստծո ծիրից դուրս եկած աշխարհի վայրիվերումների, բռնակալների ու մազոխիստների արնամած արարքների հետ, այդ թվում նաեւ՝ մատը դնելով մեր ազգային ցավող սրտին.

*Փակ են խոցված երկրիս սահմանային
ուղեկալները,
Մի «բարեւի» չափ պարզ պայմանագրերը
ավելի դժվար են
շարադրվում-կնքվում, քան Սուրբ գրքերը
ցանկացած կրոնի,-
ինչպես չեն բանակցում միմյանց հետ
թիթեռն ու ցահը,*

*գիշերն ու լուսարձակները կալանավայրերի,
այդպես անճկելի ախոյաններն են փորում
անդունդները բաժանարար գծի....*

(էջ 71)

Բանաստեղծը նկատում է, որ «Որքան ճառագում է Միտքը, այնքան մոտենում են Աղետները», սակայն խրախուսանքի խոսքն է հղում երկրին, որ պատրաստ լինի մարտահրավերներին, չմոռանա, որ «ժանիքներ ունի եւ Ազատությունը», «Խորտակիչ է հարվածը Ազատության», ուստի պետք է ոգեշնչվել, չսայթաքել, մարտնչել, համոզված լինելով, որ՝

Մեն մի վառ աստղի գերիշխանությունը տաղտկալի է գորշ հորդանների բազմակիության չափ:-

(էջ 79)

Հայրենասիրության մի յուրահատուկ հյուսվածք է «Վազիր, Լառ, վազիր» ստեղծագործությունը: Հ. Ալեքսանյանը փառաբանում է անտրոհելի ինքնիշխանությունը եւ կոչ է անում հայկազուն քաջին, որ վազի «վարդավառների ու նախճիրների միջով, ազատության ու Արարատի հունով»: Դա է ազատության ճանապարհը, վազիր երգդ գրելով, հիշելով Վահագնին, մեր պատերազմի ու հաղթանակի հայոց դիցին:

Բանաստեղծը հոգու ծիածանը Սասունից կրկին ձգում է Արցախ եւ «Տաք ուրվատեսքը Ղարաբաղի» երգի մեջ հնչեցնում մեր վճռականությունն ու երազի ծաղկունը: Ղարաբաղը դեռ կխոսի, կճանաչեն նրան, կսեղմեն հաղթական ձեռքը,

քանզի սիրում է նա բարձր ու մաքուր երկինք

եւ թռիչքներն իր միշտ մեկնարկում է

երկնուղեշ լեռներից արցախական,-

եւ ինչ դիրքից էլ լուսանկարես ժամանակները,

երեւակվում է տաք ուրվատեսքը Ղարաբաղի:

(էջ 163)

* * *

Հ. Ալեքսանյանի «Բանի երկրի բարիտոնը» ժողովածուում ինձ շատ հետաքրքրեց «Բանկուլներ» բաժինը՝ նույն վերտառությամբ՝ բացատրականով: Ծանոթանալով այս յուրատեսակ առաջաբանին՝ կրկին համոզվեցի, որ Հրանտի բանաստեղծական միտքը չի ննջում երբեք, միշտ անհանգիստ է, թեւածող, որոնող, գտնումի ծարավ, իսկ եւ իսկ արարող ավյուն:

Անդրադառնալով գրական նոր ժանրերին ու դրանց տարատեսակներին՝ Հրանտը ճիշտ է բնութագրում դրանց պատմականությունը, հարափոփոխ անցագիրը, նշում, որ «բանաստեղծությունը գեղարվեստական ձեւերի մեջ շատ ավելի պահպանողական է իր տեսակներով», ապա ընդգծում. «Այդ շարքի համալրումը բացառիկ իրադարձություն է»:

Հրանտն իր նոր շարքն անվանել է բանկուլներ՝ դրանցից յուրաքանչյուրը դիտելով որպես պոետական միեւնույն կարգատիպին ենթակա առանձին ստեղծագործություն: Նման բացատրությունը

Կարող էր եւ չլինել, որովհետեւ բոլոր հեղինակների բոլոր պոետական շարքերում ամեն մի հյուսվածք ներկայացվում է որպես առանձին ստեղծագործություն՝ բայց իրար շետ շաղկապված բովանդակային ու կոմպոզիցիոն պահանջով: Վերհիշենք Վ. Տերյանի «Նաիրյան երկիր» գորելենը, Չարենցի «Տաղարանը», Պ. Սեւակի «Մարդը ափի մեջ», Յ. Սահյանի «Որոտանի եգերքին», Վ. Դավթյանի «Անկեզ մորենի» եւ այլ պոետների խոսում շարքեր: Իհարկե, կարելուրն այս չէ, այլ այն, որ Յրանտը բացատրում է իր մտահղացման շոշափելիությունը. «Բանկոլ»՝ նշանակում է բանաստեղծական կոլլաժ... Բանկոլը առանձին պատկեր-միավորների համակցություն է, հակված չէ ծավալման, ձգտում է ամփոփվել խոսքի սեղմ տարածքում» (էջ 187): Այնուհետեւ ընթերցողի առջեւ բացում է փակագծերը եւ բացատրում. «Բանկոլի պատկեր-մանրակները, ինչպես կերպարվեստային կոլլաժի նյութեր, համատեղվում են որպես անձնական եւ ներկա ժամանակի առավել սուր իրադարձությունների ու տագնապների մասին մտավոր ու գեղարվեստորեն հագեցած տողեր՝ իրական ելեւէջումների անմիջական ու խորիրդանչական անդրադարձներով» (էջ 187-188):

Յրանտն այնուհետեւ ճիշտ է նկատում բանկոլի՝ որպես բանաստեղծական տեսակի, հետագա կարգաբերման պահանջները: Ճիշտ է նկատում, որ գրական բոլոր տեսակները (ժանրերը) պատմականորեն փոփոխվում են, հարստանում եւ՝ ձեւի, եւ՝ բովանդակության առումներով, որովհետեւ առնչված են հարափոփոխ կյանքի հետ:

Ես ողջունում եմ Յ. Ալեքսանյանի այս խիզախումը՝ ելակետ ընդունելով ոչ թե վերոհիշյալ բացատրությունը, այլ նրա պրակտիկ լուծումը, ասել է թե՛ բանկոլների ալեքսանյանական շարքը: Այստեղ ավելորդ չէմ համարում վերհիշել համաշխարհային բժշկագիտության այն օրինակը, որ բոլոր հումանիստ, աստվածաշնորհ բժիշկներն իրենց հայտնագործած նոր դեղերը փորձում են հենց իրենց վրա: Դա, հիրավի, աստվածահաճո ու մարդանվեր անձնփրություն է: Յանենատության եզրերը չեն կաղում այստեղ, իրոք, Յրանտը մտածել-հղացել է, Յրանտը գրել է, հրանցրել է հոգեւոր այն արժեքները, որոնք պատկերային զարմանալի թարմությամբ ներկայացնում են մեր ժամանակի՝ բարձր ինտելեկտի տեր մարդու աշխարհընկալումն ու ներաշխարհը: Յիրավի, անհատի բանաստեղծական նկարագիրն է: Չեն կարող հենց ես գլխից չբարձ-

Քրածայնել, որ Հրանտի հյուսած բանկոլներն ակունքված են մեր ժամանակի ոգուց, միաժամանակ ավանդական շափաղունն են հայկական հայրենների եւ ճապոնական թանկաների արվեստի:

Շարքը, որ բաղկացած է 56 բանկոլից, տարաբնույթ կենսական աշխարհապարփակ հյուվածքներ են, որոնցում բանաստեղծական վառ երեւակայութեամբ ներկայացված են ժամանակակից հակասական աշխարհի աղտեղված ընթացքը, հզորների գայլային ազահիւթունը, փոքրերի տագնապներն ու վախվորած հույսերը, ընդհանրութեան մեջ 21-րդ դարի փիլիսոփայութիւնը: Եվ պետք է ընդգծել, որ յուրաքանչյուր բանկոլ ժամանակային արվեստի փայլուն մի կոլլաժ է, մտքի եւ հոգու բազմերանգ դարապատկեր նատյունորտ: Այդ գույները բանաստեղծը ոչ միայն տեսնում է, այլև զգում է, զունարում իր արյան կանչին, դառնում զգոն շեփորահար՝ աշխարհի ճշմարտութեան հանդէպ սրտացավ ու բարեգութ: Հրանտի աչքից չի վրիպում «Տաք կանչերի պարը սառույցի վրա: - Ցավում է, երբ «Ծերուկ բարութիւնը գայթում է փողոցում՝ սլացող մեքենաների առաջ», երբ նշմարում է, որ՝

Աստղի մեծութիւնն է կաթում քաղաքի տանիքներին:

Հսկա զինյալը դոփում է Արեւելքում,

եւ նավթափոշին ծածկում է անդորրի պարտեզները:-

(էջ 189)

Բանաստեղծը ցավում է՝ տեսնելով, որ գիշերը պսակվում է հավատի խտացված: «Ծղրիդի լռութեամբ»... Այս անանձնական, օբյեկտիվ իրականութեան ճշմարիտ պատկերը վերածվում է քնարական հերոսի անձնական ցավի եւ բանկոլի վերջում ներկայացվում որպէս իր «գրկի մեջ արտասովոր փերի առավիտ»:

Հրանտի բանկոլների ամեն մի տող չտեսնված գեղանկար է, պայթող ճշմարտութիւն, ցավատանջ տագնապ, Տիրոջ ափսոսանք: Այդ ամենը իրենց պատճառներն ունեն. «Քանու կարոտի մեջ է քաղաքների չլսված երջանկութիւնը», «Անձրեւի խանդի տակ ծպտված է անարատութիւնը գալիքի», «Խոտերը տանում են մեռյալների ու անապատների ցավն անպատում, եւ որ ամենացավալին է.

Աշխարհը մարդու մեջ թաղել է երաժշտութիւնն իր

եւ աչքը հառել տիեզերքին:-

Նույն կյանքը - պատերազմում թողած

կյանքից հետո -

սառնաշաքարի պես՝ մոխրամանի մեջ ու վազրի երախում:

(էջ 180)

Ազգային ու համամարդկային չլուծված խնդիրների միաձուլյալ նկարագրությունը արժեքավորման բարձր մակարդակի վրա է դնում ամեն մի հյուսվածք: Հրանտն ասես աշխարհն առել է ափի մեջ, կենտրոնում տեղավորել Նաիրին ու Արցախը, հայ մարդուն՝ տառապանքի, մաքառունի, հավատի խտացված իր պատկերով: Նրա հորբին ծփում է «Բերդ» պարի մեջ ներսույզ», թաշկինակը «ծածանվում է քնկոտ հաշտարարների ու կարմրած աչքերով դիպուկահարների դիմաց», «Վերելում ժխտման ուրուրներն են մասնատում երկինքը անտեսանելի ռմբակոծիչների չվագծով», վերջապես.

Սերն ու ատելությունն ամեն օր իջնում են

Արցախի կրծքին

Աստվածամոր համբույրի անմեղությամբ:-

(էջ 190)

3. Ալեքսանյանի պատկերավոր մտածողությունը հորիզոններ է ներառում երգերի մեջ ու դարձնում շոշափելի: Նա բանաստեղծ է՝ քաղաքացիական պաթոսի ինքնաստեղծ էությանը, երանգների սարյանական փնջումով, պատկերների բակունցյան լեզվով, ոգու սեւակյան բռնկումով:

Կարդում, վերընթերցում ես բանկոլները, ու թվում է, թե տեսնում ես աշխարհի, մարդկության ընթացքը՝ գիտակցության բոլոր ձեւերի համակցությամբ, ու գոհունակությամբ շեշտում ես, որ բանաստեղծը հետաքրքրությունների ծարավով, երեւոյթների ընդգրկմամբ, ազգային ճակատագրի զգացումով հենց պետք է այսպիսին լինի: Հրանտը տեսնում է, թե ինչպես «Իրար լեզու են խածնում քամին ու «Քաոսի սիրուհին», թե ինչպես է մեծանում «թիվը «միջուկայինների», «եւ բարբարոսն ամենուր զինվում է ճոխ ծաղկաքաղով մարգարեներից»: Եվ մի՞թե հզորների խենթ վազքի ու անտարբերության թելադրանքը չէ 1915թ. Հայոց ցեղասպանությունը, նախճիրը Օսմանյան Թուրքիայի արնախում բարբարոսների կողմից: Ամենաթողության եւ անտարբերության ճիչ է Հրանտի հետեւյալ բանկոլը.

1915-ի ծանրումեծ ստվերը անմռունչ խլում է

Հայք բարձրավանդակի լույսն ու ջերմությունը -

Պատմական կողոպտիչի հաշվեհարդարով:-
Թուրքի ուրվանկարը շարունակ կարմիր է
ժամանակի խճողված ցուցապաստառին:-
«Սպանդ» բառը հարություն է առնում հին ու
նորելուկ հմպերիաների
դրոշներին ու գաղտնի զեկույցներում:-
Եվ խցանվում է լսողությունդ աղաղակների
տաք արճիճով,
երբ խորալները սիրո ու բարու -
հին եղանակով գրված «սիրիներ» -
ներփակ ընկած են Աստժո
մոռացված ձայնադարանում:

(էջ 192)

3. Ալեքսանյանը հավաստի իրադարձությունների եւ երեւոյթ-
ների գեղարվեստական վավերագրողն է: Նա չի սքողում, չի կեղ-
ծում, չի մոզոնում դարաշրջանի պատկերը, քանզի մտահոգված է
գալիք սերունդների ճակատագրով: Գիտակցելով, որ արվեստի
ուժը ճշմարտության մեջ է, ավելորդ չի համարում ընդգծելու ակա-
նատեսի իր վկայությունը.

Ես խոսում եմ ժամանակի առիթմիկ
սրտի անդունդներից՝

վկայի ու հոր իմացությամբ:-

Ամեն պատկեր չէ, որ արտացոլվում է
հիշողության ու լիալուսնի մեջ:

Պիկ ժամ է՝ վստահության թափփված
ոստաններում:

(էջ 192)

Եթե գեղանկարիչն արտածելու լինի Զրանտի բանկուլներից թե-
կուզ եւ մեկը, ապա կստացվի արդի աշխարհի քաղաքական-հա-
սարակական բնույթը երանգավորող մի ռեալ պատկեր:

Զրանտի համոզմամբ՝ փոքրացել է աշխարհը, տարանջատ
երկրներ ու ժողովուրդներ չկան, մեկի ճակատագիրն առնչված է
մյուսին, հզորները շնաձկների պես պատրաստ են խժռել փոքրե-
րին: Այս գաղափարը ծնվում է աշխարհում ահագնացող վտանգ-
ներից, որոնցից կարող են տուժել շատ-շատերը, որովհետեւ՝
«Արեւելքի պարտեզներում փունջ-փունջ պայթում են Դեմոկրատի-

այի ոգեշունչ արկերը-ազատագարների նշանառությամբ»:

Այո, աշխարհը փոքրացել է, եւ պատահական չէ, որ Հ. Ալեքսանյանի տազնապը չի մեղմանում Արցախի համդեպ, հոգին թեւածելով նրա երկնականարում՝ ուղիղ իջնում է հայրենական եզերքի կենտրոն, թվարկում նրա բարեմասնությունները ու լսում շուրջը եռացող շնագայլային ոռնոցները:

Աշխարհի շրջապտույտի մեջ բանաստեղծ-քնարական հերոսը միշտ մնում է իր բնության հավատարիմ՝ մեկ խարազանում է աշխարհի չարն ու չարիքը, մեկ էլ մենախոսությամբ ինքնաբացահայտվում՝ Նաիրի երկրի եւ Արցախ-հայրական տան ճակատագրերի համակցմամբ.

Շրջված են հայելիներդ:-

*Դու թրեւում ես քո պատճենահանված
նմուշօրինակով՝*

Ինչ-որ էսքը -ի հանձնակատար ինչպես:-

Բնատիպդ փակված է Անհուշ ամրոցում,

որի տեղավայրը փոխվում է ամեն օր:-

Երեւանում կորած երազներդ գալիս բոլորվում են

Ամարասում պահ մտած մանկությանդ շուրջ:-

Երկար կպահպանես (գաղտագողի, դողով)

անցյալից թռցրած անբիծ հայացքդ...

Կապիտուլիումներից իջնում են հապճեպ

համաշխարհայնացման նախահայրերն ու

քարտուղարները՝

հանուրի անձնագրերը տնտղելով:-

Դու դեռ պատկանում ես քո հոգուն,

բայց ինչպես փակցված ազդագիրը՝ պատին:

(էջ 195)

Հ. Ալեքսանյանը իր բանկոլները ներկայացնում է որպես բանաստեղծական նոր տեսակ: Կրկնում են՝ ողջունելի է եւ՝ այդ մտահղացումը, եւ՝ պրակտիկ լուծումը: Դա մի ժանր է, որ կաղապարված արձեւքներ չունի, ինչպես կայուն ժանրերն են՝ տրիոլետը, սոնետը, գազելը, բեյթերը, դուբեյթերը, քառյակները: Սակայն Հրանտի առաջարկությամբ բանկոլն առանձին պատկեր-միավորների համակցություն է:

Իմ կարծիքը դրական է: Բայց կցանկանայի նշել, որ այն, թեկուզ

սուղ ծավալներում, ներառում է պատկերների մի շարք տեսակներ, առանձնապես պատկեր-ապրում, բնապատկեր եւ այլն:

Հաճելի է բերել անվանի բանաստեղծ, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Էդոյանի կարծիքն այս կապակցությամբ. «Հետաքրքիր են Հրանտի կոլլաժները (բանկոլները, ինչպես ինքն է հորինել), որոնք կառուցված են փաստի գեղարվեստական վերակերտման վրա (փաստն այստեղ կարող է լինել միտքը, իրականության այս կամ այն կոնկրետ պատկերը, առարկան, նյութական նախահիմքը): Ինձ համար զնահատելի է պատասխանատվության նրա զգացումն իր խոսքի, պատկերի, իր ստեղծած իրականության նկատմամբ, քանզի բանաստեղծը կերտում է մի աշխարհ, որի համար ուրիշ ոչ ոք պատասխան չի տալու»: (Նույն տեղում, էջ 258):

Այդպես էլ կա: Հ. Ալեքսանյանը արարել է պոետական մի հրաշալի աշխարհ, որի եւ՛ տերն է ինքը, եւ՛ պատասխանատուն:

* * *

Խոհափիլիսոփայական մտորումները հատուկ են նաեւ Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ: Նրա «Ուտքի վրա» շարքը մեր այս դիտարկումի վկայությունն է: Բերենք առաջին բանաստեղծությունը.

Վաղը

Դա ապագայի առաջին դողանջն է:

Իսկ այսօրը

առել են որպես սափոր,

որ հավաքեն

լազուր արծազանքները:

Հ. Ալեքսանյան, Կենսադաշտ, Եր., 1988, էջ 3

Պետք է նշել, որ հենց այս արծազանքներն են, որ կենսական թրթիռներով բանաստեղծը էջ առ էջ բերում է իր երգերի մեջ: Այդ ստեղծագործություններում երգիչն իր ապրումները ներկայացնում է բնապատկերների համաձուլվածքով: Ծովը եւ մարդը արծազանքում են իրար: Քնարական հերոսի հոգու արեւահար ձայնը ընկնում է ծովի անշունչ մակերեսի վրա, եւ արեւների համար իսկույն անկեղծ փոթորիկներ են ծագում: Այստեղ ընդգծվում է աստվածաշնչյան այն հայտնությունը, որ Արարիչը մարդուն ստեղծել է որպես բնության գլուխգործոց: Չի խանգարում, որ այս համապատկերին վերհիշենք Շիրազի «Բիբլիականը» պոեմաչարի «Բնության գլուխգործոցը» չափածո հատվածը: Սենք, իմիջիայլոց, նկատում ենք, որ հայ պոեզիայում շատ

ուժեղ է փիլիսոփայական երակը: Եվ պոետական սերունդներն իրար չկրկնելով, նոր հյուսվածքների մեջ են բերել մարդու ուժն ու գեղեցկությունը, մարդ, որին Աստված բաժին է տվել ցավն ու վիշտը, քանզի մարդիկ կարող են հաղորդակցվել եւ կիսել թախծն ու ծանր ապրումը: Ահա եւ այդպիսի մի հյուսվածք է Հ. Ալեքսանյանի չափածո հաղորդումը.

*Ծնվեցի,
Թախիծ կար
Կրունկներիս մեջ,-
Եվ դժվարացա քայլել:-
Հետո նա բարձրացել է,
Մտել սիրտս:*

(Նույն տեղում, էջ 4)

Հ. Ալեքսանյանի քնարական հերոսը տիեզերական տարածքները եւս ներառում է իր խոհն ու խորհուրդը ի տես դնելու նպատակով: Երկնքի բոլոր աստղերի հետ քեֆի նստելով՝ մարդկանցից մեկը՝ որպես երկրացի, նկատում է, որ երկնային լուսատուները մարդկանց «հոգիներն են՝ զղջումով վառված», որոնք ելք են փնտրում դեպի շիտակ ու պետքական խոսքի տարածքները: Եվ ճշմարտահամ երգերի ծարավով բանաստեղծը քայլում է դեպի «Ապրիլյան Արցախ», ապա բարձրանում Գանձասար, որտեղ պատմության լռությամբ սնվելով, զնում է խոհերի աշխարհը: Իսկ այդ խոհերը հիշողությունների ու ներկա ընթացքի գունաւոր են՝ եւ՛ հաշտ, եւ՛ հակասական: Բանաստեղծի հուզաշխարհում հարցեր են կախվում օդից՝ ո՞ւմ հայացքով գերվել, ատել, ինչպե՞ս դիմակայել սատանային, քանզի թուլությունն ու թերությունը չեն անհետանում.

*Եվ մեր աքիլլեսյան
գարշապարը, հարկավ,
անկրկնելիությո՞ւնն է, որ հաճախ լքում է մեզ...
ուրիշների կամոք:*

(Նույն տեղում, էջ 14)

Ուրիշների հե՞տ կապել կամքի թուլությունը, թե՞ սեփական թերության՝ դժվար է ասել: Կարելորն այն է, որ քնարական հերոսն անհեթեթ է համարում՝ «ծնվել ու հեռանալ խղճի ավերակով»:

Հ. Ալեքսանյանը ճանաչում է կյանքը, սրաչք ու սրատես է, նաեւ՝ ներքնատես: Դրանցով է պայմանավորված մարդկային կյանքի բոլոր շերտերից ծնունդ առած խորհուրդների ծփանքը: Այդ ինչպե՞ս է, որ

Ի հանճարներին բաժին է ընկել տառապանքը՝ որպես աստվածություն, որ հավերժորեն զոհ է պահանջում, ո՞վ է, որ կարող է դիմանալ հողմի հարվածներին: Բայց բանաստեղծի նպատակը միայն այս առեղծվածների հարցումները չեն, նա երագում է, որ լինեն ամուր կամքի տեր մարդիկ, որ կարողանան «կանգնել տառապանքի դիմաց»:

Քսաներորդ դարի 50-60-ական թվականներին ծիածանվեց Պ. Սեւակի հանճարը: Նրա «Մարդը ափի մեջ» գրքից հետո պոետի ծարավն աստվածային լույսի լինելության հանդեպ համակեց նաև երիտասարդ գրողներին: Այս առումով պետք է նշել եւ Յ. Ալեքսանյանի քայլը դեպի սեփական երագանքի աշխարհ՝ դաս առնելու միտումով: Եվ նրան հաջողվեց ասել եւ իր խոսքը.

Կրկին լույսը մնաց

Չալածվողի դերում:-

Ի՞նչ մշուշված է,

հեշտ հարմարվում է

պահին, անհարթությանն,

թեկուզ փոխվեն իսպառ

ուղղությունը հոսքի,

Երկրի կառուցվածքը:-

Լույսը տիեզերքի արյունն է թարմ

եւ թափանցիկ այնքան,

որ ճգնե՞ն էլ, դարձյալ չի հաջողվի

նրա կոհակներում

մեղք թաքցնել:

(Նույն տեղում, էջ 15)

Ուրեմն, լույսի որոնումը եւ հավատը նրա հանդեպ դառնում են երգչի հետաքրքրասիրության ատաղծը: Ասել է թե՛ բանաստեղծը լավատես է, թեւաբաց է գնում դեպի լույսը:

Յ. Ալեքսանյանի երգերում մարդը ներկայացվում է որպես «միակ հզոր երագն այս աշխարհի»։ Բանաստեղծն առանց մարդու աշխարհը համարում է «համատարած անկում, համատարած արցունք»։ Ավելի ողբերգականը բանաստեղծի համար մարդկային ցեղի վերացման տագնապն է։ Այդ ապրումի մեջ էլ նա բացական է.

Բարդ երագ է մարդը,-

Ե՞րբ են երագները

Դժբախտություն բերել:

(Նույն տեղում, էջ 16)

Մարդու արարող ուժը եւ միաժամանակ վշտի հիմնադիր լինելը բերվում են զուգահեռ: Ըստ պոետի՝ եզրակացությունը մեկն է՝ մարդկային ցավի եւ թախծի պատճառը հենց մարդն է: Այստեղից էլ սկիզբ է առնում երգչի իղձը՝ փակել ստի դռները, երկրպագել անկեղծության աստծուն, բացառել տառապանքը, տատանել ուրախության նյութը: Ուրախության դռները բացելու համար քնարական հերոսը խորհուրդ է տալիս.

*Սիրո խտությունից
Փոփոխվում է գույնը ակնթարթի:-
Պայծառություն փնտրել
Վայրերում այն խաղաղ,
որտեղ բնակվում է
ցեղը սիրողների:*

(Նույն տեղում, էջ 18)

Ապրումների մի աշխարհ են Չարենցի ու Մեծարենցի հիշատակին նվիրված երգերը: Դրանք ոչ միայն անհատ մեծերի անցած ճանապարհի պարզեւներ են, այլեւ ժողովրդի ճակատագրի գեղարվեստական վավերացումներ: «Մեծարենցի մենախոսությունը» հյուսվածքի ավարտում մեր ազգային բախտը համարվում է սոսկալի վերք կյանքը սիրողների համար: Սակայն նրանք չեն կարողանում հորինել անձնական հրճվանք: Դեռ ավելին՝ «Պատահում է, տառապում են նրանք հայրենաբույր հողում նաեւ մահից հետո»: Ժողովածուի համանուն բանաստեղծության մեջ քնարական հերոսի խոհերն ավելի առատ են դառնում: Այստեղ տազնապի ոգին ներկայացվում է որպես բախտի լուսապսակ, որի դեղնաթույր ցուլքի վրա հապճեպ հավաքվում են ժամերն ու օրերը, որոնց գծովելուց շատանում է լուսապսակի ցուլքը:

Այդ ցուլքերի լուսապսակի տակ էլ չի հատվում երազի ճամփան տազնապալից, փոթորկուն.

*Եվ ամեն մեկն էլ մեզնից տազնապ է -
երբեք չեղած ու անկրկնելի.
Օրերի փեշից բռնած՝ գնում ենք
Մեր կենսադաշտը գտնելու հույսով:
Թեեւ, ըստ խրթին մի հին կանոնի,
Միշտ էլ հայտնվում ենք
Նոր տազնապների շրջապտույտում:-*

Եվ կենսադաշտի ծաղիկն ածում է
Քնքուշ ձեռքի դող հար չվայելած:

(Նույն տեղում, էջ 22)

Յ. Ալեքսանյանի խոհերի ու խորհուրդների կիզակետում են նաև ժամանակակից քաղաքական ու հասարակական եզրելույթները: Բանաստեղծը չի հաշտվում բռնապետության, ստրկամտության հետ: Նա խորհուրդ է տալիս ժողովրդին անհոգ չնայել բռնապետներին: Երկիրն այնքան է փոքր, որ մի կաթիլ բռնությունն անգամ կհասնի բոլորին: Յեռուներում եթե խփեն մեկին՝ կհասնի նաև մյուսներին: Երբեք չի կարելի խաբվել բռնապետների սիրուն խոստումներից. այդ նրանք են, որ խեղում են դարը:

Առիմքնող շահերի ու խորհուրդների շարք է նաև Յ. Ալեքսանյանի «Պատյան» սոնետների շարքը: Նրանցում դարձյալ կյանքի առեղծվածների առջև կանգնած բանաստեղծն է, որի պատասխանին կարոտ՝ տենչում է.

*Տվեք ինձ երջանկության բոլոր հասցեները,
տվեք ինձ արդարության բոլոր հասցեները,
տվեք ինձ, տվեք ինձ, տվեք ինձ...*

(Նույն տեղում, էջ 38)

* * *

Սիրո իրական պատկերը ներշնչում է նաև Յ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ: Նա էլ սիրային երգերը գետեղում է գրքում որպես փունջ եւ անվանում «Գյուտարար սեր»: Բանաստեղծի համար սերը «նայաղների համար խայծ որսացող, ուրուների չուն թաքուն իրապուրող» ուժ է, որի սփոփանքն արդեն բառն է, իսկ այդ բառը որպես սիրո ծփանք, ավարտ չի դառնում, անհնազանդ կյանքում այն գյուտարար սիրո նախանշան է դառնում:

Յ. Ալեքսանյանի քնարական հերոսը սերը հասկանում է որպես «սեռը փայլեցնող» ուժ, որը եւ՛ տագնապ է, եւ՛ երդում, ըստ նրա, «բռնաբարվում է սերը միայն Սիրով»: Այստեղ երջանկությունը գնահատվում է որպես հնադարյան չորսթեւանի թռչուն, որի թեւաբախումի ներքո հնչում է քնարական հերոսի ձայնը.

*- Սիրելիս,
երջանիկները պարտված արքաներ են,
որոնք մտածում են
վրեժխնդրության մասին:*

Յ. Ալեքսանյան, *Վարդի խոռվություն, Արցախ, 1994, էջ 36*

Սակայն վրեժխնդրության մոլուցքը երբեք չի խաթարում սիրո ուղին՝ սիրո համբույրը դառնում է «Հոգու համբույր», այն կարող է ճեղքել բնագոյի քառուրդը: Սերը Հիպնոս աստվածն է, այն եւ՝ աննշան է, եւ՝ ուժեղ, ինչպես բանաստեղծն է ընդգծում.

*Երբ թարթում ես աչքերդ տխրությանը, Հիպնոս աստվածը
ընկնում է ցած -
իրբեւ քուն ու արցունք -
եւ ուրախություններս քուն են մտնում,
եւ արցունքով են պատվում աշխարհներս...*

(Նույն տեղում, էջ 37)

Սերը բանաստեղծի համար ջերմ գիրկ է, այն նման է սառցաբլուր կուլ տված արեգակի: Սիրո ծովը երազանք է քնարական հերոսի համար, այնտեղ սառցաբլուրներն անպարտ թագավորներ են, անհույս սիրո ջերմությունից հալչող: Սերը փառաբանելու համար բանաստեղծը նոր պատկերներ է որոնում, եւ հաջողվում է նրան: Ահա մի խոսուն օրինակ.

*Գիշերվա կտավից
Կտրեմ էջ թղթի չափ,
երկու-երեք կտոր,
որ քեզ նամակ գրեմ
կարոտի ճերմակով.
Եվ մինչ աջ ու ախյակ
Մտնտում էի,
թե որտեղի՞ց կտրեմ,
Հասա քեզ մոտ, ջա՛նս:
Ես - բոսոր նամակ:
Գիշերվա կտավից պոկված -
առաքված քե՛զ:*

(Նույն տեղում, էջ 38)

Հայ միջնադարյան պոեզիայում փայլատակած սիրո մոտիվն այսօր եւս հուզում է մեր պոետներին: Հ. Ալեքսանյանը եւս անմասն չէ այդ կուտակումներում: Նրա համար սերը հրավառություն է, գեղահրաշ է, որ լուսավորում է խավարները: Այսպես, յուրաքանչյուր դարաշրջանում սերը հոլովվում է յուրովի եւ յուրաքանչյուր սերնդի համար այն դառնում է գյուտարար՝ բառի ամենալայն իմաստով:

2011 թ.

ՋԵՐՄ ՈՒ ԱՌԻՆՔՆՈՂ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ
(Արիս Արսենի - 50)

Մեծանուն Յ. Սահյանը իր «Կյանքս դժվար է» բանաստեղծության մեջ կատարում է այսպիսի փիլիսոփայական ընդհանրացում. «Կյանքս դժվար է մտնում տողի մեջ, // Տողս կյանք մտնել չի կարողանում»: Անմահ արվեստագետը դրանով ընդգծում էր այն իմաստությունը, որ տողը, երգը ապրում են միայն այն դեպքում, եթե դրանք բխում են սրտից՝ ժամանակի հրամայականով եւ շոյում են սրտերը կյանքի հարուցած բոլոր պահերին՝ ուրախության եւ տխրության, մաքառման եւ արարման, կարոտի եւ հույսի: Նա ոչ միայն մատնացույց է արել այս ճշմարտությունը, այլեւ ինքը՝ իր տաղանդի լուսարձակներն ուղղել է ժամանակի եւ ժամանակակցի պահանջներին ու իրական կացությանը, հյուսել այնպիսի քնարերգություն, որով դարձել է Աստծո քարտուղարն ու ժողովրդի պատգամախոսը, ինչպես նաեւ դաս ու դպրոց ստեղծագործող նոր սերունդների համար: Եվ այդ նոր սերունդների ներկայացուցիչներից Արիս Գրիգորյանը (Արսենի) հենց էն գլխից հասկացել է կյանքի եւ արվեստի փոխկապակցության սահյանական պահանջը՝ գրելով մեծ բանաստեղծին նվիրված «Գագել մտերմության» երգը.

*Քեզ Որոտանն է տվել աշխարհին,
Իսկ ես ծնվել եմ ափին Թաղթառի:*

*Մեր ծնունդին նույն նվազն է հնչել,-
Միեւնույն լարից միեւնույն թառի:*

*Ես ապրում եմ իմ Արցախի սիրով,
Դու՝ քո սիգապանծ Սյունյաց աշխարհի:*

*Ու նույն ոգով դեռ երգեր ենք գրում,-
Ես լույս հավատով իմ լուսաշաղի,*

*Դու՝ իմաստնացած քո ոսկե աշման
Տաք կարոտներով լի մթնշաղի:*

(«Գրական Ղարաբաղ», Ե., 1988, էջ 35):

Եվ Արիսն ընթացավ՝ հավատալով իր լուսաշաղին, թիկունքին միշտ զգալով Մեծն Սահյանի տաք շունչը:

Արիս Արսենիի լուրջ հանդիպումը խստապահանջ ընթերցողի հետ տեղի ունեցավ 1988 թվականին՝ Երեւանում տպագրված «Գրական Ղարաբաղ» ավանախում գետեղված բանաստեղծական շարքով: Արձագանքը դրական էր թե՛ ավանախի եւ թե՛ Արիսի երգերի մասին: Առաջին գրախոսներից մեկը ես էի, որ երիտասարդ բանաստեղծի երգերի շարքում տեսա սահյանական ավանդույթին հետեւող, բայց պատկերավորության իր երանգներն ունեցող խոստումնալից պոետին:

Հայրենի տան հանդեպ ունեցած կարոտի եւ հեռացումի պատճառած ցավի բանաստեղծականացումը այնքան անմիջական եւ հոգեբանական այնպիսի խորությամբ են բացահայտված «Տունը» հյուսվածքում, որ մնում էր միայն ողջունել մրա մուտքը եւ հավատ ընծայել պոետական նոր հունձքի հանդեպ: Այդ ստեղծագործությունը սովորական համարել չի կարելի: Դա ոչ միայն կարոտի ճիչ է, այլեւ արմատների ետկանչ, որի արանքում տառապում է որդու սիրտը, կրակվում տուն անունով ծնողների հոգին: Հենց այդ երկկողմանի հրդեհված հոգիների չխամրող ճիչն է, որ ելնում է քնարական հերոսի սրտից.

Իմ առաջին ճիչը, որ լսել է տունը,

Իմ առաջին ճիչը վաղուց չկա,

Բայց հիշում է տունը: Ու ապրում է տունը

Մեր այն հեռու գյուղում աղամանդյա:

(էջ 32):

Տան հիշողությունը գտնված մետաֆոր է, որդուն այցի կանչող տեսիլք, որ իրական է, շոշափելի, բայց եւ անհասանելի, որ դարձել էր Արցախյան գյուղերի ճակատագիր, տան՝ անուրջները լացող պատեր, «միշտ մի անհույս հառաչ»:

Քնարական հերոսի ցավը խորն է, որ իր փոխարեն իր «նկարն է տանն այս լոկ տիրություն անում»: Գտնված պատկեր է, որ ճշմարտացիորեն ներկայացնում է Լեւինի եւ Ստալինի կողմից նորաթուխ Ադրբեջանի հայակուլ երախը նետված արցախյան գյուղի ճակատագիրը, որ խոցում է տանտիրոջ սիրտը.

Ու մնում են շվար: Հիմա ի՞նչ են, տանտե՞ր,

Հիմա դաղձն է ձգվում տանս պատին,

*Տանս անքուն պատին ձգվում եղինքն անտեր,-
Սպառնում է անգամ... ժամանակին:*

(էջ 33):

Եվ ժամանակները դաժան էին: Այդ ծանր ժամանակներից վրեժ առնելու ելք է որոնում բանաստեղծը եւ ինչ-որ չափով գտնում «Գազել պապիս» երգի մեջ: Դա պապի կերպարն է, նրա թողած ավանդն է: Հայկ Նահապետի ժամանակներից սկսած հայը իր կյանքի ճանապարհին ապահովել է հայկյան նետի ուժով, հարատեւել հայրենի հողի սիրտը շոյելով ու բարիքներ ստեղծելով: Այդպիսին էր նաեւ բանաստեղծի պապը՝ Խաչունց Անդրին: Բայց նա միայն Արիսի պապը չէ, իմ պապն է, քո պապն է, նրա պապն է, Արցախի հավերժախոս ավանդույթն ու ներկան է: Նա գրողի անձնական եւ անանձնական մտորումների խտացումն է: Բանաստեղծությունը գաղափարի եւ կատարման առումով հոգիներ շարժելու, անցյալի հրաշալիքները ի տես բերելու ուժ ունի: Պոետը նախ ծանոթացնում է իր պապ-հերոսին.

*Նա մեծ պապ-ապա Խաչունց Անդրին էր,
Ականջը ծայնի, աչքը հանդին էր:*

*Նա հանդի կանչը զգում էր անծայն,
Գնում էր՝ ճամփան հողի կանչին էր:*

(էջ 33):

Այստեղ խոսուն մետաֆորներ են հանդը, հողը, ճամփան, որ փռվում էր պապի ոտքերի տակ: Իսկ այդ ճամփան արարման եւ հացի ուղեցույց էր, որի հետդարձը ուղիղ տուն էր բերում: Պապը.

*Բանում էր հանդում մինչեւ ուշ գիշեր,-
Մենակ չէր, ընկեր կար՝ Ծիր-կաթինն էր,-*

*Պատահում էր եւ՝ քնում էր հանդում,
Իսկ թռռան աչքը միշտ էլ ճամփին էր:*

(էջ 33):

Պապի տունդարձին սպասող թռռը սակայն խզում է կապը հազարամյակների ավանդույթ դարձած պապի հույսից. «Թռռան երազը հանդից անդին էր...»: Պապի գալուստով թռռն իրեն երջանիկ էր զգում, «բայց հանդ չէր գնում, հանդը... պապինն էր»:

Բանաստեղծության ավարտը եւս գյուտ է՝ հողապաշտ անցյալի եւ հողից խռոված ներկայի ընդգծումով:

*Պապը աշխարհում այլեւ չկա,
Թողը մեծացել, աչքը... հանդիմ է:*

(էջ 34):

Ասել է թե՛ թողը կարոտ է պապի ավանդած հանդիմ, որ միայն հանդ չէ, պապաբույր կենցաղ է, արմատապահ գիրկ, կարոտի ցավ, ետդարձի կանչ:

Հայտնի համոզմունք է, որ երգը ծնվում է կարոտից: Սակայն ավելացնենք, որ կարոտից հյուսվում են տեսիլքն ու պատրանքը՝ ոչ վերացական, այլ շոշափելի ու կոնկրետ՝ ակունքված բանաստեղծի եւ ստեղծագործական նախասիրություններից, եւ անմարում կարոտից: Կարոտածին պատրանքի եւ տեսիլքի պոետական հնարանքը հատուկ է նաեւ Արիսի պոեզիային: Վկան նրա «Գազել պատրանքի» պատկերը: Բանաստեղծը մենախոսում է՝ կոպերի տակ հայրենի բնաշխարհը, որտեղ «էլ չի կարկաչում Դնգոնգան ծորը» եւ իր «մանկության սիրած աղբյուրը»: Չկա «մեղրահամ ջուրը»: Աղբյուրը լուռ է: Բայց խոսքը միայն աղբյուրի մասին չէ, այլ նրա կարկաչի հետ երազ դառած մանկության: Քնարական հերոսին մի պահ պարուրում է անհուսությունը, սակայն պատրանքը սփոփում է նրան: Դա վերացական հույզերի ծփանք չէ, այլ մանկության բնօրրանը, հայրենի եզերքը շենացնելու երազանք:

*Անհույս նայում եմ լռած աղբյուրին
(Ի՛նչ ծանր է նրա այդ լռությունը):*

*Աչքերս են հանկարծ ծանրանում տխուր,
Ու ջուր է դառնում աչքերիս հուրը:*

*Եվ արթնանում եմ քարերը կարծես,
Կոտրում աղբյուրի քար լռությունը:*

(էջ 36):

Պատրանքի թելերից են հյուսված նաեւ «Գիշերային նվագ» բանաստեղծությունը, որտեղ պատկեր-կերպարներ են պոետի *հուշերն ու գիշերը*: Հուշերը անձնավորված են, հանգիստ չեն տալիս քնարական հերոսին, որին չեն օգնում փողոցն ու քամին: Սակայն նա մեմության խավարը ցրելու համար վառում է լույսերը, որ «լույսի հետ վառվեն խավարած հույսերը»: Բանաստեղծության

ընդհանրացումը, որ հրաշալի մի պատկեր է, ասես հյուսված է Մեծ Լոռեցու խորհուրդով, որ տվել է նա 1917թ. սկսնակ բանաստեղծներից, որ երբեք չհուսալքվեն, լույս երգեն ու արեն:

Թումանյանի այդ խորհուրդը հայ բոլոր պոետները չեն մոռացել երբեք, եւ այդ թումանյանական լավատեսությունը զգում ենք նաեւ Արիսի «Գիշերային նվագի» մեջ, որ ավարտվում է այսպես.

*Իմ հույսը իմ տունն է՝ սերաշխարհս անծայր,
ինչքան էլ մենզ լինի գիշերս ու խավար:
Եվ թեկուզ մենակ եմ, բայց նորից իմ տանն եմ,
իսկ հուշս իմ հոգու արեւոտ հնձանն է,
նրանից եմ առնում երագս, կարոտս,
եւ արեւ նկարում նրանով մինչեւ լույս,
որ խաղա՞ղ, անաղմո՞ւկ լուսանա գիշերը,
լույսի հետ տունս գա ու մնա իմ սերը:*

*...Իսկ հիմա դեռ մութ է, հիմա դեռ գիշեր է,
Բայց... տանս մենակ չեմ, ինձ հետ եմ... հուշերս:*

(էջ 38):

Այսպես, Արիս Արսենին գրական աշխարհ մտավ հայ դասական պոեզիայի լավագույն ավանդույթների լույսով ջերմացած՝ աչքը հայրենի հողին, ականջը նրա կանչին, երագը հյուսած երգին, ու Արցախյան ազգային ազատագրական պայքարին զինվորագրվեց առանց երդումի, որովհետեւ հայրենիքի պատկերը նրա արյանն էր անցել մոր կաթի հետ: Նա զենք վերցրեց, սպայի աստղեր կրեց ուսերին, գրիչը ցած չդրեց, որպեսզի ամբողջությամբ զինվորյալ դարձած ժողովրդի հետ մեկտեղ վերականգներ հավատը՝ Արցախը փրկելու եւ անկախ ու ազատ ապրելու վճռականությամբ: Արիսը եւս, ինչպես Ն. Գասպարյանը, Զ. Ալեքսանյանը, Ժ. Բեգլարյանը եւ այլ երիտասարդներ, Գ. Գաբրիելյանի, Վ. Զակոբյանի, Զր. Բեգլարյանի, Ա. Զովհաննիսյանի, Ս. Խանյանի, Ն. Ավագյանի եւ մյուս ճանաչված պոետների հետ ծառայեցին Արցախը մայր Զայաստանին վերամիավորելու սրբազան գաղափարին ու գործին:

Զինվոր-լրագրող-բանաստեղծ Ա. Արսենին կանգնեցրեց պոետական իր շենքը ամուր հիմքերի վրա: Նկատի եմ առնում նրա բանաստեղծությունների վերոնշյալ մնայուն արժեք ներկայացնող շարքը: 1993թ. նա ընթերցողի սեղանին դրեց «Ճաքած լռություն»,

1997-ին «Անդրանիկ, այսինքն՝ առաջամարտիկ, «Ուշացած երկ-խոսություն Արարատ Ղազարյանի հետ», 1998-ին «...Եվ այսպիսի ճակատագիր», 2000-ին՝ «Ղողանջ հիշատակի», «Լռության ռոպե», 2001-ին՝ «Ծովածաղկի աչքեր», 2003-ին՝ «Անտառի ձայնից ինչու եմ հուզվում», 2005-ին՝ «Համանվագ», 2007-ին՝ «Ափ», 2008-ին՝ «Արի սիրենք մենք մեկմեկու...» ու «Չափածո եւ արծակ երգիծանք» գրքերը:

Արիսն աճում էր նկատելիորեն՝ նույն ստեղծագործական խառնվածքով, նախասիրություններով, բազմազան թեմաների մեջ քնարական շնչով, միշտ որոնումների ու գտնումների ծարավով:

Բազմազան թեմաների դաշտում Արիսը, առաջին հերթին, հայրենասեր է: Եվ դա բնական է: Արցախում ստեղծվող զրականությունը 1988-ից սկսած, առաջին հերթին ազատաբաղձ ոգու արտահայտություն է, երկիրը ազերի-թուրքերից փրկելու կոչ, իհարկե, գեղարվեստական արցախապատկեր հնարանքներով: «Ճաքած լռություն» - վերնագիրն անզամ խոսում է իր մասին: Նրանում հեղինակը գետեղել էր եւ «Գրական Ղարաբաղ» ավանախում տպագրված երգերը, եւ նոր ստեղծագործությունները՝ նվիրված մեր ժողովրդի անցյալին ու ներկային: Այս առումով հատկանշական է «Հայ ժողովրդի ճակատագիրը» բանաստեղծությունը: Բնութագրական ընդգծումներով բանաստեղծը ուրվագծում է մեր ժողովրդի եւ ծանր ճակատագիրը, եւ կամքի անսպառ ուժը: Դրա շնորհիվ է, որ նրա «տխրությունը երազներ» է ծնել, կարոտները եղել են «մաքուր ու բարի», սիրտը՝ մեծ, միտքը՝ ծովածուփ: Միաժամանակ նշում է, որ մեր «նախնիները ձեռքեր ունեին ծնկներին հասնող», բայց, ավաղ, դարերի հետ փոխվել է ամեն ինչ, սակայն չեն փոխվել հարատելելու նրա վճռականությունն ու արարելու ծարավը. եւ օրինական հպարտությամբ ասում է.

*Իմ ճանապարհին
Վերելքներ եղան ու նեռ անկումներ,-
Ինչքան բարձրացա՝
Այնքան կորցրի,
Ինչքան կորցրի՝
Այնքան երկնեցի,
Այնքան կերտեցի...*

(էջ 6):

Կերտելուն հաջորդել են նոր կորուստները, նոր անկումներն ու հառնելու տենչը: Եվ բանաստեղծը կրկին անդրադառնում է Հայոց պատմությանը, դիմում Մխիթար սպարապետին, կոչ անում, որ Նոր Հալիժորները այսպես են դավաճաններին, որ Սյունիքն ու Արցախը չառնի օսմանը: Պատմությունը շարունակվում է, բայց այս անգամ բախտը ուրիշ անակնկալներ է մատուցում՝ ելել են Արցախն ու Սյունիքը, ամբողջ հայությունն է ոտքի ելել՝ փրկելու ազգային արժանապատվությունը. «Իզաբելլային» բանաստեղծության մեջ՝ գրված 1991թ., Արիսն ընդհանրացնում է.

*Դու ասում ես... Ու ելնում են տղաները ծուռ,
Ելնում են, որ հայ քարերը հայ մնան կրկին,
Ելնում են, որ վերակերտեն ավեր տունը մեր,
Որ մոռացվի դանթեական առասպելն այն հին:
(էջ 9):*

Արիսի պոետական երեւակայությունը մասունքներ է փնջում աշխարհասփյուռ հայության երազներից, ցավից ու արցախածուփ հուլյսից: Այդ են վկայում բեյրութի դաշնակահար Իզաբելլային նվիրված երգերը, որոնցում ծփանք են առել Հայոց նոր ազատամարտի կոչերն ու հորդորանքները: «Կանչե, կռունկ» բանաստեղծությունը յուրօրինակ կոչ է՝ ուղղված մարտի ելնող քաջագուններին.

*Կանչե, կռունկ, կանչե՝ գնանք ի մարտ,
Կանչե, կռունկ՝ քանի ջահել ենք մենք...
...Մեջքը մեր չի ճկվի երբեք մարտում,
Մենք դեռ պետք է կռվենք, պետք է կռվենք...
(էջ 11):*

«Ճաքած լռություն» գրքի հետաքրքիր էջերից է «Շիրազական» շարքը, որտեղ առաջին հերթին ընդգծվում է մեծ բանաստեղծի շիրազված հայրենապատումը, որի փառավոր մուշններից է «Ղարաբաղի ողբը» ստեղծագործությունը: Մեջբերելով Շիրազի հայրենաշունչ, թեւավոր արտահայտությունները, Արիսը անմահ պոետի հավատով նշում է.

*Իմ ազգը հեգ չէ,
Ոսխին՝ տեգ է,
Ոսխի սրտին սուր ու դանակ,*

Իմ ազգը հուր է,
 Թշնամուն՝ սուր է,
 Թշնամու մուխը մարող բանակ:

Ապա մեջ բերելով Արցախում ընթացող գոյամարտը, Արիսը հավատով բացականչում է.

Ոչ, նա չի պարտվի,
 Կկանգնի ոտքի,
 Կկապի որդու՝ Դավթի գոտին,
 Որ գետնի նրան
 Մի ակնթարթում-
 «Յոթ միլիոնանոց» իր ոսոխին:

(էջ 15):

Անկախության շրջանի հայ պոեզիայում, որ սկսվում է 1991թ. սեպտեմբերից, մեծ տեղ են գրավում մեր սուրբ նահատակների ծոցում բանաստեղծությունները, պոեմները, լեզենդներն ու ասքերը: Արիս Արսենին եւս անմասն չի մնացել նման երկերի ստեղծման գործընթացից: Մարտական ստորաբաժանման կազմում, որպես վաշտի հրամանատարի տեղակալ, մասնակցելով մարտերին՝ լինելով ռազմաճակատի թեժ կետերում, իսկ այնուհետեւ, հրադարի հաստատումից հետո, զինծառայությունը շարունակելով որպես զինվորական թղթակից, նա մոտիկից իմացել է ոչ քիչ քաջազունների, ունեցել է մտերիմ ընկերներ, որոնց մի մասը հայրենիքի ազատությանն է նվիրել ամենաթանկը՝ կյանքը: Արիսի ստեղծագործության մեջ մի առանձին բաժին են կազմում զոհյալների հիշատակին նվիրված երգերը: Դրանցից են «Ես կուզեի լինել», «Ժամադրություն», «Երջանկություն», «Դու ապրում ես» հյուսվածքները՝ ընծայված Գագիկ Պատվականյանի, Արթուր Դանիելյանի, Գուրգեն Վարդանյանի, Արթուր Խաչատրյանի սուրբ հիշատակին: Արիսի սրտի մեջ կայծակել է նաեւ անհուն մի ցավ, երբ զոհվել է նրա կրտսեր եղբայրը՝ Անդրանիկը: 1993թ. նոր տարվա առաջին օրը գրված «Տխուր նոր տարի» բանաստեղծությունը սրտառուչ մի ռեքվիեմ է, որ յուրաքանչյուր զոհյալի հարազատ կարող է այն համարել իր ցաված սրտի խոսքը: Այն հոգեհարազատ է նաեւ ինձ, որովհետեւ իմ ավագ եղբայրը՝ բանաստեղծ Սուրեն Խանյանը, նահատակվել է Մեծ հայրենականում՝ գերմանական ֆաշիզմի դեմ մղված կռիվներում: Արիսն ասես հենց իմ անունից է գրել այդ երգի

տողերը, որ արտահայտում են անձնական եւ անանձնական ցավ ու կարոտ:

Պատերազմի թեման պոետական պատկերների թարմությամբ լայն տեղ գտավ նաեւ «Համանվազ» ժողովածուում: Մի ամբողջ շարք են կազմում հայրենասիրական ստեղծագործությունները, խմբված՝ «Մատս՝ ձգանին» վերնագրի տակ:

Արիս Արսենին այստեղ արդեն խոսում է եւ ավագ, եւ նոր սերնդի անունից: Որպես բնաբան՝ բերված են հոր ու հերթափոխի սպասող որդու անունից.

*Մատս ձգանին՝
Կսպասեն, տղաս,
Առնականանաս:
Հերթս կփոխեն այնժամ,
Երբ որ դու
Հերթափոխի գաս:*

(էջ 23):

Շարքը ոչ միայն բանաստեղծական զգացումների հաջող փունջ է, այլ նաեւ յուրովի մի տարեգրություն: Այսպես, որպես «Կարճատեւ մարտ» երգի բնաբան՝ կարդում ենք. «1994-ի հունվարի 8: Ներքին Սեիդահմեդլի: Ծանր վիրավորվեց 4-րդ վաշտի քաջարի հրամանատար Ժիրայր Մկրտումյանը, զոհվեցին դասակի հրամանատար Կարո Միքայելյանը եւ շարքային Արմեն Բաբայանը»: «Փոքրիկը» երգի բնաբանը ազդարարում է. «1995-ի փետրվարի 2, Սեյուլան: Դավադիր ականի զոհ դարձավ լեզենդար Փոքրիկը՝ Արթուր Օհանյանը»: «Եղբայրս, արի...» երգի բնաբանը հայտնում է. «1994-ի ապրիլի 18, Հասանդայա: Կատաղի մարտում հերոսաբար զոհվեց գնդացրորդ եղբայրս՝ Անդրանիկ Արսենի Գրիգորյանը»: Կցանկանայի բանաստեղծությունը բերել ամբողջությամբ.

*Գիշեր է, Ամանոր, իսկ դու դեռ... չկաս,
Բայց թույլ մի զգացում հուշում է՝ կգաս:
Կգաս ու աղմուկով դուռս կբացվի,
Կունկնդրես կարոտած պատերիս լացին:
Կգաս, որ կարոտած սիրտս ջերմանա,
Երագս թողնես ինձ, թախիծս գնա՝
Կգաս, որ էլ իրար չմնանք ծարավ...*

(Երա՛զս, կարո՛տս, թախիժս տարա՛ր):
 Ի՛նչ «անխիղճ» տղա ես, եղբա՛յրս, արի՛,
 Որ ուրախ սկսվի գոնե այ՛ս տարին:
 Այստեղ էլ ծյուն տեղաց կարոտիս սրտին...
 Բայց ինչ էլ լինի՝ քեզ սպասե՛նք պիտի:
 Բայց ինչ էլ լինի՝ դու անպայման կգա՛ս,
 Որ օ՛րս, արեւ՛ս, գալի՛քս դառնաս...

(էջ 28):

Արիսը ցասունի չափածո իր խոսքն է ասել Սունգայիթյան ցեղասպանության դեմ: Հինգ մասից բաղկացած քնարական պոեմում արտահատելով իր զայրույթն ու ցավը, բանաստեղծը բնութագրում է հայոց դարերը եւ ճշում.

*Դու՛ հայոց վերջին ցեղասպանություն,
 Մարդկության վերջին ոճի՛րը լինես...*

(էջ 36):

Արիս Արսենին բանաստեղծական ձեւերի մեջ միշտ անհանգիստ է, որոնում է խոսքն ասելու թարմ միջոցներ, եւ նշեմ, որ հաջողվում է գտնել: Որպես օրինակ կարելի է բերել «Լռության թուփ» պոեմը, որը նվիրել է իր հայրենի Կոճողոտ գյուղի զոհված ազատամարտիկների հիշատակին: Պոեմի վերնագիրը «Լռության թուփ» է կոչվում, սակայն զոհյալների շրթերին հնչում է հավերժության ձայնը՝ իրենց անունից, անունից ժողովրդի եւ նոր սերունդների: Այդ գաղափարը բանաստեղծն ընդգծել է պոեմի վերջում «Հետզրության կարգով» վերտառությամբ.

*Ու տղաները գնում են նորից,
 Որ ամուր պահեն իրենց... դիրքերը,
 Իսկ անդառնալի կորստյան ցավից
 Դեռ մղկտում են հարազատները:
 «Կանգնած են» տղերքն անհողողող, անքեն,
 Որ կայուն լինի խաղաղությունը...
 ...Եվ ավարտված է լռության թուփն,
 Բայց լռությունը շարունակվում է:*

(էջ 50):

Կյանքին սիրահարված բանաստեղծի համար սերը աստվածա-
յին պարգև է, առանց որի մարդ արարածը չի կարող համտես
անել երջանկությունը, չի կարող երջանկացնել նույնիսկ հարա-
զատներին, վերջապես առանց սիրո քաղցր զգացումի համ չի ու-
նենա նրա սերը՝ կյանքի, մարդկանց, երկրի, աշխարհի, տիեզերքի
հանդեպ: Նման զգացումի արտահայտություններ են համաշխար-
հային պոեզիայի դասական ներկայացուցիչների սիրային երգերը:

Արիսը ծիշտ է ընկալել աստծու պարգևած սիրո էությունը դե-
ռես գրական-ստեղծագործական առաջին քայլերը կատարելիս:
Այդ են վկայում «Գրական Ղարաբաղ» ավանախում զետեղված
այն երգերը, որոնք պատանեկան ազնիվ ապրումների խոստովա-
նություններ են: «Գազել սիրո» ստեղծագործությունը սիրո նվազ-
ների հրաշալի մի նմուշ է: Արիսի սիրային բանաստեղծություննե-
րում սիրո էակը ներկայացվում է որպես երջանկաբեր Դիցուհի, որ-
պես հոգու սյուն, ընտանիքի ճրագ: Դեռ ավելին, գարունը քնարա-
կան հերոսի համար ամբողջ էությամբ սեր է, «Սիրո բարի լույս ու
սեր զիշեր է», առանց սիրո նա չի պատկերացնում, թե ինչ է բերկ-
րանքը, իրեն ամենուրեք զգում է մենակ ու մերժված: Բայց եւ այն-
պես՝ նա հավատում է սիրո այցելությունը, նրա պարգևած հրաշ-
ալիքներին, եւ երբ գտնում է իր սերը, ցնծությամբ բացականչում է.

*Դու եկար մի օր: Թախծաբույր տանս
երջանկությունս արդեն տանտեր է:
Եվ բարուրում ես անմեղությունս,
Իսկ ցավս արդեն յոթ սարից դեն է:*

(էջ 34):

Արիսի երգերում բացառված է սիրո մոռացումը, քանզի ըստ
նրա՝ սերը ամբողջացնում է սիրողի աշխարհը եւ ներկայացնում
որպես «կանչող հյուղ»: Հավատարմության խոստովանություններ
են Արիսի սիրային նվագները: Բանաստեղծն այստեղ իրեն ներկա-
յացնում է որպես արցախցի՝ պապենական ավանդույթներին հա-
վատարիմ: Բերենք «Նվազ հավաստիացման» երգը.

*Ինձ քո աչքերի կապույտում՝ թաղիր,
Թաղիր շուրթերիդ ադամանդ ծովում,
Քո երազները ինձ համար պահիր,
Քո երազները ինձ շատ են թովում:*

*Քեզ հետ՝ աշխարհը հրաշք է ասես,
Առանց քեզ՝ հողմ է, քամին է լալիս,
Քեզ հետ՝ մի խենթ եմ, եւ գիշերն ի լույս
Քունը կոպերիս այցի չի գալիս...*

(էջ 87):

Գրքից-գիրք Արիսի սիրերգությունն ավելի հարստացավ ու հասունացավ: Այն ձեռք բերեց եւ հոգսի, եւ նվիրումի երանգներ: 2001թ. հրատարակված «Ծովածաղկի աչքեր» գրքույկը ամբողջությամբ կազմված են սիրո երգերից: Այստեղ Սերը ներկայանում է «աստղաշուրթ ու աստղազարդ» տեսքով, որին, ամեն դեպքում, փնտրում է քնարական հերոսը, եւ երագում, որ նրան միշտ ունենա իր կողքին: Դա միայն երագ է, որովհետեւ վախենում է, որ սիրտը չբացի: Քնարական հերոսը տենչում է, որ սիրած էակը միշտ ժպտա իրեն, աչքերի հուրը նվիրի:

«Ծովածաղկի աչքեր» գրքույկը նվիրված է հայ աղջիկներին՝ ակրոստիքոսի ձեւով: Գրքույկը կարելի է համարել սիրո ձոն, սեր, որ կոնկրետանում է Ծովինար, Մարինե, Կարինե, Գայանե, Աննա, Անահիտ երագաբեր անուններում: Շարքի ընդհանրացումը փոխադարձ սիրո բաղձանք է.

*Եթե չգաս՝ կմոխրանամ կարոտից,
Եթե չգաս՝ հետո էլ ո՞նց նայես ինձ:
Չգա՞ս... Ցավի ծիչ է՝ սիրտս չցավի՞,
Չգա՞ս... Իմս քի՞չ է՝ քո՞նն էլ գունարվի...*

Աշխարհի բոլոր սիրերգակները աստվածանվեր իրենց սիրո զգացումները արտահայտել են կոնկրետ՝ այն էակի անունով, ում հետ կապել են իրենց ճակատագրերը: Սակայն նրանց խոսքը անձնական շրջանակներից դուրս է եկել ու դարձել ամանձնական: Ասել է թե՛ բանաստեղծն իր «ես»-ի միջոցով արտահայտել է սիրո այն բնույթը, որ հասուկ է բոլորին եւ բոլորի անունից է: Այս առումով որոշակի արժեք ունի սիրո երգերի այն շարքը, որ Արիսը նվիրել է իր կնոջը՝ Ռուզանին: Ծանոթանալով այդ երգերին, ապրում ես մաքուր ու անբիծ մի զգացում՝ քո սիրելիի հանդեպ, ում հետ անցել ես եւ անցնելու ես կյանքի քո ուղին, ում հետ տուն ու տեղ

Ես դրել, ուրախացել երեխաներիդ ճիշով, պահել-շահել ու նվիրել ժողովրդին:

Վերջին հաշվով, երբ զննում ես աստծո որդիների՝ Ադամի եւ Եվայի աշխարհ գալն ու մարդկության կյանքի լուսավոր ուղին օրհնելով սիրո խորհուրդով, գալիս ես մի եզրակացության, որ անհրաժեշտ է աղոթել աստծուն եւ պաշտել նրան՝ ընտանիքի լույսը վառելու համար՝ հանձինս իրար երջանկացնող զույգերի: Առանց երկմտանքի, կարող ենք ընդգծել Արիսի սիրո բանաստեղծությունների մեջ արտահայտված այս միտումն ու գաղափարը: «Արի սիրենք մենք մեկմեկու...» գրքից «Սիրո տողերից՝ նախերգանքի փոխարեն» բանաստեղծության մեջ քնարական հերոսը բացում է կյանքի առեղծվածները եւ դրանց խաչմերուկներում սիրո վեհությունն ու լույսը:

Սիրո քաղցրությունն ու աշխարհաստեղծ էությունն է ծփում շարքի «Առաջին սերը», «Ջանգլուլումներ», «Նվազ հավաստիացման» եւ այլ երգերում: Անմիջական զգացումներով, խոսքի պատկերավորությամբ ու առինքնող գաղափարի առկայությամբ գեղագիտական հաճույք են պատճառում ժողովածուի քառյակները: Բանաստեղծը փառաբանում է ծովածավալ սերը, որից երբեք չի հագնում սիրտը: Քնարական հերոսը խոստովանում է, որ ինքը «սիրում է լուռ», «կարոտում է լուռ», որ իր «կարոտը թռչուն է անթեւ»: Դա պոետի հավատն է, ջերմ սիրելով հանդերձ, կրկին հարցնում է, թե «ի՞նչ է սերը» եւ ասես գտնում է պատասխանը յուրովի՝ սերը գտնում են, բայց էլի սպասում են, եւ հենց դա է աստվածանվեր սիրո էությունը:

*Նորից կգաս ու կլցվի
Սիրտս երգերով,
Սիրո համար էլ չեն թախծի՝
Կործանված սիրո:*

*Ու քո սերը կպարզելի
Ինձ մի մեծ աշխարհ,
Մի մեծ աշխարհ՝ սիրո, կյանքի
Եվ երջանկության:*

Նորից կերգի առվակը լուրթ
Մեր սիրո մասին.
Ու երգերով իր քաղցրաշուրթ
Նա մեզ կհուզի:

Կմոռանանք մեր վիշտը հին՝
Լցված երազով,
Կգաս նորից ու կլցվի
Կյանքս քո սիրով...

Չես կարող չընդունել բանաստեղծի այս խորհուրդը եւ չիշել անմահ Սայաթ-Նովայի իմաստությունը՝ «Սերը սեր կու բերես»:

Ա. Արսենիի քնարերգության մեջ նկատելի տեղ են գրավում խոհական երգերը: Մի դեպքում դրանք բնապաշտական հյուսվածքներն են, մյուս դեպքում՝ այն գործերը, որ նվիրված են հարազատներին, ժողովրդին, կյանքի առեղծվածներին:

Այս առումով, նախ բերենք հարազատներին նվիրված երգերը, որոնց շարքում հատկանշական են «Գազել տատիս», «Գազել մորս», «Գազել մոռացման» գործերը: Թոռն ապրում է քաղաքում, իսկ տատը մնջում է գյուղի գերեզմանոցում: Սակայն չեն մոռացվում տատի քնքշանքներն ու թոռան չարությունները, որ ձուլված էին միմյանց: Թոռը տարիներ անց մեղանջում է տատին չլսելու համար եւ իրեն համարում է պարտք եւ խնդրում է, որ տատի հոգին ների իրեն:

Մոռացել ես երեւի չարություններս բոլոր,-

Դու ներող ես եղել միշտ, այս անգամ էլ, տատ, ների:

(«Համանվազ», էջ 13):

Բայց դրանով չի մեղմանում թոռան ցավը, կրկնապատկվում է, որ տատի գերեզմանը մնացել է անշիրմաքար:

Որդիական խղճի եւ սիրո վառող խոստովանություն է մորը նվիրված գազելը: Որդին պատրաստ է հառնելու չարի դեմ, ցրելու մոր թախիծը, սրբելու նրա արցունքները ու չթողնել մեռակ:

Կարոտների հոսքը քնարական հերոսին տանում է դեպի գյուղ, որտեղ նրա հոգում ծփում է ափսոսանքի ծովը, որ իրենց տան բալում այլեւս չի կանաչում թթենին, չի հառաչում, չի երգում: Բայց չի մարում հույսը, կյանքը պիտի ժպտա հայրենի բակում:

*Թթենու մի շիվ է այսօր կանաչում նորից մեր բակում,
Նա հույսի շողն է մեր բակի՝ հուշերիս կանաչ թթենին:
(էջ 21):*

Բնության եւ հասարակական կյանքի աստվածային փոխկապակցվածության մի երանգ է «Ժայռի ճակատին» պատկերը, որ բերում են անբողջությամբ.

*Ժայռի ճակատին ստվեր կար ամպի,
Արեւը՝ երգել երգն իր կարապի,
Գնում էր՝ օրվա հոգսերից հոգնած,
Ժայռածերպերում հանգստանալու:
Այնպես էր գնում,
Ասես էլ երբեք ետ չի դառնալու:*

Խոհական լիրիկայի հուզող նմուշներից է «Վաղվա մասին, եւ՝ այսօրվա» բանաստեղծությունը, գրված պոետի՝ իր իսկ 40-ամյակի նախօրյակին: Դա գնահատումն է անցածի, ակնկալիքի, միաժամանակ երախտիքի արտահայտությունը նրանց հանդեպ, ովքեր տասնութամյա հասակում իրենց կյանքն են տվել այսօրվա եւ վաղվա համար:

Արիս Արսենիի քնարերգությունը արժանացել է եւ ընթերցողների, եւ մի շարք գրականագետների ու գրողների դրական գնահատականին: Հաճելի է նշել. որ դեռեւս 1989թ. Սիրիայում հայտնի գրականագետ Հակոբ Չոլաքյանը ընդհանրության մեջ գնահատել է «Գրական Ղարաբաղ» ավանախում տեղ գտած երգերը, դրանք համարելով «Արցախի ինքնաճանաչման» արտահայտություն: Նա նկատում է, որ առանց այդ համընդհանուր ինքնաճանաչման հասնելու, հնարավոր չէր լինի Արցախյան շարժումը: Եվ որպես քնարական հերոսի ներաշխարհի բացահայտման հաջող օրինակներ, բերում է Արիսի բանաստեղծությունները: Բնութագրելով կոնկրետ Արիսի՝ Համո Սահյանին նվիրած երգը, Հ. Չոլաքյանն ընդհանրացնում է. «Արցախցին իր խիղճը, շրջապատը, իր տոհմային գրույցներն ու պատմությունը պրպտելով կհավերժվի ապրող ու մեռած իր բոլոր ազգականների եւ հայրենի եզերքների հետ հայերենով, խաչքարով, նույն հավատով ու երազով, Հայկ Նահապետով, Սուրբ Գրիգոր Լուսավորիչով, Սուրբ Մեսրոպով, Ավարայրով: Հաս-

կանալի է, որ սրանք մեր ժողովրդի էությունն են, Հայաստան աշխարհի ու հայ ժողովրդի «հիշողությունը» կազմող հիմնական տարրերը: Արցախցին այսպես է, որ հայության կրողն է դառնում, իսկ Արցախը՝ Հայաստանի մի մասը: Միայն այս ըմբռնումներով է, որ արցախյան բանաստեղծությունը հասնում է հայրենիք եւ ազգ ըմբռնումների ձեւի եւ բովանդակության դաշնության եւ ամբողջականության: Հայ բանաստեղծությունը արցախյան ներշնչում լինի թե Սյունյաց աշխարհի, Թարթառի ափին վարարող հավատի երգ լինի, թե Որոտանի ափին հեծեծող կարոտի երգ՝ նույն նվազն է՝ «միեւնույն լարից միեւնույն թառի» («Արցախեան ինքնաճանաչման բանաստեղծութիւնը», Հալեպ, 1990, էջ 68):

Արիսի քնարերգության առանձնահատկությունների դրական գնահատականն ենք կարդում գրականագետներ Լ. Գրիգորյանի «Ազնիվ մղումների բանաստեղծը», Ս. Խաչատրյանի «Արիս Գրիգորյանի բանաստեղծական աշխարհը», բանաստեղծ Ռ. Եսայանի «Համանվազ», «Ապրում է տարածությունը, որպես միջոց լույսի» գրախոսություններում: Իսկ Արցախի գրողների միության վարչության նախագահ, տաղանդավոր բանաստեղծ Վ. Հակոբյանը գրել է. «Արիս Գրիգորյանի գրիչը խոպաններ է հերկում, այսպես ասած, հերկված դաշտերում, հաստատելով, որ նորույթը ասելիքի մեջ է, որ ասելիքն է կարելորդում թեմայի հրատապությունը: Եվ դրա գեղեցիկ վկայությունը Արցախի մարտական կյանքը պատկերող նրա գուլլալ երգերն են» («Եղիցի լույս», 2001թ. № 2):

Արիս Արսենիի պոեզիան, որ բազմալար է թեմատիկ առումով, արժանի է լուրջ ուսումնասիրության:

Սեպտեմբեր, 2009թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ- ՅԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-ԲԱՆԱԿ ԿԱՊԸ

Մարդկային հասարակության պատմության մեջ հաստատված է այն ճշմարտությունը, որ արդարացի պատերազմ մղող ժողովուրդը իր հաղթանակը նվաճել է այն դեպքում, երբ ապահովված է եղել նրա բարոյաքաղաքական միասնությունը, ասել է թե՛ ժողովուրդը համախմբված է եղել պետության շուրջ, իսկ ժողովրդի եւ պետության անվտանգության երաշխիքը համարվել է բանակը: Բանակ-հասարակություն կապը սկիզբ է առնում հազարամյակների խորքից, որովհետեւ, ցավոք սրտի, ժողովուրդների առաջընթացը ուղեկցվել է արյունահեղ պատերազմներով: Դրա խոսուն վկայությունն է նաեւ հայ ժողովրդի պատմությունը՝ իր ողբերգական եւ հերոսական էջերով, մաքառելու եւ հարատեւելու վճռականությամբ:

Զինվորականության եւ ժողովրդական լայն զանգվածների սերտ կապ նշանակության, սերունդներին այդ համագործակցության հրամայականով դաստիարակելու կարեւորության գաղափարի ընդգծումը հայոց գրավոր գրականության մեջ սկիզբ է առել 5-րդ դարից, մաշտոցյան գրերի հավերժաժուլի գյուտից անմիջապես հետո: Այդ լուսավոր գաղափարի առաջին եւ անմիջական ջատագովներն էին Մ. Մաշտոցը՝ իր ճառերով, Ս. Պարթեւը՝ իր կանոններով, Կորյունը՝ «Վարք Մաշտոցի» աշխատությամբ եւ Եզնիկ Կողբացին՝ «Եղծ աղանդոց» գրքով: Մեր դպրության այս հիմնադիրները ոչ միայն հանճարեղ մտածողներ էին, այլեւ քաղաքական գործիչներ: Նրանք կատարելապես դեմ են եղել «մի՛ կալ հակառակ չարին» սկզբունքին: Եզնիկ Կողբացին ընդգծում էր այն միտքը, որ եթե նվաճողական քաղաքականություն վարող որեւէ պետության զինված ուժերը ներխուժեն մեր հայրենիքը, ապա չպետք է հնազանդվել, անհրաժեշտ է զենքի ուժով ոչնչացնել նրանց: Իսկ զենքի պետք է դիմեն եւ զինվորները, եւ հասարակությունը:

Ժողովրդի հարատեւման գաղտնիքը հստակ տեսել եւ խրախուսել են 5-րդ դարի հայոց մատենագիրներ Ագաթանգեղոսը, Փ. Բուզանդը, Մ. Խորենացին, Եղիշեն, Ղ. Փարպեցին: Նրանք ուսուցանել են, որ հայրենի հողի, հավատի եւ լեզվի պահպանումը հնարա-

վոր է միայն պետության, եկեղեցու եւ ժողովրդի սերտ համերաշխությամբ, որի միակ եւ հզոր երաշխիքը բանակն է:

Այսպես, Ագաթանգեղոսի «Յայոց պատմություն» գրքի այն էջերը, որտեղ պատկերված են Յայաստանի դարձը, այդ ճանապարհին Տրդատ Մեծի եւ Գրիգոր Լուսավորչի հակամարտությունը եւ ապա համագործակցությունը, արքունի բանակի եւ ժողովրդի միասնության հրաշալի պատումներ է պարունակում: Նրա իդեալական հերոսները մի կողմից Տրդատ Մեծն է եւ Գրիգոր Լուսավորչը, իսկ մյուս կողմից քրիստոնեական հավատն ընդունած ժողովուրդն է, որոնց համերաշխությամբ էլ ապահովվեց Յայոց աշխարհի հարատեւումը: Պատահական չէ նաեւ Ագաթանգեղոսի կողմից «Պարսից պատերազմ» ժողովրդական բանավոր վիպերգի օգտագործումը, որտեղ նկարագրված է հայ-պարսկական երկարամյա պատերազմը 3-րդ եւ 4-րդ դարերում եւ որտեղ ընդգծված է ժողովրդի եւ զինվորականության ամուր կապի առաքելության նշանակությունը: Այդ վիպերգը արժանացել է նաեւ Փ. Բուզանդի ուշադրությանը: Իր «Յայոց պատմության» մեջ նա առանձնապես օգտագործել է վիպերգի այն մասերը, որոնք վերաբերում են 4-րդ դարին: Նկարագրելով այդ դարաշրջանի հերոսական եւ ողբերգական իրադարձությունները, Փ. Բուզանդը դարերին է հանձնել Արշակ Երկրորդի, Պապ թագավորի, Վասակ եւ Մուշեղ Մամիկոնյան սպարապետների, Ներսես Մեծ կաթողիկոսի եւ նրա հետնորդների գործունեության դրվագները՝ ավանդելով մի լուսավոր պատգամ՝ ժողովուրդը կարող է հարատեւել միայն այն դեպքում, եթե ունի պետություն, բանակ եւ սրբազան օրենքներով օժտված եկեղեցի: Այդ մասին են խոսում նրա գրքում ներկայացված Տիրան-Արշակ-Պապ թագավորների ճակատագրերը, պարսկական եւ բյուզանդական բռնապետությունների ոտնձգությունների դեմ հայ ժողովրդի մաքառումը:

Փ. Բուզանդը ցավով է խոսել կենտրոնախույս ուժերի մասին: Նրանց պատճառով էր, որ Արշակ Երկրորդին եւ նրա որդի Պապին չհաջողվեց դիմակայել արտաքին եւ ներքին թշնամիներին, երեքաց պետությունը, թուլացավ բանակը, բզկտվեց ժողովուրդը: Բուզանդի «Յայոց պատմություն» գիրքը ուշագրավ սկզբնաղբյուր է 4-րդ դարի հասարակական մտքի էությունը եւ մակարդակը իմանալու համար: Գիրքը գրված է 5-րդ դարի երկրորդ կեսին, երբ Յա-

յաստանը գրկված էր պետականությունից: Ուստի նրանում առկա է պետական անկախությունը վերականգնելու, պարսկական եւ բյուզանդական բռնապետությունների լուծը թոթափելու գաղափարը: Այս հանգամանքն է թելադրել նրան ընդգծելու պետության կայունության անհրաժեշտությունը եւ Հայաստանի սահմանների ամբողջության պահպանման կարեւորությունը: Պատմիչը գիտակցել է երկրի ներքին ուժերի համագործակցության նշանակությունը: Այս առումով էլ նա խարազանել է կենտրոնախույս այն նախարարներին, ովքեր ապստամբել են թագավորից, անջատվել կենտրոնական իշխանությունից, անցել թշնամու կողմը: Բուզանդը անարգանքի սյունին է գամում Մանավազյանց եւ Որդունյաց մեծ նախարարություններին՝ նրանց միջեւ ծագած կռիվների համար, որի պատճառով պղտորվեցին Հայոց աշխարհի կյանքն ու անդորրը: Չէին հաշտվում նաեւ Խոսրով Կոտակ թագավորը եւ Վրթանես կաթողիկոսը, եւ չի հաջողվել նրանց հաշտեցնել: Հենց այդ օրերին թագավորի հրամանով Վաչե սպարապետը բնաջնջում է այդ նախարարական տները: Այդ ժամանակ նույնիսկ գտնվում էին հայ իշխաններ, որոնք անցնում էին թշնամու կողմը եւ կռվում հայոց արքունի բանակի դեմ: Բուզանդը նրանց անվանում է տիրադավ: Պատմիչը նշավակում է Փիսակ սենեկապետին, որ դավաճանեց Տիրան թագավորին, Աղծնյաց Բակուր Բդեշխին, որ թշնամուց օգնական զորք ստանալով, ապստամբեց Խոսրով Կոտակ թագավորի դեմ, Բզնունյաց Դատաբե իշխանին, որ պատերազմի ժամանակ միացավ պարսկական զորքին Հայոց թագավորի դեմ, Ինչպես նաեւ Դղակ Մարդապետին, որ զործակցեց Շապուհ արքայի հետ՝ Պապ թագավորի դեմ: Բուզանդը խորին ցավով է նկարագրում Արշակ Երկրորդի եւ Վասակ Մամիկոնյանի ողբերգական մահը Պարսկաստանի Անհուշ բերդում, երիտասարդ Պապ թագավորի սպանությունը խնջույքի ժամանակ: Ինչպես տեսնում ենք, պատմիչը երկրի անկախությունը եւ ժողովրդի գոյատևումը կապում է պետություն-հասարակություն-բանակ եռամիասնության հետ:

Պետության, եկեղեցու եւ ժողովրդի միասնության գաղափարը կարմիր թելի պես անցնում է պատմահայր Մ. Խորենացու «Հայոց պատմություն» անմահ աշխատության միջով: Քերթողահայրը ուսուցանում է, որ պատմության ընթացքում, երբ ապահովվել է ժո-

Պրովորդի եւ բանակի միասնությունը, երկիրը պսակվել է հաղթանակով: Հենց այս առումով էլ Մեծանուն պատմիչը ձեռք է մեկնել մեր դիցաբանական զրույցներին եւ առասպելներին՝ ուսուցանող իր խոսքն ասելով Հայկ Նահապետի, Հայկյան Արամի, Արայի, Արտաշեսի, Տիգրան Մեծի մասին, որոնք հայրենասեր քաջազունների գլուխ անցած ոչնչացրել են Հայոց աշխարհի ռիսերին թշնամիներին՝ Բելին, Նյուքար Մադեսին, Շամիրամին, Աժդահակին:

Պատմությունը դաս է գալիք սերունդների համար: Այս ճշմարտության ջատագովությամբ Մ. Խորենացին ավսոսանքով գրել է, որ մեր աչքի ընկնող նախնիները եւ առաջին թագավորները նույնիսկ գրի չեն առել իրենց կատարած սխրանքները: Դա առաջին հերթին անհրաժեշտ է եկող սերունդներին, քանզի յուրաքանչյուր գրի առած իմաստության գործ եւ քաջություն հետագայում օրինակ են հանդիսանում աշխարհական եւ քաղաքական գործընթացի համար: Իսկ մեր երկրում քիչ չեն կատարվել հերոսական գործեր: Դիմելով իր մեկենասին՝ Հայոց իշխան Սահակ Բագրատունուն, պատմահայրը ընդգծել է. «Թեպետ մենք փոքր ածու (ազգ) ենք եւ թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ եւ շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց եւ այնպես մեր երկրումն էլ գրելու եւ հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել, որ նրանցից ոչ ոք հոգ չտարավ գրի առնելու»:

Մ. Խորենացին իր Պատմությունը գրել է հայ ժողովրդի համար ստեղծված չափազանց դժվարին եւ վտանգավոր մի ժամանակաշրջանում: Հայաստանը արդեն տասնյակ տարիներ էր, ինչ բաժանվել էր պարսկական եւ բյուզանդական բռնապետությունների միջեւ, հայ ժողովուրդը կանգնած էր ձուլման վտանգի առջեւ, հասարակության լայն զանգվածները հիասթափվում էին, հուսալքվում: Ահա, այդ պահին անհրաժեշտություն զգացվեց հայությանը ոգեկոչել ու մղել համազգային ինքնագիտակցության: Մ. Խորենացին շարունակեց Մ. Մաշտոցի, Ս. Պարթևի, Ե. Կողբացու, Կորյունի, Ազաթանգեղոսի, Բուզանդի սկսած գործը:

Անմահ պատմահայրը պատմական բոլոր գործիչներին գնահատում է՝ ելնելով հայրենիքի հանդեպ նրանց կատարած ծառայություններից: Նա դուրս է գալիս աշխարհայացքի իր սահմաններից, նկատի չառնելով հեթանոս թե քրիստոնյա լինելը, փառաբա-

Մուն է հայրենասեր, ժողովրդասեր, մարդասեր այնպիսի անհատների, որպիսիք են Արտաշես Պարթևը, Տիգրան Մեծը, որոնք միաբանեցին եւ հզորացրին Հայաստանի կենտրոնական պետությունը: Արտաշես թագավորը կառուցեց Արտաշատ մայրաքաղաքը, հոգ տարավ ժողովրդի բարօրության համար, բազմամարդացրեց երկիրը, հաստատեց սահմանները, մշակել տվեց լեռնային եւ դաշտային բոլոր հողերը, զարգացրեց արհեստները, շենացրեց երկիրը՝ ունենալով հզոր բանակ, ստանալով ժողովրդի աջակցությունը:

Մ. Խորենացու ուշադրությունից չէր կարող վրիպել աշխարհաշեն Տիգրան Մեծը: Նա ներկայացնում է Տիգրան Մեծի ծավալած սխրանքը Հայոց պետության հզորացման, ուժեղ բանակի ստեղծման, ժողովրդին հելլենիստական մշակույթին հաղորդակից դարձնելու բնագավառներում: Պատմահայրը Տիգրանի մասին գրել է. «Սա մեր թագավորներից ամենահզորը եւ ամենախոհեմն էր եւ նրանց բոլորից քաջ... Նա մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչեւ հին բնակության սահմանների ծայրերը... Տղամարդկանց գլուխ կանգնեց եւ ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց... Հետեւակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողները հաջող աղեղնավորներ, լախտերով կռվողները զինվեցին սրերով եւ տեգավոր նիզակներով, մերկերը պատվեցին վահաններով ու երկաթ զգեստներով: Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեցին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլն ու շողքը բավական էին թշնամիներին հալածելու եւ վանելու: Նա խաղաղություն ու շենություն գցեց, բոլորին լիացրեց յուրով ու մեղրով»:

Խորենացին հարգանքով նշում է նաեւ Տիգրան Մեծի բնավորության բարենասնությունները, ընդգծում նրա արդարադատ եւ հավասարասեր լինելը, լավագույններին գնահատելը, նվաստներին չարհամարհելը, ժողովրդի խնամքն ապահովելը: Պատմահայրը նշում է նաեւ Տիգրան Մեծի քաղաքագետ լինելը: Այդ ամենի շնորհիվ նա կարողացավ պարտության մատնել Հայոց աշխարհի թշնամիներին՝ մարերի թագավոր Աժդահակին, հռոմեացի Լուկուլլոսին եւ բոլոր նրանց, ովքեր ձգտում էին խախտել մեր երկրի սահմանները:

Մ. Խորենացին իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ

Չատագովում է հասարակության եւ բանակի անխախտ միությունը, միաժամանակ նշում, որ դա հնարավոր է միայն սեփական պետություն ունենալու դեպքում: Պատմահոր մատյանն ավարտվում է «Ողբ»-ով, որի քաղաքական պատճառներն ընդգծվում է հենց սկզբից: Հայրենասեր պատմիչը ողբում է, որովհետեւ վերացան Հայաստանի թագավորն ու քահանան, խորհրդակազմն ու ուսուցանողը, վրդովվեց երկրի խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, հիմնավորվեց տգիտությունը եւ չարափառությունը, խորացան սոցիալական հակասությունները, տիրեցին անկարգությունը, անարդարությունը, տգիտությունը, իշխեց չարագործության մթնոլորտը: Եվ ամենից աղետալին այն է, որ ինչպես գրում է պատմահայրը, զինվորականները դարձել էին «անարի, պարծենկոտ, զենքատող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, զինեմուլ, ելուզակ, ավազակներին համաբարո»:

Խորենացու «Ողբը», սակայն, հուսալքության ճիչ չէ, այլ պետության, եկեղեցու, հասարակության միասնությունն ապահովելու եւ ուժեղ բանակ ունենալու անհրաժեշտ դաս:

Ազգային միապետություն ստեղծելու, ժողովրդական լայն զանգվածների եւ բանակի անխախտ համագործակցությունն ունենալու ջատագով էր նաեւ 5-րդ դարի անմահ պատմիչներից մեկը՝ Եղիշեն, որ դարերին է հանձնել «Վարդանի եւ հայոց պատերազմի մասին» ոսկյա մատյանը: Պատկերելով 451թ. Վարդանանց պատերազմը, նա նախ խստորեն քննադատել է պարսից արքա Հազկերտ Երկրորդին, խարազանել այն ժամանակվա հայոց մարզպան Վասակ Սյունեցու դավաճանությունը եւ այդ հակասական իրադարձությունների համապատկերի վրա կերտել Վարդան Մամիկոնյանի վեհ կերպարը, որ հայոց զորագնդերի գլուխ անցած մարտնչել է օտար հրոսակների դեմ եւ իր նահատակությամբ ապահովել իրեն ծնող ժողովրդի հավերժությունը: Արտացոլելով 451թ. համաժողովրդական ապստամբությունը, Եղիշեն ընդգծել է, որ վտանգի պահին հայրենիքի եւ ժողովրդի պատիվը փրկում են ժողովրդի ծոցից ելած հայրենասեր տղամարդիկ, կանայք, աշխարհականներն ու հոգեւորականները, երիտասարդներն ու ծերերը, որոնք դառնում են մի սիրտ ու մի կամք:

Անմահ պատմիչը փառաբանում է ուժեղ կամք ու տոկունություն ունեցող հայրենասեր կանանց, որոնք խիզախում են ոչ մի-

այն մարտի դաշտում, այլեւ զրկվելով իրենց անուսիններից եւ որդիներից, հաղթահարում են կյանքի հարուցած նեղությունները, զրկանքներն ու թշվառությունները: Պարսից արքա Յազկերտ Երկրորդի զինված ավազակախմբերի դեմ հայ մարտիկները ցուցաբերում են անօրինակ սխրագործություններ: Ավարայրի ճակատամարտում երկրի եւ ժողովրդի ապագային իրենց կյանքն են նվիրել Վարդան Մամիկոնյանը, Խորեն Խորխոռունին, Արտակ Պալունին, Տաճատ Գնթունին, Յմայակ Դիմաքսյանը, Ներսեհ Քաջբերունին, Գնունյանց Վահանը, Արդար Արսենը, Գարեգին Սրվանձտյանը: Մեծ զոհեր են տվել նաեւ թագավորական, Արծրունյաց եւ այլ նախարարական տները: Համաժողովրդական այդ պայքարում հայոց զոհերի թիվը հասնում է 1036 մարդու, իսկ թշնամիներից ընկնում են հայերից երեք անգամ ավելի:

Վարդանի եւ վարդանանց հերոսական անհավասար կռիվը հնարավորություն է տվել հայ ժողովրդին պահպանելու նախարարական տների իրավունքները, հայրենի հավատն ու լեզուն: 451թ. ազատագրական պայքարի շարունակությունը հանդիսացավ 481-484թթ. նաքառունը Վահան Մամիկոնյանի ղեկավարությամբ, որ 486թ. ճանաչվեց որպես Հայաստանի մարզպան: Այդ մասին է վկայում 5-րդ դարի ականավոր մատենագիրներից մեկը՝ Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմություն» գրքում:

Հայ ժողովրդի պատմության մեջ արհավիրքներով լի մի նոր դարաշրջան սկսվեց, երբ արաբական խալիֆայության զորքերը ներխուժեցին Հայաստան: Արաբստանի ցեղերը միավորվելով Մուհամմեդի ստեղծած «Ղուրանի» հորդորներով, սկսեցին ասպատակել հարեւան երկրները: Շուտով Պարսկաստանը հրաժարվեց զրադաշտական հազարամյա կրոնից եւ ընդունեց մահմեդականություն: Դժվարին կացության մեջ էր Հայաստանը: Նրա թշնամիների՝ պարսկական եւ բյուզանդական բռնապետություններին ավելացավ երրորդը՝ խալիֆայությունը: Այդ աղետալի ժամանակների մասին գրել է Սեբեոսը իր հայտնի Պատմության մեջ: Նա ցատումով է հայտնում բյուզանդական Մորիկ կայսրի եւ պարսկական թագավոր Խոսրով Ապրուեզի վարած հայակործան նենգ քաղաքականության մասին: Նրանք ձգտում էին վերացնել հայկական զինված ուժերը եւ ապա շարունակել ձուլման գործը:

Այստեղ տեղեկացնենք ընթերցողներին, որ թեկուզ 428 թվակա-

Մինչ լրիվ վերացվել էր հայոց պետությունը, սակայն հայ նախարարական տները իրավունք ունեին պահել զորագնդեր իրենց կավածքներին համապատասխան քանակով: Եվ երբ անհրաժեշտ էր լինում՝ պարսկական արքունիքը եւ բյուզանդական կայսրությունը պահանջում էին ենթակա նախարարներից ներկայանալ իրենց զորագնդերով՝ մասնակցելու ընթացող պատերազմներին: Իսկ Արեւելքում հայտնի էր Հայոց այրուձիու անպարտելի ուժն ու համբավը: Այն ժամանակ միայն պարսկական տիրապետության տակ գտնվող Հայաստանյան մասից 15 հազարանոց զորք էր ներկայանում արքունիք: Սերբոսը գրում է. «Սրանք բոլորը սպառազեն էին, ընտիր պատերազմողներ՝ քաջությամբ բորբոքված որպես կրակ, որոնք ոչ վախենում եւ ոչ էլ թիկունք էին դարձնում: Նրանց դեմքերը՝ առյուծների դեմքեր, ոտքերի թեթևությունը, որպես դաշտերում արագությամբ վազող այծյամների թեթևություն»: Նույնիսկ նման դեպքում բյուզանդական կայսրն ու պարսկական արքան սարսափի մեջ էին, որովհետեւ, երբ դանակը հասցվում էր ոսկորին, հայոց զորագնդերը սրերն ուղղում էին հենց այդ պետությունների ճնշումների դեմ: Սերբոսը ցատումով է գրում Մորիկ կայսրի նենգ մտադրության մասին, նա ձգտում էր թափուր դարձնել Հայաստանը հայ իշխաններից եւ զորքից: Ահա Մորիկ կայսրի նամակի պատճենը Խոսրով Ապրուեզին, որ բերում է Սերբոսը իր գրքում. «Մի խոտոր եւ անհնազանդ ազգ են... գտնվում են մեր միջեւ եւ պղտորում են: Բայց եկ... ես իմնց հավաքեմ եւ ուղարկեմ Թրակիա, եւ դու քոնոնց հավաքիր եւ հրամայիր տանել արեւելք: Որ եթե մեռնեն, թշնամիները մեռնեն, եւ եթե սպանեն, թշնամիներին սպանեն, եւ մենք խաղաղ ապրենք: Որովհետեւ եթե դրանք իրենց երկրում լինեն, մեզ հանգիստ չի լինի»:

Սերբոսի Պատմության մեջ ներկայացված 7-րդ դարի հայ քաջարի զորապետ իշխաններից են Սմբատ Բագրատունին, Մուշեղ Մամիկոնյանը: Ահա Սմբատ Բագրատունու սխարանքներից մեկ օրինակ, որ բերում է պատմիչը իր գրքում: Մուշեղ Մամիկոնյանի ողբերգական մահից հետո Մորիկ կայսրը Թրակիայում պատերազմելու նպատակով հայերից կրկին զորք է պահանջում, Մուշեղին արդեն փոխարինում էր Սմբատ Բագրատունին: Վերջինս հրաժարվում է կատարել կայսեր հրամանը, որովհետեւ գիտեր, որ նրա նպատակն էր Թրակիայում ոչնչացման մատնել հայոց զորքը: Սմ-

Մբատ Բագրատունին ավելի լավ էր համարում մահը հայրենիքում եւ պատրաստվում էր ապստամբության: Սակայն գտնվում են լրտեսներ, որ կայսրին հայտնում են Սմբատի մտադրության մասին: Սմբատ Բագրատունուն տանում են Բյուզանդիա եւ մահապատժի դատավճռով նետում կրկեսի արեմա՝ գազաններին կեր դառնալու: Սմբատը, ինչպես նկարագրում է Սեբեոսը, հաղթանդամ այր էր, գեղեցիկ տեսքով, բարձրահասակ ու լայնալանջ, ուժեղ ու ջղատ մարմնով: Նա շատ պատերազմներում էր ցույց տվել իր քաջությունն ու զորությունը: Օրինակ, երբ նա ամեհի ու հզոր երիվարի վրա անցնում էր խիտ անտառով եւ զորավոր ծառերի տակով, ձգվելով բռնում էր ծառի ճյուղից եւ ազդրերով ու ոտքերով ամուր գրկելով երիվարի մեջքը՝ ազդրերով բարձրացնում էր գետնից: Ահա նման քաջարի իշխանին մերկացնում են եւ վարտիք հագցնելով գցում գազանամարտի: Սեբեոսը գրում է. «Եվ նրա վրա արծակեցին մի արջ: Եվ եղավ՝ երբ արջը հարձակվեց նրա վրա, նա բարձրագոյ աղաղակեց եւ ընթացավ արջի վրա ու իր բռունցքով խփեց ճակատին եւ տեղնուտեղը սպանեց նրան:

Երկրորդ անգամ նրա վրա արծակեցին ցուլ: Իսկ նա բռնեց ցլի եղջյուրներից: Երբ ցուլը մարտում հոգնեց, Սմբատը վիզը ոլորեց եւ ջարդեց գլխի երկու եղջյուրները, ցուլը թուլացավ եւ հետ-հետ գնալով փախավ: Իսկ նա հետապնդելով՝ բռնեց նրա պոչն ու մի ոտքի կճղակը եւ պոկեց կճղակը, որը մնաց իր ձեռքին: Եվ ցուլը նրանից փախավ գնաց՝ մի ոտքն անկճղակ:

Երրորդ անգամ նրա վրա առյուծ արծակեցին: Եվ եղավ՝ երբ առյուծը հարձակվեց նրա վրա, Տիրոջ կողմից նրան այնպես հաղորդվեց, որ բռնելով առյուծի ականջից՝ հեծավ նրան: Եվ իսկույն բռնելով շնչափողից՝ խեղդեց առյուծին ու սպանեց»:

Տեսնելով Սմբատի այս սխրանքը, կրկեսի հանդիսականների աղաղակով ներում խնդրեցին թագավորից: Այդ ժամանակ նաեւ թագավորի կինը ընկավ նրա ոտքերը, խնդրեց ներում շնորհել Սմբատին, քանի որ նա սիրելի էր թագավորին ու նրա կնոջը: Լսելով կնոջ ու ողջ պալատականների պաղատանքները, կայսրը հրամայեց ներում շնորհել նրան: Սմբատին աքսորում են Աֆրիկա: Սակայն նա փախչում է աքսորից, ծառայում պարսից խոսրով թագավորի մոտ, քուշաների դեմ մղված մարտերում աչքի ընկնում քաջագործություններով: Խոսրովը նրան ուղարկում է Վրկանի մարզ-

պան, որը եւ կարգավորում է բոլոր գործերը եւ ծառայում իր ժողովրդին:

Սերեոսի Պատմության մեջ ներկայացվում է նաեւ Թեոդորոս Ռշտունին, որ արաբների Չայաստան ներխուժումից հետո նշանակվում է երկրի կառավարիչ: Թեոդորոս Ռշտունուն հաջողվում է պայմանագիր կնքել արաբ Մավիասի հետ, պետականության որոշ իրավունքներ ձեռք բերել, երկրից դուրս վճռել հունական զորքերին: Որոշ ժամանակ տիրում է խաղաղություն, զարգանում է գիտությունը, ճարտարապետությունը, մշակույթը: Կառուցվում են Աղթամարա վանքը, Ջվարթնոցը: Թեոդորոս Ռշտունու օրոք աչքի ընկավ հայոց այրուձին:

7-10-րդ դարերի հայ մշակույթի ներկայացուցիչներ Մ. Կաղանկատվացին, Յ. Մամիկոնյանը, Ղեւոնդը, Թ. Արծրունին, Յ. Դրասխանակերտցին իրենց մատյաններում պատկերել են հայ ժողովրդի մահու եւ կենաց մաքառումները, որն ուղղված էր մի սրբազան նպատակի՝ երկրից դուրս վճռել օտարներին, վերականգնել պետականությունը, ունենալ ուժեղ բանակ, ապահովել ժողովրդի անվտանգությունը: Չայ ժողովրդի հերոսական պայքարին մշտապես մասնակցել է Արցախը՝ հավատարիմ պետություն ունենալու իր վճռին, միշտ լինելու Առաքելական եկեղեցու հետ, իր սեփական ռազմական ուժերով պաշտպանելու հայրենի հողն ու օջախները: Այս առումով հետաքրքիր տեղեկություններ կան Թ. Արծրունու «Արծրունյաց տան պատմություն» աշխատության մեջ: Ծագումով թուրք, խալիֆայության զորապետ Բուղան Չայաստան ուղարկվեց 850 թվականին՝ Մուշում Յուսուֆ դաժան ոստիկանին հայերի կողմից սրախողխող արվելուց հետո: 200 հազար զորքերի գլուխ անցած Բուղան ավերեց Մուշը, Դվինը, Թիֆլիսը եւ իր գալստյան երկրորդ տարում ելավ գնաց Աղվանից կողմերը: Այն ժամանակ, ինչպես հայտնում է Թովմա պատմիչը, Աղվանքի մեծ մասին տիրում էր Եսայի Ապունուսեն, որը հայտնի էր որպես կարդացող եւ ճանաչված էր երեցի որդի: Իսկ երբ Եսայի Ապունուսեն լսեց, թե Բուղան վերցրել է զորքը եւ գալիս է իր վրա, հրաման տվեց իր ողջ երկրին՝ ելնել եւ բռնել լեռնակողմերը, ջանք թափել, ուժով եւ արիասրտությամբ դիմադրել: Բուղան իր զորքով հասնում է Պարտավ մեծ քաղաքը, մտադրվում է չարության թույնը թափել Աղվանից իշխանի վրա: Բուղան մարդիկ է ուղարկում Եսայի իշխանի

մոտ, հորդորելով հնազանդություն: Բայց Ապունուսե Եսայը չլսեց նրա խոսքերը, քանզի լավ գիտեր նրա խաբեբա բնավորությունը: Եսայի Ապունուսեն հավաքեց երկրի ամբողջ բնակչությանը՝ կանանց, երեխաներին եւ Աղվանից երկրից ուրիշների՝ ռամիկ շինականների բազմությանը, զորականների սակավաթիվ գնդերը լեռան վրա՝ Քթիշ անվանված ամրոցում: Քթիշը ամրոց էր Արցախի մյուս Յաբանդ գավառում: 15-րդ դարից հիշվում է Տող անունով՝ Դիզակի մելիքանիստ գյուղը: Այժմ Տողասարի վրա գտիչը կա եւ գտնվում է Մեծ Թաղերի դիմաց, Տունի գյուղի հայացքի տակ:

Բուղան իմանալով, թե ինչպիսի պատրաստություն է տեսել Աղվանից իշխանը, տարակուսեց իր մտքում: Եվ որովհետեւ բազմիցս պատերազմեց պես-պես մարտերով եւ ոչնչով չկարողացավ վնասել, կոչ արեց հպատակվել: Ապունուսեն պատասխանել է Բուղային, որի բնագիրը բերում է Թ. Արծրունին: Այդ պատասխանը վառ վկայությունն է Արցախ աշխարհի մեր նախնիների կամքի ուժի եւ ազատ ապրելու վճռականության: Ապունուսեն բացատրում է, որ աշխարհակալների համար օրենք է արքայական հոգածությանը գնալ երկիրը - իբրեւ հնազանդների մոտ, տառապանքների նեղությունները թեթեւացնել իբրեւ խնամակալներ եւ ոչ թե ավազակաբար ավարել, սրածելով ու գերեւարությամբ ավերակ դարձնել երկիրը: Հայոց իշխանը հիշեցնում է, որ եթե Բուղան արքունիքից եկել է խաղաղությունը պահպանելու, ուրեմն շենություն պիտի պարգևի, ոչ թե տարածի ավերանք ու խառնակություն: Ապունուսեն զգուշացնում է, որ ինչքան բավականանա իր զորությունը եւ քանի դեռ կենդանի է կընդդիմակայի տեր Աստծո ուժով ու զորությամբ եւ Բուղային կտեսնի ոչ թե խաղաղության սիրով, այլ զենքով, աղեղով ու սրով, քաջ տղամարդկանցով եւ ընտիր երիվարներով: Եսայ իշխանը նամակում ընդգծում է. «Եթե հաճելի է արեցնել քեզ եւ քո զորքը, արի ել այստեղից եւ գնա իմ երկրի սահմաններից: Ապա թե ջանաս զրկվել այս կյանքից՝ քո զայրույթի, կատաղության պատճառով եւ ոսկորներդ ցրես անապատներում ու դառնաս երկրի գազանների, երկնի թռչունների կերակուր, քո կամքը թող լինի, ես անպարտ եմ քո արյան համար, մանավանդ որ մեծ բարեպաշտություն եմ համարում սպանել Աստծո թշնամիների...»

Արդ չեմ կամենում երկար խոսել քեզ հետ. քո ձեռքերում է խա-

Պաղաղությունն ու խառնակությունը: Եթե, ինչպես ասացի, հեռանաս ինձանից, խաղաղություն կլինի, իսկ եթե ոչ՝ պատերազմ: Կռիվ եւ ճակատամարտ: Դու կդառնաս թիրախ, իսկ իմ աղեղը՝ խոցոտող, դու ախոյան, իմ տղաները՝ հաղթանակող, դու՝ ոսոխ, իսկ իմ զորքը քեզ դատապարտող, քոնը պատերազմ կլինի, եւ մերը՝ հաղթություն, քո մարմինը եւ իմ միզակը, քո պարանոցը եւ իմ սուրը, քո ստացվածքը՝ մենք նրա ժառանգորդ, քո ավարը՝ մենք ավարառուներ, դու ավազակ, մենք կողոպտողներ, դու եղեգն, մենք դյուրավառ կրակ, դու հարդ, իսկ մենք դյուրությամբ փչող քամի, դու ծաղիկ, իսկ մենք թարշամեցնող խորշակ, դու պտղալից հանդ, մենք ապականող կարկուտ, դու շինվածք առանց հիման, իսկ ես հիմնիվեր տապալող հեղեղ, դու լեշ, իմ զորքը հոշոտող գազան, որ պատառոտում է քո սրտի առագաստը, դու խաղալիք, իսկ մենք մանուկներ, որ բռնելով քո զորությունը, խաղում, կատակում ենք քեզ հետ եւ քո այդ ողջ հպարտության ու անբարտավանության հետ, դու վայրի երե, մենք որսորդներ, դու թռչուն, մենք բարձրությունից քեզ ցած ենք իջեցնում եւ ձգում որոգայթի մեջ, դու ծովի վիշապ, մենք կարթ, քո քիմքից վեր ենք ձգում քեզ անդունդների խորքից, դու իբրեւ եղջերու առանց եղջյուրների, մենք արծիվներ քո վրա, քո աչքերը կուրացնողներ, որ քո լեշը զցում ենք իմ ձագերին եւ խորշերում բնակվող աղվեսներին: Եվ ահա դարձյալ եմ ասում. անհաստատ է քո ունեցածը: Եվ մինչեւ որ քեզ վրա չվերցնես այն, ինչ խոսեցի քո պատգամավորների հետ, ու ավելի ջանաս վտանգել մեզ՝ դու կընդունես վտանգավորը»:

Հայ ժողովրդի ճակատագրի ճշմարտացի, ուսուցանող վավերագրություն է 10-րդ դարի մատենագիր Հ. Դրասխանակերտցու «Հայոց պատմություն» գիրքը, որտեղ ներկայացված է արաբական տիրապետության վերջին շրջանը եւ այն չարչարանքները, որ հասցնում էին Խալիֆի ոստիկանները հայությանը: Եիշտ է, 885թ. խալիֆաթը հաշտվեց հայոց թագավորության վերականգնման հետ, սակայն չէր հեռանում Հայաստանից: Այդ ժամանակ լինելով կաթողիկոս, Հ. Դրասխանակերտցին որպես առաջադեմ գործիչ, ջատագովել է հայոց պետականության վերականգնմանը: Նա գոհունակությամբ է արտահայտվել այն պատմական անձնավորությունների մասին, ովքեր նպաստել են պետության ամրապնդմանը եւ զինվորների քաջագործություններին: Այս առումով հետաքրքիր

են Բագրատունի թագավորների վարած խաղաղության ու ներքին տնտեսական զարգացման քաղաքականությունը: Պատմիչը միաժամանակ վշտանում էր, երբ ժողովուրդը ստիպված պատերազմներ էր մղում եւ կրում զոհեր: Պատմագիրը համակրանքով է խոսում Սմբատ Առաջինի մասին, բնութագրում նրան որպես հերոսական ու անրական պետական գործիչ, որը շարունակում էր իր հոր գործը, սակայն արաբական ազդու կայազորը Դվինում դեռ ջանում էր ջլատել հայոց միաբանությունը:

Դրասխանակերտցին հաճույքով է խոսում այն մասին, որ Բագրատունիները ջանում էին թեթևացնել ժողովրդի վրա դրված հարկերի ծանր բեռը: Այդ շրջանում հայ ժողովուրդը հարկատու էր եւ խալիֆաթին, եւ Ատրպատականի ամիրապետին: Պատմիչը ատելությամբ է բնութագրում խալիֆաթի ներկայացուցիչներին՝ Յուսուփին, Բեշիրին, որոնք ցուցաբերում էին գայլաբարո դաժանություններ: Մատենագիրը փառաբանում է նրանց, ովքեր դրսեւորում են պետական եւ ռազմական գործչի վճռականություն եւ քաջություն: Դրանցից են Աշոտ Երկրորդը, Գեւորգ Մարզպետունին եւ նրանց զինակիցները, որոնց քաջագործությունների շնորհիվ հայ ժողովուրդը թոթափում է արաբական լուծը եւ անկախանում:

Յ. Դրասխանակերտցին իր «Յայոց պատմություն» գրքով պատգամում է հայ սերունդներին, որ ժողովուրդը կարող է հարատեւել միայն այն դեպքում, եթե ունի ամուր պետություն, բանակ եւ համախմբված է Գրիգոր Լուսավորչի հիմնադրած առաքելական եկեղեցու շուրջ:

Ժողովրդի փրկությունը պետականության հետ կապելու եւ բանակ ունենալու գաղափարն է անցնում նաեւ հայ միջնադարյան եւ մատենագիրների, եւ գրողների երկերում:

Պատմիչներ Արիստակես Լաստիվերցին (XI դար), Ասողիկը (X-XI դդ.), Մատթեոս Ուոհայեցին (XII դար), Վ. Արեւելցին, Կ. Գանձակեցին (XIII դար), Ստ. Օրբելյանը (XIII դար), Ա. Դավրիժեցին (XVII դար) եւ ուրիշներ իրենց մատյաններում հաստատում են մի ճշմարտություն՝ ունենալ պետականություն, ուժեղ բանակ եւ հավատարմություն առաքելական եկեղեցու սուրբ ուխտին:

Յայոց պատմության դառն ընթացքում արհավիրքների շարքը հաճախակի դարձավ առանձնապես սելջուկ թուրքերի ներխուժումից հետո: Անընդմեջ հարձակումների եւ ավերածությունների

Կատճառով մեր ժողովրդի լայն զանգվածները ստիպված թողնում էին բուն Հայաստանը եւ տեղափոխվում օտար ափեր: Դրա հետեւանքը եղավ Կիլիկիայի հայոց պետության ստեղծումը II-րդ դարի վերջին: Ռուբինյանների հիմնադրած կիլիկյան պետությունը հարատեւեց մինչեւ 1375 թվականը: Իր գոյության ընթացքում Կիլիկիան պետություն ունենալու շնորհիվ տարավ բազում հաղթանակներ բյուզանդական, արաբական, մոնղոլական, թուրք-սելջուկյան հրոսակների դեմ: Պետության-բանակի-ժողովրդի կուռ համագործակցության մասին ստեղծվել են պատմա-գեղարվեստական երկեր, չափածո գործեր, առակներ: Այդ գրականության ակունքների մոտ կանգնած էին բանաստեղծ Ն. Շնորհալին, Կ. Երզնկացին, Հ. Թլկուրանցին, Ա. Բաղիշեցին, առակագիրներ Մ. Գոշը, Վ. Այգեկցին եւ այլոք:

Պետության հովանավորության շնորհիվ զինվորականության ազգապահպանման սխրանքին նվիրված քաջագործությունների արդյունք են Ն. Շնորհալու աշխարհիկ շարականները եւ պատմական պոեմները: Մեծ բանաստեղծը իր «Յիշեսցուք» եւ «Ձարթիք» երգերը ստեղծել է Կիլիկիայի Հռոմկլա բերդը պահպանող հայ զինվորների համար, որպեսզի նրանք օտար երգերի փոխարեն երգեն հայերեն: Այդ երգերը ունեն ազգային-հայրենասիրական նշանակություն: Պատահական չէ, որ այդ երգերը մտցվել են գիշերային ժամերգության մեջ: Այստեղ նկարագրված է քնարական հերոսի՝ բանաստեղծի ապրումները՝ ժողովրդի դրության, նրա հոգեւոր մշակույթի պահպանման վերաբերյալ: «Ձարթիք» բանաստեղծությամբ Շնորհալին կոչ է անում բուրին.

«Ձարթիք, նոր ժողովուրդ,

Նոր երգս առեալ նորոգողին ալելուիս»:

Պետություն-բանակ-ժողովուրդ միասնության նշանակությունն ընդգծելու միտումով Ն. Շնորհալին, որ նաեւ կաթողիկոս էր, իր ստեղծագործություններում հավասար փառաբանել է եւ եկեղեցական գործիչներին, եւ ազգային հերոսներին՝ այդ բնագավառում լինելով առաջինը: Այս առումով ուշագրավ են Տրդատ Մեծին, Գրիգոր Լուսավորչին, Խոսրովդուխտին, Աշխենին նվիրած շարականները: Մյուս կողմից էլ բանաստեղծ-կաթողիկոսը ստեղծել է երկեր Վարդանանց պատերազմի հերոսների մասին, ոգեկոչելով Վ. Մամիկոնյանի եւ նրա զինակիցների հիշատակը՝ հանուն պետական

Վանկախության եւ հայրենիքի ազատության: Պետք է ընդգծել, որ Ավարայրի ճակատամարտի հերոսներին նվիրված առաջին գործերը գրել է Ն. Շնորհալին, որոնք հայտնի են «Նորահրաշ պասկավոր» եւ «Արիացեալք» խորագրերով: Այդ երգերը հնչել են զորահանդեսներում, բեմերում՝ Վարդանանց ներկայացումների ժամանակ: Շնորհալին փառաբանել է հայոց բանակի զորագլուխ Վարդան Մամիկոնյանին, պատերազմի ժամանակ երկրորդ գնդի զորագլուխ Խորեն Խորխոռունուն, ապա Արտակին, Հմայակ Դիմաքսյանին, Տաճատ Գնթունուն, Վահան Գնունուն, Արսենին, Գարեգին Սրվանձտյանին: Բանաստեղծությունն սկսվում է Վ. Մամիկոնյանի փառաբանումով.

Նորահրաշ պասկաւոր եւ զօրագլուխ առաքինեաց,
Վառեցար զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու,
Վարդան, քաջ նահատակ, որ վանեցեր զքշնամին,
Վարդագոյն արեամբ քո պսակեցեր զեկեղեցի:

Բանաստեղծը չի մոռացել շարքային մարտիկներին, որոնք զոհել են իրենց կյանքը հանուն հայրենիքի.

Բամկական խումբ հազարաց եւ երեսնից թիւ ընդ վեցից,
Որք ընդ նոսին նահատակեալ արիաբար պատերազմաւ,
Եւ հեղին զարինս իւրեանց ի նորոգումն եկեղեցւոյ,
Ընդ նոսին պսակելով երկնաւոր հանդիսադէն:

«Նորահրաշ» բանաստեղծության շարունակությունը կազմում է «Արիացեալք» երգը, որտեղ Ն. Շնորհալին արծազանքելով Եղիշեին, փառաբանում է այն հերոսներին, ովքեր ելել են Հազկերտ Երկրորդի դեմ.

Արիացեալք առ հակառակոն.
Քաջութեամբ առնուլ զվրեժ խաբէութեան,
Հանճարեղք ի հատուցումն դաւանանցն,
Չամբարշտացն արդարադատ չափմամբ...

Ն. Շնորհալին երգեր է նվիրել նաեւ եկեղեցական այն գործիչներին, ովքեր Վ. Մամիկոնյանի հետ միասին մարտնչել են Հազկերտ Երկրորդի հրոսակների դեմ: Եկեղեցու կարկառուն ներկայացուցիչը Ղեւոնդն է: Ինչպես տեսնում ենք, անմահ բանաստեղծը փառաբանել է համազգային հերոսների սխրանքը, անձնուրաց հայրենասիրությունը: Ասել է թե՛ ժողովուրդը հարատևում է պետության եւ բանակի գոյությամբ՝ հայրենի հավատի օրհնանքով:

Ժողովուրդը միշտ գիտակցել է, որ իր հարատևումը կախված է սեփական ուժին ապավինելուց: Այս գաղափարը նա ընդգծել է նաև իր առակներում, որոնցից օգտվել է նշանավոր առակագիր Վ. Այգեկցին: Բերենք դրանցից երկուսը: Ժողովրդի պատկերացմամբ պետական գործիչները արդարամիտ եւ հոգատար պիտի լինեն, որպեսզի կանգուն մնա պետությունը: Ահա Այգեկցու մշակած առակներից մեկը՝ «Իշխանը եւ այրի կինը»:

Մի իշխան կար խիստ չար եւ անիրավ: Նույն քաղաքում ապրում էր նաև մի այրի կին: Իշխանը հարկ պահանջելով նեղում էր նրան, իսկ այրի կինը աղոթում էր, որ իշխանը երկար ու խաղաղ կյանք ունենա: Գնացին ասացին իշխանին, թե քո չարության համար այրին աղոթում է: Իշխանը եկավ եւ ասաց.

- Ես քեզ բարիք չեմ արել, ո՛վ կին, դու ինձ համար ինչո՞ւ ես աղոթում:

Այրի կինն ասաց.

- Քո հայրը վատ մարդ էր, ես անիծեցի, եւ նա մեռավ: Դու նստեցիր նրա տեղը՝ ավելի խիստ չար: Այժմ վախենում եմ, որ մեռնես եւ քո որդին քեզնից ավելի չար լինի:

Վ. Այգեկցին մյուս կողմից էլ հարազատ մնալով ժողովրդի երազանքին, դարերին է հանձնել «Իմաստուն զինվորը» առակը.

Մի իմաստուն զինվոր պատերազմ էր գնում, նա երկու ոտքով կաղ էր: Ձինվորներից մեկը նրան ասաց. «Ո՛վ ողորմելի, ո՞ւր ես գնում: Քեզ իսկույն կսպանեն, որովհետեւ փախչել չես կարող:» Իսկ նա ասաց. «Ո՛վ անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, կռվելու եւ հաղթելու»:

13-րդ դարի սկզբին թաթար-մոնղոլները ներխուժեցին Հայաստան: Ժողովուրդը նոր տառապանքներ կրեց: Սակայն ճկուն եւ խոհեմ գտնվեց Խաչենի իշխան Հասան Ջալալյանը: Նրա շնորհիվ Արցախը որոշ չափով զերծ մնաց ավերածություններից: Ավելի ճկուն գտնվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը: Մոնղոլների հետ պայմանագիր կնքվեց, որի հետևանքով նրանք չներխուժեցին Կիլիկիա: Բայց քանի որ Հայաստանը զրկված էր պետականությունից, ուստի ժողովուրդը ընկավ ծանր հարկերի տակ եւ հաճախակի էր սրի մատնվում: 13-րդ դարի բանաստեղծ Ֆրիկը այդ օրերի արհավիրքի մասին գրել է. «Հիմիկ դըժարեց բաներս որ Թաթար եղավ թագավոր»:

Պարզ է, որ Թաթար թագավորի անօրեն ու դաժան տիրապետության շրջանում ժողովուրդը չէր կարող ունենալ բանակ, որով կապահովվեր նրա անվտանգությունը: Տուրքերն ու հարկերն այնքան էին ծանրացել, որ մարդիկ չէին կարողանում վճարել, եւ տուրքերի փոխարեն խլում էին երեխաներին, այդպես նաեւ Ֆրիկի որդուն: 13-րդ դարի պատմիչ Կ. Գանձակեցին իր «Յայոց պատմության» մեջ խորին վշտով է պատկերել թաթար-մոնղոլների ավերածությունները Յայաստանում: Պետությունից եւ բանակից զրկված ժողովրդի հանդեպ մոնղոլական հրոսակները վարվում էին գազանաբարո: Նրանք արգելում էին ունենալ սուր, խլում էին ձիերը: Գանձակեցին գրում է. «Պետք էր տեսնել, թե ինչպես սրերը կտոտրում են մարդկանց ու կանանց, երիտասարդներին ու մանուկներին, ծերերին ու պառավներին, եպիսկոպոսներին ու քահանաներին, սարկավազներին ու դպիրներին: Ծծկեր մանուկները քարի էին խփվում, եւ գեղեցիկ կույսերը խառնակվում ու գերվում էին»:³ Ահա, այսպես, պետությունից-բանակից զրկված երկիրը թափուր դարձավ բնակիչներից, իսկ նրա վրա արդեն շրջում էին օտարները:

Կ. Գանձակեցին հաստատում է, որ պետականության գոնե որոշ գործոն ունենալու դեպքում հնարավոր է լինում ոչ միայն ապահովել բնակչության անվտանգությունը, այլեւ զբաղվել որոշակի շինարարությամբ: Այս առումով Գանձակեցին ներքին գոհունակությամբ է գրում խաչենի իշխան Ջալալի մասին, որին ներկայացնում է որպես բարեպաշտ, աստվածասեր, հեզ ու հանգիստ, ողորմած ու աղքատասեր գործիչ: Նրան հաջողվել է երկրի բնակիչներին ամրացնել խաչեն գետի աջ ափին կառուցված Խոխանաբերդ ամրոցում եւ փրկել կոտորածից: Ջալալ իշխանը իմաստաբար գոհացրեց մոնղոլների պահանջները: Նրան մեծարելով, մոնղոլները խաչենը հանձնեցին իրեն եւ այն էլ մեծացնելով: Նրանք հրամայեցին ամեն տարի իրենց հետ պատերազմի գնալ եւ հավատարմությամբ հնազանդ մնալ իրենց: Իսկ Ջալալ իշխանը խոհեմաբար կարգավորեց իր երկիրը: Ահա, ճկուն այս քաղաքականության շնորհիվ Ջալալ իշխանը կառուցեց հոյակապ Գանձասար վանքը: Գանձակեցին հիացմունքով գրում է. «Երբ ավարտվեց, բացման մեծահանդես տոն կատարեց եկեղեցին օրհնելու համար: Այնտեղ էր նաեւ Աղվանքի կաթողիկոս տեր Ներսեսը բազ-

մաթիվ եպիսկոպոսներով, այլեւ մեծ վարդապետ Վանականը շատ ուսուցիչներով: ...Եկեղեցին օրհնեցին բազմաթիվ քահանաներով, որոնց թիվը հաշվում էին յոթ հարյուր:

Եվ երբ եկեղեցին օծումով մկրտվեց, մեծ ճաշկերույթ սարքեց Ջալալը. ինքն իր իսկ ձեռքով մատուցում էր նստածներին, եւ յուրաքանչյուրին նրա պատվի համապատասխան առատությամբ նվերներ տվեց ու ճամփու դրեց ամբոխին: Այս տեղի ունեցավ հայոց վեց հարյուր ութսունինը թվականին (1240թ.) Վարդավառի մեծ տոնի օրը»:

Հայ ժողովրդի ազատաբաղձ ոգին, պետություն եւ բանակ ունենալու երազանքը, հասարակության անվտանգությունն ապահովելու կարելիությունը հստակ պատկերված են միջնադարյան հայ դյուցազներգության եւ վիպական բանահյուսական երգերում: «Սասնա ծռեր», «Ասլան աղա», «Մոկաց Միրզեն», «Կարոս խաչ» ստեղծագործությունները այդ գաղափարների պերճախոս վկայություններն են:

Պատմությունը հայ ժողովրդի օգտին չէր ընթանում նաեւ 16-18-րդ դարերում: Հայաստանի բաժանումը Թուրքիայի եւ Պարսկաստանի միջեւ 1555թ., 1604թ. Ջուղայի եւ տասնյակ հայկական գյուղերի 300 հազարանոց բնակչության բռնազաղթի կազմակերպումը Շահ Աբասի կողմից ջլրատեցին հայ ժողովրդի ուժերը: Չնայած դրան մեր ժողովրդի հայրենասեր գործիչները Հայոց կաթողիկոսների օրհնանքով ջանքեր չէին խնայում հակաթուրքական ուժերը համախմբելու ուղղությամբ: Հայ ազգային գաղափարաբանության ձեւավորման գործում կարեւոր դեր խաղացին հնդկահայ հրապարակախոսները: Այդ ժամանակաշրջանում ընդգծվեց ռուսական կողմնորոշման գաղափարը: Ազգային ազատագրության ճանապարհին սեփական ուժերին ապավինելու խորհուրդ հանդիսացավ Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» գիրքը: Հիմնական մասով չափածո այդ ստեղծագործության մեջ հրապարակախոսը հորդորում է ժողովրդին վերածնել ազգային ոգին, ուսումնասիրել անցյալը, պահպանել հայերենը, սովորել զենքի լեզուն դեռ մանուկ հասակից:

Պարսկական եւ թուրքական բռնապետությունների ոտնձգությունները հայ ժողովրդի հանդեպ շարունակվում էին անընդմեջ: Հ. Թումանյանի բնութագրմամբ Ռուսաստանը իր վրա վերցրեց

Արեւելքի եւ Արեւմուտքի կռիվը: 1826-1827թթ. տեսանելի դարձավ հայ ժողովրդի ազատագրությունը դարավոր թշնամի բռնապետությունների վայրենությունից: Արեւելյան Հայաստանը մտցվեց Ցարական Ռուսաստանի կազմի մեջ: Թե՛ հայոց գեղարվեստական գրականության եւ թե՛ պատմաբանության մեջ Արեւելյան Հայաստանի ազատագրումը Ռուսաստանի կողմից համարվում է դրական երեւոյթ: Պատմական այդ ժամանակաշրջանի լայն ընդգրկումն ենք տեսնում Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմավեպում: Ըստ այդ ստեղծագործության Արեւելյան Հայաստանի Ռուսաստանին միացվելու իրադարձությունը քաղաքական նշանակությամբ ու սոցիալական հետեւանքով հայ ժողովրդի պատմության խոշորագույն իրադարձություններից էր: Աբովյան-հայրենասերը ազատասիրական իր ոգին արտահայտել է վեպի գլխավոր հերոս Աղասու միջոցով: Ռուս ժողովրդի հանդեպ դրսեւորելով ճիշտ հայեցակետ, Աբովյանը, այնուամենայնիվ, երազել է Հայոց պետականության վերականգնումը: Եվ ոչ միայն նա, այլեւ հետաբովյանական շրջանի հայ բոլոր դասականները տեսել եւ համոզվել են, որ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը, նրա լեզվի պահպանման միակ երաշխիքը սեփական պետությունն է, նրա սեփական բանակը: Այս գաղափարի վառ դրսեւորումներ են Ռ. Պատկանյանի, Մ. Նալբանդյանի, Պ. Պռոշյանի, Րաֆֆու, Ղ. Ալիշանի, Ղ. Աղայանի, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի եւ մյուս դասականների հայրենասիրական ստեղծագործությունները, որոնք ազգային-ազատագրական պայքարի մարտական կոչեր են: Մ. Նալբանդյանի «Ազատություն», «Մանկության օրեր», «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունները ազատագրական պայքարի մի-մի օրհներգ են: «Մանկության օրեր» ստեղծագործության կիզակետը Նալբանդյանի համոզմունքն է ժողովրդի ազատագրական պայքարի առնչությամբ.

*Ներկա օրերում այլ ի՞նչ սեւ քնար,
Սուր է հարկավոր կտրիճի ձեռքին,
Արյուն ու կրակ թշնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին:*

Հայ ականավոր մյուս դասականը՝ Ռ. Պատկանյանը, գտնում էր, որ սերունդների մեջ միշտ պետք է արմատավորել պայքարի եւ

Վանձնագրիության գիտակցությունը: «Առյուծի սթափումը» երգի մեջ դիմելով հայերին, նա ընդգծում է, որ պետք է հուժկու ձեռքերով թշնամուն «խեղդամահ անել»:

Հայ պոեզիայի կարկառուն ներկայացուցիչներից Սկրտիչ Պեշիկաշյանը դարերին հանձնեց Ձեթունի 1862թ. ապստամբությանը նվիրած «Հայ քաջորդի», «Մահ քաջորդվոյն», «Թաղում քաջորդվոյն» եւ «Հայ քաջուհին» բանաստեղծությունների շարքը: Նրանում արտացոլված է սուլթանական լծի դեմ զեթունցի հայորդիների պայքարը, որի համապատկերի վրա հառնում է հայրենիքի ազատության համար մարտնչող զինվորի վեհ կերպարը: Հայ քաջորդին ծանր վիրավորվելուց հետո իր նահատակված ընկերների մեջ իրեն որոնող մորը դիմում է այսպես.

*...Ու ծափ զարկին մեր հարց ոսկերք,
Ձի չէ՛ մեռած Հայոց կրակ,
Ու ցրնձացին անչափ զոհեր,
Ձի լուծավ վրեժ յարյան վըտակ.
Խնդաց Մասիս, մա՛յր իմ, եւ դուն
Ուրախ լուրեր տար ի Ձեթուն:*

Քնքշասիրտ Պ. Դուրյանի համար հայրենիքի ազատությունը եղել է ամենամվիրական զգացումը: Նրա դողդողուն շրթերին են հնչել հավերժաժուլի այս տողերը.

*Հեք մարդկության մեկ ոստը գոս՝
Հայրենիք մի ունիմ թըշվառ,
Չո՛զնած անոր՝ մեռնի՛լ աննշան,
Ո՛հ, ա՛յս է սոսկ ցա՛վ ինձ համար:*

Այս եւ նման պատկերները ցույց են տալիս, որ մեր պոետների միշտ էլ հուզել են իրենց ապրած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական հարցերը, որոնց լուծումն առանց պետություն եւ բանակ ունենալու անհնարին էր: Հայրենի պետականության վերականգնման, սեփական զինված ուժերի միջոցով ժողովրդի գոյատևումն ապահովելու գաղափարները արծարծել են մեծանուն Ռաֆֆին իր «Դավիթ Բեկ», «Խենթ», «Կայծեր», «Ջալալեդդին», Մուրացանը՝ «Գեւորգ Մարգարետունի», Ծերենցը՝ «Երկունք Թ Դարու», «Թորոս Լեւոնի» պատմավեպերում:

Հասարակական մեծ բովանդակություն ունեն հայ պոեզիայի վառվռուն աստղեր Յ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի հայրենասիրական բանաստեղծություններն ու պոեմները: Նրանց սրտերում ամբարված վշտի, ցավի, սարսուռի պատճառը սեփական ժողովրդի քաղաքական վտանգված վիճակն էր XX դարի սկզբին՝ հատկապես սուլթանական Թուրքիայի ճիրաններում: Մեծ Լոռեցու «Հայոց լեռներում», «Հայրենիքիս հետ» երգերը, «Թմկաբերդի առունը», «Սասունցի Դավիթ» պոեմները, Ավ. Իսահակյանի «Է՛յ, ջան հայրենիք», «Ազատության զանգ», «Հայրենի հողը», «Հայրենիքիս» երգերն ու բալլադները, Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը, Դ. Վարուժանի «Ցեղին սիրտը», «Սարսուռներ», «Հեթանոս երգեր» ժողովածուները, Սիամանթոյի «Դյուցազնորեն», «Հայորդիներ», «Հոգեվարքի եւ հույսի ջահեր», «Կարմիր լուրեր բարեկամես» գրքերը հայոց ցավի եւ մաքառման արտահայտություններ են: Որպես աղետյալ երկրի երգիչներ, նրանք ստեղծում են հայ ռազմիկի կերպարն ու հայրենիքի ազատության ակնկալիքների պատկերը: Սիամանթոն գրում է. «Ես երգելով կուզեմ մեռնիլ», Վ. Տերյանը հավատով ընդգծում է.

*Բարբարոսներ շատ կըզան ու կանցնեն անհետ.
Արքայական խոսքը մեր կըմնա հավետ:
...Որպես փյունիկ, կրակից կելնես, կելնես նոր
Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:*

Մեծ Լոռեցին հավատում է տառապած ժողովրդի ապագային, նա վստահ է, որ գալու է հույսի եւ լույսի հայրենիքը եւ իր խոսքն է ասելու աշխարհին.

*Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՛ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Հըզո՛ր հայրենիք...*

Հայոց պետականության վերածնունդը, բանակ ունենալը, հասարակության անվտանգության ապահովումը ժողովրդի ճակատագրի հրամայականով ծլարծակվեց 1918թ. Սարդարապատից հետո: Նախ համախմբվել էր պետք, թուրքը ծեծում էր Երեւանի դռները, որ սրածի հայության վերջին մնացորդները: Աստծո կամքով հայ քաջագունների վճռականությամբ համախմբվեցին ժողովրդի ուժերը, Արարատյան դաշտավայրում մի նոր մայիս ծաղկեց, որ շարունակությունն էր 451-ի մայիսի, եւ մայիսի 28-ին ծածանվեց նորահռչակ Հայաստանի Հանրապետության եռագույնը: Հայը 600 տարվա մղձավանջային շերտերից ելավ՝ սեփական օրենքները շրթերին: Հայը վերականգնեց իր պետականությունը: Ինչքան էլ դժվարին լինեին ժամանակները, 1918-ը դարձավ նաեւ նորագույն շրջանի հայ հոգեւոր կյանքի ու մշակույթի սկզբնավորման տարեթիվը: Հիրավի, դժվարին, երկփեղկված ժամանակներ էին: Մի կողմից մայր երկրում էր ստեղծվում գրականություն, մյուս կողմից արտերկրում էր արարվում, որ պիտի կոչվի սփյուռքահայ գրականություն: Այդ նույն ժամանակաընթացքում հայ բոլշեւիկներն էին քարոզում իրենց հավատը՝ հայացքները հառած դեպի լեւինյան Ռուսաստան: Մենք ընդգծում ենք այս հանգամանքն այն առումով, որ այդ ընթացքում ստեղծագործում էին դաշնակցության անդամներ Լ. Շանթը եւ Ավ. Ահարոնյանը, կոմունիստներ Վ. Տերյանն ու Ե. Չարենցը, անկուսակցական Զ. Թումանյանը եւ այլ գործիչներ: Սակայն խրախուսելին եւ այսօրվա սերնդի համար ընդունելին այն է, որ հայ գրականությունը զարգանում էր միասնական ուղիով: Այդ գրականությունը սնվում էր մեր դասականի ավանդույթներով, ոգին հայկական-ազգային էր, նպատակը՝ գոյատեւելու վճռականությունը: 1919թ. Զ. Թումանյանը գրել է. «Մինչեւ այժմ մեր գրականությունը հարազատ հող չի ունեցել իր ոտքի տակ, մեծ մասով գաղութային գրականություն է եղել: Բանաստեղծի ոտը հարազատ ու իրական հողի վրա պիտի լինի... Հայոց ապագա գեղեցիկ գրականության զարգացման գրավականը ազատ Հայաստանն է, ազատ, հարազատ հողը, ժողովուրդը»:

1918-1920թթ. ստեղծված գրական երկերում եւս ընդգծված է պետության հովանու տակ բանակի դերը եւ հասարակության սերտ կապի անհրաժեշտությունը: Այս գաղափարը կարելի է նկա-

տել համարյա բոլոր գրողների ստեղծագործություններում: Ինչ վերաբերում է Ե. Չարենցի, Վ. Տերյանի չափածո երկերին, ապա, նրանցում փառաբանվում էր Հոկտեմբերյան հեղափոխության փրկարար ուժը՝ Հայաստանի եւ ընդհանրապես փոքր ժողովուրդների նկատմամբ: 1918-1920թթ. ստեղծված հայ գրականությունը կարիք ունի կոնկրետ ու հանգամանալից ուսումնասիրության: Ցավալի երեւոյթ էր, երբ հայ բոլշեիկները այդ շրջանում կազմակերպեցին դասալիք հայոց բանակի շարքերում՝ քարոզելով, որ Աթաթուրքը Լենինի բարեկամն է, իսկ թուրք ասկերը առաջվա գազանը չէ: Այդ մոլորյալ ու հանցագործ քարոզի արդյունքում խորտակվեց նաեւ Ղարսը:

1920թ. նոյեմբերի 29-ից Հայաստանը իր ուղին շարունակեց կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ: Ճիշտ է, դժվարին, հակասական, բայց զարգացման մի նոր հունի մեջ մտավ հայ գրականությունը: 1922թ. ձեւավորվեց ԽՍՀՄ-ն, որի կազմի մեջ մտավ նաեւ Հայաստանը: Նորօրյա գրական երկերում արդեն արտացոլվում էին Խորհրդային ընդհանուր պետության, Սովետական հզոր բանակի անխորտակելի ուժը, սոցիալիզմ կառուցող ժողովուրդների դեպի բանակն ունեցած դրական վերաբերմունքը:

Ընդհանուր-սովետական պետություն-բանակ-ժողովուրդ հասկացությունները հաճախակի ընդգծվեցին Ե. Չարենցի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Ջորյանի, Ակ. Բակունցի, Ն. Ջարյանի եւ մյուս գրողների ստեղծագործություններում: Առանձնապես ընդգծվում էր այն գաղափարը, որ Կարմիր բանակում ծառայող զինվորը դառնում է մեծ երկրի, սեփական ժողովրդի պաշտպանը: Այս առումով հատկանշական են Չարենցի 1920-ական թթ. գրած գործերը: Մեծ բանաստեղծն ընդգծում է, որ խորհրդային «Մի չտեսնված մի նոր բանակ»-ը ծնվել է դեռեւս 1917թ. հոկտեմբերի 25-ի լույս 26-ի գիշերը Սմոլնիում: Իսկ Ն. Ջարյանը 1930-ական թթ. սկզբին գրած «Ռուշանի քարափը» պոեմի գլխավոր հերոսի Ալեքսանի օրինակով ապացուցում է, որ Կարմիր բանակը կոփում էր ոչ միայն հայրենիքի պաշտպան զինվորին, այլեւ լուսավորում էր նրա հոգու աշխարհը՝ հետագա գործընթացում: Ակադեմիկոս Ս. Սարինյանի բնութագրմամբ Ն. Ջարյանը Ալեքսանի կերպարով ստեղծել է նաեւ իր ժամանակը: Այդպես էլ կա: Պոեմը բացվում է հենց այդ բնութագրմամբ:

*Նա տուն էր գալիս Կարմիր բանակից,
Էն ջահել տղեն՝ անունն Ալեքսան,
Գրքերով լիքը մի պարկ շալակին
Ու դռին կարմիր աստղածեւ նշան:*

1941թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիայի մինչեւ ատամները զինված զորագնդերը ներխուժեցին Խորհրդային միություն: Ոտքի ելան հզոր երկրի բոլոր ժողովուրդները, այդ թվում նաեւ հայ ժողովուրդը: Պատերազմի արյունալից դաշտում ԽՍՀՄ տարբեր ազգերի զավակները գիտակցում էին, որ պաշտպանում են ընդհանուր երկիրը, ընդհանուր պետությունը, բոլոր ժողովուրդներին: Հայ ժողովրդի 600 հազարի հասնող զավակները երկուստեք էին ընկալում ժամանակի այդ հրամայականը: Նրանք ճանաչում էին թշնամուն, համոզված էին, որ մաքառում են հայ ժողովրդի ոխերիմ թշնամի Վիլհելմ Երկրորդի ժառանգորդ Ադոլֆ Հիտլերի հրոսակների դեմ: Ասել է թե հայ զինվորը մարտնչում էր ոչ միայն Սովետական ընդհանուր երկրի, այլեւ Հայոց աշխարհի պաշտպանության համար: Այստեղից էլ այն անօրինակ սխրանքները, որ կատարում էին մեր ժողովրդի զինվորյալ զավակները: Պատերազմի տարիներին (1941-1945) Խորհրդային երկրի գրողները հանդես էին գալիս հրապարակախոսական հոդվածներով, արձակ եւ չափածո ստեղծագործություններով: Պատերազմի հենց սկզբից Ավ. Իսահակյանը տպագրեց «Հայրենական պատերազմը եւ հայ ժողովուրդը» հոդվածը, որտեղ ընդգծված է. «Լույսի եւ ազատության այս փրկարար եւ մեծագույն պայքարին իր սրտառուչ մասնակցությունն է բերում փոքրիկ հայ ժողովուրդը, որը մեծ է, սակայն, իր քաջ որդիների հերոսությամբ, որոնք իրենց հայրենասիրությամբ ու անձնազոհությամբ վերստին տալիս են իրենց մայր ժողովրդին ազնվության նորանոր վկայականներ... Երբ պատերազմը ծագեց, հայ ժողովուրդը խորապես գիտակցեց պատմական վայրկյանի բախտորոշ էությունը՝ իր լինելու եւ չլինելու հարցը: Պետք է ուրեմն կռվել եւ հաղթանակել հանուն իր նորանվաճ ազատության, հանուն իր հին հայրենիքի պահպանման, հանուն իր մեծ հայրենիքի՝ Սովետական Միության»:

Հայ ժողովրդին հայտնի էր դարձել Հիտլերի զինակից եւ գա-

Պափարակից Գյորինգի զառանցանքը «Կանաչ թղթապանակ»-ում, ուր հրահանգված է՝ «հաշվի առնել հայերի անբարյացակամությունը» գերմանական իմպերիալիստների դեմ: 1943թ. «Պրավդա» թերթը հանդես է եկել «Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին» խմբագրական հոդվածով, ուր ընդգծված է. «Գերմանացի զավթիչները եզրափակում են հայկական վշտի, հայկական թախծի դառն տարեգրությունը: Հիշողության մեջ կենդանի են գերմանական իմպերիալիստների գազանությունները առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ... Այժմ այդ նույն թշնամին, ավելի եւս գազազած, կորցրած մարդկային ամեն մի կերպարանք, իր գիշատիչ թաթն է մեկնում դեպի Հայաստանի արգավանդ արտերը, դեպի նրա ծաղկուն գյուղերը, դեպի բարեկարգ քաղաքները, կուլտուրայի հիշատակաբանները»:

Ահա, այս դառն ճշմարտության հիշողությունն է, որ հայ ժողովրդին համախմբեց մի գաղափարի շուրջ հայրենիքում, Սփյուռքում՝ սատարել Սովետական պետությանը, ԽՍՀՄ ժողովուրդների հետ միասին ամուր կանգնել բանակի թիկունքում: Ձեւավորվեցին հայկական դիվիզիաներ, որոնք ցուցաբերեցին իրենց նախնիներին հատուկ սիրանքներ Մոսկվայի մատույցներում, Ղրիմում, Լենինգրադում, Ստալինգրադում, Դնեպրի ակերին, Գերմանական ֆաշիստների հողում, քոչարի պարեցին Բեռլինի մոտ: 600 հազար հայ մարտիկներից 66302 մարտիկ պարզեւատրվեցին ԽՍՀՄ շքանշաններով, 106 հոգի արժանացան Սովետական Միության հերոսի կոչման:

Ֆաշիզմի դեմ հաղթանակը չէր ապահովվի, եթե թիկունքը չկատարեր ռազմաճակատի պատվերները, չօգներ իր բանակին, կոնկրետ՝ եթե չլիներ բանակ-հասարակություն սերտ կապը: Փորձության այդ ժամին հայ ժողովուրդը ցուցաբերեց իր դարերի փորձությունից ծնված իմաստությունը: 1943-ին հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Նոր խնդիրներ դրվեցին գիտության եւ մշակույթի առջեւ: Ակադեմիկոս, մեծանուն Ավ. Իսահակյանը նշեց, որ գրականության նոր պարտականությունն է, որպեսզի լուսաբանի մեր գրականության ղեկավարող գաղափարները եւ հույզերը, չմոռանալով, որ այն դարերի մեջ եղել է մեր հոգեկան մթնոլորտը:

Հայ գրողները ոչ միայն հանդես էին գալիս իրենց մարտաշունչ ստեղծագործություններով, այլև անձնապես մասնակցում էին պատերազմական իրադարձություններին: Նախ, պատերազմի սկզբից 40-ից ավելի հայ գրողներ եւ գրականագետներ կամավոր մտան սովետական բանակի շարքերը: Մեծ հայրենականի հաղթանակին իրենց սրտի հուրն ու խոսքի ուժը նվիրեցին Հր. Քոչարը, Էդ. Թովչյանը, Գ. Բորյանը, Վ. Անանյանը, Հմ. Սիրասը, Գ. Սեւունցը, Թ. Հուրյանը, Գ. Հովնանը, Գ. Բեսը, Քր. Թափալցյանը, Հ. Սահյանը, Ա. Դարբնին, Ա. Ինճիկյանը, Հր. Հովհաննիսյանը, Հ. Սկրտչյանը, Բ. Ջանյանը, Մ. Սարգսյանը եւ ուրիշներ: Մի ձեռքին գրիչ, մյուսում՝ զենք, նրանք եւ զինվոր էին, եւ դիվիզիաների հայերեն լեզվով լույս տեսնող թերթերի խմբագիր կամ աշխատակից: Իսկ այն գրողները, որ մնացել էին թիկունքում, իրենց համարում էին «աշխարհագրականներ»: Հայ գրողներից շատերը զոհվեցին հեռավոր ափերում՝ հանուն մայր ժողովրդի հարատեւման: Սեւաստոպոլի քաջարի պաշտպանների շարքում էր եւ տաղանդավոր բանաստեղծ Թ. Հուրյանը, որ նահատակվելուց առաջ գրել է.

*Լավ է երգը շուրթին, ոտքի վրա մեռնել,
Քան ասրել շղթայված, որպես ճորտ ու գերի:*

Աշխարհասփյուռ հայ ժողովրդի զավակները եւս իրենց մասնակցությունը բերեցին ֆաշիստական դեղին ժանտախտի դեմ մղվող պայքարին: Ֆրանսիական դիմադրության շարժման մասնակիցներից հերոսի մահով ընկան բանաստեղծ Գեղամ Աթմաջյանը (Սեման), արձակագրուհի Լուիզա Ասլանյանը (Լասը), հռչակավոր պոետ Միսաք Մանուշյանը: Ֆրանսիայի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ժակ Դյուկլոն գրել է. «Հայ ժողովուրդը իրավունք ունի հպարտանալու Մանուշյանի խմբի հերոսներով, որոնք շարունակում էին այն պայքարը, որ Սովետական Միության ժողովուրդները եւ նրա փառապանձ բանակը մղեցին ֆաշիզմի դեմ: Նրանք իրենց կյանքը տվեցին ժողովուրդների ազատագրության համար: Ընկեր Մանուշյանը եւ նրա մարտական զինակիցները, ֆրանսիական հողը ցողելով իրենց արյամբ, է՛լ ավելի ամրապնդեցին ֆրանսիական աշխատավորության, դեմոկրատների ու հայրենասերների սերը Սովետական Միության հանդեպ»:

Պատերազմի տարիներին հայերեն լեզվով լույս էին տեսնում «Հայկական սնայպեր», «Առա՛ջ, հանուն հայրենիքի», «Կարմիր

«Գինվոր», «Մարտիկ», «Սովետական ռազմիկ» եւ այլ թերթեր: Ինչպես նշել է ռուս հանրահայտ բանաստեղծ Ն. Տիխոնովը, սովետական գրողները հանդես էին գալիս բանաստեղծություններով, կոչերով, ակնարկներով, պատմվածքներով, թռուցիկներով, հողվածներով, ուղերձներով, որոնք շառաչում էին ինչպես պայթող ռումբեր: Նրանք իրենց գրվածքներում չէին մոռանում բանակի եւ թիկունքի համագործակցության մասին, առանց որի հնարավոր չէր լինի շահել հաղթանակը: Այս առումով հետաքրքիր էին Յր. Քոչարի, Ս. Խանգադյանի, Վ. Անանյանի ակնարկները ռազմաճակատում մարտնչող հերոսների մասին: Ռազմաճակատային դադարների պահին գինվորների առջեւ հանդես էին գալիս Յայաստանից ժամանած գրողները՝ Ն. Ջարյանը, Գ. Սարյանը, Ա. Վշտունին, Վ. Գրիգորյանը, Ս. Տարոնցին, Սարմենը, Գ. Աբովը, Զ. Սկրտչյանը եւ ուրիշներ:

Պատերազմի տարիներին ժամանակակիցներին գեղարվեստական խոսքի ուժով մեր ժողովրդի հերոսական անցյալը ներկայացրին Ն. Ջարյանը՝ «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությամբ, Դ. Դեմիրճյանը եւ Ստ. Ջորյանը «Վարդանանք» եւ «Պապ թագավոր» պատմավեպերով: Ն. Ջարյանի «Ձայն հայրենական» պոեմը դարձել էր հայ գինվորների գրպանի գիրքը:

Պետություն-բանակ-հասարակություն անխախտելի կապը նոր ոգեւորությամբ ընդգծվեց Ավ. Իսահակյանի, Ն. Ջարյանի, Զ. Շիրազի եւ մյուս գրողների երկերում: Պատերազմի հենց առաջին օրերին՝ 1941թ. հուլիսին Վարպետը գրեց «Ռազմակոչ» քերթվածը, որտեղ հնչում է նրա իմաստուն ու տազնապած խոսքը՝ ուղղված ժողովրդին:

*Է՛յ հե՛յ, լսեցեք, վեհ հայրենիքիս
Կտրիճ գավակներ, ժողովուրդներ քաջ,
Ելե՛ք, զարթնեցե՛ք, կանգնեցե՛ք արթուն,
Գիտցե՛ք, քնուն են գետերն ու քամին,
Սակայն չի քնուն երբեք թշնամին:
...Է՛յ հե՛յ, լսեցեք, ձայն տվեք իրար,
Անենքդ ե՞ք ոտքի, մարդ քնած չկա՞...*

Նույն հնչեղությունն ունեցավ նաեւ Ն. Ջարյանի «Ուղերձ իմ ժողովրդին» ծավալուն բանաստեղծությունը: Նրանում եւս հնչում է ժողովրդի դերը ազատագրական պայքարում:

*Իմ հայ ժողովուրդ, դու ազատության անմահ նահատակ,
Որտեղ էլ որ կաս այս հողմազալար երկրի երեսին,
Որ կհսագնդում, ո՞ր ծովի ափին, ո՞ր երկնքի տակ,
Լսի՞ր քո որդուն... զարկ այս հրեշին:*

Ճիշտ ու տեղին է նկատել գրականագետ Ս. Աղաբաբյանը Սեօ հայրենականի տարիներին ստեղծված պոեզիայի բնույթը: «Չայկական պոեզիայում,- գրել է նա,- հայրենիքը ըմբռնվեց նրա դարավոր պատմությամբ, քաղաքացիական ու շինարարական ավանդույթներով, բնությամբ ու մարդկանցով, անցյալով ու ներկայով, հնությամբ ու գալիքի երազներով: Այս գիտակցությունը պոեզիա բերեց Չայաստանի պատմական ու աշխարհագրական ֆակտուրան, նրա զոյության խորհրդանիշները՝ Արարատ, Յրագդան, Սեւան, նրա հին ու նոր բնանկարը, ընդարձակեց հայոց լեզվի բառարանը՝ նոր իմաստներով»: Իսկ հայ ժողովրդի նվիրյալ զավակներից՝ Մ. Շահինյանը գրել է. «Չայրենական պատերազմը նորովի իմաստավորեց հայրենիքի զգացումը. ոչ թե «ընդհանրապես», վերացական հայրենիք, որպես ինչ-որ համընդհանուր ամբողջություն, այլ իր երկրի այն կոնկրետ մասը, հողի բոլոր մանրամասնություններով թանկագին այն անկյունը, որտեղ աշխատել ես, մեծացել, սովորել, թողել մորդ ու սիրելիներիդ... Լեզուն վերադարձավ դեպի իր պարզագույն ակունքները, դեպի խորագույն, հիմնական զգացմունքներն ու պահանջները»:

Չայաստանի պատկերը, հայ ժողովրդի անկոտորում ոգին ու չխամրող երազանքը, հարատեւելու վճռականությունը գեղարվեստական յուրատիպ հնարանքներով են պատկերված Ավ. Իսահակյանի «Չայ ճարտարապետությունը», Զ. Շիրազի «Չայրենիքիս», Ն. Ջարյանի «Արզաքյանդի խնձորները» ստեղծագործություններում: Նրանցում ընդգծված շափաղում են նաեւ մեր ժողովրդի ազգային արժանապատվության ու հպարտության զգացումները: Այս եւ այլ գործերում միաժամանակ պրոպագանդվում էր ժողովուրդների բարոյա-քաղաքական միասնության կարեւորությունը:

Ինչպես ամբողջ սովետական, այնպես էլ հայկական պոեզիայում արժարժվեց ռազմաճակատի եւ թիկունքի, ասել է թե՛ բանակի եւ հասարակության միասնության թեման:

Չայրենասիրության, անձնագոհության, ժողովուրդների բարո-

յաքաղաքական միասնության, հասարակության եւ բանակի համագործակցության թեմաները լայնորեն արծարծվեցին նաեւ պատերազմի տարիներին ստեղծված արծակում: Այդ են վկայում Հր. Քոչարի, Վ. Անանյանի, Հ. Մկրտչյանի, Ստ. Կուրտիկյանի, Գ. Բեսի եւ այլ գրողների ստեղծագործությունները: Այդ ժամանակաշրջանում հրատարակվեցին Հր. Քոչարի «Հերոսների ծնունդը» (1942), «Նախօրյակին» (1943) ժողովածուները, որտեղ գրողը պատկերում է պատերազմի օրերին ծայր առած մասսայական հերոսությունը, հայ զինվորների մարտական սխրանքները: Ապա լույս աշխարհ եկան նրա «Փրկիչը», «Որդու վերադարձը», «Մարդը եւ ընտանիքը», «Սրբազան ուխտ» գործերը, որտեղ հեղինակը շոշափեց մարդու ճակատագիրը պատմական այդ դժվարին մթնոլորտում: Իր «Վարդանանք» պատմավեպին զուգահեռ թիկունքի եւ ռազմաճակատի միասնական գործողությունների մասին ուշագրավ պատմվածքներ ստեղծեց Դ. Դեմիրճյանը: Լույս տեսան նրա «Ծնողները», «Վերադարձը», «Անխուսափելին» մանրապատումները:

Հասունացած իր խոսքն ասաց պատերազմի անմիջական մասնակից Գ. Բեսը: Ջերմորեն ընդունվեց նրա «Կրակ» ժողովածուն 1944թ.: Դրվատանքի խոսք ասվեց նրա «Փոստատարը» պատմվածքի մասին: Փոստատարի կերպարով գրողը փառաբանեց մարդկային բնավորության լավագույն գծերը, առանձնապես հունանիզմը: Լուսավոր գաղափարներ արծարծվեցին Գ. Բեսի նաեւ «Կրակը», «Բժիշկը», «Զինվորի ուղին», «Պետունց Գալուն» եւ այլ պատմվածքներում: Առանց հռետորական բացականչությունների, գրողը ընդգծում է մի ճշմարտություն՝ հայրենիքը կանգուն է իր հերոս զավակներով, ժողովուրդը անվտանգ է իր պետության լինելությանը եւ ուժեղ բանակի կայացմանը:

Բանակի եւ հասարակության սերտ կապը պատկերվել են նաեւ Ստ. Ջորյանի «Անիկը», «Ժամացույցը», «Աննկատելին», «Մայրը» պատմվածքներում: Նրանցում ներկայացված կերպարները հերոսության, հոգու ամրության, անկոտրում կամքի ու հավատի մարմնավորումներ են:

Անհրաժեշտ է նշել նաեւ հայ դրամատուրգիայի դերը պատերազմի տարիներին: Այդ ժամը օրերին կարիք զգացվեց բեմում

ցուցադրել հայրենասիրական-քաղաքացիական կարեւոր խնդիրները: Սկզբնավորվեց հակաֆաշիստական դրամատուրգիան: Ն. Ջարյանը թատրոնին հանձնեց «Վրեժ» դրաման, որ ներկայացվեց մի շարք թատրոններում: Բեմադրվեցին նաեւ Գ. Սարյանի «Անտառի խորքում», Ա. Գուլակյանի «Ցասում», Ա. Արաքսանյանի «Անտառները շարժվում են», Գ. Յաղջյանի «Ձոյա», Մ. Քոչարյանի «Ռախսա Տարասովա» եւ այլ պիեսներ: Ծիշտ է, դրանցից ոչ մեկը դրամատուրգիական բարձր չափանիշները չէր բավարարում, սակայն ճշմարտությունը պահանջում էր ասել, որ հազարավոր հանդիսականներ դրանց բեմականացման շնորհիվ ինչ-որ չափով ծանոթանում էին ֆաշիզմի դեմ հայ եւ սովետական այլազգի մարդկանց միասնական մաքառումներին՝ հանուն ընդհանուր հայրենիքի եւ պետության պաշտպանության, հանուն ընդհանուր բանակի գործության:

Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո սովետական ժողովուրդը մտավ տնտեսության զարգացման նոր փուլ: Գեղարվեստական գրականությունն անմասն չմնաց այդ կարեւոր խնդրի լուծման բնագավառում: Այսօր հետադարձ հայացք ձգելով եւ ծանոթանալով Համկ(բ)Պ կենտկոմի 1946թ. որոշումներին. օգոստոսի 14-ի որոշման՝ «Զվեզդա» եւ «Լենինգրադ» ամսագրերի մասին, օգոստոսի 26-ի որոշման՝ «Դրամատիկական թատրոնների ռեպերտուարի եւ նրա բարելավման մասին», սեպտեմբերի 4-ի որոշման՝ «Մեծ կյանք» կինոֆիլմի մասին, զարմանում եւ կրկին համոզվում ես, որ կոմկուսի Կենտկոմի ավելորդ միջամտությունները գրականության եւ արվեստի հանդեպ անհատի պաշտամունքի կործանարար արտահայտություններ էին, որի հիմքում ընկած էր Վ. Ի. Լենինի 1905թ. գրած «Կուսակցական կազմակերպություն եւ կուսակցական գրականություն» հոդվածը: Այստեղից էլ զռեհիկ հասարակաբանության դրսեւորումները ոչ միայն մինչեւ Ստալինի մահը, այլեւ մինչեւ ԽՍՀՄ փլուզումը:

Ամեն դեպքում արդեն ճշտված եւ հաստատված է գեղարվեստական գրականության հաջողված կուտակումների ցանկը խորհրդային տարիներին, սակայն ափսոսանքի զգացումով ես նշում կորսված այն ժամանակները, որոնց իրենց տաղանդն են

Մովիբել ականավոր ոչ քիչ գրողներ:

Ինչեւիցե, նշենք պատմական մի տարեթիվ, որ կարելուր նշանակություն է ունեցել ոչ միայն հայ գրականության զարգացման հետագա ընթացքի, այլեւ հայ գրողների համախմբման ուղղությամբ: 1946թ. սեպտեմբերին տեղի ունեցավ Հայաստանի սովետական գրողների երկրորդ համագումարը, որի աշխատանքին մասնակցեցին ոչ միայն Հայաստանի եւ ԽՍՀՄ ժողովուրդների գրականությունների ներկայացուցիչները, այլեւ սփյուռքահայ մի շարք գրողներ. Ամերիկայից Կ. Սիտալը, Իրանից՝ Ա. Երենյանը, Հ. Ղուկասյանը, Լիբանանից՝ Վ. Վանյանը, Ֆրանսիայից՝ Ա. Չարըզը, Զ. Որբունին, Լ. Մեսրոպը, Կիպրոսից՝ Ս. Տերունյանը եւ ուրիշներ: Գրականության զարգացման նոր խնդիրների քննարկումից բացի, ընդգծվեց այն հանգամանքը, որ Սովետական Հայաստանում կազմակերպված գրական միջոցառմանը առաջին անգամ մասնակցում էին տարագիր հայ գրողներ: Եվ ամենից առավել ուշագրավ էր Ավ. Իսահակյանի բացման խոսքը, որտեղ Վարպետը առանձնապես ընդգծեց «արտասահմանի հայության մտքի եւ սրտի լավագույն ներկայացուցիչների» մասնակցությունը, որ հայոց նորագույն պատմության մեջ առաջին դեպքն է՝ ներշնչող եւ ոգեւորող: «Մեր համագումարի ամենաարժեքավոր արդյունքն այն կլինի,- նշեց Ավ. Իսահակյանը,- որ ավելի սերտանան եւ մտերմանան մեր փոխադարձ հարաբերությունները մայր հայրենիքի եւ Սփյուռքի գրականությունների միջեւ: Ներդաշնակվեն մեր ձգտումները, կառուցենք պայքարի ճակատ ընդդեմ ֆաշիզմի եւ ռեակցիայի ի շահ ժողովրդի բարգավաճման եւ միավորման, մեր պետության էլ ավելի ամրապնդման, մեծ Միության իդեալների կենսագործման»:

Անմահ Վարպետը բնութագրելով հայ գրականությունը, ընդգծեց մի ժողովուրդ՝ մի գրականություն խորհուրդը: Հայ գրականությունը համեմատելով աշխարհի ժողովուրդների գրականությունների հետ, ասաց. «Հայ ժողովրդի գրականությունն ունի առանձնահատուկ իր դոմինանտը: Համաշխարհային պատմությունը հայ ժողովրդին վիճակել է հայրենիք՝ շրջապատված հզոր, աշխարհակալ պետություններով, որոնք ձգտել են հայ ժողովրդին ստրկացնել, կողոպտել եւ ոչնչացնել: Եվ այս դարձել է հայ ժողովրդի դաժան ճակատագիրը:

Այսպիսով, հայ ժողովրդի գրականությունն ազգային գոյամար-

տի գեղարվեստական պատմությունն է ընդդեմ իր ճակատագրի:

Մեր գրականության իշխող պաֆոսը, նրա միսիան դարերի անհաշտ պայքարն է հանուն հայրենիքի ազատության եւ անկախ պետության, ընդդեմ բռնության, ստրկության»: Ապա Մեծ բանաստեղծը նշեց, որ հայ գրականությունը տարբերվում է բռնակալների, հարստահարողների, ջարդարարների գրականությունից, որ մեր գրականությունը մարտնչող, բողոքող, ազատաբաղձ ոգու գեղարվեստական արտահայտություն է՝ տոգորված աշխատանքի, հումանիզմի, արդարության վսեմ իդեալներով:

Ավ. Իսահակյանը իր բացման խոսքում նշում է նաեւ պետության դերը ժողովրդի ճակատագրում: Նա մատնանշեց, որ հայ ժողովրդի պայքարը ավելի ծանրացավ, դարձավ օրհասական, երբ սելջուկ-թուրք-մոնղոլ արշավանքները ողողեցին Հայաստանը, խորտակեցին հայ պետությունը, հայրենի երկիրն ընկավ վայրագ բնագոյներով զործող բարբարոսների լծի տակ: Ինչքան էլ դժվարին եւ օրհասական լինեին դարերը, նշում է Վարպետը, բայց եւ այնպես հայ ժողովուրդը «կարողացավ իր նվիրական մատյանների շնորհիվ, իր գութանի եւ աշխատանքի շնորհիվ պահպանել իր լեզուն, իր ոգին եւ ազգությունը»: Պետության-ժողովրդի մասին իր իմաստուն խոսքն ասելուց հետո Ավ. Իսահակյանը մատնանշում է նաեւ, որ պանծալի կարմիր բանակը փրկեց Գերմանիայի ժանրության տակ հյուժվող եվրոպական մի շարք ժողովուրդների, դառնալով փոքր ազգերի ազատության պաշտպանը եւ միեւնույն ժամանակ համաշխարհային խաղաղության հզոր գորավիզը:

Խորհրդային 70 տարիների ընթացքում ԽՍՀՄ կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդների գրականությունների մեջ ընդգծվել է ընդհանուր հզոր պետության, միասնական անպարտելի բանակի, սովետական ժողովրդի անխախտ միասնության գոյությունը, որ բոլոր հաղթանակների գրավականն էր համարվում: Նույն գաղափարների ընդգծումը գոյություն ունեւ սովետահայ գրականության մեջ:

Այսօր սովետական պետության նշանակությունը ժողովուրդների կյանքում միանշանակ ժխտելը ամեն դեպքում չի արդարացնում իրեն: Բավական է մի հետադարձ հայացք ձգել Սովետական Հայաստանի անցած ուղուն եւ համոզվել, որ ԽՍՀՄ կազմի մեջ գտնվող փոքրիկ Հայաստանը պատմության համար կարճ ժամա-

Մակաղմբացքում դարձել է գիտության, արդյունաբերության, գյուղատնտեսության, մշակույթի զարգացած մի երկիր:

Պետություն-հասարակություն-բանակ կապի լինելության կարեւորությունը ընդգծված է այդ տարիներին ստեղծած հայ պոեզիայի երեւելիների զործերում: Մեծն Պ. Սեւակը 1950թ. գրած «Հայաստան» հանրահայտ բանաստեղծության մեջ ընդգծում է.

*Իմ փառապանծ,
Իմ տառապանծ,
Իմ բարձրանուն,
Իմ քաղցրանուն:
...Դու՝ Սեւանի վառվող կոհակ,
Երեւանի սյուն ու խոյակ,
Դու՝ հանգրվան, կանչող փարոս,
Դու՝ հայկական գերբ ու դրոշ:
...Սրի պատյան,
Սիրո մատյան -
Միշտ հին ու նոր իմ Հայաստան:*

Հայ նորագույն շրջանի մյուս տաղանդաշատ բանաստեղծը՝ Հանո Սահյանը, 1956թ. գրած «Հայաստանը երգերի մեջ» քերթվածում ընդգծում է.

*Մարմին տված իր դարավոր,
Իր փառավոր երազանքին,
Իր վաստակած դասակներով,
Վաստակներով իր թանկագին,
Տարազներով իր ծաղկավոր,
Իր ինքնության օրնամենտով,
Դրոշակով իր պետական
Եվ սեփական պառլամենտով
Կանգնել է՝ ողջ հողագնդին
Հույս առաքող ազգերի մեջ.-
Այսպիսին է Հայաստանը
Մեր նորօրյա երգերի մեջ:*

Սովետական ժողովուրդների խաղաղ աշխատանքի, երկրի սահմանների պաշտպանության հզոր ու միասնական ուժը բանակն էր, որի շարքերում ծառայում էին տարբեր ազգերի եւ ազգությունների որդիները: Ահա, այդ ընդհանուր երազանքից ու հույսե-

րից ծնված բանակի երկրապահ ուժին է նվիրված անվանի բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանի «Հանդիպում ուղեկալուն» ծավալուն բանաստեղծությունը: Լինելով Հայաստանի սահմանները հսկող ուղեկալուն, բանաստեղծուհին գոհունակությամբ եւ հպարտության զգացումով պատկերում է Հայաստան աշխարհը, փառաբանում նրա ստեղծարար աշխատանքը պաշտպանող զինվորներին՝ տարբեր ազգերի զավակներից բաղկացած ջոկատին: Բանաստեղծուհին նշում է. «Դեռ սահման կա, կա խարդավանք, ու ոսոխ կա կյանքում...», ուստի հզոր բանակ պետք է ունենալ: Արաքսի ափին գործող սովետական ուղեկալի պետի տեղակալը Նորիկ անունով մի հայ սպա է, եւ պարզվում է, որ Նորիկը բանաստեղծուհու մանկության ընկերն է: Ապա պատկերի մեջ են ներառվում Հայոց կորուսյալ երկրի մասունքներից՝ Վանը: Եվ այսօր փրկված Հայաստանի սահմանները հսկում են հայ սպան եւ նրա այլազգի զինվորյալները: Բանաստեղծուհին այդ երեւոյթը նկարագրում է այսպես.

*Ու ես հիմա ամբողջ ծայնով այս եմ ուզում ասել,
Որ կանգնած է Նորիկն ահա այս սահմանին, այստեղ,
Ո՛չ, չե՛ն կարող, էլ անգոր են կտրել այս կուռ գոտին,
Աշխարհի մեջ էլ հոր նման միայնակ չէ որդին...*

Վերջերս՝ 2006թ. հոկտեմբերի 27-ի «Գրական թերթ»-ի 37-րդ համարում տպագրված մի նյութ խոսուն վկայությունն է այն երեւոյթի, որ սովետահայ գրողները մեծ հույսեր են փայփայել խորհրդային պետության, ասել է՝ թե նրա հզորության (բանակ-հասարակություն կապի ընդգծումով) նկատմամբ: Նյութի հեղինակը սփյուռքահայ գործիչ Արամ Սեփեթճյանն է: Նա Բեյրութից նամակը հղել է «Գրական թերթ»-ին նոր «Ազգային օրհներգի» ընտրության առթիվ: Նրա նամակում կարդում ենք հետևյալ տողերը. «Նոր օրհներգին եղանակը,- ըստ դատակազմի որոշումին,- պիտի ըլլայ Արամ Խաչատրեանին երաժշտութիւնը, յօրինած Բ. Հանրապետության համար: Սարմենին ստորագրած բանաստեղծությունը իբրեւ խոսք ու կշռոյթ, կը համապատասխանէր իր խորհրդային դարաշրջանի յաղթական տրամադրութիւններուն, երբ հազիվ մէկ միլիոն ազգաբնակչութիւն ունեցող մեր հայրենիքը յաջորդող տասնամեակներուն աճեցաւ քառապատիկ, եւ Հայաստանը դարձաւ «Մայր հայրենիք հայութեան»»:

Նամակագիրը փաստում է նաև այն հանգամանքը, որ 1991թ. հայությունն ունեցավ նոր Հայաստան եւ նոր դեկավարություն:

Ինչպես տեսնում ենք, սփյուռքահայ մեր գրչակից եղբայրն ամեն դեպքում ընդգծում է Հայոց երկրորդ (Բ) պետության նշանակությունը հայության կյանքում: Կարելուում ենք նաև այն հաճելի երեւոյթը, որ 1992թ. Գեւորգ Էմինը ստեղծել է «Հայաստանի գալիք օրհներգը» վերնագրով բանաստեղծությունը, որ իր չափով ու կշռությով (4+4+3) հաջողությամբ պատշաճում է Ա. Խաչատրյանի երաժշտությանը: Գ. Էմինի այս բանաստեղծությունը գետեղվել է 1997թ. Հալեպում լույս տեսած «Շատ չեղա՞ւ, Աստուած» ժողովածուում: Ա. Սափեթյանը ուղարկել է Գ. Էմինի այդ քերթվածը, որ անշուշտ, կհետաքրքրի ընթերցողներին:

**Գ. ԷՄԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԼԻՔ ՕՐՀՆԵՐԳԸ**

*Մեր դարավոր, մեր փառավոր Հայրենիք,
Մեր հին արմատ, մեր ինքնության սուրբ կնիք,
Տառապանքի խաչին գամված Տիրամայր,
Հանուն լույսի դարեր տեսած Ավարայր:
Օրհնյա՛լ լինես, արի արանց Հայաստան,
Դու հայության լույսի փարոս ու ոստան,
Պատիվ ու փառք քո անցյալին փառավոր
Եվ քո վաղվա տենչանքներին լուսավոր:
Անդունդներից տառապանքի, վշտերի,
Աչքդ հառած երջանկության աստղերին,
Հասնում ես դու քո երազած գալիքին
Եվ վերջ չկա՛, վախճան չկա քո երթին:
Օրհնյալ լինես, Ազատ, Անկախ Հայաստան,
Դու հայության հույսի փարոս ու ոստան,
Պատիվ ու փառք քո անցյալին փառավոր
Եվ քո վաղվա տենչանքներին լուսավոր:*

Հասարակություն-բանակ կապի ապահովումը երբեք չի կարելի երկրորդական խնդիր համարել: Այդ կարելու կենսական հարցը պետք է գտնվի պետության վարած ամենօրյա քաղաքականության ուշադրության կիզակետում: Այս տարի հանուր հայությունը ոգեւորությամբ տոնեց Հայաստանի Հանրապետության անկախու-

թյան 15-ամյակը, որի կողքին նշվեց նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության 15-րդ տարեդարձը: Նշենք, որ 1988թ. հենց առաջին օրերից մեր ժողովուրդը դարձավ մի բռունցք՝ իր ազատության ճանապարհին: Ադրբեջանը իր զավթողական քաղաքականության արդյունքում մեր ժողովրդին պարտադրեց պատերազմ: Մինչեւ 1991թ. աշունը, ասել է թե՛ մինչեւ մեր պաշտպանական բանակի ձեւավորումը, ամբողջ հասարակությունը իրեն համարում էր զինվորյալ: Ապա, երբ ստեղծվեց մեր պաշտպանական բանակը, կոնկրետացավ հասարակություն-բանակ համագործակցության ապահովման հիմնախնդիրը, որի շնորհիվ, անթիվ զոհերի գնով ապահովվեց մեր ժողովրդի հաղթանակը: Համարյա բոլոր հայ գրողները արձագանքել են հայոց սեփական բանակ ունենալու գործընթացին եւ ապա գեղարվեստորեն պատկերել այն մարտական գործողությունները, որ վարել է մեր հերոսական բանակը: Այդ են վկայում Վ. Հակոբյանի «Արցախս ծուխ», «Ամարասի գանգերը», «Սոսե», «Տաճարն աստօժ» ժողովածուները, Գ. Գաբրիելյանի մարտական երգերն ու չափածո ակնարկները՝ նվիրված նահատակ-ազատամարտիկների սուրբ հիշատակին, Հ. Բեգլարյանի «Հրաշք երկիր իմ Ղարաբաղ», «Արցախն՝ Ավարայր» գրքերը, Վ. Դավթյանի «Հայաստան-88» պոեմը, Ա. Թովմասյանի «Արցախցի եմ ես», Ս. Խանյանի «Նահատակ լուսո», «Միեր», Ն. Ավագյանի «Հասուն իմ հասկ» ժողովածուները, Բ. Ջանյանի, Ա. Հովհաննիսյանի, Ժ. Բեգլարյանի, Ռ. Եսայանի, Ն. Գասպարյանի, Հ. Ալեքսանյանի, Ա. Քոչարյանի, Հ. Մուսայելյանի, Ա. Գրիգորյանի բանաստեղծական շարքերը: Արձակագիր Ս. Հովհաննիսյանի «Արցախ իմ, ցավ իմ», «Մենք», Կ. Դանիելյանի «Ճիչ», Կ. Գաբրիելյանի «Ինքնաթիռներ՝ աղավու թեւերով», Ա. Ղահրիյանի «Լեռան հուշ», Ն. Սողոմոնյանի «Կոլցո», Ն. Գասպարյանի «Չավարտված խաղ», Վ. Բաղդյանի «Ֆենոմեն», Ս. Քամալյանի եւ այլոց պատմվածքների ժողովածուները մեր հասարակության եւ պաշտպանական բանակի միասնական պայքարի գեղարվեստական վավերագրություններն են:

Հայոց գրականության մաքառման ոգին խոսել է դարերի ընթացքում, այդ հավերժվող խոսքի մեջ ընդգծվել է մի խորհուրդ՝ եթե ժողովուրդը ցանկանում է գոյատևել, պետք է ունենա պետություն ու բանակ, որոնք էլ անհրաժեշտ է հենվեն հասարակության

Մաջակցությանը: Հայ ժողովուրդը իմանտացած դարերի փորձություններում, այսօր խորապես է հասկանում իր նոր պետության դերն ու նշանակությունը եւ բանակ ունենալու, եւ հասարակություն-բանակ սերտ կապն իրականացնելու ազգապահպան գործում: Եվ այս հավատավոր գաղափարը հույսի եւ լույսի ղողանջ է դառնում եւ փարվում հարատեւման սեփական ուժին ապավինելու պատգամին, որը եւ տաղանդավոր պոետ Վ. Հակոբյանի պոեզիայում հնչում է այսպես.

*Արցախադարձ երկնքից արեւը բոց է թափում, եւ
Արյան հետքը նայթերին ծաղկանց բաժակ է պարզել,
Ձեռագործում աղջկա մոսիմի փողն է հյուսվում,
Ծառի ջարդված թելերում դեռ պահվում է թռիչքը,
Օգնական լեր, Տեր Աստված, հույսս միայն ես լինեմ:
...Ճերմակ վազքում լեռների վերքերը հուր են դառել,-
Քիրսի լանջին գյումրեցի Ավետիքը նինջ մտավ,
Մորմոքները նահրյան կանթեղներ են հառնումի,
Որոտմունք են ձորերը, Շուշվա կրծքին շուշան վարդ,
Օգնական լեր, Տեր Աստված, հույսս թող միշտ ես լինեմ:*

Իսկ այդ հույսը եւ ըստ պոետի, եւ ըստ մեզ-բոլորիս, անկախ պետության, հզոր բանակի, արարող ժողովրդի սերտ կապի ապահովումն է մեր ազգային եռագույնի ծփանքի տակ:

**«Բանակ-հասարակություն» ժողովածու,
Ստեփանակերտ, 2007**

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԳԸ

Ոչ ոք իրավունք չունի մոռանալ մեծ հայրենականը, առանձնապես մի այնպիսի էտապում, երբ իմպերիալիստները ձգտում են հրահրել երրորդ համաշխարհային պատերազմ: Աշխարհահռչակ էռնեստ Յեմինգուեյը գրել է. «Երկրորդ համաշխարհային պատերազմը բռնկվեց այն պարզ պատճառով, որ մարդկությունը մոռացավ առաջինը»: Այս ճշմարտության պարզ գիտակցումով էլ սովետական գրողները Հայրենական մեծ պատերազմի թեման համարում են արդիականության ամենահուզող խնդիրներից մեկը:

Մեր լեռնաշխարհի բանաստեղծների «հունձքը» այս բնագավառում եւս ուրախալի է: Նրանց մոտ այս թեման դարձել է ցասունի եւ վրեժի այրող խոսք՝ ուղղած նոր պատերազմի հրձիքների դեմ: Հիմնական ուշադրությունը դարձվում է հայրենիքի հերոսների, պատերազմի ծանրությունը կրած սովետական քաղաքացիների հոգեկան բարդ ապրումների, կյանքի եւ մահվան սահմանագծում հերոսների մարդկային գեղեցիկ զգացումների դրսևորմանը:

Բանաստեղծ Գ. Հովսեփյանը այն սերնդի ներկայացուցիչներից է, որի պատանեկությունն անցել է Մեծ հայրենականի կրակների միջով, որի շրթերին թրթռացող «հայրենասիրություն» սրբազան բառը իր կոնկրետ պատկերն ստացավ զինվորի ցասման ու վրեժի մեջ: Իր հերոսական սերնդի անունից էլ խոսում է բանաստեղծը զինվորական հուշ-երգերում, որոնք ամփոփված են «Ձինվորի երգը» ժողովածուում: Ձինվորական հուշերով հարուստ բանաստեղծի համար հայրենասիրության զգացումը տարբեր նրբերանգներ ունի: Այդ գույները ամեն դեպքում իրենց սկիզբն առնում են կենսական հող ունեցող հուշերից: «Հուշը» բանաստեղծության մեջ հեռուներից եկած հանքախույզները տեսնում են Ղարաբաղի երկնահաս լեռները եւ վերհիշում իրենց լեռնցի ընկերոջը, որի հետ քաջաբար մարտնչել են ոսոխի դեմ ու տեսել նրա հերոսական մահը բարձունքի վրա: Ղարաբաղի մահատակված զինվորի քաջությունն ու սերը բարձունքների հանդեպ կապված է հայրենի երկրամասի, հարազատ օջախի հետ, որի բանաստեղծական հաջող ընդհանրացումը Հովսեփյանը կատարում է լիրիկական հերոսի միջոցով.

*Այո, լեռան արծիվ էր նա՝
Հասակ առած այս սարերում,
Հասկանում եմ, պարզ է հիմա,
Թե ինչու էր բարձունք սիրում:*

Ռազմաճակատից տուն չվերադարձած զինվորները բանաստեղծի հուշերում դեռ մինչեւ այսօր մնում են ջահել ու պարթեւ: Գ. Հովսեփյանի «Մազերս ե՞րբ ճերմակեցին», «Հուշարձանի մոտ», «Մի մայր էլ գնաց» բանաստեղծությունները հուզում են կարոտի ու ավստանքի ընդգծման ուժով, անմիջականությամբ:

Մարդկային սիրտը չի կարող մոռացության տալ այն վերքերը, որոնք դեռ չեն սպիացել: Հնարավոր չէ մոռանալ նրանց, ովքեր նահատակվել են հեռավոր ավերում՝ հանուն աշխարհի լուսավոր, խաղաղ գալիքի: Նրանք վերադառնում են իրենց հարազատ քաղաքներն ու գյուղերը՝ հուշարձան դարձած: Այսօր մեր երկրամասում չկա մի բնակավայր, որտեղ զոհված մարտիկների հիշատակին կանգնեցված չլինեն հուշակոթող, հուշաղբյուր կամ համալիր: Դրանց մեջ առաջին հերթին խոսում է մարդկային երախտագիտությունը: Գ. Գաբրիելյանի «Ռեքվիեմ» երգը (կոմպոզիտոր Կիմ Առաքելյանի երաժշտությամբ) հնչում է որպես նոր սերնդի երախտագիտության բանաստեղծական անմոռանալի մի ընդհանրացում: Հայրենիքի կանչով հերոսները մի օր կռիվ են գնացել, մայր հողի փառքը բարձր պահել ու զոհվել նրա համար: Իսկ հիմա եկել են հուշարձանի տեսքով ու չեն ժպտում, չեն զարթնում: Նոր սերունդը չի մոռացել ու չի մոռանա երբեք նահատակված հերոսներին: Նրա շրթերին հնչում է միայն երախտիքի խոսքը.

*Ձեր թափած արյունը թանկ
Իզուր չի անցել,
Ձեր արյան ամեն մի կաթիլ
Ծաղիկ է դարձել...*

Երախտագետ սերնդի սրտի անանց պոռթկումներ են Գ. Գաբրիելյանի «Պապիս հուշարձանը», «Նահատակի թռչը», «Մի գիշերում ճերմակած մազեր», «Վետերանները» բանաստեղծությունները: Իսկ «Ասք անմահության» պոեմը փառաբանում է այն անմահներին, որոնք նահատակվել են եվրոպական ժողովուրդների ազատագրության համար:

Նման զգացումից ծնված երգերում կարոտի ու մրմուռի հետ

միասին գովերգում է սովետական ժողովրդի պատմական հաղթանակի նշանակությունը: Այդ երգերի բնորոշ էությունը կորցրածի փոխարենի հետ մեկտեղ վերածնվողի սփոփանք է:

Վ. Հակոբյանի, Գ. Գաբրիելյանի, Հ. Բեգլարյանի, Ս. Խանյանի, Ա. Հովհաննիսյանի, Մ. Յախշունցի, Ն. Ավագյանի, Ա. Թովմասյանի պատերազմական թեմայով գրված երգերում հնչում է խաղաղության մոտիվը, որն արտացոլվում է կյանքի տարբեր բնագավառների առաջընթացի հետ զուգակցված:

Պետք է նշել, որ վերջին տասնամյակում խաղաղության թեման իր ինքնատիպ լուծումն է գտել նաև մեր մարզի արծակագիրներ Մ. Հովհաննիսյանի, Վ. Օվյանի, Կ. Դանիելյանի, Ն. Սողոմոնյանի եւ ուրիշների ստեղծագործություններում:

Խաղաղությունը բոլոր բանաստեղծների մտահղացումներում ու մտապատկերներում կռվից տուն դարձած զինվորի հարսանիք է, ամեն օր պատուհանի տակ հնչող մուրճերի զարկ, դպրոց հաճախող պիոներների զիլ կանչ -երգ, դեպի ապագան ձգվող լուսավոր ճամփաներ: Այդ թեմայով գրված երգերում քնարական հերոսը գտնվում է կյանքի հորձանուտում, նրա քաղաքական -հասարակական զգացումները հասունացած ու հորդաբուխ են: Խաղաղությունը մեր գրողների համար միայն սեփական հարկի տակ վառվող լույսը չէ, այն գարուն է, հողագնդի ընթացքը փոխող ուժ, պատերազմի հրձիգներին ծնկի բերող շարժում, եղբայրության ծիածան: Խաղաղությունը մայրացող սեւահող է, երկրի բաբախող սիրտ, եւ այնքան համակող է, որ մարդկանց աչքերին աստղերն ասես խաղաղության օգտին ստորագրություն լինեն:

Մեծ հայրենականին եւ խաղաղությանը նվիրված երգերի պատկերային հենքերը ջերմացնող են, գեղարվեստական խտացված համադրությունների հիանալի օրինակներ: Այդ տեսակետից ուշագրավ է Վ. Հակոբյանի «Լույսի հրավեր» պոեմը՝ նվիրված Սովետական Միության հերոս, զոհված մարտիկ Թեմիկ Ավթանդիլյանին: Բանաստեղծը ժամանակի գաղափարական բարձունքից կարողում է մարդկանց հուզաշխարհը, գեղագիտական իր դիրքորոշումը լուսավորում շքեղ գույներով, անմահների շունչն ու ոգին զգում ապրողների մեջ:

*Աստղերն իջել, թառել թուփ ու ծաղիկներին,
Լսում էին շշուկները*

*Հավերժության,
Որ թեմիկի կերպարանքով կանգնել իմ դեմ,
Զրուցում էր ջերմագորով...
Երկար, երկար ես նայեցի նրա վառվող
Աչքերի մեջ,
Ես նայեցի խորքն իմ հոգու,
Ուր վառվում է հերոսների
անմահության հուրը անշեջ...
Ապա կամաց, դանդաղորեն ինձ գտա ես
Սարդկային ջերմ հոսքերի մեջ:
«Իմ արյան մեջ հայրենիքն է
հավատամքի նման ծաղկում»:*

Վ. Հակոբյանի «Ճամփաները», «Անհայտ զինվորի հուշարձանի մոտ», «Նախկին զինվորի մտորումներ», «1941 թ.», «Սաթենիկի պարը» եւ այլ բանաստեղծություններ պատերազմի արհավիրքը տեսած, հաղթանակի բերկրանքն ապրած, սովետական մարդու հոգու աշխարհն արտացոլող արժեքավոր գործեր են:

Հր. Բեգլարյանը հեղինակ է խաղաղությանը նվիրված լիրիկական հետաքրքիր բանաստեղծությունների: Հաճախ առօրեական թվացող փաստի ակունքից բանաստեղծը բխեցնում է սովետական ժողովրդի անցած ճանապարհի պատկերը: Տալով ժամանակակցի քնարական դիմանկարը, Հ. Բեգլարյանը չի մոռանում աշխարհի խաղաղության, մարդկության ազատության համար մարտնչած մեր լեռների քաջ զավակներին: Նա ներքին հպարտությամբ բացականչում է.

*Քաջերի մեջ քաջ եք եղել,
Ղարաբաղի քաջ որդիներ,
Հաղթանակի կանչ եք եղել,
Ղարաբաղի քաջ որդիներ:*

Սովետական ժողովրդի խաղաղասիրական տրամադրություններն իրենց յուրահատուկ արտացոլումն են գտել նաեւ Ա. Հովհաննիսյանի ստեղծագործություններում: Նրա «Անմահների ծայնը» ժողովածուն, «Հեռաստանների կանչը» գրքի «Զինվորի վերադարձը», «Երգ խաղաղ օրվա» բանաստեղծություններում ընդգծված է այն միտքը, որ պատերազմ հրահրող ուժերը ինչքան էլ չա-

Մրանան, չեն կարող պատնեշել խաղաղասեր ուժերի շքերթը, որով հետեւ նրանում միավորված է բարի կամքի տեր մարդկանց, ազատատենչ ժողովուրդների միասնությունը: Հավատի ու պայծառ լավատեսության զգացումները շաղախված են երկրի հզորությանը եւ արթուն բանակների ուժերին: Այդ հավատն է բանաստեղծին հուշում հետեւյալ տողերը.

*Ոչ ոք չի սիրում աշխարհը այնպես,
Ինչպես մենք նրան:
Մեր համբույրներից կծնվեն վաղվա
Մարտիրոսները,
Մեր երազներից ու կորուստներից
Աստղեր կկաթեն աշխահի վրա
Եւ արշալույսներ կծագեն այնտեղ:*

Հետաքրքիրն այն է, որ պատերազմի թեման հուզում է ոչ միայն տարեց եւ միջին սերնդի ներկայացուցիչներին, ովքեր տեսել կամ զգացել են պատերազմի ծանրությունը, այլեւ երիտասարդ ու սկսնակ գրողներին: Պատերազմի եւ խաղաղության թեմային հաճախակի են դիմում մարզային բաժանմունքի շուրջը համախմբված երիտասարդ գրողներ Կ. Գաբրիելյանը, Հ. Ալեքսանյանը, Ռ. Եսայանը, Ն. Գասպարյանը եւ ուրիշներ: Ուրեմն պապերի եւ հայրերի թափած արյունը իզուր չի անցել, իսկ գրական ավանդույթը շարունակվում է:

Ետպատերազմյան շրջանում խաղաղության թեմայով գրված ստեղծագործությունների հնչերանգը դառնում է հավատը սովետական ժողովրդի, աշխարհի բարի կամքի տեր մարդկանց հանդեպ: Մարզի գրողների մտապատկերներում մոտավոր անցյալը դառնում է հաղթանակի հիմն՝ իհարկե կորցրածի անմոռանալի կարոտով օժված: Նրանց խոսքը դառնում է երդում՝ հայրենական լուրթ լեռների, երգող աղբյուրների, խորհրդավոր արշալույսի, խոնավ բուրմունքով բացվող ակոսի, մարտերում հաղթած զինվորի խղճի, անմոռանալի Մայիսի 9-ի անունից:

*«Սովետական Ղարաբաղ»,
հուլիս, 1985թ.*

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ («Թաթուլ» գրքի առթիվ)

Ջարմանալի գաղտնիքներ ունի կյանքը: Հաճախ թվում է, թե այն հեշտ կարդացվող եւ ընկալվող մի էջ է. աշխարհ եւ գալիս եւ հրաժեշտ տալիս : Սակայն պարզվում է, որ այդպես չէ: Կյանքը պարզունակ էջ չէ, այլ շերտավորված գիրք, որ ծրարում է նորերին, դառնալով հիշողության դաս: Առավել եւս այն սերնդի կյանքն է դաս դառնում, որի ուսերին է ընկնում ժողովրդի ճակատագրի ծանր բեռը, նրա ակնկալություններին առնչվող հույսը, ազգային գոյատևմանն ուղղված նվիրումը: Դրա վկայությունը 1988-ի փետրվարից սկիզբ առած արցախյան արդարացի ըմբոստության այն ալիքն է, որ դարձավ մեր ժողովրդին պարտադրած պատերազմ, մեր զինվորյալների պայքարով եւ նահատակների արյամբ սրբագործված փառավոր էջ, ստանալով համահայկական հիշողության ուժ: ԱՅԴ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԵՐԱՆՊՆԵՐԻ ՄԵՋ ԱՊՐԵՑՆՈՂ ՄԻ ՇՈՂ Է ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ ԱՆՈՒՆԸ, ԻՆՉՊԵՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է ԿՈՉԵԼ ԳԵՏԱՇԵՆԻ ԱՐԾԻՎԸ:

Դա այն Թաթուլն է, որ Արցախի համար ստեղծված ամենածանր պայմաններում Երեվանի պետական համասարանի պատմության ֆակուլտետի 4-րդ կուրսի քննությունները կիսատ թողնելով, մեկնեց Գետաշեն, ազերի օսոնականների եւ խորհրդային ֆաշիստացած ուժերի դեմ իր արյամբ ու կյանքով հանձնեց ժողովրդի փրկությանն ապահովող ամենափառավոր քննությունը: Այդ ավանդական ու անձնուրաց քննությունը սերունդների սեփականությունը դարձնող մի հինալի նվեր է «Թաթուլ» գիրքը, որ ծնվել է ժամանակին: Այն հրատարակվել է «Ջորավար Անդրանիկ» հայոց համազգային միության հովանավորությամբ: Գիրքը բացվում է «Ջորավար Անդրանիկ» միության նախագահ Նորայր Մուշեղյանի «Գետաշենի արծիվը» հուզիչ առաջաբանով եւ արձակա-

Վիր Գեւորգ Դերիկյանի ակնարկ-էսսեով, որը Թաթուլի հանդէպ սիրո արտահայտությունն է:

Իհարկէ, Թաթուլը որպէս բանաստեղծ դեռ պիտի աճեր, բաց-վեր, տիրապետեր պոետական արվեստի գաղտնիքներին, սակայն կարելորն այստեղ այն է, որ ազատամարտիկ Թաթուլը գործել է այնպէս, ինչպէս խորիել է բանաստեղծ Թաթուլը: Նա ուղղակի եր-գով զարդարել է իր հերոսկան կյանքը, հերոսական կյանքով՝ եր-գը: Դիմելով հայոց կռունկին, Թաթուլը ընդհանրացնում է. «Դու էլ չլաս, հայու կռունկ, քո բալեքը զինվոր են» («Կռունկ»), զրուցելով հայոց սարերի հետ, ընդգծում է. «Արհավիրքի դէմ սուր են լեռնե-րը» («Լեռներին իմ»): Նա այս եւ նման բանաստեղծական խտա-ցումներով բացահայտում է զինվորյալ-երգչի իր հոգին ու վճա-կանությունը:

Մնում է շնորհակալություն հայտնել այն բոլոր կազմակերպու-թյուններին, որոնք անցագիր են տալիս նահատակված քաջերի կյանքին՝ առանձին գրքերով, որ նահատակների մասին ժողո-վուրդյան հիշողությունը ապրեցնող, ոգեղեն ուժ է:

«Արցախ», 9 դեկտմբերի, 1993 թ.

ՆԵՐԻՐ, ԿՈՄԻՏԱՍ...

Կոմիտասը իմ ուսանողն էր, իրենց խմբի միևնուճար ուսանողը: Աստծո մատը խառն է նրա աշխարհի գալու մեջ: Տերը նրան շնորհել էր բանաստեղծի համբերություն՝ տառապելու եւ այդ տառապանքը երգ հյուսելու կարողությունը: Ուրեմն, Կոմիտասին ես կորցրի որպես կրտսեր գրչեղբոր:

Կոմիտասը նախախնամությամբ, թե ժառանգական տոհմային նվիրունով, իսկական դարաբաղցի էր. շնորհալի, համեստ, ընկերասեր: Ուրեմն, ես կորցրի նաեւ մի օրինակելի ընկերոջ:

Կոմիտասը հենց առաջին օրվանից սիրահարվեց կուրսի ընտիր աղջիկներից մեկին՝ Նունեին: Սկզբում տարօրինակ թվաց շատերին, բայց ես բնական համարեցի այդ երեւույթը, որովհետեւ Կոմիտասի մեջ ավելի շատ խոսում էր բանաստեղծը՝ աշխարհին, կյանքին սիրահարված քարտուղարն Աստծո: Եւ Նունեի հանդեպ ծնունդ առած նրա սերը պատահական բռնկում չէր, այլ բանաստեղծական հոգուն հասունացող երգի զուգահեռը՝ ինքնաբուխ, անձնուրաց, արեւային: Ուրեմն, ես կորցրի նաեւ աշխարհին ու կյանքին էն գլխից սիրահարված իմ սանին:

Կոմիտասը ոչ միայն սիրահար էր սիրո, այլեւ շատ ուշադիր էր ծնողների հանդեպ: Լինում էր, մեկ-մեկ պարապմունքներից բացակայում էր: Հարցնում էի պատճառը: Նա ազնվորեն բացատրում էր. «Ծնողներս եկել էին գյուղից, շատ էի կարոտել»: Կամ. «Գյուղ մեկնող մեքենա կար, ասի՝ զնամ ծնողներիս տեսնեմ, մի քիչ էլ օգնեմ, վերադառնամ»: Նրան լավ էի հասկանում: Ուրեմն՝ ես կորցրել եմ նաեւ հեքիաթային, ծնողասեր իմ սանին...

Կոմիտասի երզը ծնունդ էր հոգու եւ սրտի՝ ակունքված հող հայրենիից եւ հայրական օջախից: Իր երգերի մեջ Կոմիտասը այն էր, ինչ կյանքում էր: Նրա երզը արծազանքն էր այն երազի եւ ցավի, ինչ ստացել էր նա գերված Արցախ լեռնաշխարհից: Ահա, թե ինչու պատերազմի հենց առաջին օրվանից Կոմիտասը առանց վարանելու զինվորագրվեց Արցախ օջախի անկախության եւ ազատության մեծ գործին եւ գլուխը կամովի դրեց այդ սրբազան առաքելության զոհասեղանին: Ուրեմն, ոչ միայն ես, այլեւ ամենքս կորցրինք արցախցի մի մարտիկ-բանաստեղծի, որի ապագան շատ էր խոստումնալից:

Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության բանակին զինվորագրվելուց հետո Կոմիտասը շատ արագ փոխվեց: Նա միայն համալսարանում քննությունների ժամանակ էր երեւում: Բուհի 2.000 ուսանողներից 400-ը տղաներ էին եւ բոլորն էլ ծառայում էին բանակում: Նրանք ժամանակ չունեին պարապելու, նրանց զբաղմունքը ճակատամարտն էր: Գալիս էին միայն քննության օրերին, դասախոսները ընդառաջում էին, եւ անմիջապես մեկնում էին ռազմաճակատ: Տղաներից 74-ը կորցրինք: Հիմա նրանք ցուցափեղկից են մայրում իրենց դասախոսներին, դասընկերներին, մայրում են հպարտ, կարոտած, երազկոտ: Դրանց մեջ է նաեւ Կոմիտասը:

Այդ օրերին, երբ Կոմիտասը գալիս էր քննության, ես հարցնում էի. «Ի՞նչ նոր բան ես գրել»: Հանում էր ծոցատետրը կամ հենց մի թուղթ եւ կարդում նոր գրածները: Մի անգամ նա կարդաց.

*Ու կը-րա-կում եմ չափածո,
Տեղը պահում հանգն ու վանկը:
Տեր իմ Աստված,
Այս ի՞նչ եղավ.
Շփոթվել եմ
Իմ գրիչն ու ավտոմատը:*

1994 թ. մայիսի վերջին օրերն էին: Կոմիտասի զոհվելու բոթը արդեն հասել էր մեզ, վշտում էին նրա ընկերները, դասախոսները: Կոմիտասը պետք է մասնակցեր նախապետական քննություններին: «Նորագույն շրջանի հայ գրականություն» առարկան էին հանձնելու Կոմիտասի համակուրսեցիները: Մտա քննություն ընդունելու: Հայացքս սահեց տեղեկագրի վրայով: Իմ ցաված սրտի թելադրանքով կարդացի. «Հակոբյան Կոմիտաս... Դու միշտ «Հինգ» էիր ստանում, այսօր էլ գնհատվում ես «գերազանց»: Ասացի ու գլուխս առա ափերիս մեջ: Ձգտում էի արցյունքներս զսպել, բայց չէր ստացվում:

Սկսվեցին քննությունները: Քննական հանձնաժողովի անդամները միաձայն Կոմիտասին «Գերազանց» էին գնահատում: Ախր նա գերազանց երիտասարդ էր, գերազանց ուսանող, գերազանց հայրենասեր, գերազանց քաղաքացի, գալիքի դասը սերտած նահատակ: Ավարտվեցին պետական քննությունները: Արձանագրության ընդհանրացնող մասում նշեցինք, որ ԿՈՄԻՏԱՍ ԱՐՍԵՆԻ ՀԱ-

ԿՈՐՅԱՆԸ 1989 թ. ընդունվել է 1994 թ. ավարտել է Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանը եւ ստացել հայոց լեզվի եւ գրականության ուսուցչի որակավորում:

Կոմիտասի դիպլոմը ինքը չստացավ: Ստացան հարազատները: Նրա դիպլոմը դարձավ հայրենասիրության, արիության, անձնագոհության մի հավերժական վկայագիր, որ խոսելու է ոչ միայն Կոմիտասի հարազատների, այլեւ սերունդների հետ:

Ներիր, Կոմիտաս, որ արտասվում եմ հիշատակիդ առջեւ: Ուսուցիչները հպարտանում են իրենց աշակերտներով, դասախոսները՝ ուսանողներով: Ինչպե՞ս չհպարտանամ քեզ նման սանով, Կոմիտաս: Եւ ինչքան խորն է հպարտությունս, այնքան էլ խորն է քո կորստյան վիշտը: Հիշո՞ւմ ես, երբ մի քանի անգամ կարդացիր նոր բանաստեղծությունդ.

*Ստբեր՝ լուռ ու ժպտուն,
Եւ ես մենակ այսպես,
Թող ինձ բախտիս հլու,
Տեր իմ, ես կաղոթեմ միշտ քեզ:*

*Այս կույր ընթացքի մեջ
Թե որ կորչեմ մի օր,
Ինձ կհիշեք այսպես՝
Երազկոտ ու մոլոր:*

*Բայց իմ ոգին ձեր դեմ
Հառնի թե որ նորից,
Հավատացած եղեք,
Իմ սկիզբն է այդ օրից:*

Հուզված համբուրեցի ճակատդ, շնորհավորեցի եւ ասացի. «Երգդ ու զենքդ շատ են սազում իրար, Կոմիտաս»: Դու համեստորեն ժպտացիր, ես հայրաբար քեզ բարի ճանապարհ մաղթեցի դեպի ռազմաճակատ: Գնացիր... ու վերադարձար... քո երգի թեւերով, եւ այդ թեւերով էլ սկսեցիր հավերժական ճանապարհդ դեպի դարեր...

Ներիր, Կոմիտաս, որ ամեն անգամ անունդ տալիս արտասվում եմ... Ներիր...

*«Ջրաբերդ»,
մարտ-ապրիլ, 1996 թ.*

ՋՈԿԸ՝ ՄԻ ՏՆԻՑ

Նոյեմբերի վերջին օրերից է: Օրը պարզ է, արեւկա: Հորեղբորս տղայի՝ Նորենի հետ վերհիշում ենք մանկության տարիները: Դասարանի առաջադեմ աշակերտներից էր, բայց չկարողացավ ուսումը շարունակել: Յոթերորդն ավարտելուց հետո մի կողմ դրեց գրքերն ու դարձավ իննը շնչից բաղկացած հայրական ընտանիքի սյուներից մեկը...

Հիմա Նորենը 67 տարեկան է: Նիհարավուն է, ջլուտ, գանգուրները կիսով ճերմակած:

-Նորեն,-ասում եմ,-դիմացանք այս պատերազմին:

-Դեռ էլի պիտի դիմանանք, ախպեր, կռիվը չի պրծել:

Նորենը երիտասարդական թեթևությամբ բարձրանում է մոտիկ ժայռերից մեկը: Նայում եմ եւ մտորում՝ քանդակագործ լինես, հենց այսպես էլ կերտես Նորենին՝ հայրենի ժայռը իրեն պատվանդան, ինքն էլ ժայռի վրա հառնած, թիկունքին հայրենի Արեւսարը, հայացքի դեմ մեր ավանդական հորիզոնները՝ մինչեւ մայր Արաքսի ափերը: Մտորումներիս մեջ հարցնում եմ.

-Նորեն, ինչո՞ւ բարձրացար ժայռը:

-Մոտ արի,- ասում է,-այստեղից երեւում է Արաքսը:

Բարձրանում եմ: Նա մատնացույց է անում արծաթ գոտու պես փայլող Արաքսը, հետո ձեռքը շարժում հոսանքի ուղղությամբ.

-Տեսնո՞ւմ ես է՞ն բարձունքը, մեր դիրքերն են: Տղերքս էնտեղ են՝ Էդիկը, Սուրիկը, Ռազմիկը:

-Իսկ Գրենիկն ու Արթուրը ո՞ւր են:

-Համբերիր. ամեն ինչ կլսես:

Քայլում ենք հին կալերի արանքով: Երեւում են Էդիլուի (Ուխտաձորի) ձորակի գյուղերը, որոնց պաշտպանությամբ մասնակցել է նաեւ թոշակառու Նորենն իր ընկերների հետ: Գյուղամերձ դիրքերից սկսած մինչեւ Հորադիզ հաց, ջուր, վառելիքայտ են հասցրել զինվորներին, գիշերները խրամատներ են փորել, խրախուսել, թեւավորել իրենց կռիվը զավակների:

Հավաքված ենք Նորենի տանը: Բնակարանում էլեկտրական լույսն է վառվում: Տրամադրություններս կամաց-կամաց բացվում են, վշտի լուսանցքում տեղ ենք գտնում առօրյա գրույցների հա-

Մնար: Կյանքը գնում է իր հունով, վշտից հույս է ծնվում, հույսից լույս, անցած օրերը սյուններ են դառնում նորերի համար ու զգվում է կամուրջը ներկայից գալիք: Եւ այդ կամուրջի վրա հույս ու լույս փնջողների շարքերում հորեղբորս տղաներին եմ տեսնում՝ ոչ թե հեռվից, այլ մոտիկից, սեղանի շուրջ: Սրբած թրեր են, մեկը մյուսից առույգ, մեկը մյուսից խելացի ու խիզախ: Ջրույցս ավելի շատ ընդանում է էդիկի հետ:

-էդիկ,- հարցնում եմ, -պտերազմն ինչպե՞ս եւ որտե՞ղ դիմավորեցիք եղբայրներով:

-Հենց էստեղ, գյուղում, բացի Գրենիկից:

1988-ին Գրենիկը 28 տարեկան էր, Կապանում էր աշխատում, զինվորագրվեց այնտեղ, եւ մասնակցել է Ղուբաթլուի, Լաչինի եւ Ջանգելանի ռազմագործողություններին: Լրացել էր իմ 26 տարին: Արթուրը՝ 20-ի մեջ էր, Սուրիկը՝ 17-ի, Ռազմիկը՝ 15-ի: Մեծ ու փոքր չկար մեզ համար: Ողջ գյուղն էր կանգնել, կենաց ու մահու կռիվ էր: Հետո, երբ կազմակերպվեց մեր Հանրապետության Պաշտպանության բանակը, բոլորս դարձանք նրա զինվորները:

էդիկը կուրծք չի ծեծում, չի ընդգծում իր արածը, եղբայրներին ներկայացնում է համապարտագրի շարքի մեջ, խոսում է խղճի թելադրանքով, իրենց թափած արյան անհրաժեշտության գիտակցումով, պարզապես խոսում է նրա զինվորյալ ու շիկացած հոգին: Իսկ հայտնի է, որ պատերազմը շահում են նախ հոգով, ապա՝ արյամբ:

էդիկը ավարտել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը, 1984 թվականին: Սովորելու ընթացքում 1980-1982 թվականներին ծառայել է Խորհրդային բանակում: Նա մայր Արցախին պարտադրած պատերազմին զինվորագրվեց որպես կոփված ռազմիկ:

-էդիկ,- հարցնում եմ,-արցախյան շարժման առաջին օրերին սպասո՞ւմ էիք պատերազմի:

-Ոչ,-պատասխանում է,-նույնիսկ սումգայիթյան ողբերգությունից հետո չէինք սպասում, որ պատերազմ կբռնկվի: Բայց 1988-ի սեպտեմբերի 9-ին, երբ թուրք ավազակները մեր գյուղի մոտ սպանեցին Յաշա Գասպարյանին՝ եւ նրա 30-ամյա որդուն՝ Յուրիկին, տակնուվրա եղավ մեր հոգին: Հասկացանք, որ դա պատերազմի սկիզբն է: Ու սկսեցինք զինվել թաքուն, զգույշ, քանզի շրջապատ-

ված էինք թուրք օսոնականներով եւ խորհրդային զինվորներով: Մենք զգում էինք պատերազմի հոտը: Վառողի հոտը ավելի զգացինք այն օրը, երբ Պոլյանիչկո-Սաֆոնովի հրամանով անձնագրերի ստուգման պատրվակով մտան գյուղ տարան Սլավիկ Սարդարյանին, Վազիֆ Պետրոսյանին, Յաշա Բրուտյանին: Մեծագույն ջանքերով ազատվեցին Վազիֆն ու Յաշան, իսկ Սլավիկը մինչեւ հիմա չկա:

-1991 թ. նոյեմբերի 7-ին ազերիները վառեցին հարեւան խրամանջուղ գյուղը,-պատմում է Էդիկը,-հետեւյալ օրը հարձակվեցին մեզ վրա, բայց հետ շարսվեցին: Այդ օրը առաջինը վիրավորվեց 50-ամյա Արկադի Աղասյանը: Թշնամին չէր կատակում, վարվում էր թուրքավարի, մենք էլ որոշեցինք նրան պատասխանել հայավարի՝ Վարդանավարի, Նժդեհավարի... Էդիլուի ծորակի գյուղերի ընդհանուր հրամանատար դարձավ Մանվել Գրիգորյանը: Նրա ղեկավարած գունարտակում ընդգրկվեցին երկու վաշտ՝ Աղբուլադի եւ Քյուրաթադի զինվորյալները առանձին, Էդիլուից եւ Հախուլլուից՝ առանձին: Բայց մի սիրտ էինք մի հոգի:

Էդիկն ասաց,որ այդ դեպքերը գրի էր առնում իր հուշերի տետրում, սակայն հրթիռակոծումից վառվեց իրենց տունը՝ հուշերի տետրն էլ հետը:

-1992 թ. մարտի 30-ին,-շարունակեց նա,-հայ ազատամարտիկները գրավեցին հայկական հին Հողեր գյուղը, որ թուրքացվել էր խորհրդային տարիներին: Այդ դեպքից ազերիները ավելի կատաղեցին: Մարտի 31-ին ձգտեցին հետ գրավել գյուղը, սակայն ապարդյուն: Ապրիլի 1-ին ազերիները հարձակվեցին մեր գյուղի վրա: Մենք ամուր պատնեշ էինք կառուցել՝ Քարաբանդի մեր պայենական դիրքում, որի ավազը խորեն Հովսեփյանն էր: Մենք թվով քիչ էինք, բայց վստահ էինք: Ազերիները գալիս էին, հա՛, գալիս... մեր խումբը հնձնում էր, հա՛, հնձնում...Երեւի հենց այդ օրը թուրքերը զգացին, որ դիզակցիների հետ կատակ չի կարելի անել:

Լսում եմ Էդիկին, այդ կիրթ զինվորյալին: Իմ խնդրանքով նա շարունակում է պատումը:

Ֆիզուլիի ճակատամարտում վիրավորվում է Էդիկը: Այդ մասին նա համարյա չի խոսում, բայց սրտի ցավով է հիշում եղբոր՝ Արթուրի ծանր վիրավորվելը 1992 թ. Սեպտեմբերի 21-ին, գյուղի երկրորդ պաշտպանականի դիրքում: Արթուրի կյանքը փրկել են զին-

Վորական հոսպիտալում, հիմա նա երրորդ կարգի հաշմանդամ է: Սակայն նա չի ընկճվել: Ջրույցի ժամանակ նա ասաց.

-Ես ինձ զգում եմ Արցախի դիրքերում: Եւ եթե հարկ լինի, նորից վերցնելու եմ ավտոմատը՝ թշնամու դեմ:

Արթուրին խրախուսում է եղբայրներից չորրորդը՝ Սուրիկը, որը վիրավորվել է Ղուբաթլուի շրջանում, ապաքինվելով՝ եղբայրների հետ շարունակում է ծառայությունը արցախյան բանակում: Սուրիկը հպարտությամբ է խոսում իրենց կրտսեր եղբոր՝ Ռազմիկի մասին...Ռազմիկը միջնակարգը ավարտել է 1990-ին: Ձորակոչվել է բանակ: Մեկ տարի ծառայելուց հետո նա վերադարձել է գյուղ: Ուսումնական զորամասում լեյտենանտի աստիճան է ստացել: Հիմա նա ջոկի հրամանատար է, կարճ ժամանակամիջոցում արժանացել է Հաղորթի պաշտպանական շրջանի Ն գումարտակի հրամանատարության վստիությանն ու հարգանքին:

Ջրուցելով հորեղբորս տղայի՝ Նորենի զինվորյալ հինգ որդիների հետ, ես կրկին ու կրկին պարզ պատկերացրի, թե ինչի մեջ է մեր փոքրիկ լեռնաշխահի՝ մայր Արցախի անպարտելիության գաղտնիքը:

Իրենց թիկունքում ունենալով Արեւսարի լանջերին թառած հայրենի գյուղը, հինգ եղբայրները ուս-ուսի մարտնչել են ոսոխների դեմ՝ Ֆիզուլիի շրջանի Աբդուլռահմանլու, Կորգան, Շուքյուրբեյլու, Ալխանլու եւ այլ ազերական գյուղերում: Հիմա նրանք հսկում են այն դիրքերը, որտեղից երեւում է Արեւսարը, հարազատ գյուղը, հրդեհների միջից նորից վերակերտված իրենց հայրական տունը, որի հարկի տակ երջանիկ խաղում ու ճռվողում են էդիկի առաջին դասարանցի աղջնակը՝ Անուշը, չորսամյա եւ նորածին մանչուկները՝ Բաղդասարն ու Սանասարը, որոնք պիտի ապրեն եւ հայրենի հողին ծառայեն իրենց հոր եւ հորեղբայրների օրինակով, որպեսզի միշտ շեն մնա ծննդավայր Աղբուլաղ գյուղը՝ վերանվանված հնամյա անունով՝ Ակնաղբյուր:

*«Մարտիկ»,
9 փետրվարի, 1996 թ.*

ԵՐԵՔ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՐԾԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՀԵՏ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՌԱՋԻՆ

Մարշալ Բաղրամյանի անունը ես լսել էի դեռևս դպրոցական տարիներին: Նրա սխրագործության մասին առանձին մի ոգեւորությամբ էր խոսում մեր պատմության ուսուցիչ Սամվել Գրիգորյանը՝ արցախյան պատերազմի լեգենդար հրամանատարներից մեկի՝ սուրբ Մահատակ Վիգեն Գրիգորյանի հայրը: Մարշալի մասին այս խոսքը գրելիս չէի կարող չհիշել եւ՝ իմ ուսուցիչին, եւ՝ նրա քաջարի գավակին, որ նաեւ իմ ուսանողն էր: Չէի կարող չհիշել, որովհետեւ Հայրենական պատերազմի մասնակից իմ ուսուցիչը այնպիսի ջերմությամբ ու ոգեւորությամբ էր խոսում մարշալի մասին, որ մեր աշակերտներին հոգիներում ալիքվում էր երազի ու կարոտի մի անբացատրելի ծգտում: գոնե մեկ անգամ տեսնել աշխարհահռչակ հայ զորավարին՝ Վարդան Մամիկոնյանի, Դավիթ Բեկի, Անդրանիկի եւ Նժդեհի արժանի ժառանգորդին: Ինչ վերաբերում է Վիգեն Գրիգորյանին, ապա նա ամեն անգամ իր հոր մասին խոսելիս մեղմ ժպտում էր ու ասում.

-Հայրս իմ կրծքի տակ կերտել է մարշալ Բաղրամյանի անձեռակերտ հուշարձանը: Ախր հայրս նրա զինվորներից էր:

Եւ այսօր, երբ հաճույքով վերհիշում եմ իմ հանդիպումը մարշալի հետ եւ «Մարտիկ» թերթի խնդրանքով ուզում եմ գրել այդ մասին, մտաբերում եմ հայր ու որդի Գրիգորյաններին՝ իմ ուսուցչին ու իմ սանին, ասել է թե՛ մարշալ Բաղրամյանի սխրանքներով եւ օրինակով թեւևորված զինվորյալներին՝ մեկը 1941-1945-ին, մյուսը՝ 1988-1994-ին:

Ուսանողական տարիներին իմ հետաքրքրությունը ավելի խորացավ, երբ գրական ասպարեզի վրա երեւաց Հրաչյա Քոչարի «Գեներալի քույրը» պատմվածքը, որտեղ կերտված է մարշալ Բաղրամյանի կերպարը: Իհարկե, Մեծ հայրենականի ազգային մեր հերոս զորավարները մի աստղաբույլ են կազմում: Բայց նրանց շարքում առանձնահատուկ հետաքրքրությամբ էի հետևում մարշալ Բաղրամյանի անվանը: Գուցե եւ նրա համար, որ իմ

Մուսանող ընկերներից մեկը մարշալի համագյուղացին էր, մյուսը Չարդախլուի հարեւան Լեռնային Ջագիր գյուղից: Նրանք պատմում էին ոչ միայն տաղանդավոր զորավորի, այլև նրա հարազատների մասին, ընդգծում այդ գերդաստանի առողջ արմատների ու զորավար ծյուղերի ավանդական բարեմասնություններն ու քաջագործությունները:

Եւ ահա մի գեղեցիկ օր բախտ ունեցա տեսնելու, մոտիկից ծանոթանալու եւ զրուցելու իմ պատանության ու երիտասարդության տարիների ընտրյալ հերոսին, առասպելական դյուցազնին:

...Աշխատում էի Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնում, որպէս դասախոս:

Բանաստեղծ Վլադի Աբրահամյանը զանգեց ինձ եւ ուրախությամբ հաղորդեց.

Մարշալ Բաղրամյանը երկու օր անց ժամանելու է Բաքու: Ծննդյան 70-ամյակի առթիվ նա կմեկնի Չարդախլու՝ իր հայրենի գյուղը: Եղբորը խնդրել եմ, որ մեզ ծանոթացնի մարշալի հետ:

Մարշալ Բաղրամյանի եղբայրը հմուտ շինարար-ինժեներ էր, Անդրկովկասում հայտնի մասնագետ՝ առանձնապէս ջրանցքների կառուցման ասպարեզում: Նա ապրում էր Բաքվում:

Չետեյալ օրը ես եւ Վլադիները գնացինք «Գրական Ադրբեջան» հանդեսի խմբագրություն, հայտնեցինք մարշալի գալստյան լուրը: Բոլոր հայ գրողները ոգեւորված էին: Բանաստեղծներ Ս. Գրիգորյանը, Ա. Սենալը, Վ. Յովակիմյանը մեզ հետ պայմանավորվեցին նախ հանդիպել մարշալի եղբորը եւ ապա միասին դիմավորել զորավարին: Բայց շատ էինք մտահոգված: Վերջապէս Բաքու է ժամանում աշխարհահռչակ հերոսը, որին դիմավորելու համար ոտքի վրա էին թե՛ հանրապետության ղեկավար շրջանների ներկայացուցիչները, եւ թե՛ ռազմական ատյանների հայտնի գործիչները: Այդքանի մեջ ինչպէս պետք է մոտենանք սիրելի զորավարին, արդոյք հնարավորութիւն կլինի, կամ ինքը ժամանակ կունենա՞ մեզ ուշադրություն դարձնելու: Մեր այս մտահոգության մասին հայտնեցինք մարշալի եղբորը: Վերջինս մեզ խոստացավ, որ ամեն ինչ լավ կլինի: Աշուն էր...Օրն արեւոտ...Կասպիականը

Ծփում էր խաղաղ: Մենք մարշալին սպասում էինք ծովափնյա զբոսայգում, որտեղով պետք է վերադառնային օդանավակայանում նրան դիմավորողները: Հազարավոր քաղաքացիներ պահում էին սիրելի մարշալի ճանապարհը: Ու եկավ երանելի պահը: Ուռաբացականչություններով նրան դիմավորեցինք կառավարական տան առջև: Երբ նա դուրս էր եկել ավտոմեքենայից, մեզ թվում էր, թե իջնում է աստղերից՝ արեւային շնչով, ժպտադեմ: Դա խաբուսիկ զգացողություն էր եւ ոչ էլ ազգային սնապարծության արտահայտություն: Դա հայ ժողովրդի ավանդական խիզախության, զորավարական մտքի թռիչքների գիտակցումն էր, համակել էր դիմավորողներին: Դա այն ճշմարտության գիտակցումն էր, որ յոթ միլիոնանոց Ադրբեջանը Մեծ հայրենականում տվել է ընդամենը մեկ գեներալ, իսկ 130 հազարանոց Արցախը՝ Խորհրդային Միության 3 մարշալ, 1 նավատորմի ծովակալ, 30-ից ավելի գեներալ: Ահա ազգային այն աղբյուրը, որ մեզ թեւավորում էր այդ երեք մարշալներից մեկին, Խորհրդային Միության կրկնակի հերոս Հովհաննես Բաղրամյանին դիմավորելիս: Իսկ ծովափնյա զբոսայգում մարշալի այցելությանը սպասողների 90 տոկոսը հայեր էին, նրանք, ում պապերի ու հայրերի, ապա իրենց ձեռքերով հառնել է Բաբուն: Ի՞նչ իմանար հայ ժողովրդի պանծալի զավակը, որ տարիներ անց հենց իրեն կեղծավորաբար դիմավորող Ադրբեջանի պետական այրերի թողտվությամբ ու մասնակցությամբ ազերի ավազակները պետք է կազմակերպեին մի նոր ցեղասպանություն եւ հայաթափանեին հայակերտ ու հայաշունչ ոչ միայն Բաբուն, այլեւ Սումգայիթը, Մինգեչաուրը, նաեւ իր ծննդավայրը...

Ծովափնյա զբոսայգին շիկացել էր մարշալի եւ նրան դիմավորող հարազատների շնչից: Մենք՝ հայ գրողներս, միասին սպասում էինք զորավարին: Բարեկամների հետ ողջագուրվելուց հետո եղբայրը ներկայացրեց մեզ: Երբ մարշալը իմացավ, որ իրեն դիմավորողների խումբը հայ գրողներն են, այնպիսի մի ջերմությամբ ողջագուրվեց, որ մենք թեւեր առանք:

-Հիանալի է, որ այսքան հայ գրողներ են ապրում Բաբվում,- ասաց նա եւ ապա առաջարկեց իրեն ուղեկցող լուսանկարչին, որ

մեզ նկարի իր հետ միասին: Մենք շրջապատեցինք նրան ինչպես կարոտած եղբայրներն ու զավակները հեռվից վերադարձող դյուցազուն եղբորը, հորը: Լուսանկարվելուց հետո նա դիմեց մեզ.

-Երեկոյան անպայման կգաք եղբորս տունը, հանգիստ կգրուցենք: Ապա եղբորը պատվիրեց, որ տան հասցեն տա մեզ:

Երեկոյան ժամը ութին մարշալ Բաղրամյանի հյուրերի մեջ էինք: Նա մի ամբողջ ժամ գրուցեց միայն մեզ հետ: Սամվել Գրիգորյանը, որ Բաքվի հայ գրողների սեկցիայի նախագահն էր, պատմեց քաղաքում հրատարակվող հայերեն գրական հանդեսի պլանների, նրա շուրջ համախմբված գրողների անելիքների մասին:

-Իսկ ինչպիսի՞ն է գրական կյանքը Ղարաբաղում,-հետաքրքրվեց մարշալը:

Ղարաբաղում գործում է գրողների մասնաճյուղ, ուր ընդգրկված են շնորհալի գրողներ:Նրանք հիմնականում տպագրվում են «Գրական Ադրբեջան» հանդեսում,-պատասխանեց Ս. Գրիգորյանը:

Մարշալը լսեց եւ ապա խորհրդավոր պատվիրեց.

-Ղարաբաղի գրողներին լուրջ ուշադրություն դարձրեք: Ղարաբաղը մեր ազգային ռազմական կարողության եւ գիտական մտքի շտեմարանն է:

Ապա հարցրեց մեզ, թե ով քանի գիրք ունի,ինչ հնարավորություններ կան տպագրվելու:

Մենք ներկայացրինք այն սուղ պայմանները, որ ստեղծված էին Ադրբեջանում հայ գրողների ստեղծագործությունները տպագրելու համար:

-Դուք գրեցեք եւ լավ գրեցեք, ոչ մի հաջող գործ սեղանին չի մնում,-խորհուրդ տվեց մեզ եւ ապա առաջարկեց իրենց հետ սեղան նստել, որ կազմակերպվել էր իր պատվին:

Մարշալի եղբայրն ամեն կերպ ձգտում էր, որ երեկոն անցնի կազմակերպված, ուրախ: Առաջարկվեց հետաքրքիր կենացներ: Վլ. Աբրահամյանը կարդաց իր նոր բանաստեղծությունը՝ նվիրված մարշալին:

-Չարգելի Չովհաննես Քրիստափորովիչ,-դիմեցի ես, մի բանաստեղծություն ունեմ Ղարաբաղի մասին, ամեն անգամ արտասանելիս տեսնում եմ նաեւ Ձեզ, չէ՞ որ Դուք եւս արցախցի եք:

-Իհարկե, արցախցի եմ,- հպարտորեն ասաց նա եւ ապա ավելացրեց,- լսում եմք:

Ես հուզված արտասանեցի.

*Բարձրագագաթ սարերը քո
Ու դաշտերը բուրումնավետ,
Մարդ մի օրում կանցնի ոտքով,
Ջրուցելով դարերի հետ:*

*Իմ Ղարաբաղ, փոքր ես, սակայն
Մոր փոքրությանն ո՞վ է նայում,
Ո՞ր հերոսներ ծնող մայրն է,
Որ աշխարհին չի հմայում:*

-Այդպես է,-ուշադիր լսելուց հետո ասաց նա,-Ղարաբաղը արծիվների բույն է, ղարաբաղցիները պատերազմի ընթացքում հիացրել են ինձ ամենուրեք, խիզախ են, անձնուրաց, խելոք: Ես Ղարաբաղը շատ եմ սիրում: Յենց որ մի առիթ լինի, անպայման պետք է այցելեմ Ղարաբաղ:

Երեկոն անջնջելի տպավորություն թողեց մեզ վրա: Մեր դեմ հառնել էր ոչ միայն հռչակված զորավարը, այլեւ մեծ մարդը, քաղաքացին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ

Վլ. Աբրահամյանն ու ես պայմանավորվեցինք մասնակցել մարշալի հարազատ գյուղում թանգարանի բացման արարողությանը: Եւ մարշալի խմբի հետ եղանք գյուղում: Յուսիսային Արցախի հերոսական Չարդախլուն տոնական տեսք էր ստացել: Այն փռված էր Շամխորի շրջանի Ջագիր գետի ձախ ափին, շրջկենտրոնից 20 կմ հեռավորության վրա, դեպի Սեւան տանող ճանապարհին: Գյուղը միշտ էլ մարդաշատ է եղել: 1918-1920 թթ. ազերի թուրք ավազակախմբերի դեմ անխորտակ մի բերդ էր Չարդախլուն, որի շնոհիվ փրկվել են շրջակա տասն-

յակ հայկական գյուղերը: Խորհրդային տարիներին գյուղը շարունակել է իր պատմությունը՝ նոր երազներով ու ակնկալություններով: Այն ունեցել է միջնակարգ եւ ութամյա դպրոցներ, գրադարան, մշակույթի տուն, կապի բաժանմունք, հիվանդանոց: Եւ ահա այդ ամենին գումարվում է նաեւ թանգարանը:

Աշխատանքիս բերումով ես առիթներ եմ ունեցել մասնակցելու Արցախի մի շարք թանգարանների բացմանը. եղել եմ Կոլխոզաշենում՝ գեներալ Բարսեղովի տուն-թանգարանում, մասնակցել եմ ճարտարի հոյակապ թանգարանի բացման արարողությանը, ներկա եմ եղել Ղազարի շրջկենտրոնի երկրագիտական թանգարանի բացմանը:

Սակայն Չարդախլու գյուղի թանգարանի բացումը միանգամայն այլ իմաստ ուներ: Նախ բացմանը ներկա էր Խորհրդային Միության մարշալ Յ. Բաղրամյանը եւ էլի տասնյակ զորավարներ համանուն գյուղից: Եւ ապա գյուղն իր մեծությամբ եւ մարդաշատությամբ հմայիչ էր կրկնակի:

Պարզ է, որ թանգարանի բացման ժապավենը պետք է կտրեր մարշալը: Ժողովուրդը հուզված էր...Գյուղացիներից շատերը արտասվում էին հիշելով իրենց զոհյալներին, բայց խանդաղատանքով էին շրջապատել իրենց աշխարհահռչակ զավակին:

Բացվում է թանգարանը՝ հետաքրքիր, հարուստ: Նրա առյուծի բաժինը Մեծ Հայրենականին նվիրած ցուցափեղկերն էին: Այցելուների առջեւից դանդաղ քայլում էր մարշալը, նրան բացատրություններ էր տալիս դպրոցի տնօրենը: Երբ հասան մի ցուցափեղկի, մարշալը կանգնեց երկար, շփեց ճակատը, հուզվեց: Այս հաղթահասակ ու հաղթալանջ դյուցազնի աչքերը լցվել էին արցունքներով: Ստենդում գրված էր. «Չարդախլու գյուղից 1200 բնակիչներ մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին»: Ապա գրված էին պատերազմում նահատակված հարյուրավոր չարդախլուցիների անունները: Ցուցափեղկի վերեւի մասում խոշոր տառերով գրված էին Խորհրդային Միության մարշալ Յովհաննես Բաղրամյանի եւ Խորհրդային Միության զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Յամազասպ Բաբաջանյանի անունները:

Թանգարանի մասունքները դիտելուց հետո բակում սկսվեց

Մարշալի բրոնզե կիսանդրու բացման արարողությունը: Հետաքրքիրն ու հաճելին այն էր, որ համագյուղացիները եւ հարեւան հայկական գյուղերի բնակիչները ուշադրություն չէին դարձնում կիսանդրուն: Նրանք շրջապատել էին իրենց զավակին, ասես հաղթանակի դից Վահագնն էր իջել Կաթնժիրից: Մարդիկ ուրախությունից, կարոտի խորին զգավումից արտասվում էին, համբուրում իրենց հարազատ զավակի ճակատը, ձեռքերը: Մարշալը փոխադարձ սիրով ու զգացումով էր համակվել դեպի համագյուղացիները՝ մեծից մինչեւ փոքրը:

Վերջապես բացվեց կիսանդրին: Մի քանի հոգի ելույթներ ունեցան, շնորհակալության եւ հպարտության խոսքեր ասացին մարշալին:

Իր պատասխան խոսքի վերջում զորավարը ընդգծեց.

-Պինդ կացեք, ամուր պահեք գյուղը եւ մեր այս սարերը: Դուք եք իմ ծնողը եւ իմ մեջ ինչ լավ բան կա, ձեր տվածն է, ձեր կաթի հետ անցել իմ արյանը, սիրելի ժողովուրդ: Հպարտ եմ, որ ես ձեր զավակն եմ:

Առավոտից մինչեւ ուշ երեկո Չարդախլուն ցնծության մեջ էր, շրջակա սարերն էլ ասես պար էին բռնել հերոս զավակի շուրջ: Նրանք ողջունում էին աշնանային երփներանգ գույներով, ամտեղյակ ազերի-թուրք հարեւանի նենգորեն փայփայած մի ձգտումին՝ հայաթափ անել այն գյուղը, որոնք ընդունակ էին ծնել մարշալ Բաղրամյանի նման քաջագուններ...

1988-ից հետո ազերիները իրականացրին իրենց նենգ նկրտումները: Չկան Շամխորի շրջանի հայկական գյուղերը, չկա արծվաբույն Չարդախլուն: Բայց կա հիշողության այն ուժը, որ չի ճանաչում սահմաններ, իր մեջ ներառում եւ պահպանում է ազգային բարեմասնությունները: Չարդախլուի բնակիչները ազերիների ճնշմամբ թողեցին պապենական արծվաբույնը, սակայն հոգիներում առան պատկերը ավանդական օջախների, իրենց հետ Հայոց աշխարհ տարան Հովհաննես Բաղրամյանի բրոնզե կիսանդրին, տարան կանգնեցրին իրանց հին գյուղի անունը կրող նոր բնակավայրում՝ որպես հերոսության ու հարատեւման թելավոր խոհրդանիշ:

ՀԱՆԳԻՊՈՒՄ ԵՐՐՈՐԴ

1976-ի աշունն էր... Մեկ տարի անց պետք է լրանար մարշալի 80-ամյակը: Բայց երբեք չէր մոռացել իր խոստումը՝ այցելել Ղարաբաղ, հանդիպել իր հայրենակիցների հետ: Ստեփանակերտցիները արդեն կառուցել էին Մեծ հայրենականի զոհյալներին նվիրված հուշահամալիրը:

Լուրը հաճելի թեւաբախումներով հասել էր բոլորին, հոկտեմբերի 18-ին մարշալը պետք է հյուրընկալվի Արցախի աշխատավորներին: Այդ օրը՝ առավոտվանից քաղաք տանող խճուղու երկու կողմերին կանգնել էլ պահում էինք հերոսի ճանապարհը: Ու եկավ պահը: Թանկագին հյուրերին սրտառուչ ողջույններով իրենց գիրկն առան ոչ միայն ստեփանակերտցիները, այլև Մոզմն ու Քիրսը, մեծ ու փոքր սարերը, շշմջալով հավատի եւ հույսի մի երդում՝ «Եղել ենք ու կլինենք»:

Քաղաքի կենտրոնական հրապարակում հանդիպելուց հետո մարդկային հոծ խմբերը ճանապարհվեցին համալիր: Տեսնել էր պետք, թե ինչպիսի հպարտությամբ ու սիրով են շրջապատել ստեփանակերտցիները քաջարի մարշալին: Նա զրուցում էր հարազատի խանդաղատանքով, անմիջական, սիրալիր: Մարշալը, որ առաջին համաշխարհային պատերազմի արիավիրքներից հասել էր Սարդարապատ, անցել 20-րդ դարի բոլոր հրդեհների միջով, իր ռազմական տաղանդով ու արվեստով մասնակցել ֆարշխտական դեղին ժանտախտից աշխարհի փրկությանը, օրհնել բազմաթիվ հուշարձան համալիրներում վառվող կրակները, այս անգամ ուրիշ հուզում էր ապրում: Նա հոր, եղբոր, հարազատի կարոտով ծաղկեպսակ դրեց հուշակոթողի պատվանդանին, պատիվ տվեց եւ առաջին անգամ մեղմ քայլերով մոտեցավ իրեն սպասողներին: Այստեղ էին հավաքվել Մեծ հայրենականի վետերանները, հերոսները, կոլտնտեսությունների ղեկավարները: Մարշալի պատվին կազմակերպված միտինգում իրենց սրտի խոսքն ասացին Սովետական Միության հերոս Աշոտ Գասպարյանը, ճարտարի կոլտնտեսության նախագահ, Սոցիալիստական աշխա-

Մտանքի հերոս Սուրեն Ադամյանը: Պատասխան խոսքով հանդես եկավ մարշալը: Չնայած 79 տարեկան էր, խոսում էր եռանդով, ոգեշնչող տոնով, կենսափորձով հարուստ արցախցու իմաստությամբ:

Համալիրում կազմակերպված արարողություններից հետո մարշալին ուղեկցեցին Ղարմետաքսկոմբինատ, որտեղ բանվորական կոլեկտիվը հարգանքի ու սիրո իր տուրքը մատուցեց թանկագին հյուրին:

Ստեփանակերտից հետո ավտոշարասյունը բարձրացավ Շուշի: Քաղաքի մուտքի մոտ՝ հուշահամալիրում նա զրուցեց իր հրամանատարության ներքո պատերազմին մասնակցած նախկին զինվորների հետ: Հավաք էր կազմակերպվել Սովետական միության կրկնակի հերոս, շուշեցի Նելսոն Ստեփանյանի մոտ: Մարշալը ծաղիկներ դրեց իր մարտական համերկրացու կիսանդրու պատվանդանին, խորհրդավոր հայացքով նայեց խիզաղ օդաչուի կիսանդրուն եւ ասաց. «Նա արժիվ էր բառիս բուն իմաստով, չի մոռացվի երբեք»:

...Ղարաբաղ այցելելուց հետո մարշալը ապրել է վեց տարի, իր մահկանացուն կնքելով 85 տարեկան հասակում: Հիմա՝ նրա ծննդյան 100 ամյակի կապակցությամբ, հետադարձ հայացք ձգելով, տեսնում ենք նրա հաղթական հասակը, խոնարհվում նրա մեծ կյանքի առջեւ եւ ողջունում նրան՝ այս անգամ ոչ թե ԼՂ մարզկենտրոնում, այլ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում եւ մեր պապերի կերտած, ազատագրված Շուշիում, որտեղից թեկուզ ազերիները ավարել են իրենց իսկ փրկարար Ն. Ստեփանյանի բրոնզե կիսանդրին, միեւնույն է, մեր լեռնաշխարհում թեւածում է եւ՝ Նելսոնի, եւ՝ արցախյան պատերազմում նահատակված ազատամարտիկների ոգին: Նրանք ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարների եւ զինվորների շրթերով պատիվ են տալիս մեծանուն մարշալին ու երդվում.«Ծառայում ենք հայ ժողովրդին»:

«Մարտիկ»,

Նոյեմբեր- դեկտեմբեր, 1997 թ.,

ԱՐՑԱԽԻ ՈԳԻՆ

(Ռ. Գեւորգյանի «Չերոսապատումի հավերժասուզին» ժողովածուն)

Արցախյան ազգային-ազատագրական պայքարի սուրբ նահատակներին նվիրված երգերը լուրջ հիշողություններ չեն, այլևս ապրելու, արարելու դասեր: Ճիշտ է նկատել արցախյան գոյամարտին սկզբից մինչև վերջ մասնակցած «Սասնա ծռեր» ջոկատի հիմնադիր, բանաստեղծ Ռուբեն Գեւորգյանը: Արցախյան մարտադաշտում կորցնելով քաջարի եղբորը՝ Սամվելին, Ռուբենը թշնամուն պատասխանեց եւ զենքով, եւ երգով:

Ռ. Գեւորգյանը գրքի «Ազգաշունչ հոգու խռովք» շարքում զետեղել է բանաստեղծություններ՝ նվիրված Սոնթե Մելքոնյանին (Ավոյին), Սամվել Գեւորգյանին (Չիբուխին), Մուշեղ Մխեյանին (Վոժդին) եւ այն զինակիցներին, ում հետ մարտնչել է Արցախի ազատության համար: Ավոյին ընծայած ակրոստիքոսի մեջ Ռ. Գեւորգյանը ընդհանրացնում է.

*Մեռնում են տղերքն էն մեր սարերում,
Երանի նրանց, երանի ազգիս,
Լեցուն է վրեժով ոգին Արցախիս...
Քեզ ենք մենք փարվում, մեր հող հարազատ,
Որ տեսնեն աչքով, որ դու տեր ունես,
Նայեն, թե ինչքան փարվողներ ունես,
Յոթ օր, յոթ գիշեր հաղթանակ տոնենք,
Աստծու սուրբ լույսը ծեր վրա իջած,
Նորեն կգոռամ՝ մի բռունցք դարձեք:*

Ռ. Գեւորգյանի բանաստեղծական աշխարհը փոթորկվում է անվերադարձ կորուստներից ակունքվող կարոտներից: Նա մարտադաշտում կողք-կողքի կռվել է զոհյալ զինակիցների հետ, արտասվել նրանց գլխավերելը, խրամատներից հանել, հողին հանձնել, նորից նետվել մարտի իր եւ ընկերների փոխարեն: Եվ պատահական չէ, որ նրա «Չերոսապատումի հավերժասուզին» ժողովածուի համարյա բոլոր տողերում զգում ես լացի գինը եւ ապրելու տենչը: Նա սրտի ցավով դիմում է ժողովրդին, առաջին հերթին հիշեցնում. «Իմ

«հայ ժողովուրդ, քո զավակները դառել են կռուներ»: Սակայն դրան գումարվում է եւ մի ուրիշ ցավ՝ «Դեսպանատների դռներին կանգնած խղճալի հայեր»-ի համար, որոնք որոշել են թողնել հայրենի երկիրը եւ ապրել օտար ափերում: Բանաստեղծը խորհուրդ է տալիս հարազատ մնալ «Մեզ չուրացած Մասիս սարին, որ ոգին է մեր միշտ հառնող ազգի»: Ասել է թե՛ նահատակների ամենապայծառ հիշատակը դա հայրենի օջախները շեն պահելն է:

Պատերազմական օրերի հաղթանակների եւ կորուստների մի ամբողջական պատում է «Յերոսապատումի հավերժասուզին» պոեմը, գրված զգացմունքների հախուռն թափով: Ճիշտ է, բանաստեղծը պոեմի տաղաչափական ավանդույթների, կառուցվածքային օրինաչափությունների մեջ իրեն ազատ է զգում, սակայն դա չի խանգարել, որ ընդգծի ասելիքի այն ուժը, որ կապված է պատերազմի մասնակցի հաղթանակած ոգու եւ կորուստների ցավի հետ:

Ռ. Գեւորգյանը պոեմում նկարագրում է իր տեսածը, ապրածը, որ ներշնչումով հանձնել է թղթին՝ որպես թանկ արյուն:

... Ղարաբաղը Ռուբենի համար կողմնակի տարածք չէ, այլ օթեւան: Ղարաբաղի հողի մեջ նա տեսնում է իր հարազատ եղբոր թանկ արյունը: Արցախի հողը նա պաշտում է որպես իր եղբոր արյամբ փրկված Յայոց բերդ:

Կարդալով Ռ. Գեւորգյանի պոեմը, նախ ապրում ես հաճելի մի զգացում, որ բխում է Մեծ Յայքի 10-րդ նահանգը հանդիսացող Արցախի հանդեպ եղած որդիական սիրուց: Ուրեմն թեւածում է Արցախի ազատագրմամբ Յայաստանի կորուսյալ մասերը ի մի բերելու հայապահպան երազանքը: Ահա թե ինչու ազատամարտիկ Ռ. Գեւորգյանի պոեմը հյուսված է հեղինակի՝ իր իսկ խոստովանությամբ. «մենախցիկից, սարերից, դաշտերից, աճյուններից ու ողբերից», ասել է թե՛ հենց իր «ապրած կյանքից»:

Բանաստեղծը դիպուկ է վերնագրել պոեմը: Վերնագիրը հայ ժողովրդի ճակատագրի մի նոր բնութագրություն է: Յյուսելով հերոսական իր պատմությունը, հայը հավերժ զգացել է սուզի ծանրությունը՝ ստացած չար եւ չարագործ աշխարհից: Պատումը սկսելով 1988-ի սկզբի պատմական իրադարձություններից, «Սասնա ծռեր» ջոկատի հիմնադիր բանաստեղծը էջ առ էջ ներկայացնում է այն հերոսամարտերը, որ սկիզբ առան երասխավանից եւ իրենց հաղթական ավարտը գտան Արցախի լեռներում:

Պոեմի նախաբանում բանաստեղծը կոչ է անում գրչեղբայրներին չնոռանալ նրանց, ովքեր իրենց կյանքը տվին մեր հողին:

Ռ. Գեւորգյանը պոեմի պատումի մեջ ներկայացնում է հայդուկային պայքարի նախնական օրերից մինչեւ կանոնավոր բանակի ստեղծումն ու հաղթական կռիվները.

Չիշում եմ, կարծես ծովել էինք, ինչ է,

Եվ իրոք ծոված,

Ծոված հոգով կուռ,

Չենց այդ օրվանից դառանք «Սասնա ծուռ»:

«Սասնա ծուռ» ջոկատի հերոսական ճանապարհի կարելու իրադարձությունների օրագիր հանդիսացող պոեմում ծանոթանում են գերության դառնությանը, կորստի ցավին, հաղթանակի անթաքույց հրճվանքին:

Ռ. Գեւորգյանի «Չերոսապատումի հավերժասուզին» պոեմը կարդալուց հետո չես կարող կրկին չանդրադառնալ Չրաչյա Մաթեոսյանի գրած առաջաբանին, որտեղ ընդգծված է «Եվ պիտի համարձակվեն ասել, որ պոեմի գլխավոր հերոսները մեր բառաշխարհի գանձարանից բարձրացած այս բառերն են՝ Չերոսապատում եւ Չավերժասուզ... Երբ թշնամին ավերում է Չայոց սահմանքն ու Արցախ աշխարհը, հայ ըմբոստների հետ պիտի արթնանան նաեւ բառերը...»

Անդրադառնալով զոհված ընկերների հիշատակին, Ռ. Գեւորգյանը պոեմի վերջում ընդգծում է.

Մեռան սիրած վարդերը մեր,

Էլ չեն առնի հարություն,

Երազների հորձանքն է լուկ

Դառնում կյանքի պատմություն:

Չայոց կյանքի պատմությունը, հիրավի, Չերոսապատումի եւ Չավերժասուզի ընթացք է: Ընթացք, որից ճառագում է հավատի լույսը կյանքի, մարդու, գալիքի հանդեպ: Այդ լույսը անմար է, որովհետեւ ակունքված է նահատակների սրտերից եւ ամբողջության մեջ ոգին է Արցախի...

**«Ստեփանակերտ»,
1 մայիսի, 1998 թ.**

ՅԵՐՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՅՅԱՆ

(Սեյրան Օհանյան - «XXI դարի բանակը»)

Յերոսությունը փիլիսոփայական հասկացություն է... Այն ծնվում է երկրի եւ ժողովրդի ճակատագրից՝ իր մեջ ներառելով կյանքի բոլոր բնագավառների լուսավոր շերտերն ու սահմանները: Յերոսությունը ժողովրդի եւ անհատի անբաժան զգացումների սերուցքն է, որն իր մեջ չի ընդունում ո՛չ կեղտաջուր, ո՛չ կեղծիք: Յերոսությունը կենսահատատ արարք է, որը վերածվում է բանաստեղծության, երաժշտության, նկարչության, քանդակագործության, կոնկրետ՝ արվեստի բոլոր տեսակների, որոնք գալիք սերունդների հետ խոսում են մեծ երախտավորների անունից՝ հանուն գոյատեւման եւ գալիքի կերտման:

Յերոսության փիլիսոփայական այս ընկալմամբ եւ վճռականությամբ հայ ժողովրդի արցախյան հատվածը ոտքի ելավ՝ թոթափելու կործանարար լուծը: Յերոսության փիլիսոփայական այս ընկալմամբ մայր Չայաստանը եւ աշխարհասփյուռ հայությունը ոչ միայն խրախուսեցին իրենց արյունակից հարազատներին, այլեւ նրանց հետ միասին վերցրին զենքն ու խաչը եւ նետվեցին արդար ու սրբազան մարտի: Եվ նրանց տասնյակ հազարավոր զոհերի արյամբ ծածանվեց ազատության եւ անկախության եռագույնը, փայլեց հայոց զինանշանը, հնչեց հայաշունչ օրհներգը՝ որպես հավերժության անցագիր, որ այսուհետ լինելու է մեր սերունդների մշտահուլով փիլիսոփայությունը:

Յնուց անտի հայտնի է աշխարհին, որ հայ ժողովուրդը միանգամից է հունցել իր կերպը՝ հենված հայրենի հողին, հայացքը՝ ոգու երկնականարին, դառնալով հողեղենի եւ ոգեղենի առասպելված ճամփորդ: Այդպես Չայկ Նահապետը նետահարել է զավթիչ Բեւիին եւ բանասացներին խորհուրդ տվել երեւույթը դարձնել դա՛ ուղղված գալիքին: Այդպես են վարվել նաեւ Չայկի զավակները՝ արեւերես Արան, առյուծասիրտ Արտաշեսը, քաջակորով Տիգրանը՝ իրենց հայրենանվեր սխրանքը կտակելով այն երգիչներին, որոնք դարերին են հանձնել ժողովրդի առասպելված փիլիսոփայությունը՝ «Սահման քաջաց՝ զենն է յուրյանց»: Եվ այս ապրեցնող խորհուրդը հետագայում ուղեկցում է Վարդան Մամիկոնյանին, Եսայի ապու Մուսեին, Դավիթ Բեկին, Անդրանիկին, Նժդեհին, Բաղրամյա-

նին, Բարաջանյանին, ընդհանրության մեջ՝ մեր ժողովրդի աստղային սերուցքին:

Ահա, հենց այս խորհուրդն էր, որ չէր քնել հայոց արցախյան հատվածի հոգիներում, այս խորհուրդն էր, որ 1965-ին Երեւանի հրապարակներ հանեց ցավից ատամները կրճտացնող մտավորականներին, ուսանողներին՝ Հայոց մեծ եղեռնը չմոռանալու, պահանջատիրոջ իրավունքով աշխարհի հետ խոսելու համար: Հենց այս խորհուրդն է, որ աշխարհի մի շարք երկրներում հայ վրիժառուներն արժանին մատուցեցին թուրքական դեսպանատներին:

Հերոսության հայախոս փիլիսոփայության մի նոր, վառ դրսեւորում է ԼԴՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենենտ, Արցախի հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանի ասպետ Սեյրան Օհանյանի «21-րդ դարի բանակը» գիրքը: Թեկուզ այն մի հեղինակի գործ է՝ նվիրված Արցախի պաշտպանության բանակի ստեղծման 15-րդ տարեդարձին, սակայն նրանում խոսում է հայ ժողովրդի դարավոր հոգին, ասել է թե՛ հայոց հիմնադրամյա պատմության փորձն ու փորձանքն է հողովվում՝ դարձած իմաստություն, գալիքի դռները լայնորեն բացելու եւ վստահ քայլելու պատվիրան: Եթե ավելի կոնկրետ ու շոշափելի դարձնենք մեր այս դիտարկումը, պետք է ընդգծենք, որ Սեյրան Օհանյան գործապետի շուրթերով մեր ժողովուրդն է աշխարհին ներկայացնում իր իրապատում 21-րդ դարի հեքիաթը: Այդ իրապատում հեքիաթի գործող դյուցազնը ժողովուրդն ինքն է՝ ձեռքին թուր Կայծակին, նժույզը՝ Քուռկիկ Ջալալին, զարկը՝ վճռական, գոյատեւման երաշխիքը՝ այն բանակը, որ ունի երրորդ հազարամյակի զինուժի մարտունակությունն ու անպարտելիությունը:

Սեյրան Օհանյանը մարտական իր կոփվածքով, ժողովրդական իմաստության խառնվածքով պատմության ընթացքի մեջ կարողանում է տեսնել աստղային այն պահերն ու հողովույթները, որոնք դարակազմիկ են, ճակատագրական ու բախտորոշ: Այդ համոզմունքն է ունենում ընթերցողը, երբ կարդում է գրքի «Տասնհինգամյա հերոսական ուղի» ընդհանրականը: Դա սովորական փաստերի ցուցադրում չէ, այլ անզիջում մարտնչելու, նենգ ու արնախում թշնամուն ծնկի բերելու, արյան գնով ազատ ու արժանապատիվ ապրելու կենսասահաստատ փիլիսոփայություն, որի գործոնները ժողովուրդ-պետություն-բանակ համագործակցությունն ու միաս-

ությունն են: Այստեղից էլ զորապետ հեղինակի վստահությունն թելադրող խորհուրդը. «Մտածելով պատերազմի մասին, ըստ այդմ՝ բարձրացնելով սեփական զինուժի մարտունակությունը, որը, թերեւս, հակառակորդին զսպելու ամենակարեւոր կանխարգելիչ միջոցն է, մենք լավագույն նախադրյալներն ենք ստեղծելու լիարժեք խաղաղություն ստեղծելու համար» (էջ 7):

Այստեղ չես կարող չհամաձայնվել Արցախի հերոս, գրող-հրապարակախոս, գրքի նախաբանի հեղինակ Ջ. Բալայանի կարծիքին, որ այս ուսումնասիրությունը մեր բանակի էության ու իմաստի մասին հրաշալի ատենախոսություն է:

Հրապարակախոսական տարբեր ժանրերի համահավաք մի փունջ է գիրքը: Նախ՝ ուշադրության են արժանանում Ս. Օհանյանի 2002-2007 թվականների տարեմուտի ուղերձները ՊԲ անձնակազմին: Ընթերցելով դրանք՝ հոգու ամենատես աչքերով տեսնում ես այն պանծալի ուղին եւ քրտնաթոր ու արդյունավետ աշխատանքը, որ կատարվել է մեր պաշտպանական բանակում, որ փորձառու եւ հեռատես զորապետի եւ նրա ջանքերի շնորհիվ մեր զինուժի անցած յուրաքանչյուր տարին եղել է կոփվելու եւ զորանավոր մի հաստատուն քայլ:

Ժողովրդի պատմական ընթացքի, անհատի դերի, սերունդների ժառանգափոխության, ազգային ճակատագրի հանդեպ ունեցած նրանց պատասխանատվության, ժամանակաշրջանի բարոյահոգեբանական փոփոխությունների վերաբերյալ մտորումներն ուղերձներում առիթնող խորհուրդներ են: Ամսիջական եւ համոզիչ են դրանք: «Պատմության հոլովություն,- գրում է հեղինակը,- ամեն մի սերունդ իր ճակատագիրն ունի. մենք էլ տանում ենք մեր խաչը: Ոմանց տարիների ընթացքում շատ է տրվում, իսկ ոմանցից էլ շատ է պահանջվում: Ճակատագրի բերումով մեզ բաժին է հասել երկրորդի բախտը: Ասել է թե՛ մեզ է վիճակված կատարելու այն չարվածը, որը ժառանգել ենք նախորդ սերունդներից:

Իսկ դա, անկասկած, մեր պատիվն ու հպարտությունն է: Իմացած լինենք, որ յուրաքանչյուր մարդու կյանք իր իսկ ձեռքով գրված գիրք է: Եկեք մեր կյանքի գիրքը գրենք այնպես, որ հետագայում ստիպված չլինենք նորից սրբագրել...» (էջ 31):

Հայրենիքի եւ ժողովրդի ճակատագիրն իրական տեսադաշտի վրա է շոշափում հեղինակը, որն էլ նրան թելադրում է հայրենիքի եւ

Քաղաքացու միասնության խորհուրդը, որ հնչում է որպես ժողովրդական թելավոր միտք: «Հայրենիքն ամեն մի մարդու ներքին ընկալումների ամբողջությունն է, եւ նրա սկիզբը պետք է որոնել հենց անձի մեջ: Որքան հարուստ է անհատի ներաշխարհը, այնքան ընդգրկուն է հայրենիքի հանդեպ նրա վերաբերմունքը» (էջ 27):

Ջորապետի սեփական ծառայությունը երկրին եւ կենսափորձից հասունացած ինտուիցիան թելադրում են հեղինակին՝ իր զինվորին հասցնելու պատվաբեր այն միտքը, որ հայրենիքին ծառայելը կարելի էրագույն այն ավանդույթն է, որը փոխանցվում է սերնդեսերունդ եւ հանդիսանում է զինվորական վարքականոնի անկյունաքարը: Ջորապետն այդ ծառանգության մեջ տեսնում է խորը իմաստ, քանի որ պապերի եւ հայրերի՝ նախկինում կատարած սխրանքներում պարունակվում է անհատների ուժ որդիների եւ թոռների համար: Միաժամանակ հեղինակն ընդգծում է. «Հենց այդ հզոր ավանդույթն է հնարավորություն տալիս զգալ հայրենիքի եւ ժամանակի կապը, նպաստում ռազմական շարքերի միավորմանն ու համախմբմանը, զորքին պատկանելու համար հպարտության զգացումի ձեւավորմանը, մասնագիտական հմտությունների ձեռքբերմանն ու սխրանք գործելուն մշտապես պատրաստական լինելուն» (էջ 51):

Փորձառու հրապարակախոսի հմտությամբ Ս. Օհանյանը հայրենասիրական իր գաղափարներն ավելի ընկալելի դարձնելու համար դիմում է հայ ժողովրդի զինվորյալ մեծ երախտավորների՝ Դ. Բաղրամյանի, Գ. Նժդեհի, Անդրանիկի, Վ. Սարգսյանի եւ այլոց, ինչպես նաեւ օտարազգի աշխարհահռչակ զորավարների ասույթներին: Այս հանգամանքը եւս դրականորեն է նպաստում գրքի ճանաչողական, դաստիարակչական եւ գեղագիտական արժեքներին:

Ջորապետ հեղինակը եզրակացնում է, որ հայրենիքը պատկանում է ամբողջ ժողովրդին, բոլոր կուսակցություններին եւ նրանց անդամներին: Ուստի զինվորը զինուժում ծառայելիս՝ լինի խաղաղ օրերին, թե պատերազմի դաշտում, պետք է գլխավերելուն կամ հոգու մեջ կրի միայն հայրենիքի դրոշը: Այս առումով հեղինակը տեղին մեջբերում է «հայրենական լեգեոնի» զորապետ Ջոն Շիշմանյանի խորհուրդը. «Զինվորը որեւէ կուսակցության չի պատկանի: Զինվորի կուսակցությունը գենք ծնող ազգն է: Զինվորը դասակարգային դրոշակ չունի, եւ պետք չէ, որ ունենա: Զինվորին առաջնորդող դրոշակը միայն ու միայն բովանդակ ազգության խորհր-

Պրանիշն իր ծալքերի մեջ խտացնող ազգային դրոշակն է» (էջ 52):

Զինվորական կյանքի առօրյա ընթացքին, ժողովրդի վստահությանը եւ հավատին, զինծառայողների ընկերական եւ հարգալից փոխհարաբերություններին եւ այլ կարեւոր հիմնախնդիրներին վերաբերող ուսուցողական ընդհանրացումներ են գրքում զետեղված հարցազրույցները՝ կազմակերպված՝ ՋԼՄ-ների եւ տարբեր ատյանների ներկայացուցիչների կողմից: Դրանցում ընդգծված են զորապետ հեղինակի վստահությունն ու գործիմացությունը: Ընթերցողը ներքին հպարտության զգացում է ապրում, երբ ինքն էլ համոզվում է, որ մեր զինված ուժերը ցանկացած պահի պատրաստ են կատարելու ամենաբարդ ու դժվարին առաջադրանքները, որ զինվորի հետ մեր բանակում վերաբերվում են հարգանքով ու վստահությամբ, որ այսօր մեր զինուժն ավելի բարձր է հոգով, քան՝ երբեք: Բարձր գնահատելով ռազմական գործի վարպետներին, հեղինակը հարցազրույցներում չի մոռանում անելիքները: Որպեսզի վաստակվի հզոր հայրենիք ունենալու իրավունքը՝ ամեն ոք առաջին հերթին պետք է լինի իր խղճի ստրուկը եւ նոր միայն խորհի փառքի մասին,- խորհրդածում է հեղինակը:

Թելավոր մտքերի առկայությունը հաճելի տպավորություն է թողնում ընթերցողի վրա: Խոսելով բանակի եւ ժողովրդի միասնության անհրաժեշտության մասին, նա ընդհանրացնում է . «Միասնությունն անպարտելիության երաշխիքն է», «Մենք գիտենք ինչպես, երբ եւ հանուն ինչի կռվել», «Հավատում են իմ ժողովրդի խոհեմությանը», «Մենք մեր զենքի փառքը հասցրել ենք մինչեւ այսօրվա սահմանը»: Հարցազրույցներում չեն մոռացվում Ադրբեջանի կառավարող շրջանների անձանց հոխարտանքները Արցախի եւ Հայաստանի հանդեպ: Զորապետ հեղինակի պատասխաններում հնչում են իրատեսական հակիրճ նախազգուշացումներ. «Ես նրանց կանվանեի ավանտյուրիստներ», «Ցանկացած պատերազմ իր հետեւանքներով միշտ էլ եղել է դաժան», «Մեր քայլերը կրում են կանխարգելիչ բնույթ», «Հիմնախնդրի կարգավորման ամենակարճ ճանապարհը դարաբաղյան կողմի հետ հաշվի նստելն է»:

Մ. Օհանյանը մեր եռատոնը գնահատում է որպես մեր նախորդների եւ այսօրվա սերնդի կատարածի ամբողջացում, միաժամանակ վստահեցնում է, որ մեր Պաշտպանության բանակը արժանի է կոչվելու երրորդ հազարամյակի բանակ:

Գրքի մի զգալի բաժինը կազմում են Ս. Օհանյանի ելույթները, զեկույցները եւ ողջույնները Արցախյան պատերազմի վետերանների միության հիմնադիր, Հայաստանի երկրապահների միության համագումարներում, ԼՂՀ զոհված ազատամարտիկների ծնողների ընկերության 2-րդ համաժողովում, գերիների միջազգային օրվան նվիրված հուշ-երեկոյում, Արցախի պետական համալսարանի ուսանողության հետ ունեցած հանդիպման ժամանակ, հաղթանակի օրվա, Շուշիի ազատագրման եւ Պաշտպանության բանակի ստեղծման տարելիցին նվիրված հանդիսավոր ժողովում եւ այլ նշանակալից միջոցառումներում: Այս նյութերը եւս կարելի էր վերցնել մեր զինուժի անցած փառավոր ուղու ընդգծմամբ, մեր ժողովրդի սրբազան նպատակների ներկայացմամբ, Արցախյան հիմնահարցը խաղաղ ճանապարհով լուծելու վճռականությամբ, որոնք ընդհանրության մեջ պատմամշակութային նկատելի արժեք են ներկայացնում:

Ուշադրության արժանի է գրքի վերջին՝ «Իմ ընտրանին» բաժինը: Նրանում ընդգրկված ասույթները, թեւավոր մտքերը կարելի է որակել որպես աֆորիզմներ:

Գիրքը կազմողը եւ խմբագիրը՝ գրող-լրագրողներ Ս. Հասրաթյանը եւ Մ. Պետրոսյանը, ցուցաբերել են պատասխանատու ամենալուրջ վերաբերմունք՝ ժողովածուն նյութերի տրամաբանական դասավորությամբ եւ զրագիտության պատշաճ մակարդակով ընթերցողին ներկայացնելու համար:

Դրվատանքի արժանի են նաեւ գրքի 100 ներդիր էջերում զետեղված գունավոր լուսանկարների բովանդակությունն ու որակը:

Ցանկալի է, որ այդ գիրքն ունենան մեր հանրապետության բոլոր դպրոցները, թեկուզ մեկական օրինակ՝ դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացում օգտագործելու համար: Ս. Օհանյանի «21-րդ դարի բանակը» ժողովածուն ժամանակին ծնված, սերունդների հետ գրուցող մի ընծա է՝ Հայոց ազգային բանակի ստեղծման, հայ ժողովրդի արցախյան ազգային-ազատագրական պայքարի պատմության հավերժախոս մի էջ, որի անհրաժեշտությունը զգացվելու է ապագա ռազմական գործիչների, ընդհանրապես, մշակույթի գործիչների շրջանում:

**«Ազատ Արցախ»,
17 մայիս, 2007թ.**

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԹԵՃ ՕԶԱԽՆԸ

Յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական հաստատություն ոչ միայն իրականացնում է տնտեսության տարբեր բնագավառների համար մասնագետներ պատրաստելու գործը, այլև մեծապես նպաստում է ազգային գաղափարախոսության ձևավորմանը եւ անհրաժեշտության դեպքում ակտիվորեն մասնակցում ժողովրդի ազատության եւ անկախության համար մղվող պայքարին:

1988 թ. սկզբից, երբ արցախահայությունը ոտքի ելավ մայր Հայաստանի հետ վերամիավորվելու պահանջով, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվը, որն ուներ նաև ադրբեջանական բաժին, երկփեղկվեց: Ադրբեջանցի դասախոսները համախմբվեցին ինստիտուտի ուսումնական եւ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Ն. Կուլիեւի շուրջը: Նա ստեղծել էր «Գորշ գայլեր»-ի խումբ: Նրանք բացեփրաց դիմում էին հայ դասախոսներին. «Եթե չեք ցանկանում մնալ Ադրբեջանի կազմում, կարող եք թողնել Ղարաբաղը եւ հեռանալ»: Ադրբեջանցի դասախոսները մեկնում էին Աղդամ, Ֆիզուլի, Ջաբրայիլ, Կուբաթլու, Լաչին, Եվլախ, Բարդա, Միրբաշիր, Քյալբաջար եւ թուրք բնակչությանը հրահրում հայերի դեմ, կոչ անում զինվելու:

1988-ի փետրվարի 27-ի առավոտյան Սումգայիթում սկսված ցեղասպանության սեւ բոթը թրի պես խոցեց ինչպես ողջ հայության, այնպես էլ մեր բուհի հայկական բաժնի դասախոսների եւ սովորողների սրտերը: Դրությունը դարձել էր պայթուցավտանգ: Ազերի դասախոսները եւ ուսանողները իրենց պահում էին պատժողի եւ հաղթողի դերում:

Սումգայիթյան ողբերգությունից հետո այլևս հնարավոր չեղավ շարունակել երկու բաժինների համատեղ աշխատանքը: «Անհանգստացած» էին կոմկուսի մարզային կոմիտեի դրածո ղեկավարները եւ ՊԱԿ-ի աշխատակիցները: Նրանք անընդհատ հիշեցնում էին ժողովուրդների «լեմինյան բարեկամության» մասին: Հայ դասախոսները հոգնել էին առանձնապես ՊԱԿ-ի ղեկավարների այցելությունից: Նրանք հաճախում էին ինստիտուտ, դասախոսական կազմին հրավիրում դահլիճ եւ հայերին մեղադրում «դաշնակցական ազգայնամուլական գաղափարախոսությամբ վարակվելու, ազգամիջյան թշնամանք սերմանելու» մեջ: Միաժամանակ հան-

Գիստ չէին տալիս Ադրբեջանի կառավարող շրջանները՝ հանրապետության Գիտության եւ միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության հրահանգներով: Նրանք ամեն կերպ ձգտում էին սրել հակասությունները՝ հայերին մեղադրելու նպատակով:

Բարոյահոգեբանական մթնոլորտը շիկացել էր: Ուսանողների մի խումբ, որ ընդհատակյա միություն էր կազմակերպել Ս. Շաիվերոյանի ղեկավարությամբ, եռանդուն աշխատանք էր տանում: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մի շարք ներկայացուցիչներ իրենց համարում էին ազգային ազատագրական պայքարի մարտիկներ: Թղթակիցներ էին գալիս Մոսկվայից, Լենինգրադից՝ Բաքվում մկրտվելով ադրբեջանական քարոզչության կեղտաջրով: Նրանք մեր ինստիտուտում նախ հանդիպում էին ոչ անհայտ պրոռեկտոր Ն. Կուլիեւի հետ, նրա աշխատասենյակ հրավիրում կուսբյուրոյի քարտուղար Բ. Ֆարաջովին եւ ազերի մյուս դասախոսներին: Նրանց ելույթներում անդադար հնչում էր «ակադեմիկոս» Զ. Բունյաթովի պատմական կեղծիքը, թե իբր «Ղարաբաղի հայերը եկվորներ են, Ղարաբաղը ալբանական-ադրբեջանական հող է, հողից բաժին չեն տալիս»: Ազերի վայ գրականագետներն ու պատմաբանները առանց խղճի խայթ զգալու, գրում եւ հայտարարում էին, որ ադրբեջանական մշակույթի ներկայացուցիչներ են Ս. Կադանկատվացին, Դ. Քերթոզը, Ս. Գոշը, Կ. Գանձակեցին, Վարդան Արեւելցին, Եսայի Հասան-Ջալալյանը, մի խոսքով բոլոր նրանք, ովքեր ծնունդով Հայոց Արեւելից կողմանքից են: Հայ դասախոսները պատասխանում էին ըստ էության:

1988 թ. փետրվարի 13-ին հայկական բաժնի 1000-ից ավելի ուսանողներ լողունգներով, տրանսպարանտներով գնացին այն ժամանակ Լենինի անվան հրապարակ՝ մասնակցելու համաքաղաքային հանրահավաքին: Ուսանողներին եւ դասախոսներին այդուհետ կարելի էր տեսնել հանրահավաքներում եւ շքերթներում: Կրակոտ ելույթներ էին ունենում դասախոսներ Հ. Գրիգորյանը, Գ. Աֆանասյանը, Ա. Մխիթարյանը, Հ. Մովսիսյանը, Ս. Դադայանը, Կ. Արամյանը, Ռ. Բալայանը, Շ. Աբրահամյանը, Ս. Ղազանջյանը, Լ. Գրիգորյանը, տողերիս հեղինակը եւ ուրիշներ:

Հայ դասախոսները հստակ պատկերացնում էին իրենց անելիքները: Ծրագրված էր.

1. Կազմակերպել ուսանողության մասնակցությունը շքերթներին եւ հանրահավաքներին:

2. Կապեր ստեղծել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի եւ Հայաստանի բուհերի ուսանողության միջեւ՝ ազատագրական պայքարին ակտիվորեն մասնակցելու նպատակով:

3. Հանդես գալ հանրահավաքներում, Ստեփանակերտ ժամանած քաղաքական եւ հասարակական գործիչների առջեւ՝ շարժման պատճառների եւ նպատակների վերաբերյալ:

4. Գրավոր պատասխանել ազերի վայ պատմաբանների եւ գրողների ստահող ելույթներին՝ Արցախը ադրբեջանական-ավանդական տարածք հայտարարելու , հայկական նյութական եւ հոգեւոր մշակույթի հուշարձանները սեփականելու դեմ:

5. Հեռագրեր եւ նամակներ հղել ԽՄԿԿ Կենտկոմ, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ, ԽՍՀՄ նախարարների խորհուրդ եւ այլ ատյաններ:

6. Պատրաստել պայքարի բովանդակությանը վերաբերող կարգախոսներ, լոզունգներ, տողացույցեր: Այդ աշխատանքը կատարում էր նկարիչ Լ. Ղալայանը:

7. Անհրաժեշտության դեպքում կազմակերպել դասադուլներ, նստացույցեր, հացադուլներ:

8. Պատրաստ լինել դիմակայելու թշնամու ոտնձգություններին եւ հարձակումներին:

9. Մասնակցել ժողովրդական բանագնացությանը Մոսկվա:

Անմիջապես նշենք, որ 1988-ի մայիսի 2-ին Արցախից Մոսկվա ժամանած բանագնացների խմբում եղել են մեր բուհի դասախոսներ Յ. Գրիգորյանը, Ա. Մխիթարյանը եւ Լ. Ղալայանը:

Զգալով հայ դասախոսների եւ ուսանողների վճռական պայքարի նշանակությունը, Ադրբեջանի ղեկավար շրջանները ձգտում էին հանգցնել ընդվզումի կրակը: Նրանք ջանում էին հաշտեցման եզրեր գտնել եւ շարունակել համատեղ պարապմունքները: 1988-ի ապրիլ ամսվա սկզբին Շուշիից, Աղդամից եւ այլ շրջկենտրոններից հատուկ ավտոբուսներով Ստեփանակերտ տեղափոխեցին ադրբեջանական բաժնի ուսանողներին: Սակայն տեղի ունեցավ անսպասելին: Մայիսի սկզբին Շուշի քաղաքից ազերի «հարեւանները» հայ բնակիչներին ծեծելով, թալանելով վտարեցին իրենց բնակարաններից: Ստեփանակերտը բորբոքվեց: Շուշիից բռնագաղթածների դրությունը ցնցել էր բոլորին: 150-ից ավելի ստեփանակերտցի երիտասարդներ մտան ինստիտուտ, միացան հայ ուսանողներին եւ խաղաղությամբ առաջարկեցին ազերի ուսանողներին հեռանալ քաղաքից: ՊԿԿ-ի աշխատակիցները զարմա-

ցել էին հայ երիտասարդների զսպվածությունից: Ադրբեջանական բաժինը տեղափոխվեց Շուշի, իսկ 88-ի նոյեմբերի սկզբին հայկական բաժինը մեկնեց Կիրովական:

Սպիտակի 88-ի ղեկավարների 7-ի երկրաշարժից կիսախարխուլ դարձավ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի շենքը: Մեր կուլեկտիվը ղեկավարների 8-ին վերադաձավ Ստեփանակերտ: ԼՂ կառավարման հատուկ կոմիտեն (ղեկավար Ա. Վոլսկի) կայացրեց այլընտրանքային որոշում՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը կոչել Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի բաժանմունք:

Ռմբակոծությունների եւ հրթիռակոծումների տարափի տակ շարունակվում էին պարապմունքները: Բաժանմունքը փաստորեն դարձել էր ինստիտուտի իրավահաջորդը եւ իրականացնում էր մասնագետների ամենամյա թողարկումը: Այսպես, 1987-1988 ուստարում թողարկվել է 266 մասնագետ, 1988-1989-ին՝ 229, 1989-1990-ին՝ 260, 1990-1991-ին՝ 239, 1991-1992-ին՝ 146: Միաժամանակ ավելի բուռն էր դառնում գաղափարական պայքարը, որի ակունքների մոտ կանգնած էր Յ. Վ. Գրիգորյանը: Նա մարտնչում էր հավատով եւ իր կեցվածքով օրինակ հանդիսանում ընկերների համար: Շարժման հենց առաջին օրվանից գաղափարական պայքարի հորձանուտի մեջ էին կին դասախոսներից՝ Ա. Մխիթարյանը, Լ. Գրիգորյանը, Ս. Ղազանչյանը եւ այլք: Նրանք ստորագրություններ էին հավաքում դասախոսներից՝ ի պաշտպանություն Արցախը մայր Հայաստանին միավորելուն, նամակներ եւ հեռագրեր էին հղում Մոսկվա՝ պահանջատիրության հրամայականով: Մեր դասախոսները հանդես էին գալիս նաեւ մամուլի էջերում: Այդ առումով ջերմ արձագանք է գտել Յ. Գրիգորյանի, Ա. Մխիթարյանի եւ Լ. Գրիգորյանի համատեղ հոդվածը՝ տպագրված «Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1988-ի մարտի 18-ի համարում:

Ադրբեջանական մամուլը հեղեղված էր Արցախի պատմությունը զեղծող ստահող հոդվածներով:

1988 թ. փետրվարի 28-ի համարում «Բակինսկի ռաբոչի» թերթը տպագրել էր հայտարարություն այն մասին, որ պետական մրցանակի է ներկայացվել Գ. Ա. Ախունդովի «Ադրբեջանի հին եւ միջնադարյան ճարտարապետությունը» գիրքը: Դա մի «աշխատություն» էր, որտեղ հեղինակը պարզապես հայ ճարտարապետական կոթողները ներկայացրել է որպես ադրբեջանական հին հուշարձաններ: Նա ցինիկորեն ադրբեջանական է համարում՝ պատ-

մական Չայաստանի Արցախ, Ուտիք, Սյունիք, Վայոց ձոր նահանգների ճարտարապետական կոթողները, Ամարաս, Փանծասար, Դադիվանք եւ հին ու միջնադարյան այլ վանքերն ու եկեղեցիները:

Մեր ինստիտուտի գիտնական-մանկավարժները ծանոթանալով այդ «աշխատությունը», հանձնարարեցին պատմաբան Ս. Դադայանին եւ տողերիս հեղինակին՝ կազմակերպել բողոքի նամակ գիտական հիմնավորումներով: Մենք պատրաստեցինք այն եւ մի խումբ դասախոսների ստորագրությամբ հղեցինք ՍՄԿԿ կենտկոմի գիտության բաժին, ԽՍՀՄ ճարտարապետների միություն, Չայաստանում ռուսերեն հրատարակվող «Կոմունիստ» թերթի խմբագրություն եւ Չայկական ՍՍՀ գրողների միություն: Նամակ-բողոքը մեր գաղափարական աշխատանքի խոսույն վկայություններից էր: Դ. Ա. Ախունդովի «աշխատությունը» ամենուրեք ենթարկվեց խիստ քննադատության՝ հանուն ճշմարտության եւ արդարության: Կարելոր ենք համարում հիշել նաեւ 1988 թ. ապրիլի 28-ի միջապետը: Ինստիտուտի կուսբյուրոյի քարտուղար Բ. Ֆարաջովի եւ բյուրոյի անդամ Ն. Կուլիեւի պնդմամբ պետք է նշվեր Ադրբեջանում սովետական կարգերի հաստատման 68-րդ տարեդարձը:

Դա այն ժամանակ էր, երբ երկու ամիս առաջ տեղի էր ունեցել Սունգայիթի ցեղասպանությունը: Ամեն դեպքում կազմակերպվեց ցերեկույթ: Տողերիս հեղինակը, իմ զեկուցման մեջ, դասախոսներ Ա. Դադայանը, Շ. Աբրահամյանը իրենց ելույթներում զայրույթով նշեցինք, որ Սունգայիթյան ջարդերը պետք է որակվեն որպես ցեղասպանություն, որ այն սեւ բիծ է ադրբեջանական ժողովրդի պատմության մեջ: Մեր այդ ճշմարտացի որակումը «վրդովմունքով» ընդունեցին ազերի դասախոսները եւ հեռացան դահլիճից:

Այլ կերպ չէր կարելի սպասել: Այդ նրանց խորհրդով էին իրենց ուսանողուհիները 1988-ի փետրվարի 28-ին ներկայացել դասի՝ վարսերին կարմիր ժապավենների փնջեր եւ ջարդել ու պատահուտել գրականության կաբինետի ցուցափեղկերը եւ հայ գրողների նկարները:

Մեր ինստիտուտի հայ դասախոսների գաղափարական պայքարի կարելոր էջերից կարելի է համարել այն Դիմումը, որ ուղարկվեց ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը, միութենական հանրապետությունների ԿԿ կենտկոմներին, կուսակցության ՌՍՖՍՀ մարզային կոմիտեներին, ինքնավար հանրապետություններին եւ ինքնավար մարզերին: Դի-

Մնումը որպես բողոք գրվել է ՍՄԿԿ Կենտկոմի քարտուղար Լիզաչովի պրովոկացիոն հայտարարության կապակցությամբ, որն արել է Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի պլենումից հետո մարզկոմների եւ շրջկոմների աշխատողների հետ ունեցած հանդիպման ժամանակ: Նա հայտարարել էր, որ ԼՂԻՄ-ի հայերի պահանջը անլուծելի է, քանի որ այն կապված է «ադրբեջանական գործոնի» հետ: Դրանով իսկ Լիզաչովը արդարացնում էր Սուևգայիթը եւ ջուր լցնում ադրբեջանական ագրեսիայի ջրաղացին: Դիմումի պատրաստմանը մասնակցել են Յ. Գրիգորյանը, Ս. Դադայանը, Ա. Մխիթարյանը, Կ. Արամյանը եւ տողերիս հեղինակը: Դիմումը կարդացվել եւ ընդունվել է Ստեփանակերտ քաղաքի Յաղթանակ (այժմ՝ Ազատության) հրապարակում: Նման բովանդակությամբ մի նամակ էլ մեր մի քանի դասախոսների ստորագրությամբ ուղարկվել է ԽՍՀՄ գլխավոր քարտուղար Ս. Ա. Գորբաչովին: Դեռեւս արցախյան ազգային ազատագրական պայքարի նախօրեին ադրբեջանական մամուլը հաճախակի էր տպագրում Ջ. Բունյաթովի ստահող հողվածները Արցախի պատմության վերաբերյալ, որոնցում կեղծելով ճշմարիտ պատմությունը, նա ձգտում էր ապացուցել, որ Արցախը ազերական հող է, որ հայերը տեղաբնիկ չեն, որ նրանք Ղարաբաղ են եկել 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո: Անհրաժեշտ էր պատասխանել նաեւ պանթուրքիզմի այդ ոչ անհայտ գաղափարախոսին: Այդ գործը հանձն առանք տողերիս հեղինակը եւ Ս. Դադայանը: 1989-ի մայիսի 23-ի համարում «խորհրդային Ղարաբաղ» թերթը տպագրեց մեր ծավալուն հողվածը՝ «Ճշմարտությունը ամեն ինչից վեր է» վերտառությամբ: Այն զետեղվել է նաեւ «Советский Карабах» թերթում: Նրանում կարելուր փաստերի հիման վրա ներկայացվել է Արցախի հայաշունչ պատմության ընթացքը, Ադրբեջանի քաղաքական ուժերի եւ վայ գիտնականների ոտնձգություններն ու զրպարտությունները երկրամասի հայ ազգաբնակչության հանդեպ, որի պատճառով էլ Արցախը ոտքի է ելել վերամիավորվելու մայր Յայաստանին:

Շատ չանցած, ադրբեջանական մամուլը վայնասուն բարձրացրեց մեր դեմ, մեզ անվանելով Ադրբեջանի պատմության զեղծարարներ եւ ռասիստներ:

Մեր կուլեկտիվի գաղափարաքաղաքական աննահանջ պայքարի տարեգրության փայլուն էջերից մեկն էլ 1990 թ. ապրիլի 24-ին 1915 թ. Եղեռնի զոհերի հիշատակին կազմակերպված միջոցառումն է: Պոլյանիչկո-սաֆոնովյան ռեժիմի հրահանգով քաղաքում

Վարդելված էին հանրահավաքներն ու շքերթները: Սակայն շարժման ակտիվ մասնակիցները թույլտվություն էին ստացել՝ զոնե այցելել Հայրենական պատերազմի զոհերին նվիրված հուշահամալիր եւ հիշել 1915-ի եղեռնի զոհերին: Առիթն առկա էր: Հ. Գրիգորյանի մտահղացմամբ համալիրում, ռադիոկոմիտեի աշխատակիցների աջակցությամբ (նրանք տրամադրել էին բարձրախոսեր) տեղի ունեցավ հանրահավաք: Այն բացեց Հ. Գրիգորյանը, ապա ելույթներ ունեցան դասախոսներ Ռ. Բալայանը, Ա. Թովմասյանը, տողերիս հեղինակը: Մեր խմբին էին միացել պոետներ Գ. Գաբրիելյանը եւ Հ. Բեգլարյանը: Հանրահավաքին ներկա է եղել Ռ. Քոչարյանը: Մենք եւ դատապարտում էինք 1915-ի ցեղասպանությունը, եւ կոչ անում ժողովրդին շարունակել պայքարը ադրբեջանական բռնատիրության դեմ:

Հենց նույն օրը մեզ կանչեցին քաղաքի պարետատուն, իսկ ապրիլին 26-ին հատուկ մեքենայով տարան պոմպակայան, որ վերածվել էր բանտի: Ես նոր էի դուրս եկել հիվանդանոցից: Հ. Գրիգորյանի եւ Ռ. Բալայանի պահանջով ինձ պատժեցին 15-օրյա տնային կալանքով, իսկ մյուսներին որոշել էին ուղարկել Շուշի բանտ: Ժողովրդի պահանջով տնային կալանք տվեցին Ռ. Բալայանին, Գ. Գաբրիելյանին եւ Հ. Բեգլարյանին: Իսկ Հ. Գրիգորյանին եւ Ա. Թովմասյանին տեղափոխեցին Պյատիգորսկ քաղաքի բանտը՝ մեկ ամիս ժամկետով:

Մեր ինստիտուտում գաղափարական պայքարը երբեք երկրորդական պլանի վրա չի մղվել: Դասախոսները եւ ուսանողները պայքարի տարբեր ձևերով ու միջոցներով շարունակել են մարտնչել հանուն Արցախի անկախության եւ ազատության:

Համոզված ենք, որ մեր բուհի գաղափարաքաղաքական պայքարի մասին գրվելու է ոչ մեկ անգամ, որովհետեւ այն մեր պատմությունն է՝ որպես օրինակելի դաս գալիք սերունդների համար, որպես Արցախ աշխարհի ազատագրման ճանապարհի առասպելված վավերագրություն:

**«Արցախի պետական համալսարան»,
Գիտական տեղեկագիր, 2(15) 2007**

ԱՆՍԱՀՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ*

Գրասեղանին Արցախի պատմական քարտեզն է, մեկ առ մեկ կարդում ու մատների վրա հաշվում ենք նրա հին գավառները. Մյուս Յաբանդ, Վայկունիք, Բերդաձոր, Մեծ Առանք, Մեծ Կվենք, Յարճլանք, Մուխանք, Պրանք, Պարզվանք, Քուստի, Փառնես, Կողք: Այդ 12 գավառների անունները թվարկելուց հետո սեղանի մյուս ծայրից դեպի մեզ ենք քաշում Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի խորհրդային տարիներին տպագրված քարտեզը՝ երբեմնի հինգ շրջաններով. Յադրուք, Մարտունի, Ասկերան, Շուշի, Մարտակերտ, Ստեփանակերտ մայրաքաղաքով: Երկու քարտեզները համեմատում, վերհիշում ենք յոթերորդ դարի հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Պատմությունը», ուր նշված է Արցախի տարածքը՝ մոտ 12 հազար քառակուսի կիլոմետր: Հիշում եւ ավստսում ենք, որ մեր ազգային ճակատագիրը ծանր եղավ: Տասնմեկերորդ դարից սկսած թուրք-սելջուկները հեռուներից խուժեցին, ասպատակեցին Յայոց երկիրը, ավերեցին եւ բաժան-բաժան արեցին: Այդ բախտին տիրացավ նաեւ Արցախը՝ Մեծ Յայքի 10-րդ նահանգը: Ոսոխները սեպ խրեցին մայր Յայաստանի եւ նրա հարազատ զավակ Արցախի միջեւ, թուրքական եւ քրդական վայրենի ցեղերով լցրին Արցախի մի շարք գավառներ: Իսկ խորհրդային իշխանության հենց առաջին օրերից բուլշեփկյան թուրքամետ դեկադարների հանցագործ քաղաքականության հետեւանքով Արցախը խլվեց իր մորից եւ նետվեց դրացի թշնամու՝ թուրք-ազերիների երախը: Դա մեր ազգային ցավն էր, մեր կորուստը: Ի՞նչ տեղի կունենար մեր օջախների հետ, եթե ոտքի չեկներ հայրենի Արցախը... Եվ օրհնում ենք այն պահը, երբ մեր լեռնաշխարհի արհասիրտ զավակները ոտքի ելան, նրանց աչքերում շողաց որդիական սիրտ փայլը, շրթերը դողացին, սրտերի վրա գրվեցին. «Պատմության սխալները անպայման կուղղենք: Արցախը մեր մայրն է, ազնիվ զավակը չի թողնի, որ իր մայրը տառապի գերության մեջ եւ տրորվի, անհետանա թշնամու սմբակների տակ, ո՛չ, չի թողնի»:

Անցնում են րոպեները: Մենք ծալում ենք քարտեզները, սուզվում խոհերի մեջ: Մեր ականջներում անդադար հնչում են Արցախ աշխարհի քաջագուն նախնիների կանչերն ու կոչերը՝ կարոտի եւ հույսի ծիածանե հյուսվածքով, պատվի եւ հավատի անմարում

Չաղախով, մաքառման եւ նպատակի համաձուլվածքով: Մենք մի-աժամանակ հոգու աչքերով ասես տեսնում ենք այն շարքերը, որ անցնում էին Ստեփանակերտի փողոցներով եւ հնչում էին «Չա՛-յա՛ստա՛ն», «Մի՛-ա՛-ցու՛ն» բացականչություններով...

Ընդվզումի անհանգիստ օրերից մեկն էր: Արելը նոր էր հանել պռունկը: Քաղաքի տարբեր թաղամասերից դեպի կենտրոնական պողոտա էին շտապում մարդիկ: Այդ ժամանակ մի երիտասարդ թափով մոտենում է շքերթին, միանում ընկերներին եւ հնչել ձայնով բացականչում. «Չա՛-յե՛ր, մի՛-ա՛-ցե՛ք»: Ընկերներին ծանոթ էր նրա տաք բնավորությունը, բայց առաջին անգամ էր, որ ձայնի ելեւէջներում ծածանվում էր տազնապի եւ վճռականության ալիքը:

-Շատ ես հուզված, Սամվել, ի՞նչ է պատահել,- հարցրեց ընկերներից մեկը:

-Էլ ի՞նչ պատահի, մի՞թե քիչ է մեզ պատահածը: Մինչեւ ե՞րբ պետք է այսպես շքերթի ելնենք եւ գուր իսկույն Պոլյանիչկոյից, Սաֆոնովից, Ադրբեջանից:

-Բա ի՞նչ անենք, Սամվել, պետք է շարունակենք մեր պայքարը, որ վերելներում վերանայեն մեր պահանջը...

-Մինչեւ ե՞րբ պետք է խոսքով պահանջենք... Մի՞թե պարզ չէ, որ մեզ նետել են ազերի թուրքերի ոտքերի տակ, որ տրորեն: Չէ՛, ախպերս, արդեն երրորդ տարին է, ինչ մենք պահանջում ենք, բայց վերելներում արհամարհում են, ծիծաղում, մեզ անվանում են էքստրեմիստներ, նացիոնալիստներ, ավանտյուրիստներ:

-Բա ի՞նչ անենք, ի՞նչ ելքի դիմենք,- վրա բերեց գրուցակիցը:

-Չինվել է պետք, եթե չզինվենք, ազերի օմօնականները խորհրդային զինվորների հետ միացած կամ մեզ քշելու են մեր օջախներից կամ կոտորելու են,- պատասխանեց Սամվելը եւ կրկին բռունցքը թափահարեց օդում. «Չա՛յե՛ր, մի՛-ա՛-ցե՛ք»:

Տվյալ պահին Սամվելը այդ կոչի տակ հասկանում էր կռվի ելնելու վճիռը, որովհետեւ նա իր ընդհատակյա մարտական ընկերների հետ համոզվել էր, որ ուր որ է, Ադրբեջանի կառավարող շրջանները ԽՄԿԿ Կենտկոմի, նրա գլխավոր քարտուղար Գորբաչովի թույլտվությամբ սանձազերծելու են պատերազմը արցախահայության դեմ... Այդպես էլ եղավ: Արցախի ժողովուրդը իր ձայնն էր բարձրացրել հանուն ազատության ու անկախության: Ի պատասխան՝ Ադդամից հաշվեհարդարի սպառնալիքներով ադրբեջանա-

կան հրոսակախումբը շարժվել էր մեր դեմ: Նրանք պետք է իրենց արժանի պատասխանը ստանային:

1988թ. փետրվարի 22-ին Սամվել Կարապետյանը անմիջապես մի խումբ հայրենասերների հետ պաշտպանություն բռնեց Ասկերանում եւ այդ օրվանից էլ ծառայում է հայրենիքին: Սկսել է որպես կամավորական: Մասնակցել է Հադրութի, Էդիլուի, Աղբուլաղի, Խանձածորի, Քոչքեկի, Նախիջեւանիկի, Փրջամալի, Խրամորթի, Խանաբաղի եւ այլ գյուղերի ինքնապաշտպանությանը: Մասնակցել է եւ կռահել, որ Ադրբեջանը գնալով կծավալի պատերազմական գործողությունները փոքրիկ Արցախի դեմ... 1991թ. աշնանը Շուշիից ազերիները սկսեցին հրթիռակոծել Ստեփանակերտը, մինչեւ այդ մարզի շարջաններում, ճանապարհներին բռնկվել էր այսպես կոչված «քարե պատերազմը»: Ազերիների առանձին խմբեր բազմաթիվ հայերի գլխատել էին ճանապարհներին, այգիներում, իսկ անտառներում ոմանց վառել խարույկի վրա: Շուտով քաղաքում կայծակի պես տարածվեց հրթիռակոծումից Ձերժինսկու փողոցի թ. 4 տան ութ բնակիչների միաժամանակյա զոհվելու բոթը:

Արցախը ներառնվեց կրակե օղակի մեջ: Արցախցիների համար պահը դարձավ օրհասական, վճիռը՝ կայծակնային, կռիվը սրբազան: Մինչեւ ատամները զինված թշնամին անողոք էր, Խորհրդային բանակի հրամանատարությունը բարոյալքված, ԽՄԿԿ Կենտկոմի բոլոր անդամները կաշառված, թուրքամետ ուժերը գազազած: Արցախը մնացել էր մենակ, բայց թիկունքին մայր Հայաստանն էր, սփյուռքում՝ 1915-ի ցեղասպանության սարսափն ապրած հայերի հավատն ու խրախուսանքը:

Ստեփանակերտում իջել էր երեկոն՝ տագնապի, կասկածանքի շղարշ հագած: Բոլորը շտապում էին ժամ առաջ հասնել իրենց բնակարանները, որովհետեւ քաղաքում Ադրբեջանին ծառայող ուժերը հետապնդում էին ոչ միայն ստեփանակերտցիներին, այլեւ շրջաններից իրենց բարեկամներին հաճախած մարդկանց: Ամեն ինչ հսկողության տակ էր առնված: Սակայն ինչքան ուժեղանում էին հետապնդումները, այնքան թեժանում էր հայրենասիրական ուժերի դիմադրության կրակը: Ինչ գնով, ինչ ճա-

Մնապարհով էլ ստացվեր, պետք է զինվեին նրանք: Արդեն տղաները պատրաստում էին ինքնաշեն զենքեր՝ հաճախ վտանգի ենթարկելով իրենց կյանքը: Եվ ահա գաղտնի, մասնավոր տներից մեկում մի խումբ երիտասարդներ քննարկում էին զենք ձեռք բերելու կարելու հարցը.

-Այո՛, պիտի զինվենք, պիտի զենք գնենք, բայց ինչո՞վ, չունենք այնպիսի գումար, որով հնարավոր լինի որոշակի չափով զենք ձեռք բերել,- ցասման եւ ափսոսանքի հուրն աչքերում՝ ասաց խմբի անդամներից մեկը:

Տղաները լուռ էին: Ճշմարտությանը ինչպե՞ս կարելի է հակաճառել: Ստեփանակերտում կան Ղարաբաղի գյուղերում չկային այսպես կոչված միլիոնատերեր, որոնք տրամադրեին իրենց գումարը՝ զենք գնելուն: Կոլտնտեսությունների ղեկավարները չէին կարող եւ իրավունք չունեին գումար հատկացնելու զենքի համար: 1989 թվականն էր: Ազերի օմօնը վխտում էր քաղաքում... Սակայն տղաները շարունակում էին քննարկել հարցը: Այդ ժամանակ տեղից ելավ Սամվելը եւ ասաց.

-Տղաներ, ես որոշել եմ ավտոմեքենաս վաճառել եւ ամբողջ գումարը տրամադրել զենքի գնման:

Ընկերները գիտեին, որ Սամվելը իր խոսքը քամուն տվողներից չէ: Եթե նա վճռել է, ապա պետք է կատարի իր խոստումը: Այդպես էլ տեղի ունեցավ այս անգամ: Շուտով Սամվելի սեփական ավտոմեքենայի վաճառքից ստացված գումարը տղաների ձեռքին փայլեց՝ փրկարար զենքի տեսքով: Հայրենասիրությունը Սամվելի համար խոսքի եւ գործի միասնությամբ դրսեւորվել է այդպես: Նա էն գլխից հասկացել է, որ հայրենիքը եւ ժողովրդին օտարի լծից ազատագրելը պահանջում է եւ նյութական զոհողություն, եւ նվիրյալի անձնագոհություն:

Սամվել Կարապետյանին հանգիստ չէին տալիս ժողովրդի հանդեպ կատարած հանցագործությունները Սոււմգայիթում, Բաքվում, Քանձակում, Մինգեչաուրում եւ Ադրբեջանի մյուս հայաշատ շրջաններում: Բնավորությամբ նա քչախոս է, հոգով ու սրտով՝ ազնիվ, անմիջական, տաքարյուն, արդարացի:

-Եթե Ադրբեջանում ապրող մեկ կամ երկու հայի դեմ լիներ կատարված այդ հանցանքը, կարելի է շրջանցել եւ այդ երեւույթը կա-

Կալել չարական մարդկանց հետ,- մտածում էին տղաները,- սակայն այդպես չէ: Ադրբեջանի կառավարող շրջանները Գորբաչովի եւ ՊԱԿ-ի թույլտվությամբ կազմակերպել են ցեղասպանություն հայ ժողովրդի հանդեպ: Ինչպե՞ս կարելի է ներել դրանց, ինչպե՞ս կարելի է լռել եւ չգործել «մահվան դեմ մահ, արյան դեմ արյուն» հատուցմամբ:

Մարդկության արդարացի պայքարից ծնված այդ բախտորոշ իմաստնությունն ու խորհուրդը ուղեկցեցին Սամվելին եւ իր ընկերներին թե՛ արցախյան շարժման սկզբնական օրերին, թե՛ մեր ժողովրդին պարտադրած պատերազմի տարիներին:

Պահանջատիրոջ եւ զիվորի իրավունքն ու վճիռը Սամվելին եւս տարան դեպի ֆիդայական դիրքերը եւ ապա դեպի Լեռնային Ղարաբաղի հանրապետության բանակի շարքերը, որտեղ իրեն դրսևւորեց որպես անձնուրաց զինվորայլ՝ հոգու եւ արյան մեջ ունենալով Հայկ Նահապետի, Վարդան Մամիկոնյանի, Դավիթ Բեկի, Անդրանիկի, Նժդեհի եւ մյուս քաջերի արիությունն ու արյան կանչը:

* * *

Զինվորյալ Սամվել Կարապետյանի մարտական ճանապարհը անզիջում մաքառման, ժողովրդի ազատության եւ անկախության երազանքի, քաջագուն զինակիցների անկոտրում կամքի, նահատակված ընկերների անանց ցավի, հաղթանակների վայելքի, ապագայի հանդեպ անմարում հավատի խորհրդանիշ է՝ շոշափելի, օրինակելի... Յուրաքանչյուր մարդու ծանոթությունը նրա անցած ճանապահին՝ վերածվում է դասի եւ խորհրդի, դեռ ավելին՝ երախտիքի ու ոգեշնչումի զգացողության: Այդ զգացողությունը առավել թելավորող է դառնում, երբ Սամվել Կարապետյանին տեսնում ես Արցախը եւ հայ ժողովրդի պատիվը փրկող առաջին մեծության աստղերի բույլի մեջ: Հնարավո՞ր է արդյոք մեկ առ մեկ թվարկել բոլոր նրանց, ովքեր իրենց գլուխներն են դրել մեր ավանդական օջախի ազատության եւ փրկության զոհասեղանին: Հնարավոր չէ: Միայն համոզված ենք մի հնարավոր երեւութի մեջ: Դա հայ ժողովրդի ծնողական սիրո արտահայտությունն է իր քաջ ու նվիրյալ զավակների հանդեպ, որ արտահայտվելու է սերնդեսերունդ, դարից-դար, հավիտյանս-հավիտենից...

Ծնոթանալով Ս. Կարապետյանի կյանքին, համոզվում ես, որ նրա անցած ճանապարհը մի ամբողջ սերնդի խիզախության եւ պատվի ուղի է: Նրա անցած ուղին հաստատում է այն ճշմարտությունը, որ արցախյան պատերազմը համաժողովրդական ըմբոստացման արդյունք է, ազատ ու անկախ ապրելու բաղձանքի դրսևւորում: Իսկ ո՞ր ճնշված ժողովուրդն է, որ առանց միասնության կարող է բարձրացնել փրկության դրոշը: Այդ վճռորոշ ուժի գիտակցումով աստիճանաբար, հատկապես լեռնաշխարհում իրականացվեց պետականություն ունենալու ձգտումը: Իսկ ո՞ր պետությունն է, որ կարող է գոյություն ունենալ առանց իր քաղաքացիների վստահության եւ ջանքերի: Այդ մղումով էլ յուրաքանչյուր արցախցի իր ընտրած պետությունը համարեց իր հաստատման հիմնական ուժը, իսկ պետությունն էլ իր գոյության հիմքում տեսավ յուրաքանչյուր քաղաքացու նվիրումը: Այդպես, արցախցին ու իր պետությունը դարձան մեր հերոսական անցյալը վերածնող, ներկան գալիքին կանրջող միական ու միավճիռ գործոն: Յուրաքանչյուր արցախցի եւ նրա պետական այրերը գիտակցեցին, որ եթե սկզբնական շրջանում կարելու էր ինքնապաշտպանության ֆիդայական պայքարը, ապա եկել է ժամանակը՝ ունենալու ինքնապաշտպանության կանոնավոր բանակ, որ պետք է գործի միասնական հրամանատարության ղեկավարությամբ:

Եվ եկավ պահը... 1992թ. հուլիսին ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի նախագահի հրամանով ստեղծվեցին պաշտպանական գոտիներ, ըստ որի Արցախում միավորվեցին առանձին-առանձին գործող կամավորական ջոկատները եւ ձեւավորվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակը:

1992թ. գարնանը Ադրբեջանի զինված ուժերը ռազմաճակատում պարտություն պարտության հետեւից էին կրում: Ազերի ղեկավարները դիմեցին դարերով որդեգրած իրենց նենգ քաղաքականությանը՝ իրենց չարագործության մեջ ներառնել նաեւ ուրիշ ուժերի: Եվ նրանց հաջողվեց իրենց զինակիցը դարձնել Գյանջա (Գանձակ) քաղաքում տեղակայված խորհրդային 4-րդ բանակի ուժերին: Ադրբեջանի իշխանություններին հաջողվեց իրականացնել իրենց հակահայկական քաղաքականությունը: Բռնագաղթվեցին Շահումյանի շրջանի բոլոր բնակավայրերը եւ Մարտակերտի

Չրջանի գյուղերի մեծ մասը: Հյուսիսային Արցախը դատարկվեց հայերից: 92-ի ամառվա վերջերին եւ աշման սկզբներին ազերիները հասան Կիչան-Վաղուհաս բնագծին: Նրանք արդեն երազում էին կրակի մատնել Խաչենի հովտի բնակավայրերը, գրավել Ստեփանակերտը: Ազերիների այդ նենգածին նկրտումների առաջն առնելու հրամայականը պահի խնդիր էր դարծել: Եվ տեղի ունեցավ Արցախի զինված ուծերի կառուցվածքային վերակազմավորում: 1992թ. օգոստոսի 29-ի ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի նախագահի թիվ 013 հրամանի համաձայն 1-ին, 4-րդ եւ 6-րդ վաշտերի բազայի վրա կազմավորվեց Կենտրոնական պաշտպանական շրջանը: Կարծ ժամանակաընթացքում այն համալրեց իր անձնակազմը: Հրամանատար նշանակվեց Սամվել Ջամիլի Կարապետյանը:

Տարիների ընթացքում Արցախյան բանակի փառապանած պատմության մեջ իր մարտական կենսագրությունը գրեց Կենտրոնական պաշտպանական շրջանը, որի հերոսական տարեգրության բազմաթիվ էջերը գրվել են Ս. Կարապետյանի շնորհիվ, նրա նվիրումով ու անձնագոհության վառ օրինակով:

Տարիների ընթացքում յուրաքանչյուր ստեփանակերտցի մեկ անգամ չի եղել Շուշիում: Քայլելով քաղաքի հայաշունչ փողոցներով, կանգ առնելով հայկական հուշարձանների դիմաց, ցավել է նրա սիրտը, ինչուների շարանը նստել հոգու վրա: Այդ տարիներին նա չէր կարող պատասխանել այդ ինչուներին, բայց մի ցավ խոցում էր սիրտը. Այս ինչպե՞ս եղավ, որ հայկական Շուշին մնաց ազերիներին, ո՞վ էր մեղավորը, որ քաղաքի երեք տասնյակ հազարից ավելի հայերը 1920թ. մարտին դարձան գոհը մի բուռ զինված ազերի թուրքերի: Հանցագործը ե՞րբ պետք է պատժվի: Ե՞րբ պետք է հայախոս Շուշին մայրաբար շոյի իր հայ զավակներին, քայլի հայերեն, երգի հայերեն... Սամվելը եւս չէր մոռացել ոչ իր այցելությունները Շուշի եւ ոչ էլ իր իսկ առաջադրած ինչուները: Ու երբ մասնակցում էր Ստեփանակերտի շուրջ Կրկժամում, Մալիբեկլիում, Ջանհասանում եւ այլ թուրքական գյուղերում ծավալված մարտերին, անենաթեժ ու վտանգավոր պահերին անգամ հայացքը հառում էր բարձունքին թառած հայոց Շուշիին եւ մտքի աչ-

քերով տեսնում այն օրը, երբ ազերիների լծից կազատվի մեր պապերի կերտած քաղաքը՝ Արցախի պատմական անցյալի պսակներից, հայ մշակույթի խոշոր կենտրոններից մեկը: Ու բորբոքվում էր սրտում վրեժի հուրը, երազում այն պահը, երբ Շուշիի վրա կփողփողա մեր հայկական Եռագույնը՝ հայկական ծփանքներով:

Եվ եկավ հատուցման ժամը: Դա 1992-ի մայիսի 8-ն էր: Մինչ այդ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը ոչնչացրել էին Խոջալու, Մալիբեկլու, Ղայբալու եւ ադրբեջանական այլ բնակավայրերի թշնամական հենակետերը, որոնցում իր ակտիվ մասնակցությունն էր բերել Ս. Կարապետյանի գլխավորած վաշտը: Այժմ նոր խնդիր է դրված ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի բոլոր հրամանատարների առջեւ: 92-ի մայիսի 8-ի գիշերվա ժամը 3-ին Շուշիի ազատագրման գործողությունը սկսելու պահին սովորականից արագ բաբախեց նաեւ Սամվելի կոփված սիրտը: Դժվար հանձնարարություն պիտի իրականացվի: Ինքնապաշտպանության ուժերի շտաբը հստակ մշել էր Շուշիի ազատագրմանը մասնակցող բոլոր միավորումների ուղղություններն ու անելիքները: Սամվելը անգիր բանաստեղծության պես գիտեր իր պարտականությունները: Սակայն պատերազմը մնում է պատերազմ: Մի անգուցյալ ու չմտածված քայլը կարող է առավելություն բերել թշնամուն: Չէ՞ որ Շուշին բարձունքի վրա է, ազերիները հայակերտ այդ քաղաքը դարձրել են թշնամական որջ, այնտեղից գիշեր-ցերեկ հրթիռակոծելով Ստեփանակերտը եւ շրջակա հայկական գյուղերը:

Մարտական գործողություններում թրծված Սամվել Կարապետյանը խորապես գիտակցում էր այդ իրողությունը եւ պարզ տեսնում էր ճկունության, համառության, խիզախության այն հնարները, որ պետք է օգտագործվեն Շուշի բերդ-քաղաքը մտնելու ճանապարհին: Նա ներքեւից նայում էր քաղաքին, հիշում պատանության տարիների իր այցելությունները, հարցականի պես միտքն անհանգստացնող ինչուները եւ շշնջում. «Քիչ էլ սպասիր, հայրենի քաղաք, մենք քեզ կազատենք յոթանասուն տարիների ծանր գերությունից»: Սամվելը համոզված էր, որ մի քանի ժամ անց Շուշիի չորս կողմերից բարձունքներն ու ժայռերն ի վեր հայ ազատամարտիկները պիտի մազլցեն առյուծի թափով, պարիսպներից ներս մտնեն արծվային ճախրանքով: Համոզված էր, որովհետեւ գիտեր, որ հայ զինվորյալների ոտքերի տակ պապենական

Իհողն է, իսկ ազերիների ոտքերի տակ՝ հարեւանհինը, որից խել էն դավաճանության, նենգության, խաբեության միջոցով: Սամվելը հանոզված էր վերահաս հաղթանակի մեջ, քանզի տեսնում էր հայ ազատամարտիկների շնչառությունից եւ հայացքներից ցայտող լույսը, որ պիտի շուտով ցրի բարձունքի վրա չոքած ազերական խավարը, ստի ու կեղծիքի մթամած շղարշը: Սամվելը գիտեր, որ թուրք ազերիները մահ են սփռում բարձունքն ի վար, իսկ հայ ազատամարտիկները լույս են տանում բարձունքն ի վեր, Սամվելը հանոզված էր, որ Արցախի թագ ու պսակ Շուշին պիտի վերադառնար իրեն կառուցող հայ մարդու գիրկը, որպես հայ ժողովրդի շինարար ոգու եւ ստեղծարար մտքի առհավատչյան: Այդ ամենի գիտակցումով ու սրտի թելադրանքով նա իր զինվորներին տանում էր Շուշիի գրավման հիմնական ճանապարհով: Եվ այդ դժվարին ու ազատաբեր ճանապարհին բազում անգամ լացել է նրա սիրտը՝ զոհված ընկերների համար:

Եվ ինչպե՞ս չլացեր Սամվելի սիրտը, երբ Շուշիի մատույցներում թշնամու նետած արկից սկսեց վառվել դեպի բարձունքը ազատության դրոշը տանող առաջին հայկական տանկը: Նրա անձնակազմին քաջածանոթ էր Սամվելը: Նա գիտեր անձնակազմի հրամանատար Գագիկ Ավշարյանին, վարորդ-մեխանիկ Աշոտ Ավանեսյանին, նշանառու Շահեն Սարգսյանին: Սամվելն իմացավ, թե ինչպես Գագիկը ձգտում էր տանկից հանել ու փրկել իր մարտական ընկերներին՝ Աշոտին ու Շահենին, բայց, ավա՛ղ, չկարողացավ, որովհետեւ նրանց սրտի միջով արդեն բացվել էր դեպի Շուշի տանող փրկության երանելի ճանապարհը: Փրկվեց միայն անձնակազմի հրամանատար Գագիկը, որն էլ հետագայում պիտի ցասման լեզվով խոսեր թուրք-ազերիների հետ եւ առներ իր քաջ ընկերների վրեժը:

Սամվելը լավ գիտեր նաեւ մյուս շրջանների այն հրամանատարներին, ովքեր Շուշիի տարբեր կողմերից պետք է բարձրանային եւ ստիպեին ազերի-թուրքերին՝ հանձնվելու, թողնելու մեր հինավուրց քաղաքը, որի յուրաքանչյուր քար, յուրաքանչյուր թիզ հող շնչում է մեր պապերի երազանքով եւ պահում է նրանց ոտնահետքերն ու մատների թրթիռները: Սամվելը գիտեր, որ Շուշիի գրավման գործողություններին նախորդել են ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շտաբի հսկայական աշխատանքն ու ման-

Երակրկիտ նախապատրաստությունը: Նա լավ գիտեր, որ շտաբի հստակ ղեկավարության, բոլոր աստիճանների հրամանատարների հմուտ փոխգործակցության եւ հայ ազատամարտիկների վճռական գործողությունների շնորհիվ անպայման կոտրվելու է հակառակորդի դիմադրությունը եւ ազատագրվում է ստրատեգիական տեսակետից կարեւոր Շուշի ամրոցը: Նա տեղյակ էր, որ տեղի ինքնապաշտպանության ուժերի 1-ին, 4-րդ, 6-րդ խիզախ վաշտերը, հետախույզների եւ այլ ստորաբաժանումների արծիվները, բոլորը եկել են իրենց գլուխները դնելու Շուշիի, ասել է թե Արցախի ազատության զոհասեղանին: Սամվելը՝ զինվորների հետ սլանում էր դեպի վեր, որովհետեւ այնտեղ թշնամին էր, թուրք-ազերին, որին չէին կարող ներել ո՛չ Սամվելը, եւ ո՛չ էլ իր զինակիցներն ու զինվորները, որովհետեւ թուրք-ազերին զավթիչ է, հարեւանի ազատության ու անկախության անզիջում ոսոխը, իսկ ոսոխին ներել չի կարելի...

Սամվելը խորապես հասկանում էր, որ Արցախի ազատամարտիկների առջեւ դրված մարտական առաջադրանքի էությունը պարզապես ինչ-որ բնակավայրի, թեկուզ հինավուրց մայաքաղաքի ազատագրումը չէ միայն: Գլխավոր նպատակը Շուշիում տեղաբաշխված ադրբեջանական խոշոր ռազմական հենակետերի ոչնչացումն էր, որտեղից մահացու եւ ավերիչ հրթիռներ ու արկեր էին թափվում Ստեփանակերտի խաղաղ թաղամասերի վրա: Եվ ոչ միայն այդ: Մարտերում կոփված հրամանատարը լավ էր հասկանում, որ Շուշին ազատագրելուց հետո դարաբաղյան միավորումները պետք է ոչնչացնեն թշնամական կրակակետերը Ստեփանակերտը օղակի մեջ պահող ադրբեջանական մի շարք բնակավայրերում եւ ճանապարհի հարթեն դեպի Հայաստան, դեպի արտաքին աշխարհ: Այդ նպատակին հասնելու համար Սամվելը սկզբունք էր դարձրել այն ճշմարտությունը, որ «ուժն է ծնունդ իրավունքը», որ սեփական ուժերին հենվելով միայն կարելի է պաշտպանել հարազատ տունը, հավատն ու արժանապատվությունը, հող հայրենին: Այո, եկել է պատանության տարիների ինչուներին կոնկրետ պատասխան տալու, հայ ժողովրդի կորցրած բազմաթիվ քաղաքներից գոնե մեկը հետ վերադարձնելու ժամը: Եվ երբ Շուշիի վրա ծփացել է հայոց Եռագույնը, Սամվելը նրա մեջ տեսել է նաեւ իր արյան, իր երագի, իր հավատի երանգների բաժինը եւ խորհել՝

Շուշին ազատագրելու գործողություններին մասնակցելու համար արժե, որ ինքը աշխարհ է եկել, եւ երջանիկ են բոլոր այն զինվորները, որոնք իրենց հոգու կրակներն են ցանել հարազատ քաղաքաի փրկության ճանապարհին: Սամվելի դեմքին փայլում էր իրեն հատուկ սրտաբուխ ժպիտը, բայց միաժամանակ կրծքի տակ ալիքվում էր առաջիկա դաժան ճակատամարտերի հետ կապված մտահոգությունը: Նա գիտեր, որ թշնամին Շուշիում պարտվելով ավելի կատաղի եւ ավելի նենգ էր դառնալու: Նա հիշում էր պատմության դասը. «Հայրենիքն ազատագրող զինվորը մարտադաշտում իրավունք չունի քնելու հաջողությունների դափնիների վրա»:

1992թ. սեպտեմբերի 1-ին հրաման հրապարակվեց ստեղծել առանձին գունդ: Ս. Կարապետյանը իր ղեկավարած 1-ին գումարտակի հետ գտնվում էր Մարտակերտում, պաշտպանում էր Առաջաձորի պաշտպանական դիրքերը: 3-րդ գումարտակին հանձնարարված էր Վաղուհասի դիրքերը, իսկ 2-րդ գումարտակը հսկում էր հարավային դիրքերը: Հոկտեմբերին Ս. Կարապետյանին կանչում են կենտրոնից եւ նշանակում գնդի հրամանատար: Մինչեւ այդ Սամվելը գիտեր առանձին գումարտակների ստեղծման պատմության ու անցած ճանապարհների մասին:

Հեշտ չէր ղեկավարել գունդը: Սկզբնական շրջանում այն չուներ մշտական ծրագիր: Հիմնականում հսկում էր առանձին պահակակետեր եւ ցրված խմբավորումների տպավորություն էր թողնում: Սկսվեցին զորանոցների պատրաստման աշխատանքները եւ ավարտվեցին արագ: Գունդը աստիճանաբար կոմպլեկտավորվեց եւ հավաքվեց մի տեղ: Գնդի զինանձնակազմը հիմնականում ընտրվում էր Ստեփանակերտից: Եթե հանրապետության եղած պաշտպանական շրջանները ունեին իրենց կոնկրետ առաջադրանքները՝ պաշտպանել իրենց շրջաններին հարող սահմանները, ապա Կենտրոնական պաշտպանական շրջանը նման խնդիր չուներ: Բայց Արցախի համար ստեղծված ամեն ծանր, ճակատագրական պահի գունդը տեղափոխվում էր այնտեղ, որտեղ սպառնում էր վտանգ, կամ անհրաժեշտ էր լինում հրատապ ռազմական գործողություններ ծավալել:

Ս. Կարապետյանը հենվելով ռազմական փորձին, հարազատ մնալով խստապահանջ լինելու իր բնավորությանը, հուսադրում ու խրախուսում էր ընկերներին եւ զինվորներին, որ գունդը ավելի կազմակերպված գործի: Եվ նա չսխալվեց: Պատահական չէ, որ մարտերի ժամանակ գնդի ամբողջ անձնակազմը վստահում էր հրամանատարին, հավատում հաջողություններին եւ հասնում նպատակին:

* * *

Գնդի առաջին լուրջ քննությունը, առաջին խոշոր եւ կազմակերպված ռազմագործողությունը տեղի ունեցավ Մարտակերտի շրջանի գյուղերի, մասնավորապես Կիչան-Չլդրան-Դրմբոն բնակավայրերի ուղղությամբ: 1993թ. փետրվարից սկսած մինչեւ այդ ճակատամարտը գունդը պաշտպանական մարտեր էր մղում: Սկսելով հարձակողական գործողությունները, ԼՂՀ ՊԲ-ի մյուս ստորաբաժանումների հետ համատեղ, գունդը մի քանի օրում կտրեց հակառակորդի դիմադրությունը եւ դուրս եկավ Մարտակերտ-Քելբաջար ավտոմայրուղին: Սակայն քիչ անց, Ս. Կարապետյանին կապով հայտնում են, որ ռազմաճակատի գծի երկարությամբ գործող ոչ բոլոր ստորաբաժանումներին է հաջողվել կատարել իրենց առջեւ դրված խնդիրները: Փաստորեն գնդի առաջատար խումբը մտնելով Դրմբոն տարբեր թեւերից հայտնվել էր թշնամու հարվածի տակ: Նման դեպքերում Ս. Կարապետյանը չէր կորցնում իրեն: Այս անգամ էլ նա իր բարձրության վրա էր: Ստեղծված վտանգավոր իրավիճակում գնդի հրամանատարությունը նահանջի հրաման արձակեց եւ դիրքավորվեց Չլդրան գյուղից դուրս գտնվող խաչմերուկում եւ դրանից աջ գտնվող Մեհմանայի բարձունքում: Չորս-հինգ օր տեսած թեժ մարտերի ընթացքում թշնամու բոլոր փորձերը՝ վերագրավել ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող Մեհմանայի բարձունքը, չստացվեցին:

Ս. Կարապետյանին ոգեշնչեցին դարաբաղյան ուժերի հաջողությունները ռազմաճակատի գծի ամբողջ երկարությամբ: Այդ ընթացքում գնդի թեւերը պաշտպանող զորախմբերը եւս առաջ անցան, Վաղուհաս գյուղի ուղղությամբ չեզոքացրին սպառնացող վտանգը, շարժվեցին դեպի թուրքաբնակ Ալըշան եւ գրավեցին այդ հենակետը: Ազատագրվեցին նաեւ ռազմական նշանակության շրջակա բարձունքները եւ մտան Սարսանգի կառույցը:

1993-ի մարտի 4-ն էր: Գունդը կանգնած էր Սարսանգի ափին: Հակառակորդը հրետանու բոլոր տեսակներից անընդհատ կրակ էր թափում հայ զինվորների վրա: Այդտեղ, զորանոցի կողքին, թշնամու թողած «Գրադ» կայանքի հրթիռների մոտ դարսված էին լեռնաչափ արկեր, այդ հրթիռները արձակվել էին հայկական գյուղերի վրա:

Օրը բավականին անցել էր, երբ հանկարծ հնչեց ժամապահի ձայնը.

-Սամվել Կարապետյանը գալիս է:

Ռազմաճակատի կողմից եկող խճուղուց դեպի զինվորները թեքվեց ապակիները փշրված մի կարմիր «Նիվա», որն ամբողջովին կորած էր ցեխի մեջ: Մեքենան կանգ առավ, Սամվելը դուրս եկավ նրանից.

-Բոլորը հավաքվե՞լ են,- հարցրեց եւ արագ քայլերով մտավ շտաբը: Այստեղ, փոքրիկ սենյակում, վառվող վառարանի եւ լամպի աղոտ լույսի տակ նա բացեց Մարտակերտի շրջանի քարտեզը: Գումարտակների հրամանատարներից յուրաքանչյուրը իր առաջարկությունն էր անում հարձակման պլանի վերաբերյալ: Գնդի հրամանատարը ոչ մեկին չընդհատելով, ուշադիր լսում էր: Բոլորն առաջարկում էին զրավել Մոխրաթաղը:

-Դա չափազանց մոտիկ է Մարտակերտին,- վերջապես ասաց հրամանատարը,- իսկ այնտեղ հակառակորդի մեծ ուժեր կան: Սկզբում առաջնային խնդիրը կլուծենք, նրանցից կխլենք բարձունքներն ու ՄեծՇենի հեռուստաշտարակը: Մի լավ ուղեկցող է պետք, հետագա առաջխաղացումը կորոշենք գործողության ընթացքին համապատասխան:

-Իսկ եթե մենք, ա՛յ, այսպես գնանք,- առաջարկեց 3-րդ մոտոհրաձգային գումարտակի հրամանատար Սամվել Հարությունյանը, ցույց տալով խճուղին,- ավելի հեշտ ու արագ կլինի:

-Հնարավոր է, բայց նույնպես էլ արագ հետ կվերադառնանք,- ասաց գնդի հրամանատարը,- ուրեմն մի շտապիր: Յուրաքանչյուր գումարտակ իր ուղղությամբ է գնում,- քարտեզի վրա վերլուծություն է տալիս, հետո ներկաներին համոզում, թե ստորաբաժանումները որտեղ կարող են հանդիպել:

Մարտական գործողությունները գնալով ծավալվեցին Մաղա-

Վուզի եւ Մարտակերտի հեռուստաաշտարակի ուղղությամբ: Հեռուստաաշտարակը գրավել էր թշնամին, ստեղծել պաշտպանական ամուր կառույցներ եւ նահանջելու մտադրություն չունէր: Այդ ժամանակ մեր զինվորների շարքերը նոսր էին: Սկսվել էր նաեւ Քելբաջարի ռազմագործողությունը: Հրաման էր ստացվել ազատամարտիկներին տեղափոխել «Պուշկեն յալ» կոչվող տեղամասը, որի կեսին տիրում էին ազերիները, կեսին՝ մերոնք: Բարձունքը գրավելը դժվար էր: Տեղի հայ բնակչությունը բռնագաղթված էր, չկար մեկը, որ գնդի հրամանատարին ծանոթացներ տեղանքին եւ ցույց տար ճանապարհը:

Պատերազմը շարունակվում էր թեժ ու անզիջում: Թշնամին մտադրություն չունէր նահանջել Մարտակերտի շրջակայքի բարձունքներից: Հենց տվյալ պահին Ս. Կարապետյանը հրաման ստացավ վերցնել 30 հոգու եւ մասնակցել Քալբաջարի ռազմագործողություններին թշնամու թիկունքից: Շրջանի տեղանքն անծանոթ էր եւ ականապատված: Սամվելը զիտեր, որ առաջին հերթին պետք է խուճապի մատնել քելբաջարցիներին: Ապրիլի 1-ին Սամվելը իր 30 զինվորների հետ արդեն բարձրացել էր Քելբաջարի սարերը: Ապրիլի 2-ին պետք է սկսվեին ռազմական գործողությունները: Առաջադրանքը շատ էր կարեւոր: Քելբաջարը հարվածի տակ առնելու համար անհրաժեշտ էր գրավել այն ճանապարհը, որը շրջանը կապում էր Կիրովբադի հետ: Գրավել այդ խաչմերուկը, նշանակում էր լրիվ փակել թշնամու միակ ճանապարհը: Կա եւս մի ուրիշ ուղի, որ անցնում էր Օմարի լեռնանցքով:

-Տղաներ,- իր զինվորներին դիմեց Սամվելը,- Կիրովբադը Քելբաջարին կապող ճանապարհի ամենակարեւոր մասը խաչմերուկն է: Այն պետք է վերցնենք կայծակնային արագությամբ:

Մինչեւ նրա արժիվները կսկսեին առաջ շարժվել, թուրք-ազերիները հասցրին հակահարձակման անցնել, ավելի շուտ նրանց օգնելու համար նոր զինվորներ եկան: Ճակատամարտն անխուսափելի էր դառնում: Հետախուզությունից մերոնք տեղեկացել էին, որ հակառակորդը իր հետ բերել էր 8 միավոր տեխնիկա եւ 250 հետեւակային: Մարտական գործողություններից դղրդում էին սարերը, շարժվում էին ժայռերը, ասես օրորվում էր ճանապարհը:

-Այդպե՛ս,- ասում էր Սամվելը իր զինվորներին, որոնցից չէր բաժանվում: Խրախուսում էր նրանց՝ մարտերին անմիջական մաս-

Մակցությամբ: 1993-ի ապրիլի 2-ը Ս. Կարապետյանի հուշերում մնում է որպես կրակե օր: Այդ օրն ընթանում էր Քելբաջարի շրջանի տարածքում կրակակետերի եւ ռազմական բազաների ոչնչացման գործողությունը: Սամվելը պահեստային դասակով գտնվում էր խաչմերուկից երեք կիլոմետրի վրա, թույլ չէր տալիս, որ Կիրովաբադի կողմից եկող նոր ստորաբաժանումները անցնեն առաջ: Առաջադրանքն այդտեղ համարյա կատարված էր, երբ հանկարծ թիկունքի կիրճից երեւացին հետեւակի երկու մարտական մեքենաներ ու մեծաթիվ հետեւակայիններ վեր բարձրացած ավտոմատներով:

-Թշնամին հանձնվում է, չկրակել,- հրամայեց Սամվելը եւ իր սովորությամբ թշնամու զրահատեխնիկային ընդառաջ գնաց, հակառակորդի հետեւակին առաջարկելով հանձնել զենքը: Թշնամին անսպասելիորեն կրակ բացեց եւ նռնակներ նետեց հայ մարտիկների վրա: Մեր մարտիկների դասակը, իր խիզախ հրամանատարի գործողություններով ոգեշնչված՝ չշփոթվեց, շարքից հանեց հակառակորդի մոտ 60 զինվորների, խփեց մեկ ՀՄՍ, իսկ մյուսը գրավեց: Սակայն Սամվելի ոտքերի տակ պայթեց թշնամու նետած նռնակը: Հրամանատարը վիրավորվեց:

Թշնամին խուճապահար փախչում էր Քելբաջարից...

* * *

Մարտակերտի շրջանի «Պուշկեն յալ» կոչվող բարձունքը ստրատեգիական կարեւոր նշանակություն ունեցող դիրք էր: Ազերիները այդ գրավելուց հետո ամրացրել էին իրենց դիրքերը եւ ցանկություն չունեին այնտեղից դուրս գալու: Բայց հակառակորդը ստիպված եղավ թողնել այն՝ կրկին հետ գրավելու երազանքով: Քելբաջարի ռազմական հենակետերը ոչնչացնելուց հետո Ս. Կարապետյանը իր զինվորներով մոտեցավ «Պուշկեն յալին»: Եվ երբ ազերիները նորից խփում էին այդ բարձունքին, Սամվելի տղաները արժանի պատասխան էին տալիս: «Պուշկեն յալը» մեր զինվորների ուշադրության կենտրոնից չէր վրիպում: Սամվելն այդ բարձունքի նշանակության մասին շատ էր խոսել:

Մարտակերտը դեռ թշնամու ձեռքին էր: Հակառակորդը շնթռկել էր այնտեղ, հայկական անունը փոխել, դրել Աղդարա: Բայց այն ո՞ր արցախցին կարող է հաշտվել նման իրավիճակի հետ, չէ՞ որ Մարտակերտի շրջանը մեր պատմական Ջրաբերդի, միջնադարյան անպարտ Խաչենի ժառանգորդն է եւ կազմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համարյա կեսը: Ո՛չ, չի կարելի շրջկենտրոն Մարտակերտը թողնել թշնամու ձեռքին: Ս. Կարապետյանի գունդը եւս օրեր էր հաշվում, որպեսզի մասնակցի շրջկենտրոնի ազատագրման գործողություններին: Սամվելը գիտեր, որ Մարտակերտի ազատագրումը շատ ջանքեր է պահանջում եւ կարող են լինել շատ զոհեր: Ուստի նա ողջունեց քաղաքի ազատագրման նոր պլանը, ըստ որի հարձակումը պետք է կազմակերպվեր ոչ թե հեռուստաաշտարակի կողմից, այլ՝ Փափրավենդ բնակավայրի, որպեսզի կորուստները քիչ լինեն:

Այնպես ստացվեց, որ այդ ռազմագործողությունը դարձավ ոչ միայն Մարտակերտի ազատագրման, այլեւ Աղդամի թշնամական կրկակետերը վերացնելու միջոցառում: Ռազմական գործողությունները արդյունավետ են լինում այն ժամանակ, երբ դրանց նախապատրաստվում են՝ նկատի առնելով եւ անցած փորձը, եւ ուժերի համագործակցությունը, եւ տակտիկական ու ստրատեգիական պլանները: Ս. Կարապետյանը այդ ուղղությամբ միշտ էլ խորհում էր, ծանր ու թեթեւ անում գործողությունների արդյունքը, հարձակման նպատակը եւ հաջողության հասնելու բոլոր հնարավորությունները: Այս անգամ էլ նա իր դիրքերի վրա էր: Նրա ղեկավարած գնդի զինանձնակազմի մի ջոկատ մինչեւ Աղդամի ուղղությամբ հարձակվելը ուղարկվել էր նրա մոտակայքում գտնվող Շելլու գյուղի ռազմական հենակետը ոչնչացնելու: Բայց առանց «Ուղտի մեջք» կոչվող բարձունքը զրավելու, հաջողության հասնել հնարավոր չէ: Հակառակորդն այստեղ ստեղծել էր պաշտպանական ուժեղ բնագիծ, նա հասկացել էր, որ այդ ռազմաստրատեգիական կարելուր նշանակություն ունեցող հենակետը կորցնելը կնշանակեր Աղդամ քաղաքի կորուստ:

Ս. Կարապետյանի հետ զրուցելիս երեւաց խիզախ այս հրամանատարի անմիջականությունն ու ընկերների կորուստը ցավով զգալու նրբությունը:

Գնահատելով Աղղամի ուղղությամբ հարծակվելու գործողությունները, նա անթաքույց ասիտսանքով ասաց. «Նշենք, որ այդ ռազմագործողությունը մեզ համար անհաջող ավարտ ունեցավ: Այդ նույն օրը զեհվեց լեգենդար Ավոն: Պատճառը հետեւյալն էր. Հարծակունը պետք է տեղի ունենար չորս ուղղությամբ: Այն հիմնական ճանապարհը, որտեղով պետք է առաջ գնար մեր զինտեխնիկան եւ ասպահովեր հետեւակի առաջխաղացումը, լրիվությամբ ականապատված էր: Բարդ իրավիճակ էր տիրում այդ օրը ռազմաճակատում: Մեր սակրավորները պիտի ականազերծեին այդ ճանապարհը, սակայն Ասկերանի գնդի սակրավոր Արմենը ականի վրա զոհվեց, եւ փաստորեն այստեղ պլանները խառնվեցին: Ականազերծումը չստացվեց: Իսկ նման պայմաններում տեխնիկան չէր կարող աշխատել: Առանց դրան էլ հնարավոր չէր այդ կողմից զինտեխնիկան գործեր: Բայց դա չստացվեց: Դրանից հետո պարզ դարձավ, որ այդ ուղղությամբ հնարավոր չէր ճեղքել հակառակորդի պաշտպանությունը: Գլխավոր հրամանատարության հրամանով մենք կրկին տեղափոխվեցինք Մարտակերտի ռազմաճակատ՝ Ջանյաթաղի ուղղությամբ»:

Ս. Կարապետյանի եւ զինակիցների առջեւ կոնկրետ խնդիր էր դրված՝ վերացնել հակառակորդի հենակետերը Գալաչիլար, Բոյահմեդլու, Փափրավենդ գյուղերում եւ վերցնել «Պուշկեն յալ» բարձունքը: Հենց առաջին օրը ռազմագործողությունը հաջող ավարտվեց: Հայ զինվորները մտան Գալաչիլար բնակավայրը:

* * *

Ռազմական գործողությունները Մարտակերտի շուրջ ընթանում էին հաջող: Հեռվից Մռով սարը ասես նայում էր քաջն նահապետի պես եւ զոհունակությամբ ժպտում իր զավակների խիզախության եւ վճռականության համար: Սամվելի եւ իր զինվորների ականջներում կարծես հնչում էր նահապետ Մռովի խրախուսանքը. «Ապրե՛ք, տղաներ, այդպե՛ս է պետք, մի՛ թողեք թշնամին հանգստանա, վռնդեցեք նրան մեր ավանդական հողից»:

Գալաչիլար գյուղը գրավելուց մեկ օր անց մեր զինվորները պետք է գրավեին Փափրավենդի մոտակայքում գտնվող բարձունքը եւ ասպա այնտեղից դուրս գային Աղղամ-Մարտակերտ մայրուղին: Սակայն աննպաստ եղանակների պատճառով մերոնք կանգ

առան: Եղանակը բացվելուց հետո, 1993թ. հունիսի վերջին, առանց կորստի, Սամվելի քաջերը իրականացրին գործողությունը: Դրանից հետո հայ արծիվները առաջանում են դեպի Բոյահմեդլու եւ գրավում նրա մոտ գտնվող բարձունքը, վերադառնում Փափրավենդի ռազմական հենակետերը եւ մտնում գյուղ: Սամվելի զինվորների աջ թեւում կռվում էր Շուշվա գունդը, որը եւս հրաշքներ էր գործում:

* * *

Ս. Կարապետյանը հեռվից նայում էր «Պուշկեն յալ» բարձունքին եւ կրճտացնում ատամները. «Շեյթաններ, շուտով ձեր հախիցը կզանք: Այնպես եք նստել այդտեղ, ասես ձեր հողում լինեք»: Սամվելը գիտեր, որ բարձունքը գրավելու համար գործում էին մի քանի ստորաբաժանումներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր առաջադրանքը:

ԼՂՀ Պաշտպանության բանակի գլխավոր հրամանատարը հրամայել էր, որ մեկ օր հետո, առավոտյան ժամը հինգին, պաշտպանական շրջանների հրամանատարները զեկուցեն իրենց առաջադրանքների կատարման մասին:

Գիշերվա ժամը 12-ն էր: Սամվելը նկատեց, որ զինվորները չափազանց հոգնած են: Նա հանգստանալու հրաման տվեց եւ միաժամանակ կապվեց իր գնդի ստորաբաժանումների հրամանատարների հետ եւ հրաման արձակեց գիշերվա ժամը 4-ին վերսկսելու մարտական գործողությունները՝ հակառակորդից «Պուշկեն յալի» 2 կմ ձգվող տարածքը մաքրելու: Հրամանը օրենք է: Գիշերվա ժամը 4-ն անց 55 րոպեին երրորդ գումարտակի հրամանատարի տեղակալը կապով զեկուցում է, որ «Պուշկեն յալի» գրավման ռազմագործողությունը լրիվությամբ ավարտված է: Դա այդ բարձունքի գրավման առաջին քայլն էր, գնդի քաջագունների անձնագրի պայքարի արդյունքը: Մինչեւ այդ բարձունքը գրավելու գործողությունները կիսատ էին մնում: Բարձունքը գրավելուց մեկ շաբաթ անց գլխավոր հրամանատարը իր մոտ է կանչում Սամվելին եւ հանձնարարում, որ 60 զինվորի հետ պատրաստվի միանալու Ասկերանի գնդին՝ Շելլի բնակավայրի կրակակետը ոչնչացնելու նպատակով:

Ս. Կարապետյանը իր մի քաի զինվորների հետ հեռվից նայեց դեպի Շելլի գյուղը եւ մտքի աչքերով տեսավ վերահաս ճակատամարտը: Սամվելը լավ գիտեր, որ Շելլին շրջակա հայկական գյուղերն ավերող ռազմական հեմակետ է, այն պետք է վերացնել: Նա ուժերը դասավորեց եւ հրամայեց կրակի տակ առնել այդ ավազակաբույնը: Չանցած մի քանի ժամ, հայ ազատամարտիկները մտնում են Շելլի, ոչնչացնում մոտակայքում գտնվող ռազմական հեմակետերը, որտեղից օրական մի քանի անգամ ազերիները հրետակոծում էին Ստեփանակերտի եւ Ասկերանի շրջանի գյուղերը: Շելլին գրավելուց հետո հրամանատարը շարքի կանգնեցրեց զինվորներին ու հայտնեց.

-Մենք կրկին վերադառնում ենք «Պուշկեն յալ» տեղամասը, որ պետզի պաշտպանենք այն, այդպես է հրամայված:

Դա տեղի ունեցավ 1993թ. հուլիսի կեսերին, մինչեւ Աղդամի գրավման ռազմագործողությունն սկսելը: Երկու օր մնալուց հետո կենտրոնից հրաման է արձակվում, որ Շուշվա գունդը դիրքավորվի «Պուշկեն յալի» մոտ, իսկ Ս. Կարապետյանի գունդը գնա՝ մասնակցելու Աղդամի գրավման գործողություններին: Այդպես էլ կատարվում է: Շուտով Շուշվա գունդը դիրքավորվում է «Պուշկեն յալում», իսկ Ս. Կարապետյանի գունդը Մարտունու պաշտպանական շրջանի դիրքերից սկսում է Աղդամի ռազմագործողությունը:

Շիխբաբալի բնակավայրի ուղղությամբ կտրելով մայրուղին, Սամվելի զինվորները պետք է մտնեին Աղդամ: Ճանապարհը պիտի անցներ այդ գյուղի միջով, ապա անցներ Աղդամ տանող երկաթուղային կամրջով եւ մտներ քաղաք: Փաստորեն խնդիր էր դրված գործողությունները վարել Աղդամի միջով:

Ռազմական գործողությունների առաջին օրը Ս. Կարապետյանի ստորաբաժանումը պաշտպանական դիրք էր գրավել, իսկ երկրորդ օրը սկսել էր հարձակումը: Ուղղակի մեկ թափով գրավում է երեք ադրբեջանական գյուղ, որոնց թվում եւ Սայբալուն: Դրանից հետո ստորաբաժանումը դիրքավորվում է Աղդամին կից կամրջի մոտ: Քաղաք մտնելու հնարավորությունն արդեն ապահովված էր: Սակայն հակառակորդը շարունակում էր դիմադրել: Նա իր բոլոր ուժերը կենտրոնացրել էր այստեղ՝ քաղաքը չտալու նպատակով: Թշնամին գիտակցում էր, որ Աղդամի հանձնումը ազերիների հա-

մար կհանդիսանար ոչ միայն տարածքի կորուստ, այլև հոգեբանական ուժեղ հարված: Սամվելը պատմում է.

«Երկու օր անընդմեջ մեր դիրքերի վրա հրետամային հեղեղ էր թափվում: Այդ ընթացքում ունեցանք կորուստներ: Բայց մեր մարտիկների ոգին շարունակում էր մնալ անկոտրում ու բարձր: Բոլորն ուզում էին լինել Աղզամի գրավման մասնակիցը, որովհետև դեռևս սկսած 1988թ. այդ քաղաքը ծառայում էր որպես հակահայկական տրամադրությունների եւ գաղափարների որջ, որովհետև այստեղից էր իրականացվում հրետակոծությունների հեղեղը եւ մահ սփռում քաղաքամայր Ստեփանակերտում ու հանրապետության գյուղերում»:

Մոտենում էր վճռական պահը: Ս. Կարապետյանը մեկ առ մեկ մոտենում էր զինվորներին, խրախուսում: Նա ձգտում էր հնարավորին չափ քիչ մարդկանց մասնակից անել այդ գործողությանը, քանի որ դա է պահանջում քաղաքի փողոցային մարտերի առանձնահատկությունը: Յուրաքանչյուր գումարտակից պետք է առանձնացվեր 20-25 զինվոր: Բայց պարզվում է, որ շատերն են ուզում մասնակցել քաղաքի գրավման գործողություններին: Ստացվեց այնպես, որ յուրաքանչյուր գումարտակից 25-ի փոխարեն գործողություններին մասնակցեց 70 զինվոր:

Վերջապես սկսեցին մարտերը: Հայ ազատամարտիկների ճնշմանը այդ պահին ոչ ոք չէր կարող դիմանալ: Ս. Կարապետյանի ստորաբաժանման տղաների արձակած գնդակների մեջ ասես կրակից բացի նաեւ հատուցման վրեժի հուրը կար: Հակառակորդը չդիմանալով հայ ազատամարտիկների հարձակմանը, բռնում է փախուստի ուղին: Առաջ շարժվելով, հայ զինվորները սանրում են քաղաքի փողոցները եւ դուրս գալիս Աղզամ-Աղջաբեդի մայրուղին ու բռնում պաշտպանության դիրքեր:

* * *

Աղզամի եւ Աղջաբեդու շրջանների բնակչությունը խուճապի մեջ էր: Ավտոմեքենաներով եւ հետիոտն ամեն օր խմբերով փախչում էին ազերիները: Ադրբեջանի ղեկավարությունը այդ օրերին բնակչությունից թաքցնում էր ռազմաճակատում տեղի ունեցող իրական պատկերը: Շատերը դեռ չգիտեին, որ Աղզամ քաղաքը

գրավում են հայերը: Նրանք այնպիսի խուճապ էին ապրում, որ նույնիսկ պահակակետեր չէին դնում, թվում էր, թե պաշտպանվելու նպատակ էլ չունեին:

Ս. Կարապետյանի ստորաբաժանումը մոտ 10 օր այդ բնագիծը պաշտպանելուց հետո, պահակակետերը հանձնում է Ասկերանի գնդի զինվորներին եւ դուրս գալիս: Մշակում էին ռազմագործողությունների մոր պլաններ...

1993-ի հուլիսի 2-ին Ադրբեջանի զինված կազմավորումները, ադրբեջանական ռազմաօդային ուժերի գրոհիչների ռմբահարվածներից հետո, տանկերի եւ հրետանու աջակցությամբ լայնածավալ հարձակում ձեռնարկեցին ԼՂՀ Հադրութի շրջանում: Թշնամուն հաջողվեց ձեռքել պաշտպանությունը եւ գրավել Ծամծոր, Ցոր, Մելիքաշեն, Բլուբան գյուղերը: Մարտերն ընթանում էին Հադրութ շրջկենտրոնի ծայրամասերում: Չավթված էր նաեւ Փափրավենդ գյուղը Մարտակերտի ուղղությամբ: Հենց այդ օրերին էր, երբ ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռ. Քոչարյանը հրապարակեց ԼՂՀ կառավարության հաղորդագրությունը, որտեղ նշված էր, որ Ադրբեջանի ագրեսիայի հերթական գալարապտույտին նախորդել են զանգվածային լրատվության միջոցներով պատերազմական հոգեբանության բորբոքումը, Ադրբեջանի հանրապետության ղեկավարների՝ բոլոր ուժերը դարաբաղյան ռազմաճակատ նետելու կոչ անող ելույթները: Ջորամասերի ցուցադրաբար տեղափոխումը դեպի Լեռնային Ղարաբաղի սահմանները, Ադրբեջանի արտաքին գործոց նախարարության՝ աննախադեպ կեղծ հայտարարությունը այդ հանրապետության իշխանությունների մտադրությունների բավականին խոսուն վկայությունն են:

ԼՂՀ կառավարության հայտարարության մեջ ցույց է տրվում, որ Ադրբեջանի ղեկավարները, իրենց քաղաքական նպատակներին հասնելու համար, այս էլ քանիերորդ անգամ անպատիժ կերպով ռազմական գործողությունների ծավալում են դավազրգում: «Ադրբեջանի իշխանությունները,- ընդգծված էր հայտարարությունում,- կրկին փորձում են խաղարկել դարաբաղյան քարտը՝ ի հեճուկս հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, ԵԱՀԿ-ի ջանքերի, կրակը դադարեցնելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հստակ արտահայտված պատրաստակամության:

ԼՂՀ կառավարությունը, առաջնորդվելով հանրապետության բնակչության անվտանգության շահերով, ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ագրեսորին սանձահարելու համար:

Տարածաշրջանում ռազմական գործողությունների ծավալման հետեւանքների ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Ադրբեջանի ղեկավարության վրա»:

Ռազմական գործողությունները մտել էին մի նոր փուլ: Թուրքերը ամեն գնով ուզում էին ծնկի բերել Արցախը՝ հարավից:

Պատմում է Ս. Կարապետյանը.

«Մենք պետք է տեղափոխվեինք Հադրուքի ռազմաճակատ, քանի որ այդ ժամանակ Հադրուքի շրջանի Ցոր, Առաքյուլ, Բանագուր եւ այլ գյուղեր գտնվում էին ազերիների ձեռքին: Ժամանակն էր ազատագրել այդ գյուղերը:

1993թ. օգոստոսի 9-ին գունդը տեղափոխվում է այդտեղ եւ բազավորվում Սարինշեն գյուղում իր ողջ տեխնիկայով եւ զինանձնակազմով: Այդտեղից էլ պետք է սկսեինք մեր ռազմագործողությունը:

Օպերացիայի առաջին օրը, ճիշտն ասած, այնքան էլ հաջող չանցավ: 3-րդ գումարտակի համար գործելու հնարավորությունները շատ սահմանափակ էին, որը եւ պատճառ դարձավ պասիվանալու: Իսկ 1-ին եւ 2-րդ գումարտակները այդ օրը հաջողությամբ աշխատեցին: Հատկապես աչքի ընկավ 2-րդ գումարտակը, որի զինանձնակազմը շեշտակի հարվածով վերցրեց տարածքի վրա իշխող բարձունքը եւ 3-րդ գումարտակի համար գործելու հնարավորություն ստեղծեց: Այնուհետեւ 1-ին գումարտակը մտնում է Ցոր պատմական գյուղը, որտեղից ազերիներն արդեն խուճապահար փախել էին»:

* * *

Արցախի դեմ սանձագերծելով պատերազմ, Ադրբեջանի կառավարող շրջանները մեր լեռնաշխարհի շուրջ գտնվող բոլոր ազերական շրջանները վերածել էին ռազմական հենակետերի: Մեկի անկումից հետո մյուսն ավելի կատաղի էր դառնում: Ուստի Արցախի խաղաղ կյանքի ապահովումը կախված էր նրա շուրջ եղած բոլոր ռազմական հենակետերի վերացման հետ: Հադրուքի շրջանի հայկական գյուղերն ազատագրելուց հետո օրակարգի հարց դար-

Ծավ Ջեբրայիլի շրջանում տեղակայված թշնամու ռազմական հե-
նակետերի ոչնչացումը: Բայց մինչ այդ դեպի Ջեբրայիլ տանող
ճանապարհը անհրաժեշտ էր մաքրել, քանի որ Հաղրութի շրջանի
Առաքյուլ եւ Բանագուր գյուղերը դեռեւս գտնվում էին թշնամու
ծեռքին: Բացի դրանից, տարբեր թեւերում գործող հայ զինվորնե-
րը հակառակորդի ուժեղ դիմադրությանը հանդիպելով, կանգնել
էին դժվարությունների առաջ, եւ դա հասկանալի է, ազդում էր
ԿՊՇ-ի ստորաբաժանման հետագա առաջխաղացմանը:

Հրամանատարությունը վերլուծելով ստեղծված իրավիճակը,
որոշեց հարված հասցնել Ջեբրայիլի ճանապարհը փակող թշնա-
մական խմբավորումներին: Մարտական գործողությունների ըն-
թացքում ազատագրվեցին Բանագուրն ու Առաքյուլը, որը նպաս-
տեց նաեւ Հաղրութի գնդի գործողությունների ակտիվացմանը:

Դեպքերը նկարագրում է Ս. Կարապետյանը.

«Ձարգացնելով հարձակումը, մեր ստորաբաժանումները ազա-
տագրեցին Հաղրութի շրջանի գրավված տարածքները եւ առաջ
շարժվելով վերացրին Ջեբրայիլի շրջանում տեղակայված թշնա-
մական մի շարք հենակետեր եւ ընդհուպ մոտեցան Ջեբրայիլի
շրջկենտրոնի մատույցներին: Խնդիր էր դրվել շրջապատել Ջեբ-
րայիլը, վերցնել նրան հարող երկու բարձունքները եւ սպասել հե-
տագա հրամանին: Այդ ժամանակ Շուշվա գունդը գործում էր Կու-
բաթլուի ուղղությամբ: Մենք կապով հայտնեցինք, որ Շուշվա գն-
դի դրությունը ծանր է՝ զոհեր են տվել, տեղանքը դժվարամատչելի
է՝ հատկապես Բաշարաթ գյուղի մոտ: Ամենից գլխավոր պատճառն
այն էր, որ այդ ուղղությամբ գործող զորամիավորումները իրար
հետ համաձայնված չէին գործում (հատկապես Գորիսի եւ Կապա-
նի ուժերը): Գլխավոր հրամանատարի հրամանով Շուշվա գնդի
գործողություններին աջակցելու համար օգնության պետք է ու-
ղարկվեր Հաղրութի գունդը: Սակայն դրա համար ճանապարհը
պետք էր մաքրել հակառակորդից, որը հարմար տեղ էր գրավել
Ջեբրայիլի եւ Կուբաթլուի արանքում ստրատեգիական նշանակու-
թյան մի բարձունքի վրա»:

Այս ամենը պատմելով, Ս. Կարապետյանը խորհրդավոր լռում է:
Երբ տեղը գալիս է, որ նկարագրի իր կատարած սխրանքը, նա շր-
ջանցում է: Չի սիրում ընդգծել իր կատարածը, բայց բոլորին է
հայտնի, որ Սամվելն այն հրամանատարներից է, որ միշտ լինում է

Գինվորի կողքին: Եթե որոշ հրամանատարներ թե՛ վտանգի պահին զնուն են գինվորների հետելից, ապա Սամվելը այդպիսին չէ, նա հարձակման պահերին իրեն զգում է որպես եւ հրամանատար, եւ շարքային գինվոր: Կարելի է ասել նրա ոգին թեւեր է առնում միայն ու միայն իր գինվորյալների ոգուն ծուլված: Դա նկատել են գնդի բոլոր զինձառայողները եւ դա հպարտության ու մտերմության զգացում է առաջացնում նրանց բոլորի սրտերում: Ահա, թե ինչ է պատմում զորամասի հետախուզության պետ, «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր Անդրանիկ Սարգսյանը.

«Ս. Կարապետյանի կյանքը շարքային գինվորից զորավարի աստիճանին հասնելու, սիրտն ու հոգին հայրենիքի եւ ժողովրդի ազատությանն ընծայելու հրաշալի օրինակներից մեկն է: Արցախի պաշտպանության եւ ազատության համար մղված բոլոր մարտերին մասնակցել է Սամվելը: Իսկ երբ նա նշանակվել է ԿՊՇ-ի հրամանատար, առանց նրա գնդի բախտորոշ ոչ մի ճակատամարտ տեղի չի ունեցել: Օրինակ, բոլորին հայտնի է Օմարի լեռնանցքի նշանակությունը ազերիների դեմ մղած պատերազմում: Չորս անգամ հրաման է եղել՝ զրավել Օմարը: Վերջին եւ վճռական հույսը եղել է ԿՊՇ-ն: Օմարի գրավմանը մասնակցել է 67 ազատամարտիկ: Սամվելը լավ գիտե այդ մասին: Հետաքրքիրն այն է, որ ստրատեգիական մեծ նշանակություն ունեցող այդ բարձունքը գրավելիս 1 զոհ ենք տվել: Դա կոլխոզաշենցի Արթուրն էր՝ խիզախ մի արծիվ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակի հիմնադրման հետ կապվում է նաեւ ԿՊՇ-ի ձեւավորումը: Սամվելը նրա ոգին էր եւ այժմ էլ այդպիսին է: Շուշիի գրավման հիմնական ճանապարհով զնուն էր 4-րդ վաշտը, որի համար մեծ գործեր են կատարել Գագոն, Յուրան, Սամվելը՝ գինվորներին ոգի պարգեւողը:

Սամվելը 3 անգամ վիրավորվել է՝ Հորադիզում, Մարտակերտում, Քելբաջարում: Սամվելի հետ միասին սրտի ցավով ենք հիշում 4-րդ վաշտին պատկանող այն ՀՄՍ-ն, որ վառվել է Շուշիի մատույցում: Հնարավոր չէ մոռանալ նրա հերոսական անձնակազմին՝ Գագիկին, Աշոտին, Շահենին:

Մենք բոլորս հպարտանում ենք, որ Սամվելն արժանացել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի եւ ԼՂՀ, եւ

Չայաստանի Հանրապետության մասշտաբով:

Ինչ վերաբերում է ինձ, ապա կարող եմ երախտիքով ասել, որ եթե Սամվելը չլիներ, ես ծանր վիրավորվելուց հետո նորից չէի մասնակցելու պատերազմին: Մեր ժողովրդի եւ մեր զինվորների սրտերում հավերժ կապրեն շքանշանակիրներ, զոհյալներ Վիգենը, Հենոն, փոքր Յուրան:

Ս. Կարապետյանը մարտավարական հզոր ուժի տեր է: Մերոնցից մի մեծ խունբ Հորադիզի կողմերում շրջապատվել էր թուրքի մի գյուղում: Սամվելի հմուտ գործողությունների շնորհիվ զորախումբը առանց զոհի ճեղքեց եւ դուրս եկավ օղակից: Սամվելը սովորական հրամանատար չէ: Նա զենքը ձեռքին միշտ մեզ հետ է եղել, մեր կողքին, մեր շարքերում: Համարձակորեն կարող եմ ասել, որ ձախողված ոչ մի մարտական գործողություն չի եղել, քանի որ Սամվելը գիտեր մեր բոլորի հնարավորությունները եւ ճիշտ էր տեղադրում ուժերը: Հաճելի է ընդգծել այն երեւույթը, որ մեր պատերազմի ընթացքում առաջին հակահարձակումը տեղի է ունեցել Սամվելի հրամանատարությամբ՝ Չլդրանից մինչեւ Դրմբոն: Սամվելի կյանքը անբողջությամբ սխրանք է: Յուրաքանչյուր զինվորի համար Սամվելի խոսքը սրտաբուխ օրենք է: Եթե Սամվելն ասի գնում ենք մահվան, ուրեմն գնում ենք: Իսկ Սամվելի կոչը գիտակցված մահվան՝ հայրենիքը փրկելու եւ ազատագրելու վճռականություն է: ԼՂՀ Պաշտպանության բանակը վառվում աստղեր շատ է տվել, այդ պայծառ լուսատուներից մեկն էլ Սամվել Կարապետյանն է, ինչպես մտերմորեն եւ հպարտությամբ ասում ենք բոլորս՝ Մեր Սամոն»:

* * *

Այդ օրը Սամվելը եւ հուզված էր, եւ վճռականության հրով բորբոքված: Բանն այն էր, որ Կուբաթլու տանող ճանապարհի վրա գտնվող բարձունքից ազերիները անընդհատ կրակում էին հայ ազատամարտիկների խմբավորումների վրա: Դրանից ելնելով գլխավոր հրամանատարությունը առաջադրանք էր տվել ԿՊՇ-ին գրավել այդ բարձունքը: Սամվելն ուրախացել էր ու հասկանալի է, տարերքի մեջ էր: Նա կազմակերպեց 60 հոգուց բաղկացած մի կուռ զորախումբ, անվրեպ հարվածով ու թափով իրականացրեց բարձունքի գրավումը: Հադրութի գնդի համար ճանա-

Կարի բացվեց դեպի Կուբաթլու: Այնուհետև 50 հոգուց կազմված գորախմբով մերոնք գրավեցին Ձերբայիլի մոտքերում գտնվող ստրատեգիական նշանակություն ունեցող 2 բարձունք: Ազերի բնակչությունը բռնել էր փախուստի ճանապարհը: Այնուհետև այդ ռազմագործողություններին մասնակցող յուրաքանչյուր զնդից առանձնացվում է 100-ական զինվոր՝ Կուբաթլուն գրավելու համար:

Պատմում է Սամվելը.

«Այդ ռազմագործողությանը մասնակցում էին նաև Հադրութի եւ Մարտունու զնդերի զինվորները: Մենք գործում էինք նրանց արանքում՝ Դադթումաս գյուղի ուղղությամբ: Այստեղ տեղի ունեցավ մի հետաքրքիր դեպք: Մեր տղաները, երբ մտան ազերական այդ գյուղը, բնակիչները չգիտեին, որ զինվորները հայեր են: Գյուղում մնացել էր միայն խաղաղ բնակչությունը, թուրք զինվորները նահանջել էին: Մեր տղաները կապով ինձ հայտնում են, որ 6 երեխա կա այդ գյուղում, ինչպես՝ ս վարվել նրանց հետ: Ես հանձնարարեցի՝ չդիպչել երեխաներին: Այնուհետև, երբ նրանց բերեցին ինձ մոտ, ես առաջարկեցի մաքուր շորեր հագցնել նրանց ու բաց թողնել: Այդպես էլ կատարվեց: Այդ պահին արդեն մարտական գործողությունները կարծես դադարել էին: Բայց հանկարծ օդում հայտնվեցին թշնամական 3 ռազմական ուղղաթիռ, որոնք փորձում էին աշխատել մեզ վրա: Մենք երկու հատ «ԲՄՇ-2» կանգնեցրինք այնպես, որ կարողանանք մեզ պաշտպանել օդային հարձակումից: Այդպես էլ եղավ: Ուղղաթիռներին չհաջողվեց մոտենալ մեզ: Բայց ցավոք, թշնամին ուղղաթիռներից խփեց Հադրութի գնդին պատկանող 2 հատ «S-72» տանկ»:

* * *

Սամվելի համար ամեն մի ռազմագործողության հաջող ավարատ մեծ պարգև էր: Սակայն թշնամին մեծ կորուստներ կրելով, ավելի կատաղի էր դարձել եւ ձգտում էր ուժեղացնել դիմադրությունը: Այդպես էր եւ այդ օրը, երբ մեր հետախույզները գնացին հետախուզելու Կուբաթլու քաղաքի շրջակայքն ու վիճակը: Սամվելը եւ իր զինակիցները տեղեկացան, որ տեղի բնակչությունը, զինտեխնիկական եւ ազերի զինվորականությունը լքում են քաղաքը: Սամվելն առանց հապաղելու կապվում է գլխավոր հրամանատար-

րի հետ եւ զեկուցում, որ գունդը կատարել է առաջադրանքը, իսկ Կուբաթլուն կարելի է գրավել եւ առանց ԿՊՇ-ի զինվորների:

Թույլտվություն ստանալով, Սամվելը իր գունդը նախապատրաստում է Ջեբրայիլ քաղաքի օպերացիան իրականացնելու: Հայ ազատամարտիկների հուժկու հարվածների տակ Ջեբրայիլի բնակչությունը եւս հեռանում է: Հորադիզ տանող մայրուղին մոտ երկու կիլոմետրի վրա էր: Հեռվից երեւում էր, թե ինչպես էր փախչում թշնամին:

Պատմում է Սամվելը.

«Մենք կանգ ենք առել այդտեղ: Մեզ պետք է փոխարինեին Հադրուքի զինվորները: Այդտեղ մնում ենք մոտ 10 օր: Խնդիր էր դրված ռազմաճակատի այդ հատվածում հավասարեցնել մարտական գիծը եւ դուրս գալ: Դա Կույջակ բնակավայրի ուղղությամբ էր: Պետք է նշեն, որ ցավոք, մենք այստեղ 12 զոհ տվինք՝ հիմնականում հրետակոծությունից: Այդտեղ զոհվում են նաեւ 2-րդ գումարտակի հրամանատարի տեղակալը՝ Վարդանը եւ 3-րդ գումարտակի հրամանատարի տեղակալ Բենոն: Վիրավոր հանելու պահին էր դա, երբ թշնամու նետած արկը ուղիղ ընկավ վիրավորներին փրկող մեր տղաների արանքում: Լավ տղաներ զոհվեցին, ափսոսում են, շատ են ափսոսում»:

* * *

Ռազմաճակատը ձգվել էր Աղդամ-Մարտակերտ մայրուղու երկարությամբ: Մարտական գործողությունները առանձնապես ծավալվել էին Բոյահմեդլի գյուղի ուղղությամբ, որին մոտ է Թարթառից եկող ջրանցքը: Ջեբրայիլից այդտեղ էր տեղափոխվել նաեւ Սամվելի գունդը: Փորձառու գունդը շարունակում էր խիզախության օրինակներ ցույց տալ: Մարտերի միջոցով նրան հաջողվում է մոտենալ Գյուլուջա բնակավայրին: Գյուղը համարյա գրավված էր, երբ կենտրոնից հրաման ստացվեց տեղափոխվել հարավային ռազմաճակատ, քանի որ այնտեղ՝ Ֆիզուլու ուղղությամբ հակառակորդի հարձակման՝ պատճառով դրությունը լարվել էր: Թշնամին հետ էր վերցրել Հորադիզ կայարանը եւ շարժվում էր առաջ: Սամվելը դիրքերը հանձնում է Շուշվա գնդին եւ իր զինվորների հետ գիշերը ճանապարհվում դեպի հարավային ռազմաճակատ:

Դա այն օրերն էին, երբ հայ ազատամարտիկները չէին ուզում

Ետ տալ ոչ մի թիզ հող, թուրք-ագերիներն էլ ամեն գնով ուզում էին գրավել գոնե մի քիչ տարածք: Թուրք հրամանատարությունը ամենավերջին ռեզերվը նետել էր Ֆիզուլու ուղղության վրա: Հարավային սահմանի զինվորների համար փորձության շրջան էր: Քենդ-Հորադիզի ուղղությամբ մեր զորամասերից մեկը չէր դիմացել, ձեռքից տվել էր այն: Բնակավայրը ետ վերցնել էր պետք: Նահանջել՝ նշանակում էր տալ Հադրութը: Արցախի ազատամարտիկները այդ լավ էին գիտակցում, ուստի իրենց զինվորական պարտքն էին համարում հասկացնել թշնամուն, որ հետ կանգնի իր նախկին մտադրություններից: Պետք է նշել, որ դրան նախորդել էր Արցախի համար ծանր փորձություն համարվող «Կուլցո» օպերացիան, որ ձեռնարկել էր թուրք օմօն-խորհրդային բանակ այլանսի շնորհիվ: Ի հակակշիռ «Կուլցոի», Արցախի զինվորական ուժերը մշակել էին պատասխան գործողությունը: Հադրութի համար այն պայմանականորեն կոչվել էր «Խանձածորի մարտ»: Այդտեղ տաս ջոկատ միավորվել էին՝ պաշտպանության նախարարի հրամանով: Խանձածորից հետո անհրաժեշտություն էր դարձել Արցախը մաքրել թշնամուց:

Առավոտյան ժամը 4-ն էր: Արաքսի կողմից ճառագող այգը աչքը նոր էր բացում: Մեր ավանդական հողը Ֆիզուլու մատույցներում ասես խոսում էր Սամվելի եւ նրա զինվորների հետ: Վարանդա (այժմ՝ Քյոնդալան) գետի ափին հողի տակ թուրք-սելջուկների կողմից թաղված հայոց եկեղեցին քիչ էր մնում ճչա. «Եկե՛ք, փրկեցե՛ք ինձ, զավակներս, աղոթում եմ ձեր հաղթանակի համար»: Ֆիզուլու ուղղությամբ տեղակայված դիրքերը ընդունում են Սամվելի զինվորները, որտեղից պետք է սկսեին հակահարձակումը, որ նախատեսվում էր նույն օրը: Սակայն հարձակման էին պատրաստվել նաեւ ագերիները: Սկսվում է առճակատումը: Սամվելի զինվորները մոտ երկու ժամ պաշտպանական մարտեր են մղում: Սամվելը տեղեկանալով մարտական ամբողջական իրադրություններին, հրամայում է անցնել հակահարձակման, որի շնորհիվ արագ թափով մերոնք 5 կմ առաջ են շարժվում: Սակայն գնդի մի քանի զինվորներ վիրավորվում են, այդ թվում նաեւ հրամկազմի անդամներ: Այդ պատճառով գործողությունը կանգնեցվում է: Երկու օր պաշտպանական դիրքեր բռնելուց հետո գունդը վերսկսում է հարձակումը Աշաղի Աբդուրահմանլու եւ Յուխարի Սեյիդահմեդլու գյուղերի

ուղղությամբ: Շուտով հայ զինվորները գրավում են այդ գյուղերը:

Սամվելը հանգիստ շունչ քաշելով մոտենում է գնդի մարտիկներին եւ ասում. «Ապրե՛ք, տղաներ, մի քիչ հանգստանանք, սպասենք նոր կարգադրության»:

* * *

Առավոտը նոր էր բացվել: Սամվելը սովորականի պես ստուգում էր գնդի իրավիճակը, բարի լույս մաղթում ընկերներին, սպասում նոր հանձնարարության: Քիչ անց Կենտրոնից ստացած հրամանի հիման վրա նա դիմում է գնդի զինվորներին.

«Տղաներ, պետք է դիրքերը հանձնենք հադրուքիներին եւ տեղափոխվենք Մարտակերտի ռազմաճակատ: Թշնամին նորից հարձակվել է հեռուստաաշտարակի բարձունքի վրա, գրավել մի մասը: Դրությունն այնտեղ բարդացել է»:

Գունդը սկսում է շարժվել տեղից: Նույն օրը նա հասնում է Մարտակերտի ռազմաճակատ: Իրականում դրությունը այստեղ ծայրահեղ բարդացել էր: Բարձունքի վրա դիրքավորվելով, հայ զինվորները հսկում էին շրջակայքը: Շուտով հակառակորդի տանկերը սկսում են բարձրանալ դեպի գնդի զինվորների խրամատները: Սկսվում է կրակե հեղեղը: Մարտը տեւում է 3 ժամ: Մեր զինվորների կամքի ուժով թշնամին հետ է շարտվում: Սամվելը տալիս է հակահարձակման հրամանը: Առաջ շարժվելով, մերոնք գրավում են ստրատեգիական կարեւոր նշանակություն ունեցող «Եզան գոմեր» կոչվող բարձունքը: Սամվելի գնդի ձախ թելից գործում էր 5-րդ ստորաբաժանումը: Այդ ռազմագործողությունների ընթացքում տարած հաղթանակների եւ կորուստների մասին է պատմում Սամվելը.

«Մեր տղաները ուղղակի հրաշքներ էին գործում այդտեղ: Սակայն պետք է նշել, որ այդ ընթացքում մենք տվեցինք մոտ 80 զոհ եւ 200 վիրավոր: Դա բացատրվում է նրանով, որ բարձունքներին մատել էին թուրքերը, իսկ հարթավայրում մենք: Եվ զոհերը հիմնականում տվել ենք թշնամու հրետակոծության պատճառով»:

Շուրջ 10 օր շարունակվեցին ահեղ մարտերը շրջակա բարձունքները թշնամուց հետ վերցնելու համար: Մարտական գործողությունների ընթացքում ռազմաճակատի այս հատվածում խփվում է հակառակորդի 12 միավոր տեխնիկա, ոչնչացվում է ահա-

Վզին կենդանի ուժ: Ջինվորների սերն ու հավատը Սամվելի հանդեպ, գնալով ջերմանում էր:

Խոսքը տանք ԿՊՇ-ի հրամանատարի տեղակալ, կապիտան Ռաֆիկ Շաբոյի թավադյանին:

«Ամեն անգամ, երբ խոսք է բացվում ԿՊՇ-ի հրամանատար, զնդապետ Սամվել Կարապետյանի մասին, ես հպարտությամբ եմ լցվում, որովհետեւ նա ինձ համար եւ օրինակելի հրամանատար է, եւ հրաշալի ընկեր: Սամվելի հետ ես ծանոթացել եմ 1992-ի հունիսի սկզբին: Լավ հիշում եմ... Դաժան մարտեր էին ընթանում Մարտակերտի շրջանի Չլդրան-Դրմբոն ուղղությամբ: Այն ժամանակ ես ծառայում էի կապի վաշտում: Սամվելը զեկավարում էր 4-րդ վաշտը: Երբ ԼՂ Պաշտպանության բանակը ստեղծվեց, Սամվելին նշանակեցին զնդի հրամանատար: Նա ինձ հրավիրեց աշխատելու որպես կապի ծառայության պետ: Այն օրվանից էլ մեր ճանապարհն անցնում ենք միասին:

Հայտնի է բոլորիդ, որ Արցախում չկա մի շրջան, որտեղ եղած չլինի մեր գունդը, մասնակցած չլինի ճակատամարտին: Սամվել Ջամիլովիչի հրամանատարությամբ մեր գունդը զրել է իր կենսագրության էջերը Արաքսից մինչեւ Օմար: Այժմ, երբ հարաբերական խաղաղ օրեր են, մեկ-մեկ ձգտում են վերհիշել այն ծանր պահերն ու դաժան ճակատամարտերը, որ տեսել, ապրել են մեր զնդի զինվորները՝ սիրելի հրամանատարի ուղեկցությամբ: Ինձ վրա անջնջելի հետք է թողել Մարտակերտի շրջանում «Պուշկեն յալ» բարձունքի գրավումը: Դա շմեցուցիչ երեւութ էր, որովհետեւ Սամվելի պլանով այնպիսի հրետակոծություն կազմակերպվեց, որ մինչեւ այդ ոչ ոք չէր էլ մտածել նման միջոցառման մասին: Հայտնի է, որ «Պուշկեն յալին» երկար ժամանակ իշխում էին թուրք-ազերիները, չէր հաջողվում այդտեղից քշել նրանց: Եվ երբ եկավ վճռական խոսք ասելու պահը, Սամվելը գործադրեց հրամանատարական իր հմտությունն ու հնարավորությունները: Նախ ճիշտ կատարվեց ժամանակի ընտրությունը՝ ո՞ր ժամին սկսել հարձակումը: Դա տեղի ունեցավ օրվա վերջում՝ մութն իջնելուն պես: Մեզ հաջողվեց բարձրանալ «Պուշկեն յալի» գագաթը՝ բարձունքի աջ թևի վրա: Իրիկնաժամին թեժացել էին մարտերը: Ու երբ թուրքերը իմացան, որ բարձունքի աջ թևը մեր ոտքերի տակ է, գիշերը թողին ու հեռացան: Այդ ճակատամարտի գրավականը մեզ համար այն էր, որ

Մնախ գրավել էինք Փափրավենո գյուղը, նոր արշավել դեպի «Պուշկեն յալ»: Բայց, ավա՛ղ, տվինք նաեւ երկու զոհ: Սամվելը շատ էր ափսոսում:

Անմոռանալի է նաեւ Քելբաջարի շրջանի հետ կապված հետեւյալ դեպքը: 1994-ի փետրվարն էր: Մենք բազավորված էինք Մոխրաթաղում՝ հեռուստաաշտարակի մոտերքում, հսկում էինք նաեւ «Եզան գոմեր» կոչվող տեղամասը: Ահա, այդ ժամանակ թուրք-ազերիները ռեւանշ վերցնելու հույսով Օմարից իջել էին ներքեւ եւ շարժվում էին առաջ: Գլխավոր հրամանատարության հրամանով Ղարաբաղի տարբեր գնդերից ընտիր ուժեր էին տեղափոխվել Քելբաջար, որոնք կասեցրել էին թուրքերի առաջխաղացումը: Բայց պետք է գրավվեր Օմարի կարեւոր բարձունքը: Այդ ժամանակ գլխավոր հրամանատարությունից Սամվելը հրաման ստացավ՝ ստեղծել 50 հոգուց բաղկացած ընտիր խումբ եւ խփել այդ բարձունքին, որպեսզի կարողանանք առաջ գնալ: Չմեռ էր, ծյուն, սարեր... ինչպե՞ս նկարագրեմ... Պահը խիստ էր: Այդ գլխավոր բարձունքն էլ լեռնաշխարհի կենտրոնում էր գտնվում: Սամվելը ուժերը հմտորեն տեղաբաշխեց, 120 միլիմետրանոց ակամանետերի օգնությամբ մենք սկսեցինք խփել բարձունքում դիրքավորված թշնամուն: Նշանառությունը ուղղում էինք 1 կամ 2 մետրի տարբերությամբ: Արդյունքը ուրախալի էր: Մենք գրավեցինք բարձունքը, եւ թուրքերը սկսեցին նահանջել Օմարի լեռնանցքից: Նման դեպքում Սամվելը ավելի շատ գոհունակություն է հայտնում իր ընկերներից, զինվորներից: Նա եսակենտրոն չէ, չի սիրում ինքնագովասանք, հիանում էր, երբ մեր գումարտակները, ինչպես նաեւ հետախույզների վաշտը կատարում էին առաջադրանքները: Իսկ այդ հաջողություններին հասնում էինք այն բանի շնորհիվ, որ միշտ, մարտից առաջ Սամվելը գործադրում էր իր բոլոր հնարավորությունները, հմտորեն, կոնկրետ պլանավորում առաջադրանքները եւ տալիս հանձնարարությունները: Մարտից հետո նա զինակիցների հետ քննարկում, հետեւություններ էր անում, շտկում եղած սխալները: Ամեն մի մարտից հետո Սամվելը աճում էր ինքն իրենից, նա մեր աչքերի առաջ արագությամբ ռազմական արվեստին տիրապետելու նոր որակներ էր ձեռք բերում: Դրանով եւս հարգանք էր առաջացնում իր նկատմամբ, չէ՞ որ զինվորը պաշտում է հմուտ ու խիզախ հրամանատարին, Սամվելը զգայուն ընկեր է: Նա մեծ

Վիշտ էր ապրում գոհված գինվորի համար: Մինչեւ հիմա չենք մոռանում նահատակված Յենրիխին, Ալեքին, Վիգենին... Չէ՛, հնարավոր չէ մոռանալ:

Սամվելի բնավորությանը խորթ է հաջողության դափնիների վրա քնելը: Այս օրերին մեզ մոտ լուրջ ուշադրություն է դարձվում գինվորների մարտական պատրաստության բարձրացմանը: Ջրահատեխնիկան ենթարկվում է միայն իրեն խորապես ու ճշգրիտ տիրապետող մասնագետ-գինվորին: Սամվելը հաճախակի է հիշեցնում այդ ճշմարտությունը:

Ձինվորի սխալը չի ներում ոչ տանկը, ոչ հրանոթը, ոչ ականը եւ ոչ մի զենք: Ձենքը կատակ չի սիրում: Դա մեր գնդի դելիզն է: Սամվելը շարքային գինվորից հասել է գնդի հրամանատարի աստիճանի: Դա տեղի է ունեցել իր համառ կամքի, խիզախության, անձնուրացության, հայրենասիրության շնորհիվ: Այդ բարենասնությունների շնորհիվ է, որ նրան հարգում ենք ոչ միայն մենք՝ իր անմիջական զինակիցները, այլեւ, իրենից բարձր աստիճան ունեցող բոլոր զորավարները»:

* * *

Լուրը կայծակի արագությամբ հասավ նաեւ Սամվելին, որ թշնամին ռազմական նոր գործողություններ է սկսել Օմարի ուղղությամբ: Սամվելին իր մոտ է կանչում գլխավոր հրամանատարը եւ հանձնարարում, որ անհրաժեշտ է 70 գինվոր հատկացնել այդ ծավալվող օպերացիայի համար: Ձմեռը դաժան էր: Հունվարը նոր էր հրաժեշտ տվել, սկսվել էր ձյունառատ փետրվարը: Լեռներին իջել էր համատարած ճեփ-ճերմակ սավանը: Գունդը պետք է գործեր լեռնային պայմաններում: Սամվելը առանձնացնում է 70 փորձառու գինվորների, տեխնիկա եւ տեղափոխվում Օմարի շրջան: Խնդիր էր դրված վերցնել 2031 բարձունքը: Գնդի քաջերը պատրաստվել էին գործողության, սակայն եղանակը հանկարծակի փոխվում է, դառնում անբարենպաստ եւ խանգարում նրանց:

Սամվելի գնդի ծախս թելում գործում էր Ասկերանի գնդի 35-րդ գումարտակը՝ Արշավիր Ղարամյանի (Արշո) հրամանատարությամբ, նրանից ծախս՝ Ժիրոյի ջոկատն էր: Սամվելի գունդը պետք է վերցներ բարձունքը, որ նրանք կարողանային առաջ շարժվել: Սամվելը գնդի տղաներին հասկացրել էր, որ այդ բարձունքի գրավումը կարելու էր հաջողության գրավականը կհանդիսանա: Հակա-

Մշակ դեպքում մեր բոլոր ձեռքբերումները հողին կհավասարվեն: Վճռվել էր ինչ գնով էլ լինի, վերցնել բարձունքը: Եվ նրանք կարողացան կատարել կարելուր այդ խնդիրը: Շուտով Օմարի բարձունքը Սամվելի եւ նրա խիզախ զինվորների ոտքերի տակ էր:

Ազերիները չդիմանալով հայ ազատամարտիկների հարվածներին, փախուստի դիմեցին: Կատարելով իրենց առջեւ դրված կարելուր ու դժվարին խնդիրը, Սամվելը իր գորախմբով վերադառնում է Մարտակերտի իրենց դիրքերը: Մի քանի օր հետո այդ դիրքերը հանձնում են Մարտակերտի գնդին եւ գալիս Ստեփանակերտ՝ նախապատրաստվելու Միրբաշիրի ռազմագործողություններին:

Իր խոսքն է ասում ԿՊՇ-ի առաջին գումարտակի հրամանատար Ռաֆայել Վերդիի Գալստյանը.

«Մոտոհրաձգային մեր գումարտակը մասնակցել է մի շարք ճակատամարտերի եւ միշտ մեզ ուղեկցել է Սամվել Կարապետյանի օրհնանքը: Քիչ է ասել Սամվելը մեր հրամանատարն է, նա կռվի թեժ պահերին ոգի էր: Նույնիսկ կապով նրա ձայնը լսելիս, թվում էր, թե նա մեզ մոտ էր, մեր շարքերում: Մեր հրամանատարը մարտական է, ոգեւորող, ազգասեր: Ծիշտ է, նա բարձրագույն ռազմական կրթություն չունի, բայց Ադրբեջանի կողմից մեզ պարտադրած պատերազմը նրա համար եղավ զինվորական կարելուր դպրոց:

Սամվել Ջամիլովիչը նրբազգաց անձնավորություն է: Օրինակ, երբ որեւէ առաջադրանքի իրականացումը չէր ստացվում, շատ հուզվում էր, քննարկում, որոնում պատճառը, զննում քարտեզը, ստուգում տեղանքը: Նա հետագա ռազմագործողություններում օգնում էր մեզ: Լավն այն է, որ Սամվել Ջամիլովիչը իր ճանապարհը սկսել է շարքային զինվորի պարտականությունից, հասել գնդապետի, հրամանատարի աստիճանի: Նա գիտե, թե ինչ է կռիվը, նա միշտ պատվով կատարել է իր առջեւ դրված բոլոր հանձնարարությունները:

Հիմա էլ, երբ խաղաղություն է, նա լուրջ ուշադրություն է դարձնում մեզ, պահանջում, որ լավ աշխատենք, չթուլացնենք մեր մարտական ոգին: Նրա հոգսը բանակն է, զինվորը, Արցախի ճակատագիրը:

Ես որպես գումարտակի հրամանատար, միշտ շփվել եմ Սամվել Ջամիլովիչի հետ, պահ չի եղել, որ իրար չհասկանանք: Խորին հարգանք ունեմ նրա նկատմամբ, իսկ հարգանքը մեծ բան է, հարգանքից է սկսվում եւ կարգապահությունը, եւ հաղթանակը:

Որպես գումարտակի հրամանատար, ես միշտ ձգտել եմ անթերի կատարել Սամվել Ջամիլովիչի հանձնարարությունները: Տեսել եմ, թե ինչպես է նա առաջինը հագնում բաճկոնը, վերցնում զենքը եւ նետվում մարտի, դառնալով օրինակ բոլորի համար: Տեսել եմ, թե ինչպես էր նա հանգցնում վառվող տանկը, կամ ինչպես էր հուզվում ռազմագործողության կազմակերպման ժամանակ: Ինձ համար իմ հրամանատարը օրինակ է, եւ պատրաստ եմ նրա հետ շարունակելու իմ զինվորական ճանապարհը, նրա պես եւ նրա հետ ծառայելու մեր հայրենիքին ու ժողովրդին»:

* * *

Սկսվել էր Միրբաշիրի ռազմագործողությունը: Սամվելի գնդին հատկացնում են Գյուլիջայի ուղղությունը: Այդ բնակավայրի մոտակայքում դիրքավորվում է գունդը, նախապատրաստվելով հարձակման: Աջ թեւում գործում էր 3-րդ գումարտակը, ձախ թեւում՝ 1-ինը, իսկ կենտրոնում՝ 2-րդը: Ստացվում է այնպես, որ 1-ին եւ 3-րդ գումարտակները ընկնում են թշնամու կրակի տակ: Այդտեղ, իրոք, մերոնք կորուստներ են ունենում: Բայց եւ այնպես, նրանք պաշտպանել, լռեցրել են ագերիների հրետանուն: Այդ մարտերի ժամանակ ծանր վիրավորվում է գնդի հետախուզության պետը՝ Անդրանիկ Սարգսյանը (Անդոն): Գունդը շարունակում է իր առաջխաղացումը, հասնում է Նամիրլի, վերցնում այդ բնակավայրը: Այնուհետեւ մարտեր են սկսվում Սեյտուլան-Կարմիրավան հատվածում: Վերջին ռազմագործողությունը լինում է Սեյտուլանի համար: Այն տեղի է ունենում հանկարծակի եւ տեսնում է ընդամենը 10 րոպե: Բոլոր դժվարին պահերին զինվորը հարգում է Սամվելին: Ահա թե ինչ է ասում ԿՊՇ-ի օպերատիվ բաժնի պետ, մայոր Անդրեյ Մանթաշի Սարուխանյանը.

«Չնարավոր չէ չհարգել Սամվել Ջամիլովիչին, մի մարդու, որ պատանեկան տարիքից իր անձը նվիրել է հայրենի երկրամասի ազատության եւ անկախության վեհ գործին, փորձությունների մեջ կոփվել, դժվարությունները հաղթահարելով՝ իմաստացել, շարքա-

յին զինվորից հասել զնդապետի աստիճանի, դարձել զորապետ: Հայրենիքը սիրող մարդը չի կարող չպաշտել նման զինվորյալին: Ով աշխատում է Սամվելի հետ, ծանոթանում է կենսագրությանը, պաշտում է նրան:

Սամվել Չամիլովիչին բնութագրող շատ հուշեր ունեն: Կցանկանայի մի երկուսը բերել այստեղ: Արցախյան պատերազմի ամենադժվարամարս տեղամասերից մեկը «Պուշկեն յալը» էր: Թուրքերը երկար ժամանակ չէին ուզում թողնել այդ կարեւոր բարձունքը: Եվ երբ Սամվել Չամիլովիչը գործադրելով իր հմտությունները, զինվորներին հասցրեց բարձունքի աջ թեւը, թուրքերի գլխին ջուր մաղվեց: Ազերիները մի գիշերվա մեջ փախան՝ ճանապարհին թողնելով պարեն, զինամթերք: «Պուշկեն յալը» գրավելուց անմիջապես հետո, այսինքն առավոտյան, մոտեցա մի իրի, տեսնեմ մի մեծ թերմուս է, մոտը մի պարկ հաց, իսկ քիչ այն կողմ 5 արկղ փամփուշտ: Թերմուսում եփած թարմ կարտոֆիլ էր ու միս: Ընկերներով ճաշակեցինք այդ ամենը, բացեցինք արկղերը, լավ ավար էր: Ես կատակով դիմեցի ընկերներիս. «Տղերք, բա ասում եք՝ թուրքերը վատն են: Տեսնո՞ւմ եք, նրանք մեզ մատուցում են եւ հաց, եւ կերակուր, եւ փամփուշտ: Իրենք էլ մեր առջեւից նապաստակի նման այնպես են փախչում, որ, տղա ես հասիր»:

Բոլորը լիաթոք ծիծաղում են... Այդ պահին մենք կրկին հիանում ենք բարձունքի գրավման այն պլանով, որ կազմել էր Սամվել Չամիլովիչը:

Այդ օրը բավականին սանրում ենք շրջակայքը: Մի տեղանքում նկատում ենք, որ ազերիները մազապուրծ փախել են, քնած թողնելով մի չեչեն զինվորի, որ եկել էր օգնելու թուրք «եղբայրներին»: Մենք բլինդաժուռ արթնացրինք նրան, նա վեր կացավ եւ փորձեց դիմել փախուստի: Քիչ անց ցանկացավ նոնակ նետել դեպի մեզ, մեր տղաները անհապաղ հաշիվը մաքրեցին:

Մենք շարունակեցինք առաջանալ դեպի Մարտակերտ:

Ինձ միշտ հմայել է հրամանատարի հմտությունը՝ ուժերը տեղաբաշխելու ուղղությամբ: Նրա ձեռնարկած ռազմագործողությունները հաջողությամբ էին պսակվում ամենուրեք եւ նա էլ ավելի էր բարձրանում մեր աչքին: Երջանիկ է մեր Արցախը, որ Սամվելի նման զավակներ ունի»:

Ս. Կարապետյանին երբ հարցնում են, թե որ ճակատամարտին է մասնակցել իր գունդը, նա պատասխանում է. «Իսկ ո՞ր մարտերին չի մասնակցել»: Համեստ ու հակիրճ պատասխանում է, բայց երբ թերթում ես գնդի ռազմագործողությունների պատմության էջերը, համոզվում ես, որ արցախյան ոստահետքերն են, նրանց վերքերից հոսած արյան կաթիլները, զոհյալ ազատամարտիկների ճակատներից մայր հողին իջած քրտինքը, հույսերն ու ակնկալությունները:

Իր հրամանատարին բնութագրում է ԿՊՇ-ի 2-րդ գումարտակի հրամանատար, կապիտան Սերգո Լեւոնի Դադասյանը.

«Ես ճանաչում եմ Սամվել Ջամիլովիչին, երբ նա դեռեւս 4-րդ վաշտի երկրորդ դասակի հրամանատարն էր: Նրա մոտ սկսել են ծառայել 1991թ. նոյեմբերից: Լինելով դասակի հրամանատար, նա լրիվ դրսևորել էր իրեն որպես հմուտ ռազմական գործիչ: Դեռ այն ժամանակ հպարտանում էինք նրանով, եւ շատերն էին ուզում ծառայել նրա մոտ: Չի եղել մի դեպք, որ նա մեզ հետ միասին չմասնակցի մարտերին: Առանց նրան ոչ մի ռազմագործողություն չէինք պատկերացնում: Փաստորեն նա ղեկավարում էր նաեւ 4-րդ վաշտը: Աչքի ընկնելով ռազմագործողություններում, շուտով նրան վստահվեց Մարտակերտի ուղղության հրամանատարությունը: Լավ ենք հիշում բոլորս, թե ինչպես թուրք-ազերիները եկել-հասել էին Կիչան, նույնիսկ մոտեցել Առաջածորին: Սամվելի ղեկավարությամբ մերոնք սկսեցին հետ շարտել նրանց: Ես միշտ Սամվել Ջալալովիչի հետ էի: Երբ նրան կանչում էին որեւէ տեղից, մենք կարոտում էինք: Վերադառնալուն պես ոգևորվում էինք, նոր ուժ առնում:

Սամվել Կարապետյանը առյուծասիրտ է: Նա վախի զգացում չունեւր մարտադաշտում, բայց գործում էր զգույշ եւ հմտորեն: Օրինակ, մարտեր էին ընթանում Նախիջեւանիկի մոտ: Ազերիները բարձունքի խրամատից կրակում էին անդադար: Ստացվեց այնպես, որ ազերիները մեր ճնշմամբ հեռացել էին, իսկ նրանցից մեկը չէր թողնում խրամատը: Սամվել Ջամիլովիչը մեզ առաջարկեց կրակով զբաղեցնել նրան, իսկ ինքը շրջանցեց եւ անսպասելի կանգնեց թշնամու գլխավերեւ եւ լուծեց հարցը:

Սամվել Ջամիլովիչը տակտիկական լուծումները կատարում էր ռազմաճակատային պայմաններից եւ ընթացքից ելնելով: Դա

Երբ Կողմնորոշվելու շնորհիվ էր տեղի ունենում: Լինում էր նաեւ, երբ նա համարձակորեն գնում էր դեպի թշնամու տանկը եւ կանգնեցնում: Սամվել Ջամիլովիչը նուրբ հոգեբան է: Լավ հիշում են, թե ինչպէս Դրմբունում օգտվելով ռացիայից, իրար խառնեց թուրքերի բրիգադան: Նա միշտ լսում էր թշնամու հաղորդումները միմյանց: Եվ դա իր դրական արդյունքն էր տալիս:

Մեր հրամանատարի հմտությունն ու ճկունությունը հաճախ են հիացնում, են զարմացնում էր մեզ: Լավ հիշում են հետեւյալ դեպքերը.

Սարսանգում էինք: Թշնամին մեր դիմաց դիրք էր գրավել եւ չէր հեռանում: Սամվել Ջամիլովիչը առաջարկեց հետախույզների վաշտին՝ զգուշորեն թափանցել թշնամու թիկունքը եւ խփել այնտեղից: Այդպէս էլ արինք: Արդյունքը հիանալի էր: Մի անգամ էլ Չլդրանում էինք: Գետի երկու ափերին նստած էր թշնամին: Սամվել Ջամիլովիչը առաջարկում է 3 զինվորի հագցնել քիմպաշտպանական զգեստ, որպէսզի նրանք գետն ի վեր, ջրի միջով գնան եւ անցնեն թշնամու թիկունքը: Նման դեպքում նրանց ոտնահետքերը չեն երեւա: Այդպէս էլ արեցինք: Եթե այդ միջոցառումը չիրականացվեր, Չլդրանի ռազմագործողությունը չէր հաջողվի: Այդ երեք քաջերն էին՝ Վիգենը, Յենոն եւ Լավրենտը:

Սամվել Ջամիլովիչը վիրավորվել է երեք անգամ: Նա միշտ վերադառնում էր լրիվ չկազդուրված: Նրա համար բուժման միջոցը մարտերին մասնակցելն էր:

Ես անչափ ուրախ եմ, որ ծառայել եւ ծառայում են Սամվել Կարապետյանի մոտ եւ կերպզեի, որ Արցախում նման հրամանատարներ շատ լինեն»:

* * *

Ձինվորի կյանքում անմոռանալի օրեր շատ են լինում: Սակայն Արցախի Պաշտպանության բանակի բոլոր զինվորների, նրանց հրամանատարների, ինչպէս նաեւ հանրապետության բոլոր քաղաքացիների համար ամենահանդիսավոր, անմոռանալի օրը 1995-ի մայիսի 9-ն էր, երբ նշվեց Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի 50-ամյակը եւ Շուշիի ազատագրման 3-րդ տարեդարձը: Իր հարազատ երկրի, իր մայր ժողովրդի այդ օրինական ապրումը ծփում էր նաեւ Ս. Կարապետյանի սրտում եւ դա հասկանալի է: Նա իր ընկերների հետ քայլում էր հպարտ, որովհետեւ մա-

Միսի 9-ը ժպտում էր որպես մեր ազգային անկախության անկոտրում կամքն ազդարարող խորհրդանիշ: Ղարաբաղի կյանքում առաջին անգամ կազմակերպվում էր զորահանդես՝ կրկնակի շուքով: Մեծ հայրենականին ղարաբաղցիների մասնակցությունը թվում էր լեզու առած խոսում էր ե՛լ անցած հերոսությունների, ե՛լ այսօրվա սխրանքի մասին: Յուրաքանչյուր զինվոր այդ օրը զգում էր, որ ինքը ժառանգորդն է այն արցախցի դուրացուհիների, որոնք 1941-1945 թթ. աշխարհի հակաֆաշիստական ուժերի հետ մեկտեղ երկրագունդը փրկեցին հիտլերյան դեղին ժանտախտից: Յուրաքանչյուր արցախցի զինվոր այդ օրը վերհիշում էր 1915թ. մեծ եղեռնը, երբ թուրք ենդիչերիները Վիլհելմ Երկրորդի թողտվությանը ու խրախուսանքով ավերեցին Արեւմտյան Հայաստանը, սրի քաշեցին մեկ ու կես միլիոն անմեղ հայերի: 1941թ. մեկ միլիոնանոց թուրքական բանակը կանգնած էր Խորհրդային Հայաստանի սահմանի մոտ եւ սպասում էր Ստալինգրադի անկումին, որպեսզի մտնի Հայաստան եւ նոր հաշվեհարդար տեսնի մեր շողովրդի հետ: Ահա թե ինչու հայ ժողովրդի խիզախ զավակները, այդ թվում եւ արցախցիները, անձնվիրաբար մասնակցեցին երկրորդ համաշխարհային պատերազմին՝ հանուն հայ ժողովրդի ապագայի: Եվ ահա Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում զորահանդեսին մասնակցում են ե՛լ Մեծ հայրենականի վետերանները, ե՛լ արցախյան պատերազմի զինվորյալները: Նրանցից յուրաքանչյուրը ազգային արժանապատվության խորին զգացումով հաշիվ էր տալիս իրեն եւ հպարտանում, թե ինչպես փոքրիկ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզից Հայրենական մեծ պատերազմին մասնակցեցին 45 հազարից ավելի հայեր: Ներկայումս ճշտվող տվյալներով այդ թիվը հասնում է 56 հազարի: Դա Ղարաբաղի այն ժամանակվա բնակչության թվի 1/3-ից ավելին էր կազմում: Համեմատությունները ցույց են տալիս, որ պատերազմի տարիներին Ադրբեջանում զորակոչվել է ընդամենը յուրաքանչյուր 19 ազերիներից 1-ը: Նոր տվյալների համաձայն մոտ 26 հազար ղարաբաղցիներ իրենց կյանքն են զոհել Ղարաբաղից հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող մարտադաշտերում: Դաժան փորձության տարիներին ուխտին ու դաշինքին հավատարիմ ղարաբաղցիները անհատույց նվիրվածություն են ցուցաբերել ռուս ժողովրդին: Ռազմաճակատներում կատարած սխրագործությունների համար

21 դարաբաղդիներ արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման, իսկ շուշեցի Ն. Ստեփանյանը Խորհրդային Միության կրկնակի հերոս է դարձել: 5 հոգի դարձել են «Փառքի շքանշանի» երեք աստիճանների ասպետ, 15 հազարից ավելին պարգևատրվել են տարբեր շքանշաններով ու մեդալներով: Արցախը տվել է Խորհրդային Միության 3 մարշալ, 1 նավատորմի ծովակալ, 30-ից ավելի զեներալ: Բնակչության թվի տոկոսային հարաբերությամբ այս ցուցանիշներով դարաբաղդիները բազմազգ Խորհրդային Միությունում գրավել են առաջին տեղերից մեկը:

Իսկ թիկունքում...

Պատերազմի տարիներին դարաբաղդիները երկրի պաշտպանության ֆոնդն են մտցրել 2.762.337 ռուբլի, 2 կգ 71գ ոսկի, 31 կգ 989գ արծաթ, տասնյակ տոննաներով սել ու գունավոր մետաղ: Տանկային շարասյունների ստեղծման ու մարտական ինքնաթիռների կառուցման ֆոնդ է մուծվել 1.631.214 ռուբլի եւ 5.961.905 ռուբլու արժողությամբ պետական պարտատոմսեր: Ղարաբաղի մայրերը հազարավոր ծանրոցներ են ուղարկել ռազմաճակատ:

Այդ պատերազմին մարզից մասնակցել են 72 արցախուհի:

Այսօրվա սխրագործությունը երեկվա շարունակությունն է: Այդ երեկվա հերոսների զավակներն են այսօր իրենց արյան գնով մարտնչում Արցախի անկախության եւ ազատության համար ու պատրաստ են մաքառելու մինչեւ մեր երազանքի վերջնական իրականացումը: Եվ ոչ միայն զորահանդեսի մասնակիցները, այլեւ ժողովրդի ներկայացուցիչները ջերմ զգացումներով են պարուրվում, երբ զորահանդեսը բացում եւ ՊԲ զխավոր հրամանատար, պաշտպանության նախարար, զեներալ-լեյտենանտ Ս. Բաբայանին զեկուցում է ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատարի առաջին տեղակալ, զեներալ-մայոր Սեյրան Օհանյանը: Եվ երբ նախարարը ընդունելով զեկույցը, զորահանդեսին մասնակցող ստորաբաժանումների անձնակազմին շնորհավորում է Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 50-ամյակի եւ Շուշիի ազատագրման 3-րդ տարելիցի առթիվ, հրապարակը շիկանում է մեկեն: Ջորահանդեսի ամեն մի մասնակից իրեն զգում է որպես Արցախի նորանկախ Հանրապետության անվտանգության երաշխիք, որպես մեր լեռնաշխարհի գոյատևման հույս ու հավատ: Վերածննդի հրապարակում Մեծ հայրենականի վետերան-

ների շարասյունից հետո քայլում են ԼԴՅ Պաշտպանության բանակի հետեւակային միավորումները իրենց հրամանատարների գլխավորությամբ: Նրանք բոլորն էլ պատվով են կատարել իրենց ռազմական առաջադրանքները, ռազմաճակատի բոլոր հատվածներում կրծքով վահան դարձել ադրբեջանական հրոսակախմբերի դեմ: Այնուհետեւ անցնում են Մարտակերտի շրջանի հյուսիս-արեւելյան հատվածը թշնամուց ազատագրելու ընթացքում աչքի ընկած կտրիճները: Ապա մեկը նյուսի ետեւից անցնում են մոտոհրածոյին գումարտակի զինվորները, հետախույզները, ուսումնական մոտոհրածոյին զորամասը, ԼԴՅ Պաշտպանության բանակի զրահատանկային տեխնիկան: Բոլորին է հայտնի, թե ինպես են արցախյան փառապանծ տանկիստները անհավատալի, աներեւակայելի սխրանքներ գործել ռազմի դաշտում:

«ԼՂ Յանրապետություն» թերթի թղթակից Ս. Մարգարյանի հարցադրմանը՝ «Առջեւում Շուշիի ազատագրման 5-րդ տարելիցն է, փորձեք վերհիշել այդ հրաշքը», Սամվել Կարապետյանը պատասխանեց.

«Մայիսի 7-ին ստացանք գրոհի հրամանը: Իմ դասակը 50 հոգուց էր բաղկացած, շատ ցանկացողներ կային, բայց ընտրեցինք ամենամարտունակներին, լավ գիտեինք, թե ուր ենք գնում: Վճռորոշ, ճակատագրական մարտ էր, եւ ոչ ոքի մտքով չէր անցնում, թե կարող է հանկարծ ձախողվենք: Գնում էինք մի անսովոր հրճվանքով. մեռնել համուն Շուշի՝ դա պատիվ էր բոլորիս համար:

Մեր վաշտը շարժվում էր կենտրոնական ճանապարհով, գնում էինք հեռուստաաշտարակի ուղղությամբ: «Յանգիստ» առաջ էինք շարժվում, երեսուն մետր էր մնացել հասնեինք հակառակորդին՝ արդեն հսկողության տակ էինք առել նրանց դիրքերը, իսկ ազերիները դա չէին ըմբռնել: Թուրքի՝ դեմ էինք կռվում՝ վերցրինք. ուրիշ ազգ լիներ՝ Շուշին, զուցե թե, անհնար լիներ վերցնել: Մեզ առաջ մղողը ոգին էր: Միայն մի տանկ ունեինք՝ քաղաքի մատույցներում խփվեց, ճիշտ է՝ ահագին գործ անելուց հետո: Եթե չխփվեր՝ հնարավոր էր նույն օրն էլ Շուշի մտնել: Անձնակազմի երկու տղաները՝ Շահենն ու Աշոտը, զոհվեցին, իսկ Գագիկը, երջանիկ պատահականությամբ, փրկվեց: Այնտեղ կարող էր զոհվել մեզնից յուրաքանչյուրը. այդ համոզմունքն էր նստած յուրաքանչյուրիս մեջ: Մեր վաշտից վեց հոգի զոհվեցին, նրանց թաղումին չկարողա-

Երանք մասնակցել՝ պիտի գնայինք մինչեւ վերջ:

Մայիսի 9-ի առավոտյան ժամը 6-ին մտանք Շուշի: Դա պատմական սխրանք էր: Այդ պահին միայն մի միտք էր ուղեղիս մեջ՝ Ստեփանակերտն այլեւս չի հրետակոծվի: Ամեն օր 10-15 զոհ էինք տալիս՝ խաղաղ, անմեղ մարդիկ, երեխաներ. բանակը փրկարար էր դարձել... Մտնում էինք շքամուտքերից, անգամ նկուղներից դիակներ հանում: Մեր ժողովրդի առաջին հաղթանակը հենց դա էր, որ կարողացավ այդ ժամը շրջանը հաղթահարել...

Հինգ տարին ինչպե՛ս անցավ: Մեկ-մեկ հետ եմ նայում մեր անցած ճանապարհին, 1991, 92, 93 թվականներն ինչպե՛ս հաղթահարեցինք, հասանք այս օրվան՝ եւ ի՛նչ գնով: Աղղամից՝ Ֆիզուլի, Ֆիզուլուց՝ Մարտակերտ, Օմար, Հադրութ... Գնում էինք՝ մտածելու ժամանակ չունենալով: Երբ տղաներին ասում էի՝ գնում ենք, երբեք չէին տրտնջում, դեռ ավելին՝ ասում էին՝ էլ ո՞վ, եթե ոչ մենք...

Աստված չամի, եթե վաղը վերսկսվեն մարտական գործողությունները, ծանրությունն էլի նույն տղաների ուսերին է ընկնելու. մենք չենք կարող հույսներս դնել միայն 18-19 տարեկան նորակոչիկի վրա: Հերոս ընկերներ են զոհվել մարտադաշտում՝ գաղափարի զինվորներ, պարտավոր ենք մինչեւ վերջ տանել գործը: Կռվող տղաներից մեկը չկա, որ ընկեր, եղբայր, հարազատ կորցրած չլինի, արյուն է թափվել այս հողի համար՝ մեր հարազատի արյունը: Եվ էլի կթափվի՝ եթե պահանջվի»:

* * *

Հնարավոր չէ մոռանալ այն պահը, երբ հրապարակ մտան գումարտակի, հետեւակի մարտական մեքենաները, որոնք ռազմաճակատի ամենադժվար հատվածներում մենամարտել են թշնամու զերազանցող զրահատեխնիկայի հետ, ոչնչացրել հակառակորդի տեխնիկական խմբավորումները, միաժամանակ պատճառելով կենդանի ուժի շոշափելի կորուստներ: Ձորահանդեսը եզրափակում են ԼՂՀ Պաշտպանության բանակի հակաօդային պաշտպանության ստորաբաժանումները, որոնք քանի՛-քանի՛ անգամ ոչնչացրել են հակառակորդի ռմբակոծիչներն ու ռազմական ուղղաթիռները:

Տեխնիկան թող լինի: Ձորահանդեսում ամենից գլխավորը Արցախը Արցախ պահող զինվորներն են, նրանց հրամանատարները, որոնց շարքում իր մեծ ավանդն է բերել նաեւ Ս. Կարապետյանը:

Եվ նա զորահանդեսում քայլում է ճակատը բաց, հրամանատարի եւ ընկերոջ առինքնող զգացումով:

Սփյուռքում եւս գիտեն Սամվելին: Ս. Կարապետյանը աշխարհասփյուռ հայ ժողովրդի հայրենանվեր ոյուցագուններից է: Նրա անունը առաջին հերթին իր սրտում կրում է մայր ժողովուրդը: Իսկ դրանից ավելի երջանկություն ու պատիվ մարդու համար գոյություն ունենալ չի կարող:

* * *

1995թ., երբ նկարահանվում էր առանձին ֆիլմ ԿՊՇ-ի եւ նրա հրամանատար Ս. Կարապետյանի մասին, ԼՂՀ ՊԲ շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Ա. Վ. Զինեւիչը նշեց, որ Արցախի բնակավայրերի ազատագրմանը մասնակցած ԿՊՇ-ի բոլոր ստորաբաժանումների անձնակազմի անդամները մարտական առաջադրանքի կատարման ընթացքում իրենց դրսեւորել են որպես կարգապահ, համարձակ ու մախաձեռնող ռազմիկներ, հարձակումն իրագործում էին հմտորեն ու քաջաբար, ազատագրելով հայրենի Արցախի բնակավայրերն ու հողը, ցույց տալով արիության ու տոկունության օրինակներ: Այդ հերոսական գործողությունների հաջողությունը մեծապես կապված էր մոտոհրաձգային գնդի հրամանատար, գնդապետ Ս. Կարապետյանի հետ:

Շտաբի պետը ընդգծեց, որ ուրախալի է այն փաստը, որ ռազմական գործողությունների ընթացքում ԿՊՇ-ի բոլոր գումարտակների զինվորները սիստեմատիկորեն բարձրացրել են մարտական պատրաստության, մարտական զենքի ու տեխնիկայի կիրառման արդյունավետության մակարդակը:

Չի եղել մի ճակատամարտ, որին մասնակցած չլիներ մոտոհրաձգային գունդը Ս. Կարապետյանի հրամանատարությամբ: Հայտնի է, որ 1993թ. փետրվար-մարտ ամիսներին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը մարտական գործողություններ են ծավալել Մարտակերտի շրջանի տարածքի հետագա ազատագրման եւ Ադրբեջանի զինված ուժերի Լաչին-Քելբաջարի խմբավորման ջախջախման ուղղությամբ, որը բազմիցս փորձեր է ձեռնարկել փակելու Լաչինի միջանցքը եւ լուրջ սպառնալիք էր ներկայացնում Մարտակերտի ուղղությամբ մարտեր մղող հիմնական խմբավորման թիկունքի համար:

Չնայած զինապաշարի, վառելիքի եւ այլ նյութատեխնիկական միջոցների պակասին, ինքնապաշտպանության զորամասերն ու ստորաբաժանումները մարտիկների արիության ու տոկունության, հրամանատարների եւ շտաբների կատարած կազմակերպչական մեծ աշխատանքի շնորհիվ, այնուամենայնիվ, հաջողությամբ կատարեցին իրենց առջեւ դրված խնդիրները:

Չնայած լեռնային ծանր պայմաններին եւ տանկերի ու ՋՄՄ-ների լայն կիրառության հնարավորության բացակայությանը, գործողության հաջողության մեջ մեծ ներդրում են մտցրել ԿՊՇ-ի զինվորները: Այդտեղ զգացվել է հրամանատար Սամվել Ջամիլովիչի հմտությունն ու վճռականությունը: Գնդի մարտիկները ակտիվորեն մասնակցեցին Լաչին-Քելբաջարի ազերի-թուրքերի խմբավորման ոչնչացմանը, որի հետեւանքով փակեցին Օմարի բարձր լեռնանցքը: Այդ մարտերի ընթացքում հակառակորդը կորցրել է հետեւակի երեք վաշտ, 23 տանկ, 12 ՋՄՄ, 11 հրանոթ, 1 ուղղաթիռ, մեծ քանակությամբ հրազեն ու զինամթերք: Այդ անհրաժեշտ գործողության առյուծի բաժինը դարձյալ պատկանում է Ս. Կարապետյանի գնդին:

ԼՂՀ պաշտպանության բանակում ԿՊՇ-ի ձեւավորումը ժամանակին էր եւ տեղին: Արցախում տեղի ունեցած ծակատամարտերում Ս. Կարապետյանի գունդը ապացուցեց այդ: Շուշիի ազատագրման ժամանակ, թե Աղդամի կրակակետերը ոչնչացնելիս՝ Ֆիզուլու ուղղությամբ, թե Կուբաթլիի, Ջեբրախիլում լիներ, թե Մարտակերտում, Ս. Կարապետյանի մոտոհրաձգային գունդը իրեն ցուցաբերեց որպես արցախցիների անկոտրում կամքի, վճռականության, ռազմական տեխնիկայի տիրապետման, ազատասիրական զգացումների հավաքական ուժ:

Գեներալ-լեյտենանտ Ջինելիչը հպարտությամբ է խոսում Սամվել Ջամիլովիչի զորավարական կարողությունների մասին: Նա նշում է, որ դեռեւս վաշտի հրամանատարի տեղակալ եղած ժամանակ Սամվել Կարապետյանը ցուցաբերել է զինվորի եւ հրամանատարի միասնական կամք եւ հմտություն: Այդ նշանակում է, որ ել՝ ինքը՝ Սամվելը, եւ՝ իր զինվորները գիտեին ինչի համար են մարտնչում: Նրանք միասնական էին ամենուրեք: Եթե չլիներ այդ միասնությունը, հազիվ թե գունդը փառավորվեր իր բազմաթիվ խիզախություններով: Շտաբի պետը հիացմունքով կրկնում է Սամ-

վել Կարապետյանի խոսքը. «Մինչեւ կյանքիս վերջը պիտի կռվեմ թուրքերի դեմ: Ես ինձ երջանիկ եմ զգում, որ ծնվել եմ այս դարաշրջանում: Ամեն մի հրամանատար եւ զինվոր պիտի վճռակամորեն մոտենա իր գործին եւ կռվի սրտանց»:

Ջինեւիչը սիրում է նաեւ ընդգծել ԿՊՇ-ի նորությունները: Նա նշում է, որ ԿՊՇ-ն առաջինն սկսեց երիտասարդ կադրերի, նորակոչիկների հաշվին գնդի համալրումը եւ կատարելագործումը: Այդ նշանակում է, որ ավանդույթը շարունակվում է եւ երկրի սահմանների հսկողությունը կարող ձեռքերում է: Գնդապետ Ս. Կարապետյանը հպարտությամբ է հիշում իր եւ իր գնդի անցած հերոսական ճանապարհը: «ԼՂ Հանրապետություն» թերթի (1997թ. 9 մայիսի, № 55) թղթակցին տված պատասխանները այդ մասին են խոսում.

«-Կենտրոնական պաշտպանական շրջանը մեկ օրում չի ստեղծվել, այն կազմավորվել է պատերազմական թոհուրոհի մեջ: Ինչի՞ց եւ ինչպե՞ս սկսեցիք...»

-1988-ին մեկեն փոխվեց մեր կյանքը: Հիմնովի՛ն: Ամենքս մեզ համար մի գործով զբաղված էինք, բայց հավաքագրվեցինք, որովհետեւ ահավոր վտանգ էր կախված ազգի գլխին: Եվ որպեսզի չկրկնվի պատմությունը, մահվան աչքերին նայեցինք ուղիղ: Սկզբում 12 հոգով էինք, հետո շարքերը ստվարացան, հիմնականում ստեփանակերտցի տղաներով: Շուշիից, Խոջալուից, Մալիբեյլիից, Ջանհասանից, Քյոսալարից թուրքերը հանգիստ չէին տալիս, եւ եթե Ստեփանակերտը խեղճանար՝ դեպքերն այլ ընթացք կունենային... Մեր տղաները միայն Ստեփանակերտը չէին պահում, նրանք «տիրություն» էին անում ողջ Ղարաբաղում: 1990թ. ագերիները Հադրութում 14 գյուղ վերցրին, մենք շուրջ 70 հոգով օգնության գնացինք: 90 տոկոսը Ստեփանակերտի տղաներն էին, ռազմագործողությունը ղեկավարում էր Սամվել Բաբայանը: Այնտեղ առաջին անգամ օմօնի քիթը տրորվեց, նրանց առաջխաղացումը կասեցվեց: Չի եղել շրջան, որտեղ եղանակ «ստեղծողները» ստեփանակերտցիները չլինեին: Սկսած հրետանավորներից, թիվ 71 առանձին մոտոհրաձգային գումարտակից՝ վերջացրած մեզնով: Ստեփանակերտի կամավորականների մասին օրերով կարելի է պատմել, նրանք կռվում էին ինքնամոռաց, վրեժխնդրորեն, որովհետեւ թշնամին օրական 400-500 արկ էր բաց թողնում նրանց քաղաքի վրա: Հնարավոր չէ մոռանալ, թե օդանավակայանում (որը

մեր վերջին հույսն էր, դրսի աշխարհին կապող միակ օղակը) խոջալուեցիներն ինչպես էին ձեռ առնում, ծաղրում մեր ժողովրդին...

-Բայց խառնակության «էպիկենտրոնը» Աղդամն էր...

-Գլխավոր ուղղություններից մեկն էր Աղդամը: Չնայած թուրքերն Ադրբեջանի սիրտը լինելու գերապատվությունը տալիս էին Շուշիին, երբ վերջինս ազատագրվեց՝ այդօրինակ մեծապատվել սկսեցին Աղդամին: Աղդամի կորստից հետո է՛լ սրտի անուն չտվեցին...

-1993-ի փետրվարին ԿՊՇ-ն մասնակցեց Մարտակերտ քաղաքի եւ համանուն շրջանի մի շարք բնակավայրերի ազատագրմանը...

-Մասնակցել ասելը քիչ է, հիմնական ծառայությունը մեր ուսերին էր, իրադրության «տերը» մենք էինք: 5 ամիս մնացինք Առաջածորի պաշտպանական գոտում: Գլխավոր հրամանատարի կարգադրությամբ՝ այդ ճակատի հրամանատար նշանակվեցի: Թշնամին ամեն օր փորձում էր ճեղքել մեր պաշտպանական գիծը: Հունվարին էր՝ հակառակորդը Քարագլուխ-Ղազանչի ուղղությամբ շուրջ 5 հազար զինվոր բաց թողեց՝ մի քանի օրում մաղվեցին... Մարտակերտն ազատագրվեց մեծապես մեր տղաների շնորհիվ: Պատահում էր՝ այդ ու ձախ թեւերը, ճնշմանը չդիմանալով, նահանջում էին՝ մենք ստիպված փոխում էինք ուղղությունը, օգնության հասնում: Եթե զորքը խուճապի մատնվեց՝ ոչ մի հրամանատար ի գործ չէ կանգնեցնելու այն:

-Պուք սկսել եք զինվորից՝ հասել հրամանատարի կոչմանը: Ի՞նչ տարբերություն եք տեսնում զինվորի ու հրամանատարի միջեւ:

-Կանոնադրության համաձայն՝ շատ տարբերություններ: Պատասխանատվության ու պահանջկոտության չափը՝ առաջին հերթին... Բայց նա, ով սկսել է զինվորից՝ վերջինս լավ է հասկանում: Լինել լավ շարքային զինվոր հեշտ չէ, բայց դյուրին չէ եւ լավ հրամանատար լինելը:

-Հայի «խաչը» միշտ էլ ծանր է եղել: Ղարաբաղցիներն այս անգամ փորձությանը դիմացան արժանապատվորեն...

-Այո, հայությունն այսպիսի սերունդ մեկ էլ, ո՛վ գիտի, ե՞րբ կտեսնի: Շատ արվեց: Ու ձեռք բերածը պիտի պահվի: Լավ ենք զգում, երբ մեզ «ագրեսոր» են անվանում. վերջապես թող մեկ անգամ էլ մեր ազգին այդպես կոչեն: Բավական է՝ ինչքան կորցրել ու լաց ենք եղել: Տա Աստված՝ եկող սերունդներն էլ մեր կարգի ագրեսորներն լինեն:

-Կա՞ այնպիսի շրջան, ուր դուք եղած չլիներք մարտական գործողությունների ժամանակ:

-Շրջա՞ն... Այդպիսի գյուղ էլ չի եղել: Պարզապես որոշ գյուղերի կողքով ենք անցել. ժամանակ չի եղել այնտեղ մտնելու: Եթե մեր մարտավարությունը չլիներ՝ ուրիշներից զինվոր պիտի փոխ առնեինք: Փառք Աստծո, բանակն իր գործն արեց, անում է ու անելու է, մնում է՝ ճիշտ քաղաքականություն տարվի:

-Յուսահատության պահեր ունեցե՞լ եք...

-Յուսահատվելու իրավունք ես ինձ չեմ վերապահում... Երբ ասում են՝ Ստեփանակերտի զորամաս, դա կրկնակի պարտավորեցնում է: Բոլոր կռիվներում էլ մայրաքաղաքի մասին շատ է խոսվել: Մայրաքաղաքն ընկճվելու իրավունք չունի: Անձամբ ես Ստեփանակերտի տղաներից շատ գոհ եմ: Մեր ընկերներից շատերը զոհվեցին, մինչեւ մահ պարտավոր ենք նրանց գործը շարունակել: Անհնար է մոռանալ Յուրի Պողոսյանին, «Կուճուր Յուրա» էինք ասում. շատ սովորեցինք նրանից, եւ առանց վերապահումների կարող եմ ասել՝ թե ինչ-որ բանի հասել եմ՝ այդ բոլորը նրա շնորհքն է:

-Ի՞նչ կցանկանայիք Շուշիի ազատարներին՝ ձեր մարտական ըկերներին:

-Ես ուզում եմ, որ մենք միայն այդպիսի հոբելյաններ տոնենք՝ ազատագրության, հաղթանակի հոբելյաններ, եւ թող այլևս նման տոները չշատանան, հերիք է՝ մենք մե՞րն ենք վերցրել:

Երեւի մեր սերնդի ճակատագիրն էր սա, եւ պիտի հպարտանանք, որ հենց մե՞զ բաժին ընկավ շատ պատմական սխալներ ուղղել... Միլիոնուկես հայեր կորցրինք 1915-ին: Եթե ժամանակակից տեխնիկան ուղղես դրան՝ առնվազն մեկ տարի է անհրաժեշտ՝ այդքան մարդ սպանելու համար... Իսկ որտեղ էր ժողովրդի գլուխ կանգնած իշխանությունը: Նույնն էլ մեզ մոտ պիտի կատարվեր (Թալեսա փաշայի հետնորդները փորձված էին), եթե «քնով անցնեինք»: Ղարաբաղն արդեն նրանց ձեռքին էր, միայն մի վերջին ճիգ էր պահանջվում... Այս անգամ, սակայն, հուսախաբ եղան իրենց հաշիվներում: Որովհետեւ մեր սերունդը (ես դա հպարտությամբ եմ ասում) ժամանակին զգաց պահի պատեհությունը, որովհետեւ դանակը հասել էր ոսկրին, համբերելը՝ դարձել անհնարին... Սլավիկ անունով մի տղա առանց զենքի եկել-հասել էր Շուշիի մա-

տույցներին, տղաներից մեկից «խլեց» գնդացիրը, կռվեց ինքնամոռաց ու Շուշի մտնելուց կես ժամ առաջ... զոհվեց: Ո՛չ հրամանով էր, ո՛չ ստիպելով, բոլորն էլ կամավորակներ էին, մերոնք, ղարաբաղցու ասած, էրվում էին: Եթե մեկնումեկին ասում էիր՝ դու մարտի չես գնալու՝ լաց էր լինում, իսկ թե ուզում էինք պատժել՝ զրկում էինք Շուշիի օպերացիային մասնակցելու իրավունքից, երկու հոգու մեր դասակից այդպես պատժեցինք... Սա է գաղտնիքը, որ դիմացանք՝ մի բուռ լինելով ու հաղթեցինք: Թող Աստված շատ չհամարի: Քիչ է ասել՝ հպարտ եմ, որ բախտ վիճակվեց ազգիս զինվորը լինելու պատմական այս ժամանակահատվածում...»:

* * *

Ս. Կարապետյանի հոգու աշխարհը ծփում է բազմաթիվ ընկերների քաջագործությունների, նահատակված զինակիցների սխրանքների պատկերներով ու անմար կարոտներով: Այս գիրքը գրելուց առաջ Սամվել Ջամիլովիչից մեկ անգամ չենք լսել հուշ ու հիշատակ դարձած իր զինվորների եւ արիասիրտ ընկերների մասին: Այս հաղթանակները, որ նվաճել է գունդը, նա կապում է այն անձնուրաց մարտիկների հերոսությունների հետ: Եվ ոչ միայն Սամվել Ջամիլովիչն է հիշում նրանց, այլեւ ռազմական ճանփաներում նրանց հետ ուրախության եւ թախծի զգացումները կիսած մարտական ընկերները:

Մեր մի զրույցի ժամանակ Ս. Կարապետյանն ասաց.

-Առաջին հերթին մենք բոլորս պետք է հիշենք մեր գնդի կրակե ուղիներով անցած մեր սուրբ նահատակներին՝ Արզամին, Արարատին, Սամվելին, Արթուրին, Ալիկին, Բենիկին, մյուս Արարատին, Վարդանին... շատ-շատերին:

Եվ մենք՝ գրքի հեղինակներս, մեր հոգու պարտքը համարեցինք թեկուզ համառոտ, մեր ընթերցողներին ներկայացնել զնդի շքանշանակիր նահատակներից մի քանիսին.

ՄՐՄՐԱՏ ԵԳՈՐԻ ՂԱԶՆՐՅԱՆ: Ծնվել է 1967թ. հոկտեմբերի 28-ին Ստեփանակերտում: Ավարտել է քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցը 1985թ.: Աշխատել է կենցաղսպասարկման կոմբինատի արհեստանոցում որպես դերձակ: 1986-88 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Հայրենի քաղաք է վերադարձել այն օրերին, երբ իր հարազատ Արցախը ոտքի էր ելել վերամիավորվելու մայր Հայաստանին: Նա շուտով իր ընկերների հետ ձեռնամուխ եղավ սեփական ուժերով ու միջոցներով զենքի ձեռք բերման գործին:

Սկսեցին գործել առաջին ֆիդայական ջոկատները, ասել է թե՛ սկսվեց Արցախյան գոյամարտը, Արարատը մկրտվեց նախ Սարգսաշենի պաշտպանական ջոկատում, իսկ երբ կազմակերպվեց ինքնապաշտպանության բանակը, նա 7-րդ վաշտի առաջին զինվորներից եղավ:

Արարատ Ղազարյանը կոփվեց նաև Կրկժանի, Քյոսալարի մարտերում, դարձավ դասակի հրամանատար, այնուհետև նրան վստահվեց 7-րդ վաշտի հրամանատարի պարտականությունը, իսկ մահից երեք ամիս առաջ արդեն 3-րդ զումարտակն էր ղեկավարում: 1992-ի մայիսի 9-ին նա իր քաջերի հետ գրավեց Ջանհասանի բարձունքը, փակեց Շուշի-Քելբաջար ճանապարհը, ապահովելով Շուշին գրոհողների աջ թևը: Այնուհետև նա թշնամիներին ծնկի բերեց Դահրազում, Նախիջեւանիկում, Սարսանգում, Վաղուհասում, Քելբաջարում, Մարտակերտում, Աղզամում...

1993թ. հունիսի 27-ին, Մեծամա տանող ճանապարհին, թշնամու հակատանկային ականի պայթյունից զոհվեց անձնուրաց զինվորը:

Արարատ Ղազարյանը հասցրել էր ամուսնանալ, դառնալ հայր: Հայրենիքի եւ իր փոքրիկի ճանապարհին նա վառեց իր սիրտը որպես կանթեղ, որի լույսը երբեք չի մարի: 1993թ. օգոստոսի 10-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Արարատ Ղազարյանը ետմահու պարգևատրվեց «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով:

ՍԱՄՎԵԼ ՎԱՆԴՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ: Ծնվել է 1970թ. դեկտեմբերի 4-ին Ստեփանակերտում: Ավարտել է քաղաքի թիվ 5 դպրոցը: Ստեփանակերտի պոլիտեխնիկական ինստիտուտի երկրորդ կուրսի ուսանող էր, երբ 1991թ. դեկտեմբերին զինվորագրվեց ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերում նոր կազմակերպվող 6-րդ վաշտին: Մարտական առաջին մկրտությունը ստացավ Կրկժանում, ապա Խոջալուի եւ Մարտակերտի մարտերում: 1992թ. օգոստոսին Սամվելն արդեն վաշտի հրամանատարի տեղակալ էր, իսկ սեպտեմբերին՝ 22 տարեկանում նշանակվեց ԿՊՇ-ի մոտոհրաձգային 3-րդ զումարտակի հրամանատար, որի մարտեր վարելու տաղանդը բացահայտվեց Չլդրանում, Պողոսագոմերում, Ղազարահողում, Դրմբոնում, Մեծ շենում, Մաղավուզում եւ այլ հայկական բնակավայրերի ազատագրման համար մղված մարտերում:

Գումարտակի հայրենասիրական գործողությունների գագաթնակետը եղան 1993թ. մարտին Սարսանգի հիդրոհանգույցի վերջնական ազատագրման համար մղված կռիվները, ռազմավարական ճշգրիտ տակտիկայի ընտրությունը, պլանավորած գործողու-

թյան անթերի կատարումը: Գումարտակի տղաները խուճապի մեջ գցեցին թշնամուն, որը հարյուրավոր զոհեր տալով, լեղապատառ թողեց մարտադաշտը: Դա Գերանոյի ազերական գումարտակի հենց այն խայտառակ պարտությունն է, որ պատահականորեն նկարահանեց ռուս հեռուսալրագրող Նելզորովը:

Ավաղ, 1993թ. մարտի 20-ին Հակոբ Կամարի (Լյուլասագ) գյուղի ազատագրման ժամանակ նահատակվեց երիտասարդ տաղանդավոր հրամանատր Սամվել Հարությունյանը: Հայրենիքը բարձր գնահատեց նրա սխրանքը, ետմահու պարգևատրելով «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱՅԵԼԻ ՕՂԱՆՅԱՆ: Ծնվել է 1975թ. հուլիսի 21-ին Ստեփանակերտ քաղաքում, բանվորի ընտանիքում: Ավարտել է թիվ 2 միջնակարգ դպրոցը: Նա դեռ վերջին զանգին չնասնակցած՝ մեկնեց ռազմաճակատ: 1992թ. Արթուրն արդեն կրակների միջով հասել էր Մեծ շեն եւ վիրավորվել: Նա շուտով դարձավ 3-րդ մոտոհրաձգային գումարտակի 9-րդ վաշտի առաջին դասակի հրամանատար, ապա՝ վաշտի հրամանատար: Արթուրն անօրինակ սխրանք գործեց Վաղուհասի մոտ, շարքից հանելով տասնյակ թուրք հրոսակների: Արթուրը վիրավորվել է 4 անգամ:

1995թ. փետրվարի 4-ին, երբ Արթուրը ավագ լեյտենանտի կոչում ուներ եւ գումարտակի հրամանատարի տեղակալ էր, երբ ժամանակավոր զինադադար էր եւ դիրքերում հանգիստ էր, Աղդամի շրջանի Գյուլուջա գյուղում դիրքեր գնալու պահին հակատանկային ականի պայթյունից զոհվեց...

Ձոհվեց... բայց ապրում է նա ժողովրդի սրտում, նրա երազանքների մեջ: Արթուրը պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԵՈՐԳԻ ԳԱՄՊԱՐՅԱՆ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Ռ. Քոչարյանի 1995թ. մայիսի 4-ի հրամանագրում կարդում ենք.

«Հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած քաջության եւ անձնական խիզախության համար, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 50-ամյակի եւ Շուշի քաղաքի ազատագրման երրորդ տարեդարձի կապակցությամբ ետմահու պարգևատրել «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով Ալեքսանդր Գեորգիի Գասպարյանին»: Երկու օր անց թիվ 46492 զորամասի հրամանատարության առաջարկությամբ Ալեքսանդրը պարգևատրվեց նաեւ «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալով:

Այս երեւոյթը ժողովրդի երախտագիտութեան վառ արտահայտութիւններէն է, որ ցուցաբերել է իր քաջարի գավակի հանդէպ:

Ալեքսանդր Գերոզի Գասպարյանը ծնվել է 1959թ. հուլիսի 27-ին Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղում: Միջնակարգ կրթութիւնը ստացել է Ստեփանակերտի թիվ 9 դպրոցում, ապա տեղափոխվել է Բաքու, որտեղ սովորել եւ աշխատել է դերձակի մասնագիտութեամբ: Խորհրդային բանակի շարքերում ծառայելուց հետո նա կրկին վերադառնում է Բաքու եւ շարունակում իր աշխատանքը: Այստեղ էլ նա ամուսնանում է, կազմում ընտանիք:

1987թ. Ալեքսանդրը ընտանիքով վերադառնում է հայրենի Արցախ: Մինչեւ Շուշիի ազատագրումը Ալեքսանդրը ծառայում էր 5-րդ վաշտում: 1992թ. նա տեղափոխվեց 7-րդ վաշտ եւ նշանակվեց դասակի հրամանատար: 1993թ. նրան նշանակեցին վաշտի հրամանատար, իսկ նույն թվականի հուլիսին գումարտակի հրամանատար: Ալեքսանդրի ղեկավարած բոլոր մարտերը պսակվել են փայլուն հաջողութեամբ: Այդպէս է եղել Աղդամի, Կուրբաթլուի, Ֆիզուլու, Ջանգելանի, Յորադիզի կրակակետերի վերացման ժամանակ:

Ալեքսանդրը 1993թ. դեկտեմբերին մի փոքրիկ խմբով գտնվում էր ժդանովի շրջանում: Դեկտեմբերի 25-ին զոհվեց քաջարի հրամանատարը: Նրա դիակը հողին հանձնվեց Ստեփանակերտի հուշահամալիրի տարածքում, Արարատ Ղազարյանի կողքին, որին փոխարինել էր ինքը:

ԲԵՆԻԿ ԱՐՏԱՇԻ ԱՍՅԱԿՅԱՆ: Ծնվել է 1969թ. ապրիլի 17-ին Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղում: Ավարտելով գյուղական դպրոցը, զորակոչվում է բանակ: Բենիկը մտադիր էր ռազմական կրթութիւն ստանալ, շարունակել իր հայրենակից, Խորհրդային Միության հերոս, գեներալ-գնդապետ Միքայել Պարսեղովի ուղին: Սակայն լսելով դարաբաղյան շարժման մասին, 1989թ. զորացրվելուց հետո վերադարձավ հայրենի գյուղ, անդամագրվեց շրջանում ստեղծված գաղտնի ֆիդայական ջոկատին, ապա տեղափոխվեց Ստեփանակերտ, մտավ 5-րդ վաշտը: Ապա նա նշանակվեց 7-րդ վաշտի 2-րդ դասակի հրամանատար, իսկ մեկ տարի անց՝ 3-րդ մոտոհրաձգային գումարտակի հրամանատարի տեղակալ: Բենիկը իր զինվորյալների հետ մասնակցել է Մարտակերտի շրջանի գյուղերի ազատագրմանը: Մարտակերտ քաղաքի ազատագրման համար պետք էր գրավել «Պուշկին յալ» կոչվող բարձունքը, որտեղից թուրքերը կրակ էին թափում շրջանի բոլոր բնակավայրերի վրա: Մինչ գրոհելը գնդի հրամանատար Սամվել Կարապետյանը կապվեց Բենիկի հետ, խորհուրդ տալով սլանալ բարձունքն ի վեր: Շուտով Բենիկն իր զինակիցների հետ բարձունքի վրա

եր, ուր գրավել էր 2 զենիթային թնդանոթ եւ բավականին զինամթերք:

Բենիկ Սահակյանը մասնակցել է դարաբաշյամ բոլոր կարելուր ճակատամարտերին, երկու անգամ վիրավորվել է եւ ամեն անգամ էլ լրիվ չապաքինված վերադարձել է գումարտակ, մասնակցել մարտական նոր գործողություններին: Նա խփել է թշնամու երկու S-72 տիպի տանկ, շարքից հանել 10-ից ավելի ավտոմեքենա:

1993թ. հոկտեմբերի 10-ին Բենիկը ծանր վիրավորվեց Ջեբրայիլի շրջանի վերջին կրակակետի վերացման ժամանակ եւ մեկ օր հետո մահացավ: Նրան հողին հանձնեցին Կոլխոզաշենում, Պարսեղովի տուն-թանգարանի բակում:

Մեր սրտի թրթռների մի մասն են կազմում նաեւ «Մարտական խաչ»-ի նահատակ-ասպետներ Արգամ Սերգեյի Հարությունյանը, Վարդան Ալեքսեյի Գրիգորյանը, Արարատ Յուրիի Ավանեսյանը, շատ-շատերը, որոնք ԿՊՇ-ի հաղթանակների երկնակամարում շողում են որպես առաջին մեծության աստղեր: Այդ նրանց մասին է այսօր ամբողջ զնդի խոհերի աշխարհը, նրանցից է սկիզբ առնում այն ծիածանը ազատության, որ ձգվում է դեպի Արցախ աշխարհի ապագան, դեպի նոր սերունդների սրտերը:

ԿՊՇ-ի շքանշանակիր նահատակների մասին գրվել են ոչ քիչ ակնարկներ: Մենք կցանկանայիք նշել բանաստեղծ-զինվոր Գագիկ Բեգլարյանի «Պսակ» գիրքը, ուր տեղ են գտել ԿՊՇ-ի շքանշանակիր-նահատակ ազատամարտիկներից մի քանիսի մասին գրած դիմանկարները: Մենք մեր գոհունակությունն ենք հայտնում այդ հաջող գրքի վերաբերյալ եւ շնորհակալություն հայտնում նրան հետաքրքիր տեղեկությունների համար:

* * *

Մեր գրույցի ժամանակ ԿՊՇ-ի հրամանատարներին ու նրանց տեղակալներին ասացինք, որ Ս. Կարապետյանի զնդի վարած հերոսական մարտերին արիաբար մասնակցել են նաեւ Արցախի պետական համալսարանի մի խումբ ուսանողներ: Առանձնապես նշեցինք մեր այն զոհված սաներին, որոնց սիրած աղջիկները ճանապարհել էին ռազմաճակատ եւ, ավա՜ղ, նրանց դիմավորել միայն անդառնալի կորստի արցունքներով: Գնդապետ էլմիրա Աղայանը զինակիցներին հայտնեց, որ Սոկրատ Խանյանը այդ նահատակ ուսանողների հիշատակին նվիրել է սրտառուջ բանաստեղծություն: Նրանց խնդրանքով ես արտասանեցի այդ ստեղծագործությունը:

Խոսքը տանք ԿՊՇ-ի թիկունքի գծով հրամանատարի տեղակալ, գնդապետ Էլմիրա Ալեքսանդրի ԱՂԱՅԱՆԻՆ:

«Կենտրոնական պաշտպանական շրջանի հրամանատար Սամվել Կարապետյանին բնութագրելն ինձ համար եւ հեշտ է, եւ դժվար: Յեշտ է այն առումով, որ իմ զինվորական կյանքի ուղին ընթացավ Սամվել Ջամիլովիչի փառապանծ ճանապարհի հետ համաձույլ, դժվար է, որովհետեւ արիասիրտ ու անձնուրաց այդ հերոսին բնութագրելիս հուզվում եմ, չեմ կարողանում նկարագրել այն ամենը, ինչ նա կատարել է Արցախի ազատության համար մղված մարտերում:

Սամվել Ջամիլովիչը հասակ է առել մեր քաղալում, մեր կողքին: Պարզվում է, որ խորհրդային 70 տարիների ընթացքում մեր ազգային հուզումների հետ կապված բոլոր այն ապրումները, ինչ ունեցել են մեր լեռնաշխարհի սրտացավ մարդիկ, կաթիլ առ կաթիլ, շող առ շող կուտակվել եւ ամբարվել են մեր նոր սերնդի կրծքի տակ, նպաստել նրանց հուզաշխարհի ձեւավորմանը, հայրենիքի ու ժողովրդի ճակատագրի հանդեպ պատասխանատվության ամենանուրբ եւ ամենասուրբ զգացումների եռքին: Եվ պատահական չէ, որ արցախյան շարժման եւ մեզ պարտադրած պատերազմի տարիներին միանգամից իրենց դրսեւորեցին այնպիսի ժողովրդածին զորապետներ, գնդապետներ, որպիսիք են ԼՂՀ պաշտպանության նախարար, զեներալ-լեյտենանտ, Արցախի հերոս Սամվել Բաբայանը, գնդապետներ Կարեն Բաբայանը, Վիտալի Բալասանյանը, Մովսես Բալայանը, Սասուն Աղաջանյանը, Նելսոն Սողոմոնյանը, լեգենդար Մոնթե Մելքոնյանը (Ավոն) եւ ուրիշներ: Այդ աստղաբույլի մեջ իր փայլուն զորավարական տաղանդով առանձնանում է նաեւ Ս. Կարապետյանը:

Սամվել Ջամիլովիչին այսօր ճանաչում է հայ ժողովուրդը: Ամենուրեք գիտեն, որ նա իր փառքին ու պատվին հասել է սեփական արյան գնով, հայրենիքի եւ ժողովրդի ազատագրության գործին անձնուրաց նվիրումով, մեր պապերի ու հայրերի մեզ ավանդած սուրբ օջախները պահպանելու վճռականությամբ, հայոց Արցախը ներկա եւ գալիք հայ սերունդների կենաց աղբյուրը տեսնելու երազանքով:

Մենք բոլորս գիտենք Անդրանիկ զորավարին, Աղբյուր Սերոբին, Գեւորգ Չաուշին եւ ուրիշներին, այսինքն 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի մեր ազգային դյուցազուններին: Ս. Կարապետյանը այդ աննոռանալի նվիրյալների արժանի ժառանգորդներից է, միաժամանակ նաեւ այն քաջերից, ովքեր ասպարեզ իջան՝

Ինծած Քուռկիկ Ջալալին, առած Թուր Կայծակին եւ ուղղեցին մեր պապերի սխալները, լրացնելով նրանց կիսատ գործը:

Ս. Կարապետյանին ես համարում եմ հեքիաթային դյուցազն: Այն, ինչ տեսել եմ իմ աչքերով պատերազմական թոհ ու բոհի մեջ, ինձ իրավունք են տալիս նրան համարելու առասպելական հերոս: Նա մեր անցյալի հերոսներից ժառանգել է վճռականություն, խիզախություն, հմտություն, կամք, ընկերասիրություն, անձնվիրություն եւ այլ բարեմասնություններ:

Ս. Ջամիլովիչը կարգապահության խորհրդանիշ է, եւ բոլորից էլ պահանջում է լինել այդպիսին: Կարող եմ հաստատել, որ ԿՊՇ մեր գունդը ինչ հաջողությունների է հասել եւ արժանացել Մարտական դրոշի, տեղի է ունեցել հրամանատարի խստապահանջության եւ օրինակելի կարգապահության շնորհիվ: Նրա համար զինվորը հարազատ որդի է: Նա իրեն համարում է հայր, բայց զավակներին երես չտվող, ճիշտ ճանապարհով տանող, լավին լավ, վատին վատ ասող հայր: Ս. Կարապետյանի համար տարբերություն չկա դիմացինը սպա է, թե շարքային: Նա ճշմարտության, ազնվության կողմնակից է: Դրանով պետք է բացատրել այն հարգանքն ու սերը, որ վայելում է նա գնդի զինվորների եւ իր զինակիցների կողմից: Սամվել Ջամիլովիչը այնպես է հավատում իր զինակցին, որ նույնիսկ եղբայրը չի վստահի այդպես: Նրա այդ վերաբերմունքը ծնում է փոխադարձ վստահություն եւ նվիրվածություն: Այդ առումով կցանկանայի բերել մի խոսուն օրինակ.

Բոլորս հիշում ենք մեզ համար ստեղծված այն ծանր օրերը, երբ ամեն ժամ Արցախը տեսնում էր գրկանք ու զոհ, ավերածություն ու տեղահանություն: Շատերս մեր ուժերի ներածին չափով հուսադրում էինք մեր հարազատներին, հարեւաններին, բարեկամներին՝ չհուսահատվել, դիմանալ: Նման մի պահի հրամանատար Սամվել Կարապետյանից, որ Օմարի լեռներում էր գտնվում, հրահանգ ստացա՝ ռազմաճակատ ուղարկել ճերմակ ծածկագզեստներ, ձյունապատ լեռներում քողարկվելու համար: Այդ հանձնարարության մեջ ես տեսա հրամանատարի դեպի ինձ եղած հավատն ու հույսը: Առանց հապաղելու տարբեր թաղամասերից հավաքագրեցի 30 դերձակների՝ իրականացնելու հրամանատարի հանձնարարությունը: Մի գիշերվա ընթացքում դերձակները կարեցին պահանջվող ծածկագզեստները: Բեռնավորված ավտոմեքենայով լուսադեմին ճամփա ընկանք դեպի Օմար: Լեռնանցքի մատույցներում թշնամին անսպասելի սկսեց հրետակոծել մեր մեքենան: Վարորդը մի պահ վարանեց՝ շարունակել ճանապարհը, թե՛

հետ դառնալ: Ես նրան հասկացրի, որ Օմարուն Սամվելը հավատով մեզ է սպասում, եթե տեղ չհասցնենք բեռը, նա մեզ չի ների, նա վստահում է մեզ: Օմարուն մեր հաղթանակի համար կարելուր նշանակություն ունեցող բեռը նույն օրը տեղ հասցրինք: Սամվելը գոհ էր: Նրա «շնորհակալություն» բառի մեջ ես զգացի իր կողմից դեպի ինձ եղած վստահության ջերմությունը:

Իսկական հրամանատարը իր մարտական ճանապարհին առաջին հերթին հենվում է զինվորների վրա, նրանց հետ կապում եւ հաղթանակների գերագույն հաճույքը, եւ նրա աստվածային խորհուրդը: Խստապահանջ հրամանատար Սամվելը զոհված զինվորների համար ասես վշտից կորանում էր, երկար ժամանակ մնում լուռ: Ամբողջ գունդը զգում էր սգո այդ արտահայտությունը:

Սամվել Ջամիլովիչը զոհված ազատամարտիկների ընտանիքների հանդեպ ուշադիր է: Ինչքան հնարավոր է, օգնում է նրանց: Նա չի մոռանում երբեք վիրավորներին, որովհետեւ իր սեփական մաշկի վրա զգացել է վերքերի ամբողջ ցավն ու մրմուռը: Այդ կապակցությամբ բերեմ մի օրինակ: Սամվել Կարապետյանը մեր խնդրանքով տասն օրով մեկնել էր «Ջերմուկ» առողջարան կազդուրվելու: Այնտեղ մասաժիստը նկատել էր, որ Սամվելի մարմինը, ինչպես ասում են, բազմաթիվ սպիացած վերքերից, նման է շտարարի: Նա հուզված ընկերներին ցույց է տալիս Սամվելի քարտեզանման մարմինը:

-Ինչպե՞ս եք դիմացել այս վերքերին, Սամվել Ջամիլովիչ,- հարցրել է մասաժիստը:

-Ի՞նչ ասեմ, դիմանալ էր պետք,- համեստորեն պատասխանել է Սամվելը:

Այս մասին մեզ պատմել է «Ջերմուկ» առողջարանի գլխավոր բժիշկը՝ արտահայտելով իր զարմանքն ու հիացմունքը:

Պատերազմական թոհ ու բոհի ժամանակ Սամվելը համարյա չէր քնում եւ չէր թողնում, որ մենք էլ քնենք: Նա իրեն հանգիստ էր զգում միայն զինվորներին փանփուշտով եւ հացով ապահովելուց հետո: Եթե որեւէ մեկը վիրավորվում էր, Սամվելը եւ կռվում էր թշնամու դեմ, եւ կազմակերպում վիրավորների փրկությունը: Ջոհվածների դիակները հանել էր տալիս մարտադաշտից եւ կազմակերպում թաղումը: Եթե ինքը չէր կարողանում մասնակցել զոհվածի հուղարկավորությանը, կապվում էր մեզ հետ, հետաքրքրվում, պահանջում, որ ինչպես հարկն է կազմակերպենք նահատակված մարտիկի թաղումը:

Այժմ հարաբերական զինադադար է: Բայց Սամվելը չի հանգստանում երբեք: Նա հետեւում է զինվորների կենցաղային պայման-

ների բարելավմանը, այնպես որ նրանք իրենց զգան ինչպես իրենց տանը, պատրաստ լինեն հակահարված տալու թշնամու ունեցություններին:

Սամվել Կարապետյանի մասին կարելի է պատմել երկար: Նա աներեւակայելի անձնավորություն է, եւ պատմելով չես կարող ամբողջությամբ բացահայտել նրա ներքին աշխարհը:

Սամվելը հոգատար եղբայր է, սիրող հայր, հիանալի որդի: Հիշում եմ սրտառուչ մի դեպք... Սամվել Ջամիլովիչը վիրավորվել էր երրորդ անգամ: Քաղաքից շատերն էին եկել հոսպիտալ՝ իրենց արյունը տալու նրան: Բայց մայրը՝ տիկին Օկտյաբրինան, մոտեցավ, ձեռքը մեկնեց բժշկին եւ մայրական դողացող շրթերով խնդրեց. «Իմ արյան կարգը որդուս արյան կարգից է: Քամեցեք իմ արյունը, միայն թե Սամվելս փրկվի, որովհետեւ նա պետք է ոչ միայն ինձ, այլեւ Արցախին»: Այն ժամանակ էլ բոլորը գիտեին, թե ով է Սամվել Կարապետյանը, այսինքն «43»-ը:

Սամվելի մայրը հպարտությամբ, նաեւ հասկանալի տագնապով հետաքրքրվում էր որդու ռազմաճակատային կյանքով, բայց չէր խանգարում նրան մարտական գործողությունների ժամանակ: Երբ լսում էր, որ «43»-ը իր զնդով ռազմաճակատի առաջին վտանգավոր գծում կռվում էր թշնամու դեմ, առաջին հերթին զանգում էր ԿՊՇ, մեզնից հարցնում եւ տեղեկանում իրավիճակին: Դրանով էլ նա բավարարվում էր, սպասում որդու վերադարձին:

Տիկին Օկտյաբրինային համարում եմ մայրական համբերության խորհրդանիշ:

Նույն ջերմությամբ էլ Սամվելն է տոգորված մոր հանդեպ: Նա մորը համարում է իրեն թեւեր տվող ամենասուրբ եւ անսպառ ուժը: Մայրական սերը նրան միշտ մղել է անձնագոհության, սխրագործության: Սամվելն ունի երկու ամենահաղթ թեւեր՝ հայրենիքը եւ մայրը. դրանով է բացատրվում նրա քաջության եւ ուժի գաղտնիքը:

1993թ. ԿՊՇ գունդը ստեղծելուն պես ինձ տեղափոխել են այստեղ եւ նշանակել թիկունքի գծով հրամանատարի տեղակալ: Այն օրվանից ես ականատես եմ Սամվել Կարապետյանի հերոսական ուղուն: Նա մի այնպիսի անձնավորություն է, որ արժանի է համաժողովրդական պաշտամունքի: Սամվելին պարտք են մեր գրողները, երգահանները, նկարիչները, որովհետեւ նրա բնավորության մեջ խտացված են այն բարեմասնությունները, ինչ ավանդել են մեր ժողովրդի քաջասիրտ զորավարները:

Սամվելը եւ մեր լեռնաշխարհի բոլոր հերոսները պատկանում են ոչ միայն այսօրվան, այլեւ գալիքին»:

1994թ. մայիսի սկզբից դադարեցված է պատերազմը: Սակայն Արցախի մարտական բոլոր գործողություններին մասնակցած զինվորի, հրամանատարի հոգու աշխարհում դեռ շարունակվում են պայթյունները, լսվում են քաջ զինվորների ոգեւորող բացականչությունները եւ վերքերից ու ցավից տառապող զինվորների տնքոցները: Եվ դրանք հնարավոր չէ մոռանալ... Թեկուզ 3-րդ տարին է, ինչ ռազմական գործողությունները դադարեցված են, սակայն Ս. Կարապետյանը թույլ անգամ չի դադարում խորհելու այն մասին, որ թշնամին նենգ է, դավադիր, որ Յայոց Արցախը սեփականացնելու նրա ախորժակը դեռ չի բթացել: Սամվելը չի մոռանում դա, ուստի որպես հրամանատար, լուրջ հետեւում է նորակոչիկների ռազմական արվեստին տիրապետելու գործընթացին, չմոռանալով, որ հայրենիքը պաշտպանող լավ զինվորից է կախված հմուտ զորավարի հաջողությունը: Միաժամանակ Կենտրոնական պաշտպանական շրջանի յուրաքանչյուր զինվոր էլ գոհունակությամբ ու հպարտությամբ է լցվում պատերազմական կրակների բովում կոփված, հերոսության ու անձնուրացության օրինակ հանդիսացող իր հրամանատարի հանդեպ եւ երդվելով նրա առջեւ, նրա պես ճակատը բաց հայտարարում է. «Ծառայում եմ հայ ժողովրդին»: Իսկ նրանք, ովքեր ստեղծագործելու շնորհք ունեն, իրենց սերն ու հարգանքը սիրելի հրամանատարի հանդեպ արտահայտում են բանաստեղծությամբ: Ահա, թե ինչպես է փառաբանում իր խիզախ հրամանատարին գնդի 3-րդ գումարտակի 7-րդ վաշտի ազատամարտիկ Ռոբերտ ՅԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ.

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

*Քո զինվորները, երբ խոր քնի մեջ
Թռչում են հեքիաթ երագի-ծյուղին,
Դու քարտեզի մոտ խորհում ես անվերջ,
Որ ազատ լինի մեր բախտի ուղին:*

*Քունդ ո՞նց տանի, երբ չար թշնամին
Ձգտում է նորից սողալ օձի պես,
Առասպելական հոգիդ այդ ժամին,
Արցախի վրա ճախրում է հրկեզ:*

*Աստված է օրհնել քո մոր կաթը սուրբ,
Որով սնվել ես, դարձել դյուցազուն,*

*Եվ Արցախական լեռներում մեր լուրթ
Քեզ քաջ Սամվելի անունն է սազում:*

*Արցախի բազում կածան ու ճամփա
Կնիքն են պահում ոտնահետքերիդ,
Դու ընտրել ես մի սրբազան պայքար,
Չուլվել հաղթության, հույսի երգերին:*

*Արցախը մոր պես փայփայում է քեզ,
Իսկ դու դարձել ես պաշտպանը նրա,
Այսօր ամեն հայ անունդ լուսե
Փառքով է կրում իր սրտի վրա:*

Մի առիթով գրույց բացեցինք մի զոհված ազատամարտիկի մոր հետ. «Դուք ճանաչո՞ւմ եք Սամվել Կարապետյանին,- հարցրինք»: Նահատակված հերոսի մայրը հուզված պատասխանեց. «Ո՞վ չի ճանաչում Սամվելին: Բոլորը: Իսկ ով չի ճանաչում նրան, նշանակում է անտարբեր է Արցախի եւ մեր ժողովրդի ճակատագրի հանդեպ: Սամվել Կարապետյանը ծուլվել է մեր ազգի ճակատագրին եւ նրա մեջ կապրի հավիտյան»:

Մենք լուռ ու հպարտորեն լսեցինք այդ մորը եւ շոյեցինք մեր մեջ ծնունդ առած խոսքը. «Երջանիկ են Սամվելներ ծնող բոլոր մայրերը»:

Երեւան, «Նաիրի», հրատ, 1997թ.

Յ. Գ. - Սամվել Ջամիլի Կարապետյանի մարտական ուղին սերտորեն առնչված է հայրենիքի եւ ժողովրդի անվտանգության ապահովման հետ: 2000թ. նա ստացել է գեներալ մայրի կոչում եւ նշանակվել ՊԲ հրամանատարի առաջին տեղակալ՝ առաջնային գծով: 2007թ. նշանակվել է ԼՂՀ պաշտպանության նախարարի տեղակալ:

Բարձր են գնահատվել ճանաչված զորահրամանատարի հայրենամուտեր սխրանքները: 2000թ. սեպտեմբերի 1-ին արժանացել է Արցախի հերոսի կոչման, պարգևատրվել «Ոսկե արծիվ» շքանշանով: 2007թ. ընտրվել է Արցախի ազատամարտիկների միության նախագահ: Միաժամանակ նա ղեկավարում է Արցախի ֆուտբոլի ֆեդերացիան:

Սամվել Ջամիլի Կարապետյանի նման քաջասիրտ զավակների շնորհիվ է Հայրոց աշխարհը դարձել անառիկ, ապահովվել մեր ժողովրդի հավերժալույս ճանապարհը, ի հեծուկս մեր նենգ ու արյունարբու թշնամիների:

12.02.2011թ.

ք. Ստեփանակերտ

***Չամահեղինակ՝ Արզիկ Մխիթարյան**

ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆ ՍԽՐԱՆՔԻ ԵՎ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ

Գիրք-հուշամատյանում ներկայացնում են ԼԴՀ Հարութի շրջանի իմ ծննդավայր Ակնաղբյուր գյուղից Արցախյան գոյամարտում նահատակված ազատամարտիկների եւ զոհված խաղաղ բնակիչների մասին գրած վավերագրական այս պատումները:

ՍՈՒՏՔ

Գյուղ իմ հայրենի, իմ հայրական օջախ, իմ հարազատներ...

Քանի՞ տարի է, ինչ մասնագիտության եւ աշխատանքի բերումով չեմ ապրել ձեր գրկում: 1953-ին ավարտելով Բաքվի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության բաժինը՝ աշխատանքի անցա Բաքվում հրատարակվող «Կոմունիստ» (հայերեն) հանրապետական թերթի խմբագրությունում որպես գրական աշխատող: Չեմ թաքցնում այդ աշխատանքն իմ սրտովն էր, որովհետեւ լրագրությունը իմ երազանքն էր: Միաժամանակ այն հնարավորություն տվեց լինել Ադրբեջանի հայաշատ շրջաններում, ծանոթանալ պատմական այն բնակավայրերին, բերդերին ու վանքերին, որ կառուցել են մեր նախնիները, սակայն 11-րդ դարից սկսած՝ աստիճանաբար, բռնի ուժով, դաժան հարձակումներով ազերի թուրքերը խլել են մեզից եւ բնակություն հաստատել այնտեղ: Ամենապատասխանատու զգացումով կարող եմ հաստատել, որ այսօրվա Ադրբեջանի տարածքը, բացի Քուռ գետի ձախափնյա բուն Աղվանքից, եղել է պատմական Հայաստանի անբաժանելի մասը: Եղել են բոլոր շրջաններում, ամենուրեք հանդիպել մզկիթի վերածված եկեղեցիների, անասնագոմեր դարձրած վանքերի, անթիվ-անհամար խաչքարերի, որոնց վրա մեսրոպատառ հայերենով դարերին են հանձնված մեր պապերի աղոթքներն ու ակնկալիքները:

Ազերի-թուրքերի ճնշումներն ավելի զգալի դարձան 1960-ական թվականներից սկսած: Հայերի ձեռքով կերտած Բաքուն, ուր ապրում էր մոտ 400 հազար հայ, դարձել էր խորթ տարր: Գնալով ստիպված հեռանում էին հայ գիտնականները, մտավորականները: Փակվեցին մշակութային հայկական օջախները: Բանը հասավ նրան, որ Ադրբեջանի ղեկավար շրջանների որոշմամբ 1969թ.

Բաքվում փակվեց մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը եւ տեղափոխվեց Ստեփանակերտ: Դրան գումարվեց նաեւ ադրբեջանական բաժին, այն դեպքում, երբ Ադրբեջանում գործում էին մանկավարժական մեկ տասնյակի հասնող բուհեր՝ ադրբեջաներեն լեզվով: Ես հասցրել էի պաշտպանել թեզ եւ աշխատել որպես մանկավարժ:

1969թ. ես եւս իմ ընտանիքով Բաքվից տեղափոխվեցի Ստեփանակերտ եւ շարունակեցի գիտամանկավարժական իմ գործունեությունը նորաբաց բուհում:

1958թ. դարձել եմ ԽՍՀՄ գրողների միության անդամ: Մինչեւ այսօր հրատարակել եմ 15 բանաստեղծական ժողովածուներ, 10-ից ավելի գիտական մենագրություններ, հարյուրավոր հոդվածներ:

Հայրենի իմ գյուղ, իմ հարազատներ, դուք ինքներդ կարող եք վկայել, որ կյանքս չի անցել առանց ձեզ: Միշտ այցելել եմ ձեզ, զրուցել, կարոտս առել, ոգեւորվել եւ շարունակել իմ ստեղծագործական աշխատանքը: Ինչ ստեղծել եմ, ինչի մասին գրել եմ, իմ խոհերի մեջ տեսել եմ ձեզ, երազել ձեզ հետ, ձեզ մման: Սիրո ու կարոտի իմ երգերի մեծ մասը կապված է ձեզ հետ: Միշտ երազել եմ մի առանձին գիրք ստեղծել ձեր մասին, ձեր անցած ճանապարհի, ակնկալիքների, ձեր անկրկնելի գեղեցիկ հուզաշխարհի մասին: Սակայն ինչ-ինչ պատճառներով չեմ կարողացել իրականացնել իմ երազանքը:

Հիմա ցավի եւ կարոտի միջից դեպի ձեզ եմ գալիս, գալիս եմ կորուստների ահազնությունից արցունքոտված սրտով: Պատերազմը դաժան երեւոյթ է, բայց Արցախյան գոյամարտը, որ վերածվեց արյունահեղ պատերազմի, մեր մեղքով չէր: Այն ազերի թուրքերի կողմից մեզ պարտադրված պատերազմ էր: Մեր կողմից ձեռնարկված դիմադրությունն արդարացի էր եւ տեղին, որովհետեւ Ադրբեջանի քաղաքական շրջանները ձգտում էին հայաթափ անել մեր պապենական օջախները, մեր ավանդական Արցախը: Ժամանակն էր, որ մեր ժողովուրդը ոտքի ելներ՝ կյանքի գնով փրկելու մեր երկիրը, մեր պապենական օջախները: Այս գիտակցումով Արցախի թիկունքին կանգնեցին մայր Հայաստանն ու Սփյուռքը եւ այսօր էլ մեզ հետ են: Մեր ժողովուրդը երբեք չի մոռանա 1988-1990թթ. Սոււճայիթում, Բաքվում, Մինգեչաուրում, Գանձակում եւ այլ վայրերում ազերիների կազմակերպած հայկական ջարդերը:

Արցախյան պատերազմը դեռևս շարունակվում է:

Մեր կյանքի այսօրվա բարդ ընթացքում առջեւից քայլում են մեր նահատակված ազատամարտիկներն ու զոհված խաղաղ բնակիչները: Ցավալի է, որ այդ զոհերի մեջ կան նաև անմեղ մանուկներ: Դրանք մեր բալիկներն էին՝ սիրուն ու խելոք: Ռազմաճակատում երբ զոհվում է զինվորը, կարելի է համարել օրինաչափ: Բայց երբ թշնամին դաժանորեն հրթիռակոծում եւ ռմբակոծում է խաղաղ բնակավայրերը, որտեղ զոհվում են անմեղ մանուկներ, աններելի է: Այդ երեւույթը մենք զգացինք մեր անմոռաց կորուստների գնով:

Ձեռնամուխ լինելով այս հուշամատյանի ստեղծմանը, ամեն մի բառի, տողի մեջ գրուցում էի ձեզ հետ, վշտակցում, ցավում, ասես գրում ոչ թե թանաքով, այլ իմ սրտի արյամբ:

Իմ հարազատներ, որպեսզի կողմնակալության տեղիք չտամ, որոշեցի գրքի պատումները տեղադրել՝ ըստ մեր զոհյալների ազգանունների այբբենական կարգի: Դա անհրաժեշտ համարեցի, քանզի բոլոր նահատակները մեր հարազատներն են:

Ընդունեցեք իմ այս գիրքը՝ որպես ձեր զավակի ցաված ու հուսավառ սրտի հուշամատյան:

Ա Մ Ի Ր Ջ Ա Ն Յ Ա Ն Ն Ո Ր Ե Ն Ի Ս Ա Ջ Ա Ն Ի

Նորենի մասին խոսք բացվելիս հազար ու մի հուշ է արթնանում իմ հոգում: Նա հինգ տարով մեծ էր ինձնից, սակայն մեծացել ենք մի թաղում, ուլեր ու զառներ ենք արածացրել միասին, նախիրը միասին ենք տարել հանդեր, ծնռանը Արեւսարի անտառից մեկտեղ ենք ցախ բերել շալակով: Մանկության ու պատանեկության տարիները մշուշի պես ելնում են մեր սարերն ի վեր, ու ես տեսնում եմ նրան՝ մեր առջեւից քայլելիս:

Նորենը ծնվել է 1925թ.: Ավարտել է գյուղի 7-ամյա դպրոցը եւ իրեն գտել կոլտնտեսականների շարքերում: Ժամանակին ծառայել է ԽՍՀՄ բանակի շարքերում, ամուսնացել իմ բարեկամուհու եւ դասընկերուհու՝ Ռոզայի հետ, տուն ու տեղ դրել, խելոք ու աշխատասեր զավակներ դաստիարակել:

Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտի հենց առաջին օրվանից դարձել է ազատամարտիկների թեւն ու թիկունքը:

Օգնել է դիրքերում կռվող տղաներին, զենք ու մթերքներ է հասցրել նրանց, խրախուսել, թելավորել: 1992թ. օգոստոսի 28-ին թուրքերն սկսեցին կատաղի հրետակոծել գյուղը, որի զոհը դարձավ Նորենը: Հոր վրա սգացին զավակները՝ Վլադիմիրը, Էլմիրան, կինը՝ Ռոզան, ամբողջ գյուղը:

Կյա՞նքը, թե նախախնամությունը հաճախ դաժան են գտնվում մարդկանց հանդեպ: Հոր զոհվելուց հետո 1992թ. դեկտեմբերի 13-ին հերոսաբար նահատակվում է Վալերիկը, աղջիկը՝ Էլմիրան, թշնամու հրետակոծության զոհ է դառնում 1993թ. հունիսի 17-ին: Իսկ Ռոզան՝ Մեծ հայրենականում զոհված իմ Գաբրիել քեռու աղջիկը, չկարողացավ տանել զավակների եւ ամուսնու կորուստը: Հիմա ամեն անգամ գյուղ գնալուց այցելում եմ նրանց գերեզմաններին եւ հուշերիս մշուշում տեսնում նրանց սրբացած հոգիները:

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ ՆՈՐԵՆԻ

1961 թվականը աչքալուսանքի տարի էր Նորեն Ամիրջանյանի ընտանիքի համար: Տղա էր ծնվել, կնքել էին Վալերիկ, որ հասակ էր առնում նահապետական լուսավոր ավանդույթներով ճամփա անցած օջախում: Վալերիկը նախ սովորում է հայրենի Ակնաղբյուրի ութամյա դպրոցում, ապա ավարտում հարեւան Ուխտաձորի միջնակարգը: Հորեղբայրների եւ հոր սովորույթներով սպասում էր, որ իրեն եւս կանչեն ծառայելու ԽՍՀՄ բանակի շարքերում: Եվ ծառայելու տարիներին ավելի է կատարելագործում վարորդի մասնագիտությունը, որ սովորել էր դպրոցում: Զինվորական ծառայությունն ավարտելուց հետո վերադառնում է գյուղ, աշխատում Հաղորթի կապի բաժանմունքում որպես վարորդ: Բոլորին օգնության էր հասնում նա, պատրաստ հարեհաս էր լինում բոլորի կանչին: Աղջիկները երագում էին սիրվել նրանից: Եվ ահա իր ընտրյալի՝ Առլետայի հետ ամուսնանում է Վալերիկը: Աշխարհ են գալիս երկու բալիկները: Ամիրջանյանների օջախը լցվում է ծափ ու ծիծաղով:

Վալերիկը հաճախ էր վրդովվում Ադրբեջանի ղեկավար շրջանների կողմից հայկական գյուղերի հանդեպ ծավալված ոտնձգություններից: Փակում էին հայերի ճանապարհները, պետական մթերումները եռակի էին հայկական գյուղերում, ազերիների գյուղամիջյան ճա-

Մնապարհները ասֆալտապատ էին, հայկականը՝ ոչ: Եվ երբ խոսք բացվեց Արցախի ազատագրական պայքարի մասին, նա հանգիստ չունչ քաշեց եւ բացականչեց. «Ժամանակն է, հետո ուշ կլինի»:

Վալերիկը ամենուրեք մասնակցում էր ճակատամարտերին, հասցնում էր զենք, սննդամթերք, նետովում էր մարտի՝ կրակի միջից փրկելու ազատության կապույտ թռչունը: 1992թ. դեկտեմբերի 13-ին թշնամական զնդակից խոցվում է նրա սիրտը, որ բաբախում էր հայրենիքի ազատության բաղձանքով:

Վալերիկը նմջում է հայրենի գյուղի գերեզմանոցում՝ սիրտը խառնած նրա սուրբ հողին եւ ազատ շնչառությամբ: Նրա կյանքը շարունակվում է հայրենի գյուղի, հարազատ Արցախի ընթացքի մեջ, իր զավակների՝ Կիմայի եւ Հայկի ձգտումներում: Կիման, որ սովորում է Երեւանի Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում, քայլելիս, ասես հայրն է սլանում, իսկ Հայկը՝ իսկ եւ իսկ հոր կրկնությունն է: Ահա այսպես ապրում է Վալերիկը որպես քաջության օրինակ:

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ ՆՈՐԵՆԻ

Էլմիրան դասարան էր մտնում ժպտադեմ: Երեխաները նրան դիմավորում էին ուրախ ու ակնածանքով, միշտ պատրաստ: Նրանք ձգտում էին նմանվել իրենց սիրելի ուսուցչուհուն: Էլմիրան մրցում էր ամուսնու՝ Յաշայի հետ՝ թե ով կարող է ավելի շատ ու ջերմ սիրվել աշակերտների կողմից: Էլմիրան եւ Յաշան ունեցան տղա՝ անունը կնքեցին Արարատ եւ աղջիկ՝ կոչեցին Արեւիկ: Երջանիկ էին, սիրահարված ուսուցչի՝ իրենց ընտրած գործին:

Էլմիրան ծնվել է 1949թ.: Նախ՝ ավարտել է հարազատ Ակնաղբյուրի 8-ամյա դպրոցը, ապա՝ հարեւան Ուխտաձորի միջնակարգը: Մանկավարժ դառնալու երազանքը Էլմիրային տարել է Բաքվի Վ. Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, ու ավարտել է մանկավարժության եւ տարրական կրթության մեթոդիկայի բաժինը՝ հասնելով իր նպատակին: Այս սկսվել են աշխատանքային տարիները, եւ նա մանկավարժի կարողությունները բացահայտել է հմտությամբ՝ որպես տարրական դասարանների դասվար:

1988թ. սկզբից Էլմիրան եւ ուսուցչական ողջ կոլեկտիվը խրա-

խուսել են իրենց սաներին, ոգելորել համազուղացիներին. թշնամու դեմ մարտնչել՝ ինչպես Վարդանանց պատերազմի զինվորյալները: Ազերիները չեն կարողացել մտնել գյուղ, սակայն հեռվից հրթիռակոծել են, ինքնաթիռներով ռմբակոծել: 1993թ. հունիսի 17-ին թշնամին ռմբակոծում է Ակնաղբյուրը: Ջոհվում է էլմիրան... Ամբողջ գյուղը, նրա գործընկերները, սաները, զավակները հրաժեշտ են տալիս սիրելի ուսուցչուհուն՝ արցունքի միջից շշմջալով. «Ապրելու ես, էլմիրա. քո հարազատների, քո բոլոր սաների սրտերում, նրանց վառ հիշողություններում»:

ԲԱԲԱՅԱՆ ԱՐԱՅԻԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

1975 թվականին աշխարհ եկավ մի մանչուկ, որին մանկաբարձուհիները կոչեցին հրաշամանուկ: Խոշոր, կապույտ աչքերով, իսկ եւ իսկ հայոց Արա արքան: Ծնողները խորհուրդ արին եւ անունը կնքեցին Արայիկ:

- Իմ որդին արքայի անուն ունի, այն էլ հայրենասեր արքայի, իմ տան սյունը պիտի դառնա,- ասում էր Ալեքսանդրը՝ դիմելով կնոջը՝ էլմիրային:

- Մոր կաթից հարցրու,- կատակում էր կինը, եւ երկուսով երջանկության զգացումով փարվում էին միմյանց, շոյուն մանկանը:

Օրերի հետ դյուցազմի պես հասակ նետեց Արայիկը, ավարտեց գյուղի 8-ամյա դպրոցը, ապա սկսեց աշխատել Ուխտաձորի պետական տնտեսությունում: 13 տարեկան էր, երբ 1988թ. շարժումն սկսվեց: Արայիկն ասես միանգամից հասունացավ շարժման թեժ քուրայում, արձագանքեց ազատագրական պայքարին: Նրան կարելի էր տեսնել միայն ազատամարտիկների շրջապատում: Արայիկին վրդովեցնում էր մի երեւույթ՝ կապված գյուղի դիմաց, աստղագնա բլրի գագաթին վաղ միջնադարում կառուցված հայոց Կավազ վանքի հետ, որ գրավել էին ազերի-թուրքերը եւ դարձրել կրակակետ:

Այդ բարձունքից ազերի-դիպուկահարները հաճախակի կրակում էին խաղաղ բնակիչների վրա, որի հետեւանքով զոհվում էին անմեղ մարդիկ:

Պատանի տարիքից Արայիկը կռվող ազատամարտիկների շարքում էր, գյուղի պապենական «Քարաբանդ» կոչվող դիրքերում հսկում էր Հադրութի շրջկենտրոն տանող ճանապարհը, որ ձգտում էին գրավել թուրքերը: Մասնակցել էր մի քանի ճակատամարտերի: 1993թ. ապրիլի 5-ին, ինչպես ասում են, դանակը ոսկորին էր հասել: Հարկավոր էր ազերիների գրաված Կավագ վանքը ազատագրել եւ բացել Ֆիզուլի քաղաքը տանող արեւմտյան ճանապարհը: Արայիկն ազատամարտիկների հետ շրջանցում կատարեց, հասավ վանքի մատույցներին, մոտեցավ սրբավայրին: Անսպասելիորեն դարանակալած թշնամու գնդակից զոհվեց նա՝ հոգով միանալով այն քաջ նահատակներին, ովքեր անմահացել են, որպեսզի ազատագրված ժողովրդի ճանապարհին միշտ օրհնանք դառնա մեր պապերի կառուցած սրբատունը՝ Կավագ անունով: Արայիկը չի մոռացվում, նախ նա ծուլվել է հայրենի Արցախի պատմությանը եւ ապա՝ երգ դարձել իր չորս քույրերի եւ չորս եղբայրների շուրթերին, որոնցից ծնված բալիկները նոր Արայիկներ են՝ թեւավոր ու հպարտ, ինչպես քաջն Արայիկ-Արան:

ԲՐՈՒՏՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈՒՐԵՆԻ

1941թ. ամռանը՝ Հայրենական մեծ պատերազմի ակտիվ օրերին, ռազմաճակատից Սուրեն Բրուտյանը եռածալ մի նամակ էր հղել կնոջը՝ Աննուշկա Բրուտյանին, որտեղ գրված էր. «Սիրելի Աննուշկա, այսօր լրանում է մեր Ալեքսանդրի 10 տարին: Այդ առթիվ շնորհավորում, համբուրում եմ եւ մեր բալիկին, եւ քեզ, իմ թանկագինս: Եթե ստացվի այնպես, որ չվերադառնամ պատերազմից, մեր Ալեքսանդրը կշարունակի վառ պահել մեր օջախի ճրագը: Չլացես, թանկագինս, պատերազմում չամիչ չեն բաժանում, լինում են եւ զոհեր»:

Ավարտվեց Մեծ Հայրենականը, մայիսի հաղթական 9-ը ժպտաց: Տարիների հետ հասակ առավ, առնականացավ Ալեքսանդրը, եղավ աշխատասեր իր հոր՝ Սուրենի նման, որ կյանքը նվիրել էր Մեծ հաղթանակին: Ալեքսանդրն ավարտել է դպրոցը, կյանքը կապել հայրենի գյուղի հետ, դարձել համայնքի բրիգադիրը, վաստակել սեր ու հարգանք: Արցախյան շարժման առաջին օրերից իսկ համագյուղացի տարեց ընկերների հետ մեկտեղ իր նպաստն է

բերել գյուղի ինքնապաշտպանությանը: Եղել է դիրքերում, զինվորյալներին հասցրել է զենք, հաց, ջուր, եւ ինքն էլ, որ ժամանակին ծառայել է ԽՍՀՄ բանակի շարքերում, դիպուկ կրակով պատասխանել է թշնամու ոտնձգություններին:

1992թ. օգոստոսի 28-ին Ալեքսանդրը զոհվեց հայրենի գյուղի ինքնապաշտպանության դիրքերում՝ իր անունը թողնելով հարազատ ժողովրդի նվաճած հաղթանակի արշալույսի ծփանքներում:

Նրան չի մոռանում գյուղը, որի դեկավարն այսօր զոհյալ Ալեքսանդրի որդին է՝ Արթուրը, որ շարունակում է հոր գործը, վառ պահում հոր օջախը:

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՅԱՇԱ ՇԱՅԵՆԻ

Յաշայի տունը գյուղի ծայրին է, երբեմնի կալատեղում, որտեղից երեւում են Ակնաղբյուրի հանդերձն ու դաշտերը, սարերն ու անտառները: Բայց ամենից հմայիչը Յաշայի տնամերձ այգին է, որ մշակվել է իր ձեռքերով, որի մրգատու ծառերի յուրաքանչյուր ճյուղ ու շիվ զգացել է իր տիրոջ մատների փայփայանքը: 1935թ. ծնված Յաշան մարմնով ու հոգով երիտասարդ էր մնում, հոգնություն չէր զգում: «Գյուղացին իրավունք չունի հոգնելու, ծույլ աշխատավորին հողը բերք չի տալիս», - ասում էր նա եւ օրնիբուն հանգիստը գտնում վաստակի մեջ:

Յաշան պահում էր գյուղի նախիրը, համագյուղացիների անասուններին խնամում էր՝ ինչպես իր սեփականը: Եվ դա գիտեին բոլորը, ուստի, հարգանքով էին վերաբերվում նրան:

Արցախյան ազգային գոյամարտի հենց առաջին օրերից Յաշան ավելի ուշադիր դարձավ կթան անասունների հանդեպ: «Կռիվ է, շրջափակման մեջ ենք, երեխաները թացան պիտի ունենան», - ասում էր նա եւ նախիրը տանում արածացնելու խոտառատ դաշտերում: Յաշան ի՛նչ իմանար, որ ազերի թուրքը զենք էր ուղղելու բոլոր հայերի դեմ՝ զինված են՝ թե անզեն: Եվ ահա, 1991թ. սեպտեմբերի 9-ին գյուղի դիմացի արոտավայրում իր որդու՝ Յուրայի հետ նախիրն արածացնելիս նկատում է զինված ազերիներին: Առաջին պահին նա չէր տազնապել, չէ՞ որ ինքն իր որդու հետ զբաղված է խաղաղ աշխատանքով: Սակայն ազերի-թուրքերի աչքերը

Վարյամբ էին լցված: Նրանք տեղնուտեղը ինքնաձիգի կրակահերթով սպանում են եւ Յաշային, եւ որդուն՝ Յուրային: Բոթը հասնում է գյուղ: Համագյուղացիներն իրենց առաջին զոհերին հանձնում են մայր հողին եւ միահամուռ երդվում՝ վրեժխնդիր լինել թշնամուց:

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՅՈՒՐԱ ՅԱՇԱՅԻ

Այդ օրը հայրը՝ Յաշան, դիմել էր որդուն. «Յուրա, այսօր հանգստացիր, ես մենակ նախիրը կարածացնեմ, գյուղից հեռու չեմ տանի»: Որդին լսել էր եւ պատասխանել. «Հայրիկ, մենակ չեմ թողնի քեզ, կիսատ գործը երեկոյան կկատարեմ»: Հայրը չէր առարկել: Եվ աշնանային ոսկեգույն այդ օրը՝ 1991թ. սեպտեմբերի 9-ին, հայր ու որդի գյուղի նախիրը տարել էին դիմացի հանդը, որտեղից հստակ երեւում են բոլոր տները:

- Յուրա, ինչպես տեսնում եմք, քանի գնում, ազերիներն ավելի կատաղի ու սանձարձակ են դառնում: Խաղաղ ճանապարհով ոչ մի հարց չի լուծվի:

- Հայրիկ,- պատասխանում է Յուրան,- իհարկե, ամեն ինչ պարզ է, թուրքերը մեր բոլոր ճանապարհները փակել են, այդ նշանակում է, որ պատերազմը թեժանալու է:

- Ճիշտ ես ասում, որդի, մնում է զինվել, բայց ո՞վ է մեզ զենք տվողը, զենքը թուրքերի ձեռքին է:

Հենց այս գրույցի վրա մի քանի զինյալ թուրքեր օդակի մեջ են առել նախրապան հորն ու որդուն:

- Այ գյաղա,- թուրքերից մեկը դիմել է Յուրային,- որտե՞ղ է զենքդ, թաքցրե՞լ ես:

- Ես զենք չունեմ, իմ զենքը այս մահակն է,- պատասխանել է Յուրան:

Եվ մինչեւ Յաշան կբացատրեր, որ իրենք խաղաղ բնակիչներ են, ազերի թուրքերից մեկը ինքնաձիգից բացել է կրակահերթը հոր եւ որդու վրա:

Բոթը գյուղ հասցնելուն պես համագյուղացիները հասել էին նրանց: Ազերի-թուրքերն արդեն ծլկել էին: Ամբողջ գյուղը կսկիծով հողին է հանձնել Յաշային ու Յուրային եւ երդվել. «Մենք կլուծենք ձեր վրեժը, ննջեցե՛ք խաղաղ, կգա հատուցման ժամը»:

ԲՈՐԻԿ ՍԵՐԳԵՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ԿՆՈՋ՝ ԶԻՆԱՅԻ ՅԵՏ

Բորիկի մանկությունը հիշելիս մեր գյուղի կենտրոնում վեր հառնած դարավոր թթենին է շրշում իմ խոհերում: Այդ թթենին իրենց բակում էր, որ ծառայում էր տարբեր միջոցառումների գովազդներին: Յամերգ լիներ թե ներկայացում՝ գովազդը փակցնում էինք ծառի հաստ բնին: Խողովակներով Կարաս աղբյուրից գյուղ բերած ջրի մի ծորակը հենց այդ թթենու տակ էր: Անցնողները կամ ջրի եկողները առաջին հերթին գովազդը տեսնելուն պես կարդում էին. «Այսօր ակումբում տեղի կունենա արեւելյան ճոխ համերգ՝ գյուղական համույթի ուժերով»: Գրողը ես էի, ես էի նաեւ համույթի ղեկավարը: Անդամներն էին քեռուս տղան՝ Վանյան, քույրը՝ Վերան, դասընկերս՝ Եղիշեն, ես եւ իմ աչքադրած աղջիկը՝ Սրբուհին»: Յամերգն ստացվում էր: Խաղացանկում մտցնում էինք նվագ, երգ, պար, արտասանություն: Գյուղի հաշվապահը՝ Մեծ հայրենականի մասնակից Բենիկ Աղասյանը, իմ կոլտնտեսային գրքույկում յոթ աշխօր էր գրում յուրաքանչյուր համերգի համար: Եվ քանի որ գովազդը փակցնում էինք Բորիկենց թթենուց, պահ էինք տալիս նրան, որ հսկի, չարածճի երեխաները հանկարծ չպուկեն: Փոխարենը համերգի ժամանակ իրեն տրամադրում էինք առաջին նստարանի առաջին տեղը:

Բորիկն ավարտել էր գյուղական դպրոցը, հյուսնություն էր անում: Կյանքը նրան տեղափոխեց Ստեփանակերտ. աշխատում էր կահույթի ֆաբրիկայում: Տուն ստացավ՝ Ազատամարտիկների փողոցի վրա, ուղիղ իմ տան դիմաց: Նա իմ Խաչի պապի եղբոր թոռն էր եւ քաղաքում իմ լավ բարեկամներից: Գնալ-գալ կար: Երբ սկսվեց Արցախյան պատերազմը, հանդիպում էր ինձ եւ խնդրում, որ զգույշ լինեմ, որովհետեւ քաղաքը անընդմեջ հրթիռակոծվում եւ ռմբակոծվում էր եւ Շուշիից, եւ Աղզամի կողմերից:

1991թ. քաղաքը ուժգին հրթիռակոծվեց: Մեկ ժամ անց խաղաղվեց: Բոթը տարածվեց, որ բանվոր Բորիկ Գրիգորյանը եւ կինը՝ Զինան, զոհվել են հենց իրենց տան աստիճանների վրա: Սգացինք, ափսոսացինք, թշնամուն անիծեցինք...

Բորիկի եւ Զինայի մահից հետո մեր սփոփանքը եղավ այն, որ մերոնք ազատագրեցին Շուշին: Բորիկը եւ Զինան այդ էին երագում:

ԽԱՆՅԱՆ ՓԱՌԱՆՁԵՍ ԱՌԱՔԵԼԻ

Փառանձեմ Խանյանն իմ հորեղբոր՝ Յովհաննես Խանյանի կինն էր: Ինչպես ընդունված էր մեր գյուղում եւ մեր օջախում, նրան կոչում էինք Փառանձեմ տյոտյա: Մեծ-մաման մայրս էր, որովհետեւ Խաչի պապիս երեք տղաներից մեծը հայրս էր: Խաչի պապիս տղաներն են՝ Աղալարը, Եփրեմը, Յովհաննեսը: Այսպես՝ Եփրեմ անու զավակները՝ Վանյան, Մանյան, Յաշան, Պավլուշան, Սվետան, Յովհաննես հորեղբորս որդիները՝ Թամարան, Քնարիկը, Ապրեսը, Էլմիրան, Արշալույսը, մորս անվանում էին Մեծ-մամա, մեր ընտանիքի երեխաները՝ Սուրենը, Օլյան, ես, Արտաշեսը, Գրետան՝ Եփրեմ անու կնոջը կոչում էինք կիճի մամա, իսկ բոլորս միասին մեր կրտսեր հորեղբոր կնոջը կոչում էինք Փառանձեմ տյոտյա: Փառանձեմ տյոտյան եւ տան հարսերից փոքրն էր, եւ կարճահասակ, ուստի ասում էինք՝ Փառանձեմ տյոտյան ոսկու կտոր է: Յորեղբայրներս՝ Եփրեմը եւ Յովհաննեսը, ավագ եղբայրս՝ Սուրենը, մասնակցել են Մեծ հայրենականին: Ռազմաճակատից վերադարձել են հորեղբայրներս՝ ծանր վիրավորված, եղբայրս կյանքը նվիրել է ժողովուրդների ազատությանը: Եվ մեր օջախում հավասարապես ափսոսում էին բանաստեղծ եղբորս կորուստը: Ինձ շատ էր սփոփում Փառանձեմ տյոտյան, մեր տոհմի ոսկու կտորը, ոսկի՝ հոգով, սրտով:

Գյուղում, երբ սկսվեց ազատագրական պայքարը, ոչ ոք հեռու չգնաց: Ձոռեր եղան, հրետակոծությունից, ռմբակոծությունից շենքեր վառվեցին, բայց միեւնույն է, ոչ ոք չլքեց գյուղը: Եվ մի օր՝ 1993թ. ապրիլի 18-ին, թշնամու ինքնաթիռը Արեւսարի թիկունքից խուժում է հայրենի գյուղի օդային տարածքը եւ ռմբակոծում: Ավագ քույրս՝ Օլյան, պատմել է, թե ինչպես ինքը կանչել է Փառանձեմ տյոտյային, որ պառկի գետնին, սակայն հորեղբորս կինը միանտորեն ասել է. «Օլյա, մենք ինչ ենք արել, որ մեզ վրա ռումբ նետեն»: Յենց այդ պահին կես տոննանոց ռումբը պայթել է մեր բակում: Քույրս՝ Օլյան, փրկվել է, իսկ անմոռանալի Փառանձեմ տյոտյան, 80-ամյա մեր սուրբ տյոտյան զոհվել է ռումբի բեկորից: 1993թ. մայիսի 23-ին գրել են բանաստեղծություն «Կորուստ» վերնագրով: Ստորեւ բերում են այդ վշտալի խոսքը.

Ես գնում եմ դեպի այգին,
Այգին դեպի ինձ է գալիս,
Հորեղբայրս չկա անգին,
Թթենին է մահը լալիս:
Ես գնում եմ դեպի բակը,
Բակը դեպի ինձ է գալիս,
Ցավ է կարդում ծիծեռնակը,
Խնձորենին վիշտ է լալիս:
Վիրավոր է կեռասենին,
Բալենին են թրահատել,
Թշնամական ռումբերից
Հորեղբորս կինն է մարել:
Բարդին ցավից լուռ կորացած
Տերերին է հիշում բարի,
Մեկի սիրտը չդիմացավ,
Մեկին խոցեց ռումբը չարի:
Տուն ու պարտեզ կրակ սրտով
Նրանց հուշն են պահում հիմա,
Տեսք ո՞ւմ են զոհում զենքով,
Ի՞նչ է խորհում աշխարհն հիմար:
Իմ հոր ու մոր կարոտները
Ես նրանցից էի առնում,
Սիրտ իմ, ասա, անվերադարձ
Այս կորուստը ո՞նց ես տանում:

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՊՐԵՍ ՄԻՔԱՅԵԼԻ

1966թ. ակնաղբյուրցի Միքայել Հովսեփյանի օջախում աշխարհ եկավ մի մանչուկ՝ արեւաչ, աստղաժպիտ: Միքայելը երջանկության զգացումով մոտեցավ նորածնին եւ կնոջը՝ Սանյային ասաց. «Եթե Մեծ հայրենականում չզոհվեր հայրս, վերադառնար մարտադաշտից, խորհուրդ կտար իր թռռան անունը կնքել՝ Ապրես, որովհետեւ այս անունը շատ էր սիրում»: Եվ մանչուկին կոչեցին Ապրես: Միքայելը, որ գյուղում հայտնի է որպես հմուտ շինարար, ամենուրեք հպարտությամբ ընդգծում էր, որ իր տղան իսկական դյուցազուն է դառնալու:

Ուշիմ երեխա էր Ապրեսը, ավարտեց Ուխտաձորի միջնակարգ դպրոցը, կոլտնտեսային եւ առտնին աշխատանքներում օգնում էր ծնողներին: Ապա ծառայեց նախկին ԽՍՀՄ բանակում եւ առնականացած, բաց ճակատով, մաքուր խղճով վերադարձավ հայրենի գյուղ: Քույրը՝ Կատերինան, ամուսնացել եւ ապրում էր Հաղորթի շրջկենտրոնում, ուստի Ապրեսն աշխատանքի անցավ Հաղորթում՝ գտնվելով քրոջ ուշադրության կենտրոնում:

Ապրեսը աշխատանքային ընկերների հետ 1980-ական թթ. հաճախ էր զրույցի մեջ մտնում Արցախի ապագայի մասին: Նա տեսնում էր, որ շատ արագ հայաթափվում է երկիրը եւ ընդհակառակը՝ կտրուկ աճում է ազերի-թուրքերի թիվը: Ահա թե ինչու նա անմիջապես լծվեց Արցախյան ազատագրական պայքարին, ապա դարձավ արցախյան բանակի զինվոր՝ ձեռք բերած ռազմական գիտելիքներն ու փորձն օգտագործելով կռվի դաշտում: Նա վստահ էր, որ շուտով հաղթանակով կավարտվի պատերազմը, տուն կգա, կփայփայի իր երկու զավակներին՝ տղային եւ աղջկան: Բայց, ավաղ... 1993թ. օգոստոսի 15-ին, հերթական անգիջում ճակատամարտի թեժ պահին թշնամու գնդակից դադարեց բաբախել մարտիկի սիրտը: Նա ծուլվում է հողին, որի համար Բեռլինի մատույցներում զոհվել է պապը, իսկ այսօր ինքն է փրկում իր արյամբ, որ ազատագրվի հայրենի օջախը, որ հասակ առնեն սիրելի զավակները եւ հպարտությամբ ասեն. «Մեր ազատամարտիկ հայրը՝ Ապրես անունով, իր արյամբ փրկել է Արցախը, որ ժողովուրդն ապրի դարեդար»:

ՄԻՐԶՈՅԱՆ ԳԵՈՐԳԻ ԱՐՇԱԿԻ

Ակնադբյուր գյուղի դիմագիծը ներկայացնող այրերից էր Գեորգին: Ասում են՝ հայերը Տիգրան Մեծի օրոք եղել են կապույտ աչքերով, ոսկեգույն մազերով, հաղթալանջ ու զորեղ: Գեորգին այս իրողության վկայությունն էր: Դժվարին մանկություն է ունեցել նա: Հորից զրկվել է վաղ, եւ ընտանիքի հոգսը ընկել է մոր՝ Շահբագ տյոտյայի ուսերին: Չորս երեխաների տեր մայրը կատարել է կոլտնտեսության ամենաձանր աշխատանքները: Ինչպես ասում են՝ մի ոտքը եղել է գյուղում, մեկը՝ Քիրսի լանջերին, երբ ամառվա ամիսներին կոլտնտեսության կովաբուժական ֆերման տանում էին արոտի:

Գեորգիի մանկությունը իմ սերնդի մանկության հետ է անցել: Ընդամենը ինձնից փոքր է եղել երկու տարով: Ընտանիքի մեծը Հայկուշն էր, ապա՝ Վանյան: Իսկ Ռայան սովորում էր ինձ հետ միեւնույն դասարանում: Ընդհանրապես մեր Ակնաղբյուրը փոքր գյուղ է, բոլոր ընտանիքները կամ արյունակից բարեկամներ են, կամ խնամիներ: Այդպես էլ Գեորգիենց ընտանիքն էր: Ասենք՝ Հայկուշը իմ Քրիստափոր ամուսինն է, Քրիստափոր ամին մեր տոհմի շիվերից է, միաժամանակ իմ Եփրեմ հորեղբոր աներծագը: Ահա թե ինչու գյուղական աշխատանքները կատարելիս միասին էինք ճաշում, ով ինչ ուներ, դնում էր մեջտեղ, եւ միասին ճաշակում:

Հիմա երբ Գեորգին չկա, սրտի ցավով հիշում եմ այդ ամենը, հիշում եմ նրա ոսկե ձեռքերը. հյուսն էր: Գեորգին ծնվել է 1932թ.: Գյուղում բոլորը նրան դայի էին ասում՝ ելնելով ծանրակշիռ նրա բնավորությունից ու խոհեմությունից:

1992թ. մայիսի 8-ին, երբ մեր մարտիկները ազատագրել էին Շուշին, թուրքերն ավելի էին կատաղել: Ֆիզուլիից սկսել էին ուժգին հրետակոծել հայկական բնակավայրերը, ինչպես նաեւ մեր գյուղը: Հրթիռների տարափից հողը ցնցվել էր: Գեորգին, որ անվախ էր, վազում է տնամերձ այգին, որտեղ աշխատում էր կինը՝ Մարիետան: Եվ ամուսինները նույն ժամին զոհվում են իրենց բակում: Տարիներ են անցել: Գեորգիի եւ Մարիետայի չորս տղաներն ու աղջիկը տուն ու տեղ են դրել, բայց սրտերի ցավը չի անցնում: Տղան՝ Աշոտը, շարունակում է հոր արհեստը, յուրաքանչյուր անգամ ասելով՝ հայրս ինձանից լավ վարպետ էր: Այդ ասել է թե՛ ապրում է Գեորգին, մեր գյուղի հարգված ու պաշտելի դային:

ՄԻՐՁՈՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ ՄԱԴԱԹԻ

Մարիետան մեր հարեւան Քյուրաթաղ գյուղից էր: Գեորգիից ուղիղ հինգ տարով փոքր: Նրանք ծանոթացել են դպրոցի ճանապարհին: Ի միջի այլոց, մեր հարեւան Քյուրաթաղ, Հախուլլու, Ակնաղբյուր գյուղերի երեխաները տարիներ առաջ յոթնամյա կրթություն ստանալուց հետո գնում էին Էդիլլու (Ուխտաձոր), միջնակարգում շարունակում ուսումը: Այդպես մեծամասամբ առաջին սիրո հաճույքն ու երազանքը սկիզբ էր առնում հենց այդտեղ:

Մարիետայի եւ Գեորգիի ամուսնությունը աստվածային երանգ-

Մեր է ունեցել: Իրար հետեւից աշխարհ էին եկել նրանց չորս տղան եւ աղջիկը՝ գեղեցիկ, առողջ:

Արցախյան գոյապայթարն ամբողջ ընտանիքն ընդունել է որպէս մաքառում՝ իրենց իսկ սեփական ազատության համար: Ինչպէս գյուղի տարեց մարդիկ, այնպէս էլ Գեորգին, օգնում էր ազատամարտիկներին, դիրքեր տեղափոխում գեմք, մթերքներ: Իսկ Մարիետան չէր մոռանում պայուսակում դնել թարմ հաց ու պանիր, միրգ ու բանջարեղեն՝ իրենց իսկ բանջարանոցից:

1992թ. մայիսի 9-ը Արցախ աշխարհի հաղթանակի օրն էր: Լուրը հասել էր նաեւ Ակնաղբյուր: Չնայած ծանր կորուստներին, գյուղացիները ազատ շունչ էին քաշել. վերջապէս մերն էր հինավուրց հայաշունչ Շուշին: Եվ ահա, այդ համաժողովրդական ուրախության պահին թուրքերը Ֆիզուլիից սկսում են հրթիռակոծել գյուղը: Հրթիռներից մեկն ուղիղ պայթում է տնամերձ այգում, ուր աշխատում էր Մարիետան: Տան բակից ամուսինը՝ Գեորգին, վազում է իմաց տալու, որ Մարիետան շտապի տուն: Սակայն հենց այդ պահին էլ զոհվում են երկուսով: Նրանք չեն մոռացվի երբեք, չեն մոռացվի ոչ առասպելական հայուհի Մարիետան եւ ոչ էլ Գեորգին՝ ոսկե մատներ ունեցող դային:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌԻՍԱ ՄԵԼԻՔՍԵԹԻ

Ամեն անգամ՝ երբ գյուղ էի գնում, Ռիման, որին Ռեմսիկ արքա էինք կոչում, խնդրում էր, որ արտասանեմ մորս հիշատակին գրած բանաստեղծությունս: Իմ մոր հորեղբոր աղջիկն էր Ռիման՝ բարի, ինչպէս աղավնի, երգեցիկ, ինչպէս զարնամախոս սարյակ: Ամուսինը՝ Ալեքսանդր Պետրոսյանը, գյուղի հսկաներից մեկը, պաշտում էր Ռիմային եւ ժպտաղեմ լսում նրա հորդորները: Ես արտասանում էի «Մորս հիշատակին» բանաստեղծությունը.

*Ես որոնում եմ, որոնում եմ քեզ,
Սակայն դու չկաս մայրերի շարքում,
Սիրտս լցվում է անպոտ օրվա պես,
Եվ արտասվում եմ բոլորից թաքուն:
Թռռդ հարցնում է. «Տատիկս ո՞ւր է»,
Ասում եմ. «Գնաց, որ արեւ բերի»:
Ես քեզ դարձնում եմ հեքիաթի հերոս,
Որ նա հավատա, որ նա համբերի:
Ես իմ հորինած հեքիաթի մեջ էլ*

*Որոնում եմ քեզ, սակայն դու չկաս,
Իսկ սիրած թոռդ սպասում է դեռ,
Որ արեն ուսիդ շուտով պիտի գաս:*

Ռեմսիկ աքան լսում էր հուզված, արտասվում եւ գոհունակութեամբ ժպտում արցունքի միջից:

Կյանքի առեղծվածները ինչքան են բարդ: Ես ի՞նչ իմանայի, որ 1993թ. գարնանը նրա համար իմ արտասանությունը լինելու էր վերջինը, ի՞նչ իմանայի, որ ընդամենը 3 ամիս անց՝ օգոստոսի 6-ին պիտի իմ Ռեմսիկ քույրիկը զոհվի թշնամու ռմբակոծությունից, իմ Ռեմսիկ անմեղ ու աստվածային աքան, որի 75-ամյակը պիտի լրանար 6 ամիս անց եւ պիտի նշեինք տնով-տեղով, հարազատներով: Հիմա, երբ գյուղ եմ գնում, սիրտս մղկտում է, չկան ոչ Ռեմսիկ աքան, ոչ ամուսինը՝ Ալեքսանդրը, որին ասում ենք Սանթուր դայի եւ ոչ էլ Ալյոշան՝ նրանց որդին, որ զոհվել է Արցախյան զոյամարտում: Մնում է նրանց շիրմաքարերին մոտենալ լուռ ու խոնարհ եւ շշնջալ. «Չենք մոռացել Ձեզ... Դուք չեք մոռացվի»:

ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԼՅՈՇԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Ալյոշա Պետրոսյանն ամեն անգամ ընկերների հետ դիրքերը մեկնելիս կրկնում էր Սերո Խանգադյանի «Մխիթար Սպարապետ» պատմավեպի ընդգծված խոսքը. «Թուրքին մի հավատա»: Ասում էր եւ այդ խորհուրդը ընդգծելու համար ավելացնում. «Գասպարյան Յաշան եւ որդին՝ Յուրան, գյուղի նախիրն էին պահում, ի՞նչ վնաս էին հասցրել ազերիներին, որ հենց գյուղի դիմաց ինքնաձիգի կրակահերթով գնդակահարեցին նրանց»: Ասում էր եւ ավտոմատը կրծքին սեղմում որպես վրիժառության նշան:

Ծնվել է 1939թ.: 50-ին մոտ էր նա, երբ սկսվեց Արցախյան շարժումը: Ազատագրական պայքարին զինվորագրվել էր ողջ գյուղը: Տարիքը նշանակություն չուներ: Տարեցները գենք ու սննդամթերք էին տանում դիրքերը, գիշերում այնտեղ, հաճախ էլ մարտի մեջ մտնում թշնամու դեմ: Հաղթահասակ Ալյոշան կացնի մի հարվածով կարող էր գետնին տապալել հաստաբուն կաղնին: Պատերազմի օրերին էլ նա ազատամարտիկներին հիացնում էր իր ֆիզիկական եւ կամքի ուժով:

Արցախյան բանակի յուրաքանչյուր հաջողություն հրճվանք էր առաջացնում նրա հոգում: Հարազատ գյուղի պետական տնտեսության առաջավոր աշխատողը այժմ մասնակցում էր հայրենի Արցախի ազատագրության սրբազան գործին: Նա հասցնում էր եւ

ազատամարտիկի իր պարտականությունը, եւ գյուղատնտեսական որոշ աշխատանքներ:

Ամառային օրերին ինչպես համագյուղացիները, այնպես էլ Ալյոշան, խոտհարք էին կատարում, անասունների համար ձմեռվա պաշար էր պետք: Կինը՝ Վիկտորիան, միշտ հիշեցնում էր ամուսնուն. «Ալյոշա, զգույշ, ակամներ կան դաշտում»: Այս անգամ կարծես ճակատագիրը կատակեց Ալյոշայի հետ: 1993թ. հունիսի 13-ին գյուղի դիմացի տարածքում խոտ հնձելիս ակամի պայթյունից զոհվում է Ալյոշան՝ թողնելով ազատամարտիկի մի անմոռաց հուշ, ընտանեկան օջախի անմարում կրակի շող, հայրենի գյուղի մարտական ոգին միշտ վառ պահող զինվորյալի անկտորում կամք:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍՎԵՏԱ ՄԵՍՐՈՊԻ

Սվետան հարս էր եկել իր ընտրությամբ, եկել էր Արցախի հին մելիքական Տող գյուղից՝ բերելով Գտիչ վանքի փեշերի գեղեցկությունը, Տողասարի ամրությունն ու դժվարությունները հաղթահարելու վճռականությունը: Հիրավի, հմայիչ էր Սվետան, եւ նրա հմայքը քառապատկվեց, երբ ամուսնու՝ Արմենի հետ Պետրոսյանների տոհմին, Ակնաղբյուր գյուղին պարգեւեց մեկ աղջիկ եւ չորս տղա, - մեկը մյուսից աշխույժ ու գեղեցիկ:

Սվետան չէր ընկրկում կոլտնտեսային աշխատանքների ծանրության առջեւ: Քաղիան էր անում, խաղողայգի մշակում, մի խոսքով՝ ձեռքովն ամեն ինչ գալիս էր: Հենց այդ կարողությունների շնորհիվ էլ նրան հանձնվեց գյուղական խանութի վարիչի պաշտոնը: Այստեղ էլ նա արդարացրեց իրեն: Շրջկենտրոնից լինելը թե՛ Ստեփանակերտից, ինչպես ասում են, ամեն ինչ քաշում-բերում էր խանութ եւ բավարարում գյուղացիների պահանջները: Նույնիսկ այն դժվարին օրերին, որ կապված էր ազատագրական շարժման հետ, նա հասցնում էր բնակչության համար առաջին անհրաժեշտության ապրանքները: Սակայն, ավա՜ղ, նրա կյանքը տեւեց մինչեւ 1992թ. դեկտեմբերի 13-ը: Ողբերգական է այդ օրը... Թշնամական հրետակոծությունից զոհվեցին եւ Սվետան, եւ տղան՝ Սարոն, եւ հարսը՝ Ռիման:

Գրելով այս մասին, խորհեցի՝ ինչո՞ւ մեր ժողովրդին տրվող խաղաղ ու ազատ կյանքը այսքան ծանր է նստում, ինչո՞ւ... Մնում է միայն աղոթել.

**Աստված, աջդ հավերժ պահիր գյուղիս վրա.
Մեղք է գյուղս... վիրավոր է սիրտը նրա:**

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍԱՐՈ ԱՐՄԵՆԻ

2005թ. հարազատները կնշեին Սարոյի ծննդյան 45-ամյակը: Տղան ու աղջիկը ուրախությամբ կշնորհավորեին հորը եւ իրենց մորը՝ Ռիմային կասեին. «Մայրիկ, հայրիկն ասես 25 տարեկան է, այլ ոչ թե 45»: Մայրը կժպտար եւ կպատասխաներ. «Ճիշտ եք նկատել, բալիկներս, ձեր հայրիկը երբեք էլ չի ծերանալու»: Սակայն, ավա՛ղ, այսօր Սարոյի եւ Ռիմայի զավակները միայն ու միայն հիշում են իրենց ծնողներին, որոնք 1992թ. դեկտեմբերի 13-ին զոհվեցին ազերիների հրթիռակոծումից: Դաժան էր տեսարանը, դաժան էին ժամանակները, թշնամին՝ կատաղի ու չարամիտ:

Սարո Պետրոսյանը աշխույժ մանկություն ու թեժ պատանություն է ունեցել: Հայրը՝ Արմենը, միշտ ասում էր. «Մեր Սարոն եռացող մաճառ է, բայց բարի սիրտ ունի»: Հիրավի, այդպիսին էր Սարոն: Ծնվել է 1960թ., ավարտել է, նախ՝ հարազատ Ակնաղբյուր գյուղի 8-ամյա դպրոցը, ապա, 1977թ.՝ Ուխտաձորի միջնակարգը: 1978-80թթ. ծառայել է ԽՍՀՄ բանակի շարքերում, ապա աշխատանքի անցել Երեւանում: 1988թ. Արցախյան շարժման կանչով վերադարձել է գյուղ, մասնակցել ազատագրական մարտերին՝ որպես հմուտ սակրավոր: Հավատով էր լցված նա Արցախի վերջնական հաղթանակի հանդեպ: Բայց 1992թ. դեկտեմբերն անսիրտ գտնվեց: Թշնամու հրթիռակոծման զոհը դարձավ ոչ միայն Սարոն, այլեւ նրա սիրելի կինը՝ Ռիման: Ծանր է նույնիսկ վերհուշը: Սակայն կա սփոփանք, դա այն է, որ այսօր իր ազատության ճանապարհով է ընթանում եւ հայրենի Արցախը, եւ հարազատ գյուղը...

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌԻՄԱ ԱՊՐԵՍԻ

Արմեն Պետրոսյանը մի օր հիացմունքով նայեց տղայի՝ Սարոյի թիկունքին, հմայվեց քայլվածքով եւ դիմեց կնոջը. «Սվետա, Սարոյի ամուսնանալու ժամանակն է, իմացիր, տես՝ աչքադրած աղջիկ ունի՞, թե՛ ոչ»: Սվետան հաճույքով լսեց ամուսնուն եւ պատասխանեց. «Արմեն, վերջերս եմ նկատել, Սարոն անտարբեր չէ մեր Ապրեսի աղջկա՝ Ռիմայի հանդեպ»: Սվետան նկատի ուներ իր ծննդավայր Տող գյուղի բնակիչ Ապրեսի աղջկան: Եվ նշանդրեք եղավ, եղավ հարսանիք: Տողից միչեւ Ակնաղբյուր հնչեց զուռնա-դիլի ձայնը, եւ տարիների ընթացքում Ռիման Սարոյին նվիրեց իր նուրբ սիրտը եւ հինգ երեխաներին: Գոհ էին բոլորը: Ռիման համեստ

Իհարս էր, քնքույշ մայր, սիրող ամուսին: Նա եւս հույսով էր վերաբերում Արցախյան ազատագրական պայքարին: Երբ լսել էր, որ հայրենի Տողը մաքրվել է ազերի զավթիչներից, ցնծությամբ բացականչել է. «Փրկվեց մելիքական գյուղս, մաքրվեց թուրք հրոսակներից»: Սակայն Ռիմայի կյանքը երկար չտևեց: 1992թ. դեկտեմբերի 13-ին թշնամու ձեռնարկած հրետակոծությունից զոհվեց ամուսնու՝ Սարոյի, սկեսրոջ՝ Սվետայի հետ:

Հիմա արցունքոտված մեր սրտերում ենք տեսնում նրանց անմոռաց պատկերները: Իսկ ես ցավով հարցնում եմ.

*Այսքան կեղծիքն ու դավը
Մենք ինչպե՞ս տարանք,
Հազարամյա մեր ցավը
Հանուն ինչի՞ առանք:
Մեր ո՞ր մեղքի համար է
Այս տառապանքը,
Աստվածն է խորթ ու համառ,
Թե՞ մեզ խաբել է կյանքը:*

ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՎԱՀԱԳԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ

Համեստ ու աշխատասեր Միքայել Պետրոսյանին հանդիպելիս թվում է, թե քրիստոնեական բարությանը է բարուրված նա, եւ այդ բարության մեջ ընդգծվում է նրա երազը՝ հողից հաց քամել, ապրել հաշտ ու խաղաղ, չտեսնել վիշտ ու մորմոք: Սակայն պատերազմ եղավ, որ Արցախին պարտադրեց Ադրբեջանը՝ մեր պապեմական օջախները հայաթափ անելու բարբառանքով: Երբ սկսվել էր Ղարաբաղյան շարժումը, Միքայելի որդին՝ Վաչագանը, նոր էր վերադարձել ԽՍՀՄ բանակի շարքերից: Ձինվորի քայլվածքով ու վճռականությամբ նա խրախուսում էր ընկերներին, համոզում ծնողներին, որ միասնական ուժերով մեր ժողովուրդը, գյուղը, մենք կհասնենք մեր նպատակին, կտեսնենք մեր հրաշք Արցախը՝ վերամիավորված մայր Հայաստանին: Վաչագանը՝ ծնված 1972թ., արդեն ավարտել էր Ստեփանակերտի ավտոդպրոցը, ծառայել ԽՍՀՄ բանակի շարքերում, ճանաչվել ոչ միայն Եղիլլուի ենթաշրջանի, այլև ամբողջ Հաղրութի շրջանի զինվորայիների եւ հրամանատարների շրջանում: Նրան վստահում էին եւ հետախուզությունը, եւ հարձակման նախագիծը քննարկելիս: Վաչագանի համար չկար ավելի հաճելի երեւոյթ, քան գյուղի դիմաց պապեմական դարավոր դիրք հանդիսացող Քարաբանդ լեռան գագաթից ազե-

րիներին պատասխանելը եւ նրանց խայտառակ փախուստը տեսնելը: Նա մասնակցել էր Ֆիզուլիի շրջանի մի շարք գյուղերի՝ Զինանի, Ջուվարուի, Արիշի, Խալավշայի եւ այլ կրակակետերի վերացմանը: Բայց 1995թ. դիրքերից մեկում իր զինակից ընկերներին այցելելիս նրան նկատում է թշնամին: Բարձունքի վրա զոհվում է Վաչագանը՝ բռնելով հավերժության այն ուղին, որի երկնականարից իր նահատակված ընկերների հետ հոգու աստղաբույլ դարձած, լուսավորում են հայրենի գյուղի, Արցախի, Ժողովրդի ազատագրված ճանապարհն ու կյանքը:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱԳԻՖ ՄԻՔԱՅԵԼԻ

Նա համեստ էր, ինչպես հայրը՝ Միքայելը: Քչախոս էր, սակայն ներքուստ կրակ էր, դա երեւում էր աշխատանքի մեջ: Հայրենի գյուղի ութամյա դպրոցում սովորելու տարիներին մեծի պես էր վարվում: Դասերից տուն էր գալիս, կացինը վերցնում, գնում անտառ, անասունների հետեւից հանդ էր մեկնում, բերում, տեղավորում եւ ապա նստում սեղանի շուրջ՝ դասերը սովորելու: Հայրը նայում էր եւ զոհունակությամբ ժպտում, որ տղան շատ աշխատասեր է:

Ութամյակից հետո մեկնում է Երեւան՝ հարազատների մոտ, ավարտում Նոր Հաճնի ռադիոտեխնիկումը եւ վերադառնում գյուղ: Ծառայել էր ԽՍՀՄ բանակի շարքերում: Հայրենի Արցախի ազատագրական պայքարի հենց առաջին օրվանից Վազիֆը չի վարանում, նվիրվում է պայքարին, համոզված, որ հարազատ Արցախը ոտքի է ելել՝ փրկվելու Ադրբեջանի ամենակուլ երախից: Եւ դա իր սրտովն էր: Մասնակցում է Ֆիզուլիի շրջանի ուղղությամբ կազմակերպվող մարտերին: 1992թ. հայ ազատամարտիկները մարտնչում էին Քյուրմահմուդլու գյուղի մատույցներում: Վազիֆը նկատում է, որ թշնամական մի խումբ անցել է իրենց ջոկատի թիկունքը: Նա ընկերներին կոչ է անում ճեղքել օղակը եւ անահանջել: Պահի վտանգավորությունը զգալով՝ նա կրակահերթ է բացում թշնամիների դեմ: Ջոկատի ընկերները նահանջում են՝ նոր գրոհ կազմակերպելու նպատակով: Հայ ազատամարտիկներին հաջողվում է դա: Սակայն իրենց դիրքերը վերանվաճելուց հետո այլեւս չեն հանդիպում Վազիֆին: Խիզախ մարտիկին ազերիները տարել էին իրենց հետ: Անհայտ կորած Վազիֆին գյուղում սպասում են բոլորը, սպասում են՝ 33-ամյա իրենց հայրենակցին՝ անձնուրաց զինվորին, քաջ հայրենասերին:

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԼԱՎԻԿ ՍԵԴՐԱԿԻ

1991թ. հունիսի 24-ն էր: Ազերի օմօնականները խորհրդային զինվորների հետ մտան գյուղ: Անձնագրային կարգի ստուգման պատրվակով հաշվեհարդար էին տեսնում բնակիչների հետ: Խուժում էին բնակարանները՝ իբր զենք որոնելու, թալանում էին զարդերը, շուրջկալ անում դիմադրողներին:

Իր ձեռքերով կերտած երկհարկանի տան բակում առտնին գործեր էր անում Սլավիկ Սեդրակի Սարդարյանը՝ հմուտ որմնադիր, քրտնաջան հողվոր, օրինակելի ամուսին եւ հայր: Օմօնականների նենգ հայացքները փայլատակեցին: Բորենիների վնաստոցով նրանք հասկացան միմյանց:

- Ջենքերդ հանի՛ր թաքստոցից, - գոռաց թուրք լեյտենանտը:
- Իմ զենքերը որմնադիրի իմ գործիքներն են, հող եմ մշակում, տուն կառուցում, - պատասխանեց Սլավիկը:
- Ստում ես, - խաբեբա՛ հայ, - կրկին գոռաց լեյտենանտը՝ այս անգամ կատաղած բերնի փրփուրը շաղ տալով շուրջը:
- Ես կյանքում ստած չկամ, կարող եք ստուգել:
- Ստուգելու ժամանակ չկա, դու պատասխան կտաս Ֆիզուլիում, մեր շտաբն այնտեղ է:

Առանց պատճառի շուրջկալ արեցին 48-ամյա Սլավիկին եւ իրենց հետ տարան Ֆիզուլի: Այդ տանելն էր, որ տարան...

Գյուղում հարազատները երկար սպասեցին, սակայն լուր չկար, ո՞ր անհայտ ուղիներով տարան նրան սելջուկ-թուրքերի ժառանգորդները, ի՞նչ ճակատագիր ունեցավ, ինչպե՞ս վարվեցին՝ ստիպեցին հավատափո՞խ լինել, թե՞ լուռումունջ շենքեր կառուցել իրենց համար:

Սելջուկ-թուրքերի արյունը չի փոխվել երբեք, եւ Սլավիկի հետ գուցե վարվել են այնպես, ինչպես 1915թ. հայոց մեծ եղեռնի օրերին էին ոչնչացնում անմեղ հայերին, կամ գուցե 1920թ. մարտին Շուշիում ավազակ Փանահ խանի եւ նրա արյունախում որդու՝ Իբրահիմի ժառանգների օրինակով՝ ջրհորն են նետել, ի՞նչ իմանաս... Ցավալին այն է, որ մինչեւ այսօր անհայտ կորած է Սլավիկ Սարդարյանը: Բոլորն սպասում են նրա վերադարձին:

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՍԼԱՎԻԿԻ

Արարատի անունը կնքել էր հայրը՝ Սլավիկ Սարգսյանը: 1974թ. էր դա, երբ աշխարհ եկավ մանչուկը՝ ցնծություն բերելով օջախին, հորը եւ մորը՝ Վիկտորիային: Սլավիկը հաճախ էր կրկնում. «Իմ բալիկին կոչել եմ Արարատ, որ Մասիսի նման վեհ ու հզոր լինի»: Օրերը հաջորդեցին միմյանց: Արարատը դեռեւս աշակերտ էր, երբ սկսվեց Արցախի ազատագրական պայքարը:

Արարատը հիրավի դարձել էր Արարատ: Հարեւան Էդիլլուի (Ուխտաձոր) միջնակարգն ավարտելուն պես նվիրվեց Արցախյան ազատագրական պայքարին՝ արյան կանչով: Հորը գտնելու, նրա վրեժը լուծելու տենչով նա ընկերացել էր զենքին: Արարատի զինվորական ուղիները խաչածեւովեցին Ֆիզուլիի մատույցներում: Հրամանատարները հիացած էին նրա սխրանքներով, նրա վճռականությամբ: Մարտից առաջ ընկերները լսում էին նրա խոսքը. «Վրեժ պիտի լուծեմ եւ հորս, եւ հայրենիքս համար»:

1992թ. ազերիների դեմ սկսված մարտերից մեկում թշնամու տանկից նետված հրազենից խոցվում է Արարատի սիրտը: Ընկերները նրան հասցնում են գյուղ, հողին հանձնում գյուղից վերեւ գտնվող պապենական գերեզմանոցում, որպեսզի բարձունքներից դիտի իր զինակից ընկերների սխրալից պայքարը, եւ հողին ցնծա հայրենիքի ազատության համար, գուցե եւ՝ հոր փրկության:

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՍԼԱՎԻԿԻ

Ֆիզուլին պատնեշ էր դարձել ավանդական Դիզակի երկայնքով մեկ: Հադրուք շրջկենտրոն եւ շրջանի բոլոր գյուղերը տանող ճանապարհները անցնում էին Ֆիզուլիի կենտրոնով: Դա կանխամտածված նախագիծ էր, որ իրականացրել էին Ադրբեջանի կառավարող շրջանները, որպեսզի անհրաժեշտ պահին կարողանան շրջափակել Արցախի հարավային դարպասները եւ ապա խեղդեն հերոսական Դիզակը եւ Վարանդան: Պատահական չէ, որ Արցախյան պայքարի հենց առաջին օրերից փակվեցին Ստեփանակերտ-Հադրուք տանող ճանապարհը, եւ ուժեր կուտակեցին՝ ճեղքելու Քյուրաթաղ, Էդիլլու (այժմ՝ Ուխտաձոր), Հախուլլու եւ Աղբուլաղ (այժմ Ակնաղբյուր) գյուղերն իրար միացնող օղակը եւ Արեւսար անտառի միջով անցնեն Հադրուքի թիկունք՝ գրավելու եւ փա-

Կելու Լեռնային Ղարաբաղի հարավային դարպասները: Նշված երեք հարեւան գյուղերը: Ժամանակին կազմում էին մեկ ժողովուրդը: Եւ ունեին մեկ գյուղխորհուրդ: Այս գյուղերի մարտիկները դարձել էին մի կուռ կամք, մի սիրտ: Այդ անկոտրում կամքի կրողներից էր նաեւ Արթուրը, որի հորը դեռեւս Ղարաբաղյան շարժման սկզբից թուրքերը տարել էին անհայտ ուղղությամբ, եւ մինչեւ հիմա ոչ մի լուր չկա նրա մասին: 1992թ. զոհվել է եղբայրը՝ Արարատը, իսկ ինքը որոշել էր թշնամուց լուծել վրեժը հոր եւ եղբոր փոխարեն: Քանի՞-քանի՞ անգամ էր Արթուրը մարտի մեջ մտել Ֆիզուլիի շրջանի ազերական գյուղերի դեմ, որ դարձել էին կրակակետեր ոչ միայն Հաղորթի, այլեւ Մարտունու շրջանի մի շարք բնակավայրերի դեմ: Ձինակից բոլոր ընկերները Արթուրին անվանում էին արիասիրտ առյուծ:

Արթուրը՝ ծնված 1970թ., ավարտել էր Ուխտաձորի միջնակարգը, ծառայել նախկին ԽՍՀՄ բանակում: Նոր Հաճնում սովորել էր ռադիոտեխնիկումում: Արցախյան գոյամարտն սկսվելուն պես վերադարձել է գյուղ՝ կատարելով իր հայրենասիրական պարտքը: Բազում մարտերում ընկերների հետ հաղթանակներ շահած Արթուրը 1993թ. օգոստոսի 27-ին անհավասար կռվում գերի է վերցվում ազերիների կողմից: Լուրեր կան, որ զոհվել է Ֆիզուլիի մատույցներում: Նա հոր եւ եղբոր վրեժը լուծեց սեփական արյամբ՝ կյանքի վերջին րոպեներին կարոտով նայելով դեպի հարազատ Ակնաղբյուր գյուղը, որն արցունքի միջից ժպտում է շահած հաղթանակի համար, կարոտում զոհված զավակներին, այդ թվում՝ Արթուրին:

ՆԱՀԱՏԱԿ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

Գյուղ իմ հայրենի, իմ հարազատներ....

Սրտիս արյունով եմ գրում այս տողերը, որ մեր զոհ դարձած մանուկների մասին է: Ահա եւ նրանք.

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԴՈՒՅԻ ՊԱՎԵԼԻ

1984թ. լրացել էր Վարդուհու 7 տարին: Գյուղում նրան Վարդիկ էին կոչում: Ծնվել է 1977թ.: Սեպտեմբերի 1-ին դպրոցի դռները բացվեցին նրա առջեւ... Իր նման երեխաների հետ նա բարեւեց առաջին ուսուցչին, մտավ հեթիաթային մի աշխարհ՝ մեսրոպալե-

զու, մեսրոպահույս: Ծնողները ուրախացել են նրա սովորած ամեն մի տառով, ամեն մի բառով, արտասանած ոտանավորներով, դասարանից դասարան փոխադրվելու առիթով: 1988 թ. 11 տարեկան էր Վարդիկը, նա հասկանում էր, թե հանուն ինչի էին ոտքի ելել գյուղը, հարազատները, բոլորը: Իր ընկերների հետ երգում էր ֆիդայական երգեր: Այդպես, մինչև 1991 թ.: Վարդիկը սովորում էր 7-րդ դասարանում, երբ գյուղը ենթարկվել էր ռմբակոծության: Ծանր էր պահը: Բնակելի տներ էին բռնկվում կրակից: Ահա, այդ օրհասական պահին արկի ուժգին պայթյունից զոհվում է վարդաբույր ու վարդաժպիտ Վարդիկը: Հայրը՝ Պավելը, մայրը՝ Վիոլետան առատ ու տաք արցունքներով անգամ չկարողացան փրկել իրենց վարդաժպիտ աղջկան, որին հնարավոր չէ մոռանալ: Հնարավոր չէ մոռանալ անգամ այն պահին, երբ ժողովուրդը վայելում է հաղթանակի պտուղը: Չէ, հնարավոր չէ մոռանալ զոհյալ հրեշտակներին... Նրանց կհիշեն սերունդները:

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԼՅՈՎԱ ԳԵՈՐԳԻ

1983թ. ամբողջ գյուղը աչքալուսանք տվեց Գեորգի Հովսեփյանին, որ տղա է ունեցել: Գեորգին ու կինը՝ Սվետան, խորհեցին, զրուցեցին եւ մանչուկի անունը կնքեցին Լյովա: Փոքրուց կկանչենք Լյովա, կմեծանա՝ Լեւոն կկոչենք, ախր, հայ ազգը Կիլիկիայում հզոր Լեւոն թագավոր է ունեցել: Լյովան մեծանում էր ժամերով, հորն էր քաշել՝ հաղթանդամ, բոյով: 1991թ. Լյովան հաճախեց դպրոց: Առաջին դասարանում ընկերների հետ երգում էր. «Հայ ֆիդայի, ջան ֆիդայի»: Ճիշտ է, «ֆիդայի» բառը չէր հասկանում, բայց ուսուցչուհին՝ ընկեր էլմիրան, բացատրել էր, որ ֆիդային մեր զինվորն է, մեր Ապրեսը, Իվանը, Վալերիկը, նրանք, ովքեր կռվում են թուրքերի դեմ, որ ապրենք ազատ ու անկախ: Այդ բացատրությունից հետո եւ Լյովան եւ ընկերները երգելիս ավելի էին ընդգծում «ֆիդայի» բառը:

Գյուղի ազատամարտիկները բացատրել էին, որ երեխաները գյուղի հանդերում զգույշ լինեն, չմտնեն չստուգված տեղերը: Սակայն երեխան մնում է երեխա: 1994թ. հունվարի 31-ին Լյովան՝ Լեւոնը, անզուլորեն թեքվում է ճանապարհից, մտնում գյուղից ոչ

Իհեռու գտնվող արտավայրի հողամասը... եւ հանկարծ ուրքերի տակ պայթում է ականը... Ձոհվում է 11-ամյա Լյովան, որ պիտի տարիներ անց կոչվեր Լեւոն Յովսեփյան, գուցե ճարտարապետ, ուսուցիչ, գյուղատնտես Լեւոն... Բայց ականը՝ ազահ ու կատաղի ականը, իլեց հրաշք պատանու կյանքը: Ի՞նչ դաժան ես, պատերազմ, ե՞րբ եմ չարերը գիտակցելու մարդակերության քո բնույթը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ ԳԱՐԻԿԻ

Լարիսան եւ Գարիկը շատ էին սիրում Նարինե անունը:
- Յենց որ աղջիկ ունենանք, կանվանենք Նարինե, - մի օր հա-
մաձայնվեցին նրանք:

Այդպես էլ եղավ: Ինչպես ասում են՝ Աստված լսեց նրանց ձայ-
նը: 1983թ. աշխարհ եկավ մի աղջնակ եւ անունը կնքեցին Նարի-
նե: Մի ասա՝ Նարինե, այլ ասա՝ Արեւ, ասա Լուսին: 1990թ. Արցա-
խյան գոյամարտի այդ թեժ պահին, Նարինեին ուղեկցեցին դպրոց:
Առաջին դասարանում ցնծություն էր, հասակակից երեխաները, որ
գիտեին միմյանց, ուրախացան, պարեցին, մանկորեն երազեցին:

Տարիների հետ Նարինեն ավելի փարթամացավ, գեղեցկա-
ցավ... երգում էր, պարում, արտասանում: Արդեն սովորում էր եր-
րորդ դասարանում: Նա այդ օրը հանդիպել էր իրենից փոքր Նարի-
նե Ռաֆիկի Բաղդասարյանին, Նարինե Ապրեսի Յարությունյանին
եւ Ռադա Ապրեսի Յարությունյանին: Չորս աղջնակ, չորս զարման
թիթեռ: Երգում են, պարում... եւ հանկարծ որոշում են զնալ եւ խա-
ղը շարունակել իրենց հայրերի ստեղծած գետնափոր ապաստա-
րանում: Ու գնացին... Նարինե Գարիկի Յարությունյանից մեկ տա-
րով փոքր էր.

ՆԱՐԻՆԵ ԱՊՐԵՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Ապրեսենց Նարինեն ծնվել էր 1984թ. Դուշանբե քաղաքում:
Ծնողները՝ Ապրեսն ու Արինան, գյուղ էին վերադարձել: Նարինեն
շատ եր սիրում գյուղը: 1991թ. հաճախել էր Ակնաղբյուրի ութամյա
դպրոցը: Փոխադրվել էր երկրորդ դասարան: Աջքաբաց էր, լավ էր
սովորում, սիրում էր երգել, պարել: Եվ հենց այդ օրը նա միացավ
այն խմբին, որի ավագը Գարիկենց Նարինեն էր:

Ապրեսանց Նարինեից էլ փոքր էր:

ՆԱՐԻՆԵ ՌԱՖԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

Ռաֆիկենց Նարինեն էլ ծնվել է 1985թ.: Հայրը եւ մայրը՝ Հրանուշը, ասես աշխարհի տերն էին դարձել: Երեխան Արեւի պես էր ժպտում օրորոցում: Երեք տարեկանում նա երգում էր, Վերա տատիկն էր սովորեցրել: Հաճախում էր մանկապարտեզ, եւ շուտով պիտի գնար դպրոց: Այդ օրը Նարինեն եւս միացել էր ընկերուհիներին, եւ ինքն էլ էր ցանկացել՝ խաղը շարունակել գետնափոր ապաստարանում: Գուցե ճակատագիրն էր հուշել այդ, ի՞նչ իմանաս...

Մեր այս երեք Նարինեներից ամենափոքրը Ռադան էր՝

ՌԱԴԱ ԱՊՐԵՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Ռադան ծնվել է 1986թ.: Դուշանբե քաղաքում: Գյուղում հաճախում էր մանկապարտեզ: Երբ որոշել էին խաղը շարունակել ապաստարանում, Ռադան լացել էր եւ դիմել քրոջը. «Նարինե, ես էլ եմ ուզում ձեզ հետ գալ»: Նարինեն ընդառաջել էր փոքրիկ քրոջը: Եվ նրանք մտել էին գետնափոր ապաստարանը: Հնչում էր նրանց երգը, ծափը, ուրախ պարում էին, երբ թշնամին հեռահար թնդանոթներով սկսում է գնդակոծել գյուղն ու նրա շրջակայքը: Ռումբերի պայթյունից փլվում է գետնափոր ապաստարանը եւ չորս աղջնակները մնում են փլվածքի տակ: Դա 1992 թվականն էր:

Անցնում են օրերը, տարիները, ինչ-որ չափով սպիանում են վերքերը, սակայն մեր փոքրիկ-հրեշտակների կորուստը չի մոռացվում, ախր նրանք անմեղ մանուկներ էին՝ կյանքի եւ երազի ծարավ: Ինձ մնում է՝ խոսքս ավարտել թախծի եւ կարոտի շաղախով.

*Չորս աղջնակ, չորս արեւ,
Չորս երազանք, չորս գարուն,
Մահվան ճամփան բռնեցին
Սարսափելի այդ տարում:
Չորս անմեղ սիրտ հող դարձավ,
Չորս օջախի հուր մարեց,
Ապագա չորս մայրերի
Չորս ծրագր չվառվեց:
Ծնողները ապրում են
Իրենց բախտի հետ հաշտված...
Չորս շիրմաքար կողք-կողքի*

*Աղոթում եմ առ Աստված...
Աղոթում եմ առ Աստված,
Որ էլ կռիվ չլինի,
Որ էլ իրենց գյուղի դեմ
Չարը ոստայն չհինի...*

**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՔԵՁ
ԱՐՑԱԽԻ ՀԵՐՈՍ
ՄԱՆՎԵԼ ՍԵԿՏՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Արցախյան ազգային-ազատագրական պայքարը հայ ժողովրդի դարավոր մաքառման օրգանական շարունակությունն է: Այն Ավարայրի, Սարդարապատի նոր աստիճանն է, որն ապահովեց մեր ժողովրդի ոչ միայն հաղթանակը, այլև արժանապատվությունը եւ հարատևելու իրավունքը: Պարույր Սեւակը նշել է, որ ժողովրդի հավաքական ուժն ու տաղանդը խտացված դրսեւորվում է նրա ծնած անհատների մեջ, իսկ այդ զավակները վերածնունդ են իրենց ժողովրդին: Այս դիտարկումն ու փիլիսոփայական ընդհանրացումը վերաբերում է նաեւ Արցախյան գոյամարտին, որի ընթացքում նոր կողմերով բացահայտվեց մեր ժողովրդի ռազմական տաղանդը իր զավակների մեջ՝ առնչված ընդունակության, գիտելիքների որակյալ պաշարի, հայրենասիրության եւ խիզախության հետ: Արցախյան պատերազմը առաջ քաշեց ժողովրդածին զորապետների մի աստղաբույլ, առանց որի չէր ապահովվի հաղթանակը: Ժողովրդի հիշողության եւ երախտագիտության ծփանքների ծալքերում արդեն գրված են այդ զորապետների անունները, որոնց շարքում նաեւ Մանվել Սեկտորի Գրիգորյանի:

Մանվել Գրիգորյանը 1988թ. 32 տարեկան էր: Հայաստանի Արմավիրի մարզի Արշալույս գյուղի բնակիչ Մանվելը այդ թվականին ուներ միջնակարգ կրթություն, ծառայել էր նախկին ԽՍՀՄ բանակի շարքերում: Ընդամենը այդքանը: Բայց պարզվեց, որ արմավիրցի Մանվելը ծնվել էր զինվոր լինելու համար՝ զինվորից-զեներալի դժվարին եւ պատվաբեր ճանապարհի անցումով: Սակայն այս ուղին սովորական ընթացք չէ: Մեծ խորհուրդ ունի այն, որը կապված է ժողովրդի եւ անհատի որակական նոր հատկանիշների հետ: Առաջին հերթին ազգային պետականության ազնիվ ձգտումն է, այլ կերպ ասած՝ պետական մտածողություն ունենալը, երկրորդ՝ հող հայրենին անձնուրացությամբ պաշտպանելու վճռականությունը, երրորդ՝ թշնամու կողմից պարտադրված դժվարությունները եւ զրկանքները հաղթահարելու առասպելական կամքը: Համարձակո-

րեն եւ հանգիստ խղճով կարող եմ արձանագրել, որ Մանվել Գրիգորյանը օժտված էր այդ բարեմասնություններով:

Մանվել Գրիգորյանն Արցախի գոյամարտին զինվորագրվեց 1988թ. աշնան սկզբին: Իր իննը կամավոր զինվորականների հետ եկավ Հաղորթի շրջանի էդիլու (այժմ՝ Ուխտաձոր) գյուղ: Մինչեւ այդ գարնանը նա ընտրվել էր Էջմիածնի առաջին երկրապահ կամավորական ջոկատի հրամանատար, իսկ ամռանը՝ էդիլուի ենթաշրջանի ինքնապաշտպանական ջոկատների հրամանատար, որոնց հիմքի վրա հետագայում կազմավորվել է կամավորական գումարտակը: Հրամանատար նշանակվելը դժվար չէ, դժվարը հրամանատար դառնալն ու մնալն է: Մանվել Գրիգորյանը շատ լավ էր գիտակցում այդ ճշմարտությունը: Նախ ինքն իր անձնական խիզախությամբ դարձավ օրինակ, կիրառեց ռազմական աներեր կարգապահություն, եւ ապա, որ պետք է ընդգծվի, նա փակեց գյուղերը լքելու ճանապարհը: Այն ծանր օրերին էդիլու, Քյուրաթաղ, Հախուլլու, Աղբուլաղ գյուղերից ոչ ոք չհեռացավ... Դա Մանվել Գրիգորյանի հաջող գործի գրավականն էր: Լավ հիշում եմ: Քույրս, որ զաղթել էր Բաքվից եւ ապրում էր Ստեփանակերտում, իմ տանը, մեկնել էր գյուղ ամառն անցկացնելու մեր հայրական օջախում: Աշնանը նամակ գրեցի, որ վերադառնա Ստեփանակերտ: Քույրս պատասխանեց, որ Մանվել Գրիգորյանը չի թույլատրում ոչ միայն իրեն, այլեւ բոլորին: Մեզ հասկանալի էր հրամանատարի քաղաքականությունը: Մնում էր միայն ողջունել նրա կարգադրությունը: Այդ քաղաքականությունն էր վարում նաեւ Ավրոն Մարտունիում:

Կարող եմ բերել մի ուրիշ օրինակ եւս: Գյուղում բնակվող բարեկամս մի անգամ տրտնջաց, որ Մանվել Գրիգորյանը արգելում է ավտոմեքենան դուրս բերել գյուղից, որ Մանվելը չափից դուրս խիստ է: Հասկանալի է, եւ նրան պատասխանեցի, որ հրամանատարը ճիշտ է: Ժամանակներն անցան, հաղթանակն ապահովվեց, նույն իմ բարեկամը հանգիստ խղճով ընդգծեց. «Մանվելը ճիշտ էր»:

Մանվել Գրիգորյանը Արցախում դարձավ լեգենդար հերոս... նա իր մարտիկների հետ մասնակցեց նաեւ Մարտակերտի շրջանի բնակավայրերի ազատագրման գործին, եղավ թշնամական օղակում, ճեղքեց այն եւ ազատվեց... Ապա նրա առջեւ փռվեցին նոր ուղիներ. դարձավ գնդապետ, սովորեց եւ ավարտեց Մոսկվայի ՌՖՀ պաշտպանության նախարարության բարձրագույն ակադեմիան, Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Հասել է գեներալ-մայորի, այնուհետեւ գեներալ-լեյտենանտի աստիճանի: Նա զորամիավորման հրամանատար դար-

Ծավ, ապա՝ 33 ՊԲ փոխնախարար:

Այսօր Մանվել Գրիգորյանը «Արցախի հերոս» է, նրա կուրծքը զարդարում են «Ոսկե արծիվ» շքանշանը եւ այլ պարգեւներ: Սակայն ամենաթանկ պարգեւը ազատագրված Արցախի, ամբողջ հայ ժողովրդի սերն ու հավատն է իր քաջն զավակի հանդեպ:

2005թ., Ստեփանակերտ

ԵԹԵ ՄԵՆՔ ՉԱՍԵՆՔ, ԴԱՐԵՐԸ ԿԱՍԵՆ

Մարդու համար չափազանց դժվար է մորը փառաբանելը: Դրա համար կամ պիտի մարգարե լինել, կամ հանճարեղ բանաստեղծ, այնպիսիք, որպիսիք Սայաթ-Նովան է, Զ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը կամ Զ. Շիրազը: Ես մոր մասին խոսեցի, նկատի ունենալով, որ մայրերն են ժողովրդին նվիրում հերոսներ: Ուստի սրտիս խոսքը իմ հերոսական գյուղի քաջ եւ անձնուրաց զինվորների մասին հնչում է որպես երախտիքի զգացում նրանց աշխարհի բերող մայրերի մասին: Մենք՝ ապրողներս, մայրերին պիտի սփոփանք խոսք ասենք եւ խոնարհվենք նրանց առջեւ, իսկ ամենաջերմ սփոփանքը կլինի այն, որ չմոռացվեն նրանց դուրսագալուն զավակները: Հիշելու հիանալի մի ձեռնարկում է իմ տաղանդավոր հայրենակցի՝ բանաստեղծ, գրականագետ Սոկրատ Խանյանի ստեղծած հուշամատյանը:

1994 թվականից անցել է ավելի քան 10 տարի: Մենք գտնվում ենք ոչ պատերազմական եւ ոչ էլ խաղաղ պայմաններում: Այդ նշանակում է, որ պետք է վառողը չոր պահենք: Ահա, այս գաղափարի իրականացման համար շատ կարեւոր է ժողովրդի մարտական ոգու պահպանումը: Իսկ մարտական ոգուն թեւեւ պարզելողները միշտ էլ եղել են նահատակները՝ Վ. Մամիկոնյանից սկսած մինչեւ Ավո:

Այդ հերոսների սրբացած զորագնդերը կազմողների շարքերում տեղ են գրավում նաեւ իմ հարազատ գյուղի զինվորյալները՝ Վալերիկ Ամիրջանյանը, Արայիկ Բաբայանը, Վագիֆ Պետրոսյանը, Ալյոշա Պետրոսյանը, Վաչագան Պետրոսյանը, Սարո Պետրոսյանը, Ապրես Զովսեփյանը, Արթուր Սարգսյանը, Արարատ Սարգսյանը, որոնք իրենց զլուխները դրին մեր պապենական օջախների ազատության զոհասեղանին: Էլ չեն խոսում այն խաղաղ բնակիչների մասին, ովքեր զոհվեցին ազերի-թուրքերի նետած հրթիռներից եւ ռումբերից:

Այսօր, երբ Ադրբեջանի կառավարող շրջանները եւ տկարամիտ ուժերը վայնասուն են բարձրացրել աշխարհում, որ իբր թե հայերը ազրեստրներ են, թող հասկանան, որ Արցախի ամեն մի թիզ հողը, վանքն ու խաչքարը, եկեղեցիներն ու գերեզմանատները, աստղե-

րի հետ գրուցում են մեր պապերի լեզվով ու ոգով, որոնց հետ մեկտեղ նաեւ մեր նորօրյա զոհյալները:

Ուստի, թշնամին թող իմանա, որ չոր է մեր վառողը, մարտական՝ մեր ոգին, եւ հսկում ենք մեր սահմանները, ասել է թե՛ հսկում ենք մեր ժողովրդի խաղաղ կյանքն ու ապագան՝ Արաքսից մինչեւ Օմար, Երեւանից մինչեւ Սփյուռք:

Այս ժողովածուն, որ ստեղծել է Ս. Խանյանը, արժանի է ամենայն դրվատանքի: Անձամբ իմ եւ մեր պաշտպանական զորամասի հրամանատարների անունից մեր շնորհակալությունն ենք բերում հեղինակին:

Նման գրքերը ասորողների սրտի խոսքն են՝ օժտված երախտիքի զգացումով եւ կյանքը շարունակելու վճռականությամբ:

Խորեն Հովսեփյան
Փոխգնդապետ, «Մարտական խաչ»
առաջին աստիճանի շքանշանակիր

ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂ

Հայրենի գյուղ, իմ Ակնաղբյուր,
Քո ծաղկաբույր կյանքին մատաղ,
Ձավակներդ մի աստղաբույլ,
Քո հրահուր ճամփին մատաղ:
Մաքառել ես դար ու դարեր,
Քո քրտնաթոր ջանքին մատաղ,
Բախտիդ խաչն ես փառքով տարել,
Քո լուսավոր փառքին մատաղ:
Թիկն ես տվել սեզ սարերին,
Քո Արեւոտ սարին մատաղ,
Ձեռք ես մեկնել լույս դարերին,
Քո երազած դարին մատաղ:
Որդիներդ Բեռլին հասան,
Հաղթանակիդ լույսին մատաղ,
Դժվար ուղիդ հույսով անցար,
Քո սրբազան հույսին մատաղ:
Սելջուկների թռռների դեմ
Քո շառաչող թրին մատաղ,
Նահատակված զավակներիդ
Հավերժախոս գրին մատաղ:
Ամեն զոհդ խորին մի վերք,
Քո հին ու նոր վերքին մատաղ,
Ապրիր հավերժ՝ երգը շրթիդ,
Քո թեւավոր երգին մատաղ:

«Դիզակ պլուս», 25 ապրիլի, 2005թ.

ԿՐԱԿ ԷԼ ՏԱՍ՝ ՃՇՄԱՐԻՏԻՆ ՄԱՅ ԶԿԱ

Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտը հայ ժողովրդի որ-
ժանապատվության հաստատման, հերոսական ոգու արթնացման, աշխար-
հասփյուռ հայության միասնության ապահովման, քաղաքակիրթ աշխարհի
հետ՝ արարող իր տաղանդի աստվածանվեր ուժով զրուցելու, ազատ եւ ան-
կախ ապրելու վճռականության իր կամքը ծիածանելու իրադարձություն է,
որի ակունքները շափաղում են դարերի խորքում, ընդվզումները ճշում են
խորհրդային 70 տարիների շերտերում, իսկ լուսարար հրդեհը բռնկվում է
1988-ի փետրվարի 13-ից: Արդյունքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետու-
թյունն է՝ իր զինանշանով՝ օժված հազարավոր ազատամարտիկ-նահատակ-
ների արյամբ, հայոց հազարամյա երազանքի երանգներով, ազգային հա-
վատի եւ արարման ոսկեփոշով:

Մեր ազգային լուսավոր ու անվտանգ ապագային միտված մեր
նվիրումին նահանջ չկա: Արցախ-Ղարաբաղի տարածքը մեզ են
կտակել մեր նախնիները, մենք էլ կտակում ենք մեր սերունդներին:
Մեր փրկված տարածքին աշխարհի խոշոր, շահամուլ տերություն-
ների խոշոր աչքերի դեմ դիմաց գումարում ենք նաեւ ազգային
ինքնորոշման մեր հրամայականը, ինքներս ճանաչում ենք մեզ եւ
մեր պապենական ավանդական վարքուբարքով, որ այսօր կոչում
են ժողովրդավարության ընդունելի գործոն, ապա կառուցում ենք
մեր ազնվությունն ու քաղաքականությունը, պետության շուրջը
համախմբվելով՝ ի ցույց ենք դնում բարոյաքաղաքական մեր մի-
ասնությունը, մեր հզոր բանակի կայացմամբ հայտարարում ենք
մեր նոր Սահմանադրության օրինականությունն ու մեր սահման-
ների անխախտելիությունը:

Սա մեր վճիռն ու երդումն է՝ անկասելի, անհողողղ:

Մեր հարեւան ազերի կառավարիչները չեն հանգստանում: Մա-
մուլի, հեռուստատեսության, ռադիոյի, հաղորդակցման բոլոր նո-
րագույն միջոցների օգտագործմամբ զրպարտության ու նենգու-
թյան, ստահողության ու կեղծիքի, զազրախոսության ու լուտանք-
ների պարկերը բացել՝ ձգտում են ապացուցել, որ Արցախ-Ղարա-
բաղը հայ էթնոսի հետ ոչ մի առնչություն չունի, որ հայերը եկվոր-
ներ են եւ ընդամենը այս տեղերում երեւացել են 1828 թվականի
ռուս-պարսկական պատերազմից հետո:

Պատմության նման գեղծարարությունը ժխտող ամենախոսուն
պատասխանը Արցախ-Ղարաբաղ հայաշունչ, հայալեզու, հայա-
պատկեր նյութական եւ հոգեւոր հուշակոթողներն են՝ Մեծ Հայքի

10-րդ մահանգի 12 զավառների պատմական առաքելության իրողությունը, նրա տաղանդավոր զավակների ստեղծագործող մտքի բեղմնավոր ծառայությունը համաշխարհային քաղաքակրթությանը անցյալում եւ այսօր:

Այդ մասին խոսվել է եւ պիտի խոսվի:

Դեռեւս 19-րդ դարի 90-ական թվականներին Մազախ Նեյմանն է իր «Չայերը» գրքում ընդգծել արցախահայության խիզախության, մտավոր ընդունակության, արժանապատվության, հայրենասիրության անկրկնելի բարենասնությունները: 1919թ. ռուս հայտնի բանաստեղծ, պատմագետ, պետական ու հասարակական գործիչ Ս. Գորոդեցկին գրել է. «Այնտեղ, Ղարաբաղի անմատչելի բարձունքներում, որոնք հանդիսանում են Ղարսի եւ Սեւանի լեռնուտների շարունակությունը, երկու հազարից ավելի տարի հայ ժողովուրդը դիմացել է քոչվոր ցեղերի արշավանքներին՝ պահպանելով իր մշակույթը, պաշտպանելով իր ազգային դեմքը եթնիկապես, տնտեսապես եւ լեզվով միասնական լինելով, Ղարաբաղը հանդիսանում էր Չայաստանի միջնաբերդը, նրա արեւելյան թեւը: Այդպիսին էր նա անցյալում, այդպիսին էլ կլինի միշտ, քանի որ Չայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտավայրը, չի կարելի պաշտպանել՝ չտիրելով Ղարաբաղին: Պատմության ընթացքում ասպատակության ալիքները բազմիցս փշրվել են Ղարաբաղի անառիկությունից... Բնությունն ու պատմությունը Ղարաբաղում ստեղծել են վառ արտահայտված մի տիպ: Ամբողջ աշխարհով մեկ ցրված Ղարաբաղցիները հեշտությամբ ճանաչելի են: Լայն թափ, անձնագոհ քաջություն, համարձակություն, ինքնավստահություն, յուրատիպ համառություն, ուղղագիծ կայունություն, ընտանեկան կենցաղում նահապետականություն՝ ահա Ղարաբաղցու այն համակրելի գծերը, որոնք համարվում են հին հայկական առաքինությունների խորացումը»:

Արցախ-Ղարաբաղի մասին գրված հոդվածների, գիտական ուսումնասիրությունների թիվը, կարելի է ասել, այնքան էլ մեծ չէ, եթե նկատի ունենանք ազերի-թուրք վայ գիտնականների բազմաքանակ հակապատմական, հակահայկական, արցախահայության փառապանած անցյալն ու ներկան ժխտող ելույթները՝ թե՛ գրավոր եւ թե՛ բանավոր ձևով:

Արցախ-Ղարաբաղի անունից խոսող, նրա բազմադարյա արմատները բացահայտող, համաշխարհային քաղաքակրթությանը հազարավոր զավակների ներդրումներն ապացուցող, նրա անկա-

խության եւ ազատության համար մարտնչած քաջազուն որդիների նվիրումն ընդգծող, աշխարհի առջեւ նրա տաղանդն ու հավատը ներկայացնող մի նոր աննախադեպ երեւոյթ է տեխնիկական գիտությունների դոկտոր, փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս, Անգլիական թագավորական ակադեմիայի պատվավոր անդամ, Ռուսաստանի ֆեդերացիայի գիտության վաստակավոր գործիչ, գեներալ-լեյտենանտ, Մ. Լոմոնոսովի եւ Յու. Անդրոպովի անվան մրցանակների դափնեկիր, ակադեմիկոս Ս. Կորոլյովի անվան ոսկե մեդալակիր, մոսկվաբնակ, արցախածին, Սերգեյ Սարգսյանի «Արցախ-Ղարաբաղի հանրագիտարանը», որն արդեն ունի երկու հրատարակություն:

Հանրագիտարանի առաջին հրատարակությունը կայացել է 2005-ին: Արձագանքները դրական եւ խրախուսելի էին: Հեղինակը ջերմ շնորհակալություն էր հայտնել նրանց, ովքեր իրենց դիտողություններով, առաջարկներով, լրացումներով կարող էին նպաստել գրքի նոր, ավելի ընդգրկուն եւ հարստացված հրատարակությանը:

Այդպես էլ եղավ: Եթե հանրագիտարանի առաջին հրատարակությունը կազմված է 312 էջից, երկրորդն ընդգրկում է 626 էջ: Կարելորդ միայն գրքի ծավալը չէ, այլ այն, որ նրանում գետնդվել են այնպիսի նյութեր, փաստեր, տեղեկություններ եւ տեսական ընդհանրացումներ, որոնք ավելի հարուստ տեսքով եւ խոսու են ներկայացնում Արցախ-Ղարաբաղի անցյալն ու ներկան, ավելի տեսանելի ու շոշափելի դարձնում փրկված մեր երկրի վերջնական հաղթանակը՝ ապագայի հույսով:

Հանրագիտարանի երկրորդ հրատարակության առաջաբանում հեղինակը նշել է այն պատճառներն ու նպատակը, որ մղել են նրան՝ իրականացնելու այս հիրավի ծանր, բայց անհրաժեշտ ու պատվաբեր գործը: Սույն՝ «Արցախ-Ղարաբաղի հանրագիտարանը» (ԱՂՀ), ճշգրտված ու լրացված երկրորդ հրատարակությունն է: Առաջին հրատարակությունից սկսած (2005)՝ «Արցախ-Ղարաբաղի հանրագիտարանը» մտահղացվել է որպես բազմակողմանի հանրագիտարանային միհատորյակ՝ մոտ 5 հազար հոդվածների ընդգրկումով, որոնք գետնդված են այբբենական կարգով եւ պարունակում են համառոտ տեղեկություններ գիտելիքների տարբեր բնագավառներից: Հեղինակը գրում է. «Այդ գաղափարի դրդապատճառը հանդիսացել է ղարաբաղյան ոգու եւ տաղանդի եզակիությունն ու նշանակությունը, որ մեծապես ներդրվել է հայրենա-

կան եւ համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեջ շուներա-աքքադական հնագույն քաղաքակրթության ակունքներից սկսած: Նպատակը եղել է արցախյան իրականության վսեմագույն, դրա հետ մեկտեղ՝ օբյեկտիվ համապատկերի ստեղծումը, իմ պատմական հայրենիքի եւ իմ ժողովրդի ճշմարտացի էության բազմակողմանի ցուցադրումը, նրա ներկայացուցիչների ներդրումների ընդգծումը, որ կա համաշխարհային գիտության եւ մշակույթի զանձարանում» (էջ 5):

Յեղիմակը նշում է նաեւ վերջին տարիների քաղաքական կյանքի իրադարձությունները, որ տեղի են ունենում ԱԴՅ երկրներում, առաջին հերթին՝ Հարավային Կովկասում եւ Թուրքիայում: Դրանք էլ հենց արագացրել են հանրագիտարանի իրատարակությունը:

Սույն հանրագիտարանի նշանակությունը առնչվում է մի շարք գործոնների հետ: Առաջին հերթին հեղինակի ցատումնալից վերաբերմունքն է Արցախի եւ Հայաստանի դեմ Ադրբեջանի եւ Թուրքիայի վարած քաղաքականությամբ նրանց կողմից Արցախի, ինչպես նաեւ տարածաշրջանային պատմության նենգափոխությանը, ըստ որի՝ հայերը նույնիսկ Հայաստանում փոքրամասնություն են կազմել եւ այդ կեղծիքը պրոպագանդում են աշխարհով մեկ:

Անձնուրաց որդու քրտնաթոր աշխատանքի արդյունք է սույն հանրագիտարանը: Ծանոթանալով նրանում զետեղված նյութերին եւ ներդիր նկարներին՝ լցվում ես օրինական հպարտության զգացումով՝ մայր ժողովրդի հերոսական ոգու, աստվածապարզ եւ տաղանդի, ապագայի հանդեպ ունեցած նրա լուսավոր հավատի համար:

Հանրագիտարանի էջերից մեր պատմությունն է հառնում, արցախցին է խոսում համահայկական ոգու ծփանքներով: Արցախն է քայլում՝ որպես իր քաջ նախորդներից նրա սերունդներին կտակված անառիկ բերդ: Գրքի էջերում մեր սեպագրերն ու մաշտոցյան այբուբենն են երգում մեր պապերի ստեղծած վանքերի, եկեղեցիների, կամուրջների, խաչքարերի, տաճարների ճակատներին թառած: Իսկ դրանցից առավել ընթերցողի հետ հայ ժողովրդի արցախյան հատվածը տաղանդավոր զավակներն են խոսում, նրա առյուծասիրտ քաջազուններն են առասպելվում, որոնց շնորհիվ փրկվել է Արցախի ազատության կապույտ թռչունը, որ թեւածելու է դարարին ընդառաջ:

Հաճելի է այն փաստը, որ հանրագիտարանում տեղ են գտել նաեւ անվանի մի շարք հայտնի գործիչներ, որոնք ծագումով ար-

Երգախցի չեն: Հաճելի է այն առումով, որ հեղինակը ճիշտ է վարվել ընդգծելով արյունակցական այն հարազատությունը, որ գոյություն ունի աշխարհասփյուռ հայ ժողովրդի որդիների միջև: Վերջապես կան անհատականություններ, որոնց միջոցով ճանաչվում են նրանց ծնող ժողովուրդները:

Արցախ-Ղարաբաղը դարերի ընթացքում այնքան տաղանդավոր զավակներ է ընծայել հայրենական եւ միջազգային քաղաքակրթությանը, որ բոլորին գտնելու եւ նրանց մասին գրելու դեպքում չի հերիքի հանրագիտարանային միատորոյակը: Արցախում ճակատագրական այնքան ճակատամարտեր ու հաղթանակներ են եղել, նյութական եւ հոգեւոր մշակույթի այնպիսի հուշարձաններ են ստեղծվել, որ բոլորին անդրադառնալու դեպքում հանրագիտարանային մատենաշարեր են պետք: Ուստի, Ս. Սարգսյանի ստեղծած սույն հանրագիտարանի մեջ եղած բացթողումները պետք է համարենք բնական եւ օգնենք հետագայում ամբողջական հատորներ ստեղծելու դեպքում:

Ս. Սարգսյանի ստեղծած սույն հանրագիտարանը արդարացի, հզոր ու ճշմարտապատում մի յուրօրինակ մարտահրավեր ու պատասխան է ադրբեջանական դիվանագիտության այն կեղծ ու նենգամիտ դիմումներին ու հայտարարություններին, որ հնչել ու հնչում են գրքի ստեղծման հենց առաջին պահից:

Արցախցի մեր եղբոր, գործընկերոջ, մեր դասի ու անվան անձնուրաց պաշտպան Սերգեյ Թեմուրովիչի կատարած աշխատանքը՝ հանրագիտարանի տեսքով, անձնուրաց որդու սխրանք է, որի մասին ոչ միայն պետք է խոսք ասել, այլեւ արժանացնել պետական բարձր պարգևի, իսկ որ նա արդեն համաժողովրդական սիրո ասպետ է, դա արդեն փաստ է:

Մեր հին ու նորօրյա թշնամին աղմկել է եւ շարունակելու է ամբաստանել մեր իրական պատմության եւ ազնիվ մղումների դեմ: Սակայն սովոր ենք դրան, եւ երբեք ոչ ոք չպետք է ընկրկի հարեւանի չարամտությունների հանդեպ:

Այս առումով Ս. Սարգսյանի սույն հանրագիտարանը կանթեղային մի այնպիսի երեւույթ է, որ կարող ենք բարձրացնել մեր գլխից վեր եւ աշխարհին ազդարարել. «Կրակ էլ տաս՝ ճշմարիտին մահ չկա»:

**«Ազատ Արցախ»,
6 սեպտեմբերի, 2007թ.**

1. ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

1. Կարկաչ, Բաքու, 1959 թ.:
2. Բարեկամություն, Բաքու, 1963 թ.:
3. Սիրտս ձեզ հետ, Բաքու, 1966 թ.:
4. Արեւսար, Բաքու, 1968 թ.:
5. Լեռների երգը, Բաքու, 1972 թ.:
6. Իմ նվերը, Բաքու, 1978 թ.:
7. Սպասում ենք դեռ, Բաքու, 1975 թ.:
8. Լեռնային դողանջներ, Բաքու, 1978 թ.:
9. Քո անունից, Բաքու, 1980 թ.:
10. Կանաչ ծփանք, Բաքու, 1981 թ.:
11. Կարոտի կրակներ, Ստեփանակերտ, 1990 թ.:
12. Արցախյան դողանջներ, Երևան, 1991 թ.:
13. Արցախի արծիվը, պոեմ, Ստեփանակերտ, 1995 թ.:
14. Միեր (պոեմ զոհված ազատամարտիկ, «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր Ս. Դանիելյանի մասին), Ստեփանակերտ, 1995 թ.:
15. Իմ ծիածանը, Ստեփանակերտ, 2000թ.:
16. Նահատակ լուստ, պոեմ՝ նվիրված Ավոյի սխարանքին, Երևան, 2005թ.:
17. Ամարասի կանթեղը, պիես, Ստեփանակերտ, 2005թ.:
18. Թելավոր իմ կյանք, Ստեփանակերտ, 2006թ.:
19. Սիրո ճամփա, Ստեփանակերտ, 2007թ.:
20. Տարիներս, Ստեփանակերտ, 2010թ.:
21. «Ընտիր երկեր», 10-հատորով, հատոր 1. «Բանաստեղծություններ», ԼՂՀ գրողների միություն, ԱրՊՀ գիտխորհուրդ: «Դիզակ պլուս» հրատ., 2010, 512 էջ:
22. «Ընտիր երկեր», 10-հատորով, հատոր 2. «Բանաստեղծություններ», ԼՂՀ գրողների միություն, ԱրՊՀ գիտխորհուրդ: «Դիզակ պլուս» հրատ., 2010, 480 էջ:
23. «Ընտիր երկեր», 10-հատորով, հատոր 3. «Բալլադներ, լեզենդներ, պոեմներ, պիեսներ», ԼՂՀ գրողների միություն, ԱրՊՀ գիտխորհուրդ: «Սոնա» հրատ., 2010, 480 էջ:
24. «Ընտիր երկեր», 10-հատորով, հատոր 4. «Բանաստեղծություններ», ԼՂՀ գրողների միություն, ԱրՊՀ գիտխորհուրդ: «Դիզակ պլուս» հրատ., 2010, 480 էջ:
25. Ամնահույան ճանապարհով (փաստագրական վիպակ, ԼՂՀ ՊԲ ԿՊԸ-ի եւ նրա հրամանատար Ս. Կարապետյանի մասին), հայերեն եւ ռուսերեն, 1997 թ.: Համահեղինակ Արզիկ Մխիթարյան:

2. ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Պոեզիայի ուժն ու հմայքը» (Ե. Չարենցի պոեզիայի մասին), Ստեփանակերտ, «Գիտելիք», 1987, 30 էջ:
2. «Թաթուլ Յուրյանի սիրանքը» (Թ. Յուրյանի պոեզիայի մասին), Ստեփանակերտ, «Մաշտոց» հրատ., 1991, 54 էջ:
3. «Ցավի եւ սիրո պոեզիա» (Վ. Յակոբյանի պոեզիայի մասին), Ստեփանակերտ, «Արցախ» հրատ., 1991, 118 էջ:
4. «Բոգդան Ջանյանի պոեզիան», Ստեփանակերտ, «Սոնա» հրատ., 1997, 54 էջ:
5. «Գուրգեն Գաբրիելյանի աշխարհը» (մանկագիր Գ. Գաբրիելյանի ստեղծագործությունների մասին), Երեւան, «Նաիրի» հրատ., 1997, 68 էջ:
6. «Տաղանդի լույսը» (գրականագետ Ժ. Անդրյանի մասին), Ստեփանակերտ, «Սոնա» հրատ., 1998, 78 էջ:
7. «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան», Ստեփանակերտ, «Սոնա» հրատ., 1998, 120 էջ:
8. «Նվարդ Ավագյանի պոեզիան», «Ազատ Արցախ» հրատ., Ստեփ., 2000, 40 էջ:
9. «Ժողովրդական արտիստուհի Ս. Բալասանյան», «Մշակույթ» հրատ., Ստեփ. 2000, 16 էջ:
10. «Վաստակավոր արտիստ Ս. Յարությունյան», «Մշակույթ» հրատ., Ստեփ. 2000, 16 էջ:
11. «Յայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում» (1950-1990-ական թթ.), ուսումնական ձեռնարկ մագիստրանտների եւ ասպիրանտների համար, ԱրՊՀ հրատ., Ստեփ., 2002, 350 էջ:
12. «Քնարական նվագների հմայքը», (Ա. Թովմասյանի քնարերգությունը), «Չանգակ-97» հրատ., Եր. 2002, 50 էջ:
13. «Վաստակավոր արտիստուհի Է. Առստամյան», «Մշակույթ» հրատ., Ստեփ., 2002, 16 էջ:
14. «Յայ գրականության ուսուցումը բուհում» (ուսումնամեթոդական ձեռնարկ), «ԱրՊՀ հրատ.», Ստեփ., 2003, 112 էջ:
15. «Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան», (ղասագիրք մագիստրանտների եւ ասպիրանտների համար), ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն, «Դիզակ պլուս» հրատ., 2003, 350 էջ:
16. «Յայ պոեզիայի զարգացման միտումներն Արցախում, (1950-1990-ական թթ.)», ԼՂՀ ԳՄ «Վաչագան բարեպաշտ» հրատ., 2005, 375 էջ:
17. «Յրաչյա Բեգլարյանի քնարերգությունը», ԼՂՀ ԳՄ, ԱրՊՀ գրականության եւ լրագրության ամբիոն, Եր. 2004, 64 էջ:
18. «Յրանտ Մաթեոսյանի գրական հայացքները», ԱրՊՀ գրականության եւ լրագրության ամբիոն, «Դիզակ պլուս» հրատ., 2006, 48 էջ:

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

19. «Հանճարեղ բանաստեղծն ու քաղաքացին» (Եղիշե Չարենց): ԱրՊՀ գրականության եւ լրագրության ամբիոն, «Դիզակ պյուս» հրատ., 2007, 32 էջ:
20. «Մաքսիմ Չովիաննիսյան. Լեռնաղբյուրի վիպաշխարհը»: ԱրՊՀ գրականության եւ լրագրության ամբիոն, «Սոնա» հրատ., 2007, 122 էջ:
21. «Հայրենի եզերքի եւ սիրո ծարավը» (Արմեն Չովիաննիսյանի պոեզիան): ԱրՊՀ գրականության եւ լրագրության ամբիոն, «Դիզակ պյուս» հրատ., 2008, 48 էջ:
22. «Կյանք բեմի վրա» (Ժող. արտիստներ Ս. Միքայելյան, Ն. Ասատրյան) ԱրՊՀ գրականության եւ լրագրության ամբիոն, «Դիզակ պյուս» հրատ., 2008, 64 էջ:
23. «Ռոբերտ Եսայանի պոեզիան», ԱրՊՀ գրականության եւ լրագրության ամբիոն, «Դիզակ պյուս» հրատ., 2008, 54 էջ:
24. «Հայ գրականագիտության գերաստղը» (ակադեմիկոս Ս. Սարինյանի մասին) ԱրՊՀ գրականության եւ լրագրության ամբիոն, «Դիզակ պյուս» հրատ., 2009, 32 էջ:
25. «Հայ հին եւ միջնադարյան գրականության պատմություն» (ուսումնամեթոդական ցուցումներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար), ԱրՊՀ գիտխորհուրդ, «ԱրՊՀ հրատ.», 2010, 48 էջ:
26. «Ընտիր երկեր», 10-հատորով, հատոր 5. «Հայ պոեզիայի զարգացման միտումներն Արցախում» (ուսումնական ձեռնարկ): ԼՂՀ գրողների միություն, ԱրՊՀ գիտխորհուրդ: «Սոնա» հրատ., 2010, 480 էջ:
27. «Ընտիր երկեր», 10-հատորով, հատոր 6. «Հայ արձակի զարգացման միտումներն Արցախում» (ուսումնական ձեռնարկ): ԼՂՀ գրողների միություն, ԱրՊՀ գիտխորհուրդ: «Սոնա» հրատ., 2010, 480 էջ:
28. «Ընտիր երկեր», 10-հատորով, հատոր 7. «Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան» (դասագիրք մագիստրանտների եւ ասպիրանտների համար), ԼՂՀ գրողների միություն, ԱրՊՀ գիտխորհուրդ: «Դիզակ պյուս» հրատ., 2010, 480 էջ:
29. «Ընտիր երկեր», 10-հատորով, հատոր 8. «Մենագրություններ, գրախոսություններ, էսսեներ», ԼՂՀ գրողների միություն, ԱրՊՀ գիտխորհուրդ: «Սոնա» հրատ., 2010, 480 էջ:
30. «Ընտիր երկեր», 10-հատորով, հատոր 9. «Մենագրություններ, գրախոսություններ, էսսեներ», ԼՂՀ գրողների միություն, ԱրՊՀ գիտխորհուրդ: «Սոնա» հրատ., 2011, 480 էջ:
31. «Ընտիր երկեր», 10-հատորով, հատոր 10. «Մենագրություններ, էսսեներ, հուշեր, հոդվածներ, թատերախոսություններ»: ԼՂՀ գրողների միություն, ԱրՊՀ գիտխորհուրդ: «Դիզակ պյուս» հրատ., 2011, 480 էջ:

**3. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ, ՀԱՆԴԵՍՆԵՐՈՒՄ,
ԺՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ**

1. «Հասունության ճանապարհով» (բանաստեղծ Աթանես Սենալի մասին), հեղինակակից Ա. Բալյան, «Գրական Աղբյուր» ամսագիրը, Բաքու, թիվ 1, 1957, էջ 120-122:
2. «Մեր պոեզիայի անսպառ աղբյուրը» (Հ. Հովհաննիսյանի մասին) «Գրական Աղբյուր» թիվ 3:
3. «Հայրենասիրության գաղափարը Ն. Ջարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության մեջ», «Գրական Աղբյուր» հանդես, 1963 թ. թիվ 6», էջ 58-67:
4. «Ն. Ջարյանի «Փորձադաշտ» կոմեդիան», Վ.Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատանքների ժողովածու, Բաքու, 1964 թ.:
5. «Նրանք ոգեշնչել ու կոչել են հերոսության» (Ն. Ջարյանի պիեսների մասին), «Գրական Աղբյուր», թիվ 2, 1965 թ., Բաքու.:
6. «Հանճարեղ պատանին» (Մ. Մեծարենց), «Գրական Աղբյուր», Բաքու, 1967 թ., թիվ 1:
7. «Անմահ վիպասանը» (Պ. Պռոշյան), «Գրական Աղբյուր», Բաքու, 1967 թ., թիվ 3:
8. «Ն. Ջարյանի «Հացավան» եւ «Պարոն Պետրոսն ու իր նախարարները» վեպերը», Բաքվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի դասախոսների գիտական աշխատանքների ժողովածու, 1967 թ.:
9. «Հոկտեմբերի երգիչը» (Ե. Չարենց), «Լիտերատուրնի Ազերբայջան» ամսագիր, 1967 թ. թիվ 3:
10. «Բանաստեղծի սիրտը» (Թ. Հուրյանի «Հուշարձան» գրքի առաջաբանը, Ազերնեշր, 1970 թ. էջ 5-10:
11. «Ժողովուրդների բարեկամության արտացոլումը Ն. Ջարյանի ստեղծագործություններում», Վ.Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի դասախոսների գիտական աշխատանքների ժողովածու: 1971 թ. Բաքու.:
12. «Գալիքի երգը հուշարձան է նրան» (Թ. Հուրյան), «Գրական Աղբյուր», Բաքու, թիվ 4, 1972 թ., էջ 86-98:
13. «Անմահ թատերագետն ու քաղաքացին» (Գ. Սունդուկյան), «Գրական Աղբյուր», 1977 թ., թիվ 5, էջ....:
14. «Վ. Չերնիշևսկի», «Գրական Աղբյուր», 1978, թիվ 3, էջ 5-10:
15. «Շնորհակալ վաստակ» (Գ. Գաբրիելյանի «Ընտիր երկերի» առաջաբանը), «Գյանջլիկ» հրատ., 1978 թ., էջ 5-17:
16. «26 կոմիսարների կերպարները սովետական պոեզիայում», Գիտական աշխատությունների ժողովածու, Ազերնեշր, Բաքու, 1983 թ., էջ 160-163:

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

17. «Սոցալիստական ռեալիզմի ինտերնացիոնալիստական պաթոսը», Բաքվի պետհամալսարանի հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, «Պետհամալսարան» հրատ., 1984, էջ 81-83:
18. «Դավթակ Բերթոլդ եւ նրա հերոսը», «Արցախ» ամսագիր, Ստեփանակերտ, 1990 թ. թիվ 1, էջ 52-56:
19. «Աստծո տաճարի հմայքը» (Վ. Հակոբյանի «Տաճարն Աստծո» գրքի մասին): «Արցախ» ամսագիր, 1991, թիվ 4, էջ 10-15:
20. «Ավանդատան անմար սերը» (Արմեն Հովհաննիսյանի պոեզիայի մասին), «Արցախ» ամսագիր, 1992 թ. թիվ 2-3, էջ 6-7:
21. «Հայրենի եզերքի երգիչը» (Հր. Բեգլարյանի պոեզիայի մասին), «Արցախ» ամսագիր, 1993 թ. թիվ 3-4, էջ 18-19:
22. «Հ. Թումանյանը եւ Արցախը», «Միտք» գիտատեսական հավելված «Ազատամարտ» թերթի, Երեւան, 1994 թ., թիվ 9, էջ ԻԸ-ԼԱ:
23. Ծովինար Բաղդասարյանի «Հոգու մեղեդիներ» գրքի առաջաբանը, «Սոնա» հրատ., 1998թ., էջ 7-8:
24. «Արցախյան պատերազմի բանաստեղծական տարեգրությունը», Արցախյան շարժման 10-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու: «Երեւանի պետհամալսարան» հրատ., 1998, էջ 60-67:
25. «Առասպելների բանաստեղծացումը» (Ակադ. Սարինյանի «Բանաստեղծի հայտնությունը» գրքի առաջաբանը): «Վաչագան Բարեպաշտ» հրատ, 1998 թ.:
26. «Հետաքրքիր գիրք» (Փ. Հակոբյանի «Դրմբոն գյուղի պատմությունը» գրքի առաջաբանը): «Պոլիգրաֆ» հրատ., 1998, էջ 3-5:
27. «Ցավի եւ երազի երգեր» (Ա. Թովմասյանի «Զգույշ քայլեր, մարդիկ» գրքի առաջաբանը), Երեւան, «Ձանգակ-97» հրատ., 1999 թ.:
28. «Թատրոնին նվիրված իմաստալից կյանք» (վաստ. արտիստ Ս. Հարությունյանի մասին): ԼՂՀ Մշակույթի նախարարություն, 2000 թ.:
29. «Հայրենիքի ճակատագիրը Վ. Թեքեյանի պոեզիայում», ԱրՊՀ գիտական աշխատանքների թեզիսների ժողովածու՝ նվիրված Շուշիի ազատագրման 8-րդ տարեդարձին, 2000թ., էջ 9-11:
30. «Մուշեղ Իշխանի հայրենապատումը», ԱրՊՀ դասախոսների գիտական աշխատանքների թեզիսների ժողովածու՝ նվիրված Հայաստանում Քրիստոնեության ընդունման 1700-ամյակին: «ԱրՊՀ հրատ.», 2001 թ., էջ 10-11:
31. «Հին հայոց տաղաչափական արվեստի հանճարեղ մեկնաբանը», Շուշիի ռեալական ուսումնարանի հիմնադրման 120-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու: «Երեւանի պետհամալսարան հրատ.» 2001, էջ 30-31:
32. «Պատկերավորության միջոցները Գ, Գաբրիելյանի բանաստեղծություններում», հայ բարբառագիտության միջազգային համաժողովի

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

Մյուսերի ժողովածու: «Փարիզ-Երևան», 2001, էջ 9-10:

33. «Հայրենասիրության թեման պոլսահայ պոեզիայում», «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», «ԱրՊՀ հրատ.», 2001, թիվ 1, էջ 80-86:
34. «Արցախյան պատերզամը եւ հայ պոեզիան», «ԼՂՀ պաշտպանության նախարարություն», համաբանակային գիտագործնական կոնֆերանսի ժողովածու, 2002թ., էջ 49-71:
35. «Երգեր մաքառման եւ հավատի, (Հ. Բաղմանյանի «Հիշեցեք, մարդիկ» գրքի առաջաբանը), «ԱրՊՀ հրատ.», 2001, էջ 7-16:
36. «Պատմությունը Վ. Դավթյանի պոեմներում», ԱրՊՀ գիտական տեղեկագիր: «ԱրՊՀ հրատ.», 2003, էջ 137-142:
37. «Ժամանակի հրամայականը» (Մշակույթն Արցախում), «Կրթությունը եւ գիտությունն Արցախում», Երևան., 2004 թ., N3-4 «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», էջ 66-70
38. «Պարույր Սեւակի դասերը», «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2004, թիվ 1, էջ 69-74:
39. «Հայրենապատում կարոտի եւ հույսի» (Հ. Շիրազի պոեզիան), «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2004, N2, էջ 62-70
40. «Արցախի բանաստեղծները եւ Մեսրոպ Մաշտոցը», «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2005, թիվ 1, էջ 7-14:
41. «Հր. Սաթևոսյանի քննադատական հայացքները», «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2005, էջ 81-85:
42. «Հավատի ճամփորդը» (Արսեն Խաչատրյանի մասին), «Շուշիի պետ. մանկավարժական քոլեջ», 2006 թ., ԼՂՀ պաշտպանության նախարարություն, էջ 258-260:
43. «Գրականությունը եւ պետություն-հասարակություն-բանակ կապը» ժողովածուի մեջ մեծ աշխատանք:«Պոլիգրաֆ» ՓԲԸ հրատ., 2007:
44. «Անսպառ զանձարանի հմայքը», Գ. Գաբրիելյանի ընտրանու առաջաբանը, ԼՂՀ Գրողների միություն, «Դիզակ պլուս» հրատ., 2007, էջ 3-17:
45. «Արցախյան պատերազմը Մ. Հովհաննիսյանի արձակում», «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի տեղեկագիր, 2007 թ., էջ 108-127:
46. «Հանձարեղ պոետն ու ազնիվ քաղաքացին», «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N1., 2007 թ., էջ 96-102:
47. «Հայոց մեծ եղեռնը հայ պոեզիայում», «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի տեղեկագիր», 2007թ., N1, էջ 94-101:
48. «Հայ վիպագրության եւ դրամատուրգիայի հսկան» (Ալ. Շիրվանզադե), «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N1., 2007, էջ 96-102:
49. «Արցախյան պատերազմի նահատակների կերպարը հայ պոեզիայում», «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի տեղեկագիր», 2008թ., էջ 88-97:
50. «Հորովելված հավերժություն» (Գ. Գաբրիելյանի մասին - հուշերի

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

«Գիրքը», ԼՂՀ գրողների միություն: «Դիզակ պլուս» հրատ., 2007թ., էջ 124-176:

51. «Առաքել Առաքելյան»(ղիմանկար), ԱրՊՀ գիտխորհուրդ, Երեւան, «Անտարես հրատ.», 2005 թ., էջ 33-36:

52. «Սեւակ Արզումանյան» (ղիմանկար), ԱրՊՀ գիտխորհուրդ, Երեւան, «Անտարես հրատ.», 2005 թ., էջ 46-54:

53. «Արտաշես Կարինյան» (ղիմանկար), ԱրՊՀ գիտխորհուրդ, Երեւան, «Անտարես հրատ.», 2005 թ., էջ 97-100:

54. «Սերգեյ Սարինյան» (ղիմանկար), ԱրՊՀ գիտխորհուրդ, Երեւան, «Անտարես հրատ.», 2005 թ., էջ 131-135:

55. «Բեմարվեստի մեր վարպետները» (Ի. Ալավերդյան, Կ. Ալավերդյան). Գիրք Ա: «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2007, էջ 1-3:

56. «Գաղափարական պայքարի դարբնոցը», «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2008 թ. N1, էջ 3-9:

57. «Վ. Հակոբյանի գրականագիտական հայացքները»: «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի գիտական տեղեկագիր, 2009, թիվ 1, էջ 68-78:

58. «Սարգիս Աբրահամյանի գրական ժառանգությունը», «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի գիտական տեղեկագիր, 2009, թիվ 2, էջ 93-104:

59. «Լուսառաք ժառանգություն» (Ի. Ալավերդյանի «Ընտիր երկեր» ժողովածուի առաջաբանը): «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2009, էջ 3-10:

60. «Գրականագիտական ակնառու վաստակ» (Մելս Սանթրյանի գրականագիտական երկերը): «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2009, թիվ 1, էջ 121-123:

61. «Հավիտյան սերունդների հետ» (Ս. Աբրահամյանի մասին) , ԱրՊՀ «Գիտական ընթերցումներ» ժողովածու, թեգիսներ: «ԱրՊՀ հրատ.», 2009, էջ 40-41:

62. «Հ. Թումանյանը եւ Ե. Չարենցը»: «Միջազգային գիտաժողովի նութեր», «ԱրՊՀ հրատ.», պրակ առաջին, 2009, էջ 30-33:

63. «Բեմարվեստի մեր վարպետները» (Կ. Ալավերդյան), Գիրք Բ: Առաջաբան: ԼՂՀ գրողների միություն: «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2009, էջ 1-2:

64. «Խ. Արվյանի «Վերք Հայաստանի» հայ ազգային վիպասանության հիմնաքար: «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի գիտական տեղեկագիր, «Դիզակ պլուս» հրատ., 2010, թիվ 1 էջ 92-102:

65. «Եռաստիճան թռիչք դեպի պոեզիայի բարձունքներ» (Ա. Հարությունյանի «Հեռուստապոեմներ...» ժողովածու): ՀԳՄ, Երեւան, 2010, էջ 502-511:

66. «Հայդուկային պայքարի շեփորահարը» (Ավ. Իսահակյան): ԼՂՀ գրողների միություն, «Դիզակ պլուս» հրատ., 2010, էջ 118-126:

67. «Հայրենիք եւ ճակատագիր» (Դ. Գասպարյանի համանուն ժողովածուի մասին): «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի գիտական տեղեկագիր, 2010, թիվ 2, էջ 211-220:

68. «Արցախյան գոյամարտի գեղարվեստական պատկերը հայ պոեզիայում»: Միջազգային գիտաժողով. «Ժողովրդավարության կայացումը հետխորհրդային շրջանում. հիմնախնդիրներն ու հեռանկարները», Երևան, 2010, էջ 292-299:

4. ՀՈՂՎԱԾՆԵՐ` ՏՊԱԳՐՎԱԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԵՐԹԵՐՈՒՄ

1. «Մոր ծայնը», համահեղինակ Վլ. Աբրահամյան, (Ս. Մարգարյանի համանուն գրքի մասին), «Կոմունիստ», Բաքու, 3 հունիսի, 1953:

2. «Սարմենի «Յոթ երջանիկները» գիրքը», «Կոմունիստ», Բաքու, 4 հունիսի, 1953:

3. «Ժողովրդի տենչը», (երիտասարդ բանաստեղծների ստեղծագործությունների մասին), «Կոմունիստ», Բաքու, 24 հուլիսի, 1953:

4. «Գրական Աղբյուր» հանդեսի 4-րդ համարը: «Կոմունիստ», Բաքու, 15 մայիսի, 1959:

5. «Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի հայկական պետական թատրոնի արտիստների ժամանումը Բաքու: «Կոմունիստ», Բաքու, 21 մայիսի, 1959:

6. «Մեծ համերգ» (Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի հայկական պետական ակադեմիական թատրոնի համերգները Բաքվում): «Կոմունիստ», Բաքու, 27 մայիսի, 1959:

7. «Արմեն Հովսեփյանի բանաստեղծությունները» (Մեծ հայրենականուն զոհված Ա. Հովսեփյանի անտիպ երգերի մասին): «Կոմունիստ», Բաքու, 4 հուլիսի, 1959:

8. «Սրտառուչ հանդիպում Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի արտիստների հետ»: «Կոմունիստ», Բաքու, 14 հունիսի, 1959:

9. «Գործարանի բեմի վրա» (Բաքվի հայկական ժողովրդական թատրոնի ներկայացումների մասին), «Կոմունիստ», Բաքու, 19 հունվարի, 1960:

10. «Հաջողված գրքույկ» (Գ. Օհանյանի «Կաթիլներ» ժողովածուի) մասին, «Կոմունիստ», Բաքու, 11 սեպտեմբերի, 1960:

11. «Ոգեւորության աղբյուր» (Յուրի Գագարինի կերպարը պոեզիայում), «Կոմունիստ», Բաքու, 24 մայիսի, 1961:

12. «Մեր Երևանը», «Ավանգարդ» թերթ, Երևան, 28 հոկտեմբերի, 1963:

13. «Տաղանդավոր երգչուհին» (Տաթևիկ Սազանդարյանի մասին), «Կոմունիստ», Բաքու, 3 հունիսի, 1962:

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

14. «Անմահություն» (Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը), «Կոմունիստ», Բաքու, 23 հոկտեմբերի, 1963:
15. «Սրտերի երգը» (Բանաստեղծները ռուս ժողովրդի մասին), «Կոմունիստ», Բաքու, 22 մայիսի, 1964:
16. «Գրքերի աշխարհում» (Վ. Անանյանի «Անծրել», Վ. Սարոյանի «Պատերազմ է հայտարարվել» գրքերի մասին), «Կոմունիստ», Բաքու, 20 փետրվարի, 1964:
17. «Կամուրջի վրա» (Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հյուրախաղերը Բաքվում: Գ. Բորյանի համանուն պիեսի ներկայացման մասին): «Կոմունիստ», Բաքու, 9 հուլիսի, 1964:
18. «Մեր կյանքի հրատապ խնդիրները» (Օգնություն դրամատիկական թատրոններին): «Կոմունիստ», Բաքու, 19 փետրվարի, 1965:
19. «Չաճելի ներկայացում» (Կիրովականի դրամատիկական թատրոնի հյուրախաղերը Բաքվում, Կ. Բաուչիձեի «Բակում կատաղի շուն կա» պիեսի ներկայացման առթիվ): «Կոմունիստ», Բաքու, 19 հուլիսի, 1965:
20. «Պեպոն» ժողովրդական թատրոնում»: «Կոմունիստ», Բաքու, 19 հունվարի, 1966:
21. «Չեղափոխության անմահ երգիչը» (Յ. Չակոբյան-100): «Ազերբայջան մուալլիմի», Բաքու, 29 մայիսի, 1966:
22. «Գրողի անմահությունը» (Պ. Պռոշյան-130): «Կոմունիստ», Բաքու, 16 հունիսի, 1967:
23. «Եվ բացվում է աշխարհը» (Վ. Չովակիմյանի համանուն ժողովածուի մասին): «Կոմունիստ», Բաքու, 27 դեկտեմբերի, 1967:
24. «Սրբկահավը» (Ս. Գորկի), «Կոմունիստ», Բաքու, 28 մարտի, 1968:
25. «Ժողովրդների մեծ բարեկամը» (Յ. Թումանյան-100): «Կոմունիստ», Բաքու, 17 սեպտեմբերի, 1969:
26. «Չավերժախոս արվեստագետը» (Ստ. Ջորյան-80): «Սովետական Ղարաբաղ», 16 սեպտեմբերի, 1970:
27. «Մանկական աշխարհի սիրելի երգիչը» (Ա. Խնկոյան-100): «Կոմունիստ», Բաքու, 28 հոկտեմբերի, 1970:
28. «Բազմավաստակ գրողը» (Արշ. Դարբնի-60): «Կոմունիստ», Բաքու, 10 փետրվարի, 1970:
29. «Բազմավաստակ մանկավարժն ու գրականագետը» (Գ. Անտոնյան-60): «Կոմունիստ», Բաքու, 21 փետրվարի, 1971:
30. «Չանճարեղ արվեստագետը» (Դոստոևսկի-150): «Կոմունիստ», Բաքու, 12 նոյեմբերի, 1971:
31. «Վաստակաշատ գրողը» (Յ. Սիրաս-70): «Սովետական Ղարաբաղ», 15 փետրվարի, 1972:
32. «Անմահ բանաստեղծը» (Յ. Չայնե-175): «Սովետական Ղարաբաղ», 13 դեկտեմբերի, 1972:

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

33. «Սրտաբուխ ժպիտներ եւ հաճելի գույներ» (Գ. Գաբրիելյանի «Գույների երգը» եւ «Անմեղ ժպիտներ» գրքերի մասին): «Սովետական Ղարաբաղ», 17 հոկտեմբերի, 1973:
34. «Գիրք բարեկամության մասին» (Լեռնային Ղարաբաղի գրողների ստեղծագործությունների «50 գարուն» ժողովածուի մասին): «Կոմունիստ», Բաքու, 5 հունվարի, 1973:
35. «Բանաստեղծի անհանգիստ սիրտը» (Գ. Աղաջանյանի «Անհանգիստ է սիրտս» գրքի մասին): «Սովետական Ղարաբաղ», 19 ապրիլի, 1973:
36. «Բանաստեղծ քաղաքացին» (Մայկովսկի-80): «Սովետական Ղարաբաղ», 19 հուլիսի, 1973:
37. «Մեծ բանաստեղծն ու գիտնականը» (Վ. Բրյուսով-100): «Կոմունիստ», Բաքու, 12 դեկտեմբերի, 1973:
38. «Այրվող պատիվ» (Ա. Դանիելյանի համանուն պիեսի բեմադրությունը Ստեփանակերտի դրամատիկական թատրոնում): «Սովետական Ղարաբաղ», 5 փետրվարի, 1974:
39. «Աշխարհապարփակ հանճարը» (Պուշկին-175): «Կոմունիստ», Բաքու, 6 հունիսի, 1974:
40. «Մեծ բանաստեղծը» (Պուշկին-175): «Սովետական Ղարաբաղ», 6 հուլիսի, 1974:
41. «Կյանք եւ խիզախում» (Ն. Ս. Օստրովսկի): «Սովետական Ղարաբաղ», 20 սեպտեմբերի, 1974:
42. «Երգը զինվորական շարքում» (Սովետական բանաստեղծների երգերը զինվորի մասին): «Կոմունիստ», Բաքու, 6 մայիսի, 1975:
43. «Գեղազետն ու քաղաքացին» (Մ. Շոլոխով): «Կոմունիստ», Բաքու, 20 մայիսի, 1975:
44. «Չերոս ժողովրդի գրողը» (Մ. Շոլոխով): «Սովետական Ղարաբաղ», 24 մայիսի, 1975:
45. «Տրիբունալ», (Ա. Մակայոնսկու «Տրիբունալ» պիեսի բեմադրությունը Ստեփանակերտի դրամատիկական թատրոնում): «Սովետական Ղարաբաղ», 10 հունիսի, 1975:
46. «Գրականությունը եւ ժամանակակից գաղափարական պայքարը», «Սովետական Ղարաբաղ», 2 օգոստոսի, 1975:
47. «Դաստիարակության հզոր զենքը» (գրողները եւ դաստիարակության հարցերը): «Սովետական Ղարաբաղ», 1 հոկտեմբերի, 1975:
48. «Նշանավոր բանահավաքն ու մանկավարժը» (Մարգարիտա Գրիգորյան): Համահեղինակ Գ. Անտոնյան: «Սովետական Ղարաբաղ», 12 սեպտեմբերի, 1976:
49. «Մեծահամբավ բանաստեղծն ու քաղաքացին» (Ն. Տիտոնով-80): «Սովետական Ղարաբաղ», 3 դեկտեմբերի, 1976:

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

50. «Մեծատաղանդ գրողն ու քաղաքացին» (Դ. Դեմիրճյան-100): «Սովետական Ղարաբաղ», 24 փետրվարի, 1977:
51. «Մանկավարժն ու գրողը» (Իսահակ Ալավերդյան-60): «Սովետական Ղարաբաղ», 5 ապրիլի, 1977:
52. «Առաջին հնգամյակների ոգեշունչ երգիչը» (Ե. Չարենցի մասին): «Սովետական Ղարաբաղ», 21 դեկտեմբերի, 1977:
- 53 «Բարձր արվեստով եւ հայրենասիրությամբ» (Լ. Ն. Տոլստոյ): «Սովետական Ղարաբաղ», 7 ապրիլի, 1978:
54. «Ժողովրդական հոգեբանության հայելին» (Բանահյուսության մասին): «Սովետական Ղարաբաղ», 31 հոկտեմբերի, 1980:
55. «Հարմոնիայի որդին» (Ալեքսանդր Բլոկ): «Սովետական Ղարաբաղ», 28 նոյեմբերի, 1980:
56. «Կոմունիստի կերպարը պոեզիայում»: «Սովետական Ղարաբաղ», 4 օգոստոսի, 1981:
57. «Գրողն ու քաղաքացին» (Ալ. Ֆադեե): «Սովետական Ղարաբաղ», 27 դեկտեմբերի, 1981:
58. «Մարգո Բալասանյան» (Ի. Ալավերդյանի համանուն գրքի մասին): «Կոմունիստ», Բաքու, 10 ապրիլի, 1983:
59. «Մահը չի դիպչի երգին» (թուրքմեն բանաստեղծ Գ. Գուլյամի մասին): «Սովետական Ղարաբաղ», 12 մայիսի, 1983:
60. «Թափանցելով մարդկային հոգու խորքերը» (Ս. Գրգորյանի «Առանց քեզ» ժողովածուի մասին): «Կոմունիստ», Բաքու, 21 մայիսի, 1983:
61. «Ստեղծագործական վերելքի ուղիով» (Ի. Ալավերդյանի «Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական հայկական դրամատիկական թատրոն» գրքի մասին): «Սովետական Ղարաբաղ», 23 հուլիսի, 1983:
62. «Գուրգեն Մահարի-80»: «Սովետական Ղարաբաղ», 2 օգոստոսի, 1983:
63. «Մեծ հաղթանակի ջահակիրները» (Մեծ հայրենականը հայ պոեզիայում): «Սովետական Ղարաբաղ», 10 ապրիլի, 1984:
64. «Պայքարի եւ հացի երգիչը» (Դ. Վարուժան-100): «Սովետական Ղարաբաղ», 21 ապրիլի, 1984:
65. «Լենինը շրջում է աշխարհով» (Վ. Ի. Լենինը հայ պոեզիայում): «Սովետական Ղարաբաղ», 28 ապրիլի, 1984:
66. «Կրակված սրտի լույսը» (թաթար բանաստեղծ Մ. Ջալիլի մասին): «Սովետական Ղարաբաղ», 25 օգոստոսի, 1984:
67. «Ամխոնջ մանկավարժն ու գիտնականը» (Կ. Դավթյան-80): «Սովետական Ղարաբաղ», 17 հոկտեմբերի, 1984:
68. «Վաստակաշատ արտիստուհին» (Ժող. արտիստուհի Ն. Ասատրյան-60): «Սովետական Ղարաբաղ», 25 մայիսի, 1985:

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

69. «Ռիչարդ Երկրորդ» (Կիրովականի Յ. Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հյուրախաղերի առթիվ): «Սովետական Ղարաբաղ», 12 հոկտեմբերի, 1985:
70. «Աշխատանքի եւ բարեկանության երգեր»: «Սովետական Ղարաբաղ», 24 փետրվարի, 1986:
71. «Արվեստի ուժով» (աշխատանքի թեման հայ նորագույն պոեզիայում): «Սովետական Ղարաբաղ», 18 մարտի, 1986:
72. «Թարգմանությունը կամուրջ է» (թարգմանական արվեստի մասին): «Սովետական Ղարաբաղ», 17 մայիսի, 1986:
73. «Ժամանակի կենսական պահանջը» (բարձրագույն դպրոցի ռեֆորմի մասին): «Սովետական Ղարաբաղ», 10 հուլիսի, 1986:
74. «Արժեքավոր աշխատություն» (Ս. Արզումանյանի «Սովետահայ վեպը» աշխատության մասին): «Սովետական Ղարաբաղ», 30 օգոստոսի, 1986:
75. «Բաքուն Չարենցի պոեզիայում»: «Սովետական Ղարաբաղ», 13 մարտի, 1987:
76. «Ներշնչանքի անսպառ աղբյուրը» (Ս. Գրիգորյանի ծննդյան 80-ամյակի առթիվ): «Կոմունիստ», Բաքու, 7 մայիսի, 1987:
77. «Անսպառ տաղանդի հմայքը» (Գ. Գաբրիելյան-60): «Սովետական Ղարաբաղ», 12 հունիսի, 1987:
78. «Եղիշեն Չարենց-90»: Բուկլետ, 1987:
79. «Հավերժության զուգորդը» (Սայաթ-Նովայի երգերի մասին): «Կոմունիստ», Բաքու, 17 նոյեմբերի, 1987:
80. «Հավերժության զուգորդը» (Սայաթ-Նովա): «Նոր ուղի», Շահումյանի շրջանային թերթ, 21 նոյեմբերի, 1987:
81. «Բարության եւ սիրո երգիչը» (Սայաթ-Նովայի երգերը), նույնը «Սովետսկի Կարաբախ» (ռուսերեն) թերթում: «Սովետական Ղարաբաղ», 22 նոյեմբերի, 1987:
82. «Սերունդներին կտակված կյանք» (Ս. Շահինյան-100): «Սովետական Ղարաբաղ», 16 ապրիլի, 1988:
83. «Առաքելություն հրաբորբոք հոգու» (գրքույկ ժող. դերասանուհի Ս. Բալասանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ): «Ստեփանակերտ» բուկլետ:
84. «Անմահության գաղտնիքը» (Գ. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի 1000-ամյակի առթիվ): «Սովետական Ղարաբաղ», 30 մարտի, 1989:
85. «Ճշմարտությունը ամեն ինչից վեր է» (պատասխան հայոց պատմության զեղծարար ադրբեջանական վայ գիտնականներին). համահեղինակ Ս. Վ. Դադայան: «Սովետական Ղարաբաղ», 23 մայիսի 1989:
86. «Նա մեզ հետ է եւ այս պահին» (Հայոց մեծ երկրաշարժի օրերին

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

7. Թումանյանի երգերի սփոփիչ ուժը): «Կարմիր դրոշ» Ասկերանի շրջա-
նային թերթ, 23 մարտի, 1989:
87. «Հայ ժողովրդի բարեկամը» (վրաց բանաստեղծ Ի. Գրիշաշվիլի-
100): «Կարմիր դրոշ», 27 ապրիլի, 1989:
88. Ղ. Աղայանի ոգին Արցախում: (Ղ. Աղայան -150): «Խորհողային
Ղարաբաղ», 23 դեկտեմբերի 1990 թ.
89. «Երգող ջութակների հրաշքը»:(Երեւանի «Երգող ջութակներ» հա-
մույթի համերգը Ստեփանակերտում): «Արցախ» թերթ, 16 հուլիսի 1993 թ.
90. «Հիշողության ուժը» (Գետաշենի հերոս Թաթուլ Կրպեյանի բանաս-
տեղծությունների «Թաթուլ» գրքի մասին): «Արցախ» թերթ, 9 դեկտեմբե-
րի, 1997 թ.:
91. «Մեծն Սեւակը» (Պ. Սեւակ - 70): «Խաչեն» թերթ, 27 փետրվարի,
1994 թ.
92. «Ցավի ճիչն ու ապրելու հավատը» (Հայոց եղեռն - 80): «ԼՂ Հան-
րապետություն», 22 ապրիլի, 1995 թ.:
93. «Հայդուկային պայքարի շեփորահարը» (Ավ. Իսահակյան - 120):
«Մարտիկ» թերթ, 26-27 հոկտեմբերի, № 42, 1995 թ.:
94. «Ոսկեգույն մոլոցի հավերժախոս բեռը» (Ս. Խանգաղյան- 80):
«ԼՂ Հանրապետություն» 20 դեկտեմբերի, 1995 թ.:
95. «Ասք հերոսական գոյամարտի» (Վ. Հակոբյանի «Արցախյան բա-
լլադ» պիեսի բեմադրության առթիվ): «Եղիցի լույս», 1995, թիվ 2:
96. «Երգը եւ զենք է, եւ հաց»: «Եղիցի լույս», 1995, թիվ 4:
97. «Բանաստեղծի սիրո աստղերը»: (Հ. Հայկենցի «Սիրո աստղեր»
գիրքը): «Եղիցի լույս», 1996, թիվ 5-6:
98. «Ներիր, Կոմիտաս»: (Նահատակ-ազատամարտիկ-բանաստեղծ Կ.
Հակոբյանի հիշատակին): «Զրաբերդ» թերթ, մարտ-ապրիլ, թիվ 1-2, 1996:
99. «Թեւավոր երգերի ճախրանքը»: (Զիվանի - 150): «ԼՂ Հանրապե-
տություն», 1 մայիսի, 1996 թ.:
100. «Գրական օջախի նվիրյալը» (Ժ. Անդրյան - 70): «ԼՂ Հանրապե-
տություն», 18 հունիսի, 1996 թ.:
101. «Ծիածան դարավոր բարեկամության»: («Հայաստանի պոեզի-
ան» ռուսերեն ժողովածուի 80-ամյակի առթիվ): «ԼՂ Հանրապետություն»,
20 օգոստոսի, 1996 թ.:
102. «Երբ մեկտեղ են շառաչում երգն ու զենքը»: (Արցախահայ պոե-
զիայի մասին): «ԼՂ Հանրապետություն», 20 օգոստոսի, 1996 թ.:
103. «Խոսք հիշատակի» (Հուշեր Ի. Ալավերդյանի մասին): «ԼՂ Հան-
րապետություն», 5 հոկտեմբեր, 1996 թ.:
104. «Հայ ժողովրդի պատմության քառուղիների մարգարեն»: (Ե. Չա-
րենց - 100): «ԼՂ Հանրապետություն», 1 մարտի, 1997 թ.:
105. «Արցախյան պատերազմի բանաստեղծական տարեգրությունը»:

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

- «Մարտիկ», 24-30 դեկտեմբերի, թիվ 52, 1997.:
106. «Արցախյան պատերազմի բանաստեղծական տարեգրությունը»: «Մարտիկ», 20 դեկտեմբերի, թիվ 3, 1998թ.:
107. «Քառսից քանված ջերմացնող լույս» (Ռ. Եսայանի «Քառս եւ լույս» ժողովածուի մասին): «ԼՂ Հանրապետություն» 14 փետրվարի 1998 թ.
108. «Զենքի եւ երգի միասնության ուժը»: «Ստեփանակերտ», թիվ 9-10, 1998 թ.:
109. «Մատյան հառներգության» (Ն. Ավագյանի համանուն գրքի մասին): «ԼՂ Հանրապետություն», 12 մարտի, 1998 թ.:
110. «Արցախյան պատերազմի բանաստեղծական տարեգրությունը»: «Մարտիկ», 18-24 մարտի, թիվ 10, 1998 թ.:
111. «Արցախյան պատերազմի բանաստեղծական տարեգրությունը»: «Մարտիկ», 22-28 ապրիլի, թիվ 15, 1998 թ.:
112. «Հարության կոչ, հարատեւելու աղոթք» (Վ. Հակոբյանի «Գողգոթա» պոեմի մասին): «ԼՂ Հանրապետություն», 16 ապրիլի, 1998 թ.:
113. «Հայրենապատումի վաստակ» (հարցազրույց սփյուռքահայ գրականագետ-մանկավարժ Գ. Շահինյանի հետ): «ԼՂ Հանրապետություն», 25 ապրիլի, 1998 թ.:
114. «Արցախի ոգին» (Ռ. Գեւորգյանի, «Հերոսապատումի հավերժատուգին» բանաստեղծական ժողովածուի մասին): «Ստեփանակերտ», 1 մայիսի, 1998 թ.:
115. «Տաղանդի անսպառ գույները» (Վ. Հակոբյան - 50): «ԼՂ Հանրապետություն», 21 մայիսի, 1998 թ.:
116. «Թատերական մի ներկայացման եւ մեզ հուզող խնդիրների մասին» (Ֆինն դրամատուրգ Է. Ռսլակկիի «Ալյանդակ էլզան» պիեսի բեմադրությունը Ստեփանակերտի պետթատրոնում): «ԼՂ Հանրապետություն», 18 հունիսի, 1998 թ.:
117. «Առասպելների բանաստեղծականացումը» (ակադեմիկոս Ս. Սարինյանի «Բանաստեղծի հայտնությունը» գրքի մասին): «Վարազան Բարեպաշտ», դեկտեմբեր, 1998:
118. «Պաշտամունքի հասնող սեր» (Մետաքսե-70): «Ազատ Արցախ», 24 դեկտեմբերի, 1998:
119. «Սիլվա Կապուտիկյանը եւ Արցախը» (Ս. Կապուտիկյան-80): «Ազատ Արցախ», 21 հունվարի, 1999:
120. «Սիրտս ճաք տվեց» (Ժաննա Բաղդասարյանի համանուն ժողովածուի մասին): «Ստեփանակերտ», մարտ, թիվ 9, 1999:
121. «Տաղանդի ապրեցնող ուժը» (Մարտիրոս Որմի «Թողեք ապրեմ» ժողովածուի մասին): «Ազատ Արցախ», 20 մայիսի, 1999:
122. «Թանկարժեք նվեր պուշկինագիտությանը» (ակադ. Է. Ջրբաշյա-

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

122. «Պուշկինը եւ հայ բանաստեղծները» աշխատության մասին: «Ազատ Արցախ», 3 հուլիսի, 1999:

123. «Պատմությունը մեր ոգին է» (Վ. Օվյանի «Ղարաբաղի արծիվը» վեպի մասին): «Լուսարար», թիվ 1, 1999:

124. «Նա ապրում էր Արցախով» (սփյուռքահայ գրող- գրականագետ Վահե Օշականի մասին): «Ազատ Արցախ», 13 հուլիսի, 2000:

125. «Հայ գաղափարաբանության հայելին» (ակադ. Ս. Սարինյանի «Հայ գաղափարաբանություն» գրքի մասին): «Ազատ Արցախ», 17 օգոստոսի, 2000:

126. «Օգտակար ուսումնական ձեռնարկ» (Գ. Հարությունյանի «Մանկավարժական մասնագիտության ներածություն» գիրքը): «Արցախի համալսարան», ապրիլ, 2001:

127. «Մշակույթ, հավատ, գիտություն» (Հայաստանում քրիստոնեության հաստատման 1700-ամյակի առթիվ): «Արցախի համալսարան», թիվ 17, 2001:

128. «Երգերի փոխված սիրտ ու հոգի»: «Եղիցի լույս», թիվ 5, 2001:

129. «Ճախրող նամականի» (Ս. Խանգադյան-Ի. Ալավերդյան նամականին): «Ազատ Արցախ», 10 հուլիսի, 2001:

130. «Գիրք հանճարեղ եւ զարմանալի» (Ավ. Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» գրքի մասին): «Ազատ Արցախ», 16 օգոստոսի, 2001 թ.

131. «Արցախյան ոգու ճախրանքը», (Հր. Բեգլարյանի «Արցախ-Նանե» առաջին ժողովածուի առթիվ): «Ազատ Արցախ», ապրիլ, 2001 թ.:

132. «Հանդիպումներ Նաիրի Զարյանի հետ»: «Եղիցի լույս», թիվ 1, 2002:

133. «Երգեր մաքառման եւ հավատի», (Հ. Բաղմանյանի «Հիշեցեք, Մարդիկ» բանաստեղծությունների ժողովածուի առթիվ): «Արցախի համալսարան», №1, 2002 թ.:

134. «Բանաստեղծության առասպելվող հորիզոնները» (Վ. Հակոբյանի «Անդրադարձի տեսիլներ» նոր ընտրանին): «Ազատ Արցախ», 17 օգոստոսի, 2002 թ.:

135. «Իմաստալից ճանապարհ» (Ռ. Ղահրամանյան - 65): «Ազատ Արցախ», 22 օգոստոսի, 2002 թ.:

136. «Իմ հարսանիքում ես չեմ պարել» (Ե. Միրզոյանի համանուն վեպի մասին): «Ազատ Արցախ», 26 սեպտեմբերի, 2002 թ.:

137. «Մանուկների մեծ բարեկամը»: (Գ. Գաբրիելյան- 75): «Ազատ Արցախ», 1 հոկտեմբերի, 2002 թ.:

138. «Երգող սրտի ընծաները»: (Դ. Միքայելյան -50): «Ազատ Արցախ», 19 նոյեմբերի, 2002 թ.:

139. «Քրտնաջան աշխատանքի պտուղները» (Գ. Հարությունյան - 60): «Ազատ Արցախ», 21 դեկտեմբերի, 2002 թ.:

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

140. «Արժեքավոր նվեր մեր պատմությանը», (Հ. Բեգլարյանի «Արցախ-Նանե» գրքի II հատորը): «Ազատ Արցախ», 14 դեկտեմբերի, 2002 թ.:
141. «Պոեզիան մարտական դիրքերում»: «Եղիցի լույս», թիվ 1, 2003:
142. «Ձենքերի շառաչի տակ մուսաները չլռեցին»: «Ապառաժ», №2, 2003 թ.
143. «Ձենքի եւ ուժի միասնության ուժը»: «Չայրենիք», 28 փետրվարի, 2003 թ.:
144. «Մանկագրության նոր փայլուն նվեր» (Գ. Գաբրիելյանի «Արեւը լճակում» գիրքը): «Ազատ Արցախ», 22 մարտի, 2003 թ.:
145. «Արցախյան պատերազմի նահատակները եւ հայ պոեզիան»: «Մարտիկ» թիվ 12, 2003թ.:
146. «Գրականագիտական վաստակի հմայքը» (Ա. Եղիազարյան - 60): «Ազատ Արցախ», 24 ապրիլի, 2003 թ.:
147. «Վարդգես Պետրոսյանի հունձքը»: «Եղիցի լույս», № 9-10, 2003:
148. «Չիշատակը նրա՝ պայծառ ու աննինջ» (Շինարար Մակիչ, Քեզյանի հիշատակին): «Ազատ Արցախ», 4 դեկտեմբերի, 2003 թ.:
150. «Պարտքի, խղճի եւ պայքարի տուրք», (Մեր գոյամարտից մի դրվագ): «Ապառաժ», 2003 թիվ:
151. «Ղարաբաղի հորովելի թեւերը», (Գ. Գաբրիելյանի երգերը): «Ազատ Արցախ», 7 նոյեմբերի, 2003 թ.
152. «Պոեզիան մարտական դիրքերում»: «Եղիցի լույս» 2003, թիվ 1-2:
153. «Ծիծաղը ուժեղների զենքն է» (Ս. Սարգսյանի «Ծիծաղափունջ» ժողովածուն): «Եղիցի լույս», 2003, թիվ 1-2:
154. «Արցախյան պատերազմի նահատակները եւ հայ պոեզիան»: «Մարտիկ», 2003թ, թիվ 11
155. «Արցախյան պատերազմի նահատակները եւ հայ պոեզիան»: («Բանակ-հասարակություն» ժողովածու): «Ազատ Արցախ» հրատ., 2003 թիվ:
156. «Գիտական լուրջ հետազոտություն» (Ս. Բաղդասարյանի «Ս. Սարգսյանի վիպագրությունը» գրքի մասին): «Ազատ Արցախ», 30 մարտի, 2004 թ.:
157. «Վոլոդյա Միրզոյան - 50»: «Արցախի համալսարան», մարտ, թիվ 3, 2004 թ.:
158. «Զինափղա Բալայան - 50»: «Արցախի համալսարան», մարտ, թիվ 3, 2004 թ.:
159. «Պարույր Սեւակի խորհուրդները»: «Դեմո», 30 ապրիլի, 2004 թ.:
160. «Բանաստեղծ ծնվում են» (Կամիլայի «Քարի ու իմ միջեւ» գրքի մասին):
161. «Միջօրեմ հորիզոններ է ուրվագծում» (Մարսել Չայկի մանկագրության շուրջ): «Եղիցի լույս», թիվ 5, 2004 թ.:

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

162. «Երազի սահմանների փիլիսոփայությունը» (Ռ. Եսայանի համա-
նուն գիրքը): «Եղիցի լույս», թիվ 8-9, 2004թ:
163. «60 տարիների խորքից հնչող առողջ ձայն» (Ա. Ծառուկյանի
«Թուղթ առ Երեւան» պոեմի 60-ամյակի առթիվ): «Ապառաժ», 2004 թ.:
164. «Ազգագրական լուրջ աշխատություն» (Խ. Ղազարյանի «Տունի»
աշխատությունը): «Լուսարար», թիվ 1, 2005թ.:
165. «Միաբանություն է պետք»: «Գրական թերթ» թիվ 18, մայիս, 2005:
166. «Կորուսյալ եզերքի երգը» (Վ. Աբրահամյանի «Ամպրոպի արահե-
տով» գիրքը): «Եղիցի լույս», թիվ 2, 2005 թ.:
167. «Ցավի ճիչն ու ապրելու հավատը», (Հայոց մեծ եղեռնը պոեզիա-
յուն): «Լուսարար», թիվ 8, 2005 թ.:
168. «Արցախյան զոյամարտի խոսուն հուշամատյան»: (Մարտիրոս
Որբնի «Դժոխքից եկածին հարցեր չեն տալիս» վեպը): «Ազատ Արցախ», 19
մարտի, 2005 թ.:
169. «Արտոնված եղեռն - ցավի ճիչ» (Նոր ներկայացում Ստեփանա-
կերտի թատրոնում): «Ազատ Արցախ», 23 ապրիլի, 2005 թ.:
170. «Արդի արձակի զարգացման միտումները»: «Եղիցի լույս», թիվ 5,
2005 թ.:
171. «Խոսք ավստսանքի եւ հպարտության» (ակադ. Ս. Աբրահամյանի
մահվան առթիվ): «Եղիցի լույս», թիվ 4, 2005 թ.:
172. «Հրաշքները ծնվում են ազգային ոգուց» (Ս. Դադայանի քանդակ-
ների մասին): «Արցախի համալսարան», թիվ 6, 2005 թ.:
173. «Գիրք՝ ծնված ժամանակին ու տեղին» (Հ. Գրիգորյանի եւ Գ. Հա-
րությունյանի «Արցախի դպրոցը հնագույն ժամանակներից մինչեւ մեր
օրերը» աշխատության մասին): «Ազատ Արցախ», 23 հուլիսի, 2005թ.:
174. «Արցախի սիրով -Արցախի համար» (զրականագետ Սուրեն Դա-
նիելյան-60): «Արցախի համալսարան», հոկտեմբեր, 2005:
175. «Հանճարի աշխարհասփյուռ լույսը» (Մոցարտ - 250): «Ազատ
Արցախ», 4 փետրվարի, 2006թ.:
176. «Մի էջ մեր պայքարի պատմությունից» (Հուշ, որ չի մոռացվի):
«Արցախի համալսարան», ապրիլ, թիվ 2, 2006թ.:
177. «Հեքիաթային աշխարհի դասերը» (Մտորումներ Ս. Հայկի «Դերե-
նիկը եւ կրկեսի փիղը» ժողովածուի շուրջ): «Ազատ Արցախ», 20 ապրիլի,
2006 թ.:
178. «Խիզախող ոգու հավերժական ճախրանքը» (Գ. Գաբրիելյանի
ծննդյան 79-ամյակի առթիվ): «Ազատ Արցախ», 24 հունիսի, 2006 թ.:
179. «Գրականագիտական նոր խոսք» (Հ. Մուսայեյանի «Բառի ինք-
նահաղթահարման խորհուրդը» գրքի մասին): «Ազատ Արցախ», 11 հուլի-
սի, 2006 թ.:

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

180. «Պատվի համաժամանակյա հոլովումը» (Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի նոր բեմադրությունը Ստեփանակերտի Վ. Փափագյանի անվան թատրոնում): «Լուսարար», թիվ 23, 2006 թ.:
181. «Փառավոր ուղի» (պրոֆեսոր Արզիկ Մխիթարյան - 60): «Ազատ Արցախ», 9 նոյեմբերի, 2006 թ.:
182. «Երախտիքի եւ պատգամի հուշամատյան» (Ս. Արամյան - 90): «Լուսարար», թիվ 24, 2006 թ.:
183. «Տազնապի եւ հպարտության երգեր» (Իլյա Արցախեցու «Զանգարդարության» բանաստեղծությունների գրքի մասին): «Դեմո», 15 դեկտեմբերի, 2006 թ.:
184. «Փառքին այդպես են արժանանում» (Բ. Դավթյան - 70): «Եղիցի լույս», №1, 2007 թ.:
185. «Արցախի ճիչը» (Իլյա Արցախեցու համանուն պատմվածքների ժողովածուն): «Դեմո», 15 փետրվարի, 2007 թ.:
186. «Սեւակագիտության լուսաժիր խորհուրդը» (ակադեմիկոս Ս. Սարինյանի, Պարույր Սեւակ: Բանաստեղծության գիտությունը» գրքի շուրջ): «Եղիցի լույս», թիվ 2-3, 2007 թ.:
187. «Կյանքը գեղեցկանում է արարումով» (Ստեփան Դադայան - 60): «Լուսարար», թիվ 9-10, 2007 թ.:
188. «Հանճարեղ պոետն ու ազնիվ քաղաքացին» (Ե. Չարենց - 110): «Ազատ Արցախ», 24 ապրիլի, 2007 թ.:
189. «Ճախրանք՝ երգի թելերով» (Գուսան Աշոտ - 100): «Ազատ Արցախ», 9 հունիսի, 2007 թ.:
190. «Պտուղը ծառից հեռու չի ընկնում» (Էլեանորա Չայրապետյան - 60): «Լուսարար», №16, 2007 թ.:
191. «Հաղթողներ եղան, պարտվողներ՝ ոչ», (Ուսանողական մրցույթ): «Դեմո», 28 ապրիլի, 2007 թ.:
192. «Հորովելված հավերժություն» (Գ. Գաբրիելյանն իմ հուշերում): «Եղիցի լույս», թիվ 8, 2007 թ.:
193. «Կրակ էլ տաս՝ ճշմարիտին մահ չկա» (ակադեմիկ Ս.Թ. Սարգսյանի «Արցախ-Ղարաբաղ» հանրագիտարանի մասին): «Ազատ Արցախ», 8 սեպտեմբերի, 2007 թ.:
194. «Ստեփանակերտը երգերի մեջ»: «Ստեփանակերտ», 16 հոկտեմբերի, 2007 թ.:
195. «Թարգմանչաց ոգու կանչը» (Համաժողով Երեւանում): «Ազատ Արցախ», 20 հոկտեմբերի, 2007 թ.:
196. «Կյանքը երազ է, երազը՝ կյանք» (Մարտիրոս Ռբնի «Հրեշտակին այցելիր գիշերով» ժողովածուն): «Եղիցի լույս», թիվ 11-12, 2007 թ.:
196. «Արցախյան նժույգի հեծյալը» (Կ. Դանիելյան - 60): «Եղիցի լույս», թիվ 10, 2007 թ.:

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

- 197.«Երկվորյակները» (Ի. Արցախեցու նոր վեպը): «Լուսարար», 28 դեկտեմբերի, 2007 թ.:
- 198.«Ծաղկած խնձորենու բույրը» (Դ. Միքայելյանի «Ծաղկել է խնձորենին» ժողովածուի մասին):«Ազատ Արցախ», 7 փետրվարի, 2008 թ.:
- 199.«Հավերժի ճամբորդը» (Գ. Գաբրիելյան - 80): «Արցախի համալսարան», թիվ 9, 2007 թ.:
- 200.«Լույսի եւ հույսի գորելեն» (Լավրենտ Ղալայան - 70): «Արցախի համալսարան», թիվ 1, 2008թ.:
- 201.«Արցախյան գոյամարտի գեղարվեստական պատկերը» (Մ. Հովհաննիսյանի ստեղծագործությունները): «Ազատ Արցախ», 10 հունվարի, 2008 թ.:
- 202.«Լուսառատ ուղի՝ ծաղկաբույրի համակցմամբ» (Ա. Աթայան - 60): «Լուսարար», 30 հունվարի, 2008 թ.
- 203.«Մանկապատանեկան նոր վեպ» (Ի. Արցախեցու «Երկվորյակները» վեպը): «Գրական թերթ», 28 մարտի, 2008 թ.:
- 204.«Արցախյան գոյամարտի գեղարվեստական պատկերը հայ պոեզիայում»: «Ազատ Արցախ», 20 մայիսի, 2008 թ.:
- 205.«Արժեքավոր ուսումնասիրություն» (Շ. Դավթյանի նոր աշխատությունը Հ. Սահյանի մասին):«Լուսարար», 31 մայիսի, 2008 թ.:
- 206.«Հայ վիպագության հսկան» (Ալ. Շիրվանզադե - 150): «Եղիցի լույս»,թիվ 5-6,2008 թ.:
- 207.«Արցախի լուսավորությանն ընծայված կյանք» (Պատմաբան Խ. Ղազարյան - 80): «Լուսարար», 20 օգոստոսի , 2008 թ.:
- 208.«Ոգու հաղթանակ - միասնության կոչ» (Գրողների համահայկական 4-րդ համաժողով - 6-14 հուլիսի, 2008 թ.): «Ազատ Արցախ», 17 հուլիսի, 2008 թ.:
- 209.«Ազգային հերոսը կյանքի եւ գրական վաստակի զուգահեռներում» (ակադ. Ս. Սարինյանի «Շարունակվող լեզենդ» գիրքը): «Հայրենյաց պաշտպան», 8 հոկտեմբերի, 2008 թ.:
- 210.«Վիլյամ Սարոյանի դասերը»: «Արցախի համալսարան», թիվ 60, 2008 թ.:
- 211.«Ասուպների եզերք»-ի լույսը»: (Ռ. Եսայանի համանուն գիրքը): «Ազատ Արցախ», 8 նոյեմբերի, 2008 թ.:
- 212.«Հայացք կյանքի բավիղներից» (Ի. Արցախեցու «Կյանքի բավիղներում» գիրքը): «Ակունք», 25 նոյեմբերի, 2008 թ.:
- 213.«Պատմության դասը»: «Եղիցի լույս», թիվ 11-12, 2008 թ.:
- 214.«Նա ապրեց՝ Արցախն իր սրտում» (բանաստեղծ Միքայել Հարությունյանի ծննդյան 90-ամյակի առթիվ): «Եղիցի լույս», թիվ 11-12, 2008 թ.:
- 215.«Բաց նամակ Մաքսիմ Հովհաննիսյանին» («Աստվածների խնջույք» գրքի առթիվ): «Ազատ Արցախ», 13 դեկտեմբերի, 2008:

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

216. «Նա լեռնային արծիվ էր՝ սիրտը լեռներում» (Վ. Սարոյան - 100): «Լուսարար», թիվ 21, 2008 թ.:
217. «Արհմիությունները չափազանց կարևոր կազմակերպություններ են»: «Արհմիություններ», հունվար, 2009 թ.:
218. «Գրականությունը՝ հորդահոս գետ» (Հարցազրույց Ն. Ալեքսանյանի հետ): «Լուսարար», թիվ 16, 2009 թ.:
219. «Գրականության արժեքավորման նոր ծիրերում» (Վ. Հակոբյանի Ե. հատորի առիթով): «Ազատ Արցախ», 15 հունվարի, 2009 թ.:
220. «Արձակի զարգացման միտումները Արցախում 2005-2009 թթ.» : «Ստեփանակերտ», 15 հուլիսի, 2009 թ.:
221. «Վերք Հայաստանի»: Հայ ազգային վիպագրության հիմնաքար: «Եղիցի լույս», թիվ 11-12, 2009 թ.:
222. «Արցախաբույրը ծաղիկների երթում» (Ի. Ալավերդյանի «Ծաղիկների բույրը» գրքի մասին): «Ազատ Արցախ», 30 ապրիլի, 2009 թ.:
223. «Բեղմնավոր տաղանդի նրբերանգները» (Վ. Հակոբյանի Ե հատորը - մանկագրություն): «Լուսարար», 31 մայիսի, 2009 թ.:
224. «Թռիչքը շարունակվում է» (Վ. Քոչարյանի «Արծվաթռիչք» ժողովածուն): «Եղիցի լույս», մայիս, 2009 թ.:
225. «Սեւակագիտության նոր էջ» (Ա. Թովմասյանի «Պ. Սեւակի անձի եւ ստեղծագործության հոգեբանության մի քանի հարցեր» ժողովածուն): «Եղիցի լույս», թիվ 1-2, 2009 թ.:
226. «Վառվող կանթեղի լույսը» (Արթուր Սկրտչյան - 50): «Ապառաժ», փետրվար, 2009 թ.:
227. «Մանկավարժությունը նրա տարերքն է» (բ.գ.թ., դոցենտ Սիրուն Բաղդասարյան - 60): «Լուսարար», թիվ 5, 2009 թ.:
228. «Աստծո տվածը ժողովրդինն է» (բ.գ.թ., դոցենտ Լ. Գրիգորյանի 60-ամյակի առթիվ): «Ազատ Արցախ», 24 հոկտեմբերի, 2009 թ.:
229. «Մայրենի լեզուն ոգին է ժողովրդի» (Հարցազրույց վարեց Բանաստեղծուհի Անուշ Հարությունյանը): «Հայրենյաց պաշտպան», մարտ, 2009 թ.:
230. «Հ. Թումանյանը եւ Ե. Չարենցը»: «Ազատ Արցախ», 28 նոյեմբերի, 2009 թ.:
231. «Անվանի երկրաբան-գիտնականն ու նվիրյալ արցախցին» (Երկրաբան Ա. Շահնազարյանի հիշատակին): «Զրաբերդ», մայիս, 2009 թ.:
232. «Ծիծաղի արքաները չեն իջնում իրենց գահից» (Մամիկոն Միքայելյան - 90): «Ազատ Արցախ», 14 հունվարի, 2010 թ.:
233. «Բաց նամակ Նորայր Ավետիսյանին» (իր «Հաղորտի» գրքի առթիվ): «Եղիցի լույս», թիվ 8, 2010 թ.:
234. «Արտեն Հարությունյանի «Նամակ Նոյին» պոեմը»: «Լուսարար», թիվ 32, 2010թ.:

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը

235.«Ահազանգ «Շուշի» եւ «Բաբելոն» հյուրանոցների աշտարակներից» (Ա. Հարությունյանի համանուն գրքի մասին): «Գրական թերթ», 24 դեկտեմբերի, 2010 թ.:

236.«Ուրցի բույրի հնայքը» (Վլ. Աբրահամյանի «Զրույց ստվերիս հետ» գիրքը եւ պոետի 80-ամյակը): «Ազատ Արցախ», 2 հոկտեմբերի, 2010 թ.:

237.«Ավետիք Իսահակյանի դասերը»: «Ազատ Արցախ», 2 դեկտեմբերի, 2010 թ.:

238.«Հայ գրականության գալիք օրվա մարզարեն» (Վահան Տերյան - 125): «Ազատ Արցախ», 4 դեկտեմբերի, 2010.:

239.«Ահազանգ «Շուշի» եւ «Բաբելոն» աշտարակներից», (Ա. Հարությունյանի գրքի մասին): «Ազատ Արցախ», 18 դեկտեմբերի, 2010 թ.:

5. ԱԵՂԱԱԳՐԵՐ

1.Драматургия Наири Заряна (թեկն. սեղմագիր) институт литературы им. М. Абеяна АН Армении, 1965 г.

2.«Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում (1950-1990-ական թթ.)» (դոկտորական սեղմագիր), ՀՀ ԳԱԱ Ս. Աբեղյանի անվան գրակ. ինստիտուտ, 2002 թ.:

ԹԱՏՐՈՆ

«Այրվող պատիվ».....3
 «Տրիբունալ».....8
 «Մարզո Բալասանյան».....12
 Ստեղծագործական վերելքի ուղիով.....15
 «Ռիչարդ երկրորդ».....18
 Առաքելություն հրաբորբոք հոգու (Մարզո Բալասանյան-70).....23
 Ասք հերոսական գոյամարտի.....28
 Թատերական մի ներկայացման եւ մեզ հուզող խնդիրների մասին.....32
 Մի կարեւոր էջ մեր թատրոնի պատմությունից.....37
 Թատրոնին նվիրված իմաստալից կյանք (Մ. Հարությունյան-70).....41
 Երգի թելերով զարդարված կյանք.....44
 «Արտոնված եղեռն» - ցավի ճիչ.....49
 Պատվի համաժամանակյա հոլովումը (Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի նոր բեմադրությունը).....53
 Ապրես, Արմելա.....63
 Վաստակաշատ դերասանի ծաղկալից ուղին (Ս. Վիրաբյանի-55).....64
 Բեմարվեստի մեր վարպետները (Գիրք Ա).....67
 Մեր պատմությունը մեր հիշողությունն է
 («Բեմարվեստի մեր վարպետները», Գիրք Բ).....75
 Ջոհրապը մեծարում է
 (Ալ. Շիրվանզադեի ծննդյան 150-ամյակի առթիվ).....78
 Փառք Էդուարդին ու նրա գործին.....82
 Կյանք՝ բեմի վրա.....83
 Հայ թատերական կյանքը Բաքվում
 (1960-1966թթ) գործարանի բեմի վրա.....111
 Տաղանդավոր երգչուհին (Տաթևիկ Սազանդարյանի
 բեմական գործունեության 25-ամյակի առթիվ).....113
 Մեծ համերգ.....116
 «Կամուրջի վրա».....119
 Հաճելի ներկայացում.....123
 «Պեպո»-ն ժողովրդական թատրոնում.....126
 Նրա սիրտն էր երգում ժողովրդի սիրով
 (ԽՍՀՄ ժող. արտիստ Ավագ Պետրոսյանի անմոռաց երգը).....129
ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
 Հրաշքները ծնվում են ազգային ոգուց.....145
ՍՓՅՈՒՌԻ ՄԵՐ ՀՅՈՒՐԵՐԸ
 Նա ապրում էր արցախով.....148
 Հայրենակերտումի վաստակ.....151

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Հանճարի աշխաչհասփյուռ լույսը (Մոցարտ-250).....154

ԳԵՂԱՐՎԵՍ

Լույսի եւ հույսի գորելեն (Լավրենտ Ղալայան-70).....158

Փառավոր ուղի (Արզիկ Մխիթարյան-60).....161

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստեփանակերտը երգերի մեջ.....165

Պաշտամունքի հասնող սեր (Մետաքսե-70).....172

ԳՐԱԿԱՆ ԴԻՍԱՆԿԱՐՆԵՐ

Երգող սրտի ընծաները (Դավիթ Միքայելյան-50).....174

Ռոբերտ Եսայանի պոեզիան.....178

Կյանք եւ պոեզիա

Նորեկ Գասպարյանի պոետական աշխարհը.....228

Հրանտ Ալեքսանյանի բանաստեղծական խոհերը.....252

Ջերմ ու առինքնող քնարերգություն (Արիս Արսենի-50).....273

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-ԲԱՆԱԿ

Գրականությունը եւ պետություն-հասարակություն-բանակ կապը.....289

Մեծ հայրենականի ու խաղաղության երգը.....326

Հիշողության ուժը («Թաթուլ» գրքի առթիվ).....331

Ներիր, Կոմիտաս.....333

Ջոկը՝ մի տնից.....336

Երեք հանդիպում մարշալ Բաղրամյանի հետ.....340

Արցախի ոգին (Ռ. Գեւորգյանի «Հերոսապատումի հավերժասուգին» ժողովածուն).....349

Հերոսության մատյան (Սեյրան Օհանյան - «XXI դարի բանակը»).....352

Ազգային-ազատագրական պայքարի թեժ օջախը.....358

Անմահության ճանապարհով.....365

Հուշամատյան սխրանքի եւ անմահության.....422

Կրակ էլ տաս՝ ճշմարիտին մահ չկա.....452

Ս. Խանյանի ստեղծագործությունների մատենագիտությունը.....457

ՍՈՎՐԱՏ ԽԱՆՅԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

Հատոր 10

Խմբագիր՝

Հովիկ Մուսայելյան

*Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

Սրբագրիչ՝

Ս. Խանունց

Համակարգչային

շարվածքը եւ էջադրումը՝ **L. Բաղդասարյանի**

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝
60x84/16, ծավալը՝ 30 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250:
Գինը՝ պայմանագրային:

Տպագրվել է «ԴԻՉԱԿ ՊԼՅՈՒՄ» հրատարակչության տպարանում
Հ. Հակոբյան 25
Ստեփանակերտ-2011